

# ՃՈՆ ՊԻՎԻՐ

ՀԱՆՐԱՃԱՆԱԶ ՀԵՂԻՆԱԿ՝ ԸՍՏ «USA TODAY» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ



ԲԱԶՄԱՊԱՏԿԷ՛  
ԱՍՏՈՒԾՄԷ ՔԵԶԻ ՏՐՈՒԱԾ ՆԵՐՈՒԺԸ

Սիրելի՛ ընկեր,

Մեզմե իւրաքանչիւրը Անոր ձեռքի գործն է՝ ստեղծուած Զրիստոս Յիսուսի մէջ բարի գործերու համար: Դուք վերստին ծնած էք շնորհքի ձրիաբար տրուած պարգեւով՝ Աստուծոյ զաւակ ըլլալու համար, եւ դուք զօրութիւն ստացած էք նոյն այդ շնորհքով՝ յատուկ նպատակի համար: Դուք կը գիտակցի՞ք, որ ձեր մէջ կայ զարմանալի ներուժ՝ Աստուծմէ տրուած պարգեւներու եւ կարողութիւններու տեսքով, որպէսզի իրականացնէք այդ նպատակը:

Այն պարգեւները, տաղանդները եւ կարողութիւնները, որոնք շնորհուած են ձեզի, նախատեսուած չեն ձեզի համար. ատուք պետք է տրուին այլ մարդոց՝ ձեր միջոցով: Ձեր մէջ կայ այն, ինչ որ Աստուած կը կամենայ, որ ունենան այլ մարդիկ: Մեզմե իւրաքանչիւրը պետք է ճանչնայ իր պարգեւները, հաւատարմօրէն տնօրինէ ատուք եւ նպատակաւորօրէն օգտագործէ այլ մարդոց օգուտի եւ Թագաւորութեան տարածման համար:

Երջանիկ եւ օրհնուած է այն մարդը, որ գիտէ իր պարգեւ ներու մասին եւ կը գործէ ատուք միջոցով: Դժբախտ եւ ճնշուած է այն մարդը, որ կը փորձէ գործել այլ մարդու պարգեւներով: Ըլլալով հաւատարիմ եւ համագործակցելով Աստուծոյ շնորհքին հետ՝ Անոր օծութեան ներքոյ, մենք պետք է ձգտինք բազմապատկել մեր պարգեւները՝ ոչ թէ պայքարի, այլ հանգիստի դիրքէն:

Դուք օժտուած ու զօրացած էք Անոր շնորհքով եւ օծութեամբ: Եղէ՞ք վճռական եւ առջեւ գացէք, որպէսզի մեծ գործեր ընէք Աստուծոյ համար:

Ձեզի հետ միասին,

Ճոն



MessengerX.com

Ճոն Պիվիր  
JohnBevere@gmail.com



**MESSENGER**  
INTERNATIONAL  
MessengerInternational.org







# ՃՈՆ ՊԻՎԻՐ

ՀԱՆՐԱՃԱՆԱԶ ՀԵՂԻՆԱԿ՝ ԸՍՏ «USA TODAY» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ



ԲԱԶՄԱՊԱՏԿԷ՛  
ԱՍՏՈՒԾՄԷ ՔԵԶԻ ՏՐՈՒԱԾ ՆԵՐՈՒԺԸ

**X: Multiply Your God-Given Potential** by John Bevere, Western Armenian

© 2021 Messenger International

MessengerInternational.org

Originally published in English as X: Multiply Your God-Given Potential

Additional resources in Western Armenian by John and Lisa Bevere are available for free download and video streaming at: **MessengerX.com** and on the **MessengerX App**.

To contact the author: JohnBevere@ymail.com

This book is a gift from Messenger International and is  
NOT FOR SALE

**«X. Բազմապատկէ Աստուծո՛վ քեզի տրուած ներուժը»**, Ճոն Պիվիր,  
Արեւմտահայերէն

© 2021 Messenger International

MessengerInternational.org

Սկզբնապէս հրատարակուած է անգլերէն լեզուով, «X: Multiply Your God-Given Potential» վերնագիրով

Յաւելեալ նիւթեր Արեւմտահայերէնով հասանելի են անվճար ներբեռնման եւ հոսքային հեռարձակման համար **MessengerX.com** կայքին մէջ եւ **MessengerX** յաւելուածին մէջ:

Հեղինակին հետ կապ հաստատելու համար. JohnBevere@ymail.com

Այս գիրքը նուէր է «Messenger International» ծառայութեան կողմէն եւ  
ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱՅ ՉԷ



App Store-ը Apple Inc.-ի ապրանքանիշն է, որ արձանագրուած է ԱՄՆ-ի եւ այլ երկիրներու մէջ:

Google Play-ը եւ Google Play-ի պատկերանիշը Google LLC- ի ապրանքանիշերն են:

*Կ'ընծայուի մեր որդիներու սքանչելի կիներուն...*

Լիզան եւ ես խորապէս կը սիրենք ձեզ: Իւրաքանչիւրդ ունիք ներքեւը թուարկուած հրաշալի յատկանիշները եւ աւելին, պարզապէս այս քանի մը հասող աւելի արտայայտիչ են ձեր կեանքին մէջ:

*Ժուլիաննա*

Ամուսնացած է Էտիսընին հետ, 2009 թուականի  
Հոկտեմբեր 25-ին:

Դուն գեղեցիկ եւ իմաստուն ես:

Դուն միշտ պիտի մնաս իմ առաջին դուստրը:

*Ճեսիքա*

Ամուսնացած է Օսթընին հետ, 2018 թուականի  
Սեպտեմբեր 24-ին:

Դուն բարի եւ հմայիչ ես:

Որեւէ մէկ տեղ, ուր դուն կը յայտնուիս,  
ուրախութեամբ կը լեցուի:

*Քրիստիան*

Ամուսնացած է Արտընին հետ, 2018 թուականի Նոյեմբեր 18-ին:

Դուն շնորհալի ես եւ մեղմ սիրտ ունիս:

Դուն հիասքանչ կերպով կը սիրես մեր որդին:

*Ապագայ տիկին Ալեք Պիվիր*

Իմ սիրտը կը փափաքի հանդիպիլ մեր ապագայ դուստրին:

Ես արդէն խորապէս կը սիրեմ քեզ:

Իւրաքանչիւրդ ուրախութիւն կը պարգեւէ Լիզային եւ ինձի:

Շնորհակալութիւն մեր ընտանիքը մեծցնելու համար:

Յաւիտեան՝ մեր դուստրեր:



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Այս գիրքի մասին IX

1. Ընդհանուր պատկեր 1
2. Փոխանցուած կարողութիւններ 17
3. Անկեղծօրէն գնահատեցէ՛ք ձեզ 35
4. Տնտեսներ 47
5. Հաւատարմութիւն 67
6. Աշխատասիրութիւն եւ բազմապատկում 87
7. Մեծ բազմապատկում 105
8. Մարտավարական գաղափարներ 121
9. Ներդրում 139
10. Խթանիչ 159
11. Նմանեցէ՛ք Ինծի 177
12. Բազմապատկման խոչընդոտներ Ա. 197
13. Բազմապատկման խոչընդոտներ Բ. 213
14. Բացայայտեցէ՛ք եւ զարգացուցէ՛ք  
ձեր պարգեւները 229
15. Օծուած 249
- Յաւելուած 261
- Երախտիքի խօսքեր 263
- Նշումներ 264




# ԱՅՍ ԳԻՐՔԻՆ ՄԱՍԻՆ

Այս գիրքի էջերուն մէջ դուք պիտի գտնէք Աստուածաշնչեան գաղափարներ եւ մարտավարութիւններ, որոնք պիտի օգնեն բացայայտելու ձեր նպատակը, բորբոքելու ձեր եռանդը եւ իրագործելու ձեր ներուժը: Իւրաքանչիւր գլուխին մէջ ընդգրկուած են նաեւ հարցումներ մտորելու համար, որոնք պիտի օգնեն ձեզի անձնաւորելու այն, ինչ որ կը սորվիք:

Եթէ կ'ուզէք աւելին իմանալ բազմապատկելու մասին, ես ստեղծած եմ յաւելեալ նիւթեր, որոնց կարգին են վիտօ դասեր, ուղեցոյց-ծեռնարկ եւ այլ առցանց նիւթեր, որոնք կարելի է օգտագործել ինքնուրոյն կամ փոքր խումբերու մէջ: Դուք կրնաք ստանալ այդ նիւթերը, ինչպէս նաեւ իմ նիւթերու ամբողջ դարանը՝ աշակերտութեան համար նախատեսուած, **MessengerX.com** կայքի մէջ: Մեր նիւթերը կ'օգտագործեն միլիոնաւոր մարդիկ, եւ մեր նպատակն է հասանելի դարձնել աստուծոյ իւրաքանչիւրին՝ անկախ գտնուելու վայրէն, լեզուէն եւ նիւթական վիճակէն (դուք պիտի կարդաք այս մասին այս գիրքին մէջ): Մէկ վայրկեան յատկացուցէ՛ք՝ այցելելով մեր կայքը եւ միանալով մեր աւետաբերներու համաշխարհային ընկերակցութեան:

Եւ եթէ հարցումներ ունիք, անվարան գրեցէ՛ք ինձի եւ մեր «Մեսինճըր Ինթերնեշընլ» ծառայութեան խումբին:

Ուրախ եմ, որ միասին ենք,  
Ճոն



*«Տիրոջ երկիւղը իմաստութեան հիմքն է...  
Իմաստութիւնը կը բազմապատկէ քու օրերը  
եւ տարիներ կ'աւելցնէ քու կեանքին: Եթէ դուն  
իմաստուն դառնաս, դուն օգուտ պիտի  
ստանաս ատկէ»:*

– Առակաց 9.10-12, NLT



# ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐ

Այս պատմությունը տեղի ունեցավ 2012 թուականին: Ես պիտի քարոզէի Լոս Անճելըսի տարածքը գտնուող եկեղեցւոյ մը շաբաթավերջի հաւաքոյթներուն: Սովորաբար ես օդանաւով հոն կը հասնիմ Շաբաթ առտու, կը ծառայեմ Շաբաթ երեկոյեան եւ Կիրակի առաւօտեան ու տուն կը վերադառնամ Կիրակի միջօրէին: Այս անգամ սահմանուած կարգը պիտի փոխուէր:

Մեր ծառայութեան գործընկերներէն մէկը (եւ կ'անուանեմ անոր Սթէն), գիտնալով, որ Լոս Անճելըսի տարածքը պիտի քարոզէի, հեռաձայնեց ինծի եւ հարցուց, թէ արդեօ՞ք կը փափաքէի կոլֆ խաղալ յայտնի «Ռիվիերա» քաղաքամերձ ակումբի խաղադաշտը: Կարիք չկար, որ երկար մտածէի, քանի որ շատոնց կը փափաքէի հոն խաղալ: Ես խանդավառուած պատասխանեցի.

- Անշո՛ւշտ, մեծ սիրով:

Թոյլ տուէք քիչ մը նախապատմութիւն ներկայացնել: Աւելի քան 35 տարի ճամբորդելու եւ Աստուծոյ Խօսքը քարոզելու ընթացքին ժամանակ առ ժամանակ իմ ուղերձներուն մէջ կ'անդրադառնամ կոլֆ խաղալու նախասիրութեանս: Տարիներ շարունակ այս երեւոյթի չծրագրուած, բայց հաճելի արդիւնքը եղած է աշխարհի լաւագոյն ակումբներէն քանի մը հատին մէջ կոլֆ խաղալու հրաւերներ ստանալը: Եւ ասիկա հերթական նման պարագան էր:

Այս հրաւերը շատ յատուկ էր: «Ռիվիերան» բացառիկ եւ փակ ակումբ մըն է, եւ հոն երթալը շատ դժուար է: Ամէն տարի այդ խաղադաշտին մէջ տեղի կ'ունենայ «Արիեստավարժ կոլֆ խաղողներու ընկերակցութեան» «Ճենըսիս ինվիթէյշընլ» (Jenesis invitational) կոչուող միջոցառումը (նախկինին՝ «Լոս Անճելըսի բաց մրցոյթ»): Այդ դաշտին մէջ տեղի ունեցած են նաեւ այլ խոշոր մրցոյթներ՝ քանի մը «ԱՄՆ-ի բաց» եւ «Արիեստավարժ կոլֆ

խաղցողներու ընկերակցութեան» առաջնութիւններ, «ԱՄՆ-ի սիրողական» եւ այլ ակնառու մրցոյթներ:

Շաբաթ օրը, առտու կանուխ, Սթէնին հետ ինքնաշարժով գացինք՝ այդ երազանքի խաղը իրականացնելու համար: Այդ օրն ա՛լ աւելի հաճելի էր այն պատճառով, որ իմ մտերիմ ընկերներէն մէկը՝ Ահարոն Պետլին, ընդամէնը մէկ տարի առաջ յաղթած էր այդ դաշտին մէջ՝ «Լոս Անճելըսի բաց մրցոյթին մէջ»: Ես կ'ակնկալէի այդ խաղը՝ մտովի վերախաղարկելով անոր ուշագրաւ հարուածներէն քանի մը հատը, որոնցմով ան յաղթած էր 2011 թուականի մրցոյթին:

Ես գրաւեցի առաջին չորս փոսիկը՝ երեք փար(թար)-ով աւելի եւ քիչ մը լարուած էի, բայց ակարտեցի խաղափուլը երկու փարով պակաս: Սթէնը եւ ես արտակարգ ժամանակ անցուցինք. այդ առաւօտը իսկապէս յիշարժան էր՝ առանց չափազանցութեան:

Երբ կը վերադառնայինք պանդոկ, որ Լոս Անճելըսի կեդրոնն էր, Սթէնը սրտագին հարցուց.

- Ճո՛ւն, կրնա՞մ հարցում մը հարցնել, որուն մասին որոշ ժամանակէ ի վեր լրջօրէն կը մտածեմ:

- Անշո՛ւշտ:

Ան անկեղծ եւ բաց սրտով ըսաւ.

- Ճո՛ւն, վերջին երկու տասնամեակի ընթացքին ես եռանդուն եւ ջանասիրաբար աշխատած եմ եւ անթիւ ժամեր տրամադրած եմ՝ իմ ձեռնարկութիւնները կառուցելու համար: Իմ անձնական ունեցուածքը հաւասար է ինը միլիոն տոլարի: Ներկայ յաճախորդներուս հետ իմ գործը կ'ընթանայ անխափան: Իմ երկարամեայ քրտնաջան աշխատանքի արդիւնքով կնոջս եւ երեխաներուս կեանքը նիւթապէս ապահովուած է:

Այնուհետեւ ան հարցուց իր հարցումը.

- Ես արդէն յիսունը անց եմ: Ինչո՞ւ պէտք է աշխատիմ նոյն ուժերով: Ինչո՞ւ պայքարիմ՝ իմ ձեռնարկութիւններու ունեցուածքը յաջորդ տասը տարուան ընթացքին 35 միլիոն տոլարի հասցնելու համար:

Սուրբ Հոգին անմիջապէս իմաստութիւն տուաւ ինծի՝ պատասխանելու համար.

- Այսպէս կը պատասխանեմ, - ըսի ես: - Պատկերացուր, քեզի կ'ըսեմ. «Սթէ՛ն, տարիներ շարունակ ես ջանասիրաբար աշխատած եմ եւ 17 գիրք գրած եմ, որոնք այժմ թարգմանուած են 80 լեզուներու՝ միլիոնաւոր օրինակներով: Վերջին 25 տարուան մէջ ես ուղեւորուած ու անցած եմ աւելի քան 16 միլիոն քիլոմետր, պայքարած եմ ժամային գօտիները փոխելէն յառաջացած կենսառիթմերու խախտման հետ,

հանդիպած են տարատեսակ մշակոյթներու, փորձած են տարօրինակ կերակուրներ եւ մնացած են փոքրիկ պանդոկներու մէջ, որպէսզի աշխարհի տարածքին կարենամ Աւետարանով ծառայել: Իմ ծառայութիւնը լաւ վիճակի մէջ է, եւ ֆինանսները կայուն են: Լիզան եւ իմ երեխաները նոյնպէս ապահովուած են: Ինչո՞ւ ես պէտք է շարունակեմ աշխատիլ նոյն ուժերով:

Ամէն ինչ գերազանց ընթացաւ: Ան պատասխանեց՝ քիթին տակէն ծիծաղելով.

- Այդ պարագային ես չէի փափաքեր քու տեղդ ըլլալ, երբ հանդիպէիր Յիսուսին:

Ես անմիջապէս ըսի.

- Սթէ՛ն, քիչ առաջ դուն ինծի ճիշդ նոյնը ըսիր քու գործիդ մասին:

Անոր ժպիտը անմիջապէս անհետացաւ: Յնցուած՝ ան կտրեց իր հայեացքը ճամբայէն՝ ուղղելով ինծի: Չհաւատալով լսածին՝ ան հարցուց.

- Ինչո՞ւ այդպէս կը կարծես:

- Սթէ՛ն, Աստուած օժտած է Իր զաւակներէն իւրաքանչիւրը: Ան պարզելներ տուած է մեզի՝ Իր Թագաւորութիւնը կառուցելու համար: Սակայն մենք ենք այդ պարզելներու տնտեսները եւ ամէն վայրկեան կրնանք որոշել եւ գործածել ատոնք երեք հնարաւոր կերպերով.

Մենք կրնանք օգտագործել այդ պարզելները, որպէսզի կառուցենք Աստուծոյ Թագաւորութիւնը:

Մենք կրնանք օգտագործել այդ պարզելները, որպէսզի կառուցենք մեր կեանքը:

Եւ մենք կրնանք ընդհանրապէս անտեսել այդ պարզելները:

Սթէնը ուշադիր կը լսէր. այնպէս որ, ես շարունակեցի.

- Իմ ականյայտ պարզելները կը ներառեն գրելն ու քարոզելը: Քու պարզելները կ'առնչուին գործարարութեան եւ նուիրատուութիւններու հետ: Իմ օրինակը ծիծաղելի թուեցաւ քեզի, սակայն քու հարցումը ճիշդ նոյն բանի մասին էր: Քու պարզելները նոյնքան կարեւոր են Աստուծոյ Թագաւորութիւնը կառուցելու համար, որքան իմը: Իրականութեան մէջ, քու պարզելները կրնան աւելի կարեւոր ըլլալ, պարզապէս դուն չես տեսներ ընդհանուր պատկերը:

Մենք շարունակեցինք զրուցել այս մասին: Անչափ հաճելի էր տեսնել Սթէնի մտքերու եւ վերաբերմունքի արագ փոփոխութիւնը մեր զրոյցի ընթացքին:

Վեց ամիս յետոյ ես հեռաձայնեցի Սթէնին, որպէսզի գիտնայի, թէ

ինչպէս էր: Ինձի կը սպասէր եւս անմոռանալի գրոյց մը:

- Ողջո՛յն, Սթէ՛ն, ինչպէ՞ս ես:

- Ես կ'ուզեմ անկեղծ ըլլալ, - ես նման պատասխանի չէի սպասեր:

- Այո, անշո՛ւշտ:

- Այն, ինչ որ ինձի ըսիր վեց ամիս առաջ, հանգիստ չէր ձգեր ինձի՝  
լաւ իմաստով:

- Եւ ի՞նչ կը պատրաստուիս ընելու:

Ան ծիծաղելով ըսաւ.

- Ես կաշիէս դուրս կ'ելլեմ, որպէսզի հասցնեմ իմ  
ծեռնարկութիւններու ունեցուածքը 35 միլիոն տոլարի՝ Աստուծոյ  
Թագաւորութիւնը կառուցելու համար:

- Կեցցե՛ս:

Սթէնը իւրացուցած էր այն ճշմարտութիւնը, որ ինքը դիտորդ չէ  
Աստուծոյ Թագաւորութեան տարածման մէջ, այլ՝ կարելոր մասնակից:  
Ան որսացած էր այն տեսիլքը, որ անհասանելի կը մնայ շատերու  
համար՝ այն, որ իր եզակի կարողութիւնները ունին յաւիտենական  
արժէք, ոչ միայն ժամանակաւոր: Ան բոլորովին հասկցած էր, որ իր  
պարգեւը աւելի մեծ նպատակ ունէր, քան ինքզինքն ու իր ընտանիքը  
ապահովելը: Ես այնքա՛ն շնորհակալ եմ, որ ան անմիջական, անկեղծ  
եւ խոնարհ էր: Այս յատկանիշները օգնեցին անոր ընդունելու այն  
ճշմարտութիւնը, որ պիտի փոխէր անոր կեանքը: Եւ, շնորհիւ անոր  
վկայութեան, պիտի փոխուէր ոչ միայն անոր, այլեւ շատերուն կեանքը:

Իր լուսաւորման շնորհիւ Սթէնը ձգտեցաւ բազմապատկման, եւ  
անոր օրինակը ցոյց կու տայ այս գիրքի գլխաւոր նպատակը: Ցաւալի  
է, որ տարիներ շարունակ իմ ճամբորդութիւններու ընթացքին,  
հաղորդակցելով հաւատացեալներու հետ, կրնամ ըսել, որ անոնցմէ  
շատերը կը մտածեն ճիշդ այնպէս, ինչպէս Սթէնը: Իրականութեան  
մէջ, եթէ ինձի լրջօրէն հարցնէին այս մասին, ես կ'ըսէի, որ այսպէս կը  
մտածէ հաւատացեալներու մեծ մասը: Թէեւ շատերը չեն խոստովանիր  
ասիկա նոյնքան վճռականօրէն, որքան Սթէնը, հաղորդակցութեան  
ընթացքին այս մտածելակերպը կը բացայայտուի:

Եթէ դուք կասկածի կ'ենթարկէք ձեր կեանքի կոչումը այդպիսի  
մտքերով, ես անչափ ուրախ եմ, որ այս գիրքը յայտնուած է ձեր  
ծեռքին: Ես անկեղծօրէն յոյս ունիմ, որ ձեր պատկերացումը նոյնպէս  
պիտի փոխուի:

Ինչպէս եւ Սթէնը, անկե՛ղծ եղէք դուք ձեզի հետ. ատիկա  
պիտի օգնէ տեսնելու ընդհանուր պատկերը: Անկեղծութեամբ եւ

խոնարհութեամբ դուք պիտի բացայայտէք եւ վստահաբար պիտի հաւատաք, որ կրնաք բազմապատկել ձեր եզակի պարգեւները՝ Աստուծոյ Թագաւորութիւնը կառուցելու համար: Դուք նոյնքան կանչուած էք Աստուծոյ, որքան ձեր հովիւը կամ ես: Ձեր կոչումը նոյնքան օրինաւոր է, որքան Պիլի Կրեհէմի կամ այլ հանրայայտ ծառայողի կոչումը:

Մենք պիտի խօսինք այն մասին, թէ ինչպէս կարելի է բացայայտել, զարգացնել եւ ամենակարելորդ՝ բազմապատկել ձեր պարգեւները՝ ձեր եզակի կոչումը ընդլայնելու համար: Այս գիրքի Աստուածաշնչեան հատուածները եւ պատմութիւնները պիտի կառուցեն ձեր հաւատքը, որոնց շնորհիւ ձեր արդիւնաւէտութիւնը մեծապէս պիտի աւելնայ: Ես անձամբ կրնամ վկայել այս մասին. ասիկա տեղի ունեցաւ հետս, երբ կը գրէի եւ կը խմբագրէի այս գիրքը:

## ԾՆԱԾ՝ ՆՊԱՏԱԿՈՎ՝ ՅԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿԻ ՀԱՄԱՐ

Եկէք սկսինք՝ ուսումնասիրելով շատ յայտնի Աստուածաշնչեան հատուած մը.

«Որովհետեւ *շնորհքով* փրկուած էք՝ հաւատքի ձեռքով, եւ ասիկա ոչ թէ ձեզմէ է, այլ *Աստուծոյ պարգեւն է*, ոչ թէ գործերէն, որ մէկը չպարծենայ» (Եփեսացիս 2.8,9):

Այս երկու խօսքերը *Աստուծոյ շնորհքին* մասին են: Բոլորովին ակնյայտ է, որ մենք փրկուած ենք շնորհքով, եւ որ ասիկա պարգեւ է Աստուծոյ: Քսանմէկերորդ դարուն եկեղեցին փայլուն կերպով փոխանցած է այս ճշմարտութիւնը: Մենք ոչ մէկ պարագային կրնանք այնքան քրտնաջան աշխատիլ, այնքան սուրբ կեանք վարել եւ այնքան զոհաբերել, որ շահինք մեր Արարիչին՝ Ամենակարող Աստուծոյ հետ յաւիտենութիւնը անցընելու արտօնութիւնը: Այս յայտնի Աստուածաշնչեան հատուածը եղած է այս կարելոր ճշմարտութեան գլխաւոր յղումներէն մէկը, եթէ ոչ՝ ամենագլխաւորը: Այնուամենայնիւ, այն, ինչ որ գրուած է ասկէ ետք, անտեսուած է.

«Որովհետեւ Անոր ստեղծուածն ենք՝ Քրիստոս Յիսուսով հաստատուած բարի գործերու համար, որոնց համար Աստուած կանխաւ պատրաստեց մեզի (կամ՝ որոնք Աստուած կանխաւ պատրաստեց մեզի համար), որ անոնց մէջ *վարուինք*» (Եփեսացիս 2.10 NKJV):

Ուշադրութիւն դարձուցէք, որ 9-րդ խօսքին կը յաջորդէ «որովհետեւ» բառը: Այս բառը շաղկապ է, որ կը միացնէ երկու նախադասութիւն: Ուրիշ ձեւով ըսելու համար՝ նախորդ երկու խօսքերը ընդամէնը փոխանցուող միտքի սկիզբն են, ոչ թէ առանձին աւարտուն միտք: «Որովհետեւ» բառը կը նշանակէ «այս պատճառով», այնպէս որ, 8-րդ եւ 9-րդ խօսքերը մէջքերելու ժամանակ՝ 10-րդ խօսքը պէտք չէ անտեսուի: Հակառակ պարագային, դուք բոլորովին չէք ընկալեր փոխանցուող միտքը:

Տասներորդ խօսքին մէջ գրուած է, որ մենք Անոր ձեռքի գործն ենք՝ ստեղծուած յատուկ նպատակի՝ բարի գործեր ընելու համար: Այնպէս որ, ըստ էութեան, Պողոսը կ'ըսէ հետեւեալը այս երեք խօսքերուն մէջ.

*«Մենք փրկուած ենք շնորհքով՝ առաջին հերթին Աստուծոյ զաւակ ըլլալու համար, եւ նոյն շնորհքը հաւասարապէս զօրացուցած է մեզի՝ գործելու համար»:*

Մենք ոչ մէկ պարագային պէտք է չհափէն աւելի շեշտադրենք ճշմարտութիւն մը՝ միւսը անտեսելու հաշւոյն: Սակայն թոյլ տուէք նախապէս ըսել, որ մեր ինքնութիւնը Քրիստոս Յիսուսին մէջ շատ աւելի կարեւոր է, քան մեր գործերը, քանի որ *մեր բոլոր գործերը պէտք է բխին մեր ինքնութենէն:*

Դիրին է խոյս տալ գործելու պահանջքէն, քանի որ ատորմով մեզ կ'ազատենք որեւէ ճնշումէ՝ կապուած այն բանին հետ, որ մենք պէտք է ինչ որ բան մը ընենք, որպէսզի կառուցենք Աստուծոյ Թագաւորութիւնը: Բայց եւ այնպէս, ճշմարտութիւնը այն է, որ յատկապէս մեր գործերը ուժ կը հաղորդեն մեզի: Յիսուս կ'ըսէ. «Իմ կերակուրը այն է, որ Ինձի դրկողին կամքը ընեմ եւ Անոր գործը կատարեմ» (Յովհաննէս 4.34): Ան նոյնպէս կ'ըսէ. «Ինչպէս Իմ Հայրը Ինձի դրկեց, Ես ալ ձեզի կը դրկեմ» (Յովհաննէս 20.21): Միաւորելով այս երկու պնդումները մենք յստակ կը տեսնենք, որ մեր կերակուրն է՝ կատարել եւ աւարտել մեզ դրկող Յիսուսի կամքը: Կերակուրը այն է, ինչ որ ուժ կու տայ մեզի: Եթէ մենք սնունդ չստանանք, կը տկարանանք եւ շատ քիչ բանի համար պիտանի կը դառնանք:

Այժմ վերագրենք ասիկա մեր հոգեւոր կեանքին: Եթէ չկատարենք մեզ դրկող Յիսուսի կամքը, մենք կը տկարանանք՝ խոցելի դառնալով զայթակղութեան համար:

Յիսուսին հետ աւելի քան քառասուն տարի քալելէն ետք եւ նկատած եմ, որ հաւատքէն հեռանալու գլխաւոր պատճառներէն մէկը գործերու բացակայութիւնն է: Մարդիկ կը դառնան ծոյլ եւ անգործ

իրենց կոչումին հանդէպ եւ չեն ալ նկատեր, թէ ինչպէս կը յայտնուին ինքնագոհ գինովութեան կամ անբարոյութեան մէջ, կամ կը տարուին այնպիսի հետաքրքրութիւններով, որոնք կը վերադարձնեն իրենց այս աշխարհի կենսատաճին: Անոնք կը կորսնցնեն իրենց հոգեւոր ուժը: Ամփոփելով ասիկա՝ կարելի է ըսել.

*Այն, ինչ որ մենք կ'ընենք, կը զօրացնէ մեզի:*

Թոյլ տուէք կրկնել այս երեք Աստուածաշնչեան խօսքերու ճշմարտութիւնը: Դուք վերստին ծնած էք Աստուծոյ ծրիաբար տրուած շնորհքով՝ Աստուծոյ գաւակ ըլլալու համար, եւ դուք զօրութիւն ստացած էք նոյն շնորհքով՝ գործելու համար: Աստուածաշունչը կը պնդէ, որ Աստուած նախապէս ծրագրած է մեր բոլոր գործերը: Դաւիթը կը գրէ.

«Դուն տեսար ինձի իմ ծնելէն առաջ: Իմ կեանքի ամէն մէկ օրը արձանագրուած էր Քու գիրքին մէջ: Ամէն մէկ վայրկեանը ծրագրուած էր, երբ տակաւին իմ օրերէն ոչ մէկը եղած էր» (Սաղմոս 139.16, NLT):

Աստուած ձեզի համար գործեր պատրաստած է ձեր ծնունդէն առաջ: Եւ Ան արձանագրած է ատոնք առանձին գիրքի մէջ: Կարելի է միայն պատկերացնել, թէ որքան մեծ է այդ գիրքը, քանի որ ատոր մէջ արձանագրուած է մեր կեանքի ամէն մէկ վայրկեանը: Այն առաջադրանքները, որոնք Ան ծրագրած է մեզի համար, կը վերաբերին Իր Թագաւորութիւնը կառուցելուն: Անոր խորին ցանկութիւնն է, որ մենք կատարենք այն, ինչ որ ծրագրած է մեր կեանքին համար, սակայն չկայ երաշխիք, որ մենք պիտի կատարենք ատիկա: Ուշադրութիւն դարձուցէք, որ Եփեսացիս 2.10-ին մէջ գրուած է՝ «որ անոնց մէջ *վարուի՛նք*»: Այս խօսքին մէջ չէ գրուած՝ «եւ մենք անոնց մէջ կը *վարուի՛նք*», այլ՝ «որ անոնց մէջ *վարուի՛նք*»: Մենք ազատ կամք ունինք. Ան նախապէս գործեր պատրաստած է մեզի համար, սակայն մենք կ'որոշենք՝ արդե՞ս՞ կը վարուինք ըստ Անոր ծրագրին:

Ես համոզուած եմ՝ երբ մենք կանգնինք Յիսուսին առջեւ հաւատացեալներու ատեանին մէջ (ուր պիտի վարձատրուինք մեր գործերուն համար՝ որպէս քրիստոնեաներ, կամ վնաս պիտի կրենք, որ թերացած ենք), Ան պիտի բանայ այդ գիրքը եւ պիտի ըսէ. «Եկո՛ւր համեմատենք, թէ որքանով քու կեանքը համապատասխանած է այն ծրագրին, որ Իմ Հայրը եւ Ես սկզբնապէս կազմած էինք քեզի

համար»): (Ինչ կը վերաբերի դատաստանին, երկու Աստուածաշնչեան խօսքերուն մէջ գրուած է, որ «գիրքերը բացուեցան». կարդացէ՛ք Դանիէլ 7.10 եւ Յայտնութիւն 20.12): Ես կը հաւատամ, որ Աստուած գրած է այդ գիրքերը մեր կեանքին մասին մեր ծնունդէն առաջ: Ինչ կը վերաբերի մեր յատուկ կոչումին, մենք չենք դատուիր ըստ այն գործերուն, որ կատարած ենք, այլ՝ ըստ այն գործերուն, որոնց կատարելու համար կանչուած էինք: Այս միտքը սթափեցնող է:

Այս պահուն հնարաւոր է, որ քիչ մը խուճապի մատնուիք: Ատոր կարիքը չկայ: Կայ երեք կարելոր բան, ինչ որ պէտք է հաշուի առնել: Առաջինը՝ Աստուած աւելի շատ կը ձգտի, որ կատարէք այն, ինչին համար, որ Ան կանչած է ձեզի, քան դուք: Ան աւելի շատ կը ցանկայ, որ բացայայտէք ձեր կոչումը, քան դուք: Երկրորդը՝ ձեր կոչումին մէջ լիարժէք կերպով ըլլալու համար անհրաժեշտ է աճ, որ ընթացք է, ոչ թէ մէկ անգամուան իրադարձութիւն. այնպէս որ, հակառակեցէ՛ք անհամբերութեան առիթ տալու ցանկութեան: Երրորդը՝ այս գիրքին մէջ դուք պիտի գտնէք օգտակար խորհուրդներ թէ՛ Աստուածաշունչէն, թէ՛ կեանքի փորձէն՝ ձեր կոչումը բացայայտելու եւ զարգացնելու համար:

Ահա օրինակ մը՝ այս ամէնը բացատրելու համար: Ենթադրենք, ես քաղաքաշինութեան կոմիտէի նախագահ եմ եւ կը ցանկամ քաղաքի կեդրոնը տպաւորիչ բնակելի, հանգիստի եւ առելորային համալիր կառուցել: Որպէս քաղաքաշինութեան կոմիտէի նախագահ՝ նաեւ գլխաւոր ճարտարագէտն եմ, եւ կը կազմեմ այդ համալիրի գլխաւոր նախագիծը հմուտ շինարարներու եւ ճարտարապետներու հետ: Ես կը ցանկամ, որ այդ համալիրին մէջ ըլլան խաղավայրեր, կարուսէլներ, մարզադաշտեր, շատրուաններ եւ պարտէզներ՝ հանգիստի եւ զբօսանքի համար: Նոյնպէս կը ցանկամ ընդգրկել մանրածախ առելուորի խանութներ բնակելի շէնքերու առաջին յարկերը, նաեւ ճաշարաններ, սինեմաներ եւ այլ ստեղծարար տարրեր՝ մեր համալիրը յատուկ դարձնելու համար:

Նախագիծը պատրաստ ըլլալուն պէս ես կ'որոշեմ, թէ ինչ վարձակալներ անհրաժեշտ են՝ իմ գլխաւոր նախագիծի առանձին բաժինները կատարելու համար: Ես կը վարձեմ շարք մը վարձակալներ եւ կու տամ իրենց առաջադրանքներու ժամանակացոյցը: Նախագիծը պատրաստ է սկսելու համար:

Եթէ բոլոր վարձակալները ընեն ճիշդ այն, ինչ որ ես կը խնդրեմ, այդ հսկայածաւալ նախագիծը սահուն կերպով պիտի կառուցուի եւ անխափան պիտի գործէ: Սակայն ի՞նչ պիտի ըլլայ, եթէ



աշխատավորներին որոշ անհատներ առաջնահերթ չհամարեն այդ նախագիծը: Ի՞նչ, եթե անոնք ընդունին այդ առաջադրանքը, սակայն շինարարության համար նախատեսուած ժամանակահատուածին մէջ օգտագործեն իրենց հմտութիւնները՝ այլ աշխատանքներ կատարելու համար: Ի՞նչ պիտի ըլլայ, եթե անոնք երթան ձկնորսութեան, կոլֆ խաղալու կամ երթան մարզական միջոցառումներու այնքան յաճախ, որ աշխատանքը անտեսուի: Ի՞նչ պիտի ըլլայ, եթե միւսները ծոյլ գտնուին եւ լրջօրէն չվերաբերին իրենց գործին: Եթէ ես բոլորովին կախուած ըլլամ այդպիսի վարձակալներներէն, նախագիծը չ'իրագործուիր ըստ ժամանակացոյցին: Կարելի է ըսել, որ այն այդպէս ալ չ'աւարտիր:

Վարձակալները իրենք կ'որոշեն, թէ ինչպէս վարուին իրենց ժամանակին եւ տաղանդներուն հետ: Այնուամենայնիւ, որպէս քաղաքաշինութեան կոմիտէի նախագահ, ես չեմ հանդուրժեր լուրջ հետաձգումներ կամ նախագիծի անաւարտ մնալու տարբերակը: Փոխարէնը, ես պիտի բերեմ այլ վարձակալներ՝ աշխատանքը կատարելու համար:

Ի՞նչ պիտի ըլլայ վերջաւորութեան: Սկզբնական աշխատավորները վարձատրութիւն պիտի չստանան՝ այն իմաստով, որ պիտի չըլլան հրաշալի խումբի անդամ, որ այդ գեղեցիկ համալիրը կառուցեց: Անոնք պիտի չկարենան ցոյց տալ իրենց երեխաներուն, թոռներուն եւ ընկերներուն իրենց կատարած աշխատանքը քաղաքի այդ գեղեցիկ կեդրոնական հատուածին մէջ: Անոնց երեխաները պիտի չկարենան պատմել մարդոց, թէ ինչ աշխատանքի մէջ ներգրաւուած եղած են իրենց ծնողները: Անոնք նոյնպէս պիտի կորսնցնեն իրենց վարձատրութիւնը՝ այն իմաստով, որ պիտի չվճարուին իրենց առաջադրանքին համար:

Դուք կրնաք տեսնել, որ նոյն սկզբունքը կ'օգտագործուի ամբողջ Աստուածաշունչին մէջ՝ որպէս օրինակ: Աստուած մեծ ծրագիր ունի՝ Իր Թագաւորութիւնը կառուցելու համար: Այնուամենայնիւ, պատմութեան ընթացքին Աստուած հարկադրուած էր գործել այնպիսի մարդոց հետ, որոնք չեն կատարած Իր ցանկութիւնները: Այնպէս որ, Ան յաճախակի ստիպուած էր փոխելու Իր սկզբնական ծրագիրը: Ես պարզապէս կ'օգտագործեմ մարդկային հասկացութիւններ. Աստուած գիտէ վերջը սկիզբէն, քանի որ Ան սահմանափակուած չէ ժամանակով: Ուստի, ծրագիրի «փոփոխութիւնը» անակնկալ չէր Անոր համար: Ան նախապէս գիտէր Իրեն ծառայող մարդոց որոշումներուն մասին եւ արդէն պատրաստուած էր անոնց փոխարինելուն:

Ես քանի մը օրինակ պիտի բերեմ այս մասին այն բազմաթիւ օրինակներէն, որոնք կան Սուրբ Գիրքին մէջ: Այսպէս պատահեցաւ Աբրահամի հայր Թարային հետ (վերջերս մեր կրտսեր որդին՝ Ա՛րտընը, յիշեցուց ինծի այս ճշմարտութեան մասին): Շատերս գիտենք, որ Աբրահամը ծնած եւ մեծցած էր քաղղէացիներու Ուր քաղաքին մէջ, մինչեւ որ Աստուած կանչեց իրեն Քանանի երկիր երթալու: Ոչ այնքան յայտնի է հետեւեալ փաստը. եթէ ուշադրութիւն դարձնէք անոր հօրը՝ Թարային, դուք կը բացայայտէք, որ, ամենայն հաւանականութեամբ, սկիզբը ճիշդ ան կանչուած էր այդ առաջադրանքին համար: Գրուած է.

«Եւ Թարան առաւ իր որդի Աբրամն ու իր թոռը՝ Առանի որդի Ղովտը, եւ իր որդի Աբրամի կին՝ իր հարս Սարան, եւ անոնց հետ քաղղէացիներու Ուր քաղաքէն դուրս ելաւ՝ *Քանանի երկիր երթալու համար*: Եւ գացին մինչեւ Խառան եւ *հոն բնակեցան*: Եւ Թարային օրերը 205 տարի եղան: Եւ Թարան Խառանի մէջ մեռաւ» (Ծննդոց 11.31,32):

Կայ երկու բան, որ պէտք է հաշուի առնենք: Առաջինը՝ ինչո՞ւ ոեւէ մէկը առանց որեւէ պատճառի պէտք է տեղափոխէր իր ամբողջ ընտանիքը Ուրէն եւ անցնէր աւելի քան հազար քիլոմետր, եւ այն ալ՝ դէպի Քանանի երկիր: Ուղտերով ճամբորդելը դանդաղ եւ ծանր է: Կիներու եւ երեխաներու հետ ատիկա, հաւանաբար, քանի մը ամիս տեւեց: Հազիւ թէ Թարան կարենար առցանց դիտել Քանանի լուսանկարները եւ կարդալ յօդուածներ այն մասին, որ Քանանը հրաշալի երկիր է՝ ապրելու եւ աշխատելու համար: Ան այդ մասին չգիտցաւ ընկերական ցանցերու գրառումներէն: Այս յստակ եւ հեռաւոր տեղափոխութիւնը պէտք է ինչ որ պատճառ մը ունենար:

Երկրորդը՝ եթէ ան Քանան երթար, ինչո՞ւ բնակեցաւ Խառանի մէջ: Ինչո՞ւ ան չաւարտեց իր ճանապարհը եւ չհասաւ իր նպատակավայրը: Հնարաւո՞ր է, որ Թարան իր ճանապարհը չաւարտելու գայթակղութիւն ունեցաւ: Հնարաւո՞ր է, որ ան ունէր խանգարող ցանկութիւններ, որ ան բախած էր դժուարութիւններու, որ անոր ընտանիքի անդամներէն մէկը յոգնած էր ճամբորդելէն կամ՝ որ կային այլ շեղող հանգամանքներ: Հնարաւո՞ր է, որ ան Խառանի մէջ շատ աւելի հնարաւորութիւններ տեսաւ եւ չփափաքեցաւ ռիսքի դիմել՝ կորսնցնելով ատոնք պարզապէս Աստուծո՞ւ ստացած խօսքի մը պատճառով:

Հաշուի առնելով ասիկա՝ կրնա՞նք եզրակացնել, որ Թարան Աստուծոյ առաջին ընտրեալն էր՝ «շատ ազգերու հայր» ըլլալու

համար: Կարելի՞ է ըսել, որ սկզբնապես յատկապես ան պետք է ըլլար «հաւատքի հայրը», թէեւ այժմ այդ տիտղոսը Աբրահամին կը պատկանի (կարդացէ՛ք Հռովմայեցիս 4.16,17):

Թարան որոշեց չերթալ մինչեւ վերջ. ան բնակեցաւ Խառանի մէջ: Ես համոզուած եմ՝ եթէ ան մնար իր ընթացքին մէջ, այսօր մենք կը կարդայինք անոր արկածներուն եւ Աստուծոյ հետ կնքած ուխտին մասին: Ես համոզուած եմ, որ Իսրայէլի ժողովուրդը կը համարէր անոր իրենց հայրը, եւ որ Յիսուսին պիտի անուանէին «Թարայի զաւակը», ոչ թէ «Աբրահամի զաւակը» (կարդացէ՛ք Գաղատացիս 3.16):

Աստուծոյ մեծ ծրագրի փոփոխութեան եւս օրինակ մըն էր դատաւոր եւ քահանայապետ Հեղին: Ան եւ անոր ժառանգները կարգուած էին որպէս քահանաներ, որոնք պէտք է մօտենային Աստուծոյ՝ ժողովուրդին համար: Այնուամենայնիւ, Հեղին քով ղրկուած մարգարէ մը յայտարարեց.

«Տէրը՝ Իսրայէլի Աստուածը, կ'ըսէ. «Ես խոստացայ, որ քու ճիւղը Ղեւիի ցեղէն միշտ քահանայութիւն պիտի ընէ Իմ առջեւ: Բայց ես կը պատուեմ անոնց, որ կը պատուեն Ինձի, եւ ես կ'անարգեմ անոնց, որ կ'անարգեն Ինձի: Կու գայ ժամանակը, երբ ես վերջ կը դնեմ քու ընտանիքին, եւ այն այլեւս քահանայութիւն չ'ըներ Իմ առջեւ» (Ա. Թագաւորաց 2.30,31, NLT):

Հեղին անհնազանդութիւնը ազդեց ե՛ւ իր, ե՛ւ իր ժառանգներուն վրայ: Եթէ Հեղին պատիւով վարուէր Տիրոջ առջեւ, անոր ցեղը կը պահպանէր քահանայութիւնը:

Եւս օրինակ մը կարելի է համարել Իսրայէլի բոլոր թագաւորները: Առաջինը Դաւիթի որդի Սողոմոնն էր: Աստուած ըսաւ անոր. «Քանի որ դուն չպահեցիր Իմ ուխտը եւ անհնազանդ գտնուեցար Իմ պատուէրներուն, ես անշուշտ կը պատռեմ թագաւորութիւնը քեզմէ եւ կու տամ այն քու ծառաներէն մէկուն» (Գ. Թագաւորաց 11.11, NLT): Եթէ Սողոմոնը հաւատարիմ մնար, անոր թագաւորութիւնը երբեք չէր վերցուեր իր որդի Ռոբովամէն: Թագաւորութեան մեծ մասը տրուեցաւ Յերոբովամին, սակայն հետագային ան նոյնպէս հաւատարիմ չեղաւ: Աստուած ըսաւ անոր.

«Ես յառաջխաղացում տուի քեզի պարզ մարդոց շարքերէն եւ դարձուցի Իմ ժողովուրդ Իսրայէլի իշխանը: Ես պատռեցի թագաւորութիւնը Դաւիթի ընտանիքէն եւ տուի այն քեզի: Բայց դուն չեղար Իմ ծառայ Դաւիթին պէս, որ կը հնազանդէր Իմ

պատուներն երուն եւ կը հետեւէր Ինծի իր ամբողջ սրտով եւ մշտապէս կ'ընէր այն, ինչ որ Ես ցանկայի... Եւ քանի որ դուն քու մէջքը դէպի Ինծի դարձուցիր, Ես աղէտ կը բերեմ քու արքայատոհմիդ վրայ» (Գ. Թագաւորաց 14.7-10, NLT):

Յերոբովամը մնայուն արքայատոհմ կ'ունենար, եթէ չչարաշահէր իր դիրքը եւ պարգեւները անձնական շահի համար, այլ օգտագործէր ատոնք Աստուծոյ Թագաւորութեան շահին համար: Նմանատիպ ուղերձ ստացաւ Իսրայէլի Բասաթ Թագաւորը (կարդացէ՛ք Գ. Թագաւորաց 16.1-7), ինչպէս նաեւ անոնք, որոնց Թագաւորութիւն վստահուած էր:

Իմ ըսելիքը հետեւեալն է. յաճախ մեր անհաւատարմութիւնը Աստուծոյ կանչին՝ կ'ազդէ ոչ միայն մեր վրայ, այլեւ մեր սերունդներուն վրայ: Թարայի պարագային ատիկա տեղի չունեցաւ, սակայն շատերու պարագային այդպէս էր:

Մենք կը տեսնենք նմանատիպ իրավիճակ նաեւ մարգարէներու կեանքին մէջ: Եղիսէն ծառայեց Եղիային եւ անոր օծութեան կրկնակի չափը ստացաւ: Բայց տարիներ յետոյ Եղիսէի ծառայ Գէեզին, որ պէտք է իր կարգին ընդունէր մարգարէական պարգեւը, դադարեցաւ կարեւորին վրայ կեդրոնանալէ եւ զրկուեցաւ իր կոչումէն: Ան բորոտ դարձաւ եւ ձգեց այն ծառայութիւնը, որուն համար սկզբնապէս կանչուած էր (կարդացէ՛ք Դ. Թագաւորաց 5.20-27): Անոր տեղը գրաւեց նոր ծառայ մը (որուն անունը նշուած չէ)՝ Եղիսէին օգնելու համար:

Նոր կտակարանին մէջ ասիկա տեղի ունեցաւ Իսկարիովտացի Յուդային հետ: Քանի որ ան չարաշահեց իր կոչումը եւ իրեն վստահուած պարգեւները, ան պէտք է փոխարինուէր: Պետրոսը ըսաւ Վերնատունը հաւաքուած աշակերտներուն (այս մասին գրուած է Սաղմոսներու գիրքին մէջ). «Թող ուրիշ մարդ մը գրաւէ անոր պաշտօնը»: Այնպէս որ, այժմ մենք պէտք է ընտրենք Յուդային փոխարինող մարդը (կարդացէ՛ք Գործք 1.20,21, NLT):

Որքա՛ն ցաւալի է, եւ որքա՛ն ողբերգական է: Մեզի կրնայ սթափեցնել միտքը այն մարդոց մասին, որոնք պիտի զղջան, քանի որ արժանի կերպով չտնօրինեցին իրենց կոչումն ու պարգեւները:

Վերադառնանք դրական կողմին. Դուք, թանկագին ընթերցող, ծնած էք նպատակով՝ յատուկ նպատակի համար: Ձեր կեանքը մեծ արժէք ունի յաւիտենականը կառուցելու մէջ: Եւ ատիկա պարգապէս պարզ տղամարդու կամ կնոջ կամքը չէ, այլ որոշուած է անձամբ Աստուծոյ կողմէ:

## ԴՌՔ Կ՛ՈՐՈՇԷՔ ԶԵՐ ԱՐԴԻՆԱԷՏՈՒԹԻՒՆԸ

Այն, ինչ որ պիտի ըսեմ, կրնայ զարմացնել ձեզի: *Ձեր արդիւնաւէտութիւնը ոչ թէ Աստուած, այլ դուք կ'որոշէք:* Այս պնդումը կրնայ աներկիւղ թուիլ, եթէ դուք կը հաւատաք, որ ձեր կեանքի բոլոր ձեռքբերումները միմիայն Աստուծոյ գերիշխանութեան արդիւնքն են: Այնուամենայնիւ, ես կը վստահեցնեմ, որ այս պնդումը ո՛չ աներկիւղ է, ո՛չ ալ որեւէ չափով կը փոքրացնէ Աստուծոյ գերիշխանութիւնը: Այն կը վկայէ, որ Ան կը վստահի մեզի եւ կը ցանկայ, որ Իր որդիները եւ դուստրերը գործադրեն այն ազատ կամքը, որ Ինքը տուած է մեզի:

Կրկին կարդանք այն սուրբգրային հատուածը, որմով սկսանք այս գլուխը.

«Իմաստութիւնը կը բազմապատկէ քու օրերը եւ կ'աւելցնէ քու կեանքին տարիները: Եթէ դուն իմաստուն դառնաս, դուն օգուտ պիտի ստանաս ատկէ» (Առակաց 9.10-12, NLT):

Այս ճշմարտութիւնը այնքա՛ն խրախուսական եւ ազդեցիկ է: Ի՞նչ կը նշանակէ «կը բազմապատկէ քու օրերը»: Ատիկա չի կրնար նշանակել կեանքի տեսողութիւնը երկնցները, քանի որ «եւ կ'աւելցնէ քու կեանքին տարիները» արտայայտութիւնը արդէն իսկ կը խօսի այդ մասին: Միակ իմաստը, որ ատիկա կրնայ ունենալ, ձեր արդիւնաւէտութիւնը ամէն օր աւելցնելն է: Ուրիշ ձեւով ըսելու համար, դուք կը ստանաք ամէն օրուրնէ աւելին, քան ան, որ չունի Աստուծոյ իմաստութիւնը:

Ամենայն հաւանականութեամբ, դուք լսած էք այս խօսքը. «Եթէ կացիւնը բութ է, եւ մարդը չի սրեր սայրը, ան պէտք է աւելի շատ ուժ գործադրէ, բայց իմաստութիւնը յաջողութիւն կը բերէ» (Ժողովող 10.10, NKJV): Այն իմաստութեան մասին է: Դուք արդիւնաւէտ չէք ըլլար բութ կացիւնով (իմաստութեան պակասի պարագային): Հակառակը նոյնպէս ճշմարիտ է. դուք պիտի կարենաք աւելի շատ ծառեր կտրել սրած կացիւնով (իմաստութեամբ ապրելով): Դուք կը բազմապատկէք ձեր արդիւնաւէտութիւնը՝ օգտագործելով նոյն ուժը:

Աստուծոյ իմաստութիւնը անչափ կարելոր է: Աւելի ուշ այս գիրքին մէջ ես պիտի պատմեմ պատմութիւն մը իմ ընկերներէն մէկուն մասին, որը տասնամեակներ շարունակ անարդիւնաւէտ էր՝ որպէս հաւատացեալ, բայց, ի վերջոյ, յոգնեցաւ իր թմրած, դառնանիրի վիճակէն: Առաջինը, ինչ որ ան ըրաւ, վեց ամիս Աստուածաշունչը ջանասիրաբար ընթերցելն էր: Ատոր շնորհիւ ան իմաստութիւն ստացաւ՝ աւելի արդիւնաւէտ դառնալու համար, եւ դուք կը

զարմանաք, երբ կարդաք անոր կեանքի պատմութիւնը:

Աստուածաշունչը կ'ըսէ ոչ միայն իմ ընկերոջը, այլեւ բոլորիս. «Իմաստութիւն ստանալը ամենակարեւոր բանն է, որ կրնաս ընել» (Առակաց 4.7, GNT): Ինծի հաճելի կը թուի այս պնդումը: Հազիւ որ հաւատաք այս խօսքերուն, դուք կը տրամադրէք ձեր ժամանակն ու ուժերը իմաստութիւն ստանալուն: Բայց Առակաց 9.11,12-ի կարելորագոյն ճշմարտութիւնը հետեւեալն է. «Հազիւ որ իմաստութիւն ստանաք, *դուք օգուտ պիտի ստանաք ասորմէ*»:

Աստուծոյ իմաստութիւնը, որուն միջոցով կը բաժնեկցիմ այս գիրքին մէջ, ստացած եմ տարիներ շարունակ փնտռելու, որոնելու եւ լսելու արդիւնքով եւ ուղեկցուած է թէ՛ դրական, թէ՛ բացասական փորձառութիւններով: Բայց, ինչպէս կը տեսնէք, ոչ միայն ես, այլեւ շատերը, որոնց հետ հաղորդակցելու արտօնութիւն ունեցած եմ, վարուած են իմաստութեամբ եւ անասելի պտուղ բերած են: Ես միայն կրնամ յոյս ունենալ, որ կարճ ժամանակ յետոյ դուք պիտի ստանաք այն, որուն համար ինձմէ տարիներ պահանջուեցան, եւ որ դուք այս իմաստութեամբ շատ աւելի հեռուն պիտի երթաք, քան ես: Ասիկա մեր Թագաւորութեան գործն է, որուն մէջ բոլորս մէկ ենք. այնպէս որ, եթէ դուք օգուտ ստանաք, ես նոյնպէս օգուտ կը ստանամ: Եթէ դուք աւելի հեռուն երթաք, քան ես, ասիկա օգուտ պիտի բերէ նաեւ ինծի, քանի որ բոլորս մէկ ենք: Բոլորս կը գործենք յանուն մէկ ընդհանուր նպատակի եւ մէկ Թագաւորի փառքին:


## ԳԱՂՏՆԻՔ

Անցնինք յաջորդ գլուխը հետեւեալ հարցումով: Դուք կը փափաքէի՞ք գիտնալ գաղտնիք մը, որուն մասին շատերը անտեղեակ են, եւ որուն շնորհիւ ձեր կարողութիւնները կ'ընդլայնին՝ գերազանցելով այն, ինչ որ ժամանակին վերապրած էք:

Կը կարծեմ՝ այո՛: Եւ բանն այն է, որ նման գաղտնիք մը իրականութեան մէջ կայ: Եւ շուտով կը բացայայտենք այդ ծածուկ ճշմարտութիւնը:

## ՄՏՈՐԵՑԷՔ

1. Համաձայն Եփեսացիներու 2.10-ին, ձեր ծնունդէն առաջ Աստուած ծրագրած է այն ամէնը, ինչ որ պէտք է կատարէք ձեր կեանքին մէջ: Դուք կը փափաքի՞ք իմանալ այդ ծրագիրները: Ի՞նչը խոչընդոտած է, որ բացայայտէք աստոնք:
2. Դուք ծնած էք նպատակով՝ յատուկ նպատակի համար: Մտածելով Սթէնի պատմութեան մասին, ինչպէ՞ս կը դիտարկէք ձեր պարգեւներն ու կարողութիւնները: Դուք կը համարէ՞ք, որ աստոնք կարելոր են Աստուծոյ Թագաւորութիւնը կառուցելու համար, թէ՛ ինչպէս եւ Սթէնը, դուք ալ չէք տեսներ ընդհանուր պատկերը:
3. Աստուծոյ կամքը կատարելը կը զօրացնէ մեզ: Արդեօ՞ք այն, ինչ որ դուք հիմա կ'ընէք, կը զօրացնէ ձեզ: Դուք կը սիրէ՞ք ձեր ներկայ աշխատանքը: Եթէ ոչ, ինչո՞ւ բաւականութիւն չէք զգար:



*«Ուրեմն, քանի որ մենք ունինք տարբեր  
պարզեւներ՝ ըստ այն շնորհքի, որ տրուած է  
մեզի, եկէք գործածենք աստոնք»:*

– Հռովմայեցիս 12.6, NKJV



## ՓՈՒՆԱՆՑՈՒԱԾ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

**Ե** ս Ճիմ անունով ընկեր մը ունիմ, որ 18 տարի շարունակ բարձր դասարաններու աղջիկներու պասքեթպոլի խումբի մարզիչ եղած է: Ամբողջ այդ ընթացքին ան չէր կրնար գրաւել նահանգի մրցաշարքի առաջին դիրքը: Ամէն տարի անոր խումբը կա՛մ կը պարտուէր շրջանային եզրափակիչ խաղերուն, կա՛մ, հասնելով նահանգային մրցաշարքին, կը պարտուէր առաջին իսկ փուլէն:

Ճիմը կը պատմէր ինձի.

- Ես յուսալքուած էի եւ պատրաստ էի յանձնուելու, բայց մօտաւորապէս այդ ժամանակ ես բացայայտեցի Աստուծոյ շնորհքի գօրութիւնը:

Ճիմը յստակ որոշում կայացուց, որ այլեւս իր մարզումները իր ուժերով պիտի չվարէր, ինչպէս որ ըրած էր տասնութ տարի շարունակ, այլ բոլորովին պիտի ապաւինէր *Աստուծոյ շնորհքին*: Ան հարցուց Տիրոջը, թէ ինքը ինչ պէտք է ընէ, եւ Աստուած պատասխանեց. «Փոխէ՛ մարզումներու ձեւը: Իննսուն վայրկեան մարզուելու փոխարէն, առաջին քառասունհինգ վայրկեանը հանդերձարանը մնացէ՛ք՝ Աստուածաշունչ կարդացէ՛ք, բաժնեկցեցէ՛ք եւ աղօթեցէ՛ք, իսկ յաջորդ քառասունհինգ վայրկեանը գացէ՛ք մարզուելու»:

Ճիմը կը պատմէր ինձի.

- Ճո՛ն, առիկա հակարդինաւէտ կը թուէր: Մենք պէտք էր աշխատէինք մեր հմտութիւններու եւ խաղային մարտավարութիւններու վրայ. ինձի պէտք էր մեր մարզումներու իննսուն վայրկեանէն ամէն մէկը: Բայց ես գիտէի, որ Աստուծմէ լսած էի:

Ան շարունակեց.

- Ես ներկայացուցի իմ նոր մարտավարությունը աղջիկներուն: Անոնք մտածեցին, որ աստիկա քիչ մը կրօնական է, եւ որ աստիկա անմիտ գաղափար է: Քանի մը հոգի նոյնիսկ յուսահատեցան, երբ առաջին անգամ լսեցին այդ, բայց այն բանէն յետոյ, երբ ես աւելի մանրամասն պատմեցի իմ որոշումին մասին, անոնք համաձայնեցան:

Ժպիտը դէմքին՝ ան ըսաւ.

- Այդ տարի մենք առաջին անգամ ըլլալով յաղթեցինք եւ գրաւեցինք նահանգի պապեթպոլի մրցաշարքի առաջին դիրքը: Կարծես աստիկա բաւական չէր, յաջորդ տարի կրկին յաղթեցինք:

Ան շարունակեց պատմել երկրորդ առաջնութեան մասին.

- Ատիկա անհաւատալի էր, քանի որ մենք վրիպեցինք բոլոր երկու միաւորանոց հարուածները վերջին խաղի ընթացքին: Մենք պէտք չէր յաղթինք այդքան վրիպելէն ետք: Սակայն վիճակագրութիւնը վերանայելէն յետոյ հասկցանք, որ բարձրագոյն մրցանիշը կոտրած էինք այդ խաղին մէջ՝ երեք միաւորանոց հարուածներով: Երեք միաւորանոց հարուածները ամբողջացուցին բոլոր երկու միաւորանոց վրիպումները՝ մեզի յաղթական հաշիւ տալով:

## ԶՕՐՈՒԹԻՒՆ

Ճիւղը Աստուածային իմաստութիւն ստացաւ՝ նոյն իմաստութիւնը, որ բացայայտեց Պօղոս առաքեալը, եւ որ, ըստ վիճակագրութեան, անտեսուած է 21-րդ դարի եկեղեցւոյ աւելի քան 90 տոկոսի կողմէն: Այն հետեւեալն է. Աստուածաշնչեան *շնորհքը* ոչ միայն Աստուծոյ փրկութեան պարգեւն է, այլեւ Անոր *գորութիւնը*՝ մեր կեանքին համար: Կարդացէ՛ք այն, ինչ որ Պօղոսը կը գրէ, բայց մտապահեցէ՛ք, որ ասիկա ուղիղ մէջբերում է Աստուծոյ բերանէն. «Իմ *շնորհքը* այն ամէնն է, ինչ որ քեզի պէտք է, որովհետեւ *Իմ գորութիւնը* առաւելագոյնն է, երբ դուն *թոյլ ես*» (Բ. Կորնթացիս 12.9, GNT):

Այս խօսքին մէջ չկան հարցական կամ անորոշ հատուածներ: Աստուած ուղղակիօրէն կ'ըսէ, որ *Իր շնորհքը* *Իր գորութիւնն* է: «*Թոյլ*» բառը այս խօսքին մէջ կը նշանակէ «անկարող»: Տէրը կը յայտնէ Պօղոսին, եւ նոյնպէս՝ ձեզի եւ ինձի. «Իմ գորութիւնը (*շնորհքը*) լաւագոյնս կը գործէ այն իրավիճակներուն մէջ, որոնք վեր են ձեր բնական կարողութենէն»:

Ճիւղը ջանափրաբար աշխատած էր տասնութ տարի՝ ամբողջ ուժերով փորձելով հասցնել իր խումբի աղջիկները նահանգի առաջնութեան, եւ ի՞նչ տեղի ունեցաւ վերջաւորութեան: Ոչինչ՝ բացի տասնութ տարի տեւող ծախողութիւններէն: Այնուամենայնիւ, արժէր

անցնիլ անյաջողութիւններով եւ բազմաթիւ հիասթափութիւններով՝ յանուն այն իմաստութեան, որ Ճիմը ի վերջոյ բացայայտեց. *Աստուծոյ շնորհքը կը զօրացնէ մեզի՝ մեր բնական կարողութիւնը գերազանցելու համար:*

Մէկ այլ նամակի մէջ Պօղոսը համարձակ պնդում մը կ'ընէ. «Ես աշխատեցայ աւելի շատ, քան միւս առաքեալներէն ռեւէ մէկը»: Մի՞թէ ան իսկապէս նման բան գրած է: Մտածեցէք, թէ որուն նկատի ունի. Պետրոսին, Յակոբոսին, Յովհաննէսին, Բառնաբասին, Ապօղոսին եւ շարք մը այլ ականառու ծառայողներու: Ասիկա քիչ մը ամբարտաւան կը թուի: Այնուամենայնիւ, եթէ կարդաք անոր պնդումին շարունակութիւնը, դուք պիտի հասկնաք, որ այդպէս չէ.

«Ես աւելի շատ աշխատեցայ, քան միւս առաքեալներէն ռեւէ մէկը, թէւ իրականութեան մէջ ասիկա իմ աշխատանքը չէր, այլ Աստուծոյ շնորհքը իմ մէջ կը գործէր» (Ա. Կորնթացիս 15.10, GNT):

Պօղոսը կը պարծենար Աստուծոյ զօրութեամբ, ոչ թէ իր կարողութեամբ. այնպէս որ, անոր խօսքերուն մէջ իր մասին պարծանք չկար: Ան կ'ապաւինէր շնորհքին՝ իր Աստուածային առաքելութիւնը կատարելու համար: Տարիներ տելող հիասթափութիւններէն եւ, ի վերջոյ, լուսաւորում ստանալէն յետոյ Ճիմը կ'ապաւինի Աստուծոյ զօրութեան (շնորհքին) իր մարգշական աշխատանքին մէջ, որպէսզի գերազանցէ իր կարողութիւնները: Ան սկսած է կիրառել այս իմաստութիւնը իր կեանքի բոլոր բնագաւառներուն մէջ. անոր կացինը սրուած է:

Մտապահելով ասիկա՝ վերադառնանք մեր անհատական առաքելութեան: Կրկին, Աստուծոյ խօսքը կը յայտնէ. «Որովհետեւ Անոր ստեղծուածն ենք՝ Քրիստոս Յիսուսով հաստատուած բարի գործերու համար, որոնց համար Աստուած առաջուրնէ պատրաստեց մեզի (կամ՝ որոնք Աստուած առաջուրնէ պատրաստեց մեզի համար), որ անոնց մէջ վարուինք» (Եփեսացիս 2.10): Ինքը՝ Աստուած, պատրաստած է ձեր առաջադրանքը ձեր ծնունդէն առաջ: Եւ այդ յատուկ կոչումը այն է, ինչ որ պիտի տայ ձեզի ճշմարիտ բաւականութիւն, որ չի կրնար տալ որեւէ աշխատանք կամ զբաղում: Այն ձեր նպատակն է եւ ուշագրաւ է իր մեծութեամբ: Իրականութեան մէջ, կայ առանցքային ճշմարտութիւն մը այն կատարելու վերաբերեալ, որ պէտք է իմանաք.

*Այն կոչումը, որ Աստուած պատրաստած է ձեզի համար, վեր է ձեր բնական կարողութենէն:*

Ես շատ պարզ պիտի բացատրեմ ասիկա: Անկարելի է, որ կարենանք կատարել մեր Աստուածային յանձնարարականը մեր կարողութեամբ: Ուրկէ՞ գիտեմ այս մասին: Քանի որ Աստուած հաստատապէս կը յայտարարէ, որ Ան չի տար Իր փառքը ոեւէ մէկուն (կարդացէ՛ք Եսայիա 48.11): Եթէ մեզմէ ոեւէ մէկը կարենար կատարել իր Աստուածային կոչումը իր կարողութեամբ, Աստուած ստիպուած կ'ըլլար կիսուիլ Իր փառքով մեզի հետ, իսկ Ան պիտի չառնէ այդ քայլը: Աստուած միտումնաւոր այնպէս ըրած է, որ ձեր կոչումը ըլլայ վեր ձեր բնական կարողութենէն, որպէսզի դուք ստիպուած ըլլաք ասպաւինիլ Իր *շնորհքին*՝ այն կատարելու համար:

### ՅԱՏՈՒԿ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Յաջորդը՝ մենք պէտք է հարցնենք, թէ արդեօ՞ք կան շնորհքի յատուկ ընդունակութիւններ կամ պարգեւներ: Ուրիշ ձեւով ըսելու համար, ինչպէս որ շնորհքը կը զօրացնէ մեզի, որպէսզի ապրինք՝ գերազանցելով մեր բնական կարողութիւնները, կա՞ն արդեօք Աստուծմէ տրուած եզակի պարգեւներ, որոնք ճիշդ նոյն կերպով կը սպառազինեն մեզի՝ մեր յատուկ առաքելութիւնը կատարելու համար:

Թոյլ տուէք պատասխանել քանի մը օրինակով: Ռոժէ Ֆետերերը երբեք աշխարհի մեծագոյն թենիսիստներէն մէկը չէր դառնար, եթէ թենիսի ձեռնաթի եւ գնդակներ չունենար: Որեւէ քաղաքի մէջ գտնուող փայտամշակման լաւագոյն մասնագէտի տաղանդը չէր բացայայտուեր, եթէ ան գործիքներ չունենար: Դուք երբեք չէիք գիտնար Միքելանճելոյի մասին, եթէ ան չունենար հատիչ, վրձին եւ ներկեր: Արդեօ՞ք ասիկա կը վերաբերի նաեւ մեր Աստուածային կոչումներուն:

Երկու կարճ պատմութիւն պիտի օգնէ մեզի պատասխանելու այս հարցումին: Երբ ծառայութեան մէջ նոր էի, ես ծանօթացայ բացառիկ փառաբանութեան եւ երկրպագութեան առաջնորդի մը հետ: Ան փառաբանութեան առաջնորդ եղած էր 1900-ական թուականներու կէսերուն ծառայող հանրայայտ ամերիկացի մը ծառայութեան մէջ: Այդ ամերիկացի մահացած էր 1970-ականներուն, այնուհետեւ սկսած էր իր ծառայութիւնը:

Ան յաճախ կու գար մեր եկեղեցին 1980-ական թուականներուն, եւ շատ անգամներ ես պարզապէս ակնածանքով կը նայէի եւ կը լսէի իրեն. ան շնորհքով օժտուած մարդ էր: Իմ գիտցած երաժիշտներէն քիչերն էին անոր պէս դաշնամուր նուագող, եւ կը թուէր՝ ան կ'ընէր ատիկա առանց որեւէ ջանք գործադրելու: Քանի

մը վայրկեանի ընթացքին ան կրնար դրդել 3.500 մարդու ոտքի ելլելու, երգելու ու պարելու: Երբ ան Աստուծոյ կը փառաբանէր, մթնոլորտը ամբողջութեամբ կը փոխուէր՝ լիցքաւորուելով Աստուծոյ ներկայութեամբ:

Վերջին քանի մը անգամները, երբ ան կ'այցելէր մեզի՝ ծառայելու համար, ես անոր ուղեկցելու արտօնութիւն ունէի: Երբ ես անոր հետ էի, հարցումներ կը հարցնէի, քանի որ կը ցանկայի իմանալ անոր Աստուածատուր կարողութիւններուն մասին: Ես պարզեցի, որ անոր մայրը, որ Աստուածապաշտ եւ նուիրեալ կին էր, ամէն օր, ժամեր շարունակ կ'աղօթէր: Ան ըսաւ.

- Ճո՛ւն, երբ ես մօրս որովայնին մէջ էի, օր մը տղամարդ մը (անոր մայրը համոզուած էր, որ ատիկա հրեշտակ էր) մեր տունը եկաւ: Այդ մարդը, որուն մայրս երբեք չէր տեսած, ըսած է. «Քու որդին բազմութիւններ պիտի առաջնորդէ Աստուծոյ ներկայութեան մէջ եւ հմտօրէն դաշնամուր պիտի նուագէ՝ մանկութենէն սկսեալ»:

Անոր պատմութեան շարունակութիւնը ապշեցուց ինձի, եւ ես չեմ կրնար մոռնալ այն: Քանի մը անգամ, երբ ան տակաւին փոքր երեխայ էր, նստած էր իր ծնողներու դաշնամուրին քով եւ գերազանց նուագած էր՝ առանց նախկինին որեւէ դաս առնելու կամ փորձ ընելու: Ան կը նուագէր ոչ թէ «Շան վալս», այլ բաւականին բարդ հատուած, որ կրնային նուագել միայն դաշնամուրի բաժինի փորձառու ուսանողները: Եւ, անշուշտ, ան կը նուագէր առանց նոթաներու:

Այդ օրուընէ ան հմտօրէն կը նուագէր՝ առանց նոյնիսկ մէկ անգամ նոթա կարդալու: Ան բոլոր երաժշտութիւնները լսողութեամբ կը նուագէր: Ան կրնար լսել որեւէ երաժշտութիւն եւ քանի մը վայրկեան յետոյ նուագել:

Անոր ծառայութիւնը սկսաւ փոքր տարիքէն. ան կը նուագէր իր հարազատ քաղաքի եկեղեցւոյ հաւաքոյթներուն: Ի վերջոյ, անոր պարզելը դուռ բացաւ անոր համար, որպէսզի ան նուագէր այդ հանրայայտ աւետարանիչի ծառայութեան ընթացքին:

Ակնյայտ է, որ ան ունէր պարզեւ՝ Աստուածային կարողութիւն:

Եւս քաջ յայտնի օժտուած անձնաւորութիւն մը՝ Աքիանէ Քրամարիքը, առանց որեւէ նկարչական դասերու, չորս տարեկանին սկսաւ բացառիկ կերպով գծել: Վեց տարեկանին ան գծագրեց բարդ առարկաներ, ինչպէս եւ իր եզակի տեսիլքները: Ութ տարեկանին ան պատկերեց այժմ յայտնի դարձած «Խաղաղութեան Իշխանը» կտաւը: Այդ դիմանկարի օրինակը կախուած է գրասենեակիս պատին՝ իմ սեղանի ետեւը:

Ակնյայտ է, որ ան ունի պարզեւ՝ Աստուածային կարողութիւն:

Ինչո՞ւ միայն ոմանք կը ստանան պարգևներ: Եւ արդեօ՞ք իրականութեան մէջ այդպէս է:

Մենք պէտք է հարցնենք հետեւեալ հարցումը: Աստուծոյ զաւակներէն ոմա՞նք, շատե՞րը, թէ՞ բոլորը կը ստանան պարգևներ: Կրկին կարդանք այս գլուխի բացման խօսքը՝ «Նոր կենդանի թարգմանութենէն»:

«Իր *շնորհքով* Աստուած տուած է մեզի տարբեր *պարգևներ*՝ որոշակի գործեր արդիւնաւէտ կատարելու համար»:

– Հռովմայեցիս 12.6, NLT

Մենք կը տեսնենք երկու անսահման կարելոր բառ այս մէկ Աստուածաշնչեան խօսքին մէջ: Առաջինը, որ մենք արդէն քննարկած ենք՝ *շնորհքը*, յունարէն «*խարիս*» բառն է: Եթէ աւելցնենք «*մա*» տառերը «*խարիս*»-ին, կը ստանանք եւս յունարէն բառ մը՝ «*խարիզմա*», որ մեր խօսքին մէջ նշուած «պարգևներ» բառն է: Այժմ կը խօսինք այս բառին մասին:

Տարիներ շարունակ, ուսումնասիրելով յունարէն բառարանները եւ այն, թէ ինչ համայոյութներու մէջ օգտագործուած է «*խարիզմա*» բառը Նոր կտակարանին մէջ, ես կազմած եմ այս բառի սահմանումը.

*խարիզմա* - շնորհքի յատուկ ընդունակութիւն կամ պարգև, որ կը զօրացնէ մարդուն՝ տալով անոր յատուկ կարողութիւն:

Խօսքը Աստուծային կարողութեան մասին է, որ կը վստահի մարդուն եւ մշտապէս կը գերազանցէ պարզ բնական կարողութիւնը: Որոշ պարգևներ ակնյայտօրէն գերբնական են: Միւսները սովորական մարդկային կարողութիւն կը թուին, բայց իրականութեան մէջ գերբնական են: Որոշ պարգևներ կը տրուին ի ծնէ, իսկ միւսները կը տրուին կեանքի որոշակի պահուն՝ Տիրոջ խօսքով:

## ԳՐԵԼՈՒ ԽԱՐԻԶՄԱ

Թոյլ տուէք սկսիլ *խարիզմայի* մեր ուսումնասիրութիւնը իմ կեանքի օրինակներով (ես համառօտ գրած եմ այս անձնական պատմութիւնները իմ նախորդ գիրքերէն մէկուն մէջ, որ կը կոչուի «*Յաւիտենութեամբ շարժողները*»):

Իմ կեանքի *խարիզմաներէն մէկը* գրելն է: Եթէ դուք տարիներ շարունակ չէք հետեւիր մեր ծառայութեան, հաւանաբար չէք գիտեր, որ դպրոցին մէջ իմ անգլերէնի, գրաւոր շարադրութեան եւ օտար լեզուի արձանագրած նիշերս շատ ցած էին: Երբեմն ես կը մտածեմ, որ իմ

անգլերենի ուսուցիչները ինծի յաջորդ դասարան կը տեղափոխէին, միայն՝ որպէսզի ստիպուած չըլլային մէկ տարի եւս դիմանալու ինծի:

Երբ դպրոցին մէջ մեզի կը յանձնարարէին մէկ-երկու էջանոց շարադրութիւն գրել, ինծմէ ժամեր կը պահանջուէին այդ արագ կատարուող առաջադրանքներու համար: Ես մէկ-երկու նախադասութիւն կը գրէի, քանի մը վայրկեան կը նայէի գրածիս եւ շարունակ տհաճութիւն կը զգայի այն պատճառով, թէ որքան անվարժ եւ անիմաստ կը թուէր ատիկա: Ես կը ճմռթէի թուղթը եւ նորէն կը սկսէի: Կրկին ու կրկին նոյն բանը կ'ընէի՝ ծախսելով շատ թուղթ, ժամանակ եւ մտաւոր ուժեր: Կը յիշեմ դէպքեր, երբ մէկ ժամ գրելէն յետոյ դեռ չէի կրնար երկու պարբերութիւն կազմել:

Եթէ դուք կը կասկածիք իմ ինքնագնահատականի մէջ, կ'ըսեմ ձեզի իմ Չափանիշային թեսթի (SAT - դպրոցական ընդունակութեան թեսթի) գնահատականը: Ինչպէս գիտէք, այս գնահատականը պարտադիր է շատ համալսարաններ եւ ուսումնարաններ ընդունուելու համար: Այդ ժամանակ, երբ ես անցայ այն, հիմնական երկու քննութիւնները *թուաբանութիւնն* ու *խօսակցական անգլերէնն* էին: *խօսակցական անգլերէնը*, ըստ էութեան, անգլերէնի քննութիւն էր, երբ կը ստուգուէին ընթերցանութեան եւ գրելու հմտութիւնները: Ամենաբարձր հնարաւոր գնահատականը 800 միաւորն էր: Իմ միաւորը *խօսակցական անգլերէնէն* 370 էր (այո, դուք ճիշդ կարդացիք): Եթէ նայիք տոկոսային յարաբերութեան, ատիկա սարսափելի էր. ընդամենը 42 տոկոս, ինչ որ «անբաւարար» կը համարուի՝ համաձայն գնահատականներու նշագիծի մեծ մասին: Վերջին երեսունէն աւելի տարիներուն իմ բոլոր ճանապարհորդութիւններու ընթացքին ես միայն մէկ մարդու հանդիպած եմ, որ աւելի ցած գնահատական ստացած էր Չափանիշային թեսթի *խօսակցական անգլերէնի* քննութեան:

Եկէք առջեւ երթանք դէպի այն ժամանակը, երբ ես արդէն երեսունը անց էի: 1991 թուականի ամառնային առաւօտ մը, հեռաւոր ամայի վայրը աղօթելու ժամանակ՝ Աստուած խօսեցաւ հետս. «Որդի՛ս, Ես կը ցանկամ, որ դուն գրես»:

Ես ծիծաղեցայ մտքիս մէջ. «Աստուած, Դուն այնքան որդիներ ու դուստրեր ունիս այս երկրի վրայ, որ թերեւս կը շփոթես մեզի: Հազիւ թէ Դուն ցանկաս, որ ես գրեմ. կրնաս հարցնել իմ աւագ դպրոցի անգլերէնի ուսուցիչներուն»:

Ես ոչ մէկ պատասխան ստացայ: Պարզապէս լռութիւն:

Ես համարեցի, որ լռութիւնը համաձայնութեան նշան է: Ես համոզեցի ինքզինքս, որ ամէն ինչ աւարտեցաւ, քանի որ Ան

չառարկեց իմ ըսածը: Բայց իմ սրտին մէջ ես գիտէի, որ այդպէս չէր:

Տասը ամիս յետոյ այցելեցին ինձի երկու կին երկու տարբեր նահանգներէ՝ երկու շաբթուան տարբերութեամբ, եւ ըսին նոյն բանը. «Ճոն Պիվի՛ր, եթէ դուն չգրես այն, ինչ որ Աստուած կու տայ քեզի, Ան պիտի տայ այդ ուղերձները ուրիշ մարդու մը, իսկ դուն պատասխանատուութեան պիտի կանչուիս ատոր համար»:

Երբ երկրորդ կինը՝ Թեքսաս նահանգէն, ըսաւ ինձի ճիշդ այն, ինչ որ ըսած էր առաջին կինը՝ Ֆլորիտա նահանգէն, Աստուծոյ սուրբ երկիրը իջաւ իմ վրայ, եւ ես գործի անցայ: Դեռեւս 1992 թուականն էր, եւ չկային «iPad»-ներ, միայն թուղթ ու գրիչ: Այնպէս որ, ես առի նօթատետրի թերթ մը եւ էջին սկիզբը թաւ տառերով գրեցի. «**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**», իսկ յետոյ՝ հետեւեալը.

*«Հայր, ես չեմ կրնար գրել: Այնպէս որ, որպէսզի հնազանդիմ Քեզի, ես Քու շնորհքի կարիքը ունիմ: Եթէ ես պիտի գրեմ, իմ խնդրանքն է, որ ամէն բար ոգեշնչուած ըլլայ Քու Հոգիով եւ հեղեղուած ըլլայ Քու օծութեամբ: Ես կը խնդրեմ, որ ատիկա փոխէ տղամարդիկ, կիներ, երեխաներ, եկեղեցիներ, քաղաքներ եւ երկիրներ: Ես նախապէս երդում կ'ընեմ, որ Քեզի պիտի տամ ամբողջ պատիւը, գովասանքը, փառքը եւ գոհութիւնը: Ես կը կնքեմ այս պայմանագիրը (ուխտը) Քեզի հետ, Յիսուսի գօրաւոր անունով:*

*Քու որդի եւ ծառայ՝ Ճոն Պիվիր»:*

Այդ օրուընէ գրեթէ երեսուն տարի անցած է: Ներկայիս գրած եմ աւելի քան 20 գիրք, որոնք տպագրուած են քանի մը տասնեակ միլիոն օրինակներով: Ատոնց մեծ մասը յայտնուած է թէ՛ ԱՄՆ-ի, թէ՛ միջազգային ընդհանուր եւ քրիստոնէական հանրաճանաչ գիրքերու ցուցակին մէջ: Ատոնք թարգմանուած են աւելի քան հարիւր լեզուներու եւ կ'ընթերցուին ողջ աշխարհի տարածքին, իսկ քանի մը երկիրներու մէջ ատոնք ամէնէն շատ հրատարակուող գիրքերն են թէ՛ աշխարհիկ, թէ՛ քրիստոնէական կարգերուն մէջ:

Ես նախկինին չեմ լսած, չեմ կարդացած եւ չեմ յօրինած իմ գրած գրեթէ իւրաքանչիւր գիրքի բովանդակութեան 20-30 տոկոսը: Ես ստացած եմ այն ստեղծաշարով թեքսթը մուտքագրելու ժամանակ: Կը յիշեմ դէպքեր, երբ գտնուած եմ իմ տան աշխատասենեակը կամ ինչ որ պանդոկի սենեակի մը մէջ եւ խիստ ոգեշնչուած եմ իմ գրածովս: Քանի մը անգամ ես ոգեւորուած վեր ցատկած եմ՝ բացականչելով. «Ասիկա պարզապէս հրաշալի՛ է»:



Թերեւս հարցնէք. «Ինչպէ՞ս կրնայի՞ր ըսել ասիկա: Ասիկա հպարտութիւն է»:

Իմ պատասխանը հետեւեալն է: Ես գիտեմ, թէ ուրկէ է այդ նիւթը, եւ այն *ինձմէ՛ չէ*: Ես բոլորովին կը հաւատամ, որ իմ անունը գրուած է այդ գիրքերուն վրայ, որովհետեւ ես երկրի վրայ առաջին մարդն եմ, որ կարդացած է ատոնք: Ես գիտեմ, որ այդ նիւթը Սուրբ Հոգիէն է: Իմ ըսածը շատ չի տարբերի Պօղոս առաքեալի խօսքերէն, որ քիչ մը ամբարտաւան կը թուէր՝ գրելով. «Ես աւելի քրտնաջան աշխատեցայ, քան միւս առաքեալներէն ոեւէ մէկը»: Թերեւս, կը թուի, թէ այս խօսքերը կը պատկանին մրցակցական, եսակեդրոն եւ ինքնահաւան մարդու: Այնուամենայնիւ, մենք գիտենք Սուրբ Գիրքէն, որ Պօղոսը կը պարծենար Աստուծոյ շնորհքի պարգեւով, ոչ թէ իր կարողութեամբ:

Անձամբ ես համոզուած եմ, որ երբ Աստուած խօսեցաւ հետս այդ առաւօտ, գրելու *խարիզման տրուեցաւ* ինձի: Բայց այն *գործադրուեցաւ* իմ կեանքին մէջ, երբ ես որոշում կայացուցի հնազանդիլ ասոր: Կան մարդիկ, որոնք կը վիճարկեն այս պնդումը, եւ թոյլ տուէք անմիջապէս ըսել, որ ասիկա այնքան ալ կարելոր չէ բանավէճի առարկայ դառնալու համար: Ես կը հասկնամ, որ իմ համոզմունքները այս մասին կրնան սխալ ըլլալ. այնպէս որ, թոյլ տուէք ներկայացնել այն առարկութիւնը, որ ոմանք կրնան ընել:

Ոմանք կ'առարկեն, որ այդ պարգեւը տրուած էր ինձի 1979 թուականին՝ այն պահուն, երբ ես վերստին ծնայ: Ես չեմ կրնար պատասխանել այս տարբերակին՝ հիմնուելով իմ փորձառութեան վրայ, քանի որ ես ոչինչ փորձած եմ գրել 1979 թուականէն մինչեւ 1992 թուականը, երբ գրեցի իմ պայմանագիրը: Վստահաբար մէկ բան կրնամ ըսել. ես չեմ ծնած այդ պարգեւով՝ նման այն դաշնակահարին, որուն մասին քիչ առաջ պատմեցի: Այնուամենայնիւ, այդ պատմութիւնը ցոյց կու տայ, որ որոշ պարգեւներ կը տրուին մարդուն ծնունդէն առաջ: Օրինակ, մենք գիտենք Սուրբ Գիրքէն, որ Յովհաննէս Մկրտիչը լեցուեցաւ Աստուծոյ Հոգիով (Անորմով, Որ պարգեւներ կու տայ) իր մօր որովայնէն, քանի որ ան ճանչցաւ Մարիամի որովայնին մէջ գտնուող կենդանի Քրիստոսը, երբ տակաւին իր մայր Եղիսաբէթի որովայնին մէջ էր (կարդացէ՛ք Ղուկաս 1.41): Երեսուն տարի յետոյ Յովհաննէսի ներսը գտնուող նոյն պարգեւն էր, որ ճանչցաւ Յիսուսին (բոլորէն առաջ), երբ ան եկաւ՝ մկրտուելու համար (կարդացէ՛ք Յովհաննէս 1.29):

Այնուամենայնիւ, որոշ պարգեւներ կը տրուին աւելի ուշ: Կիսի որդի Սաւուղը չսկսաւ իր կեանքը մարգարէանալով: Ասիկա տեղի չունեցաւ, քանի տակաւին ան չէր օծուած Սամուէլի կողմէն երիտասարդ

տարիքին՝ որպէս Իսրայէլի առաջին թագաւոր: Սամուէլը ըսաւ, որ որոշ ժամանակ յետոյ Սաուլը պիտի տեսնէր խումբ մը մարդիկ, որոնք երաժշտական գործիքներ կը նուագէին եւ կը մարգարէանային: Ես կը մէջբերեմ Սամուէլի բառերը. «Այդ ժամանակ Տիրոջ Հոգին զօրաւոր կերպով կու գայ քու վրայ, եւ դուն կը մարգարէանաս անոնց հետ: Դուն կը փոխուիս՝ դառնալով այլ մարդ» (Ա. Թագաւորաց 10.6, NLT):

Դիտարկելով այս երկու վկայութիւնները Սուրբ Գիրքէն՝ մենք յստակ կը տեսնենք, որ որոշ պարգեւներ կը տրուին անմիջապէս մօր որովայնէն, իսկ միւսները՝ հետագային:

## ՔԱՐՈՋԵԼՈՒ ԽԱՐԻՉՄԱ

Իմ կեանքի եւս մէկ *խարիզման* հրապարակային խօսքն է: Իմ պատմութիւնը այս պարգեւի մասին պիտի օգնէ մեզի աւելի լաւ հասկնալու այս թեման:

Առաջին դէպքը, երբ կինս՝ Լիզան, լսեց, թէ ինչպէս կը քարոզէի Աստուծոյ խօսքը՝ ծառայողական ձեւաչափով, շատ յիշարժան էր: Մեղմ ըսելու համար, ասիկա ահռելի ձախողութիւն էր, եւ ես չեմ չափազանցեր: Ան խոր քնացաւ առաջին հինգ վայրկեանին եւ շարունակ կը քնանար ու կ'արթնար իմ քարոզի ընթացքին: Այդ ուղերձը անտանելի էր: Անոր մտերիմ ընկերուիին՝ Էմին, որ նստած էր Լիզային քով, այնքան խոր քնացած էր, որ ես կը տեսնէի, թէ անոր լայն բացուած բերանէն թուք կը ծորէր, մինչ ան երագներու աշխարհի մէջ էր: Անկեղծ ըսելու համար, ես անպէտք հրապարակային խօսնակ էի:

Այդ ժամանակ կը ծառայէի իմ տեղական եկեղեցիին մէջ՝ որպէս իմ հովիւի եւ անոր կնոջ օգնական (մեր եկեղեցին շատ ազդեցիկ էր Միացեալ Նահանգներու մէջ եւ ունէր աւելի քան չորս հարիւր մարդէ բաղկացած վճարուող աշխատակազմ): Իմ աշխատանքն էր հոգ տանիլ իմ հովիւի ընտանիքի կարիքներուն մասին, ինչպէս նաեւ՝ բոլոր ծառայողներուն, որոնք կը հիւրընկալուէին մեր եկեղեցիին մէջ: Իմ պարտականութիւնները Աստուծոյ Թագաւորութեան մէջ յստակ էին. ասիկա ոչ թէ խօսքի պարգեւն էր, այլ քուլիսներու ետեւ ծառայելը (եւ աւելին պիտի խօսիմ այս մասին հետագայ գլուխներէն մէկուն մէջ):

Այնուամենայնիւ, ես կը փորձէի սկսիլ իմ ծառայութիւնը, քանի որ Աստուած ցոյց տուած էր ինձի, որ պէտք է քարոզեմ Իր խօսքը ազգերուն: Իմ սխալը այն էր, որ ես կ'ընէի ասիկա իմ ուժերով: Եւ դեռ կը գտնուէի այն փուլին մէջ, երբ հիմնականին այլ մարդու ծառայութեան մէջ էի եւ պէտք է «օտար բանի մը մէջ հաւատարիմ» ըլլայի (կարդացէ՛ք Դուկաս 16.12): Ես կ'օգտագործէի իմ ամբողջ ազատ ժամանակը՝

ուղերծներս պատրաստելու, փաթեթաւորելու եւ վաճառելու համար (շատ աւելի լաւ պիտի ըլլար, եթէ այդ ժամանակը տրամադրէի՝ ծառայելու համար իմ կնոջը եւ ըլլալու աւելի լաւ ամուսին անոր համար, բայց երբեմն մենք ստիպուած կ'ըլլանք սորվելու մեր սխալներէն):

Կարճ ըսած՝ ես կը ծնէի «Իսմայէլի ծառայութիւն»: Ինչո՞ւ այդպէս կ'անուանեմ այն: Աստուածաշունչին մէջ գրուած է իմ արարքի զուգահեռին մասին: Աստուած խօսեցաւ Աբրահմին (Աբրահամին) հետ, երբ ան 75 տարեկան էր՝ անոր որդի խոստանալով եւ ըսելով, որ այդ որդիին միջոցով ան ի վերջոյ շատ ազգերու հայր պիտի դառնայ: Այդ խոստումէն տասը տարի յետոյ ան տակաւին երեխայ չունէր եւ արդէն ութսունհինգ տարեկան էր: Այնպէս որ, Աբրահամը եւ անոր կին Սառան ծրագիր կազմեցին, որպէսզի «օգնէին» Աստուծոյ կատարելու Իր խոստումը: Այդ ունայն մարդկային փորձէն ծնաւ Իսմայէլը: Ուստի ես կ'անուանեմ նման տեսակի նախածեռնութիւնը «Իսմայէլի ծառայութիւն»:

Դժուար է հաւատալ, բայց որոշ մարդիկ նուիրատուութիւններ կու տային ինձի: Ես կը վաճառէի իմ նիւթերը, որպէսզի կատարէի իմ ինքնահռչակ առաքելութիւնը, որ կը կոչուէր «Պիվիորի ծառայութիւն»: Մեր կարգախօսն էր. «Հասնիլ աշխարհին Անոր զարմանալի լոյսով»: Հիմա, գրելով այս տողերը, ես կը ծիծաղիմ անմտութեան եւ անհասունութեան վրայ: Մեր Իսմայէլի առաջին քարոզաշարը, որ բաղկացած էր չորս լսաժապաւենէ, կը պարունակէր այն ուղերձը, որուն ընթացքին քնացած էին կինս եւ անոր մտերիմ ընկերուհին: Քանիներ ընացած էին այնքան խորունկ, որ անոնց բերանէն թուք հոսած էր, երբ կը լսէին այդ լսաժապաւենները: Ես սարսուռ կը զգամ՝ մտածելով այդ մասին:

Կը հաւատաք, թէ ոչ, ամէն ինչ ա՛լ աւելի վատթարացաւ: Այդ ժամանակ իմ հերոսը հանրայայտ աւետարանիչ Թի էլ Օսպըրնն էր, որ այժմ երկինքն է: Ան եւ կինը իրենց կեանքի ընթացքին փրկութեան առաջնորդած են աւելի քան յիսուն միլիոն մարդու: Ես կը ցանկայի քարոզել անոր պէս: Ժամերով կը լսէի անոր ուղերձները՝ ընդօրինակելով անոր ձայնի առզանութիւնը, սորվելով անոր ուսմունքները, ազդեցիկ արտայայտութիւնները եւ նոյնիսկ կատակները: Ես ոչ միայն ձանձրալի քարոզիչ էի, այլեւ մէկ այլ մարդու սարսափելի պատճէնը:

Թի էլը կը քարոզէր մեծ վարպետութեամբ: Երբ ան կը քարոզէր մեր եկեղեցիին մէջ, մարդիկ կ'որսային անոր իւրաքանչիւր բառը: Մէկ անգամ ան կը պատմէր, թէ ինչպէս Աստուած գործած էր իրենց բազմամարդ աւետարանչական հաւաքոյթներէն մէկուն ժամանակ

Ափրիկեի մէջ: Պատմելու ընթացքին ան այնքա՛ն ոգեշնչուեցաւ տեղի ունեցած ակնառու հրաշքներէն, որ խանդավառութեամբ բացականչեց.

- «Ուա՛ ու»:

Ան դադրեցաւ խօսելէն. լարեց ամբողջ եկեղեցւոյ ուշադրութիւնը: Իսկ ան, ձեռքը թափ տալով, պարզապէս ըսաւ.

- Հետաքրքրական բառ է. եթէ հակառակ կարդաս, նոյնը կ'ըլլայ՝ «ուա՛ ու»:

Բոլորը ծիծաղեցան. այդ կատակը յաջողեցաւ անոր յատուկ կերպով:

Իմ անըրջութեան եւ միամտութեան պատճառով ես ընդօրինակեցի ատիկա եւ սկսայ մշտապէս «ուա՛ ու» ըսել: Ես կ'ըսէի այդ բառը այնպէս, ինչպէս Թի էլը՝ այդ անգամ: Միակ խնդիրը այն էր, որ ոչ ոք կը ծիծաղէր, բայց անշուշտ, ես չէի հասկնար ատիկա:

Կրկին ու կրկին ես բացայայտ անյաջողութեան կը մատնուէի՝ ձգտելով ինչ որ բան փոխել: Ի վերջոյ որոշեցի վերջ տալ իմ փորձերուն: Եւ տեղի ունեցաւ զարմանալի փոփոխութիւն մը: Ես կրկին սկսայ հաճոյքով կատարել այն ծառայութիւնը, որուն մէջ կը գտնուէի: Ես սկսայ յատկացնել իմ ազատ ժամանակը ընտանիքիս եւ ընկերներուս:

Այժմ, երբ իմ պայքարը ետեւն էր, կեանքը դարձաւ լիարժէք, ծաղկուն եւ առատ: Գտնելով ճշմարիտ բաւականութիւն՝ ես հասկցայ, որ իմ բոլոր ջանքերը զուր էին, եւ դիւրաբար վերջ տուի «Պիվիի ծառայութեան»: Ես գիտէի, որ օր մը Աստուած պիտի իրականացնէր այն, ինչ որ խոստացած էր, բայց ատիկա տեղի պիտի չունենար իմ նախաձեռնութեամբ:

Կրնաք կռահել, թէ ինչ տեղի ունեցաւ, երբ յայտնուեցայ խաղաղութեան եւ անդորրի մէջ. քանի մը ամիս յետոյ եկաւ Աստուծոյ յառաջխաղացումը: Ինծի առաջարկեցին դառնալ ԱՄՆ-ի մէջ ամենաարագ աճող եկեղեցիներէն մէկուն երիտասարդական ծառայութեան հովիւր:

Ես երբեք չեմ մոռնար առաջին Կիրակին: Մեր եկեղեցիի հովիւը յայտնի էր ողջ աշխարհի տարածքին: Այդ ժամանակ ամէն կիրակի մարդիկ աւելի քան մէկ ժամ կարգի կը կենային կիզիչ արեւին տակ, որպէսզի նստէին դահլիճի առջեւի շարքերը, որ լեփ-լեցուն կ'ըլլար ամէն ծառայութեան ընթացքին: Մեր ծառայութիւններուն մշտապէս կը յաճախէին հիւրեր ԱՄՆ-ի այլ նահանգներէն եւ այլ երկիրներէն:

Ծառայութիւնը բուռն ընթացքի մէջ էր: Երկրպագութիւնը պարզապէս հոյակապ էր: Հովիւը մօտեցաւ ամպիոնին եւ գրեթէ

անմիջապես տեղեկացուց եկեղեցիին նոր երիտասարդական հովիւի մասին, այսինքն՝ իմ մասին: Այնուհետեւ, զարմանալիօրէն, ան խնդրեց ինձմէ մօտենալ եւ քանի մը վայրկեանով խօսք ուղղել Կիրակի առաւօտեան հաւաքուած բազմութեան:

Ինչպէս ես իմացայ այդ ծառայութենէն յետոյ, այդ պահուն կինս խուճապի մատնուեցաւ, եւ, հաւանաբար, ես ալ խուճապի պիտի մատնուէի, եթէ մտածելու ժամանակ ունենայի: Ատիկա ապշեցուցի՛չ էր: Ինձմէ խնդրեցին խօսք ուղղել 2.800 մարդու: Լիզան սարսափով կը մտածէր ատոր հետեւանքներուն մասին. հաշուի առնելով նախորդ դէպքերը՝ ան գիտէր, թէ ինչ պիտի ըլլար: Ինչպէ՞ս մենք պիտի կարենայինք վերականգնիլ այդ մօտալուտ աղէտէն: Կ'երեւի թէ այդ եկեղեցական շէնքին մէջ գտնուող մարդոց մեծ մասը վերջին անգամ պիտի լսէր ինձի, քանի որ, անկասկած, ատորմէ յետոյ ինձմէ այլեւս չէին խնդրեր քարոզել գլխաւոր եկեղեցական ծառայութեան: Բոլոր այդ վախերը ծանրացած էին անոր վրայ, մինչ ես կը մօտենայի ամպիոնին: Ծառայութենէն յետոյ Լիզան պատմեց ինձի, որ անհանգստացած կ'աղօթէր, որ ես յանկարծ չնմանակէի Թի էլ Օսպըրնին, յատկապէս չընէի իմ սովորական դարձած «անյարմար» կատակը «ուա՛ ու» բառը հակառակ կարդալու վերաբերեալ:

Հազիւ որ մօտեցայ ամպիոնին, մեր աւագ հովիւը փոխանցեց ինձի բարձրախօսը: Վաթսուն վայրկեան յետոյ ամբողջ եկեղեցին ոտքի էր. բոլորը կը ցնծային, կը ծափահարէին եւ ոգեշնչուած կը գոչէին իմ խօսքերու պատճառով: Ես խօսեցայ չորսէն հինգ վայրկեան, եւ այդ ընթացքին 2.800 մարդէ բաղկացած ամբողջ լսարանը ոտքի վրայ մնաց: Ապա փոխանցեցի բարձրախօսը իմ հովիւին եւ վերադարձայ իմ տեղը: Յաջորդ հինգ վայրկեանը ես կը ցնցուէի ատրենալիկնէն կամ Աստուծոյ ներկայութենէն, կամ, հաւանաբար, երկուքէն ալ:

Կինս ապշած էր՝ չհաւատալով կատարուածին: Ան ըսաւ ինձի ծառայութենէն յետոյ.

- Ճո՛ն, ես կը մտածէի. «Ո՞վ մտած է ամուսինիս մարմինին մէջ»:

Մենք Թեքսաս նահանգը կ'ապրէինք, երբ ես նոր կը զբաղեցնէի իմ առաջին ծառայողական դիրքը, բայց մեր նոր եկեղեցին Ֆլորիտա նահանգն էր: Տարիներ շարունակ կինս այսպէս կը ներկայացնէր տեղի ունեցածը այն մարդոց, որոնք կը հետաքրքրուէին մեզմով. «Ճոնը այլ մարդ դարձաւ այն պահուն, երբ մենք հատեցինք Ֆլորիտայի սահմանը»: Նման պնդում մը գրուած է Սաւուղի մասին՝ այն պահուն, երբ Աստուծոյ պարգեւը եկաւ անոր կեանքին մէջ (կարդացէ՛ք Ա. Թագաւորաց 10.6):

Այդ ժամանակուրն էլ ի վեր ես քարոզած եմ, սորվեցուցած եմ եւ խօսած եմ լսարաններու առջեւ, եւ մեծ մասամբ ըրած եմ աստիկա դիւրութեամբ (ես պիտի խօսիմ իմ դժուար ժամանակներուն մասին յաջորդ գլուխներէն մէկուն մէջ): Ես այլեւս ջանք չէի թափեր ատոր համար: Չկար այն լարուածութիւնը, որ կը զգայի իմ իսմայէլական օրերուն: Տարբերութիւնը իմ Իսմայէլի եւ Իսահակի փուլերու արդիւնաւետութեան միջեւ այնքան մեծ էր, որքան գիշերն ու ցերեկը:

Եկեք առջեւ երթանք ուրէն տասը տարիով՝ Ֆլորիտայի մէջ այդ առաջին Կիրակիէն յետոյ: Այդ ժամանակ «Մեսինճըր Ինթերնեշընլ»-ը արդէն կայացած ծառայութիւն էր: Մենք կը մաքրէինք մեր կառատունը զարնան սկիզբը: Տուփերն ու տաշտերը դասաւորելու ժամանակ գտանք իմ լսաժապաւեններու հիմնօրինակները, ուր այն քարոզն էր, երբ Լիզան եւ անոր մտերիմ ընկերուհին քնացած էին ընթացքին: Առանց վարանելու՝ ես դարձայ, որպէսզի այն աղբաման նետէի: Յանկարծ լսեցի Սուրբ Հոգիին. «Որդի՛ս, մէկ կողմ մի՛ նետեր այդ հիմնօրինակը»:

Ես արագօրէն ընդդիմացայ. «Ինչո՞ւ ոչ: Այն սարսափելի է. այլեւս ոչ ոք պէտք է լսէ այս ուղերձը: Այն պէտք է ոչնչացուի»:

Ես կրկին լսեցի. «Մի՛ ըներ աստիկա»:

Բոլորովին գիտակցելով, որ կը լսէի Աստուծոյ՝ ես հակադարձեցի. «Ինչո՞ւ»:

Տէրը շատ պարզ խօսեցաւ իմ սրտին. «Աստիկա պաշտպանութիւն է քեզի համար»:

«Պաշտպանութի՞ւն»:

Այդ պահուն ես իմաստութիւն ստացայ. «Որդի՛ս, կ'ուզեմ, որ միշտ յիշես, թէ որքան սարսափելի քարոզիչ ես դուն՝ առանց Ինծի»:

Ամէն տարի ես աւելի կը գիտակցիմ այս «պաշտպանութեան» գործօնը: Նախորդ երեք տասնամեակներու մէջ այս պարզելը գործած է ազդեցիկ կերպով եւ առատ պտուղ տուած է: Անթիւ իրավիճակներուն մէջ ես ականատես եղած եմ մթնոլորտի փոփոխութեան, փառաբանութեան պոռթկման՝ յայտնութիւններու շնորհիւ, բազմաթիւ փրկուած կեանքերու եւ մեծաթիւ հրաշքներու դրսեւորմամբ: Շատերը վկայած են իրենց կեանքերու կամ եկեղեցիներու մէկընդմիշտ փոխուելու մասին: Ունենալով այս պտուղը՝ դիւրին պիտի ըլլար մտածել, որ ես որեւէ կապ ունիմ ատոր հետ, բայց կրնամ անկեղծօրէն ըսել Պօղոս առաքեալի հետ. «Սակայն աստիկա ոչ թէ ես էի, այլ՝ Աստուած, որ Իր շնորհքով կը գործէր իմ միջոցով» (Ա. Կորնթացիս 15.10, NLT): Այս տարիներու ընթացքին ես չեմ մոռցած, թէ որքան անարդիւնաւետ էի առանց Աստուծոյ *խարիզմային*:

## ՂՈՒՔ ՈՒՆԻ՞Ք ՊԱՐԳԵՒՆԵՐ

Ես դիտարկեցի երկուքը այն պարզեւներէն, որոնք Աստուած տուած է ինձի՝ մարդոց ծառայելու եւ կառուցելու համար: Ձեզի ծանօթ են այն պայքարները, որոնք կային իմ կեանքին մէջ: Թերեւս դուք չէք դիմած նման ծայրայեղ միջոցներու՝ ձեր կեանքի *խարիզման* բացայայտելու համար: Կամ, թերեւս, կարդալով այս պատմութիւնները՝ դուք ա՛լ աւելի կը յուսահատիք՝ մտածելով. «Ես չունիմ պարզեւներ»: Ես կը վստահեցնեմ ձեզի, որ դուք ունիք պարզեւներ, եւ ատիկա ակնյայտ կը դառնայ յաջորդ երկու գլուխներուն մէջ:


Ես խոստացայ պատասխանել հետեւեալ հարցումին. «Աստուծոյ զաւակներէն ո՞մա՞նք, շատե՞րը, թէ՞ բոլորը պարզեւներ կը ստանան»: Իմ պատասխանն է՝ անշուշտ՝ բոլորը: Եւ շուտով կ'ապացուցեմ ատիկա ձեզի Աստուծոյ Խօսքէն: Ես ոչ միայն հանգամանօրէն կը դիտարկեմ այս հարցը, այլեւ մինչեւ այս գիրքի աւարտը դուք հաստատ կ'իմանաք, թէ ինչպէս բացայայտել, զարգացնել եւ գործածել ձեր *խարիզման*՝ բազմապատկելով ձեր արդիւնաւէտութիւնը Աստուծոյ Թագաւորութիւնը կառուցելու մէջ:

## ՄՏՈՐԵՑԷՔ

1. Աստուածաշնչեան շնորհքը ոչ միայն Աստուծոյ փրկութեան պարգեւն է, այլեւ Անոր զօրութիւնը մեր կեանքին համար: Ինչպէ՞ս դուք դիտարկած էք Աստուծոյ շնորհքը: Ինչպէ՞ս փոխուեցաւ ձեր պատկերացումը շնորհքի մասին այս գլուխը կարդալէն յետոյ:
2. Այն կոչումը, որ Աստուած պատրաստած է ձեզի համար, վեր է ձեր բնական կարողութենէն: Ինչո՞ւ Աստուած այդպէս ըրած է: Ինչպէ՞ս դուք կրնաք ստանալ Աստուծոյ զօրացնող շնորհքը, որ առատօրէն հասանելի է ձեզի:
3. Աստուծոյ զաւակներէն ոմա՞նք, շատե՞րը, թէ՞ բոլորը պարգեւներ կը ստանան: Ի՞նչ պարգեւներ եւ կարողութիւններ դուք ստացած էք: Կրնա՞ք ըսել, թէ ինչ կերպով այդ պարգեւները օգուտ կու տան մարդոց:







*«Անկեղծ եղէք դուք ձեզ գնահատելու մէջ»:*

– Հռովմայեցիս 12.3, NLT

# ԱՆԿԵՂԾՕՐԷՆ ԳՆԱՀԱՏԵՑԷՔ ՁԵՁ

**Ե**ս պատմեցի, թե ինչպէս կը պայքարիմ իմ կեանքի *խարիզման* բացայայտելու եւ ատոր մէջ գործելու համար: Այժմ կը ցանկամ հակիրճ անդրադառնալ այն բաներուն, որոնց մէջ ես օժտուած *չեմ*:

Սպառիչ ցուցակ կազմելը անկարելի պիտի ըլլար. կան չափազանց շատ տաղանդներ, որոնցմով ես օժտուած *չեմ*: Առաջինը այս ցուցակին մէջ երգելը եւ երաժշտական գործիքներ նուագելն է: Ամէն անգամ, երբ ես տունն եմ, կինս եւ երեխաներս քաղաքավարի, բայց հաստատական կը խնդրեն ինձմէ մտքէս երգել:

Բարձրագոյն վարժարանին մէջ ես երգած եմ միայն մէկ անգամ՝ մարզադահլիճի տղաներու հանդերձարանին մէջ, երբ ցնցուղ կ'ընդունէինք թեթեւ աթլէթիզմի մարզումներէ յետոյ: Արձագանգը շատ խիստ էր. տղաներէն քանի մը հոգի գրեթէ միաձայն պոռացին վրաս, որպէսզի լռեմ. ուրիշ մը շամփուի շիշ մը նետեց կողմս:

Իմ ծնողները դաշնամուրի դասերու կը տանէին Պիվիրներու ընտանիքի բոլոր երեխաներուն: Իմ ուսուցչուհին արիեստավարժ դաշնակահարուհի էր եւ բաւականին յայտնի էր մեր քաղաքին մէջ: Դաշնամուրի դասեր տալը այդ կնոջ մասնագիտութիւնն էր, եւ ան շատ յաջողակ էր ատոր մէջ: Բայց չորս տարի տեւող ծանր վարժանքներէ յետոյ ան մօտեցաւ ծնողներուս եւ աղաչեց, որ այլեւս չուղարկեն ինձի դաշնամուրի դասերու: Ամէն ինչ այդ աստիճան վատ էր:

Որոշ ժամանակ յետոյ ես մտածեցի, որ հետս չյաջողեցաւ յատկապէս դաշնամուր նուագելը, եւ քանի մը տարիէն փորձեցի այլ գործիք մը սորվիլ: Դասական կիթառ գնելէն յետոյ մենք գտանք յայտնի ուսուցիչ մը: Ան համբերատար էր եւ հանգամանօրէն կ'աշխատէր

հետս. ես կը ներդնէի բոլոր ուժերս, ջանասիրաբար կը կատարէի թելադրանքները, բայց կը դժուարանայի: Ես սորվեցայ եւս մէկ ու կէս տարի, մինչեւ որ խոստովանեցայ, որ պարզապէս երաժշտական ունակութիւններ չունիմ:

Ի՞նչ կատարուեցաւ ատկէ յետոյ: Կրնամ ըսել, որ տարիներու ընթացքին այդպէս ալ ոչինչ փոխուցեալ: Այս ոլորտը բոլորովին նման չէր իմ՝ գրելու մասին պատմութեան: Երաժշտական ունակութիւնները այդպէս ալ յանկարծակի չբացայայտուեցան իմ կեանքին մէջ:

## ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏԱԿԱՆ

Ես կրնամ շարունակ թուարկել այն ոլորտները, որոնց մէջ օժտուած չեմ, բայց դուք հասկցաք, թէ ինչ նկատի ունիմ: Կարելի է ըսել, որ բոլորս գիտենք, թէ ինչը մեզի հետ լաւ չ'ընթանար: Երբեմն կ'ուզէի, որ մեր պարգեւները որոշելը նոյնքան դիւրին ըլլար, որքան մատնանշելը այն, ինչին մէջ մենք օժտուած չենք:

Մտապահելով ասիկա՝ կարդանք աւելին Պօղոսի խօսքերէն.

«Այն արտօնութեամբ եւ իշխանութեամբ, որ Աստուած տուած է ինձի, ես կու տամ իւրաքանչիւրիդ այս *զգուշացումը*. մի՛ մտածէք, որ դուք աւելի լաւ մէկն էք, քան այն ինչ որ իրականութեան մէջ կաք: Անկեղծ եղէք ձեր ինքնագնահատականի մէջ՝ չափելով ձեզ այն հաւատքով, որ Աստուած տուած է մեզի: Ինչպէս որ մեր մարմինները շատ մասեր ունին, եւ իւրաքանչիւր մասը յատուկ գործառոյթ ունի, նոյնպէս ալ՝ Քրիստոսի մարմինը: Մենք մէկ մարմնի շատ մասեր ենք, եւ բոլորս իրար կը պատկանինք: Իր շնորհքով, Աստուած տուած է մեզի տարբեր պարգեւներ՝ որոշակի գործեր արդիւնաւէտ կատարելու համար» (Հռովմայեցիս 12.3-6, NLT):

Պօղոսը կը սկսի՝ ըսելով, որ այն, ինչի մասին որ ինքը պիտի գրէ, *զգուշացում* է: Թոյլ տուէք առանձնացնել եւ շեշտադրել անոր *զգուշացումը*. «Մի՛ մտածէք, որ դուք աւելի լաւ մէկն էք, քան այն ինչ որ իրականութեան մէջ կաք: Անկեղծ եղէք ձեր ինքնագնահատականի մէջ»: Այս խօսքը կը պատուիրէ մեզի անկեղծօրէն գնահատել մեզ: Ո՞ր հարցին մէջ: Այն պարգեւներու, որոնք Աստուած տուած է ձեզի *այս պահուն*:

Ինչո՞ւ ես օգտագործեցի «*այս պահուն*» արտայայտութիւնը: Շատ պարզ պատճառով: Մտածեցէք այն Աստուածաշնչեան օրինակին մասին, որ ես աւելի կանուխ խօսեցայ: Սաւուղի անկեղծ գնահատականը, Սամուէլին հետ հանդիպելէն առաջ, այսպիսին

պիտի ըլլար. «Ես չեմ կրնար մարգարէանալ»: Այս գնահատականը ճիշդ էր այդ պահուն: Այնուամենայնիւ, այն բանէն յետոյ, երբ ան հանդիպեցաւ Սամուէլին, եւ Աստուծոյ պարգեւը եկաւ անոր կեանքին մէջ, անոր անկեղծ գնահատականը փոխուեցաւ. «Այժմ ես կրնամ մարգարէանալ»:

Երանի՛ ես աւելի ուշադիր կարդայի այս խօսքը, երբ կը փորձէի ծնիլ իմ Իսմայէլի ծառայութիւնը: Եթէ ես անկեղծ ըլլայի, պիտի հասկնայի, որ *այդ ժամանակ* չէի տիրապետեր հրապարակային խօսքին, սակայն օժտուած էի իմ հովիւին ծառայելու պարգեւով: Իմ բնական կարողութեամբ ես կը փորձէի ծնունդ տալ բանի մը, *ինչ որ պէտք է տեղի ունենար*, ինչ որ աւելի կանուխ յստակ ըսուած էր ինծի, յայտնուած էր աղօթքի մէջ, եւ ինչի մասին ես մարգարէութիւններ ստացած էի իմ առաջնորդներէն: *Այդ պահը* տակաւին չէր եկած, եւ ակնյայտ էր, որ եթէ ես պարզապէս ուշադրութիւն դարձնէի այս Աստուածաշնչեան պատուերին եւ անկեղծօրէն գնահատէի ինքզինքս՝ խոստովանելով, որ տակաւին պատրաստ չէի, ես պիտի խնայէի շատ ժամանակ, միջոցներ եւ ուժեր: Ես նոյնպէս աւելի արդիւնաւէտ պիտի ըլլայի այն բանին մէջ, որմով օժտուած էի *այդ ժամանակ*:

Պօղոսը յստակ կը խօսի զանազան պարգեւներու մասին. «Ինչպէս որ մեր մարմինները ունին շատ մասեր, եւ իւրաքանչիւր մասը յատուկ գործառնոյթ ունի, նոյնպէս ալ՝ Քրիստոսի մարմինը» (Հռովմայեցիս 12.4, NLT): Այս պնդումը պարզ է եւ շատ բան կը բացայայտէ, եթէ նայիք ձեր մարմինին: Մտածեցէ՛ք այս մասին. մեր մատները կրնան ընել այն, ինչ որ մեր քիթը չի կրնար: Մեր քիթը կրնայ ընել այն, ինչ որ մեր ականջները չեն կրնար: Մեր ականջները կրնան ընել այն, ինչ որ մեր ստամոքսը չի կրնար: Մեր ստամոքսը կրնայ ընել այն, ինչ որ մեր լեարդը չի կրնար, եւ այլն: Այսպիսով, ասիկա կը նշանակէ հետեւեալը.

*Երջանիկ եւ օրհնուած է այն մարդը, որ գիտէ իր պարգեւները եւ կը գործէ ատոնցմով: Դժբախտ եւ ճնշուած է այն մարդը, որ կը փորձէ գործել այլ մարդու պարգեւներով:*

Միթէ՞ տարօրինակ չէր ըլլար, եթէ առաւօտ մը դուք արթննայիք, եւ ձեր բութ մատը ըսէր. «Հերի՛ք է: Բերա՛ն, դուն արդէն քանի տարի է՝ կը խօսիս: Այսօր ե՛ս պիտի խօսիմ»: Ատիկա անհեթեթութիւն է. բութ մատը խօսելու կարողութիւն չունի, որ յատուկ է բերանին: Այնուամենայնիւ, բութ մատը ունի այնպիսի եզակի կարողութիւններ, ինչպիսիք չունի բերանը: Պատկերացուցէ՛ք, որ բերանը ըսէր. «Այսօր ե՛ս կ'ուզեմ աշխատիլ համակարգիչով»: Կրկին, ատիկա անհեթեթութիւն է:

Յաջորդ կարելուր հարցումը հետեւեալն է: Ինչո՞ւ մենք այդքան կը շեշտադրենք «ամպիոնի պարգեւները»: Ինչո՞ւ մենք կը դիտարկենք ծառայողները, որոնք կը քարոզեն, եւ երկրպագութեան առաջնորդները, որոնք փառաբանութիւնը կը վարեն եկեղեցիին մէջ՝ որպէս կարելորագոյն պարգեւները կրողներ: Պօղոսը կը գրէ Կորնթոսի եկեղեցիին այս մասին. «Մարմինի որոշ մասեր, որոնք, կը թուին, թէ ամենատկարն են եւ պակաս կարելուր են, իրականութեան մէջ, ամէնէն անհրաժեշտն են» (Ա. Կորնթացիս 12.22, NLT):

Թոյլ տուէք օրինակ մը բերել: Դուք երբեք նկատած էք, որ ոտքերը ուշադրութիւն կը գրաւեն: Մարդիկ, օրինակ, կ'ըսեն. «Որքա՞ն գեղեցիկ են այս կնոջ ոտքերը», կամ «Այս տղամարդու ոտքերը ուժեղ եւ մկանուտ են»:

Ես կը յիշեմ դէպք մը, երբ դեռահաս էի: Հայրս, որ շատ պահպանողական, կարգապահ եւ հանդարտ մարդ էր, այնպիսի բան մը ըրաւ, ինչ որ բոլորովին խորթ էր իր բնաւորութեան: Ան գրեթէ երբեք ուշադրութիւն չէր պահանջեր իր հանդէպ: Բայց մէկ անգամ ըսաւ.

- Որդի՛ս, դուն շատ ուժեղ ոտքեր ունիս:

Ես զարմացած յառեցի հայեացքս անոր՝ առանց պատասխանելու, եւ ժպտացի՝ մտածելով, թէ ինչ նկատի ունէր: Ան շարունակեց.

- Գիտե՞ս ինչու: Իմ ոտքերը նոյնպէս զօրաւոր են. դուն քու ոտքերը ինձմէ ժառանգած ես:

Ես չէի գիտեր՝ ծիծաղէն իյնայի գետի՞ն անոր ըսածին պատճառով, թէ՞ համաձայնէի անոր հետ, քանի որ անոր անսովոր վարքը բոլորովին անսպասելի էր ինձի համար: Ես պարզապէս ծիծաղեցայ եւ ըսի.

- Հայրի՛կ, շնորհակալութիւն՝ ինձի ուժեղ ոտքեր տալու համար:

Ճիշդ է, որ ոտքերը ուշադրութիւն կը գրաւեն: Բայց դուք մտածած էք այն մասին, որ մարդիկ կրնան ապրիլ առանց ոտքերու: Ես կը ճանչնամ մարդ մը, որ կորսնցուցած է մէկ ոտքը արկածի պատճառով, բայց կը շարունակէ ապրիլ բնականոն կեանքով:

Ուրիշ բան է լեարդը: Ոչ ոք կրնայ ապրիլ առանց լեարդի: Այն անչափ կարելուր է՝ շատ աւելի կարելուր, քան ոտքը: Սակայն դուք երբեք լսած էք, որ ինչ որ մէկը ըսէ. «Քու լեարդը տպաւորիչ է. այն հոյակապ տեսք ունի»: Հազիւ թէ նման բան ըլլայ:

Այնպէս որ, կրկին կարդացէք Պօղոսի խօսքերը. «Մարմինի որոշ մասեր, որոնք, կը թուին, թէ ամենատկարն են եւ պակաս կարելուր են, իրականութեան մէջ, ամէնէն անհրաժեշտն են»:

Կ'ուզեմ կրկին հարցնել. ինչո՞ւ մենք այդքան կը շեշտադրենք

«ամպիոնի պարգեւները»: Ատոնք մարմինի տեսանելի եւ անհրաժեշտ մասերն են, սակայն, համաձայն Աստուծոյ խօսքին, ատոնք ամենակարեւորը չեն:

Իմ ընկեր Սթենի (որուն մասին ես խօսեցայ առաջին գլուխի մէջ) պարգեւներն են գործարար աշխարհին մէջ մարդոց հետ կապ հաստատելը, գումար շահիլը եւ բաշխելը: Անոր պարգեւը պակաս կարեւոր կը թուի, քան «ամպիոնի պարգեւները». ասիկա մեր եկեղեցական մշակոյթի անխօս համոզմունքն է: Ինչպիսի՞ պատկերացում ունեցած է եկեղեցին: «Շնորհակալները ամպիոնի ետեւը գտնուող մարդիկ են. անոնք են, որ իրական կոչում ունին»:

Մտածեցէ՛ք այս մասին: Երբ ինչ որ մէկը կ'ըսէ. «Այսինչ մարդու կեանքին մէջ կոչում կայ», բոլորը անմիջապէս կ'ենթադրեն, որ այդ անձնաւորութիւնը պիտի ըլլայ հովիւ, երկրպագութեան առաջնորդ, երիտասարդական ծառայութեան հովիւ, քրիստոնէայ գրող, առաքեալ եւ այլն: Լսելով այս խօսքերը՝ քիչերը կը մտածեն. «Այդ անձնաւորութիւնը կանչուած է բժշկութեան ոլորտին մէջ եւ կը բացայայտէ քաղցկեղը բուժելու նոր միջոցներ», «Ան կառավարութեան մէջ է եւ կ'ընդունի օրէնքներ, որոնք կը պաշտպանեն Աստուծոյ Թագաւորութեան յառաջխաղացումը», «Ան կ'աշխատի կրթական բնագաւառին մէջ եւ կը սերմանէ Աստուծոյ գիտելիքը եւ իմաստութիւնը երիտասարդ մտքերուն մէջ», կամ «Ան կանչուած է գործարար ոլորտին մէջ՝ հասնելու հոն գտնուող կորսուած մարդոց եւ ֆինանսաւորելու Աստուծոյ Թագաւորութեան կառուցումը»:

Պարգեւներու մասին այս մտածելակերպի հետեւանքները ակնյայտ են. Սթենը եղած է եկեղեցւոյ մէջ տարիներ շարունակ՝ չհասկնալով, որ ինքը նոյնքան «կանչուած» է, որքան ես: Թէեւ անոր՝ Աստուծոյ տրուած կարողութիւնները կը գործէին, սակայն ատոնք նոյնքան կարեւոր չէին համարուեր այն անխօս համոզմունքի պատճառով, որ «եկեղեցական» պարգեւները աւելի կարեւոր են, քան միւսները: Այս պատկերացումը պէտք է փոխուի: Բոլորս կանչուած ենք, եւ մենք ունինք եզակի պարգեւներ, որոնք անհրաժեշտ են Աստուծոյ Թագաւորութեան մէջ մեր առաջադրանքը կատարելու համար:

Ահա այն հատուածը, որուն մէջ Պօղոսը խօսեցաւ այս մասին Կորնթոսի եկեղեցիին հետ.

«Մեր մարմինները ունին շատ մասեր, եւ Աստուած դրած է իւրաքանչիւր մասը ճիշդ հոն, ուր կը ցանկայ: Որքան տարօրինակ պիտի ըլլար մարմինը, եթէ այն ունենար միայն մէկ մաս: Այո, կան շատ մասեր, բայց միայն մէկ մարմին: Աչքը չի

կրնար ըսել ձեռքին. «Դուն ինձի պէտք չես»: Գլուխը չի կրնար ըսել ուտքերուն. «Դուք ինձի պէտք չէք»: Իրականութեան մէջ, մարմինի որոշ մասեր, որոնք, կը թուին, ամենատկարն են եւ պակաս կարելոր են, փաստօրէն, ամէնէն անհրաժեշտն են: Եւ այն մասերը, որոնք պակաս պատուաւոր կը համարենք, մենք կը հազցնենք մեծագոյն խնամքով: Այսինքն, խնամքով կը պաշտպանենք այն մասերը, որոնք պէտք չէ տեսնուին, այն ինչ աւելի պատուաւոր անդամները չունին այս յատուկ հոգատարութեան կարիքը: Աստուած այսպէս միաւորած է մարմինը, որպէսզի յաւելեալ պատիւ եւ հոգատարութիւն տրուի այն մասերուն, որոնք աւելի պակաս պատիւ ունին: Ասիկա կը ձեւաւորէ ներդաշնակութիւն անդամներու միջեւ, որպէսզի բոլոր անդամները հոգ տանին միմեանց համար» (Ա. Կորնթացիս 12.18-25, NLT):

Թերեւս մենք կը պատուենք եկեղեցւոյ հետ առնչուող պարգեւները աւելի, քան միւսները, քանի որ կը սահմանափակենք Պօղոսի խօսքերը եկեղեցական միջավայրով: Ակնյայտ է, որ նման միջավայրի մէջ քարոզելու եւ սորվեցնելու պարգեւները աւելի պահանջուած են: Բայց Աստուծոյ Թագաւորութեան աշխատանքը կը կատարուի ամէնուր, եւ ասիկա եւս մէկ կարծրատիպ է, որ պէտք է արմատապէս փոխուի: Յունարէնի մէջ «եկեղեցի» բառը «էկլեսիա»-ն է, որ կը նշանակէ «կանչուածներ»: Յունարէն բառարանի սահմանումը այսպիսին է. «Կանչուած մարդիկ կամ անոնք, որոնք կանչուած են կամ հաւաքուած են ազատ պետութեան հասարակական հարցերով, ազատ քաղաքացիներու մարմին՝ միասին կանչուած մունետիկի կողմէն»:

Արդեօ՞ք մենք եկեղեցի ենք միայն՝ երբ կանչուած ենք շէնքի ներսը: Արդեօ՞ք մենք եկեղեցի ենք միայն՝ երբ միասին կը հաւաքուինք աղօթելու, երկրպագելու, քարոզելու կամ ծառայելու համար: Այս կարծրատիպի պատճառով մարդիկ ուրիշ ձեւով կը վարուին նման միջավայրի մէջ եւ կը վերադառնան այլ վարքի հասարակութեան մէջ: Մենք ենք եկեղեցին, եւ մենք օժտուած ենք Աստուծոյ Թագաւորութիւնը կառուցելու պարգեւներով, ուր ալ ըլլանք՝ օրը 24 ժամ, շաբաթը 7 օր եւ տարին 365 օր:

Վերջերս հանդիպեցայ միլիառատէրի մը: Ան ճանապարհորդութիւն մը կ'անցընէր, որ անուանած էր «Աստուածային շրջագայութիւն»։ Ան իր խումբին հետ օդանաւով կ'երթար տարբեր քաղաքներ եւ կը յաճախէր եկեղեցիներ ու համաժողովներ՝ շարք մը ծառայողներու հանդիպելու համար: Անոր նպատակն էր, որ ծառայութեան հինգ



պարգեւները սրէին եւ ւաւելի սպառազինէին իրեն իր գործին մէջ: Իմ հանդիպումը անոր հետ նախապէս ծրագրուած էր լաւ ընկերներէս մէկուն կողմէն: Այն տեղի ունեցաւ Տալլաս քաղաքին մէջ՝ համաժողովի մը ընթացքին, որուն ես կը քարոզէի: Մեր երեք ժամ տեսող ճաշը հրաշալի էր, եւ ես գացի հոն՝ զգալով, որ ստացայ ւաւելին, քան ան:

Ան պատմեց, որ իր գործունէութեան սկիզբը կը բախտեր մեծ դժուարութիւններու գործարար աշխարհին մէջ, բայց եկաւ օր մը, երբ անոր աչքերը բացուեցան: Անոր լուսաւորումը սկսաւ այն հարցումով, թէ ինչո՞ւ Աստուծոյ Թագաւորութիւնը կը դրսեւորուի միայն եկեղեցիներուն մէջ կամ համաժողովներուն. ինչո՞ւ ոչ՝ ամէնուր: Ան գիտէր, որ կանչուած էր գործարար ոլորտին մէջ, բայց ինչո՞ւ ան կը վարուէր հոն այնպէս, ինչպէս անհաւատները: Ոչինչ կը տարբերէր անոր այս աշխարհէն:

Ան վճռեց, որ «պիտի վարուէր Աստուծոյ հետ» գործարար ոլորտին մէջ եւ պիտի լսէր Սուրբ Հոգիին ձայնը այնպէս, ինչպէս ամպիոնի քով կանգնող ծառայող: Ըստ էութեան, ան բախտաւ իր կոչման խնդիրին եւ որոշեց, որ նոյնքան կանչուած է Աստուծմէ, որքան ոեւէ հովիւ: Ատորմէ յետոյ ան բացայայտեց իր՝ Աստուծմէ տրուած պարգեւները եւ որոշեց նպատակաւոր դուրս գալ վարուիլ ատոնց մէջ: Ան կը լսէր Աստուծոյ ձայնը Անոր հետ անցուցած լուռ ժամերուն, ինչպէս նաեւ գործարար հանդիպումներու ժամանակ: Եւ, անշուշտ, Աստուած կու տար անոր գիտութեան եւ իմաստութեան խօսքեր իր գործին մէջ:

Արդիւնքները ակնյայտ էին. այսօր ան չունի դժուարութիւններ: Ան պատմեց Աստուծմէ ստացած յատուկ խօսքերու մասին, որոնք յաճախ անկարելի կը թուէին: Այնուամենայնիւ, ան որոշում կայացուցած էր հնազանդիլ, թէ եւ Աստուծմէ ստացած հրահանգները հակառակ կը թուէին գործարարութեան մէջ ընդունուած իմաստութեան եւ անյարմարաւէտ էին: Ան պատմեց, որ կը բախտեր վիճարկումներու, զարմանքի, մտահոգութիւններու եւ նոյնիսկ ընդդիմութեան եւ իր յաճախորդներու, եւ իր խումբի անդամներու կողմէն: Բայց Աստուծմէ ստացած խօսքերուն անսասան հնազանդելու պտուղը միլիառաւոր տոլարներ էին: Ես զմայլած էի որոշ պատմութիւններով, որոնք ան պատմեց:

## ԱՇԿԵՐՏԵԼ ԱԶԳԵՐՈՒՄ

Ի՞նչ կը կատարուի, եթէ մենք կարենանք փոխել պարգեւներու մասին այս պատկերացումը ժամանակակից եկեղեցիին մէջ: Ի՞նչ տեղի կ'ունենայ, եթէ մենք հասկնալի կերպով բացատրենք անոնց, որոնք կը լսեն մեր ուղերձները, որ իւրաքանչիւր անձ *կանչուած է, օժտուած է*

եւ *արժէքաւոր է* Աստուծոյ Թագաւորութիւնը կառուցելու համար: Այն, որ իւրաքանչիւրը կը սկսի գործել Պիլի Կրեհէմի, Օրըլ Ռոպըրթսի, Մայր Թերեզայի եւ Պօղոս առաքեալի նպատակաւորողութեամբ եւ եռանդով: Ես նկատեցի այդ նպատակաւորողութիւնը եւ եռանդը այդ միլիառատիրոջ մէջ մեր հանդիպման ժամանակ: Ան գիտէր, թէ որն էր իր առաքելութիւնը եւ ինչպիսի պարգեւներ Աստուած տուած էր իրեն՝ այն կատարելու համար:

Մենք պէտք է ունենանք այս մտածելակերպը՝ ազգերուն աշակերտելու համար: Քիչ մը աւելի խօսինք ազգերուն աշակերտելու մասին: Յիսուսը չ'ըսեր. «Աշակերտեցէ՛ք եկեղեցի յաճախողներուն»: Ան կը պատուիրէ մեզի. «Աշակերտեցէ՛ք *ազգերուն*» (կարդացէ՛ք Մատթէոս 28:19): Յունարէնին մէջ «ազգեր» բառը «*էթնոս*»-ն է, որուն սահմանումն է «մարդոցմէ բաղկացած մարմին՝ միաւորուած ազգակցական կապով, մշակոյթով եւ ընդհանուր ասանդոյթներով»: Անկասկած, այս սահմանումը կը վերաբերի իրական ազգերուն, ցեղերուն, նաեւ տարածքային եւ էթնիքական խումբերուն: Այնուամենայնիւ, այն նոյնպէս կ'ընդգրկէ ընդհանուր զբաղմունք ունեցող մարդոց, օրինակ՝ հեծանուորդներու, դերասաններու, բժիշկներու, գործարարներու, օդաչուներու, իրաւաբաններու, տնային տնտեսուհիներու, պետական աշխատողներու, մարզիկներու եւ մարդոց անթիւ այլ խումբերու: Մենք պէտք է աշակերտ դարձնենք կեանքի տարբեր ոլորտներուն մէջ գտնուող տղամարդոց եւ կանանց:

Բայց եկէ՛ք քայլ մը առջեւ երթանք: Յիսուսը չ'ըսեր. «Աշակերտեցէ՛ք որոշ մարդոց ազգերու մէջ»: Ան կ'ըսէ. «Աշակերտեցէ՛ք ազգերուն»: Կարելոր է որսալ այս տարբերութիւնը. մենք պէտք է փոխենք կեանքի տարբեր ոլորտներու գործունէութիւնը Աստուծոյ խօսքով: Անշուշտ, ատիկա տեղի կ'ունենայ, նախեալառաջ, այդ ոլորտներուն մէջ գտնուող մարդոց հասնելով: Այնուամենայնիւ, Անոր ըսածը աւելի խոր է: Մենք պէտք է մկրտենք (ընկղմենք) ոչ միայն մարդոց, այլեւ անոնց գործելառճը Հօր, Որդիի եւ Սուրբ Հոգիի ճանապարհներու մէջ: Որպէս օրինակ, կարելի է աջակցիլ գործարար ոլորտին մէջ գտնուող մարդոց, որպէսզի անոնց մտածելակերպը փոխուի, ինչպէս որ ատիկա կատարուեցաւ այդ միլիառատիրոջ կեանքին մէջ: Ասիկա պարզապէս սառցալերան գազաթն է:

Մտածեցէ՛ք Զաքէոսի մասին: Ան *զլխաւոր* հարկահաւաքն էր, անկասկած՝ լաւագոյններէն մէկը տարածաշրջանին մէջ: Ըստ էութեան, ան այդ տարածքի մաֆիայի պարագլուխն էր: Ամենայն հաւանականութեամբ, մարդիկ կ'ատէին անոր, քանի որ ան կ'ընէր

այն, ինչ որ հարկահաւաքներու մեծ մասը՝ կ'օգտագործէր իր դիրքը անձնական շահի համար: Կարելի է ենթադրել, որ ան կը թալանէր քաղաքացիներուն, դրամ կը կողոպտէր անոնցմէ, կը խաբէր, կը վախցնէր եւ կը ճնշէր անոնց: Ան տխրահռչակ, բայց ազդեցիկ մարդ էր, եւ անոր բոլոր ենթակաները պէտք է որ հետեւէին անոր օրինակին:

Ես ականատես եղած եմ նման երեւոյթի քանի մը երկիրներու մէջ, ուր ճամբորդած եմ: Երկրի ղեկավարը կաշառակեր էր, եւ ան կը պահանջէր իր պաշտօնեաներէն վճարել իրեն՝ իրենց պաշտօնները պահպանելու համար: Եւ անոր բոլոր ենթակաները կ'ընէին նոյնը: Նոյնիսկ օդակայանը գտնուող գաղթականներու ծառայութեան ներկայացուցիչին պէտք էր կաշառք տալ, այլապէս ան չէր հաստատեր ձեր փաստաթուղթերը՝ երկրէն մեկնելու համար:

Վերադառնալով Չաքէոսին՝ Յիսուսը կանչեց իրեն անունով եւ հետաքրքրական է, որ միայն ըսաւ անոր. «Չաքէոս... շո՛ւտ ըրէ, իջ՛ի՛ր: Այսօր Ես հիւր պիտի գամ ձեր տուն»:

Չաքէոսը կանգնեցաւ Տիրոջ առջեւ եւ պատասխանեց. «Ես կու տամ իմ հարստութեան կէսը աղքատներուն, Տէ՛ր, եւ եթէ խաբած եմ մարդոցմէ հարկեր վերցնելու ժամանակ, քառապատիկ աւելի պիտի վերադարձնեմ անոնց» (Ռուկաս 19.5-8, NLT):

Ի՞նչ տեղի ունեցաւ այդ տարածաշրջանի հարկահաւաքման ոլորտին մէջ: Գլխաւոր պաշտօնեայի գործունէութեան խաւար, աշխարհիկ մեթոտները փոխարինուած էին Աստուծոյ Թագաւորութեան մեթոտներով: Այժմ գործարարութեան եւ կառավարման այդ երկրային ոլորտի վերահսկողութիւնը շատ աւելի կը համապատասխանէր երկնային օրէնքներուն: Հասարակութեան մէջ փոփոխութիւն տեղի ունեցաւ: Այս փոփոխութիւնը տեղի չունեցաւ եկեղեցական հաւաքոյթի ժամանակ, եւ ո՛չ ալ՝ երբ Յիսուսը կը քարոզէր որեւէ համաժողովի ընթացքին՝ համոզելով Չաքէոսը դառնալու Իր հետեւորդը: Ասիկա տեղի ունեցաւ քաղաքի կեդրոնը: Չաքէոսը հանդիպեցաւ Յիսուսին, եւ անոր գործելաոճը յանկարծակի փոխուեցաւ: Ասիկա պէտք է տեղի ունենայ ամէն անգամ, երբ մարդիկ կը հանդիպին մեզի՝ մեր ազգերու մէջ (այն ազդեցութեան շրջանակներուն մէջ, որոնց մէջ մենք կանչուած ենք), քանի որ նոյն Յիսուսը կ'ապրի մեր մէջ:

Ներկայիս ես կ'աշխատիմ «Ռուկայի ազգային լիկայի» (NFL) նախկին խաղացողի մը հետ, որուն էջերը ընկերական ցանցերուն մէջ մեծ ազդեցութիւն ունին բազմաթիւ մարմնակերտողներու վրայ: Ան այնպէս կը հրահանգէ այդ մարմնակերտողներուն, որ Երկինքի Թագաւորութեան մշակոյթը մուտք կը գործէ այդ ազգի («էթնոսի»

խումբի) մէջ, անկախ այն բանէն՝ անոր հետեւորդները ընդունած են Յիսուսին որպէս իրենց Տէր, թէ՞ ոչ: Անոր հաղորդակցման ձեւը այդ մարդոց հետ կը ցուցադրէ Աստուծոյ Թագաւորութեան ճանապարհները եւ մեթոտները:


Մեր պարգեւները նախատեսուած չեն միայն սուրբերու հաւաքոյթի համար, թէեւ ատիկա ճիշդ է եւ կարելոր. ես ոչ մէկ պարագային կը ցանկամ նուազեցնել մեր հաւաքոյթներու դերը: Իմ մտադրութիւնը ընդլայնած է Աստուծոյ պարգեւներու գործածութեան մեր տեսադաշտը: Եթէ մենք կանչուած ենք եկեղեցիէն դուրս, ինչ կը վերաբերի հաւատացեալներու մեծ մասին, մենք կանչուած ենք վարուելու գերբնական զօրութեամբ մեր ազդեցութեան շրջանակին մէջ՝ մեր «*էթնոսի*» խումբին մէջ:

Եթէ դուք տարբերակում կը դնէք աշխարհիկի եւ սուրբի միջեւ, այդ մտածելակերպը պէտք է փոխուի: Երբ դուք ինչ որ տեղ կը մտնէք, ուր ալ ատիկա ըլլայ՝ այն հիւանդասենեակը, ուր դուք վիրաբուժ կամ բուժքոյր էք, դասասենեակը, ուր ուսուցիչ էք, գործարանը, ուր մեքենավար էք, եւ այլն, դուք օժտուած էք, որ բերէք սրբութիւնը այդ մթնոլորտի մէջ եւ աշակերտէք այն Հօր, Որդիի եւ Սուրբ Հոգիի անունով: Ուրիշ ձեւով ըսելու համար, ձեր կեանքին մէջ կայ Աստուածութեան աջակցութիւնը եւ իշխանութիւնը՝ իջեցնելու համար Երկինքը այս երկրի վրայ, ինչպէս որ ըրաւ Յիսուսը Չաթէոսի եւ այլ մարդոց կեանքերուն մէջ: Դուք կանչուած էք բազմապատկելու Աստուծոյ Թագաւորութեան գործելակերպը՝ տարածելով այն ձեր ազդեցութեան շրջանակին մէջ:

Մի՞թէ ասիկա աւելի արկածային չի դարձներ աշխատանքի կամ դասի երթալը:

## ՄՏՈՐԵՑԷՔ

1. Աստուածաշունչը կը զգուշացնէ, որ անկեղծօրէն գնահատենք մեզ: Մեր գնահատումը պէտք է ըլլայ ըստ այն պարգեւներու, որոնք մենք ունինք *այս պահուն*: Ես պատմեցի ձեզի պատմութիւնը այն մասին, որ ժամանակէն կանուխ կը փորձէի ծառայութիւն սկսիլ: Ինչպէ՞ս դուք կրնաք խուսափիլ նոյն սխալը գործելէն: Ինչի՞ համար դուք օժտուած էք ձեր կեանքի այս փուլին մէջ:
2. Երջանիկ եւ օրհնուած է այն մարդը, որ գիտէ իր պարգեւները եւ կը գործէ ատոնցմով: Դժբախտ եւ ճնշուած է այն մարդը, որ կը փորձէ գործել այլ մարդու պարգեւներով: Դուք երբեք ունեցա՞ծ էք գայթակղութիւն՝ ձգտելու որեւէ պարգեւի, որուն համար կանչուած չէք: Եթէ այո, ինչո՞ւ:
3. Մեր պարգեւները նախատեսուած չեն միայն սուրբերու հաւաքոյթի համար, այլեւ այն շրջանակի, ուր ազդեցութիւն ունինք: Դուք կրնա՞ք դիտարկել ձեր աջօրեան՝ որպէս Աստուծոյ Թագաւորութիւնը կառուցելու կարելոր մաս: Ի՞նչ կերպերով կրնաք օգտագործել ձեր մասնագիտական պարգեւները Աստուծոյ Թագաւորութեան համար:



*«Թող ամէն մարդ այսպէս համարէ մեզ՝ ինչպէս  
Քրիստոսի պաշտօնեաներ եւ Աստուծոյ  
խորհուրդներու տնտեսներ»:*

– Ա. Կորնթացիս 4.1

## ՏՆՏԵՍՆԵՐ

Մենք ուսումնասիրեցինք «շնորհք» եւ «պարզեւ» բառերը. այժմ պիտի խօսինք «տնտեսութիւն» բառի մասին: Այս բառի մասին պատկերացում կազմելէն յետոյ մենք կրնանք միաւորել այս երեք բառերը Աստուածաշունչէն, որպէսզի պարզօրէն հասկնանք, թէ ինչպէս բացայայտենք մեր կեանքի առաքելութիւնը:

«Մերիամ-Ուեպաթըր» բառարանը կը սահմանէ «տնտեսութիւնը» որպէս «ոեւէ մէկու խնամքին վստահուած որեւէ բանի հոգատար եւ պատասխանատու տնօրինում»: Աստուածաշնչեան բանալի բառերու յունարէն սահմանումներն ուսումնասիրելը խոհեմ քայլ է, քանի որ թարգմանութիւնը յաճախ չի փոխանցեր բնագրային բառի ճշգրիտ իմաստը: Այնուամենայնիւ, ասիկա չի վերաբերիր *տնտեսութեան*, որուն սահմանումները յունարէնով եւ մեր լեզուով գրեթէ նոյնական են: Վերոնշեալ խօսքին մէջ «տնտես» բառը յունարէն «*οյքոնոմոս*» բառն է, որուն սահմանումը հետեւեալն է. «ան, որ ունի իշխանութիւն եւ պատասխանատուութիւն ինչ որ բանի համար. ան, որ կը ղեկավարէ, ան, որ պատասխանատու է. կառավարիչ»:

Գոյութիւն ունի տնտեսութեան երեք կողմ, որոնք կը բխին այս երկու սահմանումներէն: Տնտեսը՝

- Կը հսկէ այն բանին, ինչ որ կը պատկանի ուրիշ մարդու մը:
- Իշխանութիւն ունի կառավարելու այն, ինչ որ վստահուած է իրեն:
- Պատասխանատու է. ան հաշիւ պիտի տայ սեփականատիրոջը:

Աստուած ստեղծած է ամէն ինչ, եւ ամէն ինչ Անորն է: Սաղմոս 24.1-ը կը յայտնէ. «Տիրոջն է երկիրը եւ անոր լիութիւնը»: Ասիկա կը նշանակէ, որ մենք ամբողջ երկրային տիրոյթի տնտեսներն ենք: Մենք պէտք է տնօրինենք երկիրը՝ հողը, ջուրը, օդը, բնական պաշարները, կենդանիները, ծուկներն ու թռչունները: Մենք պէտք է

հոգ տանինք նաեւ մարդոց մասին՝ հոգեւորապէս, զգացմունքօրէն, մտաւորապէս եւ ֆիզիքապէս: Այս ամէնը կատարելու համար անհրաժեշտ է Աստուածահաճոյ եւ օգտակար գիտելիք, իմաստութիւն եւ հասկացողութիւն: Ես կրնայի շարունակել, բայց, ըստ էութեան, մենք պատասխանատու ենք ամէն ինչի համար այս երկրին մէջ՝ թէ՛ տեսանելի, թէ՛ անտեսանելի:

Բայց տեսնենք, թէ ինչ իմաստով Պօղոսը կ'օգտագործէ «*տնտեսութիւն*» բառը իր պնդումին մէջ: Ան կը գրէ «Աստուծոյ խորհուրդներու տնտեսներ» ըլլալու մասին: «Նոր կենդանի թարգմանութեան» մէջ գրուած է, որ մենք «*նշանակուած ենք Աստուծոյ խորհուրդները բացատրելու համար*»: Պօղոսի կեանքի պարգեւներէն (*խարիզմաներէն*) մէկը յայտնութիւնն էր, ինչ որ կը նշանակէ բացատրել խորհուրդները՝ ծածուկ ճշմարտութիւնները, որոնք տակաւին յայտնուած չեն: Այդ իսկ պատճառով, այն *տնտեսութիւնը*, որուն մասին ան կը խօսի, չի վերաբերիր դրամը, ժամանակը կամ բնական միջոցները եւ հնարաւորութիւնները տնօրինելուն (թէեւ այդ ամէնն անհրաժեշտ է տնտեսել), այլ կը վերաբերի իր կեանքի պարգեւը (խարիզման) տնօրինելուն: Արդեօ՞ք ասիկա կը վերաբերի նաեւ մեզի:

Պետրոսը կը գրէ. «Ինչպէս որ իւրաքանչիւրը *պարգեւ* ընդունած է, ծառայեցէք մէկը միւսին՝ որպէս Աստուծոյ բազմապիսի *շնորհքի* բարի *տնտեսներ*» (Ա. Պետրոս 4.10, NKJV): Այս խօսքին մէջ կան մեր կողմէն ընդգծուած բոլոր բառերը (պարգեւ՝ «*խարիզմա*», *շնորհք*՝ «*խարիս*», եւ տնտեսներ՝ «*օյքոնոմոս*»): Պետրոսը՝ նոյն կերպով, ինչպէս եւ Պօղոսը, կը տեղեկացնէ, որ մենք պէտք է տնտեսենք մեզի վստահուած *խարիզման*: Այս պնդումը շատ բան կը յայտնէ. այնպէս որ, մենք պէտք է ուշադրութեամբ ուսումնասիրենք այն:

Ուշադրութիւն դարձուցէք, որ Պետրոսի խօսքով, «իւրաքանչիւրը» պարգեւ ընդունած է: Ամենասկիզբէն կարելոր է նշել, որ ան չըսաւ. «իւրաքանչիւր ծառայող», «իւրաքանչիւր հովիւ», «իւրաքանչիւր փառաբանութեան աւագ» կամ խօսքի ծառայութեան վերաբերող որեւէ այլ պարգեւ, այլ՝ «իւրաքանչիւրը»: Եթէ դուք վերստին ծնած էք, դուք ունիք պարգեւ կամ պարգեւներ, որոնք փոխանցուած եւ վստահուած են ձեզի: Ասիկա Աստուածաշունչի պատասխանն է այն հարցումին, որուն մասին խօսեցանք երկու զլուխ առաջ: *Դուք ունիք պարգեւ կամ պարգեւներ, եւ, որպէս կրկնութիւն, ատոնք շնորհքի յատուկ ընդունակութիւններն են, որոնք կը զօրացնեն մարդուն՝ տալով յատուկ կարողութիւն:*



Ձեր պարգևներու կարեւորութիւնը ցոյց տալու համար դիտարկենք Պօղոսի վերաբերմունքը: Ան լրջօրէն կը վերաբերէր իր տնտեսութեան, իսկ աւելի ճիշդ՝ խիստ լրջօրէն: Քանի մը գլուխ յետոյ, կորնթացիներուն ուղղուած իր նամակին մէջ ան կը գրէ.

«Որովհետեւ եթէ Աւետարանը քարոզեմ, ատիկա ինծի պարծանք չէ, որովհետեւ իմ պարտականութիւնս է: Եւ վա՛յ ինծի, եթէ Աւետարանը չքարոզեմ: Որովհետեւ եթէ յօժար կամքով ընեմ ասիկա, վարձք ունիմ, իսկ եթէ ակամայ՝ տնտեսութիւնը յանձնուած է ինծի» (Ա. Կորնթացիս 9.16,17):

Իմ ուշադրութիւնն անմիջապէս գրաւեց «վա՛յ ինծի» արտայայտութիւնը: Այն խիստ է՝ աւելի խիստ, քան շատերս կրնանք հասկնալ: Յունարէնի մէջ «վայ» բառը «օտայ»-ն է, որու սահմանումն է «աղէտ, զարհուրանք»: Եւս մէկ բառարան կ'աւելցնէ այլ իմաստ՝ «տրտմութեան կամ վրդովմունքի բացական»: Այս բառի օգտագործման իւրաքանչիւր դէպքը Նոր կտակարանին մէջ կ'ենթադրէ շատ լուրջ եւ սարսափելի դատաստան, որ կը սպասէ անոնց, որոնց այն կը վերագրուի: Երբ Պօղոսը կը գրէ՝ «վա՛յ ինծի», ատիկա նման է ինքն իր վրայ անէծք կանչելուն: Այս պնդումը պէտք է անմիջապէս գրաւէ մեր ուշադրութիւնը: Աստուծմէ մեզի տրուած պարգևները անտեսելը ծանր արարք է:

Պօղոսը գիտէր, որ Աստուած մեծ արժէք ունեցող բան վստահած էր իրեն: Սթափեցնող ճշմարտութիւնն այն է, որ եթէ ան պատշաճ կերպով չտնտեսէր իր պարգէւը, ուրիշները չէին օգտուեր ատոնցմէ, եւ նոյնիսկ վնաս կը կրէին՝ չստանալով այն, ինչ որ Աստուած նախատեսած էր անոնց համար: Պօղոսը գիտէր, որ իր պարգէւը իրեն համար չէր. այն տրուած էր այլ մարդոց համար՝ իր միջոցով: Ուրիշ ձեւով ըսելու համար, ան ունէր այն, ինչ Աստուած կը ցանկար տալ այլ մարդոց, եւ յատկապէս ասիկա է պատճառը, որ ան «վա՛յ» կանչեց ինքն իր վրայ՝ իր տնտեսութիւնն անտեսելու պարագային:

Վերագրենք ասիկա ձեզի եւ ինծի: Մենք պէտք է ընդգծենք երկու հետաքրքրական միտք: Առաջինը՝ Պօղոսի պարգէւը «նկատելի» էր: Յիշեցէք՝ Աստուած վճռեց, որ ոչ ակնյայտ պարգևները պէտք է արժանանան աւելի մեծ պատիւի, քան ակնյայտ պարգևները: Եթէ Պօղոսն իր նկատելի պարգէւին կը վերաբերէր այսպիսի լրջութեամբ, մենք պէտք չէ արժեգրկենք այն պարգէւը, որ Աստուած դրած է մեր կեանքին մէջ, յատկապէս եթէ այն ոչ նկատելի է:

Երկրորդ եզրակացութիւնն ա՛լ աւելի կարեւոր է: Այն պարգևները,

որոնք Աստուած տուած է ձեզի, ձեզի համար չեն. աստոնք նախատեսուած են այլ մարդոց *համար*, որոնք պէտք է օգուտ ստանան ձեր *միջոցով*: Իմ գրելու պարգելը ինձի համար չէ, այլ՝ ձեզի համար: Իմ քարոզելու պարգելը ինձի համար չէ, այլ անոնց, որոնց ես խօսք կ'ուղղեմ: Իմ առաջնորդելու պարգելը ինձի համար չէ, այլ անոնց, որոնց ես կ'առաջնորդեմ, եւ այլն:

### ՄԵՆՔ Կ'ՈՐՈՇԵՆՔ, ԹԷ ԻՆՉՊԷՍ ՕԳՏԱԳՈՐԾԵՆՔ ՄԵՐ ՊԱՐԳԵԼԸ

Մենք կրնանք արդիւնաւէտ կերպով օգտագործել մեր պարգելները կամ չարաշահել աստոնք. ընտրողը մենք ենք: Պարգելը կրնայ գործել, նոյնիսկ եթէ այն չ'օգտագործուիր իր սկզբնական Աստուածային նպատակին՝ Աստուծոյ Թագաւորութիւնը կառուցելու համար: Ատուֆ Հիթլըրը օժտուած առաջնորդ էր, եւ ան կրնար առաջնորդել իր երկիրը այնպէս, որ օգուտ բերէր միլիոնաւոր գերմանացիներու, հրեաներու, ռուսերու, ֆրանսացիներու, բրիտանացիներու եւ այլոց: Արդեօ՞ք ան օգտագործեց այդ պարգելը Աստուծոյ փառքի համար, թէ՞ իր եւ իր հաւանութեանը արժանացած մարդոց: Կրնա՞նք ըսել, որ ան օգտագործեց իր պարգելը կործանման համար, որ հրեաները եւ անթիւ այլ ազգեր թալանուեցան, զրկուեցան, տանջահար եղան եւ ենթարկուեցան մահապատիժի՝ առանց որեւէ պատճառի: Այս հարցերու պատասխանները չունին քննարկման կարիք. աստոնք ակնյայտ են:

Ատուֆ Հիթլըրի տնտեսութեան արդիւնքը ակնյայտ է, բայց թոյլ տուէք խօսիլ եւս երկու շատ յայտնի մարդոց մասին, որոնց տնտեսութեան արդիւնքը թերեւս այդքան ակնյայտ չէ: Առաջինը Ուիթնի Հիւթընն է՝ երգչուհի, որ ունէր ամենահրաշալի ձայնը, որ երբեք լսած եմ: Աստուծոյ հպումը ակնյայտ էր անոր կեանքին մէջ: Երբ Ուիթնին կ'երգէր, անոր լսողները խորապէս կը յուզուէին: Անոր ձայնը եթերային էր. այն կարծես հրեշտակային ըլլար եւ շատ ազդեցիկ էր:

Երկրորդը Ֆրետի Մերքիւրին է՝ «Քուին» ռոք-խումբի մեներգիչը: Ան կրնար ազդել ամբողջ մարգադաշտերու վրայ իր երգահանութեան եւ երգեցողութեան պարգելներով: Անոր կարողութիւնը վեր էր սովորականէն, եւ ոմանք նոյնիսկ կը պնդեն, որ այն գերբնական էր: Ան կրնար դրդել ամբողջ բազմութեան մը հետեւելու իր առաջնորդութեան գրեթէ որեւէ իրավիճակի մէջ: Անոր մահէն տարիներ յետոյ շատերը տակաւին կ'երգեն անոր երգերը:

Արդեօ՞ք Ուիթնին եւ Ֆրետին արդիւնաւէտ տնօրինեցին իրենց

պարգեւները: Անկասկած, շատերը կը պնդեն, որ այդպէս է: Բայց եկէք դիտարկենք այս հարցը Յիսուսի խօսքերուն ներքոյ.

«Իմաստութիւնը արդարացի կը համարուի իր *արդիւնքներով*»  
(Մատթէոս 11.19, NLT),

եւ կրկին.

«Իմաստութիւնը արդարացի կը համարուի *այն մարդոց կեանքով, որոնք կը հետեւին աստոր*» (Ղուկաս 7.35, NLT):

Դիտարկենք այս երկու զարմանալի կատարողներու պտուղը՝ անոնց տնտեսութեան թէ՛ կարճատեւ, թէ՛ երկարատեւ արդիւնքները: Արդեօ՞ք Ուիթնին կ'օգտագործէր իր պարգեւը՝ մարդոց Աստուծոյ ներկայութեան մէջ տանելու համար: Արդեօ՞ք ունկնդիրներն Աստուածապաշտ կը դառնային՝ անոր լսելէն յետոյ: Անոր երգերը կ'ամրացնէ՞ին ամուսնական ուխտերը, թէ՞ դժգոհութիւն կը յառաջացնէին՝ անիրատեսական ռոմանթիք սպասումներ ստեղծելով: Արդեօ՞ք Ֆրետին կ'օգտագործէր իր պարգեւը՝ իր լսարանները արդարութեան առաջնորդելու համար: Արդեօ՞ք ան կը յորդորէր, որ մարդիկ իրենց Արարիչին պատուեն: Ինչպէ՞ս Ուիթնին եւ Ֆրետին հեռացան այս երկիրէն: Անոնց ժառանգութիւնը մնայո՞ւն է, թէ՞ անցողիկ: Այն կը մնա՞յ յաւիտեան, թէ՞ կը կործանի այս աշխարհի հետ:

Յիսուսը խորհուրդ կու տայ, որ քննենք մարդու կեանքի արդիւնքը, եւ ես թոյլ պիտի տամ, որ դուք որոշէք Ուիթնիի եւ Ֆրետիի տնտեսութեան արդիւնքները: Այնուամենայնիւ, վերջնական քննութեան ժամանակը պիտի գայ մեր Արարիչի ներկայութեան մէջ: Իւրաքանչիւրը հաշիւ պիտի տայ Դատաստանի ժամանակ:

Ես կը հասկնամ, որ եթէ դուք Ուիթնիի կամ Ֆրետիի համակիրներէն էք, թերեւս ձեզի հաճելի չթուին այս դատողութիւնները: Այնուամենայնիւ, թոյլ տուէք հարցում մը հարցնել, որ աւելի շատ լոյս կը սփռէ այն բանին վրայ, թէ ինչպէս կը գնահատուի անոնց տնտեսութիւնը Դատաստանի ժամանակ: Եկէք դիտարկենք անոնց ժառանգութիւնը տասը միլիոն տարուան հեռանկարով: Ի՞նչ կրնան ըսել Ուիթնին եւ Ֆրետին՝ անդրադառնալով այն բանին, թէ իրենք ինչպէս տնօրինած են Աստուծմէ իրենց տրուած պարգեւները: Քննութիւնը յաւիտեանական հեռանկարով կրնայ փոխել ձեր սկզբնական կարծիքը:

Ամէն ինչ կեանքին մէջ կախուած է հեռանկարէն: Եթէ մենք

դիտարկենք կեանքը 80 տարուան զտիչով, կը տեսնենք ամէն ինչ որոշակի կերպով: Այնուամենայնիւ, եթէ նայինք կեանքին յաւիտենական հեռանկարով, ամէն ինչ այլ կը թուի:

Պատկերացուցէք հետեւեալը: Ձեզ կը հրաւիրեն ընթիիքի ճաշարանի մը մէջ: Դուք կը վճարէք որոշուած գումար եւ կրնաք ուտել, ինչ որ կը փափաքիք: Սեղաններէն մէկուն վրայ միայն համեղ անուշեղէն կայ: Եթէ նայիք այդ սեղանին միօրեայ հեռանկարով, ի՞նչ պիտի ընէք: Ամենայն հաւանականութեամբ, դուք կ'ուտէք բոլոր համեղ պատառները: Ի՞նչ պիտի կատարուի, եթէ նայիք այդ սեղանին մէկ տարուան հեռանկարով: Հաւանաբար, դուք պիտի ուտէք մէկը, կամ ալ ոչ մէկ հատ: Ինչո՞ւ: Դուք չէք ուզեր, որ ձեր ստամոքսը ցաւի յաջորդ առաւօտեան, չէք ուզեր, որ ձեր մարմինի ճարպը աւելնայ չորս քիլոկրամով մինչեւ յաջորդ շաբաթ, եւ պիտի չցանկաք վնասել ձեր առողջութիւնը՝ երկարաժամկէտ տեսանկիւնէն:

Դիտարկելով Ուիթնիի եւ Ֆրետիի պտուղը յաւիտենական հեռանկարով, ակնյայտ է, թէ որքանով կարելի է իմաստուն համարել անոնց տնտեսութիւնը:

Մեզի համար բոլորովին անվտանգ է խօսիլ Ատուֆ Հիթլըրի կամ, նոյնիսկ, Ֆրետի Մերքիւրիի եւ Ուիթնի Հիւսթընի մասին: Բայց գոյութիւն ունի սթափեցնող իրականութիւն. դուք եւ ես նոյնպէս հաշիւ պիտի տանք մեզի վստահուած պարգեւներուն համար, երբ կանգնինք Դատաւորին առջեւ: Մեր պարգեւները կը դիտարկուին յաւիտենական, ոչ թէ 80 տարուան հեռանկարով: Մեր պարգեւները պիտի ստուգուին Աստուծոյ յաւիտենական Խօսքի լոյսի ներքոյ, որ կը յանձնարարէ մեզի կառուցել Անոր թագաւորութիւնը: Արդեօ՞ք մեր ժառանգութիւնը մնայուն պիտի ըլլայ, թէ՞ այն պիտի անցնի այս աշխարհի համակարգին հետ:

## ՇԱՐԺԱՌԻԹՆԵՐՈՒ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՆ

Թոյլ տուէք կրկնել այն, ինչի մասին խօսեցանք առաջին գլուխին մէջ: Դուք կրնաք տնօրինել ձեր պարգեւը հետեւեալ երեք ձեւերով.

- Դուք կրնաք օգտագործել այն՝ կառուցելու համար Աստուծոյ Թագաւորութիւնը:
- Դուք կրնաք օգտագործել այն՝ կառուցելու համար ձեր կեանքը:
- Դուք կրնաք ընդհանրապէս անտեսել այն:

Կարելոր է խօսիլ երկրորդ կէտին մասին, որ կրնայ խաբուսիկ ըլլալ: Շատերը կը կարծեն, թէ իրենք կը կառուցեն այլ մարդոց, նոյնիսկ՝

յանուն Աստուծոյ Թագաւորութեան, սակայն անոնք կ'ընեն ատիկա անձնական շահի համար:

Ես անգիտակցաբար յայտնուած էի այս ծուղակին մէջ: Տարիներ առաջ՝ իմ ծառայութեան սկիզբը, մշտապէս բարի եւ հաճելի խօսքեր կ'ըսէի բոլորին մեր խումբին մէջ, եկեղեցիին մէջ եւ անոնց, որոնց կը ճանչնայի: Ես կը հաճոյախօսէի մարդոց նոյնիսկ այն պարագային, երբ իմ խօսքերը ճիշդ չէին: Ես կը լսէի, որ մարդիկ բարի եւ սիրող կը համարէին ինձի: Այդ գնահատականն ա՛լ աւելի կը խրախուսէր իմ վարքը:

Անգամ մը աղօթքի ժամանակ Աստուած ըսաւ ինձի. «Մարդիկ կ'ըսեն, որ դուն սիրող, հոգատար եւ բարի անձնաւորութիւն ես, այնպէս չէ՞»:

Այլ պարագային ես կ'ընդունէի Անոր ըսածը որպէս հաստատութիւն, բայց այն, թէ ինչպէս Սուրբ Հոգին խօսեցաւ, ցոյց կու տար, որ Ան ուրիշ բան նկատի ունէր: Այնպէս որ, ես զգուշօրէն պատասխանեցի. «Այո՛, կ'ըսեն»:

Ան անմիջապէս պատասխանեց. «Գիտե՞ս, թէ ինչու դուն միայն հաճելի բաներ կ'ըսես մարդոց»:

Ես աւելի զգոյշ պատասխանեցի. «Ինչո՞ւ»:

«Որովհետեւ դուն կը վախճաս, որ կը մերժուիս անոնցմէ, - ըսաւ Ան: - Այդ պարագային, ո՞վ է քու սիրոյ կեդրոնը՝ դո՞ւն, թէ՞ անոնք»:

Հասկնալով, որ իմ շարժառիթները բոլորովին բացայայտուած էին, ես ընդունեցի, որ Ան ճիշդ էր:

Ան շարունակեց. «Եթէ դուն իսկապէս սիրէիր մարդոց, պիտի ըսէիր անոնց ճշմարտութիւնը, նոյնիսկ եթէ անոնք մերժէին քեզի»:

Այս շտկումը ուղղուած էր մարդոց հանդէպ իմ վերաբերմունքին: Բայց ես պէտք է հարցնեմ հետեւեալ հարցումը՝ կապուած մեր թեմային հետ: Կրնա՞նք մենք չարաշահիլ Աստուծոյ պարգելը նման կերպով: Ուրիշ ձեւով ըսելու համար, մարդոց կրնայ թուիլ, թէ մենք կ'օգտագործենք մեր պարգելը՝ Աստուծոյ Թագաւորութիւնը կառուցելու համար, բայց իրականութեան մէջ այն կ'օգտագործուի եսակեդրոն շարժառիթներով: Պատասխանը, անշուշտ, դրական է, եւ ես եւս մէկ անգամ օրինակ կը բերեմ իմ կեանքէն, այնուհետեւ կը հաստատեմ այն սուրբգրային օրինակներով:

Սովորաբար ես անմիջապէս խօսք չեմ ստանար Տիրոջմէն այն մասին, թէ ինչ պէտք է քարոզեմ որեւէ համաժողովի կամ եկեղեցական ծառայութեան ընթացքին, բայց մշտապէս բաց կը պահեմ իմ սիրտը՝ Սուրբ Հոգիի առաջնորդութեան համար: Այնուամենայնիւ, կար դէպք

մը, երբ ես յստակօրէն Տիրոջմէն խօսք ունէի քարոզելէն առաջ:

ԱՄՆ-ի Միջին Արեւմուտքը անգամ մը ես պէտք է ծառայէի համաժողովի մը մէջ: Երբ արթնցայ իմ պանդոկի սենեակին մէջ այն օրը, երբ պէտք է քարոզէի, յստակօրէն լսեցի Սուրբ Հոգիին ձայնը. «Ես կը ցանկամ, որ համաժողովի այսօրուան ծառայութեան քարոզես *«Սատանայի խայծը»* թեմայով»: (Ես գրած եմ այդ գիրքը 1994 թուականին. այն՝ վիրաւորանքները յաղթահարելու եւ մեզի ցաւ պատճառող մարդոց ի սրտէ ներելու մասին է):

Ամբողջ օրը ես պայքարեցայ Անոր ըսած խօսքերուն հետ: «Սատանայի խայծը» ուղերձը արդէն քանի մը տարի էր լայն տարածում ունէր: Այդ գիրքը հանրաճանաչ դարձած էր: Շատ երկար ժամանակ էր, որ ես կը քարոզէի այդ ուղերձը ամբողջ ԱՄՆ-ի տարածքին, եւ շատերը արդէն լսած էին այն: Ինծի համար ա՛լ ւաւելի դժուար էր հետեւիլ Սուրբ Հոգիի առաջնորդութեան, քանի որ ես կ'աշխատէի նոր գիրքի վրայ: Երբ դուք ամիսներ շարունակ գրի կ'առնէք որոշակի ճշմարտութիւններ, ատոնք ւաւելի ուժգին եւ թարմ են ձեր սրտին մէջ: Եւ, ամենակարեւորը, իրականութեան մէջ ես չէի ցանկար քարոզել ւաւելի հին ուղերձը, բայց ստացայ յստակ պատուէր Սուրբ Հոգիէն:

Այդ երեկոյ, համաժողովի դահլիճ հասնելուս պէս, ինծի ըսին, որ մարդիկ եկած էին հեռուէն՝ ինծի լսելու համար: Մարմինովս սարսուռ անցաւ. ես մտածեցի, որ այդ մարդիկ, հաւանաբար, պիտի լսեն կրկնուող ուղերձ, եւ հնարաւոր է, որ անոնք արդէն կարդացած են «Սատանայի խայծը» գիրքը:

Մտնելով դահլիճ՝ ես նկատեցի, որ մթնոլորտը լեցուն էր ոգեւորութեամբ: Մարդոց սպասումը ակնյայտ էր: Առաւօտեան ստացած խօսքին հետեւիլը ւաւելի դժուար թուեցաւ ինծի: Ես կարծես չէի ցանկար յուսախաբ ընել մարդոց: Առիթ տուի ճնշումին եւ որոշեցի քարոզել իմ «թարմ» ուղերձը, եւ ինծի հաճելի թուեցաւ իմ քարոզը: Այն ազդեցիկ էր, եւ մարդիկ արծագանգեցին խանդավառութեամբ: Քանիներ նոյնիսկ ոտքի ելան՝ հաստատելով իմ գլխաւոր մտքերը: Կը թուէր՝ ես «անպատիժ մնացի», կամ, թերեւս, չէի լսած Աստուծմէ այդ առաւօտեան: Ինչ որ է, ես ուրախ էի: Հաւաքոյթէն յետոյ բոլորը ծառայողներու սենեակին մէջ ոգեշնչուած էին եւ շնորհակալ էին ինծի այդ ուղերձին համար:

Սովորաբար այն քաղաքէն, ուր կը քարոզեմ, ես կը հեռանամ բաւականութեան եւ ուրախութեան զգացումով, կարծես Աստուած կը ժպտայ իմ սրտին մէջ: Յաջորդ առաւօտեան ես բոլորովին ուրիշ ձեւով կը զգայի ինքզինքս: Ես արթնցայ ծանրութեան զգացումով. կարծես ուժ չունէի եւ նոյնիսկ կը պայքարէի ընկճուածութեան հետ: Եւ

անմիջապես հասկցայ պատճառը. ես չէի հնազանդած Աստուծոյ: Այդ առաւօտ ծունկի եկայ, ապաշխարեցի, ներում խնդրեցի եւ աղաչեցի, որ Յիսուսի արիւնը մաքրէր ինձի:

Այնուամենայնիւ, թեթեւութիւն չզգացի: Ես կրեցի այդ ծանրութիւնը եւ տրտմութիւնը ամբողջ օրը՝ պանդոկին մէջ եղած ժամանակ, օղակայան երթալու ճանապարհին, օղակայանը ուշացած թռչքին սպասելու ժամանակ եւ դէպի Արեւմտեան Ափ ճանապարհորդութեան ընթացքին: Տրտմութիւնը, ծանրութիւնը եւ ընկճուածութիւնը գրեթէ անտանելի էին: Ի վերջոյ, երբ օղանաւը կը պատրաստուէր վայրէջք կատարելու Սան Տիեկոյի մէջ, այդ ամէնը վերցուեցաւ ինձմէ:

«Հա՛յր, - հարցուցի, - ես ապաշխարեցի եւ ներում խնդրեցի այս առաւօտ: Ինչո՞ւ Դուն չվերականգնեցիր իմ ուրախութիւնը, խաղաղութիւնը եւ գոհունակութիւնը մինչեւ այս պահը»:

Եւ լսեցի Տիրոջ ձայնը. «Ես թոյլ տուի քեզի կրել քու անհնազանդութեան ծանրութիւնը, որպէսզի հասկնաս, թէ որքան լուրջ էր այն: Անցեալ երեկոյ ծառայութեան ներկայ էր հովիւ մը, որ պէտք է լսէր «Սատանայի խայծը»՝ այն ուղերձը, որ Ես վստահած էի քեզի: Անոր անձնական կեանքը եւ ծառայութիւնը վճռորոշ փուլին մէջ են: Դուն չհնազանդեցար Ինձի, իսկ անհնազանդութիւնը հետեւեանքներ ունի: Այն ծանրութիւնը, որ զգացիր, զգուշացում է, որ թոյլ չտաս, որպէսզի ատիկա կրկնուի: Այժմ դուն նոր քաղաքի մէջ ես. հնազանդի՛ր Ինձի»:

Վերյիշելով նախորդ երեկոն՝ ես կրնայի ըսել, որ թէ՛ ներկաները, թէ՛ համաժողովի խումբը եւ կազմակերպիչները ուրախ էին: Ինձի կրկին հրաւիրեցին հոն, եւ հետագային ես նոյնիսկ լսեցի վկայութիւններ՝ կապուած այդ ծառայութեան հետ: Ակնյայտ է, որ Աստուծոյ պարգեւը գործեց իմ միջոցով այդ երեկոյ, թէեւ այն չէր գործածուած համաձայն Աստուածային նպատակի:

Թերեւս հարցնէք. «Դուք համոզուա՞ծ էք, որ նման բան կրնայ տեղի ունենալ»: Եկէք դիտարկենք քանի մը պատմութիւն Սուրբ Գիրքէն աստուածային պարգեւը չարաշահելու մասին: Սկսինք Մովսէսէն: Ան կանչուած էր առաջնորդելու Իսրայէլը դէպի Խոստումի երկիր եւ օժտուած էր ակնառու հրաշքներ գործելու կարողութեամբ՝ իր առաքելութիւնը կատարելու համար:

Անգամ մը Աստուած պատուիրեց Մովսէսին խօսիլ ժայռին, որպէսզի ջուր դուրս գար, եւ մարդիկ խմէին: Բայց Մովսէսը հարուածեց ժայռին՝ բարկութեան պատճառով, այսինքն՝ ան ուղղակիօրէն անհնազանդ գտնուեցաւ Աստուածային առաջնորդութեան: Զուրը, միեւնոյնն է, առատութեամբ եկաւ՝ այնպէս, որ միլիոնաւոր մարդիկ անապատին

մէջ խմեցին: Ատիկա եւս մէկ տպաւորիչ հրաշք էր Մովսէսի ցուցակին մէջ: Այնուամենայնիւ, որոշ ժամանակ յետոյ՝ երբ «համաժողովը» աւարտեցաւ, Մովսէսը կանչուեցաւ հաշուետուութեան՝ իր պարգելը Աստուծոյ առաջնորդութեամբ չգործածելու համար: Այդ չարաշահման պատճառով անոր թոյլ չտրուեցաւ մտնել Խոստումի երկիր: Սթափեցնող է, երբ կը մտածէք այդ մասին:

Յաջորդ օրինակը Բաղաամն է: Ան մարգարէացաւ Իսրայէլի համար, եւ անոր խօսքերը գրուած են Աստուածաշունչին մէջ մինչեւ օրս: Ինչպիսի՜ մեծ վկայութիւն. ձեր մարգարէութիւնը՝ Աստուծոյ յաւիտենական Խօսքին մէջ: Բայց այս պատմութեան մէջ աւելին կայ: Աստուած յատուկ պատուիրած էր անոր չերթալ, այսինքն՝ չընել այն, ինչ որ անորմէ կ'ուզէին: Այնուամենայնիւ, Բաղաամին վստահուած պարգելը գործեց, թէւ Աստուած յստակ ըսած էր անոր. «Դուն պէտք չէ երթաս անոնց հետ» (Թուոց 22.12, NKJV): Կրկին, պարգելը գործեց՝ սկզբնական Աստուածային նպատակէն դուրս:

Որպէս հետեւութիւն՝ Աստուած չի մանրակառավարեր Իր կողմէն մեզի վստահուած պարգելները: Եթէ ան այդ կերպով վերահսկեր, մենք *տնտեսներ* չէինք կոչուեր, քանի որ տնտեսը ունի իշխանութիւն՝ տնօրինելու այն, ինչ որ վստահուած է իրեն՝ առանց անմիջական վերահսկողութեան: Այս պնդումի սուրբգրային օրինակը Յիսուսի առակն է անիրաւ տնտեսի մասին.

«Հարուստ մարդ մը կար, որ տնտես մը ունէր: Եւ անոր վրայ զանգատ եղաւ իրեն, իբր թէ ան կը վատնէ իր ստացուածքը: Եւ զանկա կանչեց ու ըսաւ անոր. «Ասիկա ի՞նչ է, որ ես կը լսեմ քեզմէ: Տո՛ւր քու տնտեսութեան բաժինը, որովհետեւ այլեւս չես կրնար տնտես ըլլալ»» (Ղուկաս 16.1,2):

Քանի որ տնտեսութիւնը աւելի տարածուած էր Աստուածաշնչեան օրերուն մէջ, քան այսօր, մենք հեշտօրէն կրնանք չնկատել կարելոր բան մը այս պատմութեան մէջ: Ուշադրութիւն դարձուցէք, որ որոշ ժամանակ այդ հարուստը տեղեակ չէր կատարուածէն. ան չէր հետեւեր իր տնտեսի գործերուն ամէն օր: Անհրաժեշտ եղաւ, որ մէկ այլ մարդ զգուշացնէր անոր, որպէսզի ան ուշադրութիւն դարձնէր արդէն երկար ժամանակ տեւող թիր կառավարման:

Մենք կրկին կը տեսնենք ասիկա Յովսէփի պատմութեան մէջ՝ Ծննդոց գիրքին մէջ: Յայտնուելով Եգիպտոս՝ սկիզբը ան ստրուկ էր Պետափրէսի տունը, բայց հետագային յառաջխաղացում ունեցաւ՝ բոլորովին դառնալով անոր տան *տնտեսը*: Գրուած է. «Եւ ան իր ամբողջ ունեցուածքը Յովսէփի ձեռքը ձգեց, եւ անոր քով ինչ որ



կար, տեղեկութիւն չունէր՝ բացի իր կերած հացէն» (Ծննդոց 39.6): Պետաւորէսը չէր մանրակառավարեր կամ վերահսկեր Յովսէփի աշխատանքը: Ան Յովսէփին վստահած էր տնտեսութիւնը:

Աստուծոյ պարգեւները մեզի կը տրուին նոյն ձեւով: Պետրոս առաքեալը կը պատուիրէ մեզի ըլլալ Աստուծոյ մեզի տրուած բազմապիսի շնորհքի՝ *խարիզմայի* բարի տնտեսներ:

## ՈՉ ԱԿՆՅԱՅՏ ՅԱԻՏԵՆԱԿԱՆ ՊԱՐԳԵՒՆԵՐ

Եկէք շարունակենք: Նախ վերյիշենք Պետրոսի խօսքերը. «Ինչպէս որ իւրաքանչիւրը պարգեւ ընդունած է, *ծառայեցէք* մէկո միւսին՝ որպէս Աստուծոյ բազմապիսի շնորհքի բարի տնտեսներ»: Որպէս տնտեսներ, մեզմէ կը սպասուի, որ *ծառայենք* կամ օգտագործենք մեր պարգեւները: Կրկին, ատոնք մեզի համար չեն, այլ՝ մեզ շրջապատող մարդոց: «*Ծառայել*» բառը յունարէնի մէջ «*տիաքրնէ՛օ*» բառն է, որ կը նշանակէ «ծառայել, սպասարկել՝ գործը աւարտին հասցնելու շեշտադրումով»: Մենք պէտք է մշտապէս պատրաստ ըլլանք ծառայելու մեր պարգեւներով: Մեր պարգեւները ձրիաբար տրուած են մեզի, եւ մենք պէտք է պատրաստակամօրէն օգտագործենք ատոնք՝ այլ մարդոց կեանքերը կառուցելու համար:

Մենք պէտք է «ծառայենք միմեանց *մեզի վստահուած պարգեւներով*՝ որպէս Աստուծոյ *բազմապիսի* շնորհքի բարի տնտեսներ»: «Բազմապիսի» բառը այս խօսքին մէջ կը նշանակէ «տարբեր տեսակներու»: Կը պահանջուին չափազանց շատ էջեր՝ թուարկելու համար այն բազմապիսի պարգեւները, որոնք Աստուած տուած է Իր ժողովուրդին: Իրականութեան մէջ, կ'երեւի թէ, անհնար է նման ցուցակ մը կազմել: Որոշ պարգեւներու կապը Աստուծոյ Թագաւորութիւնը կառուցելու հետ՝ ակնյայտ է: Այնուամենայնիւ, բազմաթիւ այլ պարգեւներու կապը շատ աւելի դժուար է նկատել: Ահա օրինակ մը:

Վերջերս լսեցի յայտնի հովիւի մը, որ կը պատմէր իր ամենամեայ համաժողովէն առաջ տեղի ունեցած հետաքրքրական խօսակցութեան մասին: Այդ ամենամեայ միջոցառումը շատ յայտնի է, եւ շատերը կը մասնակցին ատոր: Երբ անոր խումբը կը պատրաստէր լսարանը, այդ հովիւը տեսաւ, որ բժիշկ մը, որ իր եկեղեցիին անդամ է, տեղեկագիրներ կը շարէր նստարաններուն վրայ՝ համաժողովի մասնակիցներուն համար:

Այդ հովիւը մօտեցաւ բժիշկին եւ ներողութիւն խնդրեց.

- Բժիշկ, դուք պէտք չէ ընէք ասիկա: Մեր օգնականները եւ կամաւորները կը կատարեն այս աշխատանքը:

Այդ հովիւի խօսքերով, այդ բժիշկը խիստ, բայց քաղաքավարի հակադարձեց անոր.

- Ամէն տարի ես արձակուրդ կ'առնեմ իմ աշխատանքէն, որպէսզի մասնակցիմ այս համաժողովին: Ասիկա իմ ամենաթանկ շաբաթն է տարուան մէջ, որովհետեւ ես ինչ որ բան մը կ'ընեմ՝ Աստուծոյ Թագաւորութիւնը կառուցելու համար:

Լսելով այդ հովիւի պատմութիւնը, որ իմ ընկերն է, ես տրտմեցայ այդ բժիշկին համար: Հասկցայ, որ ան չէր տեսներ ընդհանուր պատկերը եւ չէր պատկերացներ իր պարգեւի արժէքը՝ Աստուծոյ Թագաւորութիւնը կառուցելու մէջ: Կրկին, որոշ պարգեւներ անմիջականօրէն կապակցուած են Աստուծոյ Թագաւորութիւնը կառուցելու հետ, իսկ միւսները՝ ոչ անմիջական, սակայն ատոնցմէ ոչ մէկը անկարելի է:

Այդ բժիշկը կը մտածէր նոյն կերպով, ինչ Սթենը՝ առաջին գլուխին մէջ: Ի՞նչ պիտի ըլլար, եթէ չըլլային բժիշկներ, եւ մարդիկ, որոնք կանչուած են կառուցելու Աստուծոյ Թագաւորութիւնը այլ բնագաւառներուն մէջ, հիւանդանային: Շատերը վաղաժամ կը մահանային՝ առանց բժշկական օգնութեան:

Ահա յօրինուած օրինակ մը, որ ցոյց կու տայ այս կապը: Բժիշկ մը կ'օգտագործէ իր պարգեւը՝ օգնելով վերականգնել տնային տնտեսուհիի մը առողջութիւնը: Վերջաւորութեան, քանի որ այդ կինը այլեւս անօգնական անկողնային հիւանդ չէ եւ վաղաժամ պիտի չմահանայ, ան գերազանց կ'օգտագործէ իր պարգեւը, որ աստուածապաշտ երեխաներ դաստիարակելն է: Անոր երեխաներէն մէկը օժտուած է նորարարութեան բնագաւառին մէջ, եւ անոր մայրը կը խրախուէ ատիկա: Այդ երեխան՝ անոր աղջիկը, բարձրագոյն կրթութիւն կը ստանայ համակարգչային ծրագրային ապահովման ոլորտին մէջ եւ կը սկսի աշխատիլ ծրագրային ապահովութիւն ստեղծող ընկերութեան մը մէջ:

Արդէն հասուն տարիքի ընթացքին, երբ ան բոլորովին կը գործէ իր պարգեւով, այդ աղջիկը կը պատրաստէ հաղորդակցման նոր միջոց, որ շատ աւելի արդիւնաւետ է, քան այն ամէնը, ինչ գոյութիւն ունի շուկային մէջ: Սակայն անոր նորամուտութիւնը չի կրնար տարածուիլ՝ առանց գովազդային բաժինին մէջ աշխատող իր գործընկերոջ: Այդ երիտասարդը կ'օգտագործէ իր պարգեւը, որպէսզի տեղեկացնէ գնորդները եւ սպառողները այդ նոր ծրագրային փաթեթի հնարաւորութիւններուն մասին:

Գնորդներէն մէկը՝ տաղանդաւոր գործարարի մը պատկանող ընկերութիւն, ձեռք կը ձգէ այդ ծրագրային ապահովումը: Այն ունի

վաճառքի խումբ, եւ այդ խումբի անդամներէն մէկը կ'օգտագործէ իր պարզելը՝ վաճառելու համար այդ ծրագրային փաթեթը ծառայութեան մը, որ կանչուած է աշակերտելու բոլոր ազգերու մարդոց:

Այդ ծառայութեան մէջ կայ շնորհքով օժտուած ծրագրաւորող, որ կը տեսնէ այդ ծրագրի հնարաւորութիւնները եւ կ'առաջարկէ ձեռք ձգել այն: Ան կը միացնէ այն իրենց գործող համակարգին:

Ատոր շնորհիւ այդ ծառայութիւնը կրնայ աւելի արդիւնաւէտ կերպով ազդեցութիւն ձգել աշխարհի տարածքին գտնուող հովիւներու եւ առաջնորդներու վրայ: Որպէս արդիւնք, բազմաթիւ տղամարդիկ եւ կանայք փրկութեան կու գան եւ աշակերտութիւն կը ստանան այդ հաղորդակցման ծրագրային փաթեթին միջոցով:

Դատաստանի գահին առջեւ Յիսուսը այդ տնային տնտեսուհիին բուժող բժիշկին ցոյց պիտի տայ տարբեր ազգերու բազմաթիւ մարդոց, որոնց ան հասած է: Մենք գրեթէ կրնանք պատկերացնել, թէ ինչ տեղի պիտի ունենայ: Այդ բժիշկը պիտի վիճարկէ ասիկա. «Ո՛չ, հնարաւոր չէ, որ ասիկա ես ըրած ըլլամ: Ես երբեք չեմ հասած այդ ազգերուն»:

Յիսուսը ցոյց պիտի տայ այդ բժիշկին, որ ան իր կեանքին մէջ եղած պարզելով հաւատարիմ մնալու շնորհիւ յառաջացուցած է շղթայական փոխազդեցութիւն, որուն արդիւնքով փրկուած են անթիւ մարդիկ եւ հաստատուած են ամբողջ աշխարհի տարածքին գտնուող բազմաթիւ հաւատացեալներ: Ամենայն հաւանականութեամբ, Յիսուսը կ'ըսէ անոր. «Դուն պատրաստակամօրէն կ'աշխատէիր որպէս բժիշկ, կարծես կը գործէիր Տիրոջ համար, ոչ թէ մարդոց, եւ քու պտուղը ակնյայտ է: Շատերը կրեցին երկինքի ազդեցութիւնը՝ քու հնազանդութեան պատճառով: Կեցցե՛ս, բարի եւ հաւատարիմ ծառայ»:

Թերեւս հարցնէք. «Արդեօ՞ք Աստուածաշունչը կը սատարէ այս գաղափարին»: Կարդացէ՛ք այս խօսքը.

«Լաւագոյնս կատարեցէ՛ք այն աշխատանքը, որ ունիք: Աշխատեցէ՛ք այնպէս, կարծես կ'ընէք ասիկա Տիրոջ համար, ոչ թէ մարդոց: Յիշեցէ՛ք, որ դուք պիտի ստանաք ձեր վարձատրութիւնը Տիրոջմէն» (Կողոսացիս 3.23,24, NCV):

Ահա պարզապէս տարբերակ մը: Գոյութիւն ունին նման կապերու կամ շղթայական փոխազդեցութիւններու անթիւ հաւանականութիւններ:

Վերադառնանք այն պատմութեան, որ պատմեց իմ հովիւ ընկերը: Ի՞նչ տեղի պիտի ունենար, եթէ այդ բժիշկը յոգնէր տարուան մէջ միայն մէկ շաբաթ բաւականութիւն զգալէն յետոյ (անշուշտ, ան գոհ չէր այն պատճառով, որ չէր գիտակցեր իր պարզելի կարեւորութիւնը):

Ամենայն հաւանականութեամբ, ան պիտի հեռանար բժշկութենէն՝ փորձելով բաւականութիւն զգալ տարուան մէջ 52 շաբաթ: Ենթադրենք, ան պիտի ընդունուէր աշխատանքի իր եկեղեցւոյ մէջ՝ որպէս ուսուցիչ եւ աշակերտական դասերու դասընթացքներ պատրաստող: Ի՞նչ տեղի պիտի ունենար Ղատաստանի գահին առջեւ: Մի՞թէ ան նոյնքան վարձատրութիւն պիտի ստանար: Չէ՞ որ ան ձգած էր այն պարգելը, որ վստահուած էր իրեն:

Ցաւօք, ես յաճախ տեսած եմ թէ՛ տղամարդոց, թէ՛ կիներուն, որոնք, թէեւ մեծ դժուարութեամբ կ'աշխատէին լրիւ դրոյքով ծառայողական պաշտօններու մէջ, բայց չէին հրաժարեր ատոնցմէ, քանի որ չէին գիտակցեր, որ իրենց պարգէները պէտք է ծաղկունք ապրին եկեղեցական միջավայրէն դուրս գտնուող ոլորտներուն մէջ:

Անհրաժեշտ է ունենալ գիտելիք, հոգեւոր զգայունութիւն եւ հասունութիւն՝ Աստուծոյ Թագաւորութեան ոչ ակնյայտ ծառայողական դիրքերը տեսնելու համար:

Ճշմարտութիւնը այն է, որ ձեր պարգելը՝ առողջապահութեան, կրթութեան, կառավարման, մարզանքի, գործարարութեան, արուեստի, մեստիայի, տնային տնտեսութեան կամ որեւէ այլ ոլորտին մէջ, կապ ունի Աստուծոյ Թագաւորութիւնը կառուցելու հետ: Գլխաւոր ճարտարապետը այդպէս ծրագրած է ամէն ինչ:

Շատ հնարաւոր է, որ մենք չտեսնենք մեր հնազանդութենէն բխող յաջողութիւնը, մինչեւ Յիսուսի Ղատաստանի գահի առջեւ կանգնիլը: Ինչպէս Պողոսը կը գրէ. «Նոյնը կը վերաբերի բարի գործերուն. նոյնիսկ եթէ սկիզբը ատոնք յայտնի չեն, վերջաւորութեան պիտի գիտցուին եւ յայտնի պիտի դառնան» (Ա. Տիմոթէոս 5.25, TPT):

Այնպէս որ, անկախ այն բանէն, ձեր պարգելը ակնյայտ է, թէ ոչ, դուք ստացած էք հետեւեալ պատուէրը. «Ամէն մէկը, ինչպէս Աստուած կանչեց, այնպէս թող երթայ» (Ա. Կորնթացիս 7.17):

## ՇԱՐԺԱՌԻԹԸ ԱՆՉԱՓ ԿԱՐԵՒՈՐ Է

Վերադառնանք Պողոսի խօսքերուն, որոնք մենք որպէս նմուշ կ'օգտագործենք մեր տնտեսութեան համար:

«Որովհետեւ աստիկա պարտականութիւնս է: Եւ վա՛յ ինձի, եթէ Աւետարանը չքարոզեմ: Որովհետեւ եթէ *յօժար կամքով* ընեմ այս, *վարձք* ունիմ» (Ա. Կորնթացիս 9.16,17):

Յաջորդ ճշմարտութիւնը, որ պէտք է ընդգծել, այն է, որ մեր

«վարձատրութիւնը» անմիջապէս կապուած է մեր «յօժարութեան» կամ, աւելի ընդհանուր իմաստով, մեր «վերաբերմունքի» հետ: Պարզ ըսած՝ եթէ մեր վերաբերմունքն *անձնագրի* է, մենք վարձատրութիւն կը ստանանք. եթէ մեր վերաբերմունքը *եսակեղրոն* է, մենք վարձատրութիւն չենք ստանար:

*Անձնագրի* եւ *եսակեղրոն* շարժառիթները կրնան այնքան շատ դրսեւորումներ ունենալ, որ անկարելի է թուարկել: Եկէք ընենք ընդամէնը քանի մը համեմատութիւն: *Անձնագրի* վերաբերմունքը կրնայ ըլլալ այսպիսին. «*Ինչպիսի՛ արտօնութիւն է մարդոց ծառայելը՝ ինձի վստահուած կարողութիւններով*»: *Եսակեղրոն* շարժառիթը կրնայ ըսել հետեւեալը. «*Ի՞նչ շահ կրնամ ստանալ իմ կարողութենէն*»: Ըստ էութեան, առաջինը կ'ըսէ. «*Ի՞նչ կրնամ ընել քեզի համար*», իսկ երկրորդը՝ «*Ի՞նչ կը ստանամ ատորմէ*»:

Անձնագրի վերաբերմունքը կրնայ ըլլալ այսպիսին. «*Ես կ'ընեն լաւագոյնը՝ անկախ այն բանէն, թէ ինչ կը ստանամ ատոր համար*», իսկ *եսակեղրոն* շարժառիթը այսպիսին է. «*Ինչո՞ւ ես պէտք է մանրակրկիտ աշխատանք կատարեմ, եթէ շատ բան պիտի չստանամ ատորմէ*»:

Եւս մէկ անձնագրի շարժառիթ. «*Ես պէտք է շարունակեմ գործել. կան այնքան մարդիկ, որոնց կեանքին մէջ պէտք է ազդեցութիւն ձգել*»: Իսկ *եսակեղրոն* շարժառիթը կ'ըլլայ այսպիսին. «*Ես յաջողութեան հասած եմ եւ արդէն կրնամ հանգստանալ*»:

Պօղոսը կը գրէ *վերաբերմունքի* կամ *շարժառիթի* կարեւորութեան մասին. «*Թող ամէն մարդ այսպէս համարէ մեզի, ինչպէս Քրիստոսի պաշտօնեաներ եւ... տնտեսներ*», եւ կը շարունակէ անմիջապէս այս խօսքերէն յետոյ.

«*Ինչ կը վերաբերի ինձի, շատ քիչ կարեւորութիւն ունի, թէ ինչպէս կրնամ գնահատուիլ ձեր կամ որեւէ մարդկային իշխանութեան կողմէն: Ես նոյնիսկ չեմ վստահիր իմ դատողութեան այս հարցին մէջ: Իմ խիղճը մաքուր է, բայց ատիկա չ'ապացուցեր, որ ես ճիշդ եմ: Ինքը Տէրն է, որ կը քննէ ինձի եւ կ'որոշէ: Այնպէս որ, ոչ ոքի մասին դատեցէք ժամանակէն շուտ՝ մինչեւ Տիրոջ վերադարձը, որովհետեւ Ան լոյսի մէջ պիտի բերէ մեր *ամենախաւար գաղտնիքները* եւ պիտի յայտնէ մեր *անձնական շարժառիթները*: Այդ ժամանակ Աստուած պիտի տայ իւրաքանչիւրին իրեն արժանի *գովեստը*» (Ա. Կորնթացիս 4.3-5, NLT):*

Պօղոսը մտահոգուած չէր իր ընկերներուն, քննադատներուն կամ

որեւէ այլ ինքնակոչ իշխանութեան գնահատականով եւ նոյնիսկ իր սեփական կարծիքով: Այս գնահատականները անիմաստ են այն բանին համեմատ, ինչին բոլորս ի վերջոյ պիտի հանդիպինք՝ Աստուածային քննութեան: Կարելորդ այն է, թէ ինչպէս *Յիսուսը* կը գնահատէ մեր տնտեսութիւնը:

Վստահ եղէք, որ մեր հնազանդ *գործերը* կարելոր պիտի ըլլան Ղատաստանի ժամանակ: Յիսուսը պարզօրէն կը պնդէ. «Ահա շուտով կու գամ, եւ իմ վարձքը՝ Ինծի հետ է, որ ամէն մէկուն իր գործին համեմատ հատուցանեմ» (Յայտնութիւն 22.12): Ղատաստանը տեղի չ'ունենար «կա՛մ մէկը, կա՛մ միւսը» սկզբունքով, այլ՝ «ե՛ւ մէկը, ե՛ւ միւսը» սկզբունքով: Ե՛ւ շարժառիթները, ե՛ւ գործերը կը քննուին Ղատաստանի ժամանակ:

Ոմանք կրնան մտածել, որ այս հատուածին մէջ Պօղոսը կը խօսի անհաւատներու դատաստանին մասին, այսինքն՝ Մեծ սպիտակ գահի ատեանին մասին, որուն ժամանակ անհաւատները, որոնք չեն ընդունած Յիսուս Քրիստոսի փրկարար շնորհքը, հաշիւ պիտի տան իրենց մեղքերուն համար: Խօսքը միանշանակ այդ մասին չէ, քանի որ Մեծ սպիտակ գահի ատեանի առջեւ ոչ ոք «գովեստ» պիտի ստանայ Աստուծմէ, ինչպէս որ Պօղոսը կը գրէ այս հատուածին մէջ:

Կարելոր է պահպանել այս խօսքերու համայօդուածը: Պօղոսը կը խօսի *տնտեսութեան* մասին, եւ կասկած չկայ, թէ որուն ան նկատի ունի: Ղատաստանի ժամանակ ի յայտ պիտի գան մեր «ամենախաւար գաղտնիքները» եւ «անձնական շարժառիթները» մեր պարգեւները տնօրինելու մէջ: Ասիկա լրջօրէն կը գրաւէ իմ ուշադրութիւնը:

Թոյլ տուէք պարզ բացատրել ասիկա իմ նախորդ պատմութեան օրինակով, երբ չհնազանդեցայ Տիրոջը այն բանին մէջ, ինչ պէտք է քարոզէի: Հաւանաբար, այդ հաւաքոյթին մասնակցող մարդիկ մինչեւ օրս հաւատացած են, որ ես հնազանդ եղած եմ Աստուծոյ, երբ քարոզած եմ իմ «թարմ» ուղերձը, սակայն ես անհնազանդ էի: Շատ հնարաւոր է, որ Ղատաստանի ժամանակ անոնք կ'իմանան իմ անհնազանդութեան մասին, որովհետեւ Յիսուսը կը յայտարարէ.

«Կու գայ ժամանակը, երբ այն ամէնը, ինչ ծածկուած է, կը յայտնուի, եւ ամէն գաղտնի բան կը գիտցուի բոլորին: Այն ամէնը, ինչ դուք ըսած էք խաւարի մէջ [մեր ծածուկ շարժառիթները եւ գաղտնիքները], կը լսուի լոյսի մէջ, եւ այն ամէնը, ինչ դուք շքնջացած էք փակ դռներու ետեւը, կ'ազդարարուի կտուրներէն՝ ի լուր բոլորին» (Ղուկաս 12.2,3, NLT, քառակուսի փակագիծերու բացատրութիւնը իմն է):

Շատ հնարաւոր է, որ Ղատաստանի գահին քով եւ կանչուիմ՝ ներողութիւն խնդրելու այդ համաժողովը կազմակերպող հովիւէն եւ միւսներէն, որոնք չստացան «Սատանայի խայծը» գիրքի ուղերձը այդ երեկոյ:

## Ի՞Նչ ԿԸ ՍՊԱՍՈՒԻ

Մենք հիմնաւորեցինք, թէ որքան կարելոր է հասկնալ տնտես ըլլալու դերը: Այժմ կարելորագոյն հարցունը հետեւեալն է. «Ի՞նչ կը սպասուի մեզմէ»: Ուրիշ ձեռով ըսելու համար, ի՞նչ արդիւնքներու Յիսուսը պիտի նայի Ղատաստանի ժամանակ, երբ քննէ, թէ ինչպէս տնօրինած ենք Իր կողմէն մեզի վստահուած պարգեւները: Կրնա՞նք արդէօք իմանալ այդ մասին: Անշուշտ, քանի որ Յիսուսը յայտարարեց, որ մենք պիտի դատուինք «Ղատաստանի օրը այն ճշմարտութեամբ, որ Ան խօսած է» (Յովհաննէս 12.48, NLT):


Մենք կը սկսինք այս բացայայտող եւ ոգեշնչող ուսումնասիրութիւնը յաջորդ գլուխէն, որ այս գիրքի հիմնական ու գլխաւոր նպատակն է:

## ՄՏՈՐԵՑԷՔ

1. Այս գլուխը կարդալին առաջ դուք կը դիտարկէի՞ք ձեզ որպէս տնտես: Ինչու՝ այո, եւ ինչու՝ ոչ:
2. Այն պարզեւները, որոնք Աստուած տուած է ձեզի, ձեզի համար չեն. աստուծոյ ձեր միջոցով պէտք է տրուին այլ մարդոց: Ուրիշ ձեւով ըսելու համար, դուք կը կրէք այն, ինչ որ Աստուած կը ցանկայ, որ ստանան այլ մարդիկ: Հասկնալով ասիկա՝ ինչո՞ւ կարելոր է, որ հաւատարմօրէն տնտեսէք ձեր պարզեւները: Ի՞նչ կրնայ տեղի ունենալ, եթէ անտեսէք ձեր տնտեսութիւնը:
3. Որեւէ պահի մը դուք կրնաք որոշում կայացնել տնօրինել ձեր պարզեւները հետեւեալ երեք ձեւով. դուք կրնաք օգտագործել աստուծոյ՝ կառուցելու համար Աստուծոյ Թագաւորութիւնը: Դուք կրնաք օգտագործել աստուծոյ՝ կառուցելու համար ձեր կեանքը: Դուք կրնաք անտեսել աստուծոյ, այսինքն՝ բոլորովին չօգտագործել: Ինչպէ՞ս կ'օգտագործէք ձեր պարզեւները: Ի՞նչ փոփոխութիւններ պէտք է ընէք Աստուծոյ ձեզի տրուած պարզեւները տնօրինելու մէջ:







*«Թող ամէն մարդ այսպէս համարէ մեզ՝ ինչպէս  
Քրիստոսի պաշտօնեաներ եւ Աստուծոյ  
խորհուրդներու տնտեսներ: Արդ տնտեսներու  
մէջ այն կը պահանջուի, որ մէկը հաւատարիմ  
գտնուի»:*

– Ա. Կորնթացիս 4.1,2

## ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԻՒՆ

**Պ**օղոս առաքեալը իրեն եւ Ապօղոսին կ'անուանէ Յիսուս Քրիստոսի *ծառաներ* եւ իրենց վստահուած պարզեւներու *տնտեսներ*: Նախորդ գլուխին մէջ իմացանք, որ տնտես ըլլալը չի վերաբերիր միայն այս երկու մեծ սուրբերուն, եւ ո՛չ ալ միայն եկեղեցական առաջնորդներուն, այլ իւրաքանչիւր հաւատացեալի: Մենք նոյնպէս Յիսուս Քրիստոսի ծառաներն ենք, եւ գլխաւոր միջոցը, որուն միջոցով կը կատարենք այս դերը, մեզի վստահուած պարզեւներու բարի տնտեսներ ըլլալն է:

Այժմ ուշադրութիւն դարձնենք, թէ ինչ կը պահանջուի տնտեսէն: Վերոնշեալ խօսքին մէջ ընդգծուած է ընդամէնը մէկ յատկանիշ՝ *հաւատարմութիւն*: Շարունակելի առաջ, մտորենք այն մասին, որ հոս թուարկուած չէ երկու, երեք կամ աւելի յատկանիշներ: Պօղոսը կրնար ըսել, որ տնտեսէն կը պահանջուի, որ ան ուրախութիւն ցուցաբերէ, զօրաւոր ըլլայ, վարպետօրէն տիրապետէ Աստուածաշունչին, գթասիրտ ըլլայ կամ ունենայ որեւէ այլ Աստուածահաճոյ յատկանիշ: Անշուշտ, ես նկատի չունիմ, որ բոլոր այս յատկանիշները կարելոր չեն: Այնուամենայնիւ, կը շեշտեմ, որ թուարկուած է ընդամէնը մէկ *պահանջուող* յատկանիշ: Այնպէս որ, անչափ կարելոր է կեդրոնանալ այս առաքինութեան վրայ, եթէ մեր նպատակն է ըլլալ բարի տնտեսներ եւ օր մը լսել մեր Տիրոջմէն «Կեցցե՛ս» բառը:

## ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Ես արտօնութիւն ունեցած եմ քարոզելու աշխարհի տարածքին գտնուող առաջնորդական խումբերու (ոչ միայն ծառայողական խումբերու, թէեւ մեծ մասամբ քարոզած եմ նոյն ծառայողական խումբերուն), որոնց կարգին էին ընկերակցական, կառավարական, գործարար, կրթական եւ մարզական խումբեր: Քանի մը անգամ խնդրած եմ այդ խումբերու անդամներէն սահմանել *հաւատարմութիւնը*

մէկ բառով: Որպէս առաջնորդներ, անոնք սովորաբար պատրաստակամօրէն կը խօսէին: Գրեթէ ամէնուր նմանատիպ սահմանումներ լսելէն յետոյ ես որոշեցի կազմել ամենատարածուած պատասխաններու ցուցակը.

- կայուն
- հետեւողական
- յուսալի
- վստահելի
- անձնուէր
- նուիրուած
- անխարդախ
- արժանահաւատ
- ճշմարտացի
- վճռական
- հնազանդ

Եղած են այլ սահմանումներ, բայց այս բառերը ամէնէն յաճախ հանդիպողներն են: Աւելի կարելոր է այն, որ բոլոր այս պատասխանները համահունչ են բացատրական եւ հոմանիշներու բառարաններուն մէջ:

Այնուամենայնիւ, կայ կարելոր բառ մը, որ նոյնիսկ մէկ անգամ ես չեմ լսած որեւէ միջոցառման ժամանակ, եւ ատիկա «բազմապատկում» բառն է:

Դուք կրնաք անմիջապէս մտածել. *«Բազմապատկում»: Այս բառը հաւատարմութեան սահմանումը չէ»:* Դուք կրնաք նաեւ վիճարկել իմ լեզուական գիտելիքները, ինչպէս իմ անգլերէնի դպրոցական ուսուցիչները: Այնուամենայնիւ, ես կը վստահեցնեմ, որ մինչեւ այս գլուխի աւարտը դուք ոչ միայն կը համաձայնիք հետս, այլեւ, ամենայն հաւանականութեամբ, կը համարէք այս բառը հաւատարմութեան ամենակարելոր սահմանումը:

## ՏԱՂԱՆԴՆԵՐՈՒ ԱՌԱԿԸ

Բազմապատկման գաղափարը ներկայացնելու համար կարդանք Յիսուսի առակը տաղանդներու մասին: Կը խնդրեմ, որ ուշադրութեամբ կարդաք այս առակը, նոյնիսկ եթէ նախկինին բազմաթիւ անգամներ կարդացած էք:

«Երկինքի Թագաւորութիւնը կարելի է նկարագրել երկար ճանապարհ գացող մարդու մը պատմութեամբ: Ան կանչեց իր բոլոր ծառաները եւ իր դրամը ամբողջութեամբ վստահեցաւ անոնց իր բացակայութեան ընթացքին» (Մատթէոս 25.14, NLT):

Առաջինը՝ այս պատմութիւնը առակ է, այսինքն՝ այն խորհրդանշական է, ոչ թէ բառացի: Կը նշանակէ՝ մենք պէտք է մեկնաբանենք այն Աստուածաշնչեան գիտելիքի լոյսի ներքոյ կամ համաձայն Աստուծոյ Խօսքի ամբողջական խորհուրդի: Երկար ճանապարհ գացող մարդը կը խորհրդանշէ Յիսուսին: Տնտեսը կը խորհրդանշէ Անոր ծառաներէն իւրաքանչիւրին, այսինքն՝ ձեզի եւ ինձի:

Երկրորդը՝ ուշադրութիւն դարձուցէք, որ անոր ճանապարհը երկար է՝ հաստատուած երկու փաստով: Նախ, գրեթէ երկու հազար տարի անցած է, ինչ որ Յիսուսը պատասխանատուութիւն տուած է ձեզի, որ կառուցենք Իր Թագաւորութիւնը, որուն համար Ինքը մահացած է: Եւ ականյայտ է, որ Ան տակաւին չէ վերադարձած, բայց նոյնիսկ մինչեւ օրս, պատմականօրէն արդէն իսկ երկար ժամանակ անցած է:

Երրորդը՝ այս առակը եւս մէկ անգամ ցոյց կու տայ, որ տնտեսութիւնը չի մանրակառավարուիր: Այս առակին մէջ նկարագրուած մարդը կը հեռանար. ան պիտի չվերադառնար ամէն ամիս, որպէսզի ստուգէր իր տնտեսներու գործունէութիւնը: Համաձայն այս առակին, ան պիտի չստուգէր անոնց աշխատանքը վերադառնալէն առաջ:

Շարունակենք Անոր պատմութիւնը.

«Ան տուաւ հինգ պարկ արծաթ մէկուն, երկու պարկ արծաթ միւսին եւ մէկ պարկ արծաթ վերջինին՝ բաժնելով այն անոնց կարողութիւններու չափով: Ատոնցմէ յետոյ ան ճանապարհ ինկաւ» (Մատթէոս 25.15, NLT):

Այս պատմութեան մէջ անոնց դրամ վստահուեցաւ: Աստուածաշունչի թարգմանութիւններու մեծ մասը կ'օգտագործէ «տաղանդ» բառը, որ յունարէն «թա՛լանթոն» բառի ամենաճշգրիտ թարգմանութիւնն է: Տաղանդը կշիռի չափ է, որ հիմնականին կ'օգտագործուի ոսկիի եւ արծաթի համար: Մէկ տաղանդը մօտաւորապէս հաւասար է 34 քիլոկրամի: Մասնագէտներու մեծ մասը կը գնահատէ մէկ տաղանդ արծաթը 18.000 ԱՄՆ տոլարով (այս արժէքը կրնայ տատանիլ, բայց ոչ էականօրէն): Բոլոր մասնագէտները

համաձայն են այն մտքին, որ ըստ Նոր կտակարանի՝ տաղանդը գումարի մեծ չափ է: Երեսունչորս քիլոկրամ արծաթը մանրադրամ չէ:

Ըստ իմ ներկայ պատկերացման, չեմ կարծեր, որ այս առակի մեկնութեան մէջ կարելի է գումարի ճշգրիտ չափը: Այնուամենայնիւ, մենք կրնանք վստահաբար եզրակացնել, որ մէկ տաղանդը կը խորհրդանշէր զգալի պատասխանատուութիւն:

Չեմ կարծեր, որ Յիսուսը կը խօսէր դրամի մասին, թէեւ սկզբունքնօրէն ասիկա կարելի է վերագրել դրամին: Իր առակներուն մէջ Յիսուսը հազուադէպ կ'օգտագործէ որպէս օրինակ ճիշդ այն, ինչ նկատի ունի: Տորենը կը խորհրդանշէ Աստուածապաշտ մարդոց, որոնները՝ չար մարդոց, սերմերը՝ խօսքերը, փուշերը՝ այս կեանքի հոգերը, հունձքը՝ այս աշխարհի աւարտը, հնձուորները՝ հրեշտակները, եւ այսպէս շարունակ: Ընդհանուր առմամբ դիտարկելով Նոր կտակարանը, գրեթէ ակնյայտ կը դառնայ, որ տաղանդները կը խորհրդանշեն *խարիզման* կամ մեզի վստահուած պարգեւները:

Այս պատմութեան եւս մէկ կարելի փաստերէն այն է, որ բոլոր ծառաները չստացան նոյն չափը: Քիչ մը ուշ աւելի մանրամասն կը խօսինք այս մասին, սակայն յատկապէս այս պատճառով է, որ ես արդէն քանի մը անգամ «պարգեւներ» անուանած եմ այն, ինչ որ վստահուած է մեզի: Ոմանք կը ստանան մէկ պարգեւ, միւսները՝ երկու, իսկ ուրիշները՝ աւելին:

Տարբեր չափերը նոյնպէս կրնան խորհրդանշել մեր պարգեւներու ազդեցութեան չափը: Եկէք ազնիւ ըլլանք. կան մարդիկ, որոնց պարգեւները աւելի ազդեցիկ են, քան միւսներունը: Շատերն ունին երգելու պարգեւ, որ կ'ոգեշնչէ անոնց լսողներուն: Բայց բոլոր երգիչները չունին տաղանդի նոյն մակարդակը, ինչ Սելին Տիոնը եւ Անտրիա Պոչելլին: Ճիշդ կ'ըլլայ ըսել, որ իւրաքանչիւր տաղանդ կը ներկայացնէ որոշակի պարգեւ, ինչպէս նաեւ այդ պարգեւի որոշակի չափ: Եկէք շարունակենք.

«Այն ծառան, որ հինգ պարկ արծաթ ստացաւ, սկսաւ ներդնել այդ դրամը եւ շահեցաւ եւս հինգը: Այն ծառան, որ երկու պարկ արծաթ ստացաւ, նոյնպէս գործի անցաւ եւ շահեցաւ եւս երկուքը: Բայց այն ծառան, որ մէկ պարկ արծաթ ստացաւ, փոս փորեց հողի մէջ եւ պահեց իր տիրոջ դրամը» (Մատթէոս 25.16-18, NLT):

Թոյլ տուէք անհատականացնել այս պատմութիւնը՝ տալով անուններ մեր ծառաներուն: Առաջին ծառան անուանենք Էլիսըն,

Երկրորդը՝ Ռոպերթ, իսկ երրորդը՝ Լերի: Էլիսընը սկսաւ հինգով եւ *բազմապատկեց* այն, ինչ որ տրուած էր իրեն՝ վերջաւորութեան ունենալով տասը: Ռոպերթը *բազմապատկեց* իր երկուքը եւ վերջաւորութեան ունեցաւ չորսը: Լերին չբազմապատկեց այն, ինչ որ վստահուած էր իրեն, այլ *պահպանեց* ատիկա: Եկէք պատկերացնենք անոնց արդիւնքները:

Էլիսըն.  $5 \times 2 = 10$

Ռոպերթ.  $2 \times 2 = 4$

Լերի.  $1 = 1$

Շարունակելով այս պատմութիւնը՝ ես կ'անուանեմ այս ծառաներուն իմ կողմէն տրուած անուններով:

## ԴԱՏԱՍՏԱՆԸ

Կրկին, անչափ կարելոր է նշել, որ Յիսուսն այս առակին մէջ կը շեշտադրէ *«Երկար»* բառը: Այս պատմութիւնը կը սկսի երկարատեւ ճանապարհորդութեան նկարագրութեամբ, եւ կրկին, Ան կ'ըսէ. *«Երկար ժամանակ* յետոյ անոնց տէրը վերադարձաւ իր ճանապարհորդութենէն եւ կանչեց անոնց, որպէսզի *հաշիւ տային*, թէ ինչպէս օգտագործած էին իր դրամը» (Մատթէոս 25.19, NLT): Տնտեսէն պահանջուող հաշիւը կը խորհրդանշէ այն դատաստանը, որուն ենթակայ պիտի ըլլայ մեզմէ իւրաքանչիւրը՝ այն բանին համար, թէ ինչպէս օգտագործած ենք մեզի վստահուած պարգեւները: Նախ՝ կարդանք Էլիսընի դատաստանի մասին.

*«Էլիսընը, որուն ան վստահած էր հինգ պարկ արծաթը, առջեւ եկաւ եւս հինգով եւ ըսաւ. «Տէ՛ր, դուն տուիր ինծի հինգ պարկ արծաթ՝ ներդնելու համար, եւ ես շահեցայ եւս հինգը»»:*

Լսեցէ՛ք անոր տիրոջ դատավճիռը.

*«Տէրը սկսաւ գովել անոր. «Կեցցե՛ս, իմ բարի եւ հաւատարիմ ծառայ: Դուն հաւատարիմ եղար այս փոքր գումարը տնօրինելու մէջ. այնպէս որ, այժմ ես աւելի մեծ բաներ պիտի վստահիմ քեզի: Եկո՛ւր տօնենք միասին»» (Մատթէոս 25.20,21, NLT):*

Մենք պէտք չէ կորսնցնենք այն խիստ կարելոր պնդումը, որ ըրաւ տնտեսներու տէրը. *«Դուն հաւատարիմ եղար»:* Դուք կրնաք ներկայացնել անոր պատասխանը՝ ինչպէս ուզէք, բայց այն

չունի այլ մեկնություն. Յիսուսն ուղղակիորեն կը վերագրե անոր *հաւատարմութիւնը բազմապատկելուն*: Կրկին ուշադրութեամբ կարդացէք տնտեսներու տիրոջ խօսքերը. ան չանդրադարձաւ էլիսընդի որեւէ արարքին: Ան նոյնպէս չըսաւ, որ էլիսընը կայուն, յուսալի, անձնուէր կամ ճշմարտացի էր, եւ չօգտագործեց «հաւատարիմ» բառի այլ մէկբառանի սահմանի մէջ: Սխալ մի՛ հասկնաք ինձի. այս ամէնը հաւատարմութիւնը նկարագրող հրաշալի յատկանիշներ են, բայց առոնք չեն նշուիր եւ չեն շեշտադրուիր հոս: Բացի այդ՝ ան չմատնանշեց անոր տնտեսութեան հետ առնչուող որեւէ այլ առաքինութիւն, գործողութիւն կամ արդիւնք, այլ միայն ըսաւ, որ էլիսընը բազմապատկած էր: Այսպիսով, ան ուղղակիորեն կապակցեց *հաւատարմութիւնը բազմապատկման* հետ:

Նոյնը կը վերաբերի Ռոպերթին: Ուշադրութեամբ կարդացէք անոր դատաստանի մասին.

*«Ռոպերթը, որ ստացած էր երկու պարկ արծաթը, առջեւ եկաւ եւ ըսաւ. «Տէ՛ր, Դուն տուիր ինձի երկու պարկ արծաթ՝ ներդնելու համար, եւ ես շահած եմ եւս երկու հատ»»:*

Կրկին, լսեցէք անոր տիրոջ նոյն դատավճիռը.

*«Տէրը ըսաւ. «Կեցցե՛ս, իմ բարի եւ հաւատարիմ ծառայ: Դուն հաւատարիմ եղար այս փոքր գումարը տնօրինելու մէջ. այնպէս որ, այժմ ես աւելի մեծ բաներ պիտի վստահիմ քեզի: Եկ՛ու տօնենք միասին»» (Մատթէոս 25.22,23, NLT):*

Եւս մէկ անգամ, Յիսուսն ուղղակիորեն կը նոյնացնէ անոր *հաւատարմութիւնը բազմապատկելու հետ*: Հոս ուրիշ ոչինչ նշուած է՝ ոչ մէկ գործողութիւն, առաքինութիւն կամ արդիւնք: Յիսուսը չի ցանկար, որ տնտեսներու տիրոջ շեշտադրումը թուլանայ: Կարելի է ընել միայն մէկ եզրակացութիւն. Ռոպերթը բազմապատկեց այն, ինչ որ վստահուած էր իրեն, եւ ատիկա հաւատարմութիւն համարուեցաւ:

Նոյնպէս, Ռոպերթը ստացաւ ճիշդ նոյն գովեստը, ինչ էլիսընը՝ բառ առ բառ: Ասիկա ցոյց կու տայ, որ Դատաստանի օրը մեր բազմապատկումը պիտի գնահատուի ըստ մեր կատարած աշխատանքին: Յիսուսը հաւասարապէս գոհ պիտի ըլլայ մեզմէ՝ անկախ մեր պարգեւներու թիւէն եւ մեծութենէն: Կարելոր է ըլլալու մէկ բան. արդէս՞ք մենք բազմապատկած ենք այն, ինչ ստացած ենք:

Որպէս օրինակ, որեւէ տնային տնտեսուհի, որ բազմապատկած



է իր արդիւնաւէտութիւնը, պիտի ստանայ նոյն գովեստը, ինչ ունէ գործարար, որ բազմապատկած է իր գործը եւ Աստուծոյ Թագաւորութեան համար եղող նուիրատուութիւնները:

Այժմ ուղղենք մեր ուշադրութիւնը Լերիին.

«Ատորմէ յետոյ եկաւ *Լերին*՝ արծաթի մէկ պարկով, եւ ըսաւ. «Տէ՛ր, ես գիտէի, որ դուն խստասիրտ մարդ ես. դուն կը հնծես այն բերքը, որ չես ցանած, եւ կը հաւաքես այն բերքը, որ չես աճեցուցած: Ես վախցայ, որ պիտի կորսնցնէի քու դրամը, եւ պահեցի այն հողի մէջ: Ահա քու դրամը, ես կը վերադարձնեմ այն»» (Մատթէոս 25.24,25, NLT):

Լերիի դատաստանին մասին խօսելէն առաջ, մատնանշենք որոշ կարեւոր փաստեր: Լերին չբազմապատկեց այն, ինչ տրուած էր իրեն. ան պահպանեց իրեն վստահուած տաղանդը: Նոյնպէս, ուշադրութիւն դարձուցէք, թէ ինչու ան չըրաւ ատիկա: Առաջինը՝ ան չէր գիտեր իր տիրոջ բնաւորութիւնը եւ սխալմամբ կը մտածէր, որ իր տէրը խստասիրտ մարդ էր: Տարիներ շարունակ, ծառայելով աշխարհի տարբեր մասերը ապրող եւ հասարակութեան տարբեր խաւերու ներկայացուցիչներ հանդիսացող մարդոց, նկատած եմ, որ պտղաբեր ըլլալու գլխաւոր խոչընդոտը՝ Աստուծոյ բնաւորութիւնը չճանչնալն է (աւելի մանրամասն պիտի խօսիմ այս մասին հետագայ գլուխներէն մէկուն մէջ):

Երբ մենք սխալ պատկերացում ունինք Աստուծոյ մասին, յաճախ մեր մէջ կը յառաջանայ այն, ինչ որ կը խոչընդոտէ բազմապատկումը՝ *վախը*: Վախը, ամէկոտութիւնը կամ երկչոտութիւնը անգործունեայ կը դարձնեն Աստուծոյ պարգեւները մեր կեանքին մէջ: Ասիկա այնքան կարեւոր է, որ անկարելի է չափէն շատ չչեշտադրել: Ես անձամբ գիտեմ այս մասին, քանի որ տարիներ շարունակ կրած եմ վախի ազդեցութիւնը (այս մասին նոյնպէս աւելի մանրամասն պիտի խօսիմ յաջորդ գլուխներէն մէկուն մէջ):

Իսկ հիմա տեսնենք Լերիի դատավճիռը.

«Բայց տէրը պատասխանեց. «Չա՛ր եւ ծո՛յլ ծառայ»» (Մատթէոս 25.26, NLT):

Ինչպիսի՛ խիստ պատասխան: Շարունակելէ առաջ ուսումնասիրենք այս պնդումը: Յիշեցէ՛ք՝ երեքն ալ *ծառաներ* էին, ոչ միայն էլիսընը եւ Ռոպերթը, այլեւ՝ Լերին. անոնք *կողմնակի մարդիկ* չէին: Եւ անոնց աշխատանքը գնահատողը անոնց *տէրն* էր: Լերին չի

լսեր «Կեցցե՛ս, բարի եւ հաւատարիմ ծառայ» բառերը, ինչպէս միւս երկուքը: Փոխարէնը, ան կը լսէ. «Չա՛ր եւ ծո՛յլ ծառայ»: Անկասկած, ասիկա խիստ եւ ուշագրաւ արտայայտութիւն է: Այս առակին մէջ Յիսուսը չի խօսիր փրկութեան մասին. Ան կը խօսի այն դատաստանին մասին, որուն մէջ մենք հաշիւ պիտի տանք մեր պարգեւները տնօրինելու համար. կա՛մ պիտի վարձատրուինք մեր աշխատանքի համար, կա՛մ վնաս պիտի կրենք:

Ուշադրութեամբ դիտարկենք տնտեսներու տիրոջ խիստ բառերը: Մենք կը սկսինք աւելի թեթեւ բառէն: Յունարէնի մէջ «ծոյլ» բառը «*օքնէրո՛ս*»-ն է, որուն սահմանումն է «ծգձգել, դանդաղաշարժ, դանդաղկոտ, անփութաջան, ծոյլ»: Եւս մէկ բառարան կը սահմանէ այս բառը որպէս «խուսափիլ կամ վարանիլ որեւէ արժանի գործի մասնակցելէն՝ հաւանաբար, ջանասիրութեան պակասի պատճառով»:

Իմ ընկեր Ռիք Ռեննըրը, որ յունարէնի մասնագէտ է, կ'ըսէ հետեւեալը «*օքնէրո՛ս*»-ի մասին. «Այն կը կրէ գաղափար այնպիսի անձնաւորութեան մասին, որ անգործ, անաշխուժ, մելամաղձոտ, անհաղորդ, անտարբեր եւ գաղջ վերաբերմունք ունի կեանքի նկատմամբ»: Այս երեք աղբիւրներու շնորհիւ, այս յունարէն բառի սահմանումը կ'ընդլայնէ մեր մտահորիզոնը եւ աւելի պարզ պատկերացում կու տայ մեզի:

Եթէ դուք վախկոտ էք, կը վարանիք կամ զերծ կը մնաք այնպիսի գործէն, որ պէտք է ըլլայ եւ կրնայ ըլլալ: Եթէ ջանասէր չէք, դուք չէք ունենար ձեր առաջադրանքը աւարտին հասցնելու ձգտում: Եթէ դուք անտարբեր եւ անհաղորդ էք, նոյնիսկ չէք մտահոգուիր այն աստիճան, որ սկսիք ինչ որ բան ընել: Այս յունարէն բառը կ'ընդգրկէ բոլոր այս իմաստները, սակայն երրորդ ծառան խոստովանեցաւ. «Ես վախցայ»: Անոր կեանքին մէջ կրնային դրսեւորուիլ նաեւ ծուլութեան միւս կողմերը, սակայն գլխաւոր գործօնը անոր պարագային վարանիլն էր՝ վախի պատճառով:

Դուք երբեք զգացա՞ծ էք ինչ որ բան ընելու մղում, որ պարզապէս չէք կրցած փարատել ձեզմէ, յատկապէս՝ աղօթքի մէջ, բայց չափազանց երկար ժամանակ ոչինչ ձեռնարկած էք՝ ձախողելու վախի պատճառով, իսկ յետոյ տեսած էք, որ մէկ ուրիշ մարդ կ'ընէ ատիկա: Դուք մտածած էք. «Ես ստացած էի այդ գաղափարը, եւ ես պէտք է ընէի ատիկա»: Ահա թէ ինչ կ'ըսէ Յիսուսը այդ ծառայի մասին: Ան կը վարանի ու կը վարանէր, ոչ թէ մէկ կամ երկու անգամ, այլ՝ իր տնտեսութեան ամբողջ ընթացքին: Մէկ-երկու անգամ վարանիլը ընդունելի է, քանի որ սովորաբար մենք կը հասունանանք նման

վիճակէն՝ յաղթահարելով այն: Բայց եթէ շարունակենք վարանիլ երկար ժամանակ, աստիկա սովորութիւն կը դառնայ, եւ մենք բոլորովին կը դադրինք գործել՝ անպտուղ տնտեսներ դառնալով:

Երբ Տէրը առաջին անգամ խնդրեց ինձմէ գրել, ես տասը ամիս կը վարանէի: Կը վախճանայի գրելէ: Ես շարունակ ձախողած էի դպրոցը: Համալսարանին մէջ իմ դասընկերներէն մէկը քննադատած էր գրելուս կարողութիւնը բոլորին առջեւ: Առաջադրանքի մը ընթացքին մենք պէտք է կարդայինք մէկս միւսի գրաւոր աշխատանքները, եւ ան ցուցադրաբար իր անհաւանութիւնը յայտնեց մեր փրոֆէսորին իմ աշխատանքի մասին: Ես միակ ուսանողն էի, որ քննադատութեան արժանացաւ այլ ուսանողի կողմէն:

Իմ գրելու վախը ամուր հիմքեր ունէր. սարսափելի արդիւնքներ չափանիշային եւ Ամերիկեան համալսարանական թեսթերէն, բացասական արձագանգներ բազմաթիւ ուսուցիչներէն, ցած գնահատականներ եւ քննադատող դասընկերներ. անցեալս իմ կողմէն չէր, այլ՝ դէմ: Այդ ամէնը միայն կը հաստատէր իմ կասկածները: Գիրք գրելը շատ ժամանակ կը պահանջէր, իսկ ժամանակը վճռորոշ էր: Այն կը սահմանափակէր իմ միւս գործերը, որոնց նպատակը մեր երիտասարդ ծառայութիւնը մեծցնելն էր: Ես պէտք է մէկ կողմ դնէի այդ ճնշող վախերն ու մտահոգութիւնները, որպէսզի հնազանդէի Անոր ցուցման:

Ի՞նչ պիտի պատահէր, եթէ ես չափէն երկար վարանէի եւ չհնազանդէի: Ատոր հետեւեանքը պիտի ըլլար ճիշդ այն, ինչ Աստուած խօսած էր այն երկու կանանց միջոցով, որոնց ես աւելի կանուխ յիշատակեցի: Ան պիտի տար այդ տաղանդը մէկ ուրիշ անձնաւորութեան՝ «Ելիսընի» մը, որ կը կատարէր այդ առաքելութիւնը: Ան պիտի ստանար իմ առաջադրանքը: Իսկ ո՞ր պիտի ըլլայի ես այսօր: Հնարաւո՞ր է, որ իմ կեանքի աւարտին ես «ծոյլ» կոչուիի Դատաստանի գահին առջեւ:

Ես չէի հասկնար, որ իմ կոչումը պահուած էր գրելու մէջ: Եթէ 30 տարեկանէս առաջ դուք ըսէիք ինձի. «Ճո՛ն, Աստուած կ'ուղարկէ քեզի դէպի ազգերը՝ քու գիրքերու միջոցով», ես այնպէ՛ս կը ծիծաղէի ձեր վրայ, որ դուք ստիպուած կ'ըլլայիք հեռանալ: Ես կ'ըսէի քեզի՝ դուն խելագարուած ես: Ես նոյնիսկ չեմ կրնար երեք էջանոց աշխատանք գրել: Բայց այսօր իմ գիրքերը հանրայայտ են Ամերիկայի մէջ եւ աշխարհի տարածքին. ատոնք թարգմանուած են աւելի քան 100 լեզուներու եւ տպագրուած են քանի մը տասնեակ միլիոն օրինակով: Ի՞նչ պիտի ըլլար, եթէ ես չհնազանդէի: Ի՞նչ պիտի ըլլար, եթէ ես թոյլ տայի, որ վախը ետ պահէր ինձի: Մարմինովս սարսուռ կ'անցնի, երբ

կը մտածեմ, թէ որքա՛ն բան պիտի կորսնցնէի:

Այժմ խօսիմք աւելի ծանր բառի մասին, որ տէրը ըսաւ երրորդ ծառային: «Չար» բառը կրնայ չափազանց խիստ թուիլ, բայց Յիսուսը երբեք անփութօրէն չ'օգտագործեր բառերը: Յունարէնի մէջ «չար» բառը «*փոնտրո՛ւ*»-ն է, որուն սահմանումն է «ունենալ լուրջ թերութիւն եւ, որպէս հետեւանք, անպէտք դառնալ»:

Այս սահմանումը կը համապատասխանէ այն բանին, թէ ինչպէս Լերին տնօրինած էր իր պարգելը: Ասիկա նոյնն է, ինչ Պօղոսի «վա՛յ ինծի» խօսքերը, եթէ ան անհաւատարիմ ըլլար իր կեանքի պարգելին, որ Աստուած տուած էր իրեն: Լերիի թիւր կարծիքը իր տիրոջ բնաւորութեան մասին լուրջ թերութիւն էր, որուն պատճառով անոր մէջ վախ յառաջացաւ: Անիկա անպէտք դարձաւ իրեն վստահուած պարգելը գործածելու համար: Այս պնդումները շատ խիստ են. այնուամենայնիւ, եթէ համեմատէք Պօղոսի խօսքերը՝ իր պարգելը չօգտագործելու հաւանականութեան մասին, եւ Լերիի վարքը, ատոնք կը համապատասխանեն:

Թոյլ տուէք յստակ նշել, որ ասիկա չի վերաբերիր մեր փրկութեան, այլ այն բանին, թէ ինչպէս մենք կը տնօրինենք մեզի վստահուած պարգելները: Աստուծոյ կարծիքը հետեւեալն է.

*Բազմապատկողները բարի եւ հաւատարիմ են:  
Պարզապէս պահպանողները լուրջ թերութիւն ունին,  
անպէտք են եւ ծոյլ են:*

Հնարաւոր է, որ մեր կարծիքը հաւատարմութեան մասին լիարժէք չէ: Մտածեցէ՛ք հետեւեալ օրինակի մասին: Պատկերացուցէք գործարար մը, որ կ'ապրի ընդլայնող տնտեսութիւն ունեցող շրջանի մէջ: Անոր գործը՝ պզտիկ խանութ մը, որ ժառանգած է իր հօրմէն, եկամտաբեր է, սակայն չ'աճիր: Ան ունեցած է հնարաւորութիւններ իր խանութի նոր մասնաճիւղերը բանալու քաղաքի տարբեր մասերը, սակայն, չնայած իր ձեռնարկատիրական պարգելին, որոշած էր «յարմարաւէտ կեանք» վարել:

Այժմ կը դիտարկեմ այս օրինակը մեր առակի լոյսի ներքոյ: Համեմատելով այն Լերիի դատաստանի հետ՝ երկու կարեւոր հարցում հարցնենք: Կարելի՞ է ըսել, որ այս գործարարը պէտք է օգտագործէր իր պարգելը, որպէսզի նոր խանութներ բանար եւ մուտք գործէր այլ շուկաներ՝ Աստուծոյ Թագաւորութիւնը կառուցելու համար: Մի՞թէ անոր յարմարաւէտ ապրելու ցանկութիւնը նոյնը չէ, ինչ անհաւատարիմ ծառայի «պահպանելու» դիրքորոշումը:

Արդեօ՞ք մենք օգտագործած ենք հաւատարմութեան նոյն չափանիշները, որոնք կ'օգտագործէ Յիսուսը: Թէեւ այդ գործարարը ապահով կեանք ունէր, մենք պէտք է հարցնենք հետեւեալ ամփոփիչ հարցումը. «Ան կը բազմապատկե՞՞, թէ՞ կը պահպանէ իր պարգէւները»: Եկէք անկեղծ ըլլանք մեր գնահատման մէջ: Արդեօ՞ք մենք կը դիտարկենք հաւատարմութիւնը միայն յուսալիութեան տեսանկիւնէն, բայց ոչ՝ վերարտադրման, կայունութեան տեսանկիւնէն, բայց ոչ՝ ընդլայնման, եւ հետեւողականութեան տեսանկիւնէն, բայց ոչ՝ կրկնապատկման: Արդեօ՞ք մենք անտեսած ենք հաւատարիմ ըլլալու ամբողջական իմաստը՝ բազմապատկել այն պարգէւները, որոնք ստացած ենք:

Երբ Աստուած ստեղծեց մարդուն այս երկրի վրայ՝ որպէս տղամարդ եւ կին, Անոր առաջին պատուիրանը հետեւեալն էր. «Աձեցէ՛ք եւ շատցէ՛ք» (Ծննդոց 1.28): Անշուշտ, Ան նկատի ունէր, որ մենք երեխաներ ունենայինք եւ բնակեցնէինք ամբողջ երկիրը: Բայց նոյնպէս եւ աւելի լայն առումով, այս պատուիրանը կը նշանակէ. *«Մենք պէտք է բազմապատկած վերադարձնենք Աստուծոյ այն ամէնը, ինչ որ Ան կը յանձնէ մեր խնամքին»*: Մենք պէտք է «բազմանանք»՝ բազմապատկման միջոցով: Տաղանդներու առակին մէջ Յիսուսը յատկապէս կը վերագրէ Ծննդոց գիրքի այս սկզբնական պատուէրը մեզի վստահուած պարգէւներուն:

## ՈՉ ՁԵՐ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

Դուք անյարմարաւէ՞տ կը զգաք ձեզ: Թերեւս՝ այո, բայց յիշեցէ՛ք՝ ձեզի պէտք է միայն Աստուծոյ շնորհքը: Ձեզմէ չի պահանջուիր գործել ձեր ուժերով, այլ՝ Աստուծոյ *խարիստով* կամ *խարիզմայով*: Ես չեմ գրած այս ուղերձը ձեզի յուսահատեցնելու համար, այլ արթնցնելու ձեր գիտակցութիւնը Աստուծմէ՝ ձեզի տրուած ներուժի համար եւ ցոյց տալու, թէ ինչպէս աւելցնէք ձեր հաւատքը Աստուծոյ շնորհքի եւ ձեզի տրուած պարգէւներու հանդէպ: Ես մտադիր չեմ դնել ձեր վրայ չափազանց ծանր բեռ, որ չէք կրնար բարձրացնել: Պօղոսը երեք անգամ աղաղակեց Աստուծոյ՝ իր բեռը թեթեւցնելու համար, բայց ահա թէ ինչ պատասխանեց Տէրը.

«Իմ շնորհքը այն ամէնն է, ինչ անհրաժեշտ է քեզի: Իմ զօրութիւնը լաւագոյնս կը գործէ տկարութեան մէջ»: Այնպէս որ, այժմ ես ուրախութեամբ կը պարծենամ իմ տկարութիւններով, որպէսզի Քրիստոսի զօրութիւնը գործէ ինձմով: Ահա թէ ինչու իմ տկարութիւնները *հաճելի են* ինձի» (Բ. Կորնթացիս 12.9,10, NLT):

Յունարէնի մէջ օգտագործուած «տկարութիւն» բառի իմաստներէն մէկը «սահմանափակումներն» են: Դուք եւ ես միակ մարդիկը չենք, որոնք երբեմն ծանրաբեռնուած կը զգան իրենց: Սահմանափակումներ կ'ունենանք բոլորս. նոյնիսկ Պօղոս առաքեալը սահմանափակումներ ունէր: Այս խօսքի անմիջական համայօդուածին մէջ ան կը խօսէր այն հակառակութեան, ընդդիմութեան եւ նոյնիսկ ֆիզիքական հալածանքներու մասին, որոնց ինքը կը բախէր ամէն քաղաքի մէջ (կարդացէ՛ք 11-րդ գլուխը): Այնուամենայնիւ, այս ճշմարտութիւնը նոյնպէս կը վերաբերի այն սահմանափակումներուն կամ անկարելի հանգամանքներուն, որոնց կը բախինք մենք, երբ կը թուի՝ մեր առաջադրանքը անկարելի է կատարել: Թէեւ մեր հանգամանքները, անկասկած, դիրին չեն, այս փաստը պէտք է դրդէ մեզի ա՛լ աւելի վճռականօրէն ապաւինելու Անոր զօրութեան: Փոխարէնը *լսելու* ձեր մտքին մէջ ճշացող սահմանափակումներու մասին, *դաւանեցէ՛ք* Աստուծոյ խոստումները: Թերեւս մենք չափէն շա՛տ կը լսենք մեր մտքերուն, այնինչ, ատոր փոխարէն, պէտք է անձնապէս խօսինք մեզի հետ:

Երեք անգամ Պօղոսը խնդրեց Աստուծոյ միջամտել, եւ ամէն անգամ Աստուած յիշեցուց Պօղոսին *խարիսի* մասին: Երրորդ յիշեցումէն յետոյ Պօղոսը հասկցաւ: Ան գիտակցեցաւ, որ իր ճնշումները պէտք է դրդէին իրեն ա՛լ աւելի հաւատալու Աստուծոյ շնորհքին եւ պարգւներուն, որոնք իր կեանքին մէջ էին: Ահա թէ ինչու անոր շեշտադրումը փոխուեցաւ: Ան դադրեցաւ ըսելէն. «Աստուած, վերցո՛ւր ասիկա», եւ սկսաւ ըսել. «Իմ սահմանափակումները *հաճելի* են ինձի»: Մի՞թէ ան իսկապէս օգտագործեց «հաճելի» բառը: Այո՛: Ան հասկցաւ հետեւեալը. որքան անկարելի կը թուէին իր առջեւ ծառայած մարտահրաւիրները, այնքան ազդեցիկ կերպով էր Աստուծոյ զօրութիւնը դրսեւորուելու իր կեանքին մէջ, *եթէ ինքը հաւատար*:

Կայ կարեւոր ճշմարտութիւն մը. *այն շնորհքը, որուն կարիքը մենք ունինք բազմապատկման համար, կարելի է ստանալ միայն հաւատքի միջոցով*: Պօղոսը կը գրէ. «Մենք մուտք ունինք *հաւատքով* այս շնորհքի մէջ» (Հռովմայեցիս 5.2, NKJV): Պատկերացուցէ՛ք ասիկա հետեւեալ կերպով. հաւատքը այն խողովակն է, որուն միջոցով այն շնորհքը, որ անհրաժեշտ է մեզի բազմապատկման համար, կը հասնի մեր սրտին: Երբ մենք կը լսենք այս ուղերձը, մեր հաւատքը կամ խողովակը պէտք է լայնանայ, ոչ թէ նեղնայ: Բայց մենք կ'որոշենք ատիկա: Գրուած է.

«Անոնց օգուտ չբերաւ աւետիքի քարոզութեան խօսքը, որովհետեւ չխառնուեցաւ հաւատքի հետ լսողներու մէջ: Բայց մենք՝ հաւատացեալներս, կը մտնենք այն հանգիստի մէջ» (Եբրայեցիս 4.2,3, NKJV):

Մի՛ կարդաք այս գիրքը՝ առանց օգուտ ստանալու. այն, ինչ կը կարդաք, խառնեցէ՛ք հաւատքի հետ: Աստուծմէ եկած նոյն խօսքը երկու տարբեր արդիւնք տուաւ Իսրայէլի զաւակներուն համար: Այն օգտակար եղաւ Մովսէսին, Յեսուին եւ Քաղեբին համար. անոնք զօրացան, քանի որ ընդունեցին այն: Բայց նոյն խօսքը անօգուտ եղաւ մնացած բոլոր իսրայէլցիներուն համար, քանի որ անոնք մերժեցին այն: Ահա եւ տարբերութիւնը հաւատքի եւ անհաւատութեան միջեւ:

Հաւատացէ՛ք, որ Աստուած սպառազինած է ձեզի, որպէսզի մեծապէս գերազանցէք ձեր կարողութիւնները: Ան չէ տուած ձեզի ուժ եւ զօրութիւն ստանալու այլ տարբերակ՝ Իր շնորհքին ապաւինելէն բացի: Երբ ապաւինիք Անոր շնորհքին, դուք մուտք կը գործէք ճշմարիտ հանգիստի մէջ. դուք կը դադրիք ձեր ջանքերուն ապաւինելէ եւ այլեւս չէք պայքարիր՝ արդիւնքներ ստանալու համար: Ի՞նչ կը նշանակէ այս հանգիստը: Այն կը նշանակէ համագործակցիլ Աստուծոյ կարողութեան հետ՝ ձեր առաքելութիւնը կատարելու համար: Երբ մուտք գործէք այս հանգիստին մէջ, Աստուած կ'առաջնորդէ ձեզ դէպի բազմապատկում:

Ասիկա այն պատճառներէն մէկն էր, որ Ղաւիթը կը կոչուէր «մարդ՝ Աստուծոյ սրտի համեմատ»: Ան կ'ապաւինէր Աստուծոյ զօրութեան, ոչ թէ իր ուժերուն: Ան շարունակ կը հռչակէր. «Տէրն է իմ կեանքի զօրութիւնը» (Սաղմոս 27.1): Իր կատարած բոլոր գործերուն մէջ կար մէկ ընդհանուր յայտարար. ան կ'ապաւինէր Աստուծոյ կարողութեան, որ կը գործէր իրեն մէջ եւ իր միջոցով: Ահա թէ ինչու Պօղոսը կը գրէ իր հոգեւոր որդի Տիմոթէոսին, որ կը պայքարէր վախի եւ երկչոտութեան հետ. «Արդ դուն, իմ որդեա՛կ, զօրացի՛ր այն շնորհքով, որ Քրիստոս Յիսուսին մէջ է» (Բ. Տիմոթէոս 2.1):

Ահա թէ ինչու այս գիրքի երկրորդ եւ երրորդ գլուխները նուիրեցի «խարիս» եւ «խարիզմա» հասկացութիւնները մեր մէջ ամուր հաստատելուն, մինչեւ քննարկելը Յիսուսի առակը տաղանդներու մասին: Միտքը այն մասին, որ մենք պէտք է կատարենք մեր տնտեսութիւնը մեր ուժերով, կրնայ ճնշող եւ վհատեցնող ըլլալ:

Կը խնդրեմ, երբեք մի՛ մոռնաք. ձեր կոչումը աւելին է, քան ձեր բնական կարողութիւնը: Թերեւս յատկապէս այս պատճառով Աստուածաշունչը կ'ըսէ.

«Արդարեւ, ձեր կոչումին մտիկ ըրէք, եղբայրներ՛ր, որ ոչ թէ շատ իմաստուններ մարմինի կողմէն, եւ ոչ թէ շատ զօրաւորներ, եւ ոչ թէ շատ ազնուականներ: Այլ Աստուած ընտրեց այս աշխարհի յիմարներուն, որ ամչցնէ իմաստուններուն, եւ Աստուած ընտրեց աշխարհի տկարներուն, որ ամչցնէ զօրաւորներուն: Եւ Աստուած ընտրեց աշխարհի անտոհմներուն եւ անարգուածներուն, եւ ոչինչներուն, որ բան մը եղողներուն ոչնչացնէ: Որպէսզի ոչ մէկ մարմին պարծենայ Անոր առջեւ» (Ա. Կորնթացիս 1.26-29):

Ինչո՞ւ այսպէս է: Ինչո՞ւ կանչուածներուն մէջ քիչ են իմաստունները, զօրաւորները եւ ազնուականները: Հնարաւոր է, որ բնականօրէն օժտուած մարդիկ հեշտօրէն «յաջողութեան կը հասնին» իրենց ուժերով: Իրականութեան մէջ, անոնք անմիտ են: Անոնք կը համեմատեն իրենց այլ մարդոց հետ եւ կը համարեն, որ յաղթած են, ինքզինքնին այն կոչման լոյսի ներքոյ տեսնելու փոխարէն, որ ստացած են իրենց Արարիչէն:

Պօղոսը ուրիշ էր: Թէեւ իր ժամանակակիցներու համեմատ ան իմաստուն եւ ազնուական էր՝ մինչեւ փրկուիլը, եկաւ պահ մը, երբ ան «աղբ» համարեց իր բոլոր բնական ունակութիւնները, որպէսզի ստանար Քրիստոսի զօրութիւնը: Ան այդպէս վարուող սակաւաթիւ մարդոցմէ մէկն էր. ան հասկցած էր, որ թէեւ բնականօրէն ինքը շատերէն աւելի իմաստուն էր, բայց անմիտ էր՝ Աստուծոյ իմաստութեան համեմատ (կարդացէ՛ք Փիլիպպեցիս 3.4-11):

**ՀԱՄԱՅՆԱՎԱՐԱԿԱՆ, ԹԷ՞ ԴՐԱՄԱՏԻՐԱԿԱՆ**

Շարունակենք ուսումնասիրել Յիսուսի առակը: Թերեւս այդպէս չթուի, բայց դուք պիտի տեսնէք, որ շարունակութիւնը աւելի ազդեցիկ կամ ցնցող է:

«Եւ ան հրամայեց. «Կերցուցէ՛ք դրամը այս ծառայէն եւ տուէ՛ք տասը պարկ արծաթ ունեցողին»» (Մատթէոս 25.28, NLT):

Սպասեցէ՛ք: Մենք ճի՞շդ կարդացինք: Փաստօրէն, ան պատուիրեց, որ այդ մէկ պարկ արծաթը (տաղանդը) առնուէր Լերիէն եւ տրուէր Էլիսընին: Կրկին պատկերացնենք անոնց արդիւնքները:

Էլիսըն.  $5 \times 2 = 10 + 1$  (Լերիէն) = 11  
 Լերի.  $1 - 1$  (Էլիսընին) = 0

Էլիսընը ունեցաւ տասնմէկ տաղանդ, իսկ Լերին՝ զերօ:



Առաւօտ մը, աղօթքի ժամանակ ես ցնցուեցայ այն բանէն, ինչ լսեցի իմ սրտին մէջ: Թող տուէք պատմել այդ մասին: Իրականութեան մէջ, որոշ ժամանակ էր՝ չէի մտածած տաղանդներու առակին մասին: Այդ առաւօտ լսեցի, թէ ինչպէս Աստուծոյ Հոգին ըսաւ. «Որդի՛ս, Ես աւելի դրամատիրական եմ, քան համայնավարական՝ Իմ մտածելակերպով»:

*Ի՞նչ:* Ես կասկածանքով վերաբերուեցայ Անոր խօսքերուն, բայց բաւականին երկար վարուած էի Աստուծոյ հետ՝ հասկնալու համար, թէ երբ Ան պիտի յայտնէ մեզի այն, ինչ մենք չենք գիտեր: Յաճախ աստիկա հակառակ կը թուի կրօնական կամ սովորական մտածելակերպին, իսկ երբեմն աստիկա նոյնիսկ անհեթեթ կը թուի: Այս անգամ, երբ լսեցի Անոր, աստիկա անհեթեթ թուեցաւ ինծի: Ես իմաստութիւն խնդրեցի, քանի որ ինծի կը թուէր, թէ գոնէ Աստուած աւելի շատ կը վարուէր ընկերակցական, համայնավարական ձեւով:

Այդ առաւօտ Ան առաջնորդեց ինծի դէպի այս առակը եւ ցոյց տուաւ, որ եթէ Իր մտածելակերպը համայնավարական ըլլար, այս առակը պիտի պատմուէր այլ կերպով: Պատմութիւնը պիտի սկսէր այսպէս. երեք ծառաներն ալ պիտի ստանային տաղանդներու նոյն քանակը.

Էլիսըն. 3

Ռոպերթ. 3

Լերի. 3

Էլիսընը եւ Ռոպերթը հաւատարիմ կ'ըլլային (կը բազմապատկէին), իսկ Լերին, անպէտք եւ ծոյլ ըլլալու պատճառով, պիտի վարուէր իրեն յատուկ կերպով: Արդիւնքը պիտի ըլլար հետեւեալը.

Էլիսըն.  $3 \times 2 = 6$

Ռոպերթ.  $3 \times 2 = 6$

Լերի.  $3 = 3$

Ենթադրական համայնավար, ընկերվար Աստուած պիտի ընէր հետեւեալը.

Էլիսըն.  $6 - 1 = 5$

Ռոպերթ.  $6 - 1 = 5$

Լերի.  $3 + 1$  (Էլիսընէն)

$+ 1$  (Ռոպերթէն)  $= 5$

Վերջաւորութեան բոլորը հինգ տաղանդ պիտի ունենային: Բայց

այդպես տեղի չունեցաւ: Աստուած վերցուց պարկ մը արծաթը Լերիէն եւ տուաւ տասը պարկ ունեցողին: Ինչո՞ւ Յիսուսը կը բացատրէ.

«Անոնց, որոնք արդիւնաւէտ կերպով կ'օգտագործեն *(կը բազմապատկեն)* այն, ինչ որ տրուած է իրենց, *պիտի տրուի աւելին*, եւ անոնք *առատութիւն* պիտի ունենան: Բայց անոնցմէ, որոնք ոչինչ կ'ընեն *(կը պահպանեն)*, կ'առնուի նոյնիսկ այն փոքրը, որ անոնք ունին» (Մատթէոս 25.29, NLT):

Եւ նկատի չունիմ, որ Աստուած դրամատէր է: Ո՛չ, ո՛չ մէկ պարագային: Պարզապէս այս մասնաւոր պարագային դրամատիրութիւնը աւելի համապատասխան է Անոր մտածելակերպին եւ գործելակերպին, քան համայնավարութիւնը, ընկերվարութիւնը: Մեր 21-րդ դարի երիտասարդներուն Ամերիկայի եւ այլ երկիրներու մէջ սերուած է ընկերվարական մտածելակերպ: Ընկերվարութիւնը Աստուածահաճոյ եւ օգտակար չէ. իրականութեան մէջ, այն ուղղակիօրէն կը հակառակի Աստուծոյ իմաստութեան: Այն հակաքրիստոսի հոգի է՝ պահուած համընդհանուր բարօրութեան դիմակի տակ, որ կը ցանկայ վարձատրել ծուլութիւնը եւ պատժել աշխատասիրութիւնը, յաջողութիւնը եւ առատութիւնը:

Աստուած կը վարձատրէ բազմապատկողները աւելիով, եւ Ան դէմ չէ, որ անոնք առատութիւն ունենան: Կրկին, Յիսուսը կ'ըսէ. «Անոնք *առատութիւն* պիտի ունենան»: Աստուած կը ցանկայ, որ մենք առատութիւն ունենանք, *եթէ սրտանց կը ձգտինք կառուցելու Իր Թագաւորութիւնը եւ օգտագործելու մեր առատութիւնը այլ մարդոց համար:*

Հաւանաբար, դուք լսած կ'ըլլաք հետեւեալ պնդումը. «Աստուած դէմ չէ *առատութեան*. Ան դէմ է, երբ *առատութիւնը կ'իշխէ մեր կեանքին մէջ*»: Այս պնդումը շատ ճիշդ է: Այն մարդիկ, որոնց սիրտը կը վառի Աստուծոյ ցանկութիւններով, գոհ չեն ըլլար՝ ունեցուածք կուտակելով: Անոնք գոհ կ'ըլլան, երբ վարուին Աստուծոյ հետ եւ օգտագործեն այն առատութիւնը, որ Ան կու տայ իրենց՝ Իր Թագաւորութիւնը կառուցելու համար: Անոնք կ'ընկալեն առատութիւնը ընդամէնը որպէս գործիք՝ մարդոց կեանքերը կառուցելու համար: Եւ, անկասկած, եթէ մենք իմաստուն ենք, չենք սիրահարուիր մեր գործիքներուն:

Պահ մը կանգ առնենք եւ շեշտադրենք կարեւոր ճշմարտութիւն մը. մենք պէտք է հոգանք աղքատներու մասին՝ այն մարդոց, որոնք անկարող են աշխատիլ, եւ անոնց, որոնց սկզբնական օգնութիւն պէտք է: Պօղոսը կը գրէ. «Սէրը կը զօրացնէ մեզի, որ կատարեալ դարձնենք

Օժեպալի օրէնքը՝ հոգալով մէկս միւսի նեղութիւններուն մասին: Եթէ դուք կը կարծէք, թէ չափազանց կարելոր էք, որ կռանաք՝ մէկ ուրիշին օգնելու համար, դուք կ'ապրիք խաբէութեան մէջ» (Պաղատացիս 6.2,3, TPT):

Երբ Առաջին եկեղեցւոյ առաջնորդները հանդիպեցան, անոնք պարզեցին, որ իրենց առաջադրանքները տարբեր էին, եւ նոյնիսկ անհամաձայնութիւններ ունեցան որոշ աննշան հարցերու մէջ: Այնուամենայնիւ, անոնք միանշանակ կերպով համաձայնեցան, որ պարտաւոր էին օգնել նեղութեան մէջ գտնուողներուն:

«Անոնք պարզապէս մէկ բան խնդրեցին ինձմէ՝ յիշել աղքատներուն եւ կարիքաւորներուն՝ ճիշդ այն բեռը, որ ես արդէն կը կրէի իմ սրտին մէջ» (Պաղատացիս 2.10, TPT):

Այնուամենայնիւ, կարելոր է որոշել՝ մարդը *կարիքաւոր* է, թէ՞ *ծոյլ* է: Համաձայն ընկերվարական մօտեցման, ծոյլերը եւ աղքատները պէտք է հաւասարապէս օգնութիւն ստանան: Եթէ մենք օգնութիւն տրամադրենք «ծոյլերուն», մենք միայն կ'աւելցնենք անոնց կախուածութիւնը մեզմէ: Մեր նպատակն է մշտապէս առաջնորդել մարդիկ դէպի Աստուծոյ իրենց տրուած պարգեւները, որպէսզի անոնք նոյնպէս կարենան բարգաւաճիլ եւ կառուցել Աստուծոյ Թագաւորութիւնը:

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒՄ

Ինչ որ է, կարելորդ այն է, որ մեզի վստահուած են պարգեւներ, եւ մենք պէտք է օգտագործենք ատոնք՝ բազմապատկելու համար: Եթէ դուք կը սիրէք Աստուծոյ, ջերմեռանդօրէն կը ցանկաք օգտագործել ձեր պարգեւները Անոր փառքի համար: Իմ զլխաւոր մտադրութիւնն է արթնցնել ձեր ներսի ցանկութիւնն ու ներուժը: Դուք ստեղծուած էք նպատակով՝ յատուկ նպատակի համար: Եւ դուք ունիք անհրաժեշտ ունակութիւններ, որպէսզի բազմապատկէք այն, ինչ որ տրուած է ձեզի՝ մեր Թագաւորի փառքին համար: Ասիկա ամենակարելոր եզրակացութիւնն է այս գլուխին:


Այժմ, հասկնալով տաղանդներու առակը, մենք պատրաստ ենք անցում կատարելու գործնական հարցումներուն: Ինչպէ՞ս կարելի է կիրառել այն: Ինչպէ՞ս այս սկզբունքները կը գործեն մեր առօրեայ կեանքին մէջ:

Մենք կը խօսինք այս մասին յաջորդ գլուխին մէջ:

## ՄՏՈՐԵՑԷՔ

1. Գոյութիւն ունի միայն մէկ յատկանիշ, որ յստակ կը նկարագրէ տնտեսին՝ հաւատարմութիւնը: Ի՞նչ պատկերացում ունէիք հաւատարմութեան մասին: Ինչպէ՞ս փոխուեցաւ ձեր պատկերացումը այս գլուխը կարդալէն յետոյ:
2. Յաւիտենական բազմապատկումը ձեռք չի ձգուիր մեր ուժերով: Այն Աստուծոյ շնորհիքի հետ համագործակցելու արդիւնք է: Արդեօ՞ք դուք կը փորձէք բազմապատկել ձեր պարգեւները ձեր ուժերով: Ի՞նչ կերպով կրնաք բազմապատկել աստուծոյ ոչ թէ պայքարի, այլ հանգիստի դիրքէն:
3. Աստուած դէմ չէ առատութեան. Ան դէմ է, երբ առատութիւնը կ'իշխէ մեր կեանքին մէջ: Ձեր կարծիքով, ինչո՞ւ Աստուած կը կարեւորէ, որ բազմապատկէք ձեր պարգեւները: Ի՞նչ կերպով ձեր պարգեւները բազմապատկելը կրնայ աւելի մեծ չափով պատուել Աստուծոյ եւ ազդեցութիւն ձգել այլ մարդոց կեանքերուն մէջ:





*«Ան, որ հաւատարմութեամբ եւ ազնուութեամբ  
կը տնօրինէ այն փոքրը, որ տրուած է իրեն,  
յառաջխաղացում պիտի ստանայ, եւ անոր պիտի  
վստահին աւելի մեծ պարտականութիւններ»:*

– Դուկաս 16.10, TPT

## ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒՄ

Համաձայն Յիսուսի խօսքերուն, եթէ մենք ազնուօրէն ապրինք, ըլլանք կայուն, յուսալի, վստահելի, առաքինի եւ աշխատասէր, եւ բազմապատկենք այն, ինչ որ ներկայիս կը տնտեսենք, մեզի վստահուած պարտականութիւնները պիտի աւելնան: Յստակ ըսելու համար, *երբ ազնուօրէն բազմապատկենք մեր ունեցածը, Աստուած պիտի վստահի մեզի աւելին:* Ան յառաջխաղացում պիտի տայ մեզի: Ասիկա Անոր Թագաւորութեան օրէնքներէն է:

Ստուգեցէ՛ք ձեր վերաբերմունքը: Դուք ունի՞ք բազմապատկող մտածելակերպ, թէ՞ ձեր մտածելակերպը աւելի շատ պահպանող է: Հնարաւո՞ր է, որ դուք կանգ առած էք այն բանէն յետոյ, երբ հասած էք յաջողութեան այնպիսի մակարդակի, որ կը համարէք աւելի բարձր, քան մարդոց մեծամասնութեան ձեռքբերումները, աւելի լաւ, քան ձեր ծնողներու կեանքը, կամ ալ կը համարէք բաւարար՝ յարմարաւէտ կեանք վարելու համար:

Անկեղծ եղէք ձեր գնահատման մէջ: Եթէ դուք եղած էք աւելի պահպանող, քան բազմապատկող, կայ հրաշալի լուր. դուք տակաւին կ'ապրիք այս աշխարհի մէջ եւ ժամանակ ունիք, որ փոխուիք, բազմապատկէք եւ աւելի շատ պարտականութիւններ ստանաք:

### ԵՐԿՈՒ ՏԱՐԲԵՐ ԱՐԴԻՒՆՔ

Նոյնիսկ մանկութեանս տարիներուն ինձի համար դժուար չէր պատկերացում կազմել այս երկու հակադրուող մտածելակերպերը՝ պահպանելու եւ բազմապատկելու մասին: Իմ երկու պապերը այս տարբեր մօտեցումներու օրինակներն էին ինձի համար: Անոնցմէ

մէկը թոշակի անցաւ 65 տարեկանին եւ սկսաւ նստակեաց կեանք վարել: Ամէն տարի ան կ'այցելէր մեզի երկու շաբաթով, եւ ամէն օր ես կը տեսնէի, որ ան գործնականօրէն ոչինչ կ'ընէր: Ան կը նստէր մեր տան ետեւի բակի մեծ կաղնիին տակ եւ ծխամորձ կը ծխէր: Նոյնը տեղի կ'ունենար, երբ մենք կ'այցելէինք անոր: Յաւօք, կեանքի վերջին տարիներուն ան կարծես կը գոյատեւէր՝ ապրելու փոխարէն:

Միւս պապս թոշակի անցաւ 62 տարեկանին եւ սկսաւ այն, ինչ որ կարելի է անուանել իր երկրորդ կեանքը: Արդէն 60-ն անց է, ան ընդունուեցաւ «Ռաթճըրզ համալսարան» եւ սկսաւ գիւղատնտեսութիւն ուսումնասիրել: Յաջորդ երկու տասնամեակին գրեց երկու գիրք, կառուցեց եւ մշակեց մեծ պարտէզ, կենդանիներ պահեց, օգնեց տուներ կառուցելու Ֆլորիտայի լողափերը՝ ստեղծելով յարմարաւէտ բնակարաններ տարեցներու համար, ինչպէս նաեւ գործուն մասնակցութիւն ունեցաւ բազմաթիւ գործարար եւ համայնքային նախագիծերուն մէջ: Ան մշտապէս կ'օգնէր կարիքի մէջ գտնուող մարդոց:

Երբ ան կ'այցելէր մեզի, կամ երբ մենք կ'այցելէինք անոր, ատիկա շատ սպասուած իրադարձութիւն էր մեզի համար: Ան կը ծրագրէր ձկնորսական ճանապարհորդութիւններ, օրեր՝ զուարճալիքներու այգիներուն մէջ, եւ ուղեւորութիւններ դէպի Նիւ Եորք Սիթի: Ան խաղեր կը խաղար մեզի հետ, կը տանէր մեզի դրացիներուն տուները, կ'օգնէր տեղական գործարարներուն իրենց խանութներուն մէջ եւ ամէն երեկոյ համեղ կերակուրներ կը պատրաստէր մեզի համար: Միւս պապս նոյնիսկ խոհանոցը չէր օգնէր:

Իմ պապերէն մէկը մահացաւ 75 տարեկանին, իսկ միւսը՝ 91 տարեկանին: Կրնա՞ք կռահել, թէ ով անելի երկար ապրեցաւ: Այո, ան, որ տեսիլք ունէր եւ կը բազմապատկէր: Ահա հետաքրքրական փաստ. ան փրկութիւն ստացաւ միայն 89 տարեկանին: Սակայն նոյնիսկ մինչ այդ ան կ'ապրէր Աստուծոյ սկզբունքներով՝ համաձայն Անոր Թագաւորութեան օրէնքներու, եւ առատօրէն օրհնուած էր:

Մինչեւ որ ես արտօնութիւն ունեցայ առաջնորդելու անոր դէպի Յիսուսը, պապս կը հալածէր ինձի իմ համոզմունքներուն համար: Ան կը ծաղրէր իմ հաւատքը գրեթէ ամէն անգամ, երբ մենք կը հաղորդակցէինք: Անոր անտարանելու բազմաթիւ փորձերէն յետոյ, երբ պապս ի վերջոյ ըսաւ, որ կ'ուզէ ընդունիլ Յիսուսին որպէս Տէր, ես գրեթէ ինկայ կեցած տեղէս: Ատիկա հրաշալի օր էր:

Այդ գրոյցէն մէկ ամիս յետոյ կրկին այցելեցի անոր: Ան նոր տեղափոխուած էր Տէյթոնա լողափը գտնուող իր բնակարանէն Օրմոնստ լողափի տարեցներու յատուկ խնամքի կեդրոն: Մեր



տունէն մինչեւ այդ կեդրոնը ինքնաշարժով ընդամենը մէկ ժամուան ճանապարհ էր: Այդ անգամ ան ըսաւ ինծի.

- Ճո՛ն, կ'ուզե՞ս գիտնալ իմ առաջադրանքը. այն, թէ ինչ պէտք է ընեմ այս երկրի վրայ:

Ես զարմացայ, որ անոր տարիքի նոր փրկուած մարդը այդպէս կը մտածէր: Բայց իմ զարմանքը արտայայտելու փոխարէն, ես պարզապէս պատասխանեցի.

- Այո՛, պապի՛կ, ո՞րն է քու առաջադրանքը:

Ան ժպտեցաւ եւ ըսաւ.

- Սուրբ Հոգին ըսաւ ինծի, որ ես հոս եմ, որպէսզի պատմեմ բոլոր այս մարդոց Յիսուս Քրիստոսի մասին (այդ համալիրին մէջ կար քանի մը հարիւր տարեց):

Երկու տարի յետոյ իմ մայրը եւ անոր եղբայրը տեղափոխեցին անոր Օքլահոմա՝ իր միակ որդիին աւելի մօտիկ ըլլալու համար: Մէկ շաբաթ յետոյ ան ամբողջ գիշեր արթուն մնաց՝ իր նոր դայակին պատմելով կեանքի պատմութիւնը: Եւ վաղ առաւօտեան՝ մինչեւ արեւածագը, ան ըսաւ այդ կնոջը. «Տուն երթալու ժամանակն է: Ըսէ՛ որդիիս, որ խնճոյք կազմակերպէ ինծի համար»: Այդ խօսքերէն յետոյ ան հեռացաւ իր մարմինէն եւ միացաւ երկնային ընտանիքին:

Մայրս մտահոգուած էր. անոր հանգիստ չէր տար այն միտքը, որ իրենք չափազանց մեծ ճնշումի ենթարկած էին անոր Ֆլորիտայէն Օքլահոմա տեղափոխուելու ժամանակ: Երբ ան ըսաւ ատիկա, ես արագօրէն վստահեցուցի, որ իրենք որեւէ վնաս չէին հասցուցած անոր.

- Մայրի՛կ, երբ պապիկը 89 տարեկան էր, ան ըսաւ ինծի, որ Աստուած ցոյց տուած է իրեն, որ ինքը պիտի ապրի երկու տարի եւս՝ Օրմոնտ լողափի մէջ իր առաջադրանքը կատարելու համար: Արդէն մէկ շաբաթ է ան Օքլահոմա է. ան կատարած է իր առաջադրանքը:

Մայրս ե՛ւ մխիթարուեցաւ, ե՛ւ զարմացաւ:

Թէեւ պապս փրկուած չէր, անոր կեանքին մէջ կը դրսեւորուէին աշխատասիրութեան եւ հաւատարմութեան Աստուածային սկզբունքները: Տեսնելով իմ երկու պապերու կեանքերու տարբերութիւնը, նոյնիսկ մինչեւ հաւատացեալ դառնալը, ես վճռած էի, որ պէտք է ապրիմ այն պապին պէս, որ բազմապատկեց իր ունեցածը եւ մինչեւ վերջին շունչը ապրեցաւ նպատակաւորաբար:

Բայց թոյլ տուէք անկեղծ ըլլալ: Շատ յաճախ ես գայթակղութիւն ունեցած եմ ընտրելու անհոգ կեանքը: Անհրաժեշտ է վերահսկել մեր մտքերը, որպէսզի չտրուինք «պահպանող» կենսաոճին, քանի որ այն շատ աւելի դիւրին է:

Բազմապատկումը չ'արտայայտուի ծոյլ, վարանող, անհոգ եւ անտարբեր շարժառիթներու պարագային: Պօղոս առաքեալը կը պատուիրէ մեզի. «Ոչ մէկ պարագային ծոյլ եղէք, այլ *քրտնաջան աշխատեցէք* եւ *խանդավառութեամբ* ծառայեցէք Տիրոջը» (Հռովմայեցիս 12.11, NLT):

Նախ եւ առաջ, գիտակցեցէք, որ ասիկա պատուիրան է, ոչ թէ առաջարկ: Ուշադրութիւն դարձուցէք «քրտնաջան աշխատեցէք» արտայայտութեան: Ասիկա առաջին յատկանիշներէն մէկն է, որ պէտք է ցուցաբերէ՝ բազմապատկում ունենալու համար: Դուք պէտք է ոչ միայն *քրտնաջան աշխատիք*, այլեւ *խանդավառութեամբ* կատարէք ձեր գործը: Սխալ մի՛ հասկնաք ինձի. բազմապատկման երեք կարեւոր գործօններն են հաւատքը, տեսիլքը եւ յարատեւութիւնը: Սակայն ատոնք անօգուտ են՝ առանց թելերը վեր քաշելու եւ քրտնաջան աշխատելու:

Լիզան եւ ես քրտնաջան աշխատած ենք գրեթէ մեր հաւատացեալ դարձած օրուրնէ: Ասիկա դրուած է մեր ներսը, եւ Աստուած կու տայ այս յատկանիշը իւրաքանչիւր հաւատացեալի: Մեր խանդավառութիւնը պայմանաւորուած չէր արտաքին հանգամանքներով, այլ՝ խորունկ ձգտումով, որ կը բխէր երկու աղբիւրէ՝ մեր անշեղ սէրէն Յիսուսին հանդէպ եւ մեր անշեղ սէրէն Անոր ժողովուրդին հանդէպ: Այս ձգտումը հիմնուած է հաստատուն եւ ի սրտէ որոշումի վրայ, ոչ թէ զգացումներու, եւ այն կը բորբոքէ Անոր Թագաւորութիւնը կառուցելու կրակոտ ցանկութիւնը մեր ներսը: Ասիկա անչափ կարեւոր է, քանի որ դուք միշտ չէ, որ զգացմունքային ոգեշնչում կ'ունենաք: Իրականութեան մէջ, պիտի ըլլան ժամանակներ, երբ ընդհանրապէս ոչինչ կը զգաք:

«*խանդավառութիւն*» բառի յունարէն արմատական բառը «*էնթետոս*»-ն է, որ կը նշանակէ «Աստուած՝ ներսը»: Մեր աշխատասիրութիւնը պէտք է բխի Անոր ներքնակուող ներկայութենէն, ոչ թէ զգացումներէն կամ արտաքին հանգամանքներէն:

## ԲԱԶՄԱՊԱՏԿԵՑԷ ՈՒՐԻՇԻՆԸ

Մեր ամուսնութենէն յետոյ Լիզան եւ ես կը յաճախէինք եկեղեցի մը Թեքսաս նահանգի Տալլաս քաղաքին մէջ: Այն ԱՄՆ-ի ամենայայտնի եկեղեցիներէն էր եւ ունէր քանի մը հարիւրի հասնող աշխատակազմ: Որպէս կամաւորներ, մենք մշտապէս պատրաստ էինք ընելու այն, ինչ որ անհրաժեշտ էր: Ես սկսայ ծառայել կարգ ու կանոնի ծառայութեան մէջ եւ կամաւոր դարձայ բանտերու ծառայութեան մէջ: Կը ծառայէի կալանավայրերու մէջ, կ'այցելէի ծերանոցներ, կ'օգնէի համաժողովներու ընթացքին, փոքր առաջադրանքներ կը կատարէի

Եկեղեցւոյ աշխատակիցներուն համար եւ նոյնիսկ թենիսի դասեր կու տայի մեր հովիւի երեխաներուն: Ես բնաւ «ոչ» չէի ըսեր որեւէ տեսակի ծառայութեան, ինչ ալ ըլլար ատիկա, եւ այդ ամէնուն հետ միատեղ կ'աշխատէի շաբաթը 40 ժամ «Ռոքուէլ Ինթերնեշնլ» ընկերութեան մէջ՝ որպէս ճարտարագէտ:

Ի վերջոյ, տեսնելով իմ եռանդը ծառայութեան մէջ, մեր գլխաւոր հովիւին կինը (որ նոյնպէս եկեղեցւոյ գործադիր տնօրէնն էր) հարցուց ինձի՝ արդեօ՞ք կը ցանկամ միանալ եկեղեցւոյ աշխատակազմին՝ կատարեալ դրոյքով: Մեր պաշտօնական հարցազրոյցի ժամանակ ան ըսաւ.

- Ճո՛ւն, չեմ կարծեր, որ մենք կրնանք պատշաճ կերպով վարձատրել քեզի:

- Միեւնոյնն է՝ ես համաձայն եմ, - պատասխանեցի:

Ինձի չէր հետաքրքրեր, թէ որքանով պիտի վարձատրէին: Ես պատրաստ էի ցանկացած աշխատանքի՝ ցանկացած աշխատավարձով: Այդ հարցազրոյցէն յետոյ ան առաջարկեց ինձի գործադիր խումբի օգնականի պաշտօնը: Կարիք չկար, որ Լիզան եւ ես ջանասիրաբար աղօթէինք ատոր համար, քանի որ մենք գիտէինք, որ ատիկա Աստուծոյ կամքն էր: Ես ընդունեցի այդ առաջարկը՝ տարեկան 18.000 տոլար աշխատավարձով, որ եկամուտներու զգալի կրճատում էր մեզի համար, սակայն մենք ատիկա յառաջխաղացում համարեցինք: Լիզան եւ ես գիտէինք, որ մեզի անհրաժեշտ պիտի ըլլար գերբնական մատակարարում՝ այդ նոր աշխատավարձով ապրելու համար, բայց ատիկա չէր մտահոգեր մեզի: Մենք քայլ առինք, քանի որ ի սրտէ կը հաւատայինք, որ ատիկա մեր կեանքի կոչումն էր:

Այդ պաշտօնին մէջ ես իմ հովիւներուն, անոնց ընտանիքին եւ հիւրերուն օգնականն էի: Ես կը կատարէի իմ աշխատանքը երեք գլխաւոր շարժառիթով: Առաջինը՝ ծառայել անոնց այնպէս, կարծես կը ծառայէի Յիսուսին: Երկրորդը՝ մշտապէս առջեւ նայիլ՝ հասկնալով, թէ ինչ կարիք ունին, եւ ամբողջացնել ատոնք, մինչեւ ինձմէ խնդրէին ատոր համար: Վերջինը՝ որեւէ առաջադրանք ստանալու ժամանակ ոչ մէկ պարագային վերադառնալ եւ ըսել, որ այն կատարելը անկարելի է: Ես միշտ միջոցներ կը գտնէի, որպէսզի ընէի ատիկա աղօթքով, ստեղծարարութեամբ եւ քրտնաջան աշխատանքով: Եւ եթէ ինչ որ բան չէր յաջողեր (ինչ որ հազուադէպ կը պատահէր), ես մշտապէս կ'առաջարկէի լաւագոյն այլընտրանքային լուծումը, եւ յաճախ այն նոյնիսկ աւելի նպաստաւոր էր, քան իմ ստացած սկզբնական առաջադրանքը:

Լիզան եւ ես չունէինք երեխաներ այդ պաշտօնը զբաղեցնելու ընթացքին: Մեր աշխատանքային շաբաթը վեցօրեայ էր եւ սովորաբար բաղկացած էր 50-70 ժամէն: Երկուքս ալ համոզուած էինք, որ կարելի էր հնարաւորինս հեռացնել որեւէ ճնշում մեր հովիւներուն կեանքէն: Մենք կը ցանկայինք, որ անոնք բոլորովին ուղղէին իրենց ուշադրութիւնը եկեղեցին առաջնորդելուն:

Ես կրնամ պատմել շատ պատմութիւններ, որոնք ցոյց կու տային մեր շարժառիթները, բայց պիտի ներկայացնեմ միայն մէկը: Իմ հովիւը հիւր ունէր, որ հանգուցեալ հանրայայտ ւաւետարանչի մը խումբի անդամ եղած էր: Ան կը ցանկար ւաւելին գիտնալ այդ հանգուցեալ ւաւետարանչի մասին եւ զրուցեց իր հիւրին հետ մինչեւ ուշ գիշեր: Հեռաձայնս հնչեց գիշերուան ժամը 1:00-ին: Հեռաձայնողը իմ հովիւն էր, որ խնդրեց ինձմէ երթալ իր տունը (որ ինքնաշարժով 25 վայրկեանոց ճանապարհ էր մեր բնակարանէն) եւ պանդոկ տանիլ իր հիւրին:

- Արդէն կու գամ, - անվարան պատասխանեցի:

Ես գացի անոր տունը, սպասեցի, մինչեւ որ անոնք հրաժեշտ տային միմեանց, եւ հիւրին ուղեկցեցայ պանդոկ: Ես քնացայ գիշերուան ժամը 2:00-էն բաւականին ուշ:

Իմ հովիւը չէր գիտեր, որ ես տակաւին պէտք է օդակայան երթայի, որպէսզի դիմաւորէի հիւրի մը եւս, որ պիտի քարոզէր մեր եկեղեցիին մէջ յաջորդ երեկոյեան: Ան պիտի ժամանէր գիշերային թռիչքով Հաուայեան կղզիներէն, որուն վայրէջքը առաւօտեան 5:40-ին էր: Ես ստիպուած էի արթննալ առաւօտեան 4:30-ին, որպէսզի դիմաւորէի անոր: Այդպէս ալ չըսի իմ հովիւին, որ այդ գիշեր նոյնիսկ երեք ժամ չէի քնացած: Ես վճռած էի հոգալ անոնց որեւէ մէկ կարիքը եւ մշտապէս կը յիշեցնէի ինքզինքիս, որ ծառայելը արտօնութիւն է:

Չորս տարի իմ հովիւին եւ անոր կնոջը որպէս օգնական ծառայելէն ետք, մէկ անգամ, երբ միմեան կ'անոնց հետ, ըսի.

- Ես կ'աղօթեմ եւ կը խնդրեմ Աստուծմէ, որ այն մարդը, որ պիտի զբաղեցնէ իմ պաշտօնը, կրկնակի լաւ աշխատի, քան ես:

Ես կը ցանկայի հեռանալ ճիշդ կերպով, եւ կը ցանկայի, որ իմ պաշտօնը ա՛լ ւաւելի արդիւնաւետ դառնար:

- Ատիկա հնարաւոր չէ, - պատասխանեցին անոնք: - Դուն հրաշալի ձեւով կատարած ես քու աշխատանքը:

Այդ հաւանութիւնը խրախուսեց ինձի: Անոնց խօսքերուն շնորհիւ իմ ամբողջ քրտնաշան աշխատանքը դիւրին թուեցաւ, սակայն ես կը ցանկայի յառաջխաղացում ստանալ: Ի վերջոյ, անոնք երկու մարդ նշանակեցին իմ պաշտօնին: Իմ հովիւը օրինութեամբ ազատ ձգեց

մեզի՝ ծառայելու Ֆլորիտա գտնուող ուրիշ շատ յայտնի եկեղեցւոյ մը մէջ որպէս երիտասարդական ծառայութեան հովիւ, որուն մասին ես յիշատակեցի երկրորդ գլուխին մէջ:

Երբ զբաղեցուցի իմ պաշտօնը Ֆլորիտայի մէջ, ես հիասթափուիւն կը զգայի, քանի որ մենք չէինք հասներ աւելի շատ դեռահասներու: Ես երիտասարդական ծառայութեան հովիւ էի 1980-ական թուականներու կէսերուն, երբ մեր միակ տեսողական հաղորդակցման միջոցը հեռուստատեսութիւնն էր: Չկային համակարգիչներ, թապլէթներ եւ խելախօսներ (smartphone): Հոսքային հեռարձակումը տակաւին չէր յօրինուած: Յստակ ըսելու համար, հեռուստատեսութիւնը լաւագոյն միջոցն էր՝ մարդոց հասնելու համար:

Որոշակի ուսումնասիրութիւն կատարելէն ետք իմացայ, որ կեդրոնական Ֆլորիտայի ամենամեծ հեռուստակայաններէն մէկը ազատ եթերածամ ունէր շաբաթ երեկոյեան ժամը 22:00-ին: Ես հարցուցի այդ երեսուն վայրկեանոց եթերածամի արժէքի մասին. պահանջուածը բաւական մեծ գումար էր:

Ես մօտեցայ մեր աւագ հովիւին եւ հարցուցի՝ արդեօ՞ք մենք կրնայինք գնել այդ եթերածամը երիտասարդական աւետարանչական ծրագրի համար:

- Ճո՛ւն, ատիկա չի համապատասխաներ եկեղեցւոյ պիտճէին, - պատասխանեց ան:

Ես հարցուցի անոր.

- Դուք դէմ չէ՞ք ըլլար, եթէ առաջարկենք մեր ծառայութեան դեռահասներուն եւ երիտասարդներուն ամսական նուիրատուութիւններ կատարել, որպէսզի վճարենք այդ հաղորդման համար:

- Անշուշտ, եթէ անոնք կարենան արօժնել ատիկա իրենց, - պատասխանեց ան:

Կը կարծեն՝ ան չէր հաւատար, որ երիտասարդներուն հետ պիտի յաջողէր:

Երիտասարդական հաւաքոյթին ես պատմեցի կորուսածներուն հասնելու իմ տեսիլքը: Այդ ժամանակ բազմաթիւ երիտասարդներ հեռատեսիլ կը դիտէին շաբաթ օրերուն՝ ուշ երեկոյեան: Այդ հաղորդումին ընթացքին մենք պիտի քարոզէինք Աստուծոյ Խօսքը, ապա հեռուստադիտողներուն պիտի հրաւիրէինք եկեղեցի եւ երիտասարդական ծառայութեան: Ես կոչ ուղղեցի մեր ծառայութեան երիտասարդներուն, որպէսզի այդ նպատակին համար նուիրատուութիւններ կատարեն իրենց գրպանէն, դպրոցէն յետոյ կատարած աշխատանքներէն կամ ոչ մշտական աշխատանքներէն:

Հաշուարկելով ֆինանսական խոստումները՝ ես եւ երիտասարդական ծառայութեան իմ օգնականը զարմացանք. ստացուած գումարը բաւական էր՝ այդ հեռուստաէթերը գնելու համար:

Իմ աւագ հովիւն ա՛լ աւելի զարմացաւ: Ան արտօնեց մեզի սկսելու այդ հաղորդումը, որ կը կոչուէր «Կրակոտ երիտասարդութիւն»: Մենք վճարումները կը կատարէինք ամէն ամիս, եւ ոգեշնչողը այն էր, որ բազմաթիւ եկեղեցի չյաճախող երիտասարդներ սկսան յաճախել մեր երիտասարդական ծառայութիւններուն եւ ընդունեցին Յիսուսին: Աւելի քան 20 տարի յետոյ ինձի մօտեցած են մարդիկ եւ պատմած են, որ 1980-ական թուականներուն անոնք կը դիտէին «Կրակոտ երիտասարդութիւն» հաղորդումը, եւ որ այն մեծ ազդեցութիւն ձգած է իրենց կեանքին մէջ:

Երբ ես ձգեցի երիտասարդական ծառայութեան հովիւի դիրքը, մենք այդ ծառայութիւնը երեք մասի բաժնեցինք: Այն ծառայութիւնը, որ սկսանք առաջնորդել, յանձնուեցաւ երեք ծառայողի: Կրկին, Աստուծոյ շնորհքը, հնազանդութիւնը եւ քրտնաջան աշխատանքը բազմապատկում բերին:

Յիսուսը կ'ըսէ.

«Եւ եթէ օտար բանի մէջ հաւատարիմ չեղաք, ձերը ո՞վ պիտի տայ ձեզի» (Ղուկաս 16.12):

Եկէք վերածելակերպենք Անոր խօսքը՝ համաձայն տաղանդներու մասին առակին.

«Եթէ դուք չէք բազմապատկած ուրիշինը, ո՞վ պիտի տայ ձեզի ձերը՝ բազմապատկելու համար»:

Այդ եկեղեցւոյ աւագ հովիւն էր, որ հռչակեց Աստուծոյ ծրագիրը Լիզային եւ ինձի համար, եւ ատիկա «Մեսինճըր Ինթերնեշնլ» ծառայութեան ստեղծումն էր: Ան առաջինն էր, որ տուաւ այդ գաղափարը, ոչ թէ մենք: Սկսելով իմ աշխատանքը՝ որպէս երիտասարդական ծառայութեան հովիւ, ես ըսած էի. «Հովի՛ւ, ես կը մնամ հոս, մինչեւ որ Յիսուսը վերադառնայ, կամ մինչեւ որ Աստուած ցոյց տայ ե՛ւ քեզի, ե՛ւ ինձի, որ մենք պէտք է երթանք»: Եթէ Աստուած աղօթքի մէջ ցոյց չտար անոր մեր յաջողո՞ր ծառայողական դիրքը, ես համոզուած չեմ՝ արդեօ՞ք ազատ պիտի զգայի՞ հեռանալով այդ եկեղեցիէն: Մինչեւ օրս ես կը հաւատամ, որ յատկապէս ատիկա էր պատճառը, որ Աստուած առաջինը անոր ցոյց տուաւ այդ ծառայութիւնը:

## «ՄԵՍԻՆՃՐՐ ԻՆԹԵՐՆԵՇՆԱԼ»-Ի ԾՆՈՒՆԴՈՒ

Ֆլորիտա գտնուող այդ եկեղեցիէն հեռանալէն կարճ ժամանակ յետոյ մենք կը ծառայէինք Հարաւային Քարօլինա նահանգի Քոլումպիա քաղաքի մէջ: Վաղ առաւօտ էր, ես մեկուսի վայր մը գտած էի՝ աղօթելու համար: Աստուած խօսեցաւ հետս. «Որդի՛ս, դուն մեծ հունձք պիտի ստանաս այն հաւատարմութեան սերմերէն, որոնք կը ցանէիր վերջին եօթ տարուան մէջ՝ այլ մարդոց ծառայութիւններուն մէջ ըլլալու ժամանակ: Ատիկա պիտի սկսի անմիջապէս եւ պիտի շարունակուի գալիք տարիներու ընթացքին»:

Այժմ, ետ նայելով, երկիւղածութիւն կը զգամ այդ հունձքի պատճառով:

Այն բանէն յետոյ, երբ մենք ուղարկուեցանք մեր եկեղեցիէն՝ «Մեսինճրր Ինթերնեշնլ» ծառայութեան ծնունդ տալու համար, աշխատասիրութիւնը կրկին մեր բազմապատկման բանալի գործօնն էր: Լիզան եւ ես կ'անցընէինք շատ երեկոներ՝ կատարելով տարբեր աշխատանքներ, օրինակ՝ լսաժապաւէններ կը կրկնօրինակէինք, պիտակներ կը պատրաստէինք եւ քարոզաշարեր կը կազմէինք: Մեր ընկերներէն քանի մը հոգի պարբերաբար կ'այցելէին մեզի, որպէսզի դրոշմանիշներ փակցնէին ծրարներու վրայ՝ մեր տեղեկագիրները փոստով ուղարկելու համար, կամ օգնէին այլ հարցերու մէջ: Լիզան եւ ես նամակներ կը գրէինք, չէքեր կը մուտքագրէինք մեր դրամատնային հաշիւին, ֆինանսական հաշուետուութիւններ կը կազմէինք եւ կը կատարէինք ամբողջ անհրաժեշտ փաստաթղթային շրջանառութիւնը: Մենք կը կատարէինք համակարգչային աշխատանքներ, կ'աշխատէինք փոստի հետ եւ կ'իրականացնէինք մեր աշխատանքային նիւթերու մատակարարումը, եւ ասիկա ընդամենը քանի մը հատ էր մեր պարտականութիւններէն: Մենք կը սկսէինք աշխատիլ առաւօտեան աղօթքէն յետոյ եւ յաճախ կ'աշխատէինք մինչեւ երեկոյեան ժամը 21:00-ը կամ մինչեւ գիշեր:

Մենք կ'աշխատէինք ուրախութեամբ եւ արտօնութիւն կը համարէինք ասիկա: Մեր շարժառիթը կը բխէր մեր ներսէն եւ կը յարատւէր՝ անցնելով անթիւ հիասթափութիւններով եւ չորութեան ժամանակահատուածներով: Ես համոզուած եմ, որ մենք ուժ ունէինք՝ չվհատելու համար, քանի որ ամէն առաւօտ ժամանակ կը տրամադրէինք աղօթքին:

Մենք վեր ու վար կ'ընէինք Արեւմտեան ափի գլխաւոր «I-95» մայրուղիով՝ մեր «Հոնտա Սիվիք» ինքնաշարժով: Մեր երկու փոքր տղաները ետեւի նստարանին էին՝ մանկական նստատեղերով: Մենք կը քարոզէինք 80-100 անդամ ունեցող փոքր եկեղեցիներուն մէջ: Մեր

առաջին հաւաքոյթը եկեղեցիի մը մէջ էր, որ կը հաւաքուէր թաղման գրասենեակի շէնքը. ինչպիսի՛ հրապուրիչ սկիզբ:

Մենք կը վաճառէինք մեր լսածապաւէնները եւ կ'օգտագործէինք հասոյթը՝ ծառայութիւնը ընդլայնելու համար: Մենք որոշում կայացուցած էինք, որ այդ միջոցները մեր աշխատավարձքի համար չէին. կարելոր էր մեծցնել եւ բազմապատկել «Մեսինճըր»-ը: Կային ժամանակներ, երբ մենք կը ստանայինք մեզի անհրաժեշտ անձնական միջոցները ճիշդ այն օրը, երբ ատոնք պէտք էին մեզի: Մեր «լսածապաւէններու վաճառքի» հաշիւին կային միջոցներ, բայց մենք որոշում կայացուցած էինք չօգտագործել ատոնք:

Մէկուկէս տարի տեւող քրտնաջան աշխատանքէն յետոյ էր, որ ես Աստուծոմէ խօսք ստացայ գրելու համար: Ես խիստ կը մտահոգուէի, որ պարզապէս չէի ունենար բաւականաչափ ժամանակ օրուան ընթացքին եւ գրելու, եւ մեր բազմաթիւ այլ պարտականութիւնները կատարելու համար: Նման որոշում կայացնելը ռիսքային կը թուէր, բայց մենք կայացուցինք այն: Պահանջուեցաւ շատ ժամանակ՝ իմ առաջին գիրքը գրելու համար: Թէեւ ես չէի ակնկալեր, քանի մը երիտասարդներ կամաւորական հիմունքներով սկսան օգնել մեզի եւ կատարել այն երկրորդական առաջադրանքները, որոնք պիտի խլէին գիրք գրելու իմ ժամանակը: Անոնք ստանձնեցին նոյն դերը, ինչ մենք, երբ կ'աշխատէինք մեր հովիւներուն համար Տալլասի մէջ: Անոնք տեսան այն կարիքը, որ կար մեր կեանքին մէջ, եւ օգնութեան եկան, թէեւ մենք չէինք խնդրած անոնցմէ ատոր համար:

Ես աւարտեցի «Յաղթանակ անապատին մէջ» գիրքի ձեռագիրը մէկ տարի տեւող քրտնաջան եւ երբեմն յուսահատեցնող աշխատանքէն յետոյ: Ես հասկցայ կարելոր սկզբունք մը. *մենք պէտք է աճինք մեր կեանքի շնորհքին (պարգեւներուն) մէջ*: Մեզմէ շատերը չեն ունենար «աներեւակայելի» արդիւնքներ սկիզբը: Պետրոսը կը գրէ. «Աճեցէ՛ք մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի շնորհքով» (Բ. Պետրոս 3.18): Այժմ իմ գրելու կարողութիւնը շատ աւելի զարգացած է, քան երբ ես կը գրէի իմ առաջին գիրքը:

Լիզան եւ ես ներկայացուցինք այդ ձեռագիրը շատ յայտնի խմբագրի մը: Ես սաստիկ զարմանք ապրեցայ, երբ ան կոպտօրէն քննադատեց այն եւ ըսաւ, որ ես չափազանց երիտասարդ եւ անփորձ եմ՝ Քրիստոսի մարմինին նման ուղերձ տալու համար:

Այդ մերժուածութեան հարուածէն յետոյ Լիզան եւ ես անմիջապէս սկսանք այլ խմբագիր փնտռել: Մենք գտանք խմբագիր մը, եւ ան փճացուց ամբողջ ձեռագիրը: Լիզան եւ ես յուսահատեցանք,



երբ ետ ստացանք այն: Ան կորսնցուցած էր իմ ծայնը եւ գիրքի բովանդակութեան ազդեցութիւնը: Եւ ամենավատը այն է, որ այն գրեթէ անհիմաստ դարձած էր: Պարզ ըսած՝ ան աղաւաղած էր այն: Ի՞նչ պիտի ընէինք մենք այդ հերթական հարուածէն յետոյ: Արդէն մէկ տարիէն աւելի ժամանակ անցած էր:

Մենք ջանձնուեցանք: Գտանք եւս խմբագիր մը, եւ խմբագրուած տարբերակը ընթերցելէն յետոյ ան համաձայնեցաւ, որ սկզբնական ձեռագիրը աղաւաղած էր:

- Ճո՛ն եւ Լի՛զա, - ըսաւ այդ կինը, - որպէս կանոն, չ'արժեր շտկել անփութօրէն կատարուած աշխատանքը: Անտեսեցէ՛ք այդ խմբագիրի վճարուած գումարի կորուստը եւ կրկին սկսէք:

Այդ կինը առաջարկեց, որ Լիզան խմբագրէր սկզբնական ձեռագիրը, իսկ յետոյ ուղարկէր իրեն:

Մենք հետեւեցանք այդ խմբագիրի խորհուրդին, եւ Լիզան ժամեր անցուց սկզբնական ձեռագիրին վրայ՝ բարելաւելով այդ ուղերձի ընթերնելիութիւնը: Այդ նոր խմբագիրը վերցուց Լիզայի խմբագրած տարբերակը եւ գործի անցաւ: Ան զարմանալի աշխատանք կատարեց, եւ մենք զգացինք, որ վերջապէս փայլուն ձեռագիր ունինք:

Ես ներկայացուցի այն երկու յայտնի հրատարակութիւնները: Անոնցմէ մէկը այդպէս ալ չկապուեցաւ մեզի հետ, բայց միւսը պատասխանեց: Ինծի տեղեկացուցին, որ իմ գիրքը չափազանց «քարոզչական» է, եւ քանի որ ես յայտնի ծառայող չէի, անոնք պիտի չհրատարակէին գիրքը: Ես փորձեցի ներկայացնել այն քանի մը ոչ այնքան յայտնի հրատարակիչներու, բայց անոնցմէ ոչ մէկը հետաքրքրուեցաւ:

Կրնա՞ք պատկերացնել իմ հիասթափութիւնը: Աւելի քան մէկ տարի տուող աշխատանքէն եւ ժամանակէն յետոյ կը թուէր՝ մենք փակուղիի մէջ էինք: Ես շփոթուած էի, սակայն չէի ցանկար յանձնուիլ:

Ինքնահրատարակութիւնը գրեթէ չլսուած բան էր այդ ժամանակ: Ոչ մէկ յաջող հեղինակ զբաղած էր աստորմով, բայց իմ ընկերներէն մէկը առաջարկեց ինծի փորձել աստիկա: Մենք իմացանք, որ անհրաժեշտ էր 12.000 տոլար, որպէսզի տպագրէինք քանի մը հազար գիրք՝ առանց հաշուելու ձեւաւորման եւ շարուածքի ծախսերը, իսկ մենք արդէն վճարած էինք երկու խմբագիրներուն:

Ատիկա շատ խոշոր գումար էր մեզի համար: «Մեսինձըր Ինթերնեշնըլ»-ի ընդհանուր եկամուտը 1990 թուականին 40.000 տոլար էր: Մենք կը սկսէինք մեր ծառայութեան երրորդ տարին, եւ մեր շահոյթը չէր աւելցած առաջին տարուան համեմատ: Կը յիշեմ, թէ որքան ուրախացած էի ծառայութեան երկրորդ տարուան աւարտին, երբ գնեցինք մեր առաջին համակարգիչը, որ կ'արժէր ընդամենը քանի

մը հարիւր տոլար: Նման պայմաններու մէջ 12.000 տոլարը անկարելի կը թուէր: Մեզի հրաշք պէտք էր՝ այդ գումարը ստանալու համար:

Մենք ծանօթացանք կնոջ մը հետ, որ համակարգչային շարուածքի մասնագէտ էր փոքր հրատարակչութեան մը մէջ, որ կը հրատարակէր գիրքեր բացօթեայ մարզական խաղերու մասին: Ան լսած էր, որ ես կը խօսէի գրելու մասին, եւ մօտեցաւ Լիզային՝ առաջարկելով անվճար ձեւաւորում եւ շարուածք կատարել մեր գիրքի տպագրման համար: Մենք այնքա՛ն ուրախ էինք, որ ստիպուած չէինք հազարաւոր տոլարներ վճարելու այդ ծառայութեան համար:

Աստուած հրաշքով մատակարարեց մնացած գումարը, որ անհրաժեշտ էր ինքնահրատարակման համար, եւ մենք տպագրեցինք «Յաղթանակ անապատին մէջ» գիրքի առաջին հինգ հազար օրինակը (որ ներկայիս վերանուանուած է եւ կը կոչուի «Աստուած, ո՞ր էս»): Մեր սկզբնական ոգեւորութիւնը երկար չտեւեց, քանի որ հասկցանք, որ չունէինք սպառման ուղիներ: Վաճառքի գործակալներն ու գրախանութները ոչինչ գիտէին մեր մասին, եւ այդ օրերուն նման ընկերութիւնները գնումներ կը կատարէին միայն յայտնի հրատարակչութիւններէն: Ոչ ոք կը հետաքրքրուէր ինքնահրատարակուած գիրքով:

Մենք սկսանք վաճառել մեր գիրքը լսաժապաւէններու հաւաքածոներու հետ՝ մեր վաճառքի սեղանիկի վրայ, հոն, ուր կը ծառայէինք: Երբ ես կը քարոզէի անապատի մասին, մենք կը վաճառէինք բոլոր բերած օրինակները: Մարդոց հաճելի կը թուէր այդ ուղերձը, բայց գիրքի տարածումը կը սահմանափակուէր ատորմով:

Աղօթքի մէջ Աստուած խօսեցաւ հետս եւս մէկ գիրք գրելու մասին. այնպէս որ, ես տրամադրեցի եւս ինը ամիս՝ գրելով «Կանչողի ծայնը» գիրքը: Կրկին, ոչ մէկ հրատարակիչ հետաքրքրուեցաւ ատորմով, եւ կրկին, մենք ինքնահրատարակեցինք այն 1993 թուականին: Այժմ մեր վաճառքի սեղանիկին կար երկու գիրք, որոնք հասանելի էին գրախանութներուն մէջ:

## ՀԱՐԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԲԱՑ ԴՈՒՆ

Մէկ տարի յետոյ իմ ընկերներէն մէկը հեռաձայնեց ինձի եւ հրաւիրեց ճաշի.

- Կ'ուզեմ, որ ծանօթանաս իմ ընկերոջ հետ, - ըսաւ ան:

Ես ընդունեցի անոր հրաւերը: Գիտցայ, որ անոր ընկերը այն հրատարակչութեան նոր տնօրէնն է, որ քանի մը տարի առաջ մերժած էր զիս: Ճաշը լաւ անցաւ, եւ ան հետաքրքրուեցաւ Լիզային եւ իմ գործունէութեամբ:

- Ի՞նչ ուղերձ դուք հիմա կը քարոզէք, - հարցուց ան:

Ես սկսայ բաժնեկցիլ այն թեմայով, որ ամենէն ուժգնօրէն կը վառէր իմ սրտին մէջ: Այդ ուղերձը վիրաւորանքները յաղթահարելու եւ մեզի ցաւ պատճառած մարդոց ներելու կարեւորութեան մասին էր: Ան շարունակեց հարցումներ տալ, եւ ես պատմեցի աւելին այդ ուղերձին մասին: Տասնհինգ վայրկեան յետոյ ան ըսաւ.

- Ճո՛ւն, գիտէք, մենք չենք կրնար հրատարակել այս ուղերձը, քանի որ կը տպագրենք տարեկան միայն 22-24 գիրք՝ գրուած յայտնի հեղինակներու եւ ծառայողներու կողմէն:

Ես զարմացած նայեցայ անոր եւ ըսի.

- Ես չէի փորձեր համոզել ձեզի, որ հրատարակէք իմ ուղերձը. Դո՛ւք հարցուցիք, թէ ինչի մասին հիմա կը քարոզեմ:

Ան հասկցաւ ինձի եւ ծիծաղեցաւ.

- Անշո՛ւշտ, ճիշդ է. շարունակեցէ՛ք:

Ես շարունակեցի բաժնեկցիլ անոր հետ: Տասնհինգ վայրկեան յետոյ ան կրկին ընդհատեց ինձի.

- Կրնա՞ք ուղարկել ինձի ատոր ձեռագիրը երեք ամսուան ընթացքին:

Ես զարմացած պատասխանեցի.

- Կարծեմ՝ դուք ըսիք, որ չէք կրնար հրատարակել իմ գիրքը:

- Ես մտափոխուեցայ, - պատասխանեց ան: - Այս ուղերձը պէտք է տարածուի աշխարհով մէկ:

Այդ հրատարակչութիւնը լոյս ընծայեց «Սատանայի խայծը» գիրքը 1994 թուականի Յունիսին: Ես անչափ ոգեւորուած էի: Աստուած բացաւ դուռ մը, որ անձնապէս չէի կրնար բանալ: Ես դրականօրէն տրամադրուած էի՝ կարծելով, որ այն անմիջապէս հանրայայտ պիտի դառնայ եւ լաւ պիտի ծախուի: Սակայն առաջին եօթը ամսուան ընթացքին ատիկա տեղի չունեցաւ: Ամիսներ շարունակ ես վաճառքի յուսալքող թիւեր կը ստանայի հրատարակիչէն: Կը հաւատայի իմ սրտին մէջ, որ այդ ուղերձը նախատեսուած էր բազմութիւններու համար, եւ նոյնիսկ՝ ազգերու: Ես կը հրաժարէի յուսալքուելէ, բայց բոլոր փաստերը ցոյց կու տային, որ ինձի հիասթափութեան եւս մէկ հարուած կը սպասէր:

Քանի մը ամիս յետոյ ինձի հեռածայնեց այդ հրատարակիչի շուկայավարական (մարքեթինկային) խումբի անդամներէն մէկը եւ ըսաւ.

- Ճո՛ւն, միջազգային ցուցադրում մը կը փափաքի հիւրընկալել

ձեզ իր հաղորդման 1995 թուականին, Յունուար 16-ին: Անոնք պիտի տրամադրեն ձեզի 20 վայրկեան, բայց հիմնականին կը ցանկան խօսիլ ձեր, Լիզային, ձեր չորս որդիներուն եւ ձեր շրջիկ ծառայութեան մասին: Այնուամենայնիւ, անոնք թոյլ պիտի տան ձեզի յիշատակելու ձեր գիրքը: Ասիկա սկիզբ է, այսպէս ըսելու համար, կը նմանի դուռը քիչ մը բանալուն: Դուք կը ցանկա՞ք, որ մենք ընդունինք այդ հրաւերը ձեզի համար:

- Անշուշտ՝ այո՛:

Ես գացի այդ հաղորդումին, եւ այն կը վարէր շատ յայտնի ամուսնական զոյգ մը: Ինծի ողջունելէն անմիջապէս յետոյ ամուսինը վերցուց *«Սատանայի խայծը»* գիրքը եւ հարցուց.

- Ի՞նչն է սատանայի խայծը: Ինչի՞ մասին է այս ուղերձը:

Ես զարմացայ, որ առաջին հերթին ան խօսեցաւ գիրքի մասին, ոչ թէ իմ ընտանիքի, բայց անմիջապէս սկսայ ներկայացնել գիրքի ուղերձը: Կը թուէր՝ ամէն ինչ այդ սթիւտիոյին մէջ կեցաւ: Ինծի պատուիրած էին ուշադրութեամբ հետեւիլ նկարահանման կազմակերպիչին՝ կնոջ մը, որ ցուցանակներ պիտի պահէր իր ձեռքը՝ ցոյց տալով հարցազրոյցի մնացած ժամանակը: Անոնք շեշտեցին, որ ինծի պիտի յատկացուէր ընդամենը 20 վայրկեան: Կազմակերպիչը ոչ մէկ ցուցանակ պահեց: Հաղորդավարները կլանուած էին իմ խօսքով. անոնք չընդհատեցին, չմիջամտեցին եւ ընդհանրապէս ոչինչ ըսին: Այդ զոյգը եւ ես կորսնցուցինք ժամանակի զգացողութիւնը եւ հետագային պարզեցինք, որ ես խօսած էի 40 վայրկեան՝ առանց դադարի:

Հաղորդավարը խորապէս ազդուած էր այդ ուղերձէն: Ան կ'առաջնորդէր ամենամեծ համաժողովներէն մէկը ԱՄՆ-ի մէջ: Առաջին բաներէն մէկը, ինչ որ ան ըրաւ, ուղիղ եթեր ինծի հրաւիրելն էր, որ քարոզէի այդ թեմայով իրենց համաժողովին:

Երկու օր յետոյ հրատարակիչը տեղեկացուց ինծի, որ *«Սատանայի խայծը»* գիրքերը սպառած են Միացեալ Նահանգներու բոլոր գրախանութներուն մէջ, եւ իրենք եւս 20.000 օրինակի նախապատուէր ունին:

- Ճո՛ւն, մենք երբեք նման բան չենք տեսած, - ըսաւ ան, - եւ այդ ցուցադրութեան հաղորդավարները ըսին, որ երբեք նման արձագանգ չէին ստացած:

Իմ սրտին մէջ ես գիտէի, որ ասիկա Աստուծոյ ծրագիրն էր: Այդ դէպքը հաստատեց, որ այդ գիրքի ուղերձը Աստուծո՛մ էր:

*«Սատանայի խայծը»* ի վերջոյ դարձաւ միջազգային հանրաճանաչ գիրք, որ վերջին 25 տարուան մէջ յայտնուած է տարբեր հանրաճանաչ

գիրքերու ցուցակներուն մէջ: Այս գիրքը գրելու պահուն «Սատանայի խայծի» տարածումը կը հասնի երկու միլիոն օրինակի՝ տպագիր, էլեկտրոնային եւ օտիօ տարբերակներով: Հետաքրքրան է վերոյիշել, թէ ինչպէս ամէն ինչ տեղի ունեցաւ: Այն հրատարակչութիւնը, որ մերժած էր ինծի՝ որպէս հեղինակ, այժմ «Սատանայի խայծը» կը համարէ իր բոլոր ժամանակներու լաւագոյն վաճառուող գիրքերէն մէկը: Անկասկած, Աստուած զուարթամիտ է եւ կատակասէր:

Եթէ ես չհնազանդէի եւ չգրէի, այդ ուղերձը չէր զօրացներ բազմաթիւ մարդոց: Գրելը բազմապատկում բերաւ այդ ուղերձին, քանի որ «Սատանայի խայծը» գիրքը կը հասնի հոծ բազմութիւններու, որոնց ես երբեք չէի կրնար անձամբ քարոզել:


Իրականութեան մէջ, այս աներեւակայելի բազմապատկումը չսկսաւ այդ գիրքը գրելէն: Այն սկսաւ շատ ատելի վաղ, երբ մենք կ'անցնէինք մեր ընթացքը՝ յաղթահարելով բազում հարուածներ: Ես քրտնաջան կ'աշխատէի, որպէսզի ազատէի իմ առաջին հովիւին ամէն տեսակի ճնշումներէն, եւ որպէսզի բազմապատկէի մեր եկեղեցւոյ ազդեցութիւնը՝ երիտասարդական հովիւի պաշտօնին մէջ: Ատիկա շարունակուեցաւ «Մեսինճըր Ինթերնեշնլ»-ի միջոցով, երբ մենք կ'աշխատէինք ամէն օր՝ առաւօտէն երեկոյ, եւ երբ հնազանդեցանք Աստուծոյ պատուէրին՝ գիրքեր գրելու եւ հրատարակելու մասին:

Ես կը կարծէի, որ «Սատանայի խայծը» ուղերձի բազմապատկման ընթացքը հաստատուած էր, որ այն բնականօրէն պիտի տարածուէր գիրքերու վաճառքի միջոցով, նաեւ իմ կողմէն քարոզուելով աշխարհի տարածքին՝ համաժողովներու եւ եկեղեցիներու մէջ: Ես կը սխալէի. Աստուած կը պատրաստուէր վստահելու ինծի ատելի:

## ՄՏՈՐԵՑԷՔ

1. Դուք ունի՞ք բազմապատկող մտածելակերպ, թե՞ ձեր մտածելակերպը ավելի շատ պահպանող է: Դուք կը գերադասէք յարմարաւէտ կեանք՝ առանց յառաջխաղացման, թե՞ շարունակ մարտահրաւերներ կը նետէք դուք ձեզի:
2. Բազմապատկումը տեղի չ'ունենար, եթէ ծոյլ եւ անգործ էք: Մենք պէտք է ոչ միայն քրտնաջան աշխատինք, այլեւ խանդավառութեամբ կատարենք մեր գործը: Դուք կը համարէ՞ք ձեզ քրտնաջան աշխատող: Դուք խանդավառուա՞ծ էք ձեր աշխատանքով, թե՞ կանգ առած էք, երբ հասած էք յաջողութեան այնպիսի մակարդակի, որ համարած էք բաւարար կամ ավելի բարձր միւսներու ձեռքբերումներէն:
3. Երբ սկսայ գրել, ես վերապրեցայ հիասթափութիւն, մերժուածութիւն եւ վիատութիւն: Սակայն ճեղքումը եկաւ այն ժամանակ, երբ ես հնազանդ մնացի այն բանին, ինչ որ Աստուած պատուիրած էր ինձի: Ինչպէ՞ս դուք կ'աճիք այն շնորհքով, որ ձեր կեանքի մէջ է: Արդեօ՞ք իմ պատմութիւնը կը խրախուսէ ձեզի, որ առջեւ երթաք՝ յաղթահարելով հիասթափութիւնը եւ յուսալքութիւնը:





*«Անոր օրհնութեամբ անոնք մեծապէս կը  
բազմապատկուին»:*

– Սաղմոս 107.38, ESV



## ՄԵԾ ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒՄ

**3** աճախ Աստուած պիտի օգտագործէ հիասթափութիւնն ու դժգոհութիւնը՝ որպէս խթանիչ կա՛մ սկզբնական բազմապատկման, կա՛մ բազմապատկման յաջորդ փուլին համար: Մենք կը տեսնենք օրինակ մը այս մասին Աբրամի (Աբրահամի) կեանքին մէջ: Աստուած յայտնուեցաւ անոր, երբ ան 75 տարեկան էր, եւ տեսիլքով խօսեցաւ անոր հետ.

«Մի՛ վախնար, Աբրա՛մ, որովհետեւ Ես կը պաշտպանեմ քեզի, եւ *քու վարձատրութիւնը մեծ պիտի ըլլայ*» (Ծննդոց 15.1, NLT):

Ուսումնասիրենք այս խօսքը: Ամենակարող Աստուած ստեղծած է այս աշխարհը, եւ այն բոլորովին կը պատկանի Անոր՝ իր ահռելի պաշարներով: Ան մշտապէս եղած է, եւ Անոր գոյութիւնը երբեք չ'աւարտիր: Ոչ մէկ էակ կրնայ նոյնիսկ աննշան կերպով համեմատուիլ Անոր մեծութեան հետ: Այնպէս չէ, որ Ան կեանք ունի. Ան *Ինքն է* կեանքը: Ամբողջ մնայուն գիտելիքը, իմաստութիւնը, գանձերը եւ հաճոյքները Անոր մէջ են: Ոչ մէկ արժէքաւոր բան՝ Անորմէ դուրս:

Եւ այս զարմանալի էակը կը յայտնէ, որ Ինքը *պիտի պաշտպանէ* Աբրամին եւ *մեծ վարձատրութիւն* պիտի տայ անոր: Եկէք խօսինք *Ե՛ւ պաշտպանութեան*, *Ե՛ւ մեծ վարձատրութեան* մասին:

Սկսինք *պաշտպանութենէն*: Պատկերացուցէք, որ Միացեալ Նահանգներու նախագահը յատկացնէր երկրի բոլոր զինուած ուժերը՝ ձեզի *պաշտպանելու* համար: Բոլոր զօրավարները կը տեղեկացնեն իրենց ենթակայ սպաներուն, որ դուք գերակայ անձ էք, եւ անհրաժեշտ է ընել ամէն ինչ՝ ձեր անվտանգութիւնը ապահովելու համար: Անհրաժեշտութեան պարագային անոնք ձեր շուրջը պիտի տեղակայեն բոլոր զինուորներուն՝ իրենց զարգացած զինատեսակներու ամբողջ բազմազանութեամբ: Ասիկա գրեթէ աներեւակայելի է, բայց եթէ նման

բան տեղի ունենար, համոզուած եմ, որ դուք շատ ապահով եւ անվտանգ պիտի զգայիք ձեզի: Բայց ասիկա կը նսենանայ այն բանին համեմատ, որ ամենակարող Աստուած կ'ըսէ. «Ես *պիտի պաշտպանեմ քեզի*»:

Իսկ *մեծ վարձատրութիւնը*: Եթէ ձեր դրացին ըսէր. «Ես *մեծ վարձատրութիւն պիտի տամ քեզի*», անոր խօսքերը շատ բարի եւ առատաբուխ կ'ըլլային, սակայն հնարաւոր է, որ ան շատ բան չունենար ձեզի տալու համար: Եթէ Միացեալ Նահանգներու ամենահարուստ մարդը նոյնը ըսէր, դուք շատ աւելի կ'ոգեշնչուէիք: Բայց այս երկու տարբերակն ալ չի նկարագրեր այն, ինչ որ գրուած է հոս: Ան, Որուն կը պատկանի ամէն ինչ այս մոլորակին վրայ եւ տիեզերքին մէջ, վարձատրութիւն կ'առաջարկէ ձեզի: Անկեղծ ըլլալու համար, այս խոստումին անսահմանութիւնը դժուար է պատկերացնել: Սակայն մենք տակաւին բոլորովին չենք ներկայացուցած այս խօսքը:

Միւս աներեւակայելի իրողութիւնը այն է, որ Արարիչը աւետաբեր չուղարկեց. Ան Ինքը եկաւ: Ամենակարող Աստուած տուաւ այս աներեւակայելի խոստումները երես առ երես: Կը պատկերացնէ՞ք ատոր վեհութիւնը: Ինչպէ՞ս մենք կ'արձագանգէինք ատոր: Մի՞թէ բառերը կրնային արտայայտել այն ոգեւորութիւնը, ուրախութիւնը, երջանկութիւնը եւ երկիրաձօնութիւնը, որ իւրաքանչիւրս կը զգար: Բայց Աբրամի արձագանգը նոյնիսկ մօտ չէր այդ զգացումներուն: Ան այնքան ալ ոգեշնչուած չէր. իրականութեան մէջ, ան հիասթափուած էր:

«Բայց Աբրամը պատասխանեց. «Ո՛վ Գերիշխան Տէր, ի՞նչ օգուտ ինձի Քու բոլոր օրհնութիւններէն, եթէ ես նոյնիսկ մէկ որդի չունիմ» (Շննդոց 15.2, NLT):

Դուք զգացի՞ք դժգոհութիւնը անոր պատասխանին մէջ: Զարմանալի է: Բայց հնարաւոր է, որ Աբրամի խանդավառութեան պակասը իրականութեան մէջ դրական երեւոյթ էր: Ի՞նչ պիտի ըլլար, եթէ Աբրամը ըսէր. «Զարմանալի է: Պէտք է տօնել ասիկա». արդեօ՞ք այս պատմութիւնը ուրիշ ձեւով կ'աւարտէր: Կարելի է հարցնել աւելի դիպուկ հարցում. Աստուած կը յայտնուէ՞ր Աբրամին, եթէ անոր արձագանգը այդպէս ըլլար: Չեմ կարծեր, եւ թոյլ տուէք բացատրել իմ պատասխանը:

Պահ մը ձգենք Աբրամի պատմութիւնը, որպէսզի պարզաբանեմ, թէ ինչ նկատի ունիմ: Շատ տարիներ յետոյ, երբ իսրայելցիները կը թափառէին անապատին մէջ, անոնց դժգոհութիւնը կը բխէր անձնական անյարմարաւէտութենէն եւ, ցաւօք, այն զրկեց անոնց իրենց կոչումէն: Այնուամենայնիւ, Պօղոս առաքեալը ներկայացուց իր Աստուածահաճոյ վերաբերմունքը՝ գրելով.

«Ես սորված եմ, թե՛ ինչպէս գոհ ըլլալ, ինչ ալ որ ունենամ:  
Ես գիտեմ, թե՛ ինչպէս ապրիլ գրեթէ ոչինչով եւ ամէն ինչով:  
Ես սորված եմ ամէն իրավիճակի մէջ ապրելու գաղտնիքը՝  
թե՛ լեցուն ստամոքսով, թե՛ դատարկ, առատութեամբ ալ,  
սակաւութեամբ ալ» (Փիլիպպեցիս 4.11,12, NLT):

Ե՛ւ Պողոսի, ե՛ւ Աբրամի մէջ Աստուած գտաւ մարդոց, որոնք պատրաստ էին նեղութիւններ կրելու եւ մտածելու ոչ միայն իրենց մասին: Անոնց դժգոհութիւնը չէր բխեր անձնական ձգտումներէն, այլ աւելի շատ կեդրոնացած էր այլ մարդոց վրայ:

Յիշեցէ՛ք հետեւեալ սկզբունքը. եթէ դժգոհութեան պատճառը իմ անձնական կարիքն է, այն հաճելի չէ Աստուծոյ: Սակայն եթէ դժգոհութեան պատճառը այլ մարդոց կարիքները եւ Աստուծոյ Թագաւորութիւնը կառուցելն է, այն հաճելի է Աստուծոյ: Աբրամի հիասթափութիւնը այսպիսին էր, եւ ինչպէ՞ս Աստուած վարուեցաւ անոր հետ: Աստուած լայնցուց անոր տեսիլքը: Ան ցոյց տուաւ անոր երկինքի աստղերը եւ ծովափի աւազը՝ խոստանալով, որ անոր վարձատրութիւնը պիտի ազդէր աւելի շատ մարդոց վրայ, քան ինքը կրնար հաշուել: Աբրամի վերաբերմունքը դրդեց Աստուծոյ յայտարարելու. «Եւ Ես Իմ ու քու մէջտեղը Իմ ուխտը պիտի դնեմ, եւ *քեզի խիստ շատ կշատացնեմ*» (Ծննդոց 17.2):

Ի՞նչ պիտի ըլլար, եթէ Աբրամը գոհ ըլլար այն բանով, որ իր կեանքը զարմանալիօրէն օրհնուած էր: Արդեօ՞ք 75 տարեկան հասակին ան պիտի ունենար թէկուզ մէկ պատճառ հաւատալու, որ երեխայ պիտի ունենար: *Անոր դժգոհութիւնը դարձաւ խթանիչ՝ բազմապատկման համար:*

Ես սորված եմ, որ դժգոհութիւնը պէտք չէ անտեսել. այն ցատկահարթակ է դէպի աւելի մեծ արդիւնաւէտութիւն: Լաւողիկէի եկեղեցին զուրկ էր այս յատկանիշէն: Յիսուսը խստօրէն յանդիմանեց անոնց իրենց վերաբերմունքին համար, որ հետեւեալն էր. «Ես... ոչ մէկ բանի կարօտ եմ» (Յայտնութիւն 3.17): Անոնք չէին հիասթափուեր, երբ մարդիկ չէին ընդուներ Աւետարանը, քանի որ անոնք եսակեդրոն էին եւ յարմարաւէտ կեանք կը վարէին իրենց առատութեան մէջ: Որպէս արդիւնք, անոնք չէին ձգտեր բազմապատկման:

Այսպիսի գայթակղութեան հետ բախած էր Սթէնը: Ես նոյնպէս ժամանակ առ ժամանակ կը պայքարիմ ատոր հետ եւ ստիպուած կ'ըլլամ հեռացնելու ատիկա ինձմէ: Իրականութեան մէջ, գրեթէ բոլորս կամ շատերս կը պայքարինք ատոր հետ:

Որքան աւելի կը ծառայեմ Աստուծոյ, այնքան աւելի կը հասկնամ,

որ ճշմարիտ հաւատացեալի իրական պտուղներէն մէկը այլ մարդոց կեանքին մէջ Աստուծոյ Արքայութիւնը բերելու խոր ձգտումն է: Մեր փրկութեան պահուն մենք կը փոխուինք՝ դառնալով բոլորովին այլ անձնաւորութիւն: Վերածնունդ ճաշակելով՝ մարդոց ծառայելու ուժգին ձգտում կ'ունենանք: Յիսուսը կը պնդէ.

*«Հագուած եղէք ծառայութեան համար եւ վառ պահեցէք ձեր լամբերը» (Ղուկաս 12.35):*

Այս պատուէրը մեր Տիրոջմէն ցոյց կու տայ այն դիրքորոշումը, որ հաւատացեալները պէտք է պահպանեն. *ծառայութիւն* եւ *ծառայելու ձգտում*: Ես օգտագործեցի *«պահպանել»* բառը, քանի որ այն արդէն մեր նոր բնութեան մասն է: Յաճախ այն կ'անտեսուի, քանի որ մենք կը վախճանք *«գործերով փրկուելու»* մէջ իյնալէ՝ ի հակադրութիւն այն բանին, որ փրկութիւնը ձրիաբար տրուող պարգեւ է: Այնուամենայնիւ, ծառայելը բոլորովին կապ չունի գործերով փրկուելուն հետ. այն մեր հոգիին յատուկ ցանկութիւնն է: Ինչո՞ւ մենք կ'անտեսենք եւ կը ճնշենք մեր նոր կեանքի այս լուրջ բնագաւառը: Հնարաւոր է, որ քրիստոնէութիւնը վերահիմաստաւորելու ժամանակակից ձգտումը աւելի սպառողական կը դարձնէ մեր հաւատքը, եւ ատորմով մենք կը խրախուսենք ծուլութիւնը, որ յատուկ է մարդու անկում ապրած բնութեան:

Ինչո՞ւ Յիսուսն ըսաւ. *«Հագուած եղէք ծառայութեան համար»*: Ինչո՞ւ Ան կը համեմատէ հագուստը ծառայութեան հետ: Յայտնութիւն գիրքը կ'օգնէ մեզի պատասխանելու այս հարցումին.

*«Եկէք ուրախանանք եւ ցնծանք, եւ եկէք պատիւ տանք Անոր: Որովհետեւ ժամանակը եկած է Գառնուկի հարսանեկան խնճոյքին համար, եւ Անոր հարսը պատրաստած է ինքզինքը: Անոր տրուած է նրբագոյն մաքուր սպիտակ բեհեզ՝ հագնելու համար»: Որովհետեւ նուրբ բեհեզը կը խորհրդանշէ Աստուծոյ սուրբ ժողովուրդի բարի գործերը» (Յայտնութիւն 19.7,8, NLT):*

Առաջինը՝ մենք կը տեսնենք, որ ոչ թէ Աստուած պատրաստած է հարսը, այլ հարսը պատրաստած է ինքզինքը: Երկրորդը այն է, թէ ինչպէս ան պատրաստած է ինքզինքը: Իւրաքանչիւր հարս երկար ժամանակ կը յատկացնէ՝ ընտրելու համար իր հարսանեկան զգեստը: Ատիկա անոր գործերու ցուցակի ամենակարեւոր կէտերէն մէկն է այդ նշանաւոր օրուան համար: Մեր Արեւմուտքի մշակոյթին մէջ հարսը բաւական ժամանակ կ'անցընէ իր զգեստը *փնտռելու եւ ձեռք ձգելու*

համար: Աստուծոյ Թագաւորութեան մէջ մենք՝ որպէս Քրիստոսի հարս, բաւական ժամանակ կը տրամադրենք մեր հանդերձը *պատրաստելուն*: Մեր հանդերձը նուրբ բեռեզէն է, որ, համաձայն վերոնշեալ Աստուածաշնչեան հատուածին, մեր ծառայութիւնն է՝ Աստուծոյ Թագաւորութիւնը կառուցելու համար: Կը նշանակէ՝ ծառայելը մեր հոգեւոր Տի Էն Էյ-ի (DNA) մէջ է: Յիսուս կ'ըսէ. «Ինչպէս Իմ Հայրը Ինծի ուղարկեց, Ես ալ ձեզ կ'ուղարկեմ» (Յովհաննէս 20.21): Ան եկաւ ծառայելու համար (Մարկոս 10.45), եւ մեր առաքելութիւնը նոյնն է: Ան նոյնպէս կը պատասխանէ այն հարցումին, թէ ինչու կարելոր է ծառայելը. «Իմ կերակուրը ան է, որ Ինծի ուղարկողին կամքը ընեն եւ Անոր գործը կատարեն» (Յովհաննէս 4.34):

Մեր մարմինը երկար չի դիմանար առանց կերակուրի: Նմանապէս, հաւատացեալը, որ կը ծառայէ Աստուծոյ Թագաւորութիւնը կառուցելու համար, երկար չի դիմանար առանց կերակուրի եւ, ի վերջոյ, կը նահանջէ: Եւ Յիսուսը կը շարունակէ խօսիլ այս մասին Դուկաս 12-րդ գլուխին մէջ: Ասիկա է պատճառը, որ այս անկում ապրած աշխարհի ուժերը կ'ընեն ամէն ինչ, որպէսզի մենք յարմարաւէտ եւ ինքնագոհ կեանք վարենք, փոխարէնը ընդունինք այն դժգոհութիւնը, որ կ'առաջնորդէ բազմապատկման:

Սիրելի՛ ընթերցող, մի՛ անտեսէք այն դժգոհութիւնը, որ կը բարձրանայ ձեր ներսը՝ ձեր ներկայ ազդեցութեան մակարդակին պատճառով: Ամէնէն յաճախ Աստուած այդ կերպով կը բորբոքէ ձեր հաւատքը, որպէսզի հաւատաք Աստուածային բազմապատկման:

## ԻՍ ԴԺԳՈՂՈՒԹԻՒՆԸ

Այն բանէն յետոյ, երբ «Սատանայի խայծը» գիրքը սկսաւ տարածուիլ ոչ միայն Միացեալ Նահանգներու, այլեւ այլ երկիրներու մէջ, դուք կրնաք մտածել, որ ես գոհացայ: Սակայն ատիկա տեղի չունեցաւ: Ես սկսայ պայքարիլ դժգոհութեան հետ՝ այլ մակարդակի վրայ:

Այժմ ես կը քարոզէի շատ աւելի մեծ եկեղեցիներու եւ համաժողովներու մէջ, բայց իմ հիասթափութիւնը կը բխէր այն փաստէն, որ ես չէի կրնար փոխանցել մարդոց իմ ամբողջական ուղերձը մէկ ծառայութեան ընթացքին: Ես կը տրամադրեմ գրեթէ 400 ժամ՝ մէկ գիրք գրելու համար, եւ այդ ընթացքին Սուրբ Հոգին այնքա՛ն բան կը յայտնէ ինծի: Այս ճշմարտութիւնները կը յայտնուին այն մարդոց, որոնց Աստուած կը սիրէ՝ անոնց զօրացնելու, ազատութիւն տալու եւ Իրեն մօտեցնելու համար:

Գրեթէ բոլոր եկեղեցիներուն եւ համաժողովներուն մէջ խօսքի

համար յատկացուած ժամանակը 35-45 վայրկեան է: Այնպէս որ, քարոզելով «Սատանայի խայծը» գիրքի մասին, ես կրնայի ներկայացնել մէկ, լաւագոյն պարագային՝ մէկուկէս գլուխի նիւթ: Կը նշանակէ՝ այդ ուղերձի 90 տոկոսը չէր հասներ մարդոց, եթէ անոնք չզնէին եւ չկարդային գիրքը: Իսկ աստիկա պիտի ընէր միայն ներկաներուն մօտաւորապէս մէկ հինգերորդը:

Այդ հիասթափութենէն դրդուած, այդ գիրքի հրատարակումէն չորս կամ հինգ տարի յետոյ գաղափար մը ծնաւ. ինչո՞ւ չստեղծել դասընթացք այդ գիրքին հիման վրայ: Ես կրնայի 20-30 վայրկեան տեսողութեամբ ուսումնական տեսանիւթեր ծայնագրել եւ անդրադառնալ իւրաքանչիւր գլուխի առանցքային ճշմարտութիւններուն: Եւ մարդիկ՝ թէ՛ փոքր խումբերու, թէ՛ անհատապէս, կրնային ամբողջութեամբ իւրացնել այդ ուղերձը՝ ոչ միայն ընթերցելով այն, այլեւ դիտելով եւ լսելով: Ատիկա ա՛լ աւելի արդիւնաւէտ եւ հասանելի կը դարձնէր այդ ուղերձը: Մենք կրնայինք ստեղծել քննարկման հարցումներ անհատներու եւ փոքր խումբերու համար, ինչ որ հնարաւորութիւն պիտի տար Սուրբ Հոգիին խորապէս հպելու մարդոց եւ աւելի կիրառելի դարձնելու այդ ուղերձը իւրաքանչիւրին համար:

Ես քննարկեցի աստիկա մեր խումբին հետ: Մեր խումբի անդամներէն մէկը առաջարկեց փնտռել որեւէ կրթական ընկերութիւն, որ կը ստեղծէր սերտողութեան ձեռնարկ կամ աշխատանքային գիրք, ինչպէս նաեւ ձեռնարկ փոքր խումբեր վարողներու համար, որոնք պիտի ամբողջացնէին այդ տասներկու տեսանիւթերը: Այդ դասընթացքը կրնար օգտագործուիլ տարբեր պայմաններու մէջ:

Մենք գտանք այդպիսի նիւթեր պատրաստող գերագանց ընկերութիւն մը, որ կը կատարէր այդ աշխատանքը աւելի քան 2.500 յաճախորդներու համար, որոնց կարգին էր Միացեալ Նահանգներու խոշորագոյն ընկերութիւններէն քանի մը հատը: Յատկապէս սկիզբէն մենք խնդրեցինք հետեւեալը. «Ո՛չ մէկ թերացում աշխատանքի մէջ, ո՛չ մէկ փոխգիջում որակի հարցի մէջ, նաեւ խիստ նորարարական մօտեցում: Մեր նպատակն է՝ տարիներով առջեւ երթալ ներկայ չափանիշներէն ե՛ւ ոճով, ե՛ւ մեթոտներով»: Որպէս կողմնակի նշում, ես արտօնութիւն ունեցած եմ Աստուածաշնչեան ուսումնասիրութիւն անցընելու մեր ԱՄՆ նախագահներէն մէկուն աշխատակազմին համար: Մտնելով Սպիտակ տուն՝ Արեւմտեան թելէն, ես ամէնուր գերագանցութիւն կը տեսնէի: Այդ օրը մտածեցի. «Այս ամէնը կը ներկայացնէ Միացեալ Նահանգներու նախագահին. մենք «Մեսինճրը Ինթերնեշընը»-ի մէջ կը ներկայացնենք տիեզերքի Թագաւորին»:

Թէեւ մեր ծառայութիւնը շեշտադրած է գերազանցութիւնը յատկապէս սկիզբէն, այդ փորձառութենէն յետոյ մենք ա՛լ աւելի վճռականօրէն տրամադրուեցանք երբեք փոխզիջման չերթալ որակի հարցին մէջ եւ ոչ մէկ թերացում ունենալ մեր գործին մէջ:

Հազիւ որ մեր ամբողջական դասընթացքը պատրաստ եղաւ, մեր խումբի անդամներէն երկուքի պարտականութիւնները վերաբաշխուեցան. անոնք սկսան լրիւ դրոյքով հեռախօսազանգեր կատարել (որ տակաւին առաջնորդներու հետ կապ հաստատելու լաւագոյն միջոցն էր վաղ 2000-ականներուն): Անոնց յանձնարարուած էր կապ հաստատել իւրաքանչիւր եկեղեցւոյ հետ, ուր մենք հիւրընկալուած էինք վերջին տասը տարուան ընթացքին, եւ տեղեկացնել առաջնորդներուն մեր դասընթացքի մասին: Մեր սրտի ցանկութիւնն էր կենալ հովիւներու կողքին եւ օգնել աշակերտելու իրենց եկեղեցւոյ անդամներուն՝ վերջաւորութեան զօրացնելով տեղական եկեղեցին: Այդ ժամանակ նման դասընթացքները այդքան ալ շատ չէին. այդ գաղափարը տակաւին տարածուած չէր:

Մենք այնքա՛ն ուրախացանք, երբ եկեղեցիներու առաջնորդները հաւանութիւն տուին մեր գաղափարին. անոնց արձագանգը աներեւակայելի՛ էր: Կարձ ժամանակ յետոյ եկեղեցիները սկսան գրել մեզի, որ իրենց յաճախելիութիւնը կ'աւելնայ թէ՛ փոքր խումբերու մէջ, թէ՛ գլխաւոր հաւաքոյթներու ընթացքին: Սկիզբը մենք կը մտածէինք, որ միայն հարիւրէն պակաս անդամներ ունեցող եկեղեցիները կ'օգտագործէին այդ դասընթացքը իրենց ծառայութիւններու ժամանակ: Այնուամենայնիւ, նոյնիսկ քանի մը եկեղեցիներ, որոնց անդամներու թիւը կը հասնէր քանի մը հազարի, կ'օգտագործէին մեր տեսանիւթերը իրենց կիրակնօրեայ ծառայութիւններուն ժամանակ: Եւ անոնք նոյնպէս կ'աճէին: Առաջնորդները կը գրէին մեզի, որ իրենց եկեղեցիներու անդամները կը խնդրէին ցոյց չտալ յաջորդ դասը, քանի որ շաբաթավերջին տօն էր, եւ անոնք տունը պիտի չըլլային եւ ներկայ պիտի չգտնուէին ծառայութեան: Մեզի կը գրէին եկեղեցիներ, որոնք կրկնապատկուած էին եւ նոյնիսկ՝ եռապատկուած:

Հովիւները կը պատմէին իրենց հովիւ ընկերներուն, թէ ինչ տեղի կ'ունենար իրենց եկեղեցիներուն եւ փոքր խումբերուն մէջ: Եւ արդէն հովիւները կը հեռաձայնէին մեզի՝ ցանկալով ձեռք ձգել մեր դասընթացքը: Քանի մը տարուան ընթացքին մեզի միացան հազարաւոր եկեղեցիներ՝ աւելի քան քսան հազար եկեղեցի Միացեալ Նահանգներու եւ աւելի քան հազար եկեղեցի Աւստրալիոյ մէջ: Մեր եկեղեցական յարաբերութիւններու բաժինը մեծցաւ՝ հասնելով եօթ

լրիւ դրոյթով աշխատող խումբի անդամի: Մեր գրասենեակը շարունակ վկայութիւններ կը ստանար փոխուած կեանքերու, ընտանիքներու եւ եկեղեցիներու մասին:

Յաջորդ քանի մը տարիներու ընթացքին մենք պատրաստեցինք դասընթացքներ իւրաքանչիւր գիրքի համար, որ մեր ծառայութիւնը թողարկած էր: Տասներկու տարուան ընթացքին մենք արդէն ունէինք աւելի քան տասը տարբեր դասընթացքներ, որոնք կ'օգտագործուէին եկեղեցիներու մէջ՝ ամբողջ Միացեալ Նահանգներու եւ Աւստրալիոյ տարածքին:

Այս բազմապատկումը ունէր կողմ մը, որ մենք չէինք նախատեսած, բայց որուն մասին իմացանք հետագային: Անթիւ անհատներ, որոնք երբեք չէին գնած իմ գիրքերէն մէկը եւ չէին լսած իմ քարոզները, այժմ կը ստանային այդ ուղերձները: Անոնք կը գտնուէին այն եկեղեցիներու կամ փոքր խումբերու մէջ, որոնց առաջնորդները որոշած էին դասաւանդել անոնց մեր նիւթերով:

### «ՂՈՒՆ ՀԱՄԱՏՐԻՄ ԵՂԱՐ»

Անշուշտ, մենք լեցուած էինք գոհութեամբ: Վաճառուած գիրքերու քանակը կը հասնէր միլիոններու, իսկ դասընթացքներունը՝ հարիւր հազարներու: Բայց ես տակաւին կը պայքարէի դժգոհութեան հետ: Ես գիտէի՝ այդ ուղերձները Քրիստոսի մարմինի համար էին: Թէեւ ատոնք արդէն իսկ մեծ պտուղ կը բերէին, դեռեւս կային բազմաթիւ հաւատացեալներ, որոնց անհրաժեշտ էին ատոնց մէջ գտնուող ճշմարտութիւնները:

Ես կը խնդրէի Աստուծոյ արտօնել ինձի, որ աւելի շատ գիրքեր նուիրէի, քան մենք կը վաճառէինք: Ես գիտէի, որ կային հովիւներ, առաջնորդներ եւ հաւատացեալներ աշխարհի տարածքին, որոնք չունէին դրամ եւ նոյնիսկ՝ հնարաւորութիւն, որպէսզի գիրքեր գնէին: Կային միլիոնաւոր ընդատակեայ եկեղեցիներ, որոնց երկիրներուն մէջ քրիստոնէական գիրքերու վաճառքը արգիլուած էր: Կային բազմաթիւ հաւատացեալներ այլ երկիրներու մէջ, որոնք չունէին միջոցներ՝ գիրքեր ներմուծելու համար:

Ինչպէ՞ս մենք կրնայինք օգնել անոնց:

Ես գիտէի, թէ որքան մեծ էր այդ կարիքը, սակայն կը թուէր՝ այդ հովիւներուն եւ առաջնորդներուն հետ կապ հաստատելը անհնար էր: Այնուամենայնիւ, մենք պէտք է ինչ որ բան մը ձեռնարկէինք: Մենք սկսանք արձագանգել այն կարիքներուն, որոնց կը հանդիպէինք: Մենք ըսինք մեր միջազգային տնօրէնին, որ եթէ ըլլային առաջնորդներ



զարգացող երկիրներին կամ այն երկիրներին, ուր քրիստոնեաները հավածանքներու կ'ենթարկուին (որոնք գիրքեր կ'ուզէին մեզմէ), մենք կ'ուղարկէինք անոնց անհրաժեշտ ամէն ինչ՝ որպէս նուէր, կամ կը կազմակերպէինք տպագրութիւնը անոնց երկիրին մէջ եւ կը վճարէինք ատոր համար:

Իմ հիասթափութիւնը կ'աւելնար, քանի որ մենք միայն աննշան աշխատանք կը կատարէինք՝ նուիրելով տարեկան տասէն քսան հազար գիրք: Այդ թիւը նման էր դոյլի մէջ եղած կաթիլի՝ այն աշակերտական նիւթերու քանակին համեմատ, որուն կարիքը կար, սակայն մենք կը շարունակէինք ընել ատիկա ամէն տարի՝ օգտագործելով մեզի ընծեռուող հնարաւորութիւնները:

Ատորմէ յետոյ եկաւ 2010 թուականի ուշագրաւ օրը (31 Մայիսը): Լիզան Անգլիա էր. ան հրաւիրուած էր ծառայելու կանանց համաժողովի մը: Ես նոր կոլֆի խաղամիջոց մը աւարտած էի: Վերցուցի Աստուածաշունչս եւ իջայ մեր նկուղը, քանի որ Դանիէլի գիրքը կարդալու մղում զգացի: Երբ կը կարդայի երկրորդ գլուխը, յանկարծ Աստուծոյ Հոգին լեցուց մեր նկուղը, եւ ես լսեցի այս խօսքերը իմ սրտին մէջ. «Որդի՛ս, դուն *հաւատարիմ* եղար անգլիախօս աշխարհին մէջ: Այժմ ես կը ցանկամ, որ հասցնես քու ուղերձները աշխարհի տարածքին գտնուող իւրաքանչիւր հովիւի եւ առաջնորդի»:

Աստուծոյ ներկայութիւնը մնաց քանի մը վայրկեան: Երկիւղած եւ զարմացած՝ ես անշարժ մնացի հոն, մինչեւ որ այն վերցուեցաւ: Այդ օրը հասկցայ, որ փոփոխութիւն տեղի ունեցած էր: Մենք այլեւս ուղղակի պիտի չօգտագործէինք մեզի ընծեռուող հնարաւորութիւնները. այժմ մենք Աստուածային յանձնարարական ունէինք: Մենք նպատակաւորաբար անպիտի փնտռէինք հովիւներ եւ առաջնորդներ, որոնք կարիքի մէջ էին՝ անկախ անոնց ազգութենէն, լեզուէն եւ ֆինանսական կարողութենէն:

Սուրբ Հոգիին հետ այդ հանդիպման ընթացքին ակնառու էր այն, որ Ան օգտագործեց *«հաւատարիմ»* բառը: Այդ ժամանակ ես չէի կապակցեր *«հաւատարիմ»* բառը բազմապատկման հետ. այս ճշմարտութիւնը տակաւին չէր յայտնուած ինծի: Եթէ ինծի հարցնէին, թէ որն էր *«հաւատարիմ»* բառի Աստուածաշնչեան սահմանումը, *«բազմապատկում»* բառը ոչ մէկ պարագային կ'ըլլար իմ պատասխանին մէջ: Այն, ինչ որ Սուրբ Հոգին ըսաւ ինծի մեր տան նկուղը, բացաւ իմ սիրտը այս ճշմարտութեան համար: Ես գիտէի, որ լսած էի Աստուծմէ, բայց տակաւին կը վիճարկէի, թէ ինչպէս մեր ծառայութիւնը կրնար նման վիթխարի առաջադրանք կատարել:

Մենք ունէինք վաղեմի ընկեր մը՝ Ռոպ Պիրքպէքը, որ կ'աշխատէր

յայտնի անետարանիչի խոշոր միջազգային ծառայութեան մէջ: Ռոպը այդ ծառայութեան աւագ տնօրէնն էր, եւ անոր պարտականութիւններու կարգին էր տպագրել եւ տարածել այդ անետարանիչի գիրքերը: Այնպէս որ, Ռոպը մեծ կապեր ունէր հրատարակիչներու եւ հովիւներու հետ աշխարհի գրեթէ իւրաքանչիւր երկիրի մէջ: Վերջերս Ռոպը կորսնցուցած էր իր աշխատանքը, քանի որ այդ անետարանիչը թոշակի գացած էր: Լիզան եւ ես առաջարկեցինք Ռոպին եւ անոր կնոջը՝ Վանեսային, միանալու մեր խումբին, քանի որ մեր ծառայութեան միջազգային տնօրէնը հեռացած էր աշխատանքէն: Մեզմէ ոչ ոք կը պատկերացնէր այդ համագործակցութեան հետագայ ազդեցութիւնը:

2011 թուականի Յունուարն էր: Ռոպը եւ Վանեսան ներկայ էին մեր ծառայութեան բաժիններու ղեկավարներուն ժողովին մեր խորհրդակցութիւններու սենեակը: Այդ ժողովի ընթացքին ես հարցուցի.

- Քանի՞ գիրք մենք նուիրած ենք օտարերկրեայ հովիւներուն եւ առաջնորդներուն անցեալ տարի:

Մեր խումբի անդամներէն մէկը նայեցաւ տարեվերջի զեկոյցին եւ պատասխանեց.

- Երեսունհինգ հազար գիրք:

Ան մտածեց, որ գոհացնող արծագանգ պիտի ստանար, բայց կատարուեցաւ ճիշդ հակառակը: Իմ հիասթափութիւնը պորթկաց.

- Որքան աննշան թիւ:

Եւ յանկարծ իմ բերանէն թռաւ հետեւեալը.

- Այս տարի մենք պիտի նուիրենք 250.000 գիրք զարգացող երկիրներու մէջ ապրող եւ հալածանք կրող հովիւներուն եւ առաջնորդներուն:

Ամբողջ սենեակը քար լռութիւն տիրեց: Հետագային Լիզան ըսաւ ինձի, որ այդ պահուն ան զգացած էր իր ստամոքսէն վեր բարձրացող կերակուրի համը (ան չափազանց զուարթամիտ է եւ կատակասէր):

Մեր զլխաւոր գործառնական տնօրէնը, որ մեր աւագ որդին է, առաջինն էր, որ խօսեցաւ:

- Հայրի՛կ, - ըսաւ Էտիսընը, - դուն համոզուա՞ծ ես, որ կ'ուզես այդքան շատ գիրք նուիրել:

- Այո՛, մենք կ'ընենք ատիկա, - համոզուածութեամբ պատասխանեցի:

Ան շարունակեց հարցումներ հարցնել ինձի յաջորդ 20 վայրկեաններու ընթացքին: Մենք կը խօսէինք անոնց ներկայութեամբ, որոնք լուռ էին: Ան շատ յարգալից էր, բայց անդադար կը պնդէր, որ իմ

հրահանգը չափազանց ծանր էր: Վերջապէս ան վիատած ըսաւ.

- Ես պարզապէս չեմ ցանկար անիրատեսական նպատակ տալ մեր խումբին:

Ես այլեւս չէի պատրաստուէր հանդուրժելու ատիկա: Եւ բռունցքով հարուածեցի սեղանին ու խստօրէն յայտարարեցի.

- Ես ըսի՝ մենք այս տարի 250.000 գիրք պիտի բաժնենք:

Սենեակը լռութիւն տիրեց: Շուտով ժողովը աւարտեցաւ, եւ բոլորս հեռացանք՝ անախորժ զգացումով:

Յաջորդ առաւօտեան, երբ առանձին էինք, որդիս ըսաւ.

- Ես տհաճութիւն զգացի այն պատճառով, թէ ինչպէս դուն խօսեցար հետս:

Մենք արդէն հանդարտած էինք եւ կը ցանկայինք հաշտուիլ:

- Որդի՛ս, դուն գիտես, որ ես կը սիրեմ մեր խումբի ներդրումը գործին մէջ, - պատասխանեցի: - Սովորաբար ես կը կշռադատեմ իւրաքանչիւրի առաջարկները՝ մինչեւ վերջնական որոշում կայացնելը: Սակայն երէկ ամէն ինչ ուրիշ էր: Ես չհարցուցի ձեզի. «Կը կարծէք՝ մենք պէ՞տք է նուիրենք 250.000 գիրք», կամ «Ձեր կարծիքով, քանի՞ գիրք պէտք է նուիրենք յաջորդ տարի»: Ես տեղեկացուցի ձեզի, որ մենք պիտի ընենք ատիկա: Բայց դուն քսան վայրկեան շարունակ վիճեցար հետս:

Ան ընդունեց ատիկա եւ համաձայնեցաւ հետս, բայց եւս բան մը խնդրեց ինձմէ, այս անգամ՝ խաղաղ կերպով.

- Հայրի՛կ, կրնա՞ս աղօթել ատր համար 24 ժամ: Եթէ ատորմէ յետոյ դուն տակաւին համոզուած ըլլաս, որ մենք պէտք է ընենք ատիկա, մեր խումբը պիտի գործադրէ բոլոր ջանքերը՝ ատիկա կատարելու համար:

- Այո՛, ես պիտի ընեմ ատիկա, - պատասխանեցի:

Անկեղծ ըլլալու համար, ես շատ չաղօթեցի ատոր համար: Կարճ աղօթք ըրի՝ իմ խոստումը պահելու համար, բայց նկուղին մէջ ունեցած իմ հանդիպումէն յետոյ արդէն գիտէի, որ մենք պէտք է ընէինք ատիկա:

Թերեւս հարցնէք. «Դուք կը զգա՞ք անհանգստութիւն»: Կրնաք չկասկածիլ: Ես գրեթէ կը սարսափէի: Ես առիթ չէի տար ինձի շարունակ մտածելու, թէ ուրկէ պիտի գային ֆինանսները: Եթէ առիթ տայի ատոր, շուտով պիտի համաձայնէի որդիիս հետ եւ պիտի հասցնէի գիրքերու թիւը աւելի «ողջամիտ» թիւի: Մէկ քառորդ միլիոն գիրքը անկարելի նպատակ կը թուէր, բայց ես վճռած էի հետեւիլ այն հրահանգին, որ ստացած էի: Ես գիտէի, որ կա՛մ մենք պիտի ստանայինք ստեղծարար ռազմավարութիւն, կա՛մ հրաշքով մատակարարում պիտի գար: Ուրկէ՞ իմանայի, որ երկուքն ալ տեղի պիտի ունենար:

Երեք շաբաթ յետոյ պանդոկ մըն էի՝ Ֆլորիտայի մէջ, եւ նոր գիրք կը գրէի: Մեր խումբը գիտէ, որ կարելի չէ հեռաձայնել ինծի առաւօտեան ժամերուն, քանի որ այդ ժամանակ ես կը գրեմ. ինծի համար ատիկա լաւագոյն ժամանակն է, երբ կը կարենամ կեդրոնանալ: Իմ բջիջային հեռախօսը հնչեց, եւ ես տեսայ, որ զանգը մեր գրասենեակէն է: Պատասխանեցի, քանի որ գիտէի, որ պէտք է ինչ որ հրատապ կամ կարելոր բան տեղի ունեցած ըլլար: Ես զգացի, որ գրասենեակը ուրախութեան մթնոլորտ էր: Նոյն մարդիկ, որոնք կը մասնակցէին այդ լարուած, առերեսողական հանդիպումին երեք շաբաթ առաջ, այն սենեակն էին, ուրկէ ես հեռաձայն ստացայ, եւ կարծես կ'ուրախանային եւ կը ծիծաղէին ինչ որ բանի մը պատճառով:

Էտիսընը ըսաւ.

- Հայրի՛կ, մենք պաշտօնապէս չէինք յայտարարած մեր ֆինանսական գործընկերներուն, որ կը պատրաստուինք 250.000 գիրք տարածելու: Մեր խումբի անդամներէն մէկը կը զրուցէր իր ծանօթներէն մէկուն հետ, եւ երբ այդ մարդը գիտցաւ մեր ծրագիրին մասին, խոստացաւ 300.000 տոլար նուիրաբերել այս նախագիծին:

Մինչ այդ ամենամեծ նուիրատուութիւնը, որ մեր ծառայութիւնը ստացած էր, 50.000 տոլար եղած էր: Ես նոյնպէս միացայ անոնց ուրախութեան: Բազմաթիւ բերկրալից եւ հիացական մեկնաբանութիւններէն յետոյ բոլորին ըսի.

- Հիմա դուք կը հասկնա՞ք, թէ ինչու ես այդքան հաստատակամ էի երեք շաբաթ առաջուան այդ հանդիպումին:

Որդիս ծիծաղեցաւ եւ արագօրէն պատասխանեց.

- Հայրի՛կ, եթէ դուն ըսես մեզի, որ մենք պիտի տարածենք մէկ միլիոն գիրք, ես անվարան կը միանամ քեզի:

Միւսները ի սրտէ համաձայնեցան:

Երբեք չեմ մոռնար այդ առաւօտը: Ես վար դրի հեռախօսը եւ այլեւս չկրցայ գրել: Ես միայն կրնայի առջեւ-ետեւ քալել իմ պանդոկի սենեակը՝ ըսելով. «Շնորհակալ՛ եմ: Շնորհակալ՛ եմ: Շնորհակալ՛ եմ»: Ամբողջ այդ ընթացքին արցունքները կը հոսէին աչքերէս: Իմ սրտին մէջ ես միայն կը տեսնէի հոգեւոր քաղց ունեցող հովիւներու եւ առաջնորդներու, որոնք կը ստանային իրենց համար շատ անհրաժեշտ աշակերտական նիւթեր:

Ես այնքա՛ն շնորհակալ եմ, որ Էտիսընը անկեղծ գտնուեցաւ եւ սկսաւ հարցումներ հարցնել ինծի: Ես ուրախ եմ, որ ան չպահեց իր մտքերը, այլ արտայայտեց այն զգացումները, որոնք շատերը այդ սենեակին մէջ կը բաժնեկցէին: Հաւանաբար, անոնք կը լսէին իրենց

իսկ մտահոգությունները էտիսընի հարցումներուն մէջ, եւ բոլոր այդ մտքերուն անհրաժեշտ էր ընդդիմանալ: Այդ պատմութիւնը դրդեց մեզ երես առ երես բախելու մեզի հակառակող վախերուն, եւ եթէ մենք լսէինք ատոնց, հաւանաբար, կը փոխէինք մեր ընթացքը եւ կը մնայինք մեր հնարաւորութիւններու սահմաններուն մէջ: Մեր տեսիլքը կը մարէր, եւ մենք այդքան մեծ, առատածեռն նուիրատուութիւն չէինք ստանար: Թերեւս կը նուիրէինք յիսուն հազար գիրք կամ այդպէս ալ կը մնայինք անորոշ վիճակի մէջ:

Մենք նպատակ դրինք. Սուրբ Հոգին լսեց այն եւ հպեցաւ այդ մարդու սրտին՝ այդ արտասովոր նուիրատուութիւնը կատարելու համար: Մեր խումբը բարձրացաւ հաւատքի նոր մակարդակ:

Այդ տարի Աստուծոյ շնորհքով մենք կրցանք նուիրել 271.700 գիրք 48 երկիրներու մէջ գտնուող հովիւներուն եւ առաջնորդներուն: Այդ երկիրներու կարգին էին Իրանը, Իրաքը, Սուրիան, Լիբանանը, Ուզպէստանը, Ղազախստանը, Թուրքմենստանը, Խորուաթիան, Ալպանիան, Եգիպտոսը, Վիեթնամը, Միանմարը, Քամպուտիան, Չինաստանը, Մոնկոլիան, Թուրքիան, անթիւ կարիքաւոր ափրիկեան պետութիւններ եւ այլն: Նախորդ տարիներու ընթացքին մենք կը նուիրէինք տասնեակ հազարաւոր գիրքեր. այժմ հասած ենք աւելի քան մէկ քառորդ միլիոնի: Մեր ծառայութեան ազդեցութիւնը աճեցաւ աւելի քան ութը անգամ: Փա՛ռք Աստուծոյ, ատիկա մեծ բազմապատկում է:

## ԱՒԵՆԻ ՄԵԾ ԴԺԳՈՂՈՒԹԻՒՆ

Կրնա՞ք արդեօք ըլլալ աւելին:

Մեր ծառայութեան խորհուրդի սենեակը սաստիկ բախումէն չորս ամիս յետոյ՝ 2011 թուականի Մայիսին, Ռոպը եւ ես կը գտնուէինք Պէյրութ՝ Լիբանան, ուր կը ծառայէինք ամբողջ Մերձաւոր Արեւելքէն եկած հովիւներու եւ առաջնորդներու: Հաւաքոյթներու ընդմիջումներէն մէկուն ընթացքին Ռոպը մօտեցաւ ինծի խնդրանքով մը.

- Հոս կայ հովիւ մը Իրաքիլէն՝ Իրաքէն, որ կը ցանկայ կարճ զրուցել քեզի հետ: Կը ցանկա՞ս հանդիպիլ անոր:

- Անշո՛ւշտ՝ այո:

Ռոպը կազմակերպեց մեր հանդիպումը պանդոկի նախասրահը: Այդ հովիւը երիտասարդ էր՝ մօտաւորապէս 35 տարեկան, եւ անոր աչքերը կը վառէին աւինով ու եռանդով: Ես տեսայ, որ ան լրջօրէն տրամադրուած էր Աստուծոյ Թագաւորութիւնը կառուցելու հարցին մէջ: Ան հագած էր ծառայութեան համար, եւ անոր լամբը ուժգին լոյս կու տար: Ան եկած էր Իրաքիլէն մէկ պատճառով՝ ուսմունքէն

Եւ հաւաքոյթներէն զօրութիւն ստանալու համար: Ես անմիջապէս կրնայի ըսել, որ ան յառաջադէմ եւ նորարար առաջնորդ էր, որ կը գիտակցէր կորսուածներու համար հասկնալի եւ հասանելի ըլլալու կարելորութիւնը:

Մեր զրոյցը սկսաւ որպէս թեթեւ եւ հաճելի քննարկում, բայց ի վերջոյ այն վերածուեցաւ լուրջ խօսակցութեան: Ան ըսաւ.

- Հովի՛ւ Պիվիր, ես հոգեւոր հայր կը համարեմ ձեզ: Կը կարդամ այն ամէնը, ինչ որ դուք կը գրէք (իմ գիրքերէն քիչերը թարգմանուած էին անոր լեզուով, բայց ան անգլերէն գիտէր): Ես նոյնիսկ կ'օգտագործեմ իմ դրամատոնային քարտը՝ ներթեւեւելու համար ձեր նիւթերը «Մեսիանձըր Ինթերնէշընլ» կայքէն...

Այդ պահուն ներսս ամէն ինչ կանգ առաւ: Անկեղծ ըլլալու համար, չեմ յիշեր, թէ ուրիշ ինչի մասին մենք խօսեցանք: Իմ միտքը կը գոչէր. *«Ես կը նայիմ հովիւի մը Իրաքէն՝ քայքայուած եւ պատերազմէն տուժած երկրէ մը, եւ ան ստիպուած օգտագործած է իր դրամատոնային քարտը, որպէսզի նիւթե՞ր առնէ մեր կայքէն»*: Ես անհամբեր կը սպասէի, որ մինակ մնայի Տիրոջ հետ եւ ուղղի անոր այդ ծանր կարիքը:

Անոր հրաժեշտ տալէն յետոյ անմիջապէս գացի իմ պանդոկի սենեակը եւ փակեցի դուռը: Ես այնքան յուսալքուած էի, որ բացականչեցի.

- Աստուա՛ծ, Դուն պէտք է ցոյց տաս ինձի, թէ ինչպէս հասցնենք այն ուղերձները, որոնք Դուն վստահած ես մեզի, ամբողջ աշխարհի տարածքին գտնուող հովիւներուն եւ առաջնորդներուն, որոնք ատոնց կարիքը ունին:

Ինձի բոլորովին չէր մտահոգեր, թէ ով կը գտնուէր իմ կողքի սենեակը: Ես պէտք է ստանայի մարտավարութիւն Երկինքէն, որպէսզի հասկնայի, թէ ինչպէս կատարէի Անոր յանձնարարականը՝ հասցնել մեր նիւթերը այդ առաջնորդներուն:

Ոչ շատ օրեր յետոյ, այդ եռանդուն աղօթքէն յետոյ մարտավարական գաղափար ծնաւ, որ մեծապէս պիտի բազմապատկէր մեր ծառայութեան ազդեցութիւնը եւ պիտի դարձնէր այն աւելի արդիւնաւէտ՝ առանց մեծ լրացուցիչ աշխատանքի կամ ծախսերու:

Ատիկա փայլուն միտք էր... եւ կրնար ըլլալ միայն Աստուծոյ իմաստութիւնը: Ատիկա այնքան պարզ էր, սակայն մենք չէինք մտածած այդ մասին: Շարունակեցէ՛ք կարդալ:

## ՄՏՈՐԵՑԷՔ

1. Հիասթափությունը եւ դժգոհությունը յաճախ կրնան խթանիչ դառնալ՝ բորբոքելով մեր հաւատքը բազմապատկման համար: Արդեօ՞ք Աստուած կը դրդէ ձեզ աճելու ձեր կեանքի որոշակի բնագաւառին մէջ: Եթէ այո, ինչպէ՞ս կ'արձագանգէք Անոր մղումներուն:
2. Եթէ դժգոհութեան պատճառը ձեր անձնական կարիքն է, այն հաճելի չէ Աստուծոյ: Սակայն եթէ դժգոհութեան պատճառը այլ մարդոց կարիքները եւ Աստուծոյ Թագաւորութիւնը կառուցելն է, այն հաճելի է Անոր: Ո՞րն է ձեր դժգոհութեան պատճառը:
3. Մտածեցէ՛ք 250.000 գիրք նուիրելու իմ պատմութեան մասին: Ինչո՞ւ անհրաժեշտ է հաւատք ունենալ՝ Աստուծոյ խոստումները ստանալու եւ բազմապատկման նոր մակարդակներու հասնելու համար: Ինչո՞ւ կարելոր է, որ դուք հնազանդիք Աստուծոյ, նոյնիսկ եթէ միւսները համաձայն չեն ձեզի հետ:



# MessengerX

*Ձեր յաւելուածը՝ ամենօրեայ աշակերտութեան համար*



## Բոլորովին անվճար

Պարզապէս ներբեռնեցէ՛ք ձեր  
շարժական գործիքին վրայ և  
օգտագործեցէ՛ք:  
Կամ օգտագործեցէ՛ք ուեյ-  
տարբերակը հետևեալ հասցեով:



**MessengerX.com**

## 110+ լեզուներ, որոնց թիւը կ'աւելնայ



Ակնթարթօրէն դիտեցէ՛ք թարգմանուած սիւթեր  
աւելի քան 110 լեզուներով:



Եւ մենք շարունակ կ'աւելցնենք նոր  
թարգմանուած սիւթեր:




## Դիտեցե՛ք: Կարդացե՛ք: Լսեցե՛ք:

Չետագօտեցե՛ք նիւթերու ընդարձակ դարանը, որ կ'ընդգրկէ դասընթացքներ, էլեկտրոնային գիրքեր, օտեօ գիրքեր, կարճամեթրած ֆիլմեր և անէլին, որոնք կրնաք դիտել, կարդալ և լսել:



### Անէլի շատ հնարաւորութիւններ, որոնք ձեզի հաճելի է

- Պարզ և դիւրին գործիքներ, որոնք կ'օգնեն ձեզի բաժնետեղելու այս նիւթերով:
- «Chromecast» և «AirPlay»՝ ձեր սիրելի սմարթ հեռախօսիներով դիտելու համար:
- Պահպանեցե՛ք ձեր յառաջադիմութիւնը ձեր բոլոր գործիքներուն վրայ: Պահպանեցե՛ք ձեր նախընտրելի նիւթերը ձեր գրադարանին մէջ՝ արագ մուտքի համար:
- Ներբեռնեցե՛ք նիւթերը ձեր գործիքին վրայ՝ անցանց դիտելու համար:
- Խելացի որոնում և գտում՝ գտնելու համար ճիշդ այն, ինչ կը փնտռեք:




## Աճ ամենակարևոր բնագավառներուն մեջ

Չետագօտեցէ՞ք այնպիսի թեմաներ, ինչպիսիք են ընտանիքը, առողջ փոխյարաբերութիւնները, ձեր կեանքի նպատակը, ազատութիւնը պոռնոկրաֆիայէն, ձեր հաւատքը կառուցելը, Աստուծոյ ձայնը լսելը, ձեր գործը ղեկավարելը և անլին:

## Ձեր աճի ուղին

MessengerX-ի նպատակն է օգնել ձեզի, որ ընէք յաջորդ քայլը ձեր կեանքին մէջ: Մենք ստեղծած ենք աշակերտական ուղի՝ ազդեցիկ գործիքներով, որոնք պիտի օգնեն ձեզի մնալու այդ ուղիին վրայ:



- 1 Ներբեռնե՛ք **MessengerX** յաւելուածը «Apple Store»-էն և «Google Play»-էն:
- 2 Ստեղծե՛ք հաշիւ և օգտուե՛ք յաւելուածէն ձեր լեզուով:
- 3 Փնտռե՛ք, կարդացե՛ք, դիտե՛ք, լսե՛ք և ներբեռնե՛ք ձեր նախընտրելի նիւթերը և կիսուե՛ք ատոնցմով:


## Դարձե՛ք աշակերտ և աշակերտե՛ք

**MessengerX**-ի մաս, դուք կ'օգնէք մեզի տրամադրելու այս թարգմանուած նիւթերը աշխարհով մէկ գտնուող մարդոց:


**Որովհետև իւրաքանչիւրն արժանի է գիտնալու:**



**MessengerX**



**MessengerX.com**



*«Եթե չէք գիտեր ինչ ընել, աղօթեցե՛ք Հօրը:  
Ան կը սիրէ օգնել»:*

– Յակոբոս 1.5, MSG

## ՄԱՐՏԱՎԱՐԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐ

Ամեն տարի աւելի կը համոզուիմ *ոգեշնչուած մարտավարական գաղափարի* անասելի արժէքին մէջ: Յաճախ մենք կը սպասենք, որ Աստուծոյ մատակարարումը կամ միջամտութիւնը տեղի ունենայ առանց որեւէ մարտավարական ծրագիրի, սակայն, որպէս կանոն, այդպէս չ'ըլլար: Աստուած ոգեշնչուած մարտավարական գաղափարներ կու տայ մեզի, եւ ատոնք կ'իրականանան: Աստուածաշնչեան օրինակները այս մասին չափազանց շատ են հոս թուարկելու համար, բայց նշենք քանի մը հատը, որոնք կը սատարեն այս փաստին.

- *Մարտավարական գաղափար* փայտի կտորը լեղի ջուրերու մէջ նետելու մասին, որ միլիոնաւոր մարդիկ կարենային ջուր խմել (կարդացէ՛ք Ելից 15.22-25):
- Եւս մէկ *ոգեշնչուած գաղափար*. ջուր տալ միլիոնաւոր մարդոց՝ ժայռին հարուածելով (կարդացէ՛ք Ելից 17.5,6):
- Վեց օր ամուր քաղաքին շուրջը մէկ անգամ լուռ պտոյտ տալու *մարտավարական գաղափարը*: Իսկ եօթերորդ օրը մէկ այլ *մարտավարական գաղափար*՝ պտոյտ տալ քաղաքին շուրջը եօթ անգամ՝ փողեր հնչեցնելով եւ վերջաւորութեան մեծ զոյհին արծակելով: Այդ բոլորին նպատակն էր՝ մուտք գործել այդ քաղաքը եւ գրաւել (կարդացէ՛ք Յեսու 6-րդ գլուխ):
- Քանի մը տասնեակ հազարանոց բանակի լաւագոյն զինուորներ որոշելու *մարտավարական գաղափար*. պատուիրել զինուորներուն ջուր խմել աղբիւրէն եւ առանձնացնել այն զինուորներուն, որոնք կը պահէին իրենց հայեացքը մարտի դաշտին, ի տարբերութիւն այն զինուորներուն, որոնք իջեցուցած

էին իրենց գլուխները (կարդացէ՛ք Ղատաւորաց 7.4-6):

- Եւս մէկ *մարտավարական գաղափար*. չիրականացնել ճակատային զրոհ թշնամիին վրայ, այլ շրջանցել թշնամիին բանակը՝ յայտնուելով անոր թիկունքը գտնուող անտառը, եւ սպասել՝ մինչեւ թթենիներուն վերը համաքայլ գացող ոտքերու ծայն լսելը, ինչ որ մարտին մէջ Տիրոջ օգնութեան ազդանշանն էր (կարդացէ՛ք Բ. Թագաւորաց 5.22-25):
- Հերթական *մարտավարական գաղափարը*. սաստիկ սովի ժամանակ խնդրել այրի կնոջմէն եւ անոր որդիէն կերակրել մարգարէին իրենց ունեցած վերջին կերակուրով. հնազանդելով՝ անոնք սովամահ չէին ըլլար՝ շատ այլ ընտանիքներու պէս (կարդացէ՛ք Գ. Թագաւորաց 17.8-16):
- *Մարտավարական գաղափար*՝ հարցնել պարտքի մէջ գտնուող այրի կնոջը (որ պիտի կորսնցնէր իր երկու որդիները), թէ ինչ ունի իր տունը: Յաջորդ քայլն էր՝ դասաւորել եւ փոխ վերցնել դատարկ անօթներ՝ ատոնք իր ունեցած քիչ մը ձիթապտուղի իւղով լեցնելու համար, իսկ յետոյ վաճառել իւղը՝ պարտքը զոցելու համար (կարդացէ՛ք Դ. Թագաւորաց 4.1-7):
- *Մէկ այլ մարտավարական գաղափար*. ուղարկել հիւանդութիւն ունեցող զինուորական սպային եօթ անգամ ընկնելու Յորդանան գետը, որուն վերջաւորութեան ան կատարելապէս բժշկուեցաւ (կարդացէ՛ք Դ. Թագաւորաց 5.1-19):
- Փառաբանութեան եւ երկրպագութեան խումբը զօրքէն առաջ ուղարկելու *մարտավարական գաղափար*, որուն արդիւնքը բացառիկ յաղթանակ էր (կարդացէ՛ք Բ. Մնացորդաց 20.21-26):
- Թագաւորի առատ սեղանէն սնուելու փոխարէն բանջարեղէն ուտելու *մարտավարական գաղափար*՝ աւելի առողջ ըլլալու, աւելի լաւ տեսք ունենալու եւ երկիրի լաւագոյն երիտասարդներէն աւելի ակնառու դառնալու համար (կարդացէ՛ք Ղանիէլ 1.8-16):
- Ջուրի սափորները օգտագործելու *մարտավարական գաղափար*՝ լաւագոյն զինին ստանալու համար, որուն նպատակն էր փրկել հարսանեկան խնճոյքը (կարդացէ՛ք Յովհաննէս 2.6-10):
- Քիչ մը կերակուր վերցնելու, օրհնելու, կտրելու եւ բաժնելու *մարտավարական գաղափար*, որուն արդիւնքով կերակուրեցան հազարաւոր մարդիկ (կարդացէ՛ք Մատթէոս 14.13-21):
- Գետինը թթելու, ցեխ պատրաստելու եւ այն կոյր մարդու աչքերուն քսելու *մարտավարական գաղափար*: Յաջորդ քայլն էր՝

պատուիրել այդ կոյր մարդուն երթալ եւ լուացուիլ՝ տեսողութիւնը վերականգնելու համար (կարդացէ՛ք Յովհաննէս 9.6,7):

- *Մարտավարական գաղափար* այն մասին, որ եթէ մարդիկ կը ցանկային փրկուիլ, պէտք չէ ձգելին խորտակուող նաւը (կարդացէ՛ք Գործք 27.21-44):

Իւրաքանչիւր պարագային ոգեշնչուած գաղափարները կը յանգեցնէին Աստուածային միջամտութեան: Դուք կը տեսնէ՞ք այն ընդհանրութիւնը, որ կայ բոլոր այս օրինակներուն մէջ: Համաձայն այս մարտավարութիւններուն, մարդիկ պէտք է օգտագործէին այն, ինչ որ արդէն ունէին. անոնք պէտք է օգտագործէին իրենց պատկանող որեւէ բան կամ պէտք է ինչ որ բան ուրիշ ձեւով ընէին: Իւրաքանչիւր պարագային Աստուածային մատակարարումը փաթեթաւորուած էր սովորականի մէջ: Անկեղծ ըլլալու համար, հրաշք ծնող գլխաւոր տարրը կախարդական կերպով չէր յայտնուեր:

Աստուծոյ կողմէն տրուած մարտավարութիւններու բնոյթը յաճախ հետեւեալն է. *օգտագործել սովորական բաներ անսովոր կերպով՝ արտասովոր արդիւնքներ ստանալու համար*: Այնպէս որ, ոգեշնչուած գաղափար ստանալը անչափ կարեւոր է: Գրուած է. «Իմաստութիւն ստանալը ամենակարեւոր բանն է, որ կրնաս ընել» (Առակաց 4.7, GNT): Աստուածային իմաստութեան ձեւերէն մէկը մարտավարական գաղափարն է, եւ բարի լուրը այն է, որ Աստուած մեզմէ չի ծածկեր Իր իմաստութիւնը: Յակոբոս առաքեալը կը սորվեցնէ մեզի ինչ ընել՝ անսովոր դժուարութիւններու բախելու ժամանակ.

«Եթէ դուք իմաստութեան [մարտավարական գաղափարի] կարիք ունիք, խնդրեցէ՛ք մեր առատածեռն Աստուծմէ, եւ Ան պիտի տայ ձեզի այն: Ան չի յանդիմաներ ձեզ խնդրելու համար» (Յակոբոս 1.5, NLT, քառակուսի փակագիծերու պարզաբանումը իմն է):

Ան յստակ կը յայտնէ Իր իմաստութիւնը. Ան չի պահեր եւ չի ծածկեր այն ձեզմէ, քանի որ խոստացած է: Այնուամենայնիւ, կայ երկու պայման, որոնք անհրաժեշտ է կատարել՝ ոգեշնչուած մարտավարական գաղափար ստանալու համար:

«Պարզապէս հանդուած եղէք, որ դուք կը խնդրէք՝ զօրացած վստահ հաւատքով, առանց կասկածելու, որ պիտի ստանաք: Որովհետեւ երկմտողը նոյն պահուն կը հաւատայ եւ յաջորդ պահուն՝ կը կասկածի: *Անվճռական* ըլլալը կը դարձնէ ձեզ նման բուռն ծովերու, որոնք կը հողմակոծուին եւ կը տատանին



քամիէն: Պահ մը դուք վերն էք, իսկ յաջորդ պահուն՝ վարը: Երբ տատանող եւ *անհաստատ* էք, դուք անկայուն կը դառնաք: Կրնա՞ք արդեօք ակնկալել, որ որեւէ բան կը ստանաք Տիրոջմէն, երբ այդպիսի վիճակի մէջ էք» (Յակոբոս 1.6-8, TPT):

Մենք պէտք է խնդրենք *վստահ հաւատքով*. մենք ոչ թէ *յոյս ունինք*, որ մարտավարական գաղափար կը ստանանք, այլ լիովին կ'ակնկալենք աստիկա: Նոյնպէս, պէտք է ձգտում ունենանք մեր խնդրանքին համար. մենք պէտք է *յուսահատօրէն ցանկանք այն*: Մեր խնդրանքը պէտք չէ բխի անտարբեր եւ անփոյթ վերաբերմունքէն, օրինակ. «*Եթէ ես ստանամ աստիկա, շատ լաւ: Եթէ՝ ոչ, խնդիր չկայ*»: Գոյութիւն ունի յուսահատութեան եւ անսասան վճռականութեան զգացում՝ Աստուծմէ ստանալու համար:

*Մարտավարական գաղափարը* պարզեւ է Աստուծմէ, եւ տրուելուն պէս դուռ կը բանայ դէպի արդիւնաւէտութեան այլ մակարդակ: Այն բազմապատկման զօրութիւն կու տայ մեզի:

## ՈԳԵՆՆՉՈՒԾ ՄԱՐՏԱՎԱՐԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐ

Անդրադառնամ Պէյրութի իմ պանդոկի սենեակին. ես չգացի հոն՝ լուռ աղօթելու. ես պարզապէս չէի կրնար այդպէս աղօթել: Իմ միտքը փակուողի մէջ էր. ոչ մէկ գաղափար ունէի, սակայն գիտէի, որ ինձի վստահուած էր այդ կարիքաւոր եւ հոգեւոր քաղց ունեցող հովիւներուն նիւթեր մատակարարելը: Ես սովորաբար չեմ պորձար պանդոկներու սենեակներուն մէջ, բայց, անկեղծ ըլլալու համար, այդ օրը իմ հոգը չէր, թէ ով կը լսէր ինձի: Աստիկա յուսահատ կանչ էր *մարտավարութիւն* (իմաստութիւն) ստանալու համար, որպէսզի բազմապատկէինք մեր արդիւնաւէտութիւնը:

Որոշ ժամանակ տեւող եռանդուն աղօթքէն յետոյ խաղաղութիւնը լեցուց իմ սիրտը: Ես գիտէի, որ իմ խնդրանքը լսուած էր, եւ թեթեւութիւն վերապրելով՝ հաւատացի, որ պատասխանը պիտի գայ: Իմ սրտէն զոհութիւն բարձրացաւ, թէեւ տակաւին չէի ստացած այդ *մարտավարական գաղափարը* կամ *ծրագիրը*:

Քանի մը օր յետոյ միտք մը ծագեցաւ. «*Մենք կը ծախսենք շատ ժամանակ, դրամ եւ ուժեր՝ տպագրելով եւ տարածելով այս գիրքերը, բայց իւրաքանչիւր առաջնորդ կը ստանայ միայն մէկ նիւթ: Ինչո՞ւ չընենք այն, ինչ սկսանք ընել անգլերէնով տարիներ առաջ: Ինչո՞ւ այդ առաջնորդներուն համար հասանելի չդարձնենք նաեւ ամբողջական դասընթացքներ այլ լեզուներով: Մենք կ'աւելցնենք մեր ընդհանուր արդիւնաւէտութիւնը*»:



Սակայն մեծ խոչընդոտ մը կար. ինչպէ՞ս պիտի տպագրէինք եւ տարածէինք այդքան նիւթեր: Նոյնիսկ եթէ մենք վճարէինք՝ դասընթացքի բոլոր նիւթերը տպագրելու համար, մեր նպատակային երկիրներու մեծ մասի տարածողները չէին կրնար նման ծաւալի եւ ծանրութեան նիւթեր տեղափոխել, քանի որ մեր տարածումներու մեծ մասը կը կատարուի դժուարանցանելի անտառներու, լեռներու, անապատներու կամ ջրային ուղիներու մօտակայքը: Այդ տարածքներուն մէջ յաճախ չկան սալարկուած ճանապարհներ: Բացի այդ, քրիստոնէութեանը թշնամաբար տրամադրուած երկիրներուն մէջ իշխանութիւնները հետտութեամբ կը գտնէին տարածողներուն եւ կ'առգրաւէին բոլոր նիւթերը:

Անընդմէջ աղօթքէն եւ մտորումներէն յետոյ յառաջացաւ մէկ այլ գաղափար՝ զետեղել ամբողջական դասընթացքը DVD սկաւառակի մէջ («միայն ընթերցուող» տուեալներով սկաւառակ՝ համակարգիչներու համար): Սակայն հարցեր ծնան. արդեօ՞ք տարբեր երկիրներ ապրող հովիւները ու առաջնորդները կ'օգտուէին համակարգիչներէ: Եթէ այո, արդեօ՞ք անոնց համակարգիչները ունէին DVD սկաւառակներ ընթերցելու հնարաւորութիւն: Եւս մէկ հարցում՝ բոլորովին այլ բնոյթի DVD սկաւառակը ունէ՞ր բաւականաչափ տարողութիւն՝ ընդգրկելու համար ամբողջական դասընթացքի բոլոր նիւթերը:

Ես կը ցանկայի իմանալ այս ամէնը եւ առաջինը հարցուցի Ռոպին: Ան քաջատեղեակ էր մեր նպատակային երկիրներու թեքնիքական հնարաւորութիւններու մասին, քանի որ եղած էր աւելի քան 160 երկիրի մէջ: Ես հարցուցի անոր.

- Արդեօ՞ք աշխարհի գրեթէ բոլոր երկիրներու մէջ ապրող հովիւներն ու առաջնորդները կ'օգտուին համակարգիչներէ, նոյնիսկ եթէ անոնք աղքատ են:

- Մեծամասնութիւնը՝ այո. քիչերն են, որ չունին այդ հնարաւորութիւնը:

- Անոնց համակարգիչները ունի՞ն DVD սկաւառակներ ընթերցելու հնարաւորութիւն: Եւ եթէ այո, որքա՞ն նիւթեր կրնանք զետեղել մէկ DVD սկաւառակի մէջ:

Ռոպին դէմքը պայծառացաւ.

- Այո՛, ունին, եւ կը կարծեմ, մէկ DVD սկաւառակի մէջ կրնանք զետեղել բաւական շատ նիւթեր:

Ես առաջարկեցի եւս մէկ գաղափար.

- Կրնա՞նք բարակ պատեանով DVD սկաւառակ կցել գիրքի տետի կազմին:

- Այո՛, - խանդավառութեամբ պատասխանեց ան:

- Որքա՞ն կ'արժէ իւրաքանչիւր գիրքին մէկական սկաւառակ կցելը:

Ռոպը հետաքրքրուեցաւ եւ պատասխանեց քանի մը օրէն.

- Ես հրաշալի լուր ունիմ: Հաշուի առնելով գիրքը տպագրելու եւ տարածելու միջին արժէքը՝ DVD սկաւառակ կցելը կ'աւելցնէ այն ընդամէնը հինգ տոկոսով:

Ես ոգեւորուեցայ, սակայն տակաւին քիչ մը զուսպ էի, քանի որ չէի գիտեր, թէ որքան նիւթ կը տեղաւորուի մէկ սկաւառակի մէջ:

- Իսկապէս հրաշալի է այն, - ըսաւ Ռոպը, - որ մենք կրնանք զետեղել սկաւառակի մէջ ոչ միայն ամբողջական դասընթացք, այլեւ այդ դասընթացքի գիրքի օտիօ տարբերակը, երկու-երեք այլ գիրք, Նոր կտակարանը եւ այդ գիրքի PDF ծրարը (տպագրել աւելի շատ գիրքեր, եթէ տեղացի հովիւները միջոցներ ունենային):

Եթէ զուսպ արտայայտուիմ, մենք շատ ուրախ եւ ոգեւորուած էինք:

Այդ քննարկումէն ծագեցաւ եւս մէկ *մարտավարական գաղափար*: Կրկին, ատիկա կախուած էր մեր նպատակային երկիրներու թեքնիքական հնարաւորութիւններէն: Ես հարցուցի.

- Մեր նպատակային երկիրներու հովիւները եւ առաջնորդները կ'օգտո՞ւին համացանցէն:

- Գրեթէ բոլոր երկիրներու մէջ՝ այո՛, - պատասխանեց Ռոպը:

- Մենք կրնանք համացանցային կայք պատրաստել եւ տեղադրել մեր բոլոր թարգմանուած նիւթերը: Այն կարելի է անուանել քրիստոնէական կայքին ոչ յատուկ կերպով, որպէսզի այն պետութիւնները, որոնք դէմ են Աստուածաշնչեան ուսուցումներուն, չարգելափակեն: Մենք կ'աւելցնենք այդ կայքի հասցէն տարածուող գիրքերու առջեւի կազմին վրայ: Կ'առաջարկենք հովիւներուն եւ առաջնորդներուն, որ խրախուսեն իրենց եկեղեցիներու անդամներուն անվճար ներբերել բոլոր նիւթերը այդ կայքէն, որպէսզի եկեղեցիները միասին ուսումնասիրեն ատոնք:

Մենք նման էինք անուշեղէնի խանութը գտնուող երկու երեխայի. մենք չէինք կրնար զսպել մեր ոգեւորութիւնը եւ կը փոխանակէինք նորանոր գաղափարներ, որոնք կ'ամրապնդէին այդ մարտավարութիւնը:

Կատարելով բոլոր անհրաժեշտ ուսումնասիրութիւնները եւ հաշուարկները՝ պարզեցինք, որ կրնանք մեծ քանակով պատրաստել եւ տարածել այդ «առաջնորդական հաւաքածուները»՝ իւրաքանչիւր օրինակը մօտաւորապէս չորս տոլարով: Ինչ կը վերաբերէր

համացանցային կայքին, մեր «Մեսինձրի» խումբը ունի անհրաժեշտ գիտելիքներ եւ հմտութիւններ՝ այն պատրաստելու համար:

Շուտով մեր խումբը գիտակցեցաւ, որ շնորհիւ երկինքէն եկած այդ գաղափարին, մենք հնարաւորութիւն կ'ունենանք սորվեցնելու, կրթելու եւ զօրացնելու ոչ թէ պարզապէս առանձին առաջնորդներու, այլ ամբողջ եկեղեցական համայնքներ եւ փոքր խումբեր: Աշխարհի տարածքին գտնուող բազմաթիւ փոքր գիւղերու մէջ միայն մէկ եկեղեցի կայ: Կը նշանակէ՝ մենք կրնանք զգալիօրէն ազդել իւրաքանչիւր գիւղական համայնքի վրայ ընդամէնը քանի մը տողարով: Ինչպիսի՞ շահութաւորներդրում: Արդեօ՞ք ատիկա իրականութեան մէջ հնարաւոր է:

Ես պատմեցի այդ տեսիլքը «Մեսինձրի» ծառայութեան բաժիններու ղեկավարներու յաջորդ ժողովին: Բոլորը որսացին իմ խանդավառութիւնը. ամբողջ խումբը լեցուեցաւ ուրախութեամբ եւ ոգէւորութեամբ՝ այդ ծրագրի պատճառով: Ես խանդավառութեամբ յայտարարեցի.

- Կարելոր չէ, թէ որքան ժամանակ կը պահանջուի՝ տա՞սը տարի, քսա՞ն տարի, թէ՞ աւելին. այն նիւթերով, որոնք Աստուած վստահած է մեզի, մենք պիտի հասնինք եւ պիտի օգնենք իւրաքանչիւր առաջնորդի այս մոլորակի վրայ:

Մէկ ամիս յետոյ գործարար մը՝ Թեքսասէն, հեռածայնեց մեր գրասենեակ: Ան խնդրեց 15 վայրկեանոց հանդիպում Լիզային եւ ինձի հետ: Ան եւ կինը օդանաւով Քոլորադո եկան: Մեր հանդիպման ժամանակ անոր աչքերէն արցունքներ հոսեցան: Լալով եւ յուզմունքէն ցնցուելով՝ ան ըսաւ.

- Ես գիտեմ, թէ ինչ աշխատանք կը կատարէք դուք: Գիտեմ, որ ձեր նիւթերով կը զօրացնէք հեռաւոր երկիրներու մէջ ապրող հովիւներուն: Ես կ'ուզեմ մասնակցութիւն ունենալ ատոր մէջ:

Ան չէք մը դրաւ սեղանին: Ես գրեթէ ինկայ աթոռէն. այն 750.000 տողարի չէք էր:

Յաջորդ քանի մը ամսուան ընթացքին մենք ուեպ-կայք պատրաստեցինք եւ ջանասիրաբար աշխատեցանք՝ տարբեր երկիրներու եւ շրջաններու մէջ առաջնորդական հաւաքածուներու ծրագիրը իրականացնելու համար: Մենք կը կատարէինք միանգամեայ վճարում՝ նախատեսուած գիրքի եւ համապատասխան դասընթացքի նիւթերու թարգմանութեան համար, ինչպէս նաեւ յաւելեալ գիրքերու թարգմանութեան համար, որոնք պիտի ընդգրկուէին DVD սկաւառակի մէջ՝ իւրաքանչիւր լեզուով: Ռոպը վարձեց եւ համակարգեց լաւագոյն թարգմանչական խումբեր՝ բազմաթիւ լեզուներու համար: Այդ երկու

առատաձեռն նուիրատուութիւնները, որոնց գումարը մէկ միլիոն տոլարէն քիչ մը աւելի էր, հոգացին անհրաժեշտ ծախսերը առաջին տարուան ընթացքին:

## ԽՈՒՄԲ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ԳԱՂԱՓԱՐԸ

Այժմ վերադառնանք 2011 թուականի Յունուար՝ անմիջապէս 250.000 գիրք բաժնելու որոշումին յաջորդող օրերուն: Այդ երկու խոշոր նուիրատուութիւնները տակաւին չէին տրուած, եւ ես ուրախ եմ ասոր համար, քանի որ միջոցներու բացակայութիւնը դրդեց ինձի Աստուծոյ փնտռելու ամէն առաւօտ՝ մարտավարութիւն ստանալու համար: Մեզի անհրաժեշտ էր ծրագիր այն մասին, թէ ինչպէս ներկայացնենք մեր տեսիլքը նուիրատուութիւններ ընելու պարգեւ ունեցող տղամարդոց եւ կանանց, որոնք կ'օգտագործէին իրենց պարգեւը՝ այս վիթխարի նախաձեռնութեան աջակցելու համար, եւ ինչպէս մեծ խումբ կազմել անոնցմէ: Նման խումբի շնորհիւ, մենք պիտի կարենայինք նիւթեր տրամադրել աշխարհի տարածքին գտնուող հովիւներուն եւ առաջնորդներուն՝ անկախ անոնց լեզուէն, գտնուելու վայրէն եւ ֆինանսական վիճակէն:

Քանի մը օր տեւող առաւօտեան աղօթքներէն յետոյ Սուրբ Հոգին շշնջաց իմ սրտին մէջ. «Որդի՛ս, դուն քաջ յայտնի ես կոլֆի հանդէպ քու սիրով: Օգտագործէ՛ այն՝ միջոցներ հանգանակելու համար: Ես կը բերեմ ճիշդ տղամարդոց եւ կիներու՝ քու խումբին միանալու եւ այս առաքելութեան աջակցելու համար»: Ես անմիջապէս մտածեցի, որ Քոլորատո Սփրինկսը կը գտնուի Ամերիկայի լաւագոյն պանդոկներէն մէկը՝ «Պրոուտմուրը», որ ունի երկու կոլֆի դաշտ՝ առաջնութիւններ անցընելու համար: Այնպէս որ, իմ ծրագիրով բաժնեկցեցայ Էտիսընին եւ Լիզային հետ:

Անոնք լսեցին ինձի, իսկ յետոյ հարցուցին.

- Ե՞րբ պիտի կարենանք ատիկա ընել:

- Եկէ՛ք ընենք ատիկա այս ամրան, - պատասխանեցի ես:

Մենք մտահոգուած էինք, որ թերեւս չունենայինք ժամանակ ամէն ինչ կազմակերպելու համար: Արդեօ՞ք պիտի ըլլային բաւականաչափ ազատ սենեակներ, ինչ որ կրնար խնդիր ըլլալ աշխարհի ամենաերկարակեաց հինգաստղանի եւ հինգադամանդեայ պանդոկին մէջ: Սովորաբար սենեակները այդ պանդոկին մէջ պատուիրուած կ'ըլլան տարիներ առաջ, իսկ մենք ընտրած էինք տարուան ամենապահանջուած ժամանակը: Եւս մէկ մտահոգութիւն. ի՞նչ պիտի ըլլար, եթէ մեր հնարաւոր հիւրերը արդէն ծրագիրներ ունենային ամրան համար:

Որդիս զբաղեցաւ ատով եւ քանի մը օրէն տեղեկացուց ինծի հետեւեալը.

- Հայրի՛կ, այդ հիւրանոցը զբաղած է ամբողջ ամրան ընթացքին՝ մէկ շաբթուան բացառութեամբ: Մենք կրնանք պատուիրել մօտաւորապէս 100 սենեակ, եւ այնպէս յաջողած է, որ ամբողջ այդ շաբաթը դուռն եւ մայրիկը տունն էք:

- Եկո՛ւր պատուիրենք այդ սենեակները, - անվարան ըսի ես:

- Մենք պէտք է պայմանագիր ստորագրենք, - զգուշացուց ան, - եւ ֆինանսական պարտաւորութիւն ստանձնենք: Պիտի կարենա՞նք զբաղեցնել բոլոր այդ սենեակները:

Եւ կրկին բերանէս թռաւ հետեւեալը.

- Բոլոր սենեակները զբաղած կ'ըլլան:

Ես չէի ցանկար շատ մտածել այդ մասին: Չէի ցանկար հրաժարիլ այդ ծրագրիէն՝ իմ դատողութիւններուն պատճառով:

Ես գիտէի, որ կային բազմաթիւ եկեղեցիներ եւ գործարարներ Միացեալ Նահանգներու մէջ, որոնք սիրով կ'աջակցէին այս նախաձեռնութեան: Հեռաձայնեցի անոնց, որ յիշեցի, եւ գրեթէ բոլորը մասնակցելու պատրաստակամութիւն յայտնեցին: Երկու ամսուան մէջ մենք արձանագրեցինք բաւականաչափ զոյգեր՝ մեր պատուիրած բոլոր սենեակները զբաղեցնելու համար:

Ծրագրելով այդ մրցոյթը՝ մեր խումբը որոշեց, որ այն պիտի չդառնար միայն կոլֆի մրցոյթ, այլ լիարժէք միջոցառում եւ յիշարժան իրադարձութիւն: Մենք վճռեցինք, որ ամէն ինչ պիտի կատարուէր գերազանցութեամբ եւ նպատակաուղղուածութեամբ, որպէսզի այդ ժամանակը անցնէր հաճելի կերպով, յատկապէս այն զոյգերուն համար, որոնք կոլֆ չեն խաղար: Լիզան պիտի կազմակերպէր յատուկ հանդիպումներ կիներուն հետ: Ժամանումի պահուն մենք պիտի նուիրէինք իւրաքանչիւր զոյգին գեղեցիկ զամբիւղներ՝ անուշեղէնով եւ նուէրներով: Պիտի ըլլային «Պրոուտմուրի» տպաւորիչ ճաշկերոյթները եւ յատուկ ժամանցային միջոցառումները, դասեր առաջնորդներու համար եւ բարձրորակ մրցանակներ բոլոր մասնակիցներուն համար: Այդ ամէնուն նպատակը պիտի ըլլար արտայայտել մեր երախտիքը՝ մեր խումբին միանալու համար:

Մեր առաջին «Մեսինճըր բաժակի» առաջնութիւնը տեղի ունեցաւ 2011 թուականի Յունիսի վերջաւորութեան: Մինչեւ միջոցառման սկիզբը ես հեռաձայնեցի արիեստավարժ մարզիկներու եւ յայտնի երաժիշտներու՝ խնդրելով նուիրաբերել ինքնագրուած առարկաներ: Բացի այդ, որոշ ձեռնարկութիւններ նուիրաբերեցին արժէքաւոր

իրեր կամ ծառայութիւններ: Մենք աճուրդի հանեցինք բոլոր այդ նուիրատուութիւնները վերջին ճաշկերոյթի ժամանակ: Մենք հանգանակեցինք 340.000 տոլարէն աւելի մեր առաջին առաջնութեան ընթացքին, բայց այն կարծես լիարժէք չըլլար. մենք տակաւին չէինք գտած լաւագոյն մարտավարութիւնը՝ մեր տեսիլքը փոխանցելու համար:

Այդ աշնան մեր խումբի անդամներէն մէկուն մտքին մէջ մէկ ուրիշ ոգեշնչուած գաղափար մը ծնաւ: Մենք կը ծրագրէինք մեր երկրորդ ամենամեայ առաջնութիւնը 2012 թուականի ամրան, եւ ան ըսաւ.

- Մենք աճուրդի կը հանենք ինքնագրուած պէյսպոլի շապիկ, ռուկալի սաղաւարտ, կիթառ եւ այլն: Այդ առարկաներէն իւրաքանչիւրի հասոյթը բաւական չէ նոյնիսկ մէկ ազգի նիւթերը ֆինանսաւորելու համար: Եկէք այլեւս իրեր աճուրդի չդնենք. եկէք աճուրդի դնենք ազգերը: Ազգի արժէքը շատ աւելի բարձր է:

Բոլորիս հաճելի թուեցաւ այդ գաղափարը, բայց մեր խումբի անդամը աւելի կատարելագործեց այն եւ շարունակեց.

- Այս միջոցառման կու գան ուժեղ մրցակցային բնաւորութիւն ունեցող մարդիկ: Եկէք ստեղծենք առաջատարներու ցուցատախտակ, որուն վրայ կ'արտացոլուին մասնակիցներու նուիրատուութիւնները ազգերու համար, եւ ատոր հիման վրայ այն հովանաւորները, որոնք կը կատարեն ամենամեծ նուիրատուութիւնները, կը ստանան ինքնագրուած գնդակները, կիթառները եւ միւս մրցանակները:

Նորանոր ստեղծարար գաղափարներ կը ծնէին: Պահ մը ես առարկեցի.

- Չեմ կրնար դիմանալ, երբ կը ձգձգեն աճուրդները: Լռութեան քանի մը վայրկեանը ամբողջ յաւիտենութիւն կը թուի: Եկէք ժամացոյց տեղադրենք, որոշենք կարճ ժամանակահատուած, օրինակ՝ 35 վայրկեան, եւ ըսենք մեր մասնակիցներուն, որ ժամանակը սպառելուն պէս աճուրդը կ'աւարտի: Եւ այն ազգը, որուն նախագիծը չի ֆինանսաւորուիր, այդ տարի նիւթեր չի ստանար: Ատիկա մեծ հրատապութիւն կը յառաջացնէ:

Այժմ թոյլ տուէք բացատրել, թէ ինչ նկատի ունիմ *նախագիծ* ըսելով: Այն բաղկացած է երկու մասէ: Առաջինը առաջնորդական հաւաքածուի բոլոր տպագիր, օտիօ եւ վիտէօ բաղադրիչներու թարգմանութիւնն է, որ կ'արժէ մօտաւորապէս 17.500 տոլար՝ իւրաքանչիւր լեզուի համար: Երկրորդը գիրքերը կամ առաջնորդական հաւաքածուները տպագրելու եւ որեւէ երկիրի մէջ տարածելու արժէքն է: Իւրաքանչիւր երկիր կայ մօտաւորապէս 500-40.000 առաջնորդ: Երկիրներու մեծ մասը առաջնորդներու թիւը 5.000-10.000 է, եւ ծախսերը կը կազմեն 20.000-40.000 տոլար:

Յաջորդ ժողովներու ժամանակ մեր խումբը առաջարկեց նորանոր գաղափարներ այն մասին, թէ ինչպէս աւելի լաւ տպաւորութիւններ փոխանցել մասնակիցներուն, ինչպէս ներկայացնել մեր տեսիլքը եւ ինչպէս անցընել մեր երկրորդ միջոցառումը:

Այդ տարի աճուրդի ժամանակ մենք ականատես եղանք խոստացուած նուիրատուութիւններու կրկնապատկման՝ նախորդ տարուան համեմատ: Մեր ժամացոյցի որոշուած ժամանակը տակաւին չէր սպառած, սակայն մեր՝ աւելի քան 50 նախագիծերը բոլորովին ֆինանսաւորուած էին: Նուիրատուութիւններու թափը աւելի աճեցաւ «Մեսինճրի բաժակի» երրորդ տարին. մենք հանգանակեցինք աւելի քան 1.3 միլիոն տոլար՝ աւելի շատ նախագիծեր ֆինանսաւորելու համար:

Ամէն տարի նիւթերու պահանջարկը կ'աւելնար: Ռոպին հետ կապ կը հաստատէին մարդիկ տարբեր ազգերէն՝ խնդրելով մեր նիւթերը իրենց տրամադրել: Ի վերջոյ, մեր նախագիծերու թիւը անցաւ հարիւրը, եւ արդէն վեցերորդ «Մեսինճրի բաժակի» ժամանակ ունէինք 140 նախագիծ, որոնց համար հանգանակուեցաւ աւելի քան 2 միլիոն տոլար: Իններորդ տարուան հանգանակուեցաւ գրեթէ 3 միլիոն տոլար՝ մօտաւորապէս 200 նախագիծ ֆինանսաւորելու համար:

Այս գիրքի՝ լոյս տեսնելէն առաջ, այսինքն՝ մինչեւ 2020 թուականի վերջին ամիսները, «Մեսինճրի բաժակի» խումբը, մօտաւորապէս 100 երկիրի մէջ գտնուող հովիւներուն եւ առաջնորդներուն նուիրած է շուրջ 30 միլիոն նիւթ՝ աւելի քան 120 լեզուով:

Այս ընթացքին մէջ կ'ոգեշնչուէինք իմ հերոսներէն մէկուն միջոցով՝ Էնտրու Քարնեկիով: Ան ամենայայտնի բարերարներէն է պատմութեան մէջ, որ նուիրաբերած է իր ունեցուածքի մեծ մասը: Համաձայն տոլարի այսօրուան արժէքին, ան տրամադրած է միլիառաւոր տոլարներ բարեգործութեան: Այդ գումարի զգալի մասը ուղղուած է հանրային գրադարաններ կառուցելուն: 1883-1918 թուականներու ընթացքին ան կառուցած է աւելի քան 2.500 գրադարան, որոնց մեծ մասը կը գտնուի ԱՄՆ-ի 47 նահանգներուն մէջ:

Թոյլ տուէք հետաքրքրական հարցում մը հարցնել: Ո՞ր ժամանակահատուածին մէջ ԱՄՆ-ը վերածուեցաւ համաշխարհային տէրութեան: Ատիկա տեղի ունեցաւ 1883-1918 թուականներուն՝ նոյն ժամանակահատուածին մէջ, երբ Քարնեկին գրադարաններ կը կառուցէր: Ես համոզուած եմ՝ այն, որ ան հասանելի դարձուց գիտելիքը հասարակութեան, նպաստեց Ամերիկայի կայացման՝ որպէս համաշխարհային տէրութիւն:

Այս սկզբունքը կը վերաբերի նաեւ հոգեւոր գիտելիքին: Աստուած կ'ըսէ.

«Իմ ժողովուրդը կը կործանի *գիտելիքի բացակայութեան* պատճառով» (Ովսէ 4.6, NKJV):

«Իմ ժողովուրդը *տգիտութենէն* գերի կ'իյնայ» (Եսայիա 5.13):

Տարիներ շարունակ մեր ծառայութիւնը ղեկավարելէն յետոյ ինծի համար ակնյայտ դարձաւ, որ որեւէ գիւղ կամ քաղաք վերափոխելու ամէնէն արդիւնաւէտ միջոցը հոն եկեղեցական շէնք կառուցելը չէ: Ատիկա պարզապէս առաջնորդները մեզմէ տեղական կախուածութեան մէջ կը պահէ: Մենք շատ անելի արդիւնաւէտ ենք, երբ կու տանք տեղացի առաջնորդներուն հոգեւոր գիտելիք, որ կը զօրացնէ անոնց՝ իրենց գիւղերուն կամ քաղաքներուն մէջ ազդեցութիւն ձգելու համար: Այդ գիտելիքը կ'օգնէ յառաջացնելու այն հաւատքը, որ անհրաժեշտ է, որպէսզի եկեղեցին աճի եւ կատարէ իր աշխատանքը, որն ալ, անհրաժեշտութեան պարագային, պիտի ընդգրկէ նաեւ շէնքերու կառուցում եւ այլ միջոցներու ձեռքբերում:

Նիւթեր տարածելու մեր մարտավարական նախաձեռնութեան պարագային հրաշալիւն այն է, որ եկեղեցական շէնքը մեզի համար կրնար արժէր տասնեակ հազարաւոր տոլարներ, իսկ առաջնորդական հաւաքածուն, որ կը պարունակէ քանի մը հարիւր տոլար արժողութեամբ նիւթեր, ընդամենը կը կազմէ ատոր աննշան մասը:

Այս տասնամեակը, որուն ընթացքին մենք առաջնորդական հաւաքածուներ կը բաժնէինք զարգացող երկիրներու եկեղեցիներուն, ամենահաճելիւն էր իմ քառասնամեայ ծառայութեան մէջ: Ինծի հաճելի կը թուի ըլլալ խումբի մը մասը, ուր մարդիկ միաւորուած են ազգերը աշակերտելու ձգտումով եւ տեսիլքով (կարդացէ՛ք Մատթէոս 28.19,20): Մենք միասին շատ անելի գերազանցեցինք այն, ինչ որ իւրաքանչիւրս կրնար ընել անհատապէս: Մեր աշխատանքը կը մարմնաւորէ հետեւեալ խօսքը. «Եւ ձեզմէ հինգ հոգին հարիւրաւորին պիտի հալածէ, եւ ձեզմէ հարիւր հոգին բիւրաւորին պիտի հալածէ» (Ղեւտացւոց 26.8):

(Այս խօսքը կը նկարագրէ բազմապատկման եւս մէկ կարեւոր կողմ՝ միաբանութիւնը, որուն մասին կը խօսինք հետագայ գլուխներէն մէկուն մէջ):

Մեր միաբանութիւնը կեդրոնացած է Յիսուսի հետեւեալ խօսքերուն վրայ.

«Երբ ճաշկերոյթ կամ խնճոյք կազմակերպես, - ըսաւ Ան, - մի՛ հրաւիրեր քու ընկերները, եղբայրները, հարազատները եւ



հարուստ դրացիները: Որովհետեւ անոնք այլ քեզ կը հրաւիրեն, եւ ատիկա կ'ըլլար քու միակ վարձատրութիւնը: Փոխարէնը, հրաւիրէ՛ աղքատներուն, խեղերուն, կաղերուն եւ կոյրերուն: Եւ արդարներու յարութեան ժամանակ Աստուած կը վարձատրէ քեզի այն մարդոց հրաւիրելու համար, որոնք *չէին կրնար հասուցել քեզի*» (Ղուկաս 14.12-14, NLT):

Այն առաջնորդները, որոնց մենք նիւթեր կը տրամադրէինք, պայման չէ, որ խեղուած, կաղ եւ կոյր ըլլան. մենք վերցուցած ենք այս խօսքերէն այն, որ անոնք *չեն կրնար հասուցել մեզի*: Եթէ ես կը ծառայեմ որեւէ եկեղեցւոյ կամ համաժողովի մէջ Միացեալ Նահանգներու մէջ, ինծի շնորհակալութիւն կը յայտնեն՝ «Մեսինճըր Ինթերնեշնլ»-ին հոնարար (գրավարձք) կամ զոհաբերութիւն տալով: Բազմաթիւ երկիրներուն մէջ ապրող առաջնորդները, որոնց կեանքերուն մէջ մենք ներդրում կատարած ենք, չեն կրնար ընել ատիկա: Մեր խումբի բոլոր անդամները՝ մեր գործունէութիւնը հովանաւորող գործարարները եւ եկեղեցական առաջնորդները, ինչպէս նաեւ մեր «Մեսինճըրի» աշխատակազմը կը գիտակցին, որ մենք մեծ արտօնութիւն ունինք. մենք կու տանք՝ առանց ակնկալելու որեւէ հասուցում այն մարդոցմէ, որ օգնած ենք:

Քանի մը տարի առաջ ես ուղեւորուած էի Երեւան՝ Հայաստան, ուր ամբողջ Մերձաւոր Արեւելքէն հազարաւոր առաջնորդներ եկած էին՝ համաժողովի մասնակցելու համար: Այդ ընթացքին մենք հանդիպում ունեցանք Իրանէն, Աֆղանիստանէն, Սուրիայէն եւ նման երկիրներէ եկած հովիւներու հետ՝ առանձին լսարանի մէջ: Նկարահանումը արգիլուած էր. այդ մարդիկ չէին ցանկար, որ իրենց տեսնէին: Աստուծոյ ներկայութիւնը ուժգին էր, եւ ես շարունակ կը մտածէի. «*Այս առաջնորդները պէտք է քարոզեն մեզի, ոչ թէ Լիզան եւ ես՝ անոնց*»: Իմ խօսքին մէջ ես ըսի անոնց.

- Բոլորդ կը համարէք, որ հերոսները Լիզան եւ ես ենք: Սակայն հերոսները ոչ թէ ճոն եւ Լիզա Պիվիներն են, այլ այն գործարարները եւ եկեղեցիները, որոնք միլիոնաւոր տոլարներ նուիրաբերած են՝ ձեզ մեր նիւթերով օրհնելու համար: Անոնք են իրական հերոսները:

Եւ կարճ ժամանակ յետոյ հոն գտնուողներս չկրցանք զսպել մեզ եւ լացինք:

Այդ հանդիպումէն յետոյ իրանցի հովիւներէն մէկը հարցուց.

- Ինչպէ՞ս կրնան մարդիկ այդքան մեծ գումար նուիրաբերել անոնց, որոնց երբեք չեն տեսած:

Իմ պատասխանը չափազանց պարզ կը թուի, բայց ատիկա ճշմարտութիւնն է.

- Պատճառը Աստուծոյ սէրն է անոնց սրտերուն մէջ:
- Եւս մէկ անգամ արցունքները հոսեցան:

## Ա՛Ն ԱՒԵԼԻ ՄԵԾ ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒՄ

2019 թուականին մենք հասկցանք, որ մեր նիւթերու տարածման ուեպ-կայքը լիարժէք չէ: Այն արդիւնաւետ էր 2011 թուականին, երբ ստեղծեցինք, բայց այսօր այն անյարմար եւ սահմանափակ է: Օրինակ, խելախօսներով չափազանց դժուար է ատոնցմէ օգտուիլը: Լիզան, մեր խումբի անդամներէն շատերը եւ ես գտնուած ենք բազմաթիւ աղքատ եւ անապահով երկիրներու մէջ: Մենք չէինք կրնար չնկատել, որ թէեւ մարդիկ կ'ապրէին վրաններու, հողաշէն տնակներու եւ փայտէ հիւղակներու մէջ, անոնց մեծ մասը ինչ որ տեսակի խելախօս ունէր: Իրականութեան մէջ, կը նախատեսուի, որ մինչեւ 2020 թուականի աւարտը խելախօսներ պիտի ունենայ աւելի քան հինգ միլիառ մարդ:

Անթիւ ճանապարհորդութիւններէն յետոյ ակնյայտ դարձաւ, որ շուտով, եթէ ոչ արդէն հիմա, առջանց հաղորդակցութեան միջոցով հնարաւոր կ'ըլլար հասնիլ իւրաքանչիւրին այս մոլորակին վրայ: Ինչպէս եւ միւսները, ես զգացի, որ մենք հերթական «Հռովմէական ճանապարհի» պատմական ժամանակաշրջանի մէջ ենք:

Թոյլ տուէք կարճ բացատրել: Սուրբ Գիրքը կը յայտարարէ. «Բայց երբ որ ժամանակի լրումը եկաւ, Աստուած ուղարկեց Իր Որդիին» (Գաղատացիս 4.4): Ժամանակի լրումը կը վերաբերի շատ բաներու: Ժամանակի լրման կարեւոր ցուցանիշներէն մէկը այն է, որ Աւետարանը կը հասնի ամբողջ յայտնի աշխարհին: Մ.թ.ա. 312 թուականէն հռովմայեցիները սկսան զարգացնել ցամաքային ճանապարհներու եւ ծովային ուղիներու ցանցեր, որոնք ծածկեցին այդ ժամանակուան ամբողջ յայտնի աշխարհը: Այն ժամանակ, երբ Յիսուսն ըսաւ՝ զացէ՛ք աշխարհի տարածքին, այդ ճանապարհները լաւ զարգացած էին, որ թոյլ տուաւ արագօրէն տարածել Աստուծոյ Խօսքը ամբողջ յայտնի աշխարհին մէջ:

Ես կը հաւատամ, որ կրկին կը մօտենայ ժամանակի լրումը՝ Յիսուսի երկրորդ գալուստի ճանապարհը պատրաստելու համար. համացանցը մեր օրերու «Հռովմէական ճանապարհին» է: Մենք ունինք կարողութիւն տարածելու Աստուծոյ Խօսքը ամբողջ աշխարհի տարածքին՝ բոլոր ազգերը աշակերտելու համար:

Գիտակցելով ասիկա՝ մեր խումբը կրկին սկսաւ աղօթել, երազել եւ մարտավարութիւն կառուցել: Ամիսներ տեւող ուսումնասիրութիւններէ յետոյ մենք սկսանք նախագիծ մը ԱՄՆ-ի մէջ գտնուող յաւելուածներ եւ

ուեպ-կայքեր պատրաստող լաւագոյն ընկերութիւններէն մէկուն հետ: Մենք ստեղծեցինք աշակերտութեան համար նախատեսուած հարթակ, որ արագագործ եւ բազմագործառոյթ է, եւ որմէ կարելի է դիւրին օգտուիլ թէ՛ «iPhone» եւ «Android» խելախօսներով, թէ՛ թապլէթներով եւ համակարգիչներով: Մեր նպատակն էր ստեղծել լաւագոյն հարթակը, որ հնարաւոր է մերօրեայ արուեստագիտութիւններով: Մենք կը ցանկայինք, որ եկեղեցական առաջնորդները ամէնուր, բայց մասնաւորապէս՝ անապահով երկիրներու մէջ, ունենան լաւագոյնը: Ակնառու է այն, որ արդէն արծանագրած ենք միլիոնաւոր օգտատէրեր՝ 227 երկիրներէն եւ տարածքներէն, որոնք կը սորվին մեր հարթակին մէջ հասանելի գիրքերով, դասընթացքներով եւ այլ աշակերտական նիւթերով: Մնացած է ազդեցութիւն ունենանք միայն հաշուած ազգերու մէջ՝ բոլոր ազգերուն հասնելու համար:

Որոշ ժամանակ յետոյ մենք սկսանք մտածել բազմապատկման լրացուցիչ միջոցներու մասին: Մեր հարթակի արդիւնաւէտութիւնը բարձրացնելու եւ ընդլայնելու համար որոշեցինք հրաւիրել այլ ակնառու ուսուցիչներ՝ իրենց եզակի եւ վերափոխող ուղերձներով: Այժմ առաջնորդները աշխարհի տարածքին կրնան օգտագործել իրենց համակարգիչները, թապլէթները կամ հեռախօսները, որպէսզի սորվին ե՛ւ անհատապէս, ե՛ւ փոքր խումբերու կամ եկեղեցիներու մէջ: Այս քայլը ոչ միայն կը բազմապատկէ մեր հարթակի արդիւնաւէտութիւնը, այլեւ մեր ուսմունքները կը դարձնէ աւելի մնայուն, քան տպագրուած գիրքը, եւ կը հասնի գալիք սերունդներուն<sup>1</sup>:

Ի՞նչ կ'ըլլար, եթէ Լիզան եւ Ես որոշէինք չզրել: Կամ ի՞նչ կ'ըլլար, եթէ մենք բաւարարուէինք հանրաճանաչ հեղինակներ ըլլալով եւ չսկսէինք դասընթացքներ պատրաստել: Ի՞նչ կ'ըլլար, եթէ մեր խումբը բաւական համարէր միայն անգլիախօս աշխարհի մէջ անհատներուն եւ եկեղեցիներուն հասնիլը: Ի՞նչ կ'ըլլար, եթէ մեր աշխատակազմը չցանկար ներդնել իր ուժերը՝ Պրոուստմուրի մէջ ամբողջ Միացեալ Նահանգներէն խումբ հաւաքելու համար: Իւրաքանչիւր մակարդակ ունէր իր դժուարութիւնները, որոնք մեծապէս ընդլայնեցին մեզ՝ ստիպելով ապաւինիլ Աստուծոյ շնորհքին: Գտնուելով իւրաքանչիւր մակարդակի վրայ, շատ աւելի դիւրին պիտի ըլլար մնալ նոյն տեղը, քան երթալ առաջ՝ մարդոց աւելի արդիւնաւէտ ծառայելու համար:

Երբ լսենք Աստուծոյ Հոգիին, մենք քայլ առ քայլ կ'երթանք դէպի աւելի մեծ բազմապատկում: Ան ցոյց չի տար ձեզի բոլոր

1 Որպէսզի աւելին իմանաք այն մասին, թէ ինչպէս կրնաք ներգրաւուիլ այս գործին մէջ, այցելեցէ՛ք [www.MessengerX.com](http://www.MessengerX.com):

քայլերը սկիզբէն, եւ նոյնիսկ յաջորդ երկու կամ երեք քայլերը: Շատ աւելի դիւրին պիտի ըլլար, եթէ հնարաւոր ըլլար նայիլ ապակիէ գունդի մէջ, երբ ես տակաւին երեսունն անց էի, եւ տեսնել ամբողջ ճանապարհը, որուն միջոցով մեր խումբը արդէն անցած է այս երեսուն տարուան ընթացքին: Այնուամենայնիւ, եթէ ատիկա հնարաւոր ըլլար, մենք այդքան եռանդուն կերպով չէինք պայքարեր իւրաքանչիւր քայլի համար՝ աղօթելով եւ հետեւելով Աստուծոյ առաջնորդութեան: Նոյնպէս, մեր մէջ չէին ձեւաւորուեր այն հաւատքն ու հաստատակամութիւնը, որոնք ձեռք ձգեցինք հնազանդութեան իւրաքանչիւր քայլի հետ:

Բազմապատկումը մարդու գաղափարը չէ. այն Աստուծոյ գաղափարն է: Կրկին, այն Աստուծոյ առաջին պատուէրն էր մարդկութեան. «Որեւէ պարգեւ, որը ես կը վստահիմ ձեզի, Իմ Թագաւորութիւնը բազմապատկելու համար է» (Ծննդոց 1.22-ի եւ Մատթէոս 25.14-29-ի իմ շրջատութիւնը): Թոյլ տուէք կրկնել այս անչափ կարեւոր ճշմարտութիւնը. բազմապատկումը պէտք չէ ճնշէ ձեզ, քանի որ, ի վերջոյ, այն Անոր պարգեւն է: Դուք միայն պէտք է աղօթէք, լսէք, հաւատաք եւ հնազանդիք այն ամէնուն, ինչ որ Ան կը դնէ ձեր սրտին մէջ:

Ան Ինքը կ'առաջնորդէ ձեզ բազմապատկման:

*Թերեւս մտածէք. «Իմ սիրտը կը վառի այն վկայութենէն, որ դուք տուիք վերջին երեք գլուխներուն մէջ: Բայց ես երիտասարդ մայր եմ, ուսանող եմ, արհեստավարժ մարզիկ եմ, աշխատող եմ. ինչպէ՞ս կրնամ բազմապատկել Աստուծոյ Թագաւորութիւնը»:*

Մենք կը սկսինք խօսիլ այս մասին յաջորդ գլուխէն սկսեալ:

## ՄՏՈՐԵՑԷՔ

1. Աստուծոյ մատակարարումը կամ միջամտութիւնը, որուն մենք կը սպասենք, յաճախ կու գայ մարտավարական գաղափարի տեսքով: Ձեր կեանքին մէջ եղա՞ծ են իրավիճակներ, որոնք փոխուած են Աստուծոմէ ոգեշնչուած գաղափարի միջոցով:
2. Իմաստութիւն ստանալը ամենակարեւոր բանն է, որ կրնաք ընել: Ձեր կեանքի ո՞ր բնագաւառին մէջ դուք իմաստութեան կարիք ունիք: Ինչպէ՞ս պէտք է մօտենաք Աստուծոյ՝ Անոր իմաստութիւնը ստանալու համար:
3. Մարտավարական գաղափարը պարզեւ է Աստուծոմէ, որ կրնայ տանիլ մեզի արդիւնաւէտութեան նոր մակարդակ եւ տալ զօրութիւն՝ բազմապատկման համար: Ի՞նչ քայլեր կը պահանջուին ձեզմէ մարտավարական գաղափար ստանալէն յետոյ:

«Իր շնորհքով, Աստուած տուած է մեզի տարբեր պարգեւներ (խարիզմա)՝ որոշակի գործեր արդիւնաւէտ կատարելու համար: Այնպէս որ, եթէ Աստուած տուած է ձեզի մարգարտանալու կարողութիւն, խօսեցէք այնքան հաւատքով, որքան որ Աստուած տուած է ձեզի: Եթէ ձեր պարգեւը այլ մարդոց ծառայելն է, արդիւնաւէտ ծառայեցէք անոնց: Եթէ դուք ուսուցիչ էք, արդիւնաւէտ սորվեցուցէք: Եթէ ձեր պարգեւը մարդոց խրախուսելն է, խրախուսող եղէք: Եթէ այն բաշխելն է, բաշխեցէք առատաձեռնութեամբ: Եթէ Աստուած տուած է ձեզի առաջնորդելու կարողութիւն, լրջօրէն պատասխանատուութիւն ստանձնեցէք: Եւ եթէ դուք այլ մարդոց բարութիւն ցուցաբերելու պարգեւ ունիք, ըրէք ասիկա ուրախութեամբ»:

– Հռովմայեցիս 12.6-8, NLT

## ՆԵՐԴՐՈՒՄ

**Պ**օղոս առաքելալը կը թուարկէ այն բազմապիսի պարգեւները, որոնք Աստուած տուած է Իր ծառաներէն իւրաքանչիւրին: Կրկին, ես չեմ հաւատար, որ այս պարգեւներու ցուցակը սպառիչ է, բայց այն կ'ընդգրկէ Աստուածային կարողութիւններու լայն շրջանակ: Թերեւս դուք չհամաձայնիք հետս, սակայն թոյլ տուէք բացատրել:

Պօղոսի ցուցակին մէջ ես չեմ տեսներ երգելու, դատական գործ պաշտպանելու, վիրահատութեամբ ուռեցքներ հեռացնելու, ոգեշնչուած նկարներ պատկերելու, երաժշտական գործիքներ նուագելու եւ Աստուծոմէ տրուած այլ կարողութիւններ, որոնց մենք կը հանդիպինք ամէն օր: Ահա թէ ինչու չեմ հաւատար, որ այս պարգեւներու ցուցակը սպառիչ է: Եթէ դուք, միեւնոյնն է, համաձայն չէք հետս, ես կը յարգեմ ձեր դիրքորոշումը. այս թեման չունի հետագայ քննարկման կարիք, քանի որ այն մեր գիրքի գլխաւոր թեմաներէն չէ:

Վերադառնալով Պօղոսի խօսքերուն, ինծի հաճելի կը թուի, որ «Նոր կենդանի թարգմանութիւնը» կը վերծանէ «*խարիզմա*» բառը որպէս «որոշակի գործեր արդիւնաւէտ կատարելու» կարողութիւն: Անկասկած, այս ձեւակերպումը ցոյց կու տայ այս գիրքի գլխաւոր շեշտադրումը: Անցնող երեք գլուխները կը վկայէին մարգարէանալու եւ սորվեցնելու պարգեւներու բազմապատկման մասին: Եկէք ուշադրութիւն դարձնենք մէկ ուրիշ՝ *բաշխելու* պարգեւի վրայ:

### ՆԵՐԴՐՈՒՄ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՍԷՋ

Ես ընկեր մը ունիմ Մայք անունով: Ան դարձաւ հաւատացեալ եւ սկսաւ հետեւիլ Յիսուս Քրիստոսին տասնմէկ տարեկանէն: Սակայն կեանքի ընթացքին ան անարդիւնաւէտ էր Աստուծոյ Թագաւորութիւնը կառուցելու մէջ: Անոր դժգոհութիւնը այդ պատճառով շարունակ

Կ'աւելնար: Ի վերջոյ, 35 տարեկանին ան արդէն յոգնած էր այն բանէն, որ ինքը ոչինչ կ'ընէ՝ յաւիտենական ազդեցութիւն ձգելու համար: Յաճախ մարդիկ, որոնք կը յանգին նման եզրակացութեան, կը փորձեն փոփոխութիւններ յառաջացնել իրենց կեանքին մէջ՝ առանց գիտելիքի, իմաստութեան եւ հաւատքի: Բարեբախտաբար, Մայքի մօտեցումն ուրիշ էր: Ան որոշեց, որ տեւական ազդեցութիւն ձգելու առաջին քայլը իր «աւագանը լեցնելն» էր: Այնպէս որ, յաջորդ վեց ամսուան ընթացքին ան գոց սորվեցաւ երկու հազար խօսք Աստուածաշունչէն:

Այդ վեցամսեայ շրջանէն կարճ ժամանակ յետոյ որոշեց այցելել առաջնորդական համաժողով մը Արիզոնա նահանգի Ֆինիքս քաղաքին մէջ: Ան այնքան աղքատ էր, որ չէր կրնար պանդկային սենեակ վարձել, եւ ստիպուած էր տեղաւորուիլ տասնմէկ ուսանողի հետ երեք սենեակ ունեցող բնակարանի մը մէջ:

Համաժողովի ընթացքին յայտարարուեցաւ յատուկ զոհաբերութիւն: Համաժողովի առաջնորդը խրախուսեց մասնակիցներուն աղօթել այն բանին համար, թէ ինչ որ իրենք պէտք է զոհաբերէին: Մայքը լսեց Տիրոջմէն հետեւեալը. «Կ'ուզեմ, որ 200 տոլար զոհաբերես»:

«Աստուած, ատիկա իմ ունեցած ամբողջ գումարն է», - ընդդիմացաւ Մայքը:

Տէրը մեղմօրէն պատասխանեց. «Ես չեմ խնդրեր, որ աւելին տաս»:

Մայքը հնազանդեցաւ եւ զոհաբերեց իր ունեցած գումարն ամբողջութեամբ: Ատորմէ յետոյ Աստուած պատուիրեց Մայքին մինչեւ այդ տարուան աւարտը զոհաբերել ամսական 100 տոլար՝ բացի իր տասանորդէն:

Շուտով Աստուած սկսաւ մարտավարական ծրագիրներ տալ Մայքին, եւ անոր նոր գործը կայուն ձեւով ընդլայնեցաւ: Յաջորդ տարի Մայքը զգաց, որ Աստուծոյ Թագաւորութիւնը կառուցելու համար պէտք է զոհաբերէր ամսական 400 տոլար՝ բացի իր տասանորդէն:

Մէկ տարի յետոյ ան արդէն կը զոհաբերէր ամսական 1.000 տոլար՝ բացի իր տասանորդէն: Յաջորդ տարի այդ գումարը հասաւ 4.000 տոլարի՝ բացի իր տասանորդէն, իսկ երկու տարի յետոյ հասաւ 10.000 տոլարի՝ բացի իր տասանորդէն:

Այդ ժամանակ Մայքը խնդրեց Տիրոջ Թագաւորութեան համար 10 միլիոն տոլար զոհաբերելու կարողութիւն տալ իրեն: Կը թուէր՝ անոր խնդրանքը մեծ էր, գրեթէ անիրականանալի, բայց ան հաստատուն էր իր համոզուածութեան եւ խնդրանքի մէջ: Այնուամենայնիւ, այն, ինչ որ ան լսեց իր սրտին մէջ, ցնցեց անոր. «Որդի՛ս, ինչո՞ւ կը սահմանափակես Ինձի»: Մայքը հեռացուց իր սահմանափակումները



Եւ սկսաւ հաւատալ ա՛լ աւելիին համար: Կարճ ժամանակ յետոյ անոր զոհաբերութիւնները արագօրէն աւելցան: Յաջորդ տարի ան կը զոհաբերէր ամսական մօտաւորապէս 17.000 տոլար՝ բացի իր տասանորդէն: Այդ գումարը հասաւ ամսական 25.000-ի, իսկ յետոյ՝ 40.000-ի, եւ որոշ ժամանակ յետոյ՝ 50.000-ի: Ի վերջոյ, Մայքը սկսաւ զոհաբերել ամսական 100.000 տոլար՝ բացի իր տասանորդէն՝ Աստուծոյ Թագաւորութիւնը կառուցելու համար: Վերջին անգամ, երբ կը զրուցէի անոր հետ, ան հասած էր ամսական 150.000 տոլարի զոհաբերութեան՝ բացի իր տասանորդէն:

Մայքը շատ բարեկեցիկ կեանք կը վարէ, բայց կ'ապրի իր եկամուտի մօտաւորապէս 10-15 տոկոսով: Այո՛, դուք ճիշդ կարդացիք. Ան կը զոհաբերէ իր տարեկան եկամուտի գրեթէ 85-90 տոկոսը: Ան կը վերագրէ իր յաջողութիւնը Աստուծոյ Խօսքը սորվելուն, աղօթքի մէջ Աստուծոյ ձայնը լսելուն եւ թոյլ կու տայ, որ իրմէ հասուն քրիստոնեաները աշակերտեն իրեն:

Խօսելով բազմապատկման մասին, անկարելի է անտեսել *բաշխելը*, քանի որ, որպէս կանոն, այն բազմապատկման գլխաւոր բաղադրիչն է: Բարի շարժառիթներ ունեցող բազմաթիւ հաւատացեալներ այսպէս կը մտածեն ֆինանսական *զոհաբերութեան* մասին. «*Ի՞նչ կը կամենամ ես տալ՝ յանուն այլ մարդոց*»: Ատիկա ազնիւ եւ բարեպաշտ մօտեցում է, բայց եթէ անոնք միայն այդպէս կը դիտարկեն զոհաբերութիւնը, ապա անոնց պատկերացումը լիարժէք չէ: Թոյլ տուէք բացատրել:

Առաջինը՝ ասիկա ճիշդ է. Աստուած դրած է մարդոց հանդէպ ունեցած Իր սէրը մեր սրտերուն մէջ, եւ այդ պատճառով, մեր մէջ անձնուիրաբար *բաշխելու* եւ *ծառայելու* ցանկութիւն կայ: Այնուամենայնիւ, *իմաստուն* բաշխողը կը դիտարկէ զոհաբերութիւնը ոչ միայն որպէս սիրոյ նուէր եւ ծառայութիւն, այլեւ՝ որպէս *ներդրում*: Ներդնելը կը նշանակէ ձեռնպահ մնալ որեւէ միջոց սպառելէն՝ այն աւելցնելու համար: Յատկապէս ֆինանսներու պարագային ատիկա կը նշանակէ ներկայ պահուն չծախսել միջոցները, որպէսզի օգտագործէք ատոնք՝ աւելցնելու համար:

Քանի մը տարի առաջ Լիզան եւ ես գտանք երկու հողատարածք: Մենք հասկցանք, որ ատոնք կը վաճառուէին ցած գինով, եւ որ ժամանակի ընթացքին ատոնց գինը պիտի աւելնար: Մենք ունէինք կանխիկ գումար՝ երկուքն ալ գնելու համար, եւ որոշեցինք հրաժարիլ մեր կանխիկ գումարը անձնական սպառման համար ծախսելէն՝ մեր ֆինանսներն աւելցնելու համար: Այդ հողատարածքներու գինը բարձրացաւ շատ աւելի, քան մենք կ'ակնկալէինք, եւ երկու տարի

յետոյ մեր ներդրումը կրկնապատկուեցաւ: Այժմ մենք կրնայինք ներդրում կատարել աւելի բարձր մակարդակի վրայ:

Յիսուս կ'ըսէ, որ ներդնելով Իր Թագաւորութեան մէջ, մենք «բազմապատիկ հատուցում կը ստանանք այս կեանքին մէջ» (Ղուկաս 18.29,30, NLT): Ան չ'ըսեր «յաջորդ կեանքին մէջ», այլ՝ «այս կեանքին մէջ»: Լիզան եւ ես խանդավառուեցանք, քանի որ այդ հողատարածքներու մէջ ներդրուած գումարը կրկնապատկուեցաւ: Այնուամենայնիւ, այն, ինչ որ Յիսուսը կը պնդէ, նոյնիսկ մօտ չէ ստոր. կայ ահռելի տարբերութիւն կրկնակիի եւ բազմապատիկի միջեւ: Ինչպիսի՞նք ներուժ ունի բազմապատիկ աւելցած ներդրումը: Մենք կրնանք պատկերացում կազմել այս մասին Մայքի կեանքի օրինակով:

Պօղոս առաքեալը կը համեմատէ մեր բաշխելը սերմեր ցանելու հետ: Կախուած արտաքին պայմաններէն՝ այն ցորենը, որ չ'օգտագործուիր սնունդի մէջ, այլ կը ներդրուի հողի մէջ, կրնայ տալ մինչեւ հարիւրապատիկ արդիւնք: Ատիկա բազմապատիկ հատուցում է: Ահա թէ ինչու գրուած է. «Յօժարաբար տուր եւ աւելի հարուստ կը դառնաս. ժլատ եղիր եւ կը կորսնցնես ամէն ինչ» (Առակաց 11.24, NLT): Սողոմոնը, Յիսուսը եւ Պօղոսը չէին շեշտադրեր բաշխելու վերաբերեալ այս ճշմարտութիւնը, եթէ կարիք չըլլար, որ հաւատացեալները մտածէին առատութեան եւ բազմապատկման մասին:

Շատերը սիրոյ զոհաբերութիւն կը համարեն այն, որ Մայքը որոշած է ապրիլ իր եկամուտի 10-15 տոկոսով: Այնուամենայնիւ, Մայքի պատկերացումը աւելի լայն է: Քանի որ ան լեցուած է Աստուծոյ իմաստութեամբ, քանի որ ան լուսաւորած է իր անձը երկու հազար զոց սորված Աստուածաշնչեան խօսքերով, ան կը դիտարկէ ատիկա ոչ միայն որպէս սիրոյ զոհաբերութիւն, այլեւ որպէս ներդրում:

Ան կը դիտարկէ ատիկա նոյն կերպով, ինչպէս Լիզան եւ ես կը դիտարկէինք այդ երկու հողատարածքները: Անոր մօտեցումը կարելի է համեմատել յայտնի ճաշարան ունեցող ընտանիքի մը մարտավարութեան հետ: Փոխարէնը ամբողջ եկամուտը սպառելը, այդ ընտանիքը կ'առանձնացնէ եկամուտի զգալի մասը, որպէսզի ձեռք ձգէ նոր շէնքեր, վարձէ նոր աշխատողներ, գնէ աւելի շատ կերակուր եւ ընէ այն, ինչ որ անհրաժեշտ է՝ իրենց գործը մեծցնելու համար: Ճիշդ վարուելու պարագային անոնք կ'ունենան հինգ ճաշարան, եւ անոնց եկամուտը կը հնգապատկուի: Վերջաւորութեան պիտի կարենան օրինութիւն դառնալ աւելի շատ մարդոց համար, քան՝ եթէ անոնք ընդամէնը մէկ ճաշարան ունենային:

Եթէ Մայքը դիտարկէր իր զոհաբերութիւնները այլ կերպով, բայց

ոչ՝ որպես ներդրում, ան չէր սկսեր հասկնալ բաշխելու այս անելի խոր իմաստը: Տաղանդներու առակը ճիշդ այս մասին է: Կարդացէ՛ք Յիսուսին խօսքերը. «Այն ծառան, որ հինգ պարկ արծաթ ստացաւ, սկսաւ ներդնել այդ դրամը եւ շահեցաւ եւս հինգը» (Մատթէոս 25.16, NLT): Ան կ'օգտագործէ նոյն *ներդնել* բառը՝ ցոյց տալու համար, թէ ինչպէս այդ ծառան բազմապատկեց իր ստացածը:

## ԵՄ ՄԵԿ ԱՌԱԿ ԲԱԶՄԱՊԱՏԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Կարդանք եւս մէկ առակ, որ Յիսուսն օգտագործեց՝ բազմապատկուինը նկարագրելու համար.

«Բազմութիւնը կը լսէր այն ամէնը, ինչ որ Յիսուսը կ'ըսէր: Եւ քանի որ Ան կը մօտենար Երուսաղէմին, պատմութիւն մը պատմեց անոնց՝ շտկելու համար այն տպաւորութիւնը, թէ Աստուծոյ Թագաւորութիւնն անմիջապէս պիտի սկսի» (Ղուկաս 19.11, NLT):

Ինծի հաճելի կը թուի այս առակի ներածութիւնը: Մարդիկ կը սպասէին, որ Յիսուսը պիտի հաստատէր Թագաւորութիւնը եւ պիտի ազատէր իրենց Հռոմի ճնշումէն եւ իշխանութենէն: Ան շտկեց անոնց մտածելակերպը՝ տալով իրատեսական պատկերացում. Ան կը ցանկար, որ մենք կառուցենք Աստուծոյ Թագաւորութիւնը Իր երթալէն յետոյ: Բայց առիկա ինչպէ՞ս պիտի կատարուի: *Ներդրման* միջոցով: Լսեցէ՛ք այս պատմութիւնը.

«Ազնուական մը կանչուեցաւ հեռաւոր կայսրութիւն մը՝ թագաւորական թագ ստանալու եւ վերադառնալու համար: Մեկնելէն առաջ, ան կանչեց իր ծառաներէն տասը եւ բաժնեց անոնց միջեւ տասը մնաս արծաթ՝ ըսելով. «*Ներդրեցէ՛ք* ասիկա ինծի համար, մինչեւ իմ գալը»» (Ղուկաս 19.12,13, NLT):

Ինչպէս եւ Մատթէոսի առակին մէջ, Ան կը պատուիրէ մեզի «ներդնել»: Մենք պէտք չէ ծոյլ ըլլանք այն բանին մէջ, ինչ որ վստահուած է մեզի, այլ պէտք է *քրտնաջան* եւ *խելամտորէն* աշխատինք:

Թէեւ այս երկու առակները նոյնը կը թուին, այնուամենայնիւ, ատոնք տարբեր են: Ուսումնասիրենք ատոնց տարբերութիւնները: Առաջինը՝ Մատթէոսը կը խօսի երեք ծառայի մասին, իսկ Ղուկասը՝ տասը ծառայի: Երկրորդը՝ Մատթէոսի պատմութեան մէջ ծառաներու

ստացած արծաթը տարբեր չափերու էր, իսկ այս առակին մէջ իւրաքանչիւրին տրուեցաւ հաւասար չափով՝ մէկ մնաս արծաթ: Երրորդը՝ Մատթէոսի պատմութեան մէջ չափը ոչ թէ մէկ մնաս էր, այլ 75 անգամ անելի մեծ միաւոր՝ մէկ տաղանդ: Համեմատելով այս երկու առակները՝ կը կարծեմ, որ Մատթէոսի առակը այն պարգեւներու մասին է, որոնք չեն տրուիր հաւասարաչափ, իսկ Ղուկասի առակը այն ամէնուն մասին է, ինչ որ իւրաքանչիւր հաւատացեալ ստացած է Աստուծոյ մոյն չափով՝ հաւատքը՝ որպէս հիմք, Աստուծոյ սէրը, Աստուծոյ Խօսքը, մեր ուխտի օրհնութիւնները եւ այլն: Այնուամենայնիւ, երկուքին հիման վրայ ալ ինկած են նոյն սկզբունքները: Շարունակենք այս պատմութիւնը.

«Այն բանէն յետոյ, երբ ան թագաւորական թագ ստացաւ, վերադարձաւ եւ կանչեց այն ծառաները, որոնց տուած էր դրամը: Ան կը ցանկար իմանալ, թէ որքան էին անոնց շահոյթները: Առաջին ծառան զեկուցեց. «Տէ՛ր, ես *ներդրեցի քու դրամը եւ սկզբնական գումարէն տասը անգամ անելի աշխատեցայ*»:

«Կեցցե՛ս, - բացականչեց թագաւորը: - Ղուն լաւ ծառայ ես: Ղուն *հաւատարիմ* եղած ես այն փոքրի մէջ, որ վստահեցայ քեզի. այնպէս որ, որպէս վարձատրութիւն, դուն պիտի ըլլաս *տասը քաղաքի* կառավարիչ»» (Ղուկաս 19.15-17, NLT):

Մենք պէտք է ընդգծենք քանի մը միտք: Առաջինը՝ այդ ծառան ներդրեց այն, ինչ որ տրուած էր իրեն: Երկրորդը՝ ան *քրտնաջան* եւ *խելամտօրէն* աշխատեցաւ, որուն արդիւնքը տասնապատիկ բազմապատկումն էր: *Խելամտօրէն* աշխատիլը կը նշանակէ վարուիլ Աստուծոյ իմաստութեամբ, իսկ ատիկա տեղի կ'ունենայ միայն Աստուծոյ խորհուրդը լսելու պարագային, ինչպէս որ կը վարուէր իմ ընկեր Մայքը: Երրորդը՝ կրկին, *բազմապատկումը* ուղղակիօրէն կը վերագրուի *հաւատարմութեան*: Հոս ոչ մէկ գործողութիւն կամ առաքինութիւն նշուած է, որովհետեւ Աստուծոյ համար հաւատարիմ ըլլալը կը նշանակէ բազմապատկել: Վերջինը, ծառայի յաւիտենական վարձատրութիւնը համաչափ է իր բազմապատկման. առաջին ծառային վստահուեցաւ տասը քաղաքի կառավարում:

Այժմ դիտարկենք երկրորդ ծառան.

«Յաջորդ ծառան զեկուցեց. «Տէ՛ր, ես *ներդրեցի քու դրամը եւ աշխատեցայ հինգ անգամ անելի սկզբնական գումարէն*»:

«Կեցցե՛ս, - ըսաւ թագաւորը: - Դուն պիտի ըլլաս հինգ քաղաքի կառավարիչ»» (Ղուկաս 19.18,19, NLT):

Այս ծառան չբազմապատկեց տասը անգամ, այլ՝ հինգ: Անոր յաւիտենական վարձատրութիւնը արտացոլեց անոր ներդրման մակարդակը՝ հինգ քաղաք, ոչ թէ տասը: Ինչո՞ւ ան չբազմապատկեց տասը անգամ, ինչպէս միւս ծառան: Թերեւս ան նոյնքան ուշադի՞ր չէր Աստուծոյ իմաստութիւնը լսելուն: Իսկ եթէ ան հնարաւորութիւննե՞ր բաց ձգած էր: Հնարաւոր է, որ ան կանգ առած էր հետագայ տարիներուն վրայ, ինչպէս մեր առաջին գլուխին մէջ կը պատրաստուէր ընելու Սթէնը: Կամ ան թոշակի անցնելու մտածելակե՞րպ ունէր:

Քանի մը տարի առաջ կը քարոզէի բազմապատկման մասին առաջնորդական համաժողովի մը ընթացքին: Քալիֆորնիոյ մէջ առեւտրային անշարժ գոյք կառուցող գլխաւոր գործարարներէն մէկը, որ արդէն միլիոնաւոր տոլարներ նվիրաբերած է Աստուծոյ Թագաւորութեան, մօտեցաւ ինծի քարոզէն յետոյ: Ան նայեցաւ ինծի ցնցուած, բայց նոյնպէս լուսաւորուած հայեացքով, եւ ըսաւ.

- Ճո՛ն, ես սկսած էի մտածել կանգ առնելու մասին, քանի որ յաջողութեան հասած էի: Կարելի է դիւրութեամբ տրուիլ այս մտածելակերպին, բայց այժմ կը տեսնեմ, որ ատիկա սխալ է: Ես կը շարունակեմ ջանասիրաբար աշխատիլ եւ բազմապատկել այն, ինչ որ Աստուած տուած է ինծի:

Հնարաւոր է, որ այդ մարդուն ի սրտէ ապաշխարութիւնը փոխէ անոր ընթացքը, եւ ան հնգապատիկ բազմապատկողէն դառնայ տասնապատիկ բազմապատկող:

Իսկ երրորդ ծառան:

«Բայց երրորդ ծառան վերադարձուց միայն սկզբնական գումարը եւ ըսաւ. «Տէ՛ր, ես պահեցի քու դրամը եւ ապահով պահեցի: Ես կը վախնայի, քանի որ դուն այնպիսի մարդ ես, որուն հետ դժուար է գործ ունենալը. Դուն կը վերցնես այն, ինչ որ քուկդ չէ, եւ կը հնձես այն բերքը, որ չես ցանած»»:

«Չա՛ր ծառայ, - թնդաց թագաւորը: - Քու խօսքերը կը դատապարտեն քեզ: Եթէ դուն գիտէիր, որ ես խիստ մարդ եմ, որ կը վերցնէ այն, ինչ որ իրենինը չէ, եւ կը հնձէ այն բերքը, որը չէ ցանած, ինչո՞ւ չաւանդեցիր իմ դրամը դրամատան մէջ: Ես գոնէ կը կարենայի տոկոսներ ստանալ ատորմէ»» (Ղուկաս 19.20-23, NLT):

Ինչպէս եւ Մատթէոսի առակին մէջ, այս ծառան ունէր նոյն երկու լուրջ խնդիրները: Առաջինը՝ ան վախցած էր, եւ երկրորդը՝ ան չէր ճանչնար իր տիրոջ բնաւորութիւնը: Այս առակը եւս մէկ անգամ ցոյց կու տայ, որ Աստուծոյ տուածը *պահպանելը հաւատարմութիւն* չէ, այլ՝ *չարութիւն*: Դուք նկատեցի՞ք, որ թագաւորը *թնդաց*: Ծուլութիւնը բարկացուց այդ կառավարիչին, եւ ան ցոյց տուաւ ատիկա: Շատ սթափեցնող է, եթէ մտածէք այդ մասին:

Այն, ինչ տեղի ունեցաւ ատկէ յետոյ, ա՛լ անելի կը հաստատէ մեր հետեւութիւնը Մատթէոսի առակէն.

«Եւ, շրջուելով իր քով կանգնածներուն, թագաւորը հրամայեց.  
«Վերցուցէ՛ք դրամը այս ծառայէն եւ տուէ՛ք անոր, որ տասը մնաս ունի»:

«Բայց, տէ՛ր, - ըսին անոնք, - ան արդէն տասը մնաս ունի»:

«Այո՛, - պատասխանեց թագաւորը, - եւ որոնք արդիւնաւէտ կ'օգտագործեն այն, ինչ որ իրենց տրուած է, ա՛լ անելին պիտի տրուի: Բայց անոնք, որոնք ոչինչ կ'ընեն, նոյնիսկ այն փոքրը, որ ունին, պիտի վերցուի»» (Ղուկաս 19.24-26, NLT):

Եւս մէկ անգամ կը տեսնենք, որ Աստուած համայնավարական Արարիչ չէ, այլ անելի «դրամատիրական» է Իր մտածելակերպով: Յիսուսը յատուկ ընդգծեց, որ հոն գտնուող մարդիկ ընդդիմացան, քանի որ առաջին ծառան արդէն իսկ տասը մնաս արծաթ ունէր, եւ տէրը շտկեց անոնց «արդար» մտածելակերպը. «անոնք, որոնք արդիւնաւէտ են, կը *ներդնեն*, անելին կը տրուի»: Եւ հակառակը. «անոնք, որոնք կը *պահպանեն*, նոյնիսկ այն փոքրը, որ ունին, կը վերցուի»:

Ե՛ւ զարմանալի է, ե՛ւ զարհուրելի, որ եթէ մենք չընենք այն, ինչ որ ըրաւ Մայքըլ՝ տեւական ժամանակ չտրամադրենք Աստուծոյ Խօսքին եւ Անոր հետ հաղորդակցելուն, մենք աննկատ կը սկսինք պատկերացնել Աստուծոյ բնաւորութիւնը այն միջավայրի տեսանկիւնէն, ուր որ կ'ապրինք: Մենք կրնանք պատկերացնել Անոր մեր հասարակութեան տեսանկիւնէն, Հոլիուտի տեսանկիւնէն, Ինսթալքրամի տեսանկիւնէն, որեւէ լրատուական ցանցի տեսանկիւնէն, խիստ հօր տեսանկիւնէն, կրօնի տեսանկիւնէն, ինչպէս նաեւ որեւէ փորձառութեան եւ հասարակական մտածելակերպի տեսանկիւնէն, որ կա՛մ հաճելի կը թուի մեզի, կա՛մ՝ ոչ: Սակայն երբ մենք մտերմօրէն ճանչնանք Աստուծոյ եւ Անոր Խօսքը, կը բացայայտենք այդ սխալական տեսանկիւնները:

## ԲՈՒՈՐԸ ԿԱՆԶՈՒԱԾ ԵՆ ԲԱՇՆԵԼՈՒ ՀԱՍԱՐ

Մայքը ունի *բաշխելու պարզեւ*. ան ակնառու է ատոր մէջ: Այնուամենայնիւ, բոլորս պէտք է *բաշխողներ* ըլլանք:

Որպէս պարզաբանում, թոյլ տուէք համեմատել ասիկա աշխարհով մէկ երթալու եւ Աւետարանը քարոզելու Յիսուսի յանձնարարականին հետ (կարդացէ՛ք Մարկոս 16.15,16): Այս պատուէրը տրուած է բոլոր հաւատացեալներուն: Բոլորս պէտք է դեսպաններ ըլլանք եւ կիսուինք Աւետարանով կորսուածներու հետ: Այս մասին կը գրէ նաեւ Պօղոսը. «Կատարէ՛ աւետարանիչի աշխատանքը» (Բ. Տիմոթէոս 4.5, NLT), եւ անոր խօսքերը ուղղուած են իւրաքանչիւր հաւատացեալի:

Այնուամենայնիւ, գոյութիւն ունի առանձին ծառայութիւն եւ պարզեւ, որ կը կոչուի *աւետարանիչ*: Պօղոսը կը գրէ. «Եւ Ան... տուաւ... որոշ մարդոց՝ *աւետարանիչներ (ըլլալու)*» (Եփեսացիս 4.11): Ոչ թէ բոլորը, այլ՝ որոշ մարդիկ կանչուած են այս ծառայութեան մէջ: Այս պարզեւը աչքի կ'իյնայ մարդոց հունձք հաւաքելով: Գործք Առաքելոց գիրքին մէջ աւետարանիչ կ'անուանուի Փիլիպպոսը, ոչ թէ բոլոր հաւատացեալները (կարդացէ՛ք Գործք 21.8): Պիլի Կրեհէմը, Թի էլ Օսպըրնը եւ Ռէյնհարտ Պոնքէն օժտուած աւետարանիչներ էին: Անոնցմէ իւրաքանչիւրը՝ իր խումբի օգնութեամբ, Քրիստոսին առաջնորդած է տասնեակ միլիոնաւոր մարդոց: Անոնք բազմապատկած են Աստուծմէ՝ իրենց տրուած պարզեւը ճիշդ նոյն կերպով, ինչպէս Մայքը եւ միւսները, որոնց մասին աւելի վաղ պատմեցի:

Ինչպէս եւ անոնք, բոլորս կանչուած ենք *բաշխելու* համար, սակայն կան մարդիկ, որոնք ունին *բաշխելու խարիզման*: Անոնք աչքի կը զարնեն ֆինանսներ բաշխելով ճիշդ այնպէս, ինչպէս աւետարանիչը աչքի կը զարնէ մարդոց հոգիներ շահելով: Այս գիրքի ուղերձը Աստուծմէ մեզի տրուած պարզեւները բազմապատկելու մասին է: Այնուամենայնիւ, քանի որ ֆինանսներ բաշխելը բազմապատկման առանցքային կողմերէն մէկն է, մինչեւ այս գլուխի ավարտը ես կը ցանկամ յստակ ցոյց տալ, որ մեզմէ իւրաքանչիւրը կանչուած է բազմապատկման՝ ֆինանսներ բաշխելու բնագաւառին մէջ:

Ծառայութեան մէջ 40 տարի ըլլալու ընթացքին ականատես եղած եմ երկու ծայրայեղութեան ֆինանսներու եւ բաշխման վերաբերեալ: Այս ծայրայեղութիւնները կ'ազդեն չափազանց շատ մարդոց վրայ եկեղեցիին մէջ, եւ ես իսկապէս յոյսով եմ, որ այս իրավիճակը կը փոխուի: Առաջինը՝ կան մարդիկ, որոնք կու տան՝ միայն ստանալու համար. անոնք կը ցանկան աւելին՝ եսասիրական շարժառիթներէն մեկնելով: Եթէ անաչառ ըլլանք եւ կոչենք երեսոյթները իրենց

անուններով, այս շարժառիթը կարելի է նկարագրել մէկ բառով՝ *ազահութիւն*:

Ցաւօք, այս սխալական մտածելակերպը օգնած է ծնունդ տալու հակառակ ծայրայեղութեան: Ատոր մէջ հիմնականին կը յայտնուին մարդիկ, որոնք չեն հետեւիր Մայքի օրինակին, այսինքն՝ չեն ուսումնասիրեր Աստուծոյ Խօսքի ամբողջական խորհուրդը: Անոնք կ'անարգեն որեւէ ուսմունք, որ կը կառուցէ մարդոց հաւատքը ֆինանսներ բաշխելու վերաբերեալ: Այս դիրքորոշումը կրնայ նոյնիսկ հասնիլ այնպիսի ծայրայեղութեան, որ մերժէ զոհաբերութիւններու հետ առնչուող որեւէ բան: Ըստ էութեան, այս գաղափարին սատարողները կը սահմանափակեն թէ՛ իրենց, թէ՛ իրենց ունկնդիրներու արդիւնաւէտութիւնը: Որպէս հետեւանք, Աւետարանի աշխատանքը ընդհանուր առմամբ կը սահմանափակուի:

Յիսուսին՝ որպէս Տէր ընդունելէն յետոյ Լիզան եւ ես մէկ եկեղեցւոյ անդամներ էինք, որ լայնօրէն կ'ուսուցանէր բաշխման մասին: 1980-ական թուականները ժամանակահատուած մըն էր, երբ շատերը աւելի կեդրոնացած էին իրենց վրայ, քան՝ միսիոներութեան: Թէեւ մեր եկեղեցւոյ ուսմունքը հիմնականին ճշգրիտ էր, այնուամենայնիւ, ճիշդ բնաւորութիւն չունենալու պատճառով, շատերը կը զոհաբերէին, որպէսզի ստանային աւելի մեծ տուներ, քէլին աւելի լաւ եւ ճոխ ինքնաշարժներ, երթային թանկարժէք արձակուրդներու եւ կատարէին իրենց բազմաթիւ եսակեդրոն ցանկութիւնները: Անոնց նպատակները գրեթէ նոյնն էին, ինչպէս շատ անհաւատներու ձգտումները՝ այն տարբերութեամբ, որ անոնք կը հետեւէին սուրբգրային բանաձեւի: Լիզան եւ ես ճիշդ սկիզբէն գիտէինք, որ այդ մօտեցումը անհաւասարակշռուած էր, սակայն չէինք կրնար ձեւակերպել, թէ որն էր խնդիրը:

Անկեղծ ըլլալու համար, նման միջավայրի մէջ ըլլալէն յետոյ Լիզան եւ ես պէտք է մաքրման եւ հասունութեան որոշակի ընթացք անցնէինք՝ բաշխումը ողջամիտ կերպով դիտարկելու համար: Ի վերջոյ, այդ եկեղեցւոյ առաջնորդը առիթ տուաւ գայթակղութեան եւ կորսնցուց ամէն ինչ: Նման բան տեսնելէն յետոյ մեզի համար գայթակղիչ էր հակառակ ծայրայեղութեան անցնիլը, սակայն մենք վճռած էինք հաւատալ Աստուծոյ Խօսքին, ոչ թէ մեր փորձառութեան:

Երկու տարի ետք այն բանէն յետոյ, երբ այդ եկեղեցին ուղարկեց մեզ՝ սկսելու մեր ծառայութիւնը, հետս գերբնական փորձառութիւն մը տեղի ունեցաւ, որ պատասխանեց շատ հարցումներու: Ես հրաւիրուած էի ծառայութեան մը եւ կը պատրաստուէի քարոզելու, երբ Սուրբ Հոգին հարցուց ինձի. «Որդի՛ս, դուն գիտե՞ս, թէ ինչ է *կրօնի հոգին*»:



Ես կարդացած էի, քարոզած էի, լսած էի քարոզներ եւ նոյնիսկ գրած էի կրօնական մտածելակերպի մասին, բայց երբ Սուրբ Հոգին հարցուց առիկա, ես անմիջապէս հասկցայ, որ կար այնպիսի բան, ինչ որ ես չէի հասկցած: Եւ պատասխանեցի. «Հաւանաբար, չեմ գիտեր: Այլապէս Դուն չէիր հարցներ ինձի: Ի՞նչ է այն»:

Ես լսեցի Սուրբ Հոգիին պատասխանը. «Կրօնի հոգին այն է, երբ մարդը կ'օգտագործէ Իմ Խօսքը՝ իր կամքը կատարելու համար: Նման մարդը չի կատարեր Իմ ցուցմունքները, եւ Իմ սրտի ցանկութիւնները առաջնահերթ չեն անոր համար: Ան կը կիրառէ Իմ Խօսքը՝ իր շահին համար»:

Այդ խօսքերը խթանեցին այն փոփոխութիւնները, որոնք պէտք է կատարուէին իմ սրտին մէջ նման թունաւոր մթնոլորտի մէջ գտնուելէն յետոյ: Սուրբ Հոգիէն այդ ուղերձը ցոյց տուաւ, որ մենք կրնանք բաշխել եւ նոյնիսկ հնձել ատոր արդիւնքները, սակայն ընել ատիկա սխալ շարժառիթով: Աստուծոյ օրէնքները օգուտ կը բերեն, նոյնիսկ եթէ մարդու շարժառիթը ճիշդ չէ:

Քանի որ Պօղոս առաքեալը օգտագործեց հողագործութիւնը՝ բաշխումը նկարագրելու համար, թոյլ տուէք նոյնը ընել: Հողագործը կրնայ սերմ ցանել մէկ նպատակով՝ ամբողջ բերքն իրեն պահելու համար: Ան կը կառուցէ աւելի մեծ ամբարներ, որպէսզի պահեստաւորէ այն ամէնը, ինչ որ չի կրնար սպառել, եւ կ'ըսէ ինքնիրեն. «Շատ բարիքներ ունիս՝ շատ տարիներու համար ամբարուած: Հանգստացի՛ր, կե՛ր, խմե՛, զուարճացի՛ր» (Ղուկաս 12:19):

Աստուծոյ պատասխանը այդ մարդուն հետեւեալն է. «Անմի՛տ» (խօսք 20): Ցանքի եւ հունձքի սկզբունքը գործեց այդ հողագործի համար, թէեւ, ինչպէս կը նշէ Յիսուսը, ան ազահ էր:

Մէկ այլ հողագործ կրնայ մարդոց օգնելու եւ կերակրելու ցանկութիւն ունենալ: Ան կ'ունենայ հունձք՝ որպէս հողագործ, բայց անոր արծագանգը ուրիշ կ'ըլլայ: Ան կ'ըսէ ինքնիրեն. «Ես ոչ միայն կերակուր ունիմ, այլեւ կրնամ օգնել իմ համայնքին աւելի ուժեղ եւ առողջ ըլլալու: Ես կրնամ առատածեռն ըլլալ»:

Ցանելու եւ հնձելու օրէնքը հաւասարապէս կը գործէ երկուքին համար ալ: Անհեթեթութիւն կ'ըլլար, եթէ բոլորը դադրէին ցանելէ եւ հնձելէ, քանի որ առաջին հողագործի շարժառիթը ազահութիւնն էր: Այո՛, շատերը Աստուծոյ Թագաւորութեան մէջ ճիշդ այսպէս վարուած են բաշխման բնագաւառին մէջ:

Եկէք աւելի խոր ուսումնասիրենք Պօղոսի խօսքերը: Ան կը սկսի այսպէս.

«Ես մտածեցի, որ պէտք է ուղարկեմ այս եղբայրները ինձնէ առաջ՝ համոզուած ըլլալու համար, որ *այն նուէրը*, որ դուք խոստացաք, պատրաստ է: Բայց կը ցանկամ, որ ատիկա ըլլայ յօժարաբար տրուող *նուէր*, ոչ թէ դժկամութեամբ տրուող» (Բ. Կորնթացիս 9.5, NLT):

Պօղոսը ակնյայտօրէն կը խօսի ֆինանսական նուիրատուութեան կամ զոհաբերութեան մասին: Ան կը շարունակէ օգտագործել հողագործութեան սկզբունքը՝ պատկերելու համար այն, ինչ որ Աստուած կ'ընէ բաշխողներու համար.

«Յիշեցէ՛ք ասիկա. այն հողագործը, որ միայն քիչ մը սերմ կը ցանէ, քիչ բերք կը ստանայ: Բայց ան, որ առատօրէն կը ցանէ, առատ բերք կը ստանայ» (Բ. Կորնթացիս 9.6, NLT):

Եթէ բաշխելու միակ շարժառիթը մարդոց օգնելն է, ինչո՞ւ Պօղոսը կը խօսի այն մասին, որ բաշխելու արդիւնքով մենք հունձք պիտի ստանանք: Մի՞թէ սխալ է բազմապատկման երկրորդական ցանկութիւն ունենալ, որ կ'օգնէ բորբոքելու եւ ընդլայնելու առաջնահերթ ցանկութիւնը՝ Աստուծոյ Թագաւորութեան համար մարդոց կեանքերը կառուցելը: Հնարաւոր է, որ Պօղոսը կը սորվեցնէր Կորնթոսի եկեղեցւոյ նորահաւատներուն բազմապատկել իրենց արդիւնաւէտութիւնը, ինչպէս որ Յիսուսը կը սորվեցնէր ատիկա Իր աշակերտներուն՝ պատմելով տաղանդներու մասին առակը: Կարելի՞ է ըսել, որ Պօղոսը կը յորդորէր անոնց առաջնորդուիլ գթասրտութեամբ, բայց միեւնոյն ժամանակ ներդրում կատարել՝ անելի մեծ օրհնութիւն դառնալու համար: Ես համոզուած եմ, որ Պօղոսի շարժառիթը ճիշդ ատիկա էր, քանի որ ան կը շարունակէ հետեւեալ կերպով.

«Իւրաքանչիւրն ինքը պէտք է սրտին մէջ որոշէ, թէ որքան նուիրաբերէ: Եւ մի՛ տաք դժկամօրէն կամ ճնշուելով: «Որովհետեւ Աստուած կը սիրէ այնպիսի մարդ, որ ուրախութեամբ կու տայ»: Եւ Աստուած առատօրէն կը մատակարարէ այն ամէնը, ինչին կարիքը, որ ունիք: Եւ դուք մշտապէս կ'ունենաք *ծեզի անհրաժեշտ ամէն ինչ*, եւ *առատ աւելցուկ, որպէսզի բաժնեկցիք ուրիշներուն հետ*» (Բ. Կորնթացիս 9.7,8, NLT):

Ուշադրութիւն դարձուցէք, որ երկու բան կը կատարուի: Անձնական կարիքները ամբողջացած կ'ըլլան, բայց Պօղոսը նաեւ յատուկ կը նշէ, որ պիտի ըլլայ *«առատ աւելցուկ, որպէսզի բաժնեկցիք ուրիշներուն*

*հետ»*: Մեր առատածեռն ըլլալու կարողութիւնը կը բազմապատկուի, քանի որ մենք ներդրում կը կատարենք կամ սերմ կը ցանենք: Յաջորդ խօսքերուն մէջ այս շարժառիթն ա՛լ աւելի կը հաստատուի.

«Որովհետեւ Աստուած է, որ կը մատակարարէ սերմ՝ հողագործի համար, եւ հաց՝ ուտելու համար: Նոյն կերպով, Ան կը մատակարարէ եւ *կ'աւելցնէ ձեր միջոցները* եւ կու տայ *առատածեռնութեան* մեծ հունձք ձեզի: Այո՛, դուք կը հարստանաք ամէն առունով, որպէսզի կարենաք *միշտ առատածեռն ըլլալ*» (Բ. Կորնթացիս 9.10,11, NLT):

Պօղոսը յատուկ կը յայտարարէ, որ բաշխման շնորհիւ Աստուած *կ'աւելցնէ ձեր միջոցները*, որպէսզի դուք կարենաք *միշտ առատածեռն ըլլալ*: Այս ճշմարտութիւնը կը վերաբերի ոչ միայն անոնց, որոնք օժտուած են ֆինանսներ բաշխելու պարգէտով. այն կը վերաբերի իւրաքանչիւր հաւատացեալի: Ասիկա հոգեւոր օրէնք է, որ Աստուած հաստատած է շատ վաղուց:

Երբ Լիզան եւ ես սկսանք մեր ծառայողական ընթացքը, մեր եկամուտը տարեկան 18.000 տոլար էր: Հազիւ կը կատարէինք մեր վճարումները: Ես կը յիշեմ մեր առաջին Սուրբ Ծնունդը ծառայութեան մէջ: Մենք ստիպուած էինք օգտագործել մեր ունեցած փոքրիկ գումարը, որպէսզի նիւթեր գնէինք՝ ձեռագործ նուէրներով փոքրիկ զամբիւղներ պատրաստելու համար: Մեր ունեցած դրամը այլեւս ոչ մէկ բանի համար բաւարար էր:

Երկու տարի յետոյ մեր հովիւը յատուկ զոհաբերութիւն հաւաքեց: Լիզան եւ ես կը ցանկայինք մասնակցիլ այդ ծառայողական նախածեռնութեան, որուն համար այն կը հաւաքուէր: Եւ Աստուած խօսեցաւ մեզի հետ. «Տուէ՛ք 1.000 տոլար»:

Նախորդ երկու տարուան ընթացքին հնարաւորինս կը խնայէինք, որպէսզի կանխավճար կուտակէինք տունի մը համար: Մենք կուտակած էինք 1.800 տոլար, ասիկա մեր ունեցած ամբողջ գումարն էր: Մենք չունէինք կենսաթոշակային միջոցներ, ներդրումներ կամ այլ խնայողութիւններ, որոնցմէ կրնայինք օգտուիլ կարիքի պարագային: Եթէ զոհաբերէինք այդ գումարը, մեր ամբողջ ունեցուածքը կը կազմէր 800 տոլար: Ակնյայտ էր, որ մեր երկամեայ խնայողութիւնը զգալիօրէն կը կրճատուէր այդ մէկ զոհաբերութեան պատճառով: Պէտք է տարիներ անցնէին, մինչեւ որ մենք բաւականաչափ գումար կուտակէինք տան կանխավճարի համար: Այնուամենայնիւ, զոհաբերեցինք, քանի որ կը ցանկայինք ազդեցութիւն ձգել մարդոց

կեանքերուն մէջ: Մենք նոյնպէս կը ցանկայինք աւելի առատածեռն ըլլալ: Գիտէինք Աստուածաշունչէն, որ մեր բաշխելու կարողութիւնը աւելցնելու միակ միջոցը մեր ունեցած քիչը բազմապատկելն էր:

Անցան տարիներ, եւ մենք կրցանք մարդոց նուիրել աւելին, քան զամբիւղներ, եւ զոհաբերել աւելի քան 1.000 տոլար: Միայն այս տարի միսիայի համար կրցած ենք զոհաբերել մեր առաջին մեծ զոհաբերութենէն յիսուն անգամ աւելի: Մենք կը ցանկանք ազդեցութիւն ունենալ աւելի շատ մարդոց վրայ ամէն օր: Աստուած բազմապատկեց մեր կարողութիւնը եւ զօրութիւն տուաւ՝ առատածեռն ըլլալու համար: «Այլուն» թարգմանութիւնը գեղեցիկ կերպով կը ներկայացնէ այս ճշմարտութիւնը.

«Առատածեռն Աստուած, որ կը մատակարարէ առատ սերմ հողագործին, որ կը դառնայ հաց մեր կերակուրներու համար, ա՛լ աւելի շռայլ է ձեր հանդէպ: Նախ՝ Ան կը լրացնէ ամէն կարիք եւ աւելին: Իսկ յետոյ կը բազմապատկէ սերմը, երբ դուք կը ցանէք այն, որպէսզի ձեր առատածեռնութեան հունձքը աճի: Դուք առատօրէն հարստացած կը դառնաք ամէն առումով, երբ առատածեռնութեամբ բաշխէք ամէն առիթով» (Բ. Կորնթացիս 9.10,11, TPT):

Ուշադրութիւն դարձուցէ՛ք՝ Ան շռայլ է մեր հանդէպ: Ան կը բազմապատկէ այն ներդրումը, որ մենք կը կատարենք՝ Իր Թագաւորութիւնը կառուցելու համար, որպէսզի *մեր առատածեռնութիւնը աւելնայ*: Մենք կ'աւելցնենք մեր հաշիւները Երկինքը, ուր ցեցն ու ժանգը չեն ապականեր, եւ գողերը կոտորանքով ներս չեն մտներ եւ չեն գողնար: Բայց մենք նոյնպէս պիտի վերցնենք այդ հաշիւներէն այս կեանքին մէջ: Այո՛, կայ յաւիտենական վարձատրութիւն, բայց կայ հաշիւ, որ մենք կ'աւելցնենք, որպէսզի առատածեռն ըլլանք նաեւ այս աշխարհին մէջ: Պօղոսը շատ պարզօրէն խօսեցաւ այս մասին՝ գրելով Փիլիպպէի հաւատացեալներուն.

«Ոչ թէ՛ որ ես կը ցանկամ կամ պատրաստակամ եմ ստանալու [ձեր] պարգէւը, բայց ես միանշանակ կը ցանկամ եւ պատրաստակամ եմ տեսնելու այն պտուղը, որ կ'աւելնայ ձեր հաշիւին [օրհնութիւններու հունձք, որ կ'աւելնայ ձեր հաշիւին]» (Փիլիպպեցիս 4.17, AMPC):

Ինչպէս որոշ մարդիկ ունին դրամատնային հաշիւներ, ֆոնտային հաշիւներ եւ ներդրումային հաշիւներ, բոլոր հաւատացեալներն ունին երկնային հաշիւ: Շնորհիւ այդ հաշիւին, մենք կրնանք բազմապատկել

մեր արդիւնաւէտութիւնը՝ Աստուծոյ Թագաւորութիւնն այս աշխարհին մէջ կառուցելու համար: Ի՞նչ տեղի կ'ունենայ, եթէ բոլոր հաւատացեալները իմանան այս հոգեւոր օրէնքը, հասկնան եւ հաւատան ատոր: Մենք շատ աւելի արագ կը հասնինք այս աշխարհին Աւետարանով: Այժմ պա՞րզ է, թէ ինչու Աստուծոյ Թագաւորութեան թշնամին ամէն ձեւով կը փորձէ թոյլ չտալ հաւատացեալներուն ֆինանսական սերմեր ցանել:

Լիզան եւ ես ամուսնական զոյգի մը՝ Ֆիլի եւ Տանայի մտերիմ ընկերներն ենք, որոնք մոլեգին բաշխողներ են: Անոնք կը զոհաբերեն իրենց եկամուտի գրեթէ 50 տոկոսը: Միայն վերջերս նուիրաբերեցին ծառայութեան մը 100.000 տոլար՝ աւետարանչական նախագիծի մը համար: Երկու օր յետոյ անոնք նուիրաբերեցին եւս 100.000 տոլար մէկ այլ ծառայութեան նախագիծի համար: Ես գիտեմ ատիկա, քանի որ երկրորդ ծառայութիւնը «Մեսինճըր Ինթերնեշընլ» էր:

Ֆիլը սկսաւ իր գործը շատ տարիներ առաջ: Այն միջին մակարդակի էր եւ շատ հեռու էր գերազանց ըլլալէն: Այնուամենայնիւ, 25 տարի առաջ Ֆիլը եւ Տանան խոստում տուին, որ յաջորդ երեք տարուան ընթացքին պիտի նուիրաբերեն ծառայութեան մը 250.000 տոլար: Ատիկա լիովին անհնար կը թուէր, բայց անոնք կը ցանկային, որ Աստուած միջամտէր իրենց գործերուն մէջ:

Ֆիլի գործը կտրուկ բարելաւուեցաւ, բայց ան չէր պատկերացներ, թէ իրականութեան մէջ որքան լաւ էին իր գործերը: Երեք ամիս յետոյ ան հասկցաւ, որ իր հաշիւին ունէր յաւելեալ 250.000 տոլար: Այնպէս որ, ան եւ Տանան որոշեցին անմիջապէս կատարել իրենց խոստումը՝ այդ գումարը երեք տարուան ընթացքին մաս-մաս տալու փոխարէն: Ան ըսաւ ինծի. «Ճո՛ւն, այդ ժամանակ էր, որ մենք սկսանք անհաւանական գումարներ նուիրաբերել»:

Ինչպէս Մայքը, անոնք նոյնպէս հրաժարեցան կանգ առնելէ: Առջեւ գացին, երբ կանգ առնելը աւելի դիրին էր, եւ անոնց երկնային հաշիւը մեծցաւ՝ հասնելով այնպիսի չափերու, որոնց մասին չէին ալ կրնար երազել: Մի՞թէ ասիկա չի վերաբերիր նաեւ ձեզի եւ ինծի: Պօղոսը յստակ կ'ըսէ մեզի.

*«Երբեք մի՛ կասկածիք, որ Աստուծոյ մեծ զօրութիւնը կը գործէ ձեր մէջ եւ աւարտին կը հասցնէ այս ամէնը: Ան կը հասնի անսահմանօրէն աւելիին, քան ձեր մեծագոյն խնդրանքն է, ձեր ամէնէն անհաւատալի երազանքն է, եւ կը գերազանցէ ձեր ամենահամարձակ մտքերը: Ան կը գերազանցէ այդ ամէնը, որովհետեւ Անոր հրաշագործ զօրութիւնը շարունակ ուժ կու տայ ձեզի»* (Եփեսացիս 3.20, TPT):

## ՃԵՂՔՈՒՄ

Տարիներ շարունակ, ծառայութեան մէջ ըլլալով, ես սորված եմ, որ մենք պիտի փորձուինք ե՛ւ մեր *խարիզմայի*, ե՛ւ *ֆինանսական բաշխման* մէջ: Կրնայ ըլլալ ժամանակաշրջան, երբ ոչ մէկ հրատարակիչ հետաքրքրուած է ձեր գիրքով, եւ աստիկա կրնայ տեսել քանի մը տարի: Դուք կը մտածէք ամէն ինչ ձգելու մասին, քանի որ մեծ ու քրտնաջան աշխատանք կատարած էք, իսկ այդ գիրքը, կը թուի, ոչ ոքի կողմէն կ'ընդունուի, եւ դուք ոչ մէկ փոփոխութիւն կը տեսնէք: Այնուամենայնիւ, դուք կը շարունակէք հնազանդ սպասել: Եւ յանկարծ ճեղքումը կու գայ:

Կամ դուք զոհաբերած էք եւ կը զոհաբերէք, սակայն չէք տեսներ արագ հունձք, եւ կը թուի՝ ձեր ֆինանսական վիճակը չափազանց սահմանափակ է, որպէսզի շարունակէք զոհաբերել: Բայց յանկարծ Աստուած կը խօսի ձեզի հետ, ինչպէս Մայքի պարագային, եւ դուք կը հնազանդիք, թէեւ աստիկա անհնար կը թուի: Դուք ճեղքման ականատես կը դառնաք եւ մուտք կը գործէք բաշխման այլ մակարդակ:

Ի՞նչ է *ճեղքումը*: «Dictionary.com» առջանց բառարանը կը սահմանէ այն որպէս «որեւէ խոչընդոտ կամ արգելք հեռացնելու կամ գերազանցելու գործողութիւն կամ դէպք»: Պատկերացուցէք հետեւեալը. ջուրը սահմանափակուած է ամբարտակով: Ջուրի մակարդակը կը շարունակէ բարձրանալ, բայց ամբարտակը կը շարունակէ խոչընդոտել այն: Յանկարծ ամբարտակի վրայ ձաքեր կը յառաջանան. կարծ ժամանակ յետոյ ջուրը յանկարծ դուրս կը պրծնի: Ամբարտակը կը քանդուի, եւ ջուրը ազատօրէն կը հոսի հոն, ուր նախկինին ատոր հոսքը կը խոչընդոտուէր: Ասիկա ճեղքում է:

Դաւիթ թագաւորը կը յայտարարէ. «Աստուած իմ թշնամիներուն Իր ձեռքով պատռեց (կամ՝ «ճեղքեց») ջուրերու պատռուածքի (կամ՝ «ճեղքման») պէս» (Ա. Մնացորդաց 14.11): Բարձրացող ջուրը կը խորհրդանշէ մեր շարունակական հնազանդութիւնը ճշմարտութեան, իսկ ճեղքումէն յետոյ ազատօրէն հոսող ջուրը կը խորհրդանշէ պտղաբերութիւնը կամ առատութիւնը:

Ինչ կը վերաբերի մեր ընկերներ ֆիլին եւ Տանային, ֆիլն ըսաւ ինծի, որ առաջին 100.000 տոլարը նուիրաբերելէն յետոյ անոնց գործը բարձրագոյն մրցանիշը կոտորող շաբաթ արձանագրեց, որուն ընթացքին անոնք շահեցան եւս 100.000 տոլար եւ աւելին: Ահա թէ ինչպիսին է ճեղքումը: Սկիզբը անոնց կեանքը այդպիսին չէր. անոնք կը զոհաբերէին եւ կը զոհաբերէին, սակայն անմիջապէս մեծ հունձք չէին տեսներ: Բայց տարիներ շարունակ ցանելէն

յետոյ ճեղքում ունեցան, եւ կը թուի, թէ հունձքը կու գայ գրեթէ նոյն յաճախականութեամբ, ինչ որ անոնց ցանքն է:

Ասիկա Ամովս մարգարէի խօսքերու իրականացումն է. «Ժամանակը կու գայ, - կ'ըսէ Տէրը, - երբ ցորենը եւ խաղողը կ'աճին աւելի արագ, քան ատոնք կը հասցնեն հաւաքել» (Ամովս 9.13, NLT): Այս ճշմարտութիւնը գեղեցիկ կերպով պատկերուած է այլ թարգմանութեան մէջ.

«Ահա՛, կու գան օրերը, - կ'ըսէ Տէրը, -  
Երբ հերկողը կը հասնի հնձուորին,  
Եւ խաղող տրորողը՝ սերմնացանին:  
Լեռները կը կաթին քաղցր գինիով,  
Եւ բլուրները կը հոսեցնեն այն»:

Հնձուորը այնքա՛ն առատ հունձք պիտի ունենայ, որ սերմնացանը պիտի հասնի անոր:

Խաղող տրորողները տակաւին պիտի տրորեն նախորդ հաւաքած բերքը, իսկ հերկողները արդէն պիտի սկսին իրենց աշխատանքը՝ յաջորդ տարուան համար: Ասիկա մեծ արդիւնքի ակնառու օրինակ է: Ե՛ւ հերկողներու, ե՛ւ հնձուորներու, ե՛ւ խաղող տրորողներու ցանկութիւնը գինի պատրաստելն է: Ահա թէ ինչպիսին է անոնց արդիւնքը. «Գինին շարունակ կը հոսի, այն կանգ չ'առներ. այլեւս չեն ըլլար անպտղութեան ժամանակներ» (հեղինակի շրջաստութիւնը):

Գոյութիւն ունի այնպիսի փուլ մեր *խարիզմայի* եւ *ֆինանսական բաշխման* մէջ, երբ ասիկա տեղի կ'ունենայ: Ասիկա տեղի ունեցաւ Մայքի հետ, ինչպէս նաեւ Ֆիլի եւ Տանայի հետ: Ինչ կը վերաբերի «Մեսինճըր Ինթերնեշընլ»-ին, այս տարիներու ընթացքին մենք ստացած ենք անթիւ վկայութիւններ այն մասին, որ մարդոց կեանքերը փոխուած են մեր կողմէն ցանուող նիւթերու շնորհիւ: Խաղողը կ'աճի աւելի արագ, քան այն կը հասցնեն հաւաքել:

Շատերը կը յանձնուին հունձքէն կարճ ժամանակ առաջ: Անոնք կը վիատին հակառակութիւններու կամ իրենց ցանկալի արդիւնքները չստանալու պատճառով: Լիզան եւ ես կրնայինք դիրաբար դիմել ողջամտութեան եւ տրամաբանութեան եւ անտեսել Աստուծոյ Հոգին ձայնը: Մենք պէտք է ունենայինք ամենաքիչը 5.000 տոլար՝ կանխավճարի համար, քանի որ տունը խիստ անհրաժեշտ էր մեզի: Մեր քաղաքի գեղեցիկ բնակարաններու մեծ մասը բնակեցուած էր միայն չափափաս մարդոցմով, եւ ատոնք յարմար չէին երեխաներու հետ ապրելու համար: Մենք կրնայինք մտածել. «Սկիզբը մենք տուն ձեռք ձգենք, իսկ յետոյ կը խնայենք եւ կը զոհաբերենք մէկ

այլ ժառայողական նախագիծի համար»: Մենք կրնայինք բաց ձգել Աստուծոյ Թագաւորութեան մէջ ներդնելու եւ մեր միջոցները աւելցնելու այդ փայլուն հնարաւորութիւնը:

Այս պատմութեան զարմանալի կողմը այն է, որ վեց ամիս յետոյ մենք հրաշքով ունեցանք անհրաժեշտ 5.000 տոլարը: Լիզան որոշակի գումար ստացաւ դրամատնային հաշիւէն, որ բացած էր անոր հայրը, սակայն այդ ժամանակ մենք չէինք գիտեր այդ մասին: Ատոր հետ մէկտեղ, երկու մարդ, որոնք գիտէին մեր կարիքը, 2.000 տոլար նուիրեցին մեզի: Մենք մեր նոր տունն էինք մէկ տարիէն պակաս ժամանակի մէջ: Ատիկա հրաշք էր, եւ մեր հաւատքն ու համբերութիւնը զարգացնելու համար շատ աւելի լաւ էր տեսնելը, թէ ինչպէս Աստուած մատակարարեց մեզ այն պահուն, երբ ատիկա «անհնար» կը թուէր: Ես չեմ հաւատար, որ ատիկա տեղի կ'ունենար, եթէ մենք կառչէինք այն 1.000 տոլարէն, որ Սուրբ Հոգին պատուիրեց մեզ զոհաբերել:


Այս պահուն մենք իմաստութեամբ կը վարուինք, եթէ ընդունինք հետեւեալ զգուշացումը: Մենք պէտք չէ ինքնավստահ ըլլանք այս հարցին մէջ: Ի՞նչ նկատի ունիմ. մենք պէտք է փնտռենք մեր աւագ Գործընկերոջ՝ Սուրբ Հոգիին խորհուրդը: Ան կ'ըսէ մեզի. «Ես եմ քու Աստուածը, որ քեզի կը սորվեցնեմ օգտակար եղածը (կամ՝ «շահոյթ ստանալը»), որ քեզ կ'առաջնորդեմ քու երթալու ճանապարհին» (Եսայիա 48.17): Զգայուն խիղճ ունենալը (քանի որ Սուրբ Հոգին այստե՛ղ կը լուսաւորէ մեզի) եւ Անոր ցուցմունքներուն հնազանդ ըլլալը անչափ կարեւոր է, քանի որ Սուրբ Հոգին կ'առաջնորդէ մեզ, որ շահոյթ ստանանք Իր Թագաւորութեան մէջ եղած մեր ներդրումներէն: Մենք չէինք զոհաբերեր այն 1.000 տոլարը, եթէ Ան չչջնջար այդ մասին մեր սրտերուն մէջ:

Ոմանք չեն լսեր Անոր խորհուրդը: Ոմանք ալ չեն կրնար լսել Անոր խորհուրդը, քանի որ չափազանց շատ «ոչ» ըսած են Անոր: Անոնց խիղճը այլեւս զգայուն չէ: Եթէ դուք այդպիսին էք, պարզապէս ապաշխարեցէք եւ խնդրեցէք, որ Ան ներէ ձեզի՝ Իր ծայնը ճնշելու համար: Ձեր զգայունութիւնը անմիջապէս կը վերադառնայ: Ան արագօրէն կը ներէ: Բայց ատկէ յետոյ լսեցէք եւ հետեւեցէք Անոր մղումներուն, եւ թոյլ մի՛ տաք, որ ողջամտութեան ծայնը տարհամոզէ ձեզ:



## ՄՏՈՐԵՑԷՔ

1. Աստուած դրած է մարդոց հանդէպ ունեցած Իր սէրը մեր սրտերուն մէջ, եւ այդ պատճառով, մեր մէջ անձնուիրաբար *բաշխելու* եւ *ծառայելու* ցանկութիւն կայ: Ներկայիս Ի՞նչ կերպով դուք կը բաշխէք եւ կը ծառայէք մարդոց: Ի՞նչ ստեղծարար ձեւերով կրնաք աճ ունենալ բաշխելու եւ ծառայելու բնագաւառներուն մէջ:
2. Իմաստուն ձեւով բաշխողը ոչ միայն կը դիտարկէ զոհաբերութիւնը որպէս սիրոյ նուէր եւ ծառայութիւն, այլեւ՝ որպէս *ներդրում*: Ներդրումներու ինչպիսի՞ վերադարձ դուք կրնաք ակնկալել բաշխելու եւ ծառայելու արդիւնքով: Ի՞նչ կերպով կը փոխուի ձեր վերաբերմունքը բաշխելուն եւ ծառայելուն, երբ կը դիտարկէք ատոնք որպէս ներդրում:
3. Դուք կը փորձուիք ե՛լ ձեր *խարիզմայի*, ե՛լ *ֆինանսական բաշխման* մէջ: Այդ փորձութիւններու ժամանակ կ'ըլլան պահեր, երբ կը թուի, թէ ձեր հունձքը կ'ուշանայ, իսկ աշխատանքը անարդիւնք է: Երբ յանձնուելու գայթակղութիւն ունենաք, ինչպիսի՞ն պէտք է ըլլայ ձեր արձագանգը: Ինչպէ՞ս կը խրախուսէք ձեզ՝ առջեւ երթալու համար:



*«Աստուած տուած է ձեզմէ իւրաքանչիւրին  
պարգել՝ Իր հոգելոր պարգելներու  
մեծ բազմազանութենէն: Արդիւնաւէ՛տ  
օգտագործեցէք ասոնք՝  
իրար ծառայելու համար»:*

– Ա. Պետրոս 4.10, NLT

## ԽԹԱՆԻՉ

**Ա**յս առանցքային գլուխին մեջ ես պիտի խօսիմ այն մասին, ինչ որ կը *խթանե՛ր արդիւնաւէտ բազմապատկումը*: Օգտագործելով «արդիւնաւէտ» բառը, նկատի ունիմ այնպիսի բազմապատկում, որ կը մնայ յաւիտեան:

*Խթանիչը* որեւէ իրադարձութիւն կամ փոփոխութիւն գործի դնող կամ արագցնող գլխաւոր տարրն է (իմ սահմանումը վերցուած է տարբեր բառարաններէն): Բոլորս պարգեւներ ստացած ենք, բայց ատոնց մնայուն ներուժը գործի կը դրուի այն բանով, ինչի մասին կը խօսի Պետրոս առաքեալը. «Արդիւնաւէ՛տ օգտագործեցէ՛ք ատոնք... ծառայելու համար»: *Խթանիչը* ծառայելն է, բայց իրական ծառայութիւնը մշտապէս դրդուած է սէրէն: Պօղոս առաքեալը կը գրէ.

«Որովհետեւ մենք կը յիշենք մեր Հօր եւ Աստուծոյ առջեւ, թէ ինչպէս դուք գործի կը դնէք հաւատքը, ինչպէս *ծեր սէրը կը դրդէ ձեզ ծառայելու ուրիշներուն*» (Ա. Թեսաղոնիկեցիս 1.3, TPT):

Ճշմարիտ ծառայութիւնը կը բխի սէրով վառող սրտէն: Ատիկա ներքին տրամադրուածութիւն է, որ չի փոխուիր նեղութիւններու, դժուարութիւններու կամ որեւէ այլ անբարենպաստ հանգամանքներու պատճառով: Երբեմն այն կ'արտայայտուի խօսքով, բայց ամէնէն յաճախ՝ գործողութեամբ:

### ՃՆԴԿԱՀԱԲԵՐ ՆՈՒԻՐՈՂ ԿԻՆԸ

Ես օրինակ պիտի բերեմ ծառայելու մասին՝ պատմութիւն մը պատմելով: Այն զոյգը, որուն մասին պիտի պատմեմ, մեր մտերիմ ընկերներն են, եւ անոնք խնդրեցին անանուն մնալ: Այնպէս որ, համաձայն անոնց խնդրանքին, ես պիտի օգտագործեմ յօրինուած անուններ:

Ռայլին եւ անոր ամուսինը՝ Տէյվը, կ'ապրին Միացեալ Նահանգներու մեծ քաղաքի մը արուարձաններէն մէկուն մէջ: Անոնց հանդիպումը կանխորոշուած էր, քանի որ անոնք կ'ապրէին կողք-կողքի գտնուող բնակարաններու մէջ:

Իրենց ամուսնութենէն կարճ ժամանակ յետոյ Ռայլին կը մտածէր, թէ ինչո՞ւ գրեթէ բոլոր եկեղեցիները, անտուն թափառականներու ապաստարանները եւ այլ բարեգործական կազմակերպութիւններ ճաշեր եւ նուէրներ կու տային Սուրբ Ժննդեան ժամանակ, բայց գրեթէ ոչինչ կ'ընէին Գոհութեան տօնին: Ան համոզուած էր, որ Գոհութեան տօնը կարելոր է, քանի որ այն ընտանեկան տօն է եւ աւանդականօրէն կը կեդրոնանայ ընթրիքի սեղանին շուրջ: Շատ միայնակ մայրեր, անդամալոյծներ եւ անտուն թափառականներ չէին կրնար տօնական սեղան պատրաստել կամ մասնակցիլ տօնական ճաշկերոյթին: Ան համոզուած էր, որ տաք կերակուր տրամադրող ճաշարաններն անհրաժեշտ գործ կը կատարեն, սակայն ատոնց մէջ չկայ այն մտերմիկ մթնոլորտը, որ կրնայ ստեղծել տնային կերակուրը ընտանիքի համար:

Ռայլին կ'ըսէր. «Իւրաքանչիւրս կրնայ ազդեցութիւն ձգել, բայց միասին մեր ազդեցութիւնն աւելի մեծ է»: Ան քաջ ծանօթ էր Սուրբ Գիրքին եւ գիտէր, որ երկուքին ներդաշնակ ջանքերը տասնապատիկ աւելի արդիւնաւէտ են՝ մէկ հոգիի մը ջանքերուն համեմատ (կարդացէ՛ք Երկրորդ Օրինաց 32.30): Ան նոյնպէս քաջատեղեակ էր, որ երբ աւելի շատ հաւատացեալներ կը միանան որեւէ գործի, ատոր արդիւնքները շարունակ կ'աւելնան: Ան ի սրտէ համոզուած էր եւս մէկ ճշմարտութեան մէջ. ճշմարիտ ծառայողները պատրաստ են ծառայելու խումբի մէջ՝ չմտածելով այն մասին, որ աշխատանքը չի վերագրուիր անձամբ իրենց: Ռայլիի դիրքորոշումը կ'անձնաւորէ բազմապատկման այս կարելոր բաղադրիչները:

Առաջին Գոհութեան տօնին ինչ որ բան ձեռնարկելու համար Ռայլին գումար հաւաքեց իր ընտանիքէն եւ ընկերներէն՝ հնդկահաւեր գնելու համար: Ունենալով բազմապատկող մտածելակերպ՝ ան եւ Տէյվը իրենց միջոցներով խոստացան կրկնապատկել իւրաքանչիւր հաւաքուած տոլարը: Այդ տարի անոնք գնեցին 11 հնդկահաւ եւ անանուն բաժնեցին Ռայլիի ինքնաշարժի բեռնախցիկէն: Երկրորդ տարին հնդկահաւերու թիւը հասաւ 31-ի:

Երրորդ տարին այդ կինը ըսաւ իր ընտանիքին եւ ընկերներուն, որ անոնք կրնային պատմել այս տեսիլքին մասին իրենց ընկերներուն՝ իրենց մասին չիշատակելու պայմանով: Անոնք ըրին ատիկա, եւ այդ

ծրագիրն արագօրէն տարածուեցաւ: Մինչեւ հինգերորդ տարին անոնք ծառայեցին հինգ հարիւր ընտանիքի եւ կրցան աւելցնել իւրաքանչիւր նուէրին երկու պահածոյի տուփ՝ բանջարեղէնով եւ լցանիւթով:

Այդ ժամանակ ան ոչ պաշտօնապէս *անանուն* տարածման պայմանագիր կնքեց «Փրկութեան բանակի» հետ: Այդ բարեգործական կազմակերպութիւնը կը համագործակցի պետական ընկերական ծառայութիւններու հետ, եւ այն կազմակերպեց դիմումներու ներկայացման գործընթաց՝ իսկապէս կարիքաւոր մարդիկ գտնելու համար: Ընտրուեցան այնպիսի մարդիկ, որոնք չունէին մատակարարման այլ հնարաւորութիւն (սնունդի կտրօմներ, պետական ծրագիրներ եւ այլն): Ռայլին եւ անոր խումբը սնունդի բաշխման վայր հիմնեցին «Փրկութեան բանակի» տարածքին մէջ:

Շատերը տարբեր բաներ կը յօրինէին իրենց անհրաժեշտ կերակուրը վերցնելու համար: Անոնք սայլակ կամ զամբիւղ կը բերէին իրենց հետ, կը խնդրէին դրացիներէն ինքնաշարժով բերել իրենց, կու գային հեծանիւով կամ պարզապէս քալելով եւ կը ստանային հնդկահաւը, բանջարեղէնը եւ լցանիւթը: Երբեմն անոնք կու գային հեռուէն եւ ստիպուած կ'ըլլային երկար ճանապարհ կտրելու՝ վերադառնալով դէպի իրենց կցասայլակը, բնակարանը, այգին կամ բացօթեայ վայրը, ուր որ կ'ապրէին: Անտուն մարդ մը տրված էր դուրսը հնդկահաւ պատրաստել իր եւ իր անտուն ընկերներուն համար՝ մէկ կողմ նետուած տապկող սարքով եւ կազի տակառով:

Ի վերջոյ, տարածումն այնքան մեծցաւ, որ անհրաժեշտ էր նոր վայր՝ աւելի շատ մարդոց ծառայելու համար: Դրացութեամբ գտնուող «Երիտասարդ մարդոց քրիստոնէական միութիւնը» ունէր մեծ, դատարկ տարածք, բայց անոնց եւ «Փրկութեան բանակի» յարաբերութիւնները լարուած էին: Այդ կարիքը դրդեց այդ երկու կազմակերպութիւններուն՝ անտեսելու իրենց տարբերութիւնները: Անոնք հաշտուեցան եւ սկսան իրենց համայնքին մէջ միասին աշխատիլ Ռայլիի նախագիծին վրայ, ինչպէս նաեւ այլ նախագիծերու վրայ:

Ամէն տարի Ռայլին եւ Տէյվին նպատակն էր գերազանցել նախորդ տարուան տարածման ծաւալը: Անոնք որոշում կայացուցին, որ իրենց շրջանին մէջ ոչ ոք պիտի մնար առանց պատշաճ Գոհութեան ընթրիքի: Որքան աւելի կը մեծնար ստացողներու թիւը, այնքան տարածումը աւելի խճճուած եւ դժուար կը դառնար, յատկապէս գիներու բարձրացման պատճառով, նաեւ այն պատճառով, որ որոշ ընկերներ կը դադրէին մասնակցելէ իրենց ծրագիրին կամ կը տեղափոխուէին: Ռայլին եւ Տէյվը ֆինանսապէս աւելի կայուն դարձած

էին եւ չէին ցանկար, որ իրենց առաջընթացը կանգ առնէր. այնպէս որ, իրենց միջոցներով անոնք որոշեցին եռապատկել իւրաքանչիւր նուիրաբերուած տուարը (որպէս կողմնակի դիտարկում՝ զարմանալի չէ, որ անոնց ֆինանսական վիճակն աւելի կայուն դարձած էր այդ վեց տարուան ընթացքին: Աստուած կը բազմապատկէր անոնց բաշխումը, որպէսզի անոնք աւելի արդիւնաւէտ ըլլային):

Ռայլիին խօսքով, «Ինչ որ կերպով Աստուած մշտապէս ֆինանսներ կը մատակարարէր տարբեր աղբիւրներէ, եւ մեր միջոցները մշտապէս կ'աւելնային»: Աւելի զարմանալի է այն, որ յատկապէս սկիզբէն այս զոյգը որոշեց, որ իրենք ոչինչ պիտի ընդունէին պետական ծրագիրներէն կամ խոշոր ընկերութիւններէն: Բոլոր միջոցները պէտք է առնուէին ընտանիքէն, ընկերներէն եւ ընկերներու ընկերներէն:

Տարածման ծաւալները մեծնալու հետ միասին յայտնուեցան նոր դժուարութիւններ: Անկարելի դարձաւ տարածել բոլոր հնդկահաւերը մէկ օրուան մէջ, քանի որ մարդոց թիւը շատ մեծ էր: Ռայլին եւ Տէյվը ստիպուած էին եւս օր մը աւելցնել տարածման, բայց ատիկա ստեղծեց էական խոչընդոտ մը. ո՞ր պիտի պահուէին այն հնդկահաւերը, որոնք պիտի մնային յաջորդ օրուան տարածման համար: Ռայլին յամառօրէն պատասխան կը փնտռէր: Կէսգիշերին խոշոր մթերային խանութներու ցանց մը, որմէ անոնք կը գնէին բոլոր հնդկահաւերը, առաջարկեց անվճար օգտագործել իրենց սառնարան-բեռնատարները: Այժմ անոնք կրնային ծախսել ամբողջ գումարը սնունդի վրայ, ոչ թէ պահպանման:

Կային անթիւ այլ արգելքներ եւ խոչընդոտներ, որոնք անոնք յաղթահարեցին. ատոնք չափազանց շատ են թուարկելու համար: Այդ զոյգի հաւատքը զօրաւոր էր, եւ անոնք անկոտորում ու վճռական էին: Բախելով նեղութիւններու՝ անոնք շարունակ կ'աղօթէին, կ'աղաղակէին Աստուծոյ, կը ստանային ոգեշնչուած մարտավարական գաղափարներ եւ բարեհաճութիւն կը գտնէին այն մարդոց քով, որոնք կրնային օգնել:

Անոնք արդէն 26 տարի է՝ կը կատարեն այս ծառայութիւնը, եւ միայն այս տարի՝ երբ կը գրեմ այս գիրքը, արդէն կերակրած են 10.500 ընտանիք (կամ 42.000 մարդ, եթէ միջին ընտանիքը բաղկացած է չորս մարդէ): Անոնք կերակրած են իւրաքանչիւր կարիքաւոր մարդ իրենց ամբողջ շրջանին մէջ եւ երկու մօտակայ շրջաններու կարիքաւորներու զգալի մասին (մտապահեցէ՛ք, որ խօսքը Միացեալ Նահանգներու խոշոր քաղաքներէն մէկուն մասին է): Այս աշխատանքը կատարելու համար անոնք հնդկահաւերով լեցուցած են հինգ բեռնատարի կցորդ (իւրաքանչիւրը՝ 15 մեթրանոց) եւ երեք բեռնատարի կցորդ՝

բանջարեղէնով եւ լցանիւթով: Այս գործին միացած է աւելի քան երկու հարիւր կամաւոր, որոնցմէ շատերը քանի մը օր շարունակ աշխատած են առանց հանգիստի: Կամաւորներէն շատերը Ռայլիին հետ եղած են ճիշդ սկիզբէն: Եւ զարմանալին այն է, որ անոնց մեծ մասը դեռեւս անձամբ չի ձանչնար «հնդկահաւեր բաժնող կինը»:

Անկարելի պիտի ըլլար թուարկել բոլոր հրաշքները, պատմութիւնները եւ վկայութիւնները փոխուած կեանքերու մասին, որոնք տեղի ունեցած են այս գոյգի բազմապատկման շնորհիւ: Անթիւ մարդիկ ընդունած են Յիսուսին, որոնց կարգին է նաեւ Ռայլիի ամուսին Տէյվը, եւ շատերը վերադարձած են հաւատքին: Ընտանիքները հաշտուած են, եւ շատերը ոգեշնչուած են, որոնց կարգին են պետական աշխատակիցներ, մթերային խանութներու աշխատողներ, «Փրկութեան բանակի» եւ «Երիտասարդ մարդոց քրիստոնէական միութեան» աշխատակազմի անդամներ եւ կամաւորներ, նաեւ մարդիկ, որոնք կ'ապրին այդ շրջանին մէջ:

Թոյլ տուէք բաժնեկցիլ քանի մը կարճ պատմութիւններով: Ռայլիի ընկերներէն մէկը գանձապահ է տեղական հրանիւ վարողներու ակումբին մէջ: Ամէն տարի ան կը խնդրէ ակումբի անդամներէն նուիրատուութիւն հաւաքել հնդկահաւեր բաժնող կնոջ համար: Անոնք նոյնիսկ կը մրցակցին միմեանց հետ՝ տեսնելու համար, թէ ով կրնայ աւելի շատ նուիրաբերել: Անցեալ տարի Ռայլին եւ Տէյվը հաղորդագրութիւն մը ստացան Գոհութեան տօնէն յետոյ, որ յաջորդ Գոհութեան տօնին հրանիւ վարողները պիտի աւելցնեն իրենց նուիրատուութիւնը 3.000 տոլարով:

Տարի մը հնդկահաւեր բաժնող կնոջ խումբը որոշեց աւելցած գումարը նուիրաբերել տեղական եկեղեցիներէն մէկուն: Այդ եկեղեցին ոգեշնչուեցաւ՝ որոշելով օգտագործել Ռայլիի ծրագիրի նմուշը եւ սկսիլ սեփական ծրագիրը աղքատներուն օգնելու համար՝ եւ Գոհութեան տօնի ժամանակ, եւ տարուան ընթացքին:

«Փրկութեան բանակի» խմբակիցները, որոնց տեղափոխեցին այլ նահանգներ, պատրաստ էին սկսելու ծրագիրներ՝ ըստ Ռայլիի ծրագիրի նմուշին: Այլ մարդիկ, որոնք տեղափոխուած էին այդ բնակավայր, անհամբեր կը ցանկային իմանալ այդ ծառայութեան մասին, քանի որ լսած էին Ռայլիի պատմութիւնը «Փրկութեան բանակի» ծառայողներու միջոցով:

Ռայլին հովիւ չէ. այս կինը չ'աշխատիր որեւէ եկեղեցւոյ մէջ, ան գործարար չէ եւ որեւէ խոշոր ընկերութեան ղեկավար չէ: Ան կին է, մայր եւ նուիրուած հաւատացեալ, որ հաւատարմօրէն եկեղեցի

Կը յաճախէ: Ան քաջատեղեակ է այն փաստին, որ ինքը կը ծառայէ զօրաւոր Աստուծոյ, Որ բերկրանք կը զգայ իր բազմապատկման շնորհիւ: Ինծի համար պատիւ է ըլլալ այդ գոյգի ընկերը:

### ՅԱԻՏԵՆԱԿԱՆ ԲԱԶՄԱՊԱՏԿՄԱՆ ՄԵԾԱԳՈՅՆ ՕՐԻՆԱԿԸ

Սէրէն դրդուած ծառայութիւնը բազմապատկման խթանիչն է: Դիտարկենք բազմապատկման որոշ մեծագոյն օրինակներ Աստուածաշունչին մէջ: Անշուշտ, բազմապատկման ամենաակնառու օրինակը Սուրբ Գիրքին մէջ Յիսուսն է: Ան կ'ըսէ.

«Եթէ դուք կը ցանկաք ըլլալ մեծագոյնը, ապրեցէք որպէս մարդ, որ կանչուած է ծառայելու ուրիշներուն: Յառաջխաղացում ստանալու եւ ակնառու դառնալու ուղին կը սկսի ստրուկի սիրտ ունենալէն, որ կը ծառայէ բոլորին: Որովհետեւ նոյնիսկ Մարդու Որդին ծառայութիւն ստանալու ակնկալիքով չեկաւ, այլ՝ որպէսզի *ծառայէ բոլորին* եւ տայ Իր կեանքը որպէս փրկագին՝ շատերու փրկութեան համար» (Մարկոս 10.43-45, TPT):

Յիսուսը ցոյց կու տայ ճշմարիտ մեծութեան ուղին՝ երբ մենք կը ձգտինք ծառայել, ոչ թէ ծառայութիւն ստանալ: Զարմանալի չէ, որ Ան կը նկարագրէ Իր մեծագոյն ծառայութիւնը հետեւեալ կերպով. «Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսես ձեզի՝ եթէ ցորենի հատիկը հողին մէջ չիյնայ եւ չմեռնի, ինքը մինակ կը մնայ: Բայց եթէ մեռնի, շատ պտուղ կը բերէ» (Յովհաննէս 12.24): Կրկին, մենք կը լսենք *ցանելու* (կամ *ներդնելու*) եւ *հնծելու* մասին: Ինչպէս որ մէկ *ներդրուած* ցորենի հատը բազմաթիւ ցորենի հատիկներ կու տայ, այնպէս ալ Յիսուսի հնազանդութիւնը ծառայութեան մէջ տուաւ Աստուծոյ բազմաթիւ որդիներ եւ դուստրեր: Ինչպիսի՞ օրինակ: Ան հարթեց ճանապարհը եւ դրաւ նշածողը՝ ցոյց տալով, թէ ինչպէս արդիւնաւէտ բազմապատկենք: Յիսուսը կ'ըսէ մեզի.

«Դուք կ'անուանէք Ինծի «Ուսուցիչ» եւ «Տէր», եւ դուք ճիշդ էք, որովհետեւ ես աստիկա եմ: Եւ քանի որ ես՝ ձեր Տէրը եւ Ուսուցիչը, լուացի ձեր ոտքերը, դուք պէտք է լուաք մէկդ միւսին ոտքերը: Ես տուի ձեզի *օրինակ՝ հետեւելու համար*: Վարուեցէ՛ք այնպէս, ինչպէս որ ես վարուեցայ ձեր հանդէպ» (Յովհաննէս 13.13-15, NLT):

Որպէս առաջնորդ, քարոզիչ եւ հեղինակ, ես գիտեմ *վերջին*



*խօսքի* կարեւորութիւնը: Ասիկա այն պնդումը կամ ուղերձն է, որ դուք կը թողէք ձեր ընթերցողին, ունկնդիրին, աշակերտին, խմբակիցին, աշխատակիցին, երեխային կամ ոեւէ մարդու: Ասիկա գլխաւոր միտքն է, որ կը ցանկաք, որ ձեզի լսողները յիշեն՝ առջեւ երթալով:

Ո՞րն էր Յիսուսի վերջին խօսքը այն ժամանակ, երբ Ան այս աշխարհին մէջ էր: Հետաքրքրական է, որ Իր խաչելութենէն առաջ Ան ուղերձ մը քարոզեց՝ գործնական օրինակով. Ան լուաց Իր հետեւորդներու ոտքերը:

Ես անկեղծ կ'ըլլամ ձեզի հետ. երբ նոր հաւատացեալ դարձած էի, չէի կրնար դիմանալ, երբ ինչ որ մէկը որեւէ փոքրիկ խումբի մէջ կ'առաջարկէր հետեւեալը. «Եկէք լուանք մէկս միւսին ոտքերը»: Ես անմիջապէս անհեթեթ պատճառ մը կը յօրինէի՝ հոնկէ փախչելու համար. ինձի հաճելի չէր թուեր, որ տղամարդիկ կը դպչէին իմ ոտքերուն:

Տարիներ յետոյ ես թեթեւութիւն ապրեցայ՝ հասկնալով, որ ոտքերը լուալը աւելի շուտ աւանդոյթ էր, որուն իմ ընկերները կը հետեւէին: Ատոր զուգահեռ օրինակն այն է, երբ Մովսէսը բարձրացուց օձը ձողին վրայ (կարդացէ՛ք Թուոց 21.8,9), եւ որոնք կը նայէին ատոր, կը բժշկուէին օձերու խայթոցներէն: Ասիկա հրաշագործ եւ ազդեցիկ էր: Այնուամենայնիւ, շատ սերունդներ յետոյ Իսրայէլը կուռք դարձուց այդ օձը (կարդացէ՛ք Դ. Թագաւորաց 18.4): Անոնք ուղղեցին իրենց ուշադրութիւնը այդ առարկային, փոխարէնը հասկնային, որ տարիներ առաջ տեղի ունեցած այդ պատմութեան իմաստը Տիրոջ պատուէրին հետեւիլն էր:

1980-ական թուականներուն մենք կ'ընթանայինք այդ ճանապարհով մեր Աստուածաշունչի ուսումնասիրութեան փոքր խումբերուն մէջ: Մենք սխալ կը հասկնայինք ոտնլուան եւ սխալ կը գործածէինք այն: Աւելի շատ կը կեդրոնանայինք այդ գործողութեան վրայ, քան ատոր իմաստին: Առաջին դարուն ճանապարհները սալարկուած չէին, կենդանիները միակ փոխադրութեան միջոցն էին՝ քալելէն բացի, եւ չկային մարգական կօշիկներ՝ «Ատիտասի» եւ «Նայքի» պէս: Մարդիկ կը կրէին տրեխներ (սանտալներ), եւ շատ յաճախ բոլորովին կօշիկ չէին հագներ. այնպէս որ, ցեխը, կենդանիներու աղբը եւ այլ աղտեր կը քսուէին անոնց ոտքերուն: Կարելի է ըսել, որ նման պայմաններու մէջ ոտքերու աղտն ու գարշահոտութիւնը կը հասնէր այնպիսի մակարդակի, որ անյայտ է ժամանակակից արեւմուտքի հասարակութեան:

Հարուստ մարդոց տուններուն մէջ կային ծառաներ կամ ստրուկներ, որոնք պէտք է լուային իրենց տիրոջ, անոր ընտանիքի անդամներու եւ անոնց տուն եկող հիւրերու ոտքերը: Վերնախաւի ներկայացուցիչներու

տունը կային բազում գործեր. անհրաժեշտ էր հետեւիլ ախոռին, կերակուր պատրաստել, մաքրել սենեակները եւ այլն: Ոտքերը լուալը ամենացած ծառայի գործն էր: Այլ շրջաններուն մէջ մարդիկ աւելի հեռու կ'երթային. անոնք կը յատկացնէին այդ անվայել պարտականութիւնը միայն ամենացած կին ծառաներուն, քանի որ միայն անոնք էին, որ կը համարուէին «անարժան»՝ նման զգուելի աշխատանք կատարելու համար:

Վերջին ընթրիքի ժամանակ աշակերտները կը գտնուէին այդպիսի տան մէջ, որ բաւական մեծ էր՝ Յիսուսին ամբողջ խումբը առանձին սենեակին մէջ տեղաւորելու համար: Հաւանաբար, ատիկա ամենահարուստ տունն էր այդ քաղաքին մէջ: Ժամեր առաջ անոնցմէ իւրաքանչիւրի ոտքերը լուացած էր ամենացած ծառան: Բայց, ի զարմանս բոլորին, նոյն երեկոյեան Յիսուսը ոչ միայն վերցուց տաշտ եւ ջուրով լեցուն կուժ, այլեւ հանեց Իր հանդերձը՝ հեռացնելով Իր ուսուցչական դիրքի խորհրդանիշը, եւ սկսաւ լուալ անոնց ոտքերը: Անոնք շատ լաւ գիտէին, թէ ինչ տեղի կ'ունենար եւ ինչ կը խորհրդանշէր ատիկա: Ի հակադրութիւն, համալսարանը սորվելու տարիներուն այդ սովորոյթը կը շփոթեցնէր եւ նոյնիսկ կը վանէր ինծի, քանի որ իմ ոտքերը մաքուր էին. ես կը լոգնայի անմիջապէս Աստուածաշունչի ուսումնասիրութեան երթալէն առաջ: Ատիկա նոյնպէս անհանգստութիւն կը պատճառէր ինծի. *«Ինչո՞ւ տղայ մը, որուն ես հազիւ կը ճանչնամ, կը փորձէ լուալ իմ ոտքերը»:*

Եթէ կրկին կարդաք Յիսուսին խօսքերը, ատոնք շատ աւելի խոր իմաստ կ'ունենան ձեզի համար: Ան անջնջելի տպաւորութիւն ձգեց աշակերտներուն վրայ, որ պիտի մնար անոնց հետ մինչեւ կեանքի աւարտը: Ատիկա Անոր *վերջին խօսքն* էր:

Ամփոփենք. մեծ ըլլալու համար մենք պէտք է յօժարաբար զբաղեցնենք ամենացած ծառայի տեղը: Թերեւս ասիկա՞ է պատճառը, որ Յիսուս կ'ըսէ. «Ես հեզ եմ եւ սրտով խոնարհ» (Մատթէոս 11.29):

Որոշ ժամանակ պահանջուեցաւ, մինչեւ որ հասկցայ այս ճշմարտութիւնը: Երբ ես նորահաւատ էի, կը թուէր՝ շատերս կը դիտարկէինք ծառայութիւնը ճիշդ հակառակ կերպով: Մեր անխօս համոզմունքը հետեւեալն էր. *«Դուն կարելոր մարդ չես, եթէ չես քարոզեր եւ չես առաջնորդեր շատերուն»:* Այլ տեսակի ծառայութիւնները նախատեսուած էին եկեղեցւոյ մէջ աւելի ցած դիրք ունեցող մարդոց համար: Եւ եթէ դուք շատ աշխատէիք, օր մը կարելոր մարդ կը դառնայիք: Որքան խեղաթիրուած էր մեր պատկերացումը:

Ես այնքան շնորհակալ եմ Սուրբ Հոգիին համբերութեան համար մեր

հասունացման ընթացքին: Ան վերափոխեց իմ մտածելակերպը, բայց ատոր համար ժամանակ պահանջուեցաւ:

Ինչպէս արդէն նշած եմ, իմ ծառայութեան առաջին չորս տարուան ընթացքին ես մեր հովիւի անձնական օգնականն էի: Մէկ անգամ, երբ փոքր առաջադրանք մը կը կատարէի, Աստուծոյ Հոգին շնչաց. «Որդի՛ս, եթէ Ես յառաջխաղացում տամ քեզի, դուն *պիտի ունենաս աւելի բարձր դիրք՝ ծառայելու համար*: Եթէ դուն սխալիս հիմա, պարզապէս կը վնասես չոր մաքրման տրուած վերնաշապիկը: Հրապարակային ծառայութեան մէջ քու սխալը չի վերաբերիր վերնաշապիկին, որ կարելի է փոխարինել. այն պիտի վնասէ այն մարդոց, որոնց Ես կը սիրեմ»: Անոր խօսքերը լրջօրէն ազդեցին իմ վրայ: Բացի այն, որ Ան ըսաւ ինձի, որ բարձր ծառայողական դիրքերը կ'ենթադրեն աւելի մեծ ծառայողական պատասխանատուութիւն, Ան նոյնպէս ցոյց տուաւ, թէ որքան կարելոր է մշտապէս փոքրիկ բաներուն մէջ հաւատարիմ ըլլալը: Ես պէտք է շարունակէի ծառայ դառնալ նաեւ այն ժամանակ, երբ ինձի վստահուէր իրական հարստութիւնը՝ մարդիկ:

## ՌԵԲԵԿԱ

Անձնուրաց ծառայութենէն բխող բազմապատկման ուշագրաւ օրինակներէն մէկը Հին կտակարանին մէջ Ռեբեկայի կեանքն է: Եկէք համառօտ վերլիչենք անոր պատմութիւնը:

Աբրահամն ուղարկեց իր ամենավստահելի ծառան այն երկիրը, որմէ ինքը դուրս ելած էր՝ իր ծառանգ Իսահակին կին գտնելու համար: Ծառան շտապելով երկար ճանապարհ կտրեց՝ իրեն հետ տասը ուղտ տանելով:

Երբ ան տեղ հասաւ, օրուան այն ժամն էր, երբ երիտասարդ աղջիկները կու գային ջրհորին քով՝ ջուր տանելու: Ան աղօթեց. «Ահա իմ խնդրանքը. ես կը խնդրեմ անոնցմէ մէկուն, որ ջուր տայ ինձի իր սափորէն: Եթէ ան ըսէ. «Այո՛, խմէ՛, ես կը խմեցնեմ նաեւ քու ուղտերուն», թող ան ըլլայ այն աղջիկը, որուն Դուն կին ընտրած ես Իսահակին համար» (Ծննդոց 24.14, NLT):

Ան իր աղօթքը աւարտելէն յետոյ, Ռեբեկան մօտեցաւ ջուրի սափորով, եւ ան ջուր խնդրեց անորմէ: Այն, ինչ որ կատարուեցաւ ատկէ յետոյ, տպաւորիչ է.

««Այո՛, իմ տէ՛ր, - պատասխանեց ան, - խմէ՛»: Եւ ան *արագ* իջեցուց սափորն իր ուսէն եւ ջուր տուաւ անոր: Զուր տալէն յետոյ ըսաւ. «Ես ջուր կը հանեմ նաեւ քու ուղտերուն համար,

մինչև որ անոնք խմեն եւ յագենան»։ Եւ ան *արագ* պարպեց իր սափորը ջրոցի մէջ եւ ետ վագեց դէպի ջրհորը՝ ջուր հանելու անոր բոլոր ուղտերուն համար» (Ծննդոց 24.18-20, NLT)։

Աբրահամի ծառան լուռ կը հետեւէր, մինչ աղջիկը կը խմցնէր տասը ուղտերուն։ Այս քանի մը խօսքի մէջ մենք կը գտնենք Ռեբեկայի ծառայութեան վերաբերող բազմաթիւ ակնառու յատկանիշներ։ Ես մէկ առ մէկ կը թուարկեմ.

- *Եռանդուն*. Ան չէր քալեր՝ ոտքերը հագիւ քաշելով։ Ան արագ կ'ընէր ամէն ինչ եւ նոյնիսկ վագելով կ'երթար-կու գար դէպի ջրհորը։ Դանդաղկոտ եւ ջանքէն զուրկ ծառայութիւնը ճշմարիտ ծառայութիւն չէ։ Դուք նկատա՞ծ էք, որ ոմանք կը ծառայեն, սակայն կ'ընեն ատիկա անտարբերութեամբ եւ կարծես կ'ըսեն. «Ես յոգնած եմ ամբողջ այս աշխատանքէն»։ Ռեբեկան եւ ոեւէ ճշմարիտ ծառայ այդպէս չեն վարուիր։ Ճշմարիտ ծառաները պատրաստակամ եւ աշխոյժ են, ինչ որ ակնյայտ է անոնց գործերէն։
- *Աւելին ընող*. Ծառաները կը վարուին գերազանցութեամբ։ Ռեբեկան մեծապէս գերազանցեց այն, ինչ որ իրմէ խնդրեցին։ Քանի որ մեզմէ շատերը չեն ունեցած ուղտեր եւ չեն ապրած Մերձավոր Արեւելքի անապատին մէջ, մենք չենք շեշտադրեր այս գործօնը, ինչն ա՛լ աւելի ապշեցուցիչ կը դարձնէ Ռեբեկայի ծառայութիւնը։ Երկար ճանապարհորդութենէն յետոյ ծարաւ ուղտը սովորաբար կրնայ խմել 120-150 լիթր ջուր։ Աբրահամի ծառան 10 ուղտ ունէր։ Եկէք հաշուենք. եթէ ամէն մէկ ուղտը խմէր ընդամենը 120 լիթր, կը նշանակէ՝ Ռեբեկան պէտք է հարիւրաւոր լիթրերով ջուր բերէր ջրհորէն։ Եթէ սովորական սափորի տարողութիւնը 20 լիթր էր, կը նշանակէ՝ ան պէտք է 60 անգամ երթար ջրհորին քով եւ ետ դառնար։

Սակայն անոր ըրածը ա՛լ աւելի զարմանալի է։ Այդ օրերուն կային երկու տեսակի ջրհորներ։ Մէկ տեսակի պարագային սափորին պարան կը կապէին եւ կ'իջեցնէին փոսը՝ մինչև ջուրի մակարդակը։ Միւս տեսակի պարագային անհրաժեշտ էր 20-30 քայլ վար իջնել՝ ջուրի մակարդակին հասնելու համար։ Մենք գիտե՞նք, թէ որ տեսակի ջրհորին քով էր Ռեբեկան։ Անկասկած՝ երկրորդ տեսակի, քանի որ հետագային, երբ Աբրահամի ծառան Ռեբեկայի արարքի մասին կը պատմէր անոր ընտանիքին, ան ըսաւ. «[Ռեբեկան] իջաւ աղբիւրը եւ ջուր հանեց»։ Բացի այն, որ ան 60 անգամ գնաց դէպի ջրհորը եւ վերադարձաւ՝ 20 լիթր

ջուրը ուսին, ան նոյնպէս ստիպուած էր այդքան շատ քայլեր ընել: Եւ մտապահեցէք, որ ան անձամբ այդ ամէնը ընելու պատրաստակամութիւն յայտնեց, թէեւ իրմէ չէին խնդրած ատոր համար: Այս յատկանիշի մասին գրուած է մեր յաջորդ կէտին մէջ:

- *Արձագանգող.* Երբ կայ ակնյայտ կարիք, ճշմարիտ ծառան չի սպասեր, որ իրմէ խնդրեն. ան անմիջապէս գործի կ'անցնի: Իմ փորձառութեան տարիներու ընթացքին ես պարզօրէն տեսած եմ, որ այն մարդոց կեանքին մէջ, որոնք միայն կը սպասեն յանձնարարութիւններուն, չկայ բազմապատկում: Բազմապատկողները անոնք են, որոնք միշտ առաջինը կը գործեն:
- *Նուիրուած.* Թէեւ այդ առաջադրանքը բարդ էր, Ռեբեկան ջանասէր էր իր ծառայութեան մէջ: Տարիներու ընթացքին ես տեսած եմ օրինաչափութիւն մը. որքան դժուար է առաջադրանքը, այնքան պատրաստակամութիւնն արագ կը մարի: Այդպիսին է մարդկային բնութիւնը: Այնուամենայնիւ, մենք ունինք Յիսուս Քրիստոսի բնութիւնը: Ան երբեք չյանձնուեցաւ՝ նոյնիսկ կրելով աներեւակայելի հակառակութիւն եւ նեղութիւն: Ապրեցէ՛ք համաձայն Յիսուսի բնութեան եւ ոգեշնչուեցէ՛ք Ռեբեկայով:
- *Գործն աւարտին հասցնող.* Ռեբեկան կանգ չառաւ, քանի տակաւին չէր աւարտած իր գործը: Ան յանձնուող չէր: Գործի 99 տոկոսը ընելը չի նշանակեր աւարտել այն: Մենք կը յիշենք, որ այդպէս վարուեցաւ Սաուղ թագաւորը ամաղեկացիներու հետ մարտի ժամանակ: Ան սպաննեց տասնեակ հազարաւորներ, բայց խնայեց մէկուն, եւ Աստուած չվարձատրեց անոր ջանքերը (կարդացէ՛ք Ա. Թագաւորաց 15-րդ գլուխը): Ռեբեկան ըրաւ այդ ամէնը՝ չիմանալով, որ վարձատրութիւն պիտի ստանար իր գործին համար: Ասիկա ծառայ ըլլալու ճշմարիտ նշանն է. ծառաները չեն գործեր յանուն վարձատրութեան. վարձատրութիւնն անոնց համար նոյնինքն ծառայելն է: Անոնք կը սիրեն այն ուրախութեան, բաւականութեան եւ գոհունակութեան զգացումը, որ ծառայութիւնը կը պարգեւէ իրենց: Եթէ կայ վարձատրութիւն, ասիկա պարզապէս յաւելեալ օրինութիւն է, ոչ թէ անոնց շարժառիթը: Ռեբեկայի վարձատրութիւնն անասելի էր. ան չէր պատկերացներ, որ այդ տասը ուղտերը թանկարժէք իրեր եւ նուէրներ բերած էին իրեն, եւ որ ինքը պիտի ամուսնանար Աստուածապաշտ տղամարդու հետ: Բայց այս երկուքէն ոչ մէկը մնայուն վարձատրութիւն էր: Մնայուն վարձատրութիւնն այն էր, որ ան մուտք գործեց այն

խոստումին մէջ, որ Աստուած տուած էր Աբրահամին: Ան շատ ազգերու մայր պիտի ըլլար: Բոլոր ազգերը պիտի օրհնուէին անոր միջոցով: Ռեբեկան անասելի բազմապատկում ստացաւ:

## ԱՅԼ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Գոյութիւն ունին բազում այլ սուրբգրային օրինակներ՝ ի սրտէ կատարուած ծառայութենէն բխող յաւիտենական բազմապատկման մասին: Ահա եւս քանի մը հատը, որոնք կրնաք աւելի մանրամասն ուսումնասիրել անծամբ՝ ձեր Աստուածաշունչի ուսումնասիրութեան ժամանակ:

### Հռութ

Ռեբեկային նման, մովաբացի Հռութի սկեսուր Նոյեմին երեք անգամ խրախուսեց անոր վերադառնալու իր հայրենիքը: Բայց Հռութը հրաժարեցաւ՝ ըսելով.

«Ինձի մի՛ ստիպեր, որ քեզի ձգեն եւ քեզմէ ետ դառնամ, որովհետեւ ուր որ երթաս՝ պիտի երթամ, եւ ուր որ մնաս՝ պիտի մնամ: Քու ժողովուրդը իմ ժողովուրդն է, եւ քու Աստուած իմ Աստուածն է» (Հռութ 1.16):

Հռութը՝ Ռեբեկայի պէս պատրաստ էր ընելու աւելին, քրտնաջան աշխատելու, նուիրուած մնալու՝ նոյնիսկ երբ ընթացքը կը դժուարանար: Հռութի ուղին, հաւանաբար, աւելի դժուար էր, քան Ռեբեկայինը: Քանի որ ան մովաբացի էր, ամենայն հաւանականութեամբ, կը հալածուէր Նոյեմիի քաղաքի բնակիչներու կողմէն՝ իր ազգութեան եւ հայրենիքի պատճառով: Սակայն ան դիմացաւ որեւէ նեղութեան՝ իր սկեսրոջը հաւատարմօրէն ծառայելու համար:

Ի՞նչ տեղի ունեցաւ վերջաւորութեան: Ան դարձաւ բազում ակնառու մարդոց նախամայրը, որոնց կարգին էին Դաւիթ թագաւորը, Սողոմոն թագաւորը եւ Յուդայի բոլոր թագաւորները: Ամենակարեւորը, ան յայտնուեցաւ Յիսուսի սերնդաբանութեան մէջ: Ան նոյնպէս մուտք գործեց այն յաւիտենական բազմապատկման ուխտի մէջ, որ խոստացուած էր Աբրահամին:

### Եղիսէ

Եղիսէն վճռեց մնալ Եղիային հետ եւ ծառայել անոր, թէեւ Եղիան երեք անգամ խրախուսեց անոր երթալու: Նոյնիսկ երբ միւս մարգարէները աւելի քան մէկ անգամ ծաղրեցին անոր՝ ըսելով, որ ան

կը վատնէր իր ժամանակը՝ ծառայելով Եղիային, միեւնոյնն է, Եղիսէն մնաց անոր հետ: Անոնց դատողութիւնները տրամաբանական կը թուէին. անոնք լրիւ դոյրքով մարգարէներ դարձած էին՝ ձեռք ձգելով կարգավիճակ եւ փորձառութիւն: Ի՞նչ պիտի կատարուէր Եղիսէին հետ, երբ Եղիան վերցուէր: Արդեօ՞ք ան վատնած էր իր տարիները՝ ծառայելով Եղիային, եւ այլեւս չունէր հնարաւորութիւն կառուցելու իր ծառայութիւնը: Ատիկա այդ մարգարէներու տրամաբանութիւնն էր, բայց Եղիսէն չլսեց անոնց: Փոխարէնը, ան ամէն անգամ խստօրէն կը պատուիրէր անոնց լռել (կարդացէ՛ք Դ. Թագաւորաց 2-րդ գլուխը): Ան թոյլ չտուաւ, որ ինչ որ բան մը ետ պահէ իրեն ծառայութենէն, եւ կատարեց իր առաջադրանքը:

Եղիսէին վարքը նման էր Ռեբեկայի եւ Հռութի վարքին: Ի՞նչ տեղի ունեցաւ վերջաւորութեան: Ան երկու անգամ աւելի շատ հրաշքներ գործեց, քան Եղիան, եւ կրցաւ ընել այն, ինչ որ չյաջողեցաւ Եղիային՝ վերջ տալ Յեզաբէլի արքայատոհմին: Ան բազմապատկում ունեցաւ:

## Գեեզի

Գեեզին հնարաւորութիւն ունէր բազմապատկելու Եղիսէի գործը, բայց չունէր ծառայի սիրտ: Ան եսակեդրոն եւ ազահ էր, եւ անոր կեանքին մէջ արդիւնաւէտ բազմապատկում տեղի չունեցաւ (կարդացէ՛ք Դ. Թագաւորաց 5-րդ գլուխը):

## X

Նոր կտակարանին մէջ կը կարդանք այրիներու սեղաններուն ծառայող տղամարդոց մասին: Անոնք լրջօրէն վերաբերուեցան իրենց պարտականութեան: Անոնց ձեռնադրեցին՝ այդ աշխատանքը պատշաճ կերպով կատարելու համար: Արդիւնքը տպաւորիչ էր, քանի որ Գործք առաքելոց գիրքին մէջ գրուած է հետեւեալ ապշեցուցիչ պնդումը.

«Եւ Աստուծոյ Խօսքը տարածուեցաւ, եւ աշակերտներուն թիւը մեծապէս բազմապատկուեցաւ Երուսաղէմի մէջ» (Գործք 6.7, NJKV):

Ի՞նչն էր այդքան ապշեցուցիչ: Բարձրաձայն ըսէ՛ք այս բառերը. «Մեծապէս բազմապատկուեցաւ»: Մտածեցէ՛ք այս մասին: Այս բառերը չգրուեցան Պենտեկոստէի օրէն յետոյ, երբ Պետրոսի դասական

դարձած ուղերձին միջոցով մէկ օրուան մէջ երեք հազար մարդ վերստին ծնաւ: Ո՛չ, հոն օգտագործուած է «աւելցան» բառը (Գործք 2.41): Երբ կը նկարագրուին ամենօրեայ դարձի եկածներու մասին, կրկին կ'օգտագործուի «աւելնալ» բառը (Գործք 2.47): Նոյն բառը կ'օգտագործուի այն հինգ հազարի վերաբերեալ, որոնք կարճ ժամանակ յետոյ նուիրեցին իրենց կեանքը Յիսուսին (կարդացէ՛ք Գործք 4.4):

«Բազմապատկել» բառը չ'օգտագործուիր մինչեւ Գործք առաքելոց գիրքի վեցերորդ գլուխը, ուր ամբողջ եկեղեցին կը սկսի գործել՝ Աստուծոյ Թագաւորութիւնը կառուցելու համար:

Այսօր բազմապատկումը տեղի կ'ունենայ, երբ Սթէնի, Մայքի, Ֆիլի, Ռայլիի եւ Տէյվի նման մարդիկ կը զբաղեցնեն իրենց ծառայողական դիրքերը եւ կ'օգտագործեն իրենց պարգեւները: Յատկապէս այս ժամանակ կը լսենք մեծ բազմապատկման մասին:

## ՈՐՈՇԻՉ ԳՈՐԾՕՆԸ

Հիմա կը հասկնա՞ք, թէ որն է արդիւնաւէտ բազմապատկման որոշիչ գործօնը: Կրկին մտածեցէ՛ք իմ ընկերներ Ռայլիի եւ Տէյվի մասին՝ այն սուրբգրային պատմութիւններու լոյսի ներքոյ, որոնք դիտարկեցինք: Այս զոյգը, որ կիրառած է ոգեշնչումով ստացած մարտավարութիւններ, արդէն իսկ ազդեցութիւն գործած է տասնեակ հազարաւոր մարդոց կեանքերուն մէջ: Անոնք մեծ դարձած են՝ ըստ Յիսուսի խօսքերուն: Նոյնը կը վերաբերի Սթէնին, Մայքին, Ֆիլին եւ Տանային: Բոլոր այս մարդիկ ունին ճշմարիտ ծառայ ըլլալու յատկանիշը:

Այնուամենայնիւ, կը խնդրեմ, որ ուշադրութիւն դարձնէք այս կարեւոր խօսքերուն. *դուք կրնաք բազմապատկել եսասիրական շարժառիթներով*, բայց ձեր ազդեցութիւնը յաւիտենական չ'ըլլար: Կան մարդիկ, որոնք կը բազմապատկեն, սակայն մէկ օր անոնց բոլոր գործերը կ'այրին, քանի որ անոնց շարժառիթը անձնական շահն է: Ասիկա կը նկարագրուի աւելի մեծ ամբարներ կառուցող մարդու առակին մէջ, որ կը պատմէ Յիսուսը: Այդ մարդը ինքնագոհ շնորհաւորեց ինքզինք՝ ըսելով. «Հանգստացի՛ր, կե՛ր, խմէ՛, զուարճացի՛ր, որովհետեւ ես հասած եմ իմ նպատակին եւ այժմ ունիմ այն ամէնը, ինչ որ պէտք է ինձի, եւ աւելին»: Բայց այս պատմութիւնը լաւ չաւարտեցաւ, քանի որ մէկ ակնթարթի մէջ անոր բոլոր ձեռքբերումները անհետացան:

Այս գիրքի ուղերձի նպատակն այն չէ, որ հաւատաք



բազմապատկմանը եւ սկսիք գանձեր դիզել ձեզի համար: Այս ուղերձի նպատակն է խրախուսել ձեզ, որ նուիրէք ձեր կեանքը մարդոց ծառայելուն: Յիսուսը յայտարարեց, որ երբ այսպէս վարուինք, *այն ամէնը*, ինչին որ կը ձգտին անհաւատները, պարզապէս պիտի տրուի մեզի (կարդացէ՛ք Մատթէոս 6.33): Ես գիտեմ այս մասին, քանի որ անձամբ վերապրած եմ:

Վերադառնանք Լիզային եւ իմ պատմութեանը՝ մեր առաջին եկեղեցւոյ մասին: Վեց տարի շարունակ նման անառողջ մթնոլորտի մէջ ըլլալու վերջաւորութեան իմ ներսը մնացած էին թիւր պատկերացումներ բազմապատկման մասին: Այդ եկեղեցիէն հեռանալէն կարճ ժամանակ յետոյ՝ մէկ առաւօտ, երբ ինքնաշարժ կը վարէի, տեղի ունեցաւ իմ բազմաթիւ վերափոխող եւ ազատագրող հանդիպումներէն մէկը Սուրբ Հոգիին հետ: Ան ըսաւ. «Որդի՛ս, մի՛ փնտռեր Ինձի օրհնութիւններու համար: Թո՛յլ տուր, որ Ե՛ս տամ ատոնք քեզի»:

Ես անմիջապէս մտաբերեցի Մատթէոս 6.33-ը. «Փնտռեցէ՛ք Աստուծոյ Թագաւորութիւնը ամէն ինչէն աւելի եւ ապրեցէ՛ք արդար, եւ Ան պիտի տայ ձեզի այն ամէնը, ինչին կարիքը որ ունիք» (NLT): Հոգիին խօսքերը տուին ինձի ճիշդ պատկերացում եւ օգնեցին արմատախիլ ընել ներսս մնացած եսասիրական հակումները:

Ես այնքա՛ն շնորհակալ եմ Անոր: Գիտեմ, թէ ինչ կը նշանակէ եսասէր եւ ազահ ըլլալ՝ երբ դուք դժբախտ էք, ճնշուած էք եւ հեռու էք Աստուծոյ ներկայութենէն: Երբ ես սորվեցայ Անոր ճանապարհը եւ այն, ինչ որ Անոր սրտին մէջ է՝ երբ սկսայ առաջին հերթին ձգտիլ Աստուծոյ Թագաւորութիւնը կառուցելուն, ես ձեռք ձգեցի անսահման ուրախութիւն, խաղաղութիւն եւ Անոր ներկայութիւնը՝ իմ ամենօրեայ կեանքին մէջ:


## X

Այժմ մենք պէտք է հարցնենք հետեւեալ հարցումը. ինչպէ՞ս կրնանք բազմապատկել, եթէ չենք ղեկավարեր մեր սեփական գործը, այլ կը ծառայենք ինչ որ մէկուն խումբի մէջ: Եկէք պատասխանենք այս հարցումին յաջորդ գլուխին մէջ եւ տեսնենք այն մեծ առաւելութիւնները, որոնց կարելի է հասնիլ այդ կերպով:

## ՄՏՈՐԵՑԷՔ

1. Յիսուսը ցոյց կու տայ, որ ճշմարիտ մեծութեան ուղին ծառայելն է: Ինչպէ՞ս Յիսուսը ցուցադրեց ծառայութիւնը: Որո՞նք էին Անոր ծառայութեան արդիւնքները: Ինչո՞վ Աստուծոյ մեծութեան ուղին կը տարբերի այս աշխարհի ճանապարհներէն:
2. Յիշեցէ՛ք Ռեբեկայի պատմութիւնը: Որո՞նք էին անոր ծառայութեան ակնառու յատկանիշները:
3. Դուք կրնաք բազմապատկել եսասիրական շարժառիթներով, բայց ձեր ազդեցութիւնը յաւիտենական չ'ըլլար: Ո՞րն է *եսասէր* եւ *անձնագոհ* ծառայութեան տարբերութիւնը: Ինչո՞վ կարելոր է ծառայել անձնագոհաբար:





*«Կը յորդորեն ձեզ՝ նմանեցի՝ ք Ինծի:  
Այս նպատակով...»:*

– Ա.Կորնթացիս 4.16,17, NKJV

## ՆՄԱՆԵՑԷ՛Ք ԻՆՏԻ

**Մ**ինչեւ խօսինք այն մասին, թէ ինչ որ կը խոչընդոտէ բազմապատկումը եւ ինչը կը խթանէ այն, մենք պէտք է քննարկենք եւս կարեւոր բնագաւառ մը: Ինչպէ՞ս կը բազմապատկենք, երբ կ'աշխատինք կամ կը ծառայենք ինչ որ մէկուն քով: Այս հարցունը կը վերաբերի ընթերցողներու մեծ մասին:

Այս հարցումին պատասխանելու համար ես պիտի կեդրոնանամ ծառայողական ոլորտին վրայ, սակայն այն սկզբունքները, որոնք կը ներկայացնեն, կիրառելի են որեւէ պաշտօնի համար ժամանակակից աշխարհի որեւէ ոլորտի մէջ՝ վարձակալական, գործարար, կրթական, առողջապահական, պետական, մետիայի, մարզանքի, արուեստի եւ այլն:

Պօղոսը կը յայտարարէ. «Արդ տնտեսներու մէջ այն կը պահանջուի, որ մէկը հաւատարիմ գտնուի» (Ա. Կորնթացիս 4.2): Ինչպէս որ ցոյց տուինք Աստուածաշունչէն, հաւատարիմ ըլլալու գլխաւոր յատկանիշներէն մէկը բազմապատկելն է: Քանի մը խօսք յետոյ իր նամակին մէջ Պօղոսը կը բացայայտէ զանգուածային բազմապատկման հիմնական բաղադրիչներէն մէկը: Ան կը գրէ.

«Որովհետեւ թէեւ դուք տասը հազար վարդապետներ ունենաք Քրիստոսին մէջ, բայց ոչ թէ շատ հայրեր, որովհետեւ Քրիստոս Յիսուսին մէջ ես ձեզի ծնայ Աւետարանով» (Ա. Կորնթացիս 4.15):

Պօղոսը Կորնթոսի եկեղեցւոյ *հայրն* էր: Համաձայն այս խօսքին, *հայրը* անհկա է, որ դէպի հաւատք կ'առաջնորդէ ինչ որ մէկուն: Այնուամենայնիւ, կան նաեւ «հայր» բառի այլ սահմանումներ: Աստուածաշունչին մէջ հայրը շատ անելի յաճախ այնպիսի մարդ է, որ ներգրաւուած չէ ինչ որ մէկուն դարձի բերելու մէջ:

Նոյն Պօղոս առաքեալը, դիմելով Գաղատիայի եկեղեցւոյ, կը պնդէ. «Իմ ազգիս՝ Հրեութեան մէջ իմ հասակակիցներէ շատերէն

ա՛լ անելի յառաջադէմ էի՝ անելի նախանձաւոր ու խիստ ըլլալով իմ հայրենի (կամ՝ «հայրերու») ականդութիւններուն համար»։ (Գաղատացիս 1.14)։ Գրելով *հայրերու* մասին՝ Պօղոսը նկատի չունէր մէկ մարդ։ Այս պնդումը կը հաստատուի անոր՝ «ոչ թէ շատ հայրեր» արտայայտութեամբ։ Յունարէնի մէջ օգտագործուած «շատ» բառը կը նշանակէ «մեծաթիւ»։ այսինքն, մենք կրնանք ունենալ անելի քան մէկ «հայր» մեր կեանքին մէջ։

Պօղոսը յաճախ Տիմոթէոսին կ'անուանէր իր «որդին»։ Սակայն ան փրկութեան չէր առաջնորդած անոր, քանի որ գրուած է, որ Պօղոսը «եկաւ-հասաւ Ղերբէ եւ Լիւստրա, եւ ահա աշակերտ մը կար ինն՝ անունը Տիմոթէոս, որուն մայրը հաւատացեալ իրեայ կին մըն էր, իսկ հայրը՝ յոյն։ Տիմոթէոսը բարի վկայութիւն ունէր Լիւստրացի եւ Իկոնացի եղբայրներէն» (Գործք 16.1,2)։ Պարզ է, որ ան արդէն հաստատուած հաւատացեալ էր, երբ Պօղոսը հանդիպեցաւ իրեն առաջին անգամ։

Հին կտակարանին մէջ Դաւիթը կ'անուանէ իր խիստ եւ դաժան առաջնորդին «հայր իմ» (կարդացէ՛ք Ա. Թագաւորաց 24.12)։ Եղիսէն նոյնպէս կ'անուանէ իր առաջնորդին «հայր իմ» (Դ. Թագաւորաց 2.12)։ Եղիան ըսաւ, որ ինքը իր «հայրերէն» լաւը չէր (կարդացէ՛ք Գ. Թագաւորաց 19.4)։ այս ցուցակը տակաւին կարելի է երկար շարունակել։

Այս գիրքի շրջանակներուն մէջ իմ նպատակը չէ մանրամասնօրէն բացատրելը, թէ *ով է հայրը*. ես կը ցանկամ ցոյց տալ, թէ *ով կրնայ ըլլալ իմ հայրը*։ Հայրը այն մարդն է, որ կ'առաջնորդէ, կը մատակարարէ եւ կը ներմուծէ որոշակի մշակոյթ ունէ անհատի կամ որեւէ կազմակերպութեան կեանքին մէջ։ Մեր քննարկման շրջանակին մէջ հայրը կրնայ բազմաթիւ դիրքեր զբաղեցնել՝ այն ձեռնարկատէրը, որուն քով դուք կ'աշխատիք, ձեր բաժնի ղեկավարը, ձեր իովիւր, ձեր փոքր խումբի աւագը, ձեր շարժման վերակացուն, ձեր ուսուցիչը, ձեր մարզիչը, այն բժիշկը, որուն օգնականն էք դուք, ահա հնարաւոր դիրքերու շատ կարճ ցուցակ։ Անշուշտ, դուք, հաւանաբար, հասկցաք, որ այս դիրքերը զբաղեցնող «հայրը» կրնայ կին ըլլալ։ Այնպէս որ, խօսելով հայրերու մասին, նկատի ունիմ նաեւ այս դերին մէջ գտնուող կիները։

## ՏԱՐԲԵՐ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԵՐ

Որպէս Կորնթոսի եկեղեցւոյ հայր, Պօղոսը կը խրատէ յաջորդ խօսքին մէջ. «Ուրեմն, կը քաջալերեմ ձեզ՝ նմանեցէ՛ք ինձի» (Ա. Կորնթացիս 4.16, NKJV)։

Պօղոսը չ'ըսեր. «Նմանեցէ՛ք ինձի, ինչպէս որ ես կը նմանիմ Քրիստոսին» (ան կ'ընէ այս պնդումը անելի ուշ՝ 11-րդ գլուխին մէջ)։ Այս

խօսքին մէջ ան պարզապէս կը պատուիրէ. «Նմանեցէ՛ք ինձի»: Կայ լուրջ պատճառ այդպէս վարուելու համար, եւ այժմ կը դիտարկենք այն.

*«Այս նպատակով ես ուղարկեցի Տիմոթէոսը ձեր քով, որ իմ սիրելի եւ հաւատարիմ որդին է Տիրոջ մէջ, որը կը յիշեցնէ ձեզի իմ ճանապարհներուն մասին Քրիստոսին մէջ, ինչպէս որ ես կը սորվեցնեմ ամէնուր՝ ամէն եկեղեցւոյ մէջ»* (Ա. Կորնթացիս 4.17, NKJV):

Անոր՝ «այս նպատակով» արտայայտութիւնը այս խօսքի սկիզբը, ուշագրաւ է: Պօղոսը հազիւ նոր պատուիրեց իր ունկնդիրներուն նմանուիլ իրեն: Եւ, հաւաստիանալու համար, որ անոնք չեն ունենար որեւէ տարածայնութիւն տեսիլքի, մշակոյթի եւ համոզմունքներու մէջ, ան ուղարկեց իր *հաւատարիմ* որդին: Ո՞րն է *հաւատարիմ* որդիի ցուցանիշը: *Հաւատարիմ որդին կամ դուստրը կը բազմապատկէ իր հօր գործելակերպը*: Շուտով աւելի մանրամասն կը բացատրեմ ասիկա, բայց, նախ, մտածեցէ՛ք հետեւեալին մասին. Պօղոսը չի գրեր Կորնթոսի եկեղեցիին՝ ըսելով, որ Տիմոթէոսը «կը յիշեցնէ ձեզի Պետրոս առաքեալի ճանապարհներու մասին Քրիստոսին մէջ»: Կարելի՞ է ըսել, որ Պետրոսը հեղինակաւոր առաջնորդ էր եկեղեցւոյ մէջ: Անշո՛ւշտ: Կարելի՞ է ըսել, որ ան Աստուածապաշտ եւ օծուած առաջնորդ էր: Կրկին՝ այո՛: Ան երկու գիրք գրած է Աստուածաշունչին մէջ: Կարելի՞ է ըսել, որ Պետրոսը աւելի երկար ժամանակ առաքեալ եղած էր, քան Պօղոսը: Կրկին՝ այո՛:

Նոյնպէս, Պօղոսը չի գրեր, որ Տիմոթէոսը «կը յիշեցնէ ձեզի Յակոբոս առաքեալի ճանապարհներու մասին Քրիստոսին մէջ»: Ինչպէս եւ Պետրոսը, Յակոբոսը եկեղեցւոյ ճշմարիտ հայրերէն մէկն էր, ան աւելի երկար ժամանակ առաքեալ էր, քան Պօղոսը, եւ յուսալի առաջնորդ էր: Ան նոյնպէս մէկ գիրք գրած է Աստուածաշունչին մէջ եւ կը ծառայէր որպէս գլխաւոր երէց Երուսաղէմի եկեղեցւոյ մէջ:

Արդեօ՞ք Պետրոսը եւ Յակոբոսը ուրիշ ձեւով կը ծառայէին, քան Պօղոսը: Այո՛: Ուրեմն, կարելի՞ է ըսել, որ Պօղոսի գիրքերը եւ գործելակերպը անվաւեր կը դարձնեն Պետրոսին եւ Յակոբոսին գիրքերը եւ գործելակերպը: Անշուշտ՝ ո՛չ: Այնուամենայնիւ, այդ երկու առաքեալներու գործելակերպը յարմար չէր Կորնթոսի եկեղեցւոյ համար, որուն հոգեւոր հայրը Պօղոսն էր:

Պօղոսը Կորնթոսի եկեղեցւոյ մէջ իր մշակոյթը հաստատելու ընթացքի մէջ էր: Անոր մեթոտները կը տարբերէին միւս «հայրերու» մեթոտներէն: Թէեւ անոնցմէ իւրաքանչիւրը հաւատարիմ էր

Քրիստոսի հիմնարար համոզմունքներուն եւ ուսմունքներուն, անոնք ունէին տարբեր մեթոտներ, գործելակերպեր եւ համոզմունքներ, որոնց կը յարէին՝ կատարելով բոլոր ազգերը աշակերտելու իրենց առաջադրանքը:

Մենք կը տեսնենք ճշմարտութիւն մը, որուն շատ հաւատացեալներ ծանօթ չեն, եւ այդ անիրազեկութիւնը յաճախ կործանարար պառակտումներու պատճառ կը դառնայ Քրիստոսի մարմինին մէջ: Այդ ճշմարտութիւնը հետեւեալն է. եկեղեցիին մէջ կան տարբեր *գործելակերպեր*: Գոյութիւն ունին տարբեր միջոցներ, որոնցմով կարելի է իրականացնել նոյն նպատակը՝ Աստուծոյ թագաւորութիւնը տարածելը:

Պօղոսը կը սորվեցնէ Կորնթոսի եկեղեցիին.

«Եւ ներգործութիւնները զանազան են, բայց Աստուած նոյնն է, որ ամէնը ամէնքի մէջ կը ներգործէ» (Ա. Կորնթացիս 12.6):

Որպէս 30 տարի շարունակ ճամբորդող ծառայող, անծամբ հանդիպած եմ բազմապիսի մշակոյթներու, մեթոտներու եւ համոզմունքներու համաշխարհային եկեղեցւոյ մէջ: Սակայն կը զգայի Յիսուսի ներկայութիւնը իւրաքանչիւր մթնոլորտի մէջ:

Պօղոսը յաճախ կ'օգտագործէ ռազմական բառապաշար՝ եկեղեցիին սորվեցնելու համար: Ատիկա միայն այլաբանութիւն չէ. մենք իրականութեան մէջ Աստուծոյ բանակի զինուորներն ենք այս երկրի վրայ: Ես կը հետեւիմ անոր օրինակին՝ բացատրելու համար ծառայութիւններու տարբեր գործելակերպերը: Միացեալ Նահանգներու զինուած ուժերը բաղկացած են տարբեր ստորաբաժանումներէն: Ատոնք են՝ բանակը, ռազմածովային, օդային եւ ծովահետեւակային ուժերը, առափնեայ պաշտպանութեան ստորաբաժանումը եւ տիեզերական ուժերը: Այս ստորաբաժանումները կ'իրականացնեն իրենց գործառոյթները եւ պարտականութիւնները տարբեր ընթացակարգերով եւ մեթոտներով: Այնուամենայնիւ, անոնք ունին նոյն նպատակը, երբ խօսքը կը վերաբերի մեր երկիրը պաշտպանելուն եւ մեր երկրին ծառայելուն:

Օդային ուժերու վարժարանի քատէթը (ռազմական միջնակարգ դպրոցի սանը) յատուկ պիտի կրթուի որպէս Միացեալ Նահանգներու օդային ուժերու զինուոր: Ուսուցման մէջ մեծ շեշտադրում պիտի կատարուի օդային մարտավարական գործողութիւններու վրայ, քանի որ այդ ստորաբաժանման զօրքերը հիմնականին կը պայքարին օդին մէջ: Եթէ այդ քատէթին վերանշանակէին ռազմածովային ստորաբաժանման մէջ, ան կրկին ուսուցման կարիք պիտի ունենար:



Անշուշտ, կան անթիւ հիմքային մեթոտներ, որոնք կը համընկնին այդ երկու ստորաբաժանումներուն մէջ: Սակայն քանի որ ռազմածովային ստորաբաժանումը հիմնականին կը պայքարի ծովուն մէջ, օդային ուժերու նախկին անդամը ստիպուած պիտի ըլլար սորվիլ բազմաթիւ նոր գործառնական նպատակաւաց մարտավարական հնարքներ եւ ռազմավարութիւններ:

Ասիկա նման է Աստուծոյ Թագաւորութեան: Ահա ենթադրական օրինակ մը: Պատկերացուցէ՛ք, որ ձեր աւագ հովիւներու անուններն են Ճօ եւ Թերրի Անտերսըններ: Անոնք՝ իրենց առաջնորդական խումբին հետ, Աստուծոյ շնորհքով, եկեղեցին հասցուցած են 1.800 անդամի եւ հաստատած են որոշակի գործելակերպեր՝ մեթոտներ եւ մշակոյթ, որոնք եզակի են իրենց առաջնորդական ոճին համար: Ձեր եկեղեցւոյ պտղաբերութիւնը ակնառու կերպով ազդած է ձեր բնակավայրին վրայ: Այն ունի տեղական ճանաչում, բայց ասոր մէջ ձեր եկեղեցւոյ ազդեցութիւնը կը սահմանափակուի:

Ենթադրենք, որ մէկ այլ վայրի մէջ կայ հանրայայտ եկեղեցի մը՝ քանի մը տասնեակ հազար անդամներով, որ համաշխարհային ճանաչում ունի: Անոնց գլխաւոր հովիւներուն անունները Քէվըն եւ Մարիսա Սմիթներ: Անոնք կը սահմանեն ուղղուածութիւններ եւ կ'առաջնորդեն նոր ու թարմ մարտավարութիւններով, որոնք ազդեցութիւն կը ձգեն աւելի շատ մարդոց վրայ, քան ձեր հովիւներու ծառայութիւնը: Ո՞րուն գործելակերպին դուք պիտի հետեւիք՝ Սմիթներու՞, թէ՞ ձեր հովիւներ Անտերսըններու:

Թերեւս գայթակղութիւն ունենաք հետեւելու այդ համաշխարհային համբաւ ունեցող առաջնորդներու գործելակերպին եւ փորձէք համոզել ձեր հովիւներուն, որ ընդունին անոնց մեթոտները: Եթէ դուք տրուիք այդ գայթակղութեան, ես կ'ըսէի, որ դուք Յիսուս Քրիստոսի հաւատարիմ ծառաները չէք, այլ կը ստեղծէք բաժանութիւններ, տարածայնութիւններ եւ նոյնիսկ կռիւներ: Կորնթացիներու նման դուք պէտք է ձգտիք ճանչնալ ձեր առաջնորդներու մեթոտները եւ մշակոյթը եւ հետեւիլ ատոնց՝ յանուն միաբանութեան: Իրականութիւնն այն է, որ Սմիթները ձեր առաջնորդները չեն. ձեր առաջնորդները Անտերսըններն են:

Դիտարկելով Քրիստոսի մարմինն ընդհանուր առումով՝ ողջ աշխարհի տարածքին ճամբորդելու տարիներու ընթացքին, ես ականատես եղած եմ յաճախակի ողբերգութիւններու, որոնք տեղի ունեցած են այս հիմնարար ճշմարտութիւնը չգիտնալու պատճառով: Տեսած եմ մարդիկ, որոնք յաճախած են այնպիսի առաջնորդական կամ Աստուածաշնչեան դպրոցներ, որոնց մշակոյթը տարբեր է այն

Եկեղեցւոյ մշակոյթէն, ուր իրենք մեծցած են: Յաճախ այդ դպրոցները կապակցուած եղած են որեւէ խոշոր եկեղեցւոյ հետ, որ թելադրած է տարածաշրջանի ընդհանուր եկեղեցական մշակոյթը: Այդ ուսանողները կրած են այդ եկեղեցւոյ գործելակերպի ազդեցութիւնը՝ թէ՛ այդ դպրոցին մէջ սորվելու ընթացքին, թէ՛ շաբաթավերջի երկրպագութեան ծառայութիւններուն:

Աւարտելէն յետոյ այդ ուսանողները կը վերադառնան՝ լեցուած եռանդով, եւ կը սկսին ընել ամէն ինչ, որպէսզի փոխեն իրենց եկեղեցւոյ մշակոյթը եւ մեթոտները: Թէեւ անոնք կրնան իրաւացի ըլլալ՝ հաւատալով, որ այն գործելակերպը, որ իրենք սորված են, աւելի յարմար եւ արդիւնաւետ է, եթէ անոնք չափէն շատ յամառութիւն ցուցաբերեն, դիւրաբար կրնան խաթարել միաբանութիւնը իրենց եկեղեցւոյ առաքելութեան մէջ:

Եթէ այդ նախկին ուսանողներու առաջարկած մեթոտները մերժուին իրենց եկեղեցւոյ կողմէն, լաւագոյն տարբերակը բոլորին համար պիտի ըլլայ այն, որ այդ ուսանողները աղօթեն եւ հարցնեն Աստուծոյ՝ արդեօ՞ք իրենք պէտք է տեղափոխուին այլ եկեղեցի, թէ՞ ամբողջ սրտով հնազանդին իրենց առաջնորդի մշակոյթին եւ մեթոտներուն:

Եթէ անոնք տեղափոխուին, պէտք է ընեն ատիկա այնպէս, որ չվնասեն իրենց նախկին եկեղեցին: Սովորաբար լաւագոյն տարբերակը պիտի ըլլայ այն, որ անոնք տեղափոխուին այդ բնակավայրէն: Նման առաջնորդներուն Աստուած միշտ կրնայ տանիլ նոր վայրեր, ուր անոնք նորովի կը սկսին ամէն ինչ եւ չեն փորձեր հեռացնել մարդոց (որոնց հետ իրենք կը հաղորդակցին) այն եկեղեցիէն, ուր անոնք կը յաճախեն:

## ՀԱՒՏԱՐԻՄ ՈՐՂԻ

Այժմ խօսինք այն մասին, որ Պօղոսը կ'անուանէ Տիմոթէոսին «հաւատարիմ որդի»: Ինչպէս արդէն ըսուեցաւ, հաւատարիմ որդին կը ձգտի բազմապատկել իր հօր գործելակերպը: Շատ հաւանական է, որ դուք ունիք պարգեւներ, որոնք ձեր առաջնորդը չունի: Այդ պարագային, հարցը հետեւեալն է. արդեօ՞ք դուք կը բազմապատկէք ձեր պարգեւները անոր սրտի համեմատ: Արդեօ՞ք ձեր բազմապատկման ներքին շարժառիթը կը համընկնի անոր համոզմունքներուն եւ մշակոյթին հետ, թէ՞ դուք կը պայքարիք, որ հաստատէք ձեր գործելակերպը, որ հակարդիւնաւետ եւ հակառակ է այն տեսիլքին, որ անոր սրտին մէջ է:

Ինչպէ՞ս գործնականօրէն բազմապատկել ձեր հօր գործելակերպը:

Գոյութիւն ունի երկու միջոց: Առաջինը՝ ձգտեցէք օգտագործել ձեր պարզեւները, որպէսզի «կրկնօրինակէք» ձեր առաջնորդի ցանկալի արդիւնքը, եթէ ան ըլլար ձեր դիրքին մէջ եւ ունենար ձեր եզակի պարզեւները: Ասիկա չի նշանակեր, որ դուք պէտք է անտեսէք ձեր յատուկ առաջադրանքը՝ դառնալով ձեր առաջնորդի կենսապատճէնը: Ես նկատի ունիմ հետեւեալը.

Պատկերացուցէք, որ դուք երիտասարդական ծառայութեան հովիւ էք: Դուք չէք հասնիր ձեր համայնքի երիտասարդներուն, եթէ պատճէնէք ձեր հովիւի կիրակնօրեայ ծառայութիւնը: Այնուամենայնիւ, դուք իմաստութեամբ կը վարուիք, եթէ այնպէս կառուցէք ձեր ծառայութիւնը, որ հասնիք երիտասարդներուն՝ ունենալով այն տեսիլքը, որ կայ ձեր հօր սրտին մէջ: Ասիկա կրնայ տեղի ունենալ միայն, եթէ դուք հաղորդակցիք անոր հետ: Դուք պէտք է բաց կերպով քննարկէք անոր հետ ձեր մարտավարութիւնները եւ մեթոտները: Լսելով անոր պատասխանները, դուք պէտք է հաշուի առնէք, թէ որքանով այն, ինչ որ կայ անոր սրտին մէջ, կը համապատասխանէ ձեր ծրագիրներու չափանիշներուն:

Այս ամէնը արդիւնաւէտ կատարելու համար, ձեր միջեւ պէտք է բաց եւ անկեղծ հաղորդակցութիւն ըլլայ: Եթէ դուք կը զգաք, որ կը փորձէք ընել այնպիսի բան, ինչ որ «յոյսով էք՝ ան չի նկատեր կամ չիմանար», դուք արդէն իսկ կրնաք հասկնալ, որ կ'երթաք կործանարար ճանապարհով: Եթէ կասկածներ ունիք, պատմեցէք անոր այդ մասին. պարզ խօսեցէք, որպէսզի ան ճշօրէն հասկնայ, թէ ինչը կը մտահոգէ ձեզ: Օրինակ, դուք իմաստութեամբ կը վարուիք, եթէ խնդրէք անորմէ ներկայ ըլլալ ձեր ծառայութեան եւ գնահատել ձեզ: Եթէ անոր հաճելի չեն թուիր ձեր մեթոտները, բացատրեցէք, թէ ինչու այդպէս կը վարուիք: Եթէ ձեր փաստարկները, միեւնոյնն է, չեն համոզեր անոր, անմիջապէս փորձեցէք անոր ընդունելի ծրագիր առաջարկել:

Երկրորդ միջոցը, որուն միջոցով ասիկա հնարաւոր է ընել, դուք ձեզ «վերարտադրելն» է: Ենթադրենք, ձեր երիտասարդական ծառայութիւնը ամենամեծն է ձեր քաղաքին մէջ: Ատիկա հրաշալի է. Աստուած կ'օրհնէ ձեր մեթոտները, եւ Անոր պարզելը ձեր կեանքին մէջ կը գրաւէ մարդոց: Բայց արդեօ՞ք դուք կը գտնէք այլ մարդիկ՝ նման պարզեւներով, եւ կը փոխանցէք անոնց այն իմաստութիւնը եւ գործելակերպը, որ սորված էք: Արդեօ՞ք դուք կը բարձրացնէք քանի մը ապագայ հովիւներու երիտասարդական ծառայութեան համար: Այդ պարագային, եթէ ձեր «հայրը» յայտարարէ, որ եկեղեցին հաւաքոյթներու նոր վայր պիտի հիմնէ ձեր քաղաքի այլ մասի մը մէջ,

դուք արդէն կ'ունենաք մարդիկ, որոնք սորված են եւ պատրաստ են երթալու: Ես համոզուած եմ, որ պատճառներէն մէկը, թէ ինչու եկեղեցիները չեն կրնար հաւաքոյթներ սկսիլ իրենց քաղաքի այլ մասերուն մէջ կամ նոր եկեղեցիներ հիմնադրել այլ շրջաններուն մէջ, այն է, որ գլխաւոր հովիւի օգնականները չեն վերարտադրեր իրենց:

Դուք կրնաք ըլլալ լաւագոյն հնչունային չափագէտը, վիտէօ խմբագիրը, մանկական ծառայութեան հովիւը, երկրպագութեան առաջնորդը, կիթառահարը, քարոզիչը, կարգուկանոնի ծառայողը, կամ լաւագոյն կերպով կը կատարէք այլ աշխատանք՝ եկեղեցւոյ մէջ առկայ բազմաթիւ ծառայութիւններէն, բայց զուտ այդ փաստը չի համարուիր ճշմարիտ յաջողութիւն Աստուծոյ Թագաւորութեան մէջ: Ճշմարիտ յաջողութիւնը դուք ձեզ վերարտադրելու մէջ է: Հարցուցէք ձեզի. «Ես կ'աղօթե՞մ, որ գտնեմ այնպիսի մարդիկ, որոնք ունին այն պարզեւր, որ ես ունիմ»: Եւ հազիւ որ կը գտնէք այդպիսի մարդիկ, արդեօ՞ք դուք կը սորվեցնէք անոնց, կը մարզէք եւ կ'օգնէք զարգացնելու անոնց պարզեւները՝ միեւնոյն ժամանակ փոխանցելով այն, ինչ որ կայ ձեր հօր սրտին մէջ:

Ահա այն երկու միջոցները, որոնցմով դուք կրնաք հաւատարիմ ըլլալ, երբ կը ծառայէք ինչ որ մէկուն տեսիլքին: Մենք պէտք է յիշենք, որ Յիսուսը յատուկ կերպով կը շեշտէ. «Եւ եթէ օտար բանի մէջ հաւատարիմ չեղաք, ձերը ո՞վ պիտի տայ ձեզի» (Ղուկաս 16.12):

Կրկնենք Յիսուսին ըսածը՝ օգտագործելով «հաւատարիմ» բառի Անոր սահմանումը. «Եթէ դուք չէք բազմապատկած այն, ինչ որ կը պատկանի այլ մարդու մը, ձերը ո՞վ պիտի տայ ձեզի», կամ՝ «Եթէ դուք չէք բազմապատկած ձեր առաջնորդի գործելակերպը, մշակոյթը, ուժեղ կողմերը, տեսիլքը, միջոցները եւ առաւել եւս այն, ինչ որ անոր սրտին մէջ է, ձերը ո՞վ պիտի տայ ձեզի»: Եկէք օգտագործենք այլ ձեւակերպում. «Եթէ դուք չէք ներդրած ձեր ամբողջ ուժը, միտքը, կարողութիւնը եւ սիրտը՝ ձեր պատասխանատուութեան շրջանակը ընդլայնելու համար, ո՞վ պիտի տայ ձեզի ձեր սեփական ծառայութիւնը»: Այս ձեւակերպումները սթափեցնող են:

Բոլոր յաջողակ մարդիկ, որոնց ես կը հանդիպիմ իմ ճամբորդութիւններուս ընթացքին, նախկինին հաւատարիմ եղած են ուրիշինն մէջ: Ես յաճախ կը հարցնեմ յաջողակ մարդոց իրենց ճանապարհի սկիզբի մասին: Ես ոչ մէկ անգամ տեսած եմ ներկայիս ճշմարիտ յաջողութիւն ունեցող մարդ, որ անցեալին հաւատարիմ չէ եղած այն ամէնուն մէջ, ինչ որ պատկանած է իրեն հօրը կամ հայրերուն:

## ԻՄ ՄԵԾԱԳՈՅՆ ՊԱՅՔԱՐԸ

Երբ նոր ծառայող դարձած էի, իմ մեծագոյն պայքարը ներսս պահուած անապահովութեան զգացումին հետ էր, որուն պատճառով ես կը ցանկայի ճանչցուած եւ կարելոր ըլլալ: Կը ձգտէի ապացուցել մարդոց, եւ աւելի շատ՝ ես ինձի, որ ես իւրօրինակ գաղափարներ ունեցող առաջնորդ եմ: Հետագային ես իմացայ, որ շատ ապագայ առաջնորդներ կը պայքարին անապահովութեան զգացումի հետ, եւ եթէ անոնք չյաղթահարեն աստիկա իրենց սրտին մէջ, աստիկա կրնայ դառնալ անոնց անկման պատճառը:

Ես երիտասարդական ծառայութեան հովիւ էի խոշոր քաղաքի մը մէջ գտնուող եկեղեցւոյ, որն ամէնէն արագ աճող եկեղեցիներէն էր Ամերիկայի մէջ: Մեր երիտասարդական խումբը կազմած էր ծրագիր մը՝ մեր քաղաքի բարձր դասարաններու իւրաքանչիւր աշակերտի հասնելու համար: Այն եզակի եւ շատ լաւ ծրագիր էր: Մեր երիտասարդական խումբի ապագան բոլորովին պիտի կեդրոնանար այդ նախաձեռնութեան շուրջ: Ես եւ իմ օգնականները տրամադրած էինք ուրքը ամիս՝ մարտավարութիւն մշակելու համար: Ես ներկայացուցած էի այդ տեսիլքը մեր երիտասարդական ծառայութեան, եւ անոնք ընդունած էին այն:

Այնուամենայնիւ, երբ արդէն կը պատրաստուէինք սկսելու մեր ծրագիրը, ես իմացայ, որ այն հակառակ էր մեր հովիւի տեսիլքին: Ան խնդրեց ինձմէ չսկսիլ այն: Ես վիճաբանեցայ անոր հետ գրեթէ քսան վայրկեան, բայց ան բնաւ չընկրկեցաւ: Իմ փաստարկներն աւարտեցան, եւ ի վերջոյ ես գոցեցի բերանս, բայց խիստ բարկացած էի: Ութ ամսուան աշխատանքը զուր անցաւ. այդ հրաշալի ծրագիրը փշրանքի վերածուեցաւ: Սակայն ամենավատն այն էր, որ մեր ծառայութեան տեսիլքը ամբողջութեամբ կառուցուած էր այդ ծրագիրին շուրջ, եւ մենք պէտք է ամէն ինչ կրկին սկսէինք: Ինչպէ՞ս պիտի ըսէի այդ մասին մեր 24 առաջնորդներուն եւ երիտասարդական ծառայութեանը: Անոնք այնքա՛ն աշխատած էին ատոր վրայ:

Յուսալքուած՝ ես գացի Լիզային քով՝ մխիթարութիւն փնտռելով: Լսելով իմ հիասթափութիւնները՝ ան մեղմօրէն ընդդիմացաւ.

- Ճո՛ւն, կը թուի՝ Աստուած կը փորձէ ինչ որ բան սորվեցնել քեզի:

Այժմ ես բարկացած էի ե՛ւ իմ հովիւին, ե՛ւ իմ կնոջ վրայ:

Ես միայնակ ձգեցի Լիզան, քանի որ, իմ կարծիքով, ան չէր աջակցեր ինձի: Ես կը մտածէի, որ աստիկա գոյութիւն ունեցող լաւագոյն կազմուած ծրագիրն էր, որուն միջոցով կարելի էր հասնիլ անթիւ կորսուած բարձր դասարանցիներու: *Թէ՛ իմ հովիւը, թէ՛ իմ կինը*

*պէտք է, որ բոլորովին կոյր ըլլային.* գոնէ ես այդպէս կը մտածէի: Ես միայնակ, հիասթափուած եւ անմխիթար կը զգայի: Պահ մը նոյնիսկ մտածեցի, որ ասիկա մղձաւանջ է, եւ որ շուտով ես կ'արթնանամ, եւ ամէն ինչ կրկին լաւ պիտի ըլլայ: *«Մի՞թէ իրականութեան մէջ այսպիսի բան կրնայ տեղի ունենալ»:*

Այդ պահուն Աստուած շատ պարզ խօսեցաւ սրտիս հետ. «Որդի՛ս, երբ Ես դատեմ քեզ երիտասարդական ծառայութեան հովիւ ըլլալու քու ժամանակահատուածին համար, առաջին հերթին պիտի չնայիմ, թէ քանի երիտասարդ առաջնորդեցիր դէպի Ինծի: Ես առաջին հերթին պիտի դատեմ, թէ որքան *հաւատարիմ* էիր դուն այն մարդուն, որուն Ես կարգած էի քու վրայ»:

Այդ խօսքերը զգաստացուցին ինծի, բայց ոչ այնքան ուժգնօրէն, որքան Անոր յաջորդ խօսքերը: Ան վճռականօրէն ըսաւ իմ սրտին մէջ. «Դուն կրնաս դէպի Ինծի առաջնորդել իւրաքանչիւր բարձր դասարանցի ամբողջ քաղաքին մէջ, սակայն կորսնցնել ամբողջ երախտիքը եւ վարձատրութիւնը քու գործին համար՝ քու հովիւին *անհաւատարիմ* ըլլալու պատճառով»:

Յանկարծ սկսայ դողալ սուրբ երկիւղէն: Ես անմիջապէս ապաշխարեցի եւ ներում խնդրեցի, իսկ յետոյ հեռաձայնեցի իմ հովիւին եւ ըրի նոյնը: Երբ վար դրի հեռաձայնը եւ սկսայ մտածել տեղի ունեցածին մասին, յանկարծ Տէրը տեսիլք մը տուաւ: Ես տեսայ, որ մելամաղձոտ քայլերով կ'երթայի հանդիպումի մեր 24 աւագներուն հետ: Ես ծանրութիւն եւ տխրութիւն կը զգայի եւ տհաճութեամբ յայտարարեցի. «Տղանէ՛ր, դուք գիտէք, որ մենք ամիսներ է, ինչ որ կ'աշխատինք այս ծրագիրին վրայ. ասիկա մեր երիտասարդական ծառայութեան տեսիլքն է, բայց մեր աւագ հովիւը քիչ առաջ դադրեցուց այն: Այն ամէնը, ինչին համար մենք կ'աշխատէինք, աւարտած է»:

Ես տեսայ, որ քանի մը հոգի խորշանքով վար իջեցուցին գլուխները. միւսներու աչքերը եւ բերանները զարմանքէն բաց մնացին: Բոլորը ցնցուած եւ վրդովուած էին: Այդ տեսիլքին մէջ ես գիտէի, որ բոլորը բարկացած էին մեր աւագ հովիւին վրայ եւ մեր խումբը կը դիտարկէին որպէս անոր ստեղծարարութեան պակասի գոհ:

Աստուած հարցուց ինծի՝ արդեօ՞ք ես այդպէս կը վարուէի: Ես պատասխանեցի. «Ո՛չ մէկ պարագայի: Ո՛չ մէկ պարագայի: Ո՛չ»: Ես գիտէի, որ Ան կը ստուգէր իմ վերաբերմունքը եւ իմ սրտի դիրքը: Այն տեսիլքը, որ Ան տուաւ ինծի, ցոյց կու տար, որ ես տակաւին չունէի իմ հօր սիրտը: Անմիջապէս ապաշխարեցի աւելի խոր մակարդակի վրայ:

Կը յիշեմ, որ քանի մը օր յետոյ գացի հանդիպումի իմ աւագներու

հետ: Այժմ իմ սրտին մէջ կը վառէր սուրբ երկիւղը. իմ քայլերը կայտառ էին, աչքերուս մէջ փայլք կար, եւ ձայնս կը զրնգար: Ես ըսի մեծ ոգեշնչումով.

- Տղանե՛ր, ես հրաշալի լո՛ւր ունիմ: Մեր աւագ հովիւը փրկեց մեզ Իսմայէլ ծնելէն: Ան ըսաւ, որ այն, ինչին վրայ որ մենք կ'աշխատինք, այն ուղղութիւնը չէ, որուն միջոցով ան կը ցանկայ առաջնորդել եկեղեցին. այնպէս որ, մենք կը չեղարկենք այս ծրագիրը:

Բոլորն անմիջապէս ուրախութեամբ արծագանգեցին: Ոմանք ժպտացին, միւսները ուրախ նայեցան միմեանց, իսկ մնացածը գոչիւններով հաւանութիւն տուին: Իւրաքանչիւրը հասկցաւ, թէ ինչ կար իմ սրտին մէջ, քանի որ ես, ի վերջոյ, հասկցայ, թէ ինչ կար իմ հովիւին սրտին մէջ:

Մէկ տարի յետոյ ես փորձուեցայ մէկ այլ կարելոր ծրագրի մէջ, որուն վրայ մենք քանի մը ամիս աշխատած էինք: Այս անգամ իմ հովիւը տեղեակ էր աստոր մասին եւ համաձայնած էր մեր ընտրած ուղղութեան հետ: Այնուամենայնիւ, ան մտափոխուեցաւ, երբ մենք արդէն երեք ամիս կը կատարէինք այն: Կրկին, ատիկա ուղղութեան կտրուկ փոփոխութիւն էր, եւ ան ներողութիւն խնդրեց աստոր համար: Այդ իրավիճակին մէջ ես վարուեցայ բոլորովին այլ վերաբերմունքով, քան նախորդ անգամ: Ես չեղարկեցի այդ ծրագիրը՝ առանց ընդդիմանալու, վիճելու եւ անհամաձայնութիւն յայտնելու: Յստակ կը յիշեմ այն տարբերութիւնը, որ զգացի. ես գոհ էի այն պատճառով, որ կրցայ համաձայնիլ, այնինչ, իրականութեան մէջ, եթէ ընտրութիւնը իմս ըլլար, կը գերադասէի շարունակել այդ ծրագիրը:

Եւս մէկ անգամ ներկայացուցի իմ աւագներուն մեր ծրագրի չեղարկումը, կարծես ատիկա իմ գաղափարը ըլլար: Աստուած օրհնեց մեր երիտասարդական ծառայութիւնը. ատիկա եռապատկուեցաւ այն երեք տարուան մէջ, երբ ես երիտասարդական ծառայութեան հովիւի պաշտօնի մէջ էի:

Համոզուած եմ, որ ես չէի ըլլար հոն, ուր այսօր եմ, եթէ ձախողէի այդ փորձութիւնները: Կրնամ ըսել, թէ ինչ տեղի կ'ունենար, քանի որ Սուրբ Հոգին ցոյց տուած է ինձի: Ես, միեւնոյնն է, ստիպուած պիտի ըլլայի չեղարկել այդ ծրագիրը: Ես պիտի ընէի ատիկա այնպիսի վերաբերմունքով, որ պիտի տարածուէր իմ աւագներուն վրայ եւ պիտի թունաւորէր անոնց: Ի վերջոյ, ես պիտի հեռանայի իմ եկեղեցիէն, եւ իմ կեանքին մէջ գործող պարգեւին պատճառով ազդեցութիւն պիտի ունենայի մարդոց փոքրաթիւ խումբի մը վրայ: Բայց ոչ մէկ պարագայի պիտի ստանայի այն ծառայութիւնը, որ

ունիմ հիմա, ուր ես, որպէս քարոզիչ եւ հեղինակ, ազդեցութիւն ունիմ միլիոնաւոր մարդոց վրայ աշխարհի տարածքին: Ինչո՞ւ: Քանի որ ես հաւատարիմ չէի ըլլար այն ամէն ինչին մէջ, ինչ որ ուրիշինն էր, Աստուծմէ տրուած առաքելութիւնը չէր վստահուեր ինձի:

Այս բաները սորվիլը դիւրին չէր: Որպէս առաջնորդ՝ ես հակուած էի պայքարելու այն բանի համար, ինչ որ լաւագոյնը կը համարէի: Բայց հասկցայ, որ Աստուած աւելի մտահոգուած էր իմ բնաւորութեամբ, քան իմ արդիւնքներով: Ան կը ցանկար հաստատուն հիմք կառուցել, մինչեւ որ վստահէր Լիզային եւ ինձի մեր առաքելութիւնը:

Թանկագին ընկեր, դուք նոյնպէս առաջնորդ էք: Եթէ մենք վարուինք Աստուծոյ ճանապարհներով, Ան խոստացած է առաջնորդ ըլլալու հնարաւորութիւններ տալ Իր բոլոր զաւակներուն: Մենք գլուխ ենք, եւ ոչ թէ պոչ, եւ մենք միայն պիտի բարձրանանք, եւ բնաւ ցած պիտի չիջնենք (կարդացէ՛ք Երկրորդ Օրինաց 28.13): Կը խնդրեմ, մի՛ հարուածէք խթանին, ինչպէս ես կ'ընէի: Սորվեցէ՛ք ինձմէ, որպէսզի դուք նոյնպէս աւելի մեծ պատասխանատուութիւն ստանաք Աստուծոյ Թագաւորութեան մէջ:

## ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Որեւէ կազմակերպութիւն պէտք է միաբան ըլլայ, որպէսզի բազմապատկուծ ունենայ: Սուրբ Գիրքի ամենալուսաբանող հատուածներէն մէկը այս մասին գրուած է Ծննդոց գիրքին մէջ: Խումբ մը անաստուած մարդիկ որոշեցին ընել այնպիսի բան, ինչ որ գրեթէ անկարելի էր իրենց ժամանակուան մարդոց համար՝ կառուցել աշտարակ, որ երկինք կը հասնէր: Այնուամենայնիւ, լսեցէք, թէ ինչ կ'ըսէ Ամենակարող Աստուած.

«Եւ Տէրն ըսաւ. «Ահա մէկ ազգ է եւ մէկ լեզու՝ անոնց ամէնուն համար, եւ ահա սկսան շինել: Եւ հիմա անոնց համար դժուար չ'ըլլար, ինչ որ խորհեցան շինելու»» (Ծննդոց 11.6):

Յիշեցէք, թէ որուն կը պատկանին այս խօսքերը. անձամբ Աստուծոյ: Լսեցէ՛ք Անոր. «Անոնց համար դժուար չ'ըլլար, ինչ որ խորհեցան շինելու»: Ինչո՞ւ Աստուած նման բան ըսաւ: Քանի որ անոնք «մէկ» էին եւ «մէկ» լեզու ունէին: Անոնք միաբան էին: Անոնք համաձայնութիւն ունէին միմեանց հետ:

Եթէ այս խօսքերը դուրս ելան Աստուծոյ բերանէն՝ չփրկուած մարդոց վերաբերեալ, ապա ի՞նչ կ'ըսէ Ան Իր ուխտի ժողովուրդին: Նոյնիսկ աւելին, քանի որ, երբ Իր ժողովուրդը կը միաբանի, գրուած



է, որ «հոն Տէրը պատուիրեց օրհնութիւն» (Սաղմոս 133.3, NKJV): «Պատուիրել» բառը կը նշանակէ «հրամայել, ուղղորդել, նշանակել»: Այս խօսքը անկարելի է ուրիշ ձեւով մեկնել. միաբանութիւնը օրհնութիւն կը բերէ, ինչ որ կ'ընդգրկէ բազմապատկումը:

Ասիկա աւելի շատ կը վերաբերի Անոր զաւակներուն Նոր կտակարանին մէջ: Զարմանալի չէ, որ մենք շարունակ կը կարդանք նման պնդումներ.

«Ճշմարտապէս երջանիկ դարձուցէք ինծի՝ *ամբողջ սրտով համաձայնելով* մէկդ միւսին հետ, սիրելով մէկդ միւսին եւ գործելով միասին՝ *մէկ մտքով* եւ *նպատակով*» (Փիլիպպեցիս 2.2, NLT):

«Ուրախ եղէք, կատարեալ եղէք, մխիթարուցէ՛ք, *միաբան եղէք* ու խաղաղութիւն ըրէք, եւ սիրոյ եւ խաղաղութեան Աստուածը ձեզի հետ ըլլայ» (Բ. Կորնթացիս 3.11):

«Միայն թող որ ձեր վարքն արժանի ըլլայ Քրիստոսի Աւետարանին, որպէսզի թէ՛ գամ ու տեսնեմ ձեզ, թէ՛ բացակայ ըլլամ, լսեմ ձեր գործերու մասին, որ դուք հաստատ կանգնած էք *մէկ հոգիով, մէկ մտքով*՝ միասին պայքարելով Աւետարանի հաւատքին համար» (Փիլիպպեցիս 1.27, NKJV):

Մենք կը լսենք այս եկեղեցիներու *հօր* աղաչանքը: Պօղոսը կ'օգտագործէ «ամբողջ սրտով համաձայնիլ», «մէկ միտք», «մէկ հոգի» արտայայտութիւնները: Ան կը ցանկար, որ այդ եկեղեցիներն ըլլային այնպիսի վիճակի մէջ, որ ընդունէին Աստուծոյ պատուիրած օրհնութիւնը: Ան գիտէր, որ միայն այդ պարագային անոնք կ'ունենային ճշմարիտ բազմապատկում բոլոր բնագաւառներուն մէջ:

Ահա գերազանց օրինակ մը այն մասին, որ պատուիրած օրհնութիւնը պահուած է միաբան մարդոց համար. Յիսուսի հաւատարիմ հետեւորդները հնազանդեցան Վերնատունը մնալու Անոր պատուէրին (կարդացէ՛ք Գործք 1.4): Յիսուսի յարութենէն յետոյ 40 օրուան ընթացքին Ան յայտնուեցաւ ամենաքիչը 500 տղամարդու եւ կնոջ (կարդացէ՛ք Ա. Կորնթացիս 15.6), սակայն Անոր համբարձումէն 10 օր յետոյ միայն 120-ը մնացած էին Երուսաղէմի մէջ: Ո՞ւր էին միւսները: Ես կ'եզրակացնեմ, որ անոնցմէ աւելի քան 75 տոկոսը չհնազանդեցաւ Յիսուսի խօսքերուն: Թերեւս մենք չենք գիտեր, թէ ուր էին անոնք, բայց գիտենք, որ Անոր ցանկութիւնը առաջնահերթ չէր անոնց համար:

Վերնատունը գտնուող տղամարդիկ եւ կանայք միաւորուած էին Աստուծոյ Խօսքի իշխանութեան ներքոյ: Յաջորդ հարցումը հետեւեալն էր՝ ինչպէ՞ս անոնք կ'ընդունէին Պետրոսը՝ Յիսուսի լիազօրած առաջնորդը, այն եկեղեցւոյ *հայրը*, որուն Ան կարգած էր:

Աւետարաններուն մէջ Պետրոսը յաճախ կը վարուէր յանկարծական մղումով եւ չէր հասկնար Աստուծոյ կամքը: Երբ Պետրոսը համարձակ պնդեց, որ Յիսուսը Քրիստոսն էր՝ կենդանի Աստուծոյ Որդին, Յիսուսն օրհնուած անուանեց անոր: Բայց վայրկեաններ յետոյ Յիսուսը «դարձաւ, ըսաւ Պետրոսին. «Ե՛տիս գնա, սատանայ՛, դուն գայթակղութիւն ես Ինձի, որովհետեւ դուն միտք չես ըներ Աստուծոյ, այլ՝ մարդոց բաները»» (Մատթէոս 16.23):

Ուրիշ պարագայի մը Պետրոսը քալեց ջուրի վրայէն, մինչ միւս աշակերտները պարզապէս կը հետեւէին: Ան կրկին առաջատար դիրքի մէջ էր: Բայց քանի մը վայրկեան յետոյ սկսաւ սուզուիլ: Յիսուսն ափսոսանքով ըսաւ. «Թերահաւա՛տ, ինչո՞ւ երկմտեցար» (Մատթէոս 14.31):

Մէկ այլ պատմութեան մէջ Պետրոսը, Յովհաննէսը եւ Յակոբոսն ուղեկցեցան Յիսուսին դէպի այլակերպութեան լեռը: Հոն տեսան, որ Անոր երեսը կը փայլէր արեւի պէս, եւ նոյնիսկ Անոր հագուստը վերափոխուեցաւ: Մովսէսը եւ Եղիան յայտնուեցան եւ զրուցեցին Յիսուսին հետ: Ինչպիսի՞ պատիւ: Սակայն մինչեւ որ Յիսուսը եւ երեք աշակերտները իջան լեռէն, Պետրոսը անսպասելիօրէն առաջարկեց վրաններ պատրաստել, որոնցմէ երկուքը՝ Եղիային եւ Մովսէսին համար (կարդացէ՛ք Մատթէոս 17-րդ գլուխ): Կրկին, ան չէր հասկնար Աստուծոյ ծրագիրներն ու նպատակները:

Մտապահելով ասիկա՝ ուսումնասիրենք Պետրոսի առաջին որոշումները՝ որպէս նորաստեղծ եկեղեցւոյ առաջնորդ: Սակայն, մինչ սկսիլը, մենք պէտք է յիշենք եւս մէկ կարեւոր փաստ. ընդամէնը օրեր անցած էին այն դէպքէն, երբ Պետրոսը ուրացած էր, որ նոյնիսկ կը ձանջնար Յիսուսին: Շատերուն համար ատիկա կրնար Պետրոսի առաջնորդութեան չհետեւելու առիթ ըլլալ, յատկապէս եթէ անոնք համաձայն չըլլային անոր առաջարկած մեթոտներուն եւ որոշումներուն:

Ներկայացնենք այս իրադարձութեան նախապատմութիւնը: Անցած էր քանի մը օր Յիսուսի համբարձումէն, եւ Պետրոսը գտաւ մարգարէական խօսք մը Սաղմոսներու գիրքին մէջ, որ անմիջականօրէն կապուած էր Յուդայի կողմէն Յիսուսը մատնելու հետ: Պետրոսը կարդաց այն Վերնատունը հաւաքուած փոքրիկ համայնքին. «Որովհետեւ Սաղմոսներու գիրքին մէջ գրուած է... «Անոր պաշտօնն ուրիշը արնէ»»

(Գործք 1.20): Պետրոսը կրկին տեսաւ այն, ինչ որ միւսները չէին տեսներ, բայց արդեօ՞ք ան ճիշդ կը վարուէր իր տեսածին հետ:

Այն, ինչ կը կարդաք, կրնաք դիտարկել որպէս ենթադրութիւն, բայց յոյսով եմ՝ ես կը ներկայացնեմ բաւականաչափ հաստատումներ Սուրբ Գիրքէն, որպէսզի վաւերացնեմ իմ ըսելիքը: Համոզուած եմ, որ Պետրոսը կրկին չէր հասկնար Աստուծոյ իր որոշման մէջ, քանի որ ան առաջարկեց բոլոր տղամարդոց, որոնք իրենց հետ էին յատկապէս սկիզբէն, շրջանակ կազմել, որպէսզի «վիճակ նետէին» եւ տեսնէին, թէ Աստուած որու պիտի ընտրէր Յուդային փոխարէն:

Ոչ մէկ տեղ Նոր կտակարանին մէջ կը տեսնէք, որ Աստուած վիճակահանութեամբ առաքեալ կ'ընտրէ: Յիսուսը ցոյց տուաւ Իր աշակերտներուն Աստուծոյ ճանապարհը՝ անոնց օրինակ ձգելով: Ան աղօթեց ամբողջ գիշեր եւ լսեց Աստուծոյ, մինչեւ որ ընտրեց առաջին 12 առաքեալները (կարդացէ՛ք Ղուկաս 6.12,13): Լաւագոյն տարբերակը պիտի ըլլար, եթէ Պետրոսը փորձէր որոշել յաջորդ առաքեալը՝ Յիսուսի օրինակին աւելի նման ծելով:

Յիշեցէ՛ք՝ ընդամէնը քանի մը տարի յետոյ Անտիոքի մարգարէները եւ ուսուցիչները հետեւեցան Յիսուսի օրինակին: Անոնք ծոմ պահեցին եւ աղօթեցին, մինչեւ որ Բառնաբասն ու Սողոսն առանձնացուեցան առաքելական ծառայութեան համար (կարդացէ՛ք Գործք 13.1-4): Ասիկա եւս մէկ հաստատութիւն է այն մասին, որ Պետրոսի հապճեպ որոշումը սխալ էր:

Վերնատանը գտնուող 120 մարդիկ գտան երկու թեկնածու՝ Մատաթիան եւ Յուստոսը: Մատաթիան շահեցաւ վիճակը եւ համարուեցաւ առաքեալներու հետ (կարդացէ՛ք Գործք 1.23-26), սակայն դուք այլեւս չէք տեսներ Մատաթիայի անունը Նոր կտակարանին մէջ: Ինչո՞ւ: Քանի որ Սուրբ Գիրքը ցոյց կու տայ, որ Աստուած Յուդայի փոխարէն ընտրեց Պողոսին, ոչ թէ Մատաթիային: Ահա թէ ինչու Պողոսը կը գրէ.

«Յակոբոսը տեսաւ Անոր [Յիսուսին], իսկ յետոյ բոլոր առաքեալները տեսան: Վերջաւորութեան, կարծես սխալ ժամանակ ծնած ըլլայի, ես նոյնպէս տեսայ Անոր: Որովհետեւ ես փոքրագոյնն եմ բոլոր առաքեալներէն» (Ա. Կորնթացիս 15.7-9, NLT):

Պողոսն ըսաւ իր մասին, որ կարծես սխալ ժամանակ ծնած ըլլար. ուրիշ ծելով ըսելու համար, ան, հաւանաբար, չափազանց երիտասարդ էր՝ առաջին 12 առաքեալներու կարգին ըլլալու համար: Ուսումնասիրելով՝ ես

գտայ տարբեր կարծիքներ եւ տարեթիւեր Պօղոսի ծննդեան վերաբերեալ. տարբեր աղբիւրներու գնահատականները կը տատանին մինչեւ 14 տարիով: Մէկ բան հաստատ է. ոչ ոք գիտէ անոր ծննդեան տարեթիւը: Այնպէս որ, հետեւինք Նոր կտակարանի ժամանակագրութեան, որպէսզի պատկերացում կազմենք անոր տարիքին մասին:

Համաձայն պատմական տուեալներու մեծ մասին, Ստեփանոսի նահատակութիւնը տեղի ունեցաւ Յիսուսի յարութենէն չորս տարի յետոյ, ինչ որ կը նշանակէ, որ Յիսուսն ընտրած էր Իր աշակերտներու առաջին խումբին ատկէ եօթը տարի առաջ: Ստեփանոսի քարկոծման ժամանակ Սուրբ Գիրքը կ'անուանէ Սօղոսին (Պօղոսին) «երիտասարդ» (կարդացէ՛ք Գործք 7.57): Համաձայն «Յունարէն-անգլերէն բառարանի»՝ այն յունարէն բառը, որ թարգմանուած է «երիտասարդ» բառով, կը նշանակէ սեռական հասունացման շրջանը նոր անցած անձնաւորութիւն: Այնպէս որ, հանելով այդ տարիքէն եօթը տարի, կարելի է վստահաբար ենթադրել, որ Պօղոսը չափազանց երիտասարդ էր՝ առաջին առաքեալներու կարգին ըլլալու համար:

Ես բոլորովին կը հաւատամ, որ Պօղոսն Աստուծոյ ընտրութիւնն էր: Առաքելական պտուղը եւ իշխանութիւնն անոր կեանքին մէջ ակնյայտ էին՝ ի տարբերութիւն Մատաթիային: Իմ հիմնական ըսելիքը հետեւեալն է: Իմ համոզումով, Պետրոսը՝ որպէս առաջնորդ, յանկարծական մղումով կայացուց որոշում մը, որ չէր համապատասխաներ Աստուծոյ ծրագիրին: Եւ եթէ ան այսպէս վարուէր մեր ժամանակակից եկեղեցւոյ մէջ, մենք, ամենայն հաւանականութեամբ, կը բաժնուէինք երեք խումբի. առաջինը դէմ կ'ըլլար վիճակով առաքեալներ ընտրելուն, երկրորդը պիտի ըսէր, որ նոր առաքեալներու կարիք չկայ, իսկ երրորդը կողմ պիտի ըլլար վիճակով առաքեալներ ընտրելուն եւ պիտի մնար Պետրոսին հետ: Այնուամենայնիւ, ահա թէ ինչ գրուած է Սուրբ Գիրքին մէջ անմիջապէս այս դէպքէն յետոյ.

«Եւ երբ որ Պենտեկոստէի օրերը լրացան, ամէնքը միաբան մէկտեղ էին» (Գործք 2.1):

«Միաբան» բառը յունարէնին մէջ «հոմոթումատոն» բառն է: Այս բառի սահմանումն է. «մէկ՝ մտքով, միասնական համաձայնութիւն, միաբան, բոլորը միասին»: Այս սահմանումը չ'ենթադրեր բաժանութիւն՝ թէ՛ մտքով, թէ՛ գործերով: Անոնք միաբան էին նպատակով, մտքով, սրտով եւ հոգիով: Ի՞նչ տեղի ունեցաւ վերջաւորութեան: Սուրբ Գիրքը կը պնդէ, որ այդ օրը դարձի եկաւ 3.000 մարդ: Եթէ բաժնենք այս թիւը 120-ի, պիտի պարզուի, որ անոնք բազմապատկուեցան 25 անգամ:

Մտածեցէ՛ք այս մասին. եկեղեցին աճեցաւ 25 անգամ ընդամէնը մէկ ծառայութեան ընթացքին: Անոնց միաբանութեան շնորհիւ Աստուած պատուիրեց Իր օրհնութիւնը: Ասիկա հոգեւոր օրէնք է:

Համոզուած եմ, որ Վերնատանը կային հաւատացեալներ, որոնք կը վարուէին ուրիշ ձեւով, քան Պետրոսը: Անկասկած, աւելի լաւ պիտի ըլլար հետեւիլ Յիսուսի օրհնակին եւ, նախ, տեւական ժամանակ տրամադրել՝ Աստուած փնտռելու համար, մինչեւ նման որոշում կայացնելը:

Թէեւ գոյութիւն ունէր այդ ընտրութեան աւելի լաւ միջոց, վերնատունը գտնուող մարդիկ կը տեսնէին աւելի մեծ առաջնահերթութիւն. անոնք մնացին միաբան՝ ընդունելով իրենց առաջնորդի մարտավարութիւնը: Իւրաքանչիւրը քայլ ըրաւ, կարծես այդ գաղափարը իրենը ըլլար: Որքա՞ն յաճախ մենք կը պառակտուինք անհեթեթ եւ աննշան բաներու պատճառով, որոնց մենք համաձայն չենք: (Թոյլ տուէք ընդմիջարկել կարեւոր ճշմարտութեամբ մը. եթէ ձեր առաջնորդը կը կայացնէ որոշում, որ Սուրբ Գիրքը կը որակէ որպէս *մեղք*, ասիկա միակ դէպքն է, երբ ձեզի պատիրուած է չհամաձայնիլ: Այնուամենայնիւ, բազմաթիւ պառակտումներ տեղի կ'ունենան մեթոսներու պատճառով, ոչ թէ մեղքի):

## ՍՏՈՐՋՐԵԱՅ ՀՈՍԱՆՔՆԵՐ

Մենք պէտք է յիշենք, որ անհամաձայնութիւնը չի սահմանափակուիր բառերով եւ գործողութիւններով: Անհամաձայնութիւնն աւելի խոր է. այն կը գտնուի մտքին, սրտին եւ հոգիին մէջ: Կրկին կարդացէք վերոյիշեալ երեք աստուածաշնչեան հատուածները՝ որպէս յիշեցում: Մենք կրնանք միաբան ըլլալ արտաքուստ, բայց բաժնուած ըլլալ մեր շարժառիթներով եւ մտքերով:

Իմ մայրը կ'ապրի Ֆլորիտա նահանգի Վերօ լողափը: Անոր տունէն մօտաւորապէս 20 քիլոմէթր հեռու կայ վայր մը, որ կը կոչուի Սեպաստիանի խորշ: Այն յայտնի է տեղացիներուն իր ուժգին ստորջրեայ հոսանքներով: Ստորջրեայ հոսանքը երեւոյթ մըն է, որ տեսանելի չէ անզէն աչքով: Ովկիանոսի վերին շերտի ջուրը, կը թուի, կը հոսի մէկ ուղղութեամբ՝ ներդաշնակ մօտենալով լողափին: Սակայն ատոր ներքեւը գտնուող ջուրը արագօրէն կը հոսի հակառակ ուղղութեամբ: Այս հակառակ հոսանքը կը քաշէ իր գոհերը եւ կը տանի դէպի բաց ծով՝ երբեմն խլելով անոնց կեանքերը:

Արդեօ՞ք մեր եկեղեցիներուն, ձեռնարկութիւններուն, դպրոցներուն, կառավարութիւններուն, մարզական խումբերուն եւ ակումբներուն մէջ կան ստորջրեայ հոսանքներ, որոնք կործանարար ձեւով կը խոչընդոտեն

բազմապատկումը: Անշո՛ւշտ: Ո՞րն է պատճառը: Թերեւս այն, որ մենք կը փորձենք կառուցել Աստուծոյ Թագաւորութիւնը ժողովրդավարական մտածելակերպով, ոչ թէ Թագաւորութեան մտածելակերպով: Մենք իրական Թագաւորութեան քաղաքացիներ ենք եւ չենք կրնար անտեսել մեր Թագաւորի կողմէն լիազօրուած իշխանութիւնը: Անոր օրհնութիւնը կը յայտնուի, երբ մենք ի սրտէ կը հնազանդինք մեր առաջնորդներուն:


Մենք պէտք է հարցնենք մենք մեզի. *«Աւելի կարեւոր է, որ մենք ճի՞շդ ըլլանք, թէ՞ միաբան ըլլանք»*: Դուք կրնանք ըլլալ 100 տոկոսով ճիշդ եւ միաժամանակ՝ 100 տոկոսով սխալ: Եթէ ըլլար խմբաւորում մը, որ առաջարկէր չեղեալ յայտարարել Պետրոսի որոշումը վիճակ նետելու մասին եւ փոխարինել այն ծոմապահութեամբ ու աղօթքով (համաձայն այն օրինակին, որ տեսանք Սուրբ Գիրքին մէջ), այդ խմբաւորումը 100 տոկոսով ճիշդ պիտի ըլլար: Այնուամենայնիւ, անոնց անմիաբանութեան պատճառով Աստուծոյ օրհնութեան թափիլը պիտի դադրէր:

Եթէ կը յիշէք, առաջին *արտասովոր բազմապատկումը* Սուրբ Գիրքին մէջ տեղի ունեցաւ այն բանէն յետոյ, երբ հայրերը ծառայողական հրահանգ տուին: Ատորմէ յետոյ մենք կը կարդանք. *«Բոլորը եկեղեցիին մէջ հաւնեցան այս գաղափարը»* (Գործք 6.5, TPT): Ո՞րն էր ասոր արդիւնքը: *«Աշակերտներու թիւը մեծապէս բազմապատկուեցաւ Երուսաղէմի մէջ»* (Գործք 6.7, NKJV): Բոլորը եկեղեցւոյ մէջ ընդունեցին աստիկա, կարծես իրենց մարտավարութիւնն էր: Կրկին, համոզուած եմ, որ մարդիկ կրնային առարկել, բայց անոնք յայտնաբերած էին ճշմարտութիւն մը. *«Աւելի լաւ է օրհնուած ըլլալ, քան ճիշդ ըլլալ»*: Այնպէս որ, անոնք ընդունեցին այդ մեթօտը այնպէս, կարծես այն իրենց գաղափարն ըլլար:

Այժմ մենք պէտք է հարցնենք ամենաբարդ հարցումը. քանի՞նե՞ր մեզմէ պիտի կենան Յիսուսի ատենանին առջեւ՝ ցնցուած եւ զարմացած այն բանէն, ինչ որ Ան կը յայտնէ: Արդեօ՞ք Ան արցունքներով ցոյց կու տայ մեզի, թէ ինչպէս մեր հակառակութիւնը կանգնեցուց Անոր պատուիրած օրհնութիւնը: Արդեօ՞ք մենք պիտի տեսնենք մարդոց, որոնք պէտք է կրէին յաւիտենութեան ազդեցութիւնը, եւ պիտի լանք Անոր հետ՝ գիտակցելով բազմապատկման բաց ձգուած հնարաւորութիւնները: Քանի՞նե՞ր մեզմէ կ'երազեն վերադառնալ եւ ձգտիլ միաբանութեան, ոչ թէ ճիշդ ըլլալուն, բայց արդէն բաւականին ուշ պիտի ըլլայ:

## ՄՏՈՐԵՑԷՔ

1. Հայրը այն մարդն է, որ կ'առաջնորդէ, կը մատակարարէ եւ կը ներմուծէ որոշակի մշակոյթ ուսէ անհատի կամ կազմակերպութեան կեանքին մէջ: Հայրը կրնայ բազմաթիւ դիրքեր զբաղեցնել՝ տնօրէն, հովիւ, փոքր խումբի առաջնորդ, բաժնի վարիչ, ղեկավար, ուսուցիչ, մարզիչ (ահա ընդամենը քանի մը օրինակ): Որո՞նք են ձեր կեանքի հայրերը: Ի՞նչ կերպով անոնք հայրութիւն ըրած են ձեզի:
2. Հաւատարիմ որդին կամ դուստրը կը բազմապատկէ իր հօր գործելակերպը: Ինչո՞ւ կարելոր է նմանիլ ձեր առաջնորդներու գործելակերպին: Ի՞նչ կերպով ասիկա կը բացառէ տարածայնութիւնները տեսիլքի, մեթոտներու եւ մշակոյթի մէջ:
3. Այլ մարդու ունեցածը բազմապատկելու համար դուք պէտք է «վերարտադրէք» դուք ձեզ: Արդեօ՞ք կը գտնէք նման պարզեւներ ունեցող մարդիկ եւ կը փոխանցէք անոնց այն իմաստութիւնը եւ գործելակերպը, որոնք սորված էք: Արդեօ՞ք կը բարձրացնէք այլ մարդոց՝ կատարելու այն աշխատանքը, որ դուք կը կատարէք հիմա: Եթէ ոչ, ինչպէ՞ս կրնաք սկսիլ ասիկա:



*«Տէ՛ր, ես գիտէի, որ դուն խիստ մարդ ես. կը  
հնձես այն բերքը, որ չես ցանած, եւ կը հաւաքես  
այն բերքը, որ չես աճեցուցած: Ես վախցայ, որ  
պիտի կորսնցնէի քու դրամը, եւ պահեցի այն  
հողին մէջ»:*

– Մատթէոս 25.24,25, NLT



## ԲԱԶՄԱՊԱՏԿՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ Ա.

Այժմ աւելի մանրամասն պիտի ուսումնասիրենք Յիսուսի առակի ծոյլ ծառայի շարժառիթներն ու միտքերը: Ինչո՞ւ միւս երկու ծառաները բազմապատկեցին, իսկ ան միայն պահպանեց: Ինչո՞ւ միւս երկու ծառաները կոչուեցան «բարի եւ հաւատարիմ», իսկ ան՝ «չար եւ ծոյլ»:

Մինչեւ շարունակելը, խօսինք ճշմարտութեան մը մասին. *Երբ ինչ որ մէկը կը կանգնի Յիսուսի ներկայութեան մէջ, չի կրնար ստել*: Ինչո՞ւ կը յիշատակեմ ասիկա: Թոյլ տուէք բացատրել օրինակով մը: Դուք երբեք դիտա՞ծ էք ֆիլմեր լրտեսներու մասին, որոնց մէջ հարցաքննութեան տեսարանի մէջ լրտեսը կը ներարկեն «ճշմարտութեան շիճուկ»՝ անոր գաղտնիքները գիտնալու համար: Լրտեսը կամ կրկնակի գործակալը կը պատմէ այն, ինչ որ երդուած էր ոչ ոքի յայտնել. ամբողջ ճշմարտութիւնը կը բացայայտուի:

Թոյլ տուէք բերել իրական օրինակ: Մեր ամուսնութեան վաղ տարիներուն ես ոչ հասուն էի եւ անապահովութեան զգացում ունէի: Որոշ պարագաներուն ընդունելի կը համարէի իմ վարքը, մինչեւ որ Լիզան չընդդիմանար ինձի: Երբ մենք կը խօսէինք այդ մասին, ես վճռականօրէն կը պաշտպանէի իմ գործողութիւններն ու շարժառիթները եւ յաճախ համարձակ կը պնդէի, որ իմ խօսքերը քննարկման ենթակայ չեն: Աւելի ուշ, երբ կ'աղօթէի եւ կը յայտնուէի Աստուծոյ ներկայութեան մէջ, կը հասկնայի, որ Լիզան բոլորովին իրաւունքով էր: Ես խոնարհաբար կը վերադառնայի անոր քով եւ կ'ընդունէի իմ սխալը:

Իրականութեան մէջ, խաբէութիւնը, անազնութիւնը, խորամանկութիւնը, կեղծաւորութիւնը եւ այլ նման վարքագիծեր չեն կրնար մնալ Աստուծոյ արքայական ներկայութեան մէջ: Յիսուսը կը յայտարարէ.

«Կու գայ ժամանակը, երբ այն, ինչ որ ծածկուած է, կը յայտնուի, եւ ամէն գաղտնի բան կ'իմացուի բոլորին: Այն ամէնը, ինչ որ դուք ըսած էք խաւարի մէջ, կը լսուի լոյսին մէջ, եւ այն ամէնը, ինչ որ շշնջացած էք փակ դռներու ետեւը, կ'ազդարարուի կտուրներէն՝ ի լուր բոլորին» (Ղուկաս 12.2,3, NLT):

Յիսուսը յատկապէս նկատի ունէր դատաստանը, որուն ժամանակ անկարելի պիտի ըլլայ խաբէութեամբ մտածել ու խօսիլ, քանի որ այդտեղի մթնոլորտն ամբողջովին յագեցած պիտի ըլլայ ճշմարտութեամբ, եւ ոչ մէկ սուտ ու խաբուսիկ խօսք հնարաւոր պիտի ըլլայ ըսել: Այն փաստը, որ տնտեսութեան մասին մեր առակին մէջ կը ներկայացուի դատաստանը, կը նշանակէ, որ մենք կրնանք վստահ ըլլալ, որ ծոյլ ծառայի պատասխանը ճիշդ էր: Ան բացայայտեց ինքնիրեն, եւ յատկապէս իր խօսքերը մեղադրեցին իրեն:

Կայ երկու կարելի գործօն, որոնց պատճառով ան չունեցաւ *յաւիտենական* բազմապատկում.

Ան չէր ճանչնար իր տիրոջ բնաւորութիւնը:

Ան կը վախնար:

Այս երկու պատճառները բերուած են ճիշդ հերթականութեամբ: Երկրորդը յաճախ, բայց ոչ միշտ, կը բխի առաջինէն, քանի որ Աստուծոյ բնաւորութիւնը չճանչնալը դիւրաբար կը խթանէ վախը: Ասիկա յստակ կ'երեւի, երբ մենք շարունակենք բացայայտել այս երկու սխալմունքները:

## «ԻՆՉԻՆ ԿՐ ՀԱՒԱՏԱՄ ԵՍ»

Սկսինք բացայայտել առաջին սխալմունքը պատմութեամբ մը: Իմ ութ ժամեայ թռիչքը դէպի Հաուայեան կղզիներ նոր աւարտած էր: Ես տակաւին իմ ճանապարհորդական հագուստով էի եւ կը սպասէի մինչեւ որ պանդոկի սենեակս պատրաստէին: Նստեցայ լողաւազանին քով գտնուող հովանոցներէն մէկուն տակ՝ հանգստանալու: Հոն կը սպասէր նաեւ գործարար կին մը, որ եկած էր մասնակցելու այլ համաժողովի: Մենք զրոյցի բռնուեցանք, եւ երբ ան իմացաւ, որ ես քրիստոնէայ հեղինակ եմ, սկսաւ խօսիլ Աստուծոյ հետ իր փոխյարաբերութիւններուն մասին:

Պահանջուեցաւ ընդամենը մէկ-երկու վայրկեան՝ հասկնալու համար, որ ան չէր ճանչնար Աստուծոյ: Ան վստահութեամբ կ'ըսէր այնպիսի բաներ, որոնց կը *հաւատար*, թէւ ատոնք զրեթէ չէին համապատասխաներ Սուրբ Գիրքին մէջ յայտնուած ճշմարտութեան:

Մինչ ան կը խօսէր իր համոզմունքներու մասին, ես խնդրեցի Սուրբ Հոգիէն իմաստութիւն տալ ինծի, եւ Ան ցոյց տուաւ, թէ ինչ պէտք է ըսեմ:

Երբ այդ կինը աւարտեց, ես հարցուցի.

- Դուք կը տեսնէ՞ք լողաւազանի միւս կողմը նստած տղամարդուն:

- Այո՛, - պատասխանեց ան:

- Թոյլ տուէք պատմել ձեզի անոր մասին: - ըսի ես: - Ան ծայրայեղ աստիճանի բուսակեր է. կենդանական ծագում ունեցող ոչ մէկ բան կ'ուտէ, նոյնիսկ մեղր: Ան կ'երազէ դառնալ Միացեալ Նահանգներու Լողի ողիմպիական խումբին մէջ եւ կը մարզուի օրական երեք ժամ: Անոր նախասիրութիւններն են փետրագնդակը, թենիսը, թռիչքները փարաշիւթով եւ նկարչութիւնը: Ամուսնացած է ժաքուզիի քով կանգնած այն կնոջ հետ, եւ այդ կինը տասը տարիով երիտասարդ է անորմէ:

Այդ կնոջը հետաքրքրեց իմ ըսածը, բայց ան քիչ մը զարմացաւ, որ ես յանկարծ փոխեցի թեման: Ան կը բաժնեկցէր հետս Աստուծոյ մասին իր խոր մտքերով, եւ յանկարծ, ի պատասխան, ես սկսայ նկարագրել լողաւազանի միւս կողմը նստած տղամարդու մը: Անոր հետաքրքրութիւնը յաղթեց, եւ ան հարցուց.

- Ան նո՞յնպէս կը յաճախէ այն համաժողովին, որ դուք կը յաճախէք:

- Ո՛չ, տիկին:

- Այդ պարագային, ուրկէ՞ գիտէք անոր մասին, - հարցուց ան՝ աւելի հետաքրքրուած:

- Ես առաջին անգամ կը տեսնեմ անոր:

Այժմ, շփոթուած եւ մտահոգուած, ան հարցուց, թէ ուրկէ՞ այդքան բան գիտի անոր մասին: Ես չեմ կրնար վստահաբար ըսել, բայց, դատելով անոր հայեացքէն, ան կը մտածէր, որ ես կա՛մ Կեդրոնական հետախուզական վարչութեան աշխատակից էի, կա՛մ Հետախուզական դաշնային բիրոյի գործակալ, կա՛մ խուզարկու, կա՛մ պարզապէս կնամուլ: Անոր հետաքրքրասիրութիւնը հասած էր գագաթնակէտին:

Պահ մը դադարէն յետոյ ըսի.

- Ես կը *հաւատամ*, որ ան այդպիսին է:

Ան զարմանքէն լռեց:

- Դուք հագիւ նոր մեծ վստահութեամբ կը պատմէիք, թէ ինչպիսին է Աստուած՝ ձեր համոզումով, - շարունակեցի ես: - Բայց գրեթէ այն ամէնը, ինչ որ դուք ըսիք Անոր մասին, ճիշդ չէ: Ես գիտեմ ատիկա, քանի որ կը ճանչնամ Անոր:

Ատորմէ յետոյ ես շրջուեցայ, նայեցայ ուղիղ անոր աչքերուն եւ ըսի.

- Իմ խօսքերը այն մարդուն մասին, որուն ես առաջին անգամ կը տեսնեմ, ոչինչով կը տարբերին Աստուծոյ մասին ձեր պատմածէն: Լողաւազանին քով նստած մարդու մասին պատմելու ժամանակ ըսի ձեզի, թէ ինչին կը *հաւատայի*, եւ կը խօսէի շատ համոզիչ ձայնով: Բայց շատ հաւանական է, որ իմ ըսածին մեծ մասը ճիշդ չէ, քանի որ ես երբեք ժամանակ չեմ տրամադրած, որպէսզի ճանչնամ անոր:

Այդ կինը կը լսէր, բայց քիչ մը ցնցուած տեսք ունէր:

- Աստուած տուաւ մեզի Իր խօսքը՝ գրուած Աստուածաշունչի էջերուն մէջ, որ կը յայտնէ, թէ ով է Ինքը, - հանդարտ ըսի ես: - Ան նոյնպէս ուղարկեց Իր Հոգին, որպէսզի Հոգին յայտնէ մեզի Յիսուսին, իսկ Յիսուսը, Իր կարգին, կը յայտնէ մեզ Ամենակարող Աստուծոյն, քանի որ Ինքը մարմինով յայտնուած Աստուած է:

Ես կանգ առի, իսկ յետոյ մեղմօրէն հարցուցի.

- Կը կարծէք՝ հնարաւոր է, որ ձեր մտքին մէջ ստեղծած էք երեւակայական Աստուած, որ իրականութեան մէջ գոյութիւն չունի:

Ցաւօք, ան կա՛մ պատրաստ չէր ընդդիմանալու Աստուծոյ գիտելիքի բացակայութեան իր կեանքին մէջ, կա՛մ կը վախնար եւ իրականութեան մէջ չէր ցանկար հանդիպիլ Անոր: Մենք եւս քանի մը վայրկեան գրուեցինք եւ շուտով հրաժեշտ տուինք:

Թերեւս դուք կը ժպտիք՝ կարդալով այս պատմութիւնը, եւ կը մտածէք. «Ես Աստուծոյ կը ճանչնամ: Ես եկեղեցի կը յաճախեմ եւ կարդացած եմ Աստուածաշունչը»: Այնուամենայնիւ, քանի տակաւին մենք չենք մխիթարուած այդ մտքով, եկէք յիշենք փարիսեցիներու ցաւալի դրութիւնը: Անոնք ոչ մէկ հաւաքոյթ կը փախցնէին, մշտապէս կ'աղօթէին եւ ծոմ կը պահէին եւ կրնային գոց ըսել Աստուածաշունչի առաջին հինգ գիրքերը (անկասկած՝ ես չունիմ նման յառաջադիմութիւն): Այնուամենայնիւ, անոնք չճանչցան մարմինով յայտնուած Աստուծոյ՝ Յիսուսին, Որ կանգնած էր ուղիղ անոնց դիմաց:

## ԱՍՏՈՒԾՈՅ ԾԱՆՁՆԱԼ

Ո՞վ կը ստանայ Աստուծոյ ճանչնալու արտօնութիւնը: Հրաւերն ուղղուած է բոլորին, սակայն կան յստակ չափանիշներ: Իրական հաղորդակցութեան դուռը բաց է մեզի համար, երբ մեր էութեան խորքը որոշում կը կայացնենք բոլորովին յանձնել մեր կեանքերը Անոր: Ոչ թէ ձեւական որոշում, այլ այնպիսի, որ կ'ուղեկցուի համապատասխան գործողութիւններով: Յիսուսը կ'ըսէ. «Եթէ կորսնցնես քու կեանքը Ինձի համար, դուն պիտի փրկես այն» (Մատթէոս 16.25, NLT): Ի՞նչ Ան

նկատի ունի՝ խօսելով կեանքը փրկելու մասին: Պատասխանը պարզ է. ճշմարիտ կեանքը միայն *Անոր ճանջնալու* մէջ է:

Մենք չենք ճանջնար Աստուծոյ՝ եկեղեցի յաճախելով, քրիստոնէայ ընկերներով շրջապատուելով, երկրպագութեան երաժշտութիւն լսելով, «փրկութեան աղօթքը» կրկնելով կամ, նոյնիսկ, բարի գործեր ընելով: Աստուածաշունչին մէջ Յիսուսը յաճախ կը կոչուի Փեսայ, իսկ մենք՝ հարս: Երբ փեսան եւ հարսը կը միանան, երկուքը մէկ կը դառնան: Պօղոսը կը գրէ. «*Ասիկա օրինակ է* այն մասին, թէ ինչ կերպով Քրիստոսը եւ եկեղեցին մէկ են» (Եփեսացիս 5.32, NLT): Որպէսզի բացատրէ մեզի, թէ ինչ կը նշանակէ Իրեն ճանջնալ, Աստուած տուաւ *պատկերաւոր քարոզ*՝ ամենատարածուած երեւոյթը մարդկութեան մէջ: Ամէն օր մենք կրնանք տեսնել Անոր հետ յարաբերութեան պարզ օրինակը *ամուսնութեան՝ Սուրբ պսակի* միջոցով:

Երբ կինը, սպիտակ զգեստ հագած, կը քալէ եկեղեցւոյ շարքերով՝ հարսանեկան քայլերգի հնչիւններու ներքոյ, ան շատ ազդեցիկ հռչակում կ'ընէ. հրաժեշտ կու տայ այս աշխարհի բոլոր 3.930.000.000 տղամարդոց: Ան կը նուիրէ իր ամբողջ սիրտը, անձը, մարմինը եւ կեանքը այն տղամարդուն, որ կը սպասէ իրեն խորանին քով: Հետաքրքրական է, որ անոր որոշումը կը խորհրդանշէ ճշմարիտ «ապաշխարութիւնը»: Ան կը մերժէ այս աշխարհին մէջ ապրող ոեւէ տղամարդու հետ ամուսնական միութիւն կնքելու հնարաւորութիւնը: Ան եւ իր ընտրեալ ամուսինն ուխտի մէջ կը մտնեն. իր ամուսինը բոլորովին իրենն է, իսկ ինքը՝ իր ամուսինինը: Երկուքը կը սկսին մէկ ընթացք մը, որ հնարաւորութիւն կու տայ խոր փոխյարաբերութիւն կառուցել՝ ճանջնալ միմեանց աւելի, քան երբեւէ կը կարենան ճանջնալ ոեւէ այլ մարդու մը:

Այժմ կը ցանկամ հետեւեալը ըսել, ինչ որ կրնայ հակասական թուիլ, բայց լսեցէ՛ք ինձի մինչեւ վերջ: Անձամբ ես կը հաւատամ, որ մեծագոյն խոջընդոտներէն մէկը, որ մենք ստեղծած ենք Աստուծոյ *ճանջնալու* հարցին մէջ, «փրկութեան աղօթքն» է: Սովորաբար մենք կ'ընենք հետեւեալը. կը վաճառենք յարաբերութիւնը Աստուծոյ հետ այնպէս, կարծես որեւէ ապրանք կը գովազդենք սպառողին: Աւետարանչական ուղերձէն կամ անձնական զրոյցէն յետոյ կ'ըսենք. «Դուք կը ցանկա՞ք Աստուծոյ ճանջնալ: Դուք կը ցանկա՞ք հաղորդակցիլ ձեր Արարիչին հետ: Այդ պարագային, պարզապէս աղօթեցէ՛ք այս աղօթքը. «Յիսու՛ս, եկո՛ւր իմ կեանքին մէջ: Ես կ'ապաշխարեմ իմ մեղքերէն: Կ'ընդունիմ Քեզ՝ որպէս իմ Փրկիչ: Շնորհակալութիւն, որ կը ներես ինձի եւ Աստուծոյ զաւակ կը դարձնես»):

Յաջորդը՝ մենք կը յայտնենք ուրախալի լուրը վերստին ծնելու մասին բոլոր ներկաներուն, կը ցնծանք այն պատճառով, որ մեր նորադարձները յաւիտեան ապահով են Աստուծոյ մէջ, եւ կը հրաւիրենք անոնց մեր հաւաքոյթներուն: Այնուամենայնիւ, մենք ոչինչ ըսինք ապաշխարութեան մասին՝ այն մասին, որ անոնք պէտք է մէկընդմիջտ հրաժարին եսակեդրոն կենսառճէն եւ նուիրեն իրենց կեանքերը Աստուծոյ: Սակայն, լսեցէ՛ք Յիսուսին անդումը ամբողջութեամբ.

«Եթէ դուք ճշմարտապէս կը ցանկաք հետեւիլ Ինծի, պէտք է անմիջապէս բոլորովին մերժէք եւ ուրանաք ձեր կեանքը: Եւ դուք պէտք է պատրաստակամ ըլլաք վերցնելու Իմ խաչը եւ այն ընդունելու ինչպէս ձերը՝ շարունակ անձնատուր ըլլալով Իմ ճանապարհներուն: Որովհետեւ եթէ դուք ընտրէք անձնագոհութիւնը եւ կորսնցնէք ձեր կեանքերը՝ Իմ փառքի համար, դուք շարունակաբար կը բացայայտէք ճշմարիտ կեանքը: Բայց եթէ որոշէք պահել ձեր կեանքը ձեզի համար, դուք կը զրկուիք այն բանէն, ինչ որ կը փորձէք պահել» (Մատթէոս 16.24,25, TPT):

Մենք կրնանք ճշմարտապէս Աստուծոյ ճանչնալ, եթէ սկսինք ճշմարտապէս հաղորդակցիլ Անոր հետ, ինչ որ Յիսուսը նկատի ունէր այս խօսքերուն մէջ: Աստուծոյ ճանչնալը մէկանգամեայ իրադարձութիւն չէ, այլ հաստատուն որոշում՝ հնազանդելու Անոր ճանապարհներուն եւ հետեւելու ատոնց, ոչ թէ այն բանին, ինչ որ դուք լաւագոյնը կը համարէք ձեզի համար: Այս որոշումը կը կայանայ ամէն օր, ամէն պահ: Եթէ Անոր խօսքը պարզօրէն կը բացայայտէ որեւէ խնդիր ձեր կեանքին մէջ, դուք պէտք չէ վիճիք կամ խուսափիք հնազանդելէն: Յիսուսին հետեւիլը կը նշանակէ, որ ձեր սիրտի խորքը դուք որոշում կայացուցած էք մերժել այն ամէնը, ինչ որ կը վիրաւորէ Տիրոջը, եւ մշտապէս ծառայել Իրեն:

Յակոբոս առաքեալը կը գրէ. «Բայց պարզապէս մի՛ լսէք Աստուծոյ խօսքը: Դուք պէտք է կատարէք այն, ինչ որ խօսքը կ'ըսէ: Հակառակ պարագային դուք միայն կը խաբէք ձեզ» (Յակոբոս 1.22, NLT): Այն մարդը, որ կը լսէ Աստուծոյ խօսքը, սակայն չ'արձագանգեր ատոր մտքով, խօսքով եւ գործով, խաբած է իրեն: «Այլուն» թարգմանութիւնը կ'անուանէ ատիկա «ինքնախաբէութիւն», ինչ որ, կը կարծեն, ճշգրտօրէն կը նկարագրէ երրորդ տնտեսին, փարիսեցիներուն, Հաուայեան կղզիներու լողաւազանին քով գտնուող այդ կնոջը եւ

անթիւ մարդոց, որոնց ես հանդիպած եմ, որոնք բոլորովին համոզուած են, որ ունին փոխյարաբերութիւն Աստուծոյ հետ, քանի որ եկեղեցի կը յաճախեն եւ գոց գիտեն սուրբգրային հատուածներ, բայց, որպէս կանոն, կը խօսին ու կ'ապրին հակառակ Անոր Խօսքին: Անոնք ցաւալիօրէն մոլորուած են: Ատիկա կը կոչուի *ինքնախաբէութիւն*:

Թոյլ տուէք արագօրէն կարեւոր բան մը ըսել: Լիզան պիտի ըսէ ձեզի, որ ան շատ սխալներ գործած է մեր ամուսնութեան ընթացքին (եւ աւելի շատ սխալած եմ, բայց այս պարագային կը խօսիմ հարսին մասին), բայց ան երբեք չէ ձգտած միտումնաւոր կատարել իր ցանկութիւնները՝ մեր ամուսնական ուխտի հաշւոյն: Անոր վարքը կատարեալ չէ եղած, բայց անոր սիրտը երբեք չէ հեռացած հաւատարմութենէն:

Նմանապէս, Աստուծոյ հետ մեր յարաբերութեան մէջ, եթէ մենք պարբերաբար չենք հնազանդիր, Ան կը ներէ: Ասիկա կարելի է համեմատել այն բանին հետ, որ ամուսինը եւ կինը չեն խախտեր իրենց ուխտը, երբ անոնցմէ մէկը կը սխալի: Փոխյարաբերութիւնը մեր Արարիչին հետ կառուցուած է սրտէն բխող ճշմարիտ հաւատարմութեան վրայ. այն շուրթերու ծառայութիւն չէ՝ զուրկ համապատասխան գործերէն:

Յիսուսը խիստ ակնառու պնդում մը կ'ընէ. «Եթէ մէկը կը *կամենայ* Անոր կամքը ընել, *ան կ'իմանայ...*» (Յովհաննէս 7.17): Ամէն ինչ կը սկսի մեր էութեան խորքին մէջ, երբ մենք խորապէս կը ցանկանք գործել, ոչ թէ միայն լսել: Մենք կը *կատարենք* այն, ինչ որ Ան կ'ըսէ, եւ այդ ժամանակ *կ'իմանանք*: Մենք կ'իմանանք եւ կը *ճանչնանք* Աստուծոյ եւ Անոր Խօսքը: «Այուն» թարգմանութիւնը գեղեցիկ կերպով կը վերծանէ Յովհաննէս 7.17-ը. «Նախ՝ ջերմեռանդօրէն ձգտեցէք կատարել Աստուծոյ կամքը, ապա պիտի կարենաք գանազանել՝ արդեօ՞ք Իմ ուսմունքները Աստուծոյ սրտէն են»:

Տաղանդներու առակին մէջ երեք տնտեսներն ալ լսեցին ճիշդ նոյն հրահանգները իրենց տիրոջ մեկնելէն առաջ: Երկուքը գործի դրին անոր ցուցմունքները, իսկ մէկը ոչինչ ըրաւ: Զուգադիպութիւն չէ, որ յատկապէս երրորդ տնտեսը իրականութեան մէջ չէր ճանչնար իր տիրոջը, եւ այդ պատճառով ալ լրջօրէն չվարուեցաւ անոր հրահանգներուն: Այդ տնտեսը կը գտնուէր *ինքնախաբէութեան* մէջ:

## ՍՈՒՐԲ ԵՐԿԻՒՂ

Մեր քննարկումը մինչեւ այս պահը կարելի է նկարագրել աստուածաշնչեան արտայայտութեամբ մը՝ «Տիրոջ երկիւղը»: Քանի որ գոյութիւն ունին բազմաթիւ վախեր, յատկապէս՝ մեր օրերուն, մենք կը խուսափինք այս արտայայտութենէն: Այնուամենայնիւ, գոյութիւն ունի *երկու տեսակի վախ*, որոնք բոլորովին հակառակ են իրար: Անոնցմէ մէկը *վախի հոգին* է, իսկ միւսը *Տիրոջ երկիւղը*: Սուրբ Գիրքը տարբերակում կը մտցնէ այս երկուքին միջեւ: Մովսէսը ըսաւ Աստուծոյ ժողովուրդին անմիջապէս այն բանէն յետոյ, երբ անոնք հեռացան Աստուծոյ ներկայութենէն.

«Եւ Մովսէսը ըսաւ ժողովուրդին. «Մի՛ վախնաք, որովհետեւ Աստուած ձեզ փորձելու համար եկած է՝ այնպէս, որ *Անոր վախը* ձեր առջեւ ըլլայ, որ չմեղանչէք»: Եւ ժողովուրդը *հեռու կեցաւ*, եւ Մովսէսը *մօտեցաւ* այն թանձր խաւարին, ուր որ Աստուած էր» (Ելից 20.20,21):

Առաջին հայեացքէն կը թուի, թէ Մովսէսը ինքզինք կը հակասէ: Թոյլ տուէք շրջասութեան ենթարկել անոր պնդումը՝ պարզ դարձնելու համար. «Մի՛ վախնաք, որովհետեւ Աստուած եկած է՝ տեսնելու, թէ արդեօ՞ք Իր *վախը* ձեր մէջ է»: Անոր պնդումը հակասական չէ. Ան կը տարբերակէ «Աստուծմէ սարսափած ըլլալու» եւ «Տիրոջ երկիւղի» միջեւ, քանի որ այս երկուքին միջեւ տարբերութիւն կայ: Այն մարդը, որ սարսափած է Աստուծմէ, պահելու բան մը ունի: Յիշեցէ՛ք՝ Ադամը պահուրտեցաւ Տիրոջ ներկայութենէն, երբ մեղանչեց Անոր դէմ (կարդացէ՛ք Ծննդոց 3.8): Իսկ Աստուծոյ երկիւղն ունեցող մարդը պահելու բան մը չունի. ան աւելի շատ սարսափած է Աստուծմէ հեռու ըլլալէն:

Այնպէս որ, թոյլ տուէք յատկապէս սկիզբէն ընել հետեւեալ պնդումը. «Տիրոջ երկիւղը չի նշանակեր սարսափիլ Աստուծմէ»: Ինչպէ՞ս կրնաք մտերմօրէն հաղորդակցիլ անոր հետ, որմէ կը վախնաք: Ինչպէս արդէն նշեցի, ճշմարիտ սուրբ երկիւղը կը նշանակէ զարհուրանք՝ Աստուծմէ հեռու ըլլալէն: Դուք չէք ցանկար ըլլալ հեռու Անոր ներկայութենէն, հոգատարութենէն եւ սէրէն: Դուք անսասան էք՝ անկախ այն բանէն, թէ ինչպիսին են հանգամանքները, կամ՝ որքան դժգոյն կը թուի ամէն ինչ: Դուք գիտէք, որ չկայ աւելի լաւ վայր, քան Անոր մօտ ըլլալը: Այս դիրքորոշումը ունեցող մարդը հնազանդ է Անոր:

Աստուծմէ երկիւղ ունենալը կը նշանակէ ունենալ պատկառանք, ակնածանք, պատիւ եւ յարգանք Անոր հանդէպ աւելի, քան ոեւէ



այլ անձի կամ երեւոյթի: Այն կը նշանակէ Անոր տալ ամենաբարձր գնահատանքը եւ համարել Անոր սրտի ցանկութիւնները աւելի թանկ եւ արժէքաւոր, քան մերը: Մենք կը սիրենք այն, ինչ որ Ան կը սիրէ, եւ մենք կ'ատենք այն, ինչ որ Ան կ'ատէ: Այն, ինչ որ կարելի է Անոր համար, կարելի կը դառնայ մեզի համար. այն, ինչ որ այնքան ալ կարելի չէ Անոր համար, այնքան ալ կարելի չէ մեզի համար:

Ունենալով այս դիրքորոշումը, մենք կը յայտնուինք այն մարդոց կարգին, որոնք հրաւիրուած են մօտիկ ըլլալու Անոր: Մենք կը տեսնենք, որ Իսրայէլի զաւակներու սէրը Աստուծոյ հանդէպ պայմանական էր: Երբ հանգամանքները բարենպաստ էին, անոնք կ'երկրպագէին, կը հնազանդէին եւ կը սիրէին Աստուծոյ: Անբարենպաստ հանգամանքներու պարագային անոնք կը տրտնջային: Անվերապահօրէն չէին վստահեր Անոր, այլ հակուած էին ինքնապահպանման: Ձգտելով փրկել իրենց կեանքերը՝ անոնք վարուեցան հակառակ այն պնդումին, որ Յիսուսն ըրաւ Աւետարանին մէջ. անոնք ձգեցին Աստուծոյ հետ ճշմարտապէս հաղորդակցելու փառաւոր արտօնութիւնը: Մովսէսը ունէր երկիւղ Աստուծմէ, իսկ անոնք՝ ոչ:

Անոնց շարժառիթները համապատասխանաբար բացայայտուեցան. ժողովուրդը *հեռու կեցաւ*, իսկ Մովսէսը *մօտեցաւ* Աստուծոյ ներկայութեան: Անոնք կ'ապրէին՝ կուրօրէն չտեսնելով լաւագոյնը: Ի հակադրութիւն՝ Մովսէսը յստակ կը տեսնէր: Մովսէսը կը ճանչնար Աստուծոյ՝ Անոր Խօսքը, ճանապարհները եւ իմաստութիւնը: Իսկ անոնք միայն գիտէին Աստուծոյ այնքանով, թէ ինչպէս Ան կը պատասխանէր իրենց աղօթքներուն:

Մենք երկիւղ ունինք Տիրոջմէն, երբ անմիջապէս կը հնազանդինք Անոր, նոյնիսկ եթէ ատիկա անիմաստ կը թուի, ակնյայտօրէն օգտակար չէ մեզի կամ, թերեւս, կրնայ վնաս հասցնել մեր բարեկեցութեանը: Մենք կը ճանչնանք Անոր բնաւորութիւնը եւ այդ պատճառով ալ վստահ ենք: Նոյնիսկ եթէ ինչ որ բան մը կործանարար կը թուի, մենք ոչ մէկ պարագային կ'երթանք կործանման, եթէ հնազանդինք Աստուծոյ:

Վերջինը՝ Տիրոջ երկիւղի մէջ վարուիլը կը դրսեւորուի Անոր մինչեւ վերջ հնազանդելով: Աբրահամը ճիշդ այսպէս վարուեցաւ, երբ Աստուած պատուիրեց անոր ձգել այն, ինչ որ ամենակարելորն էր անոր համար, ինչին ան սպասած էր 25 տարի: Ան պատուիրեց Աբրահամին զոհաբերել անոր, որուն կը սիրէր աւելի, քան ռեւէ մարդու կամ որեւէ բան. Ան պատուիրեց զոհաբերել իր որդի Իսահակին: Աբրահամը դուրս ելաւ առտու կանուխ եւ երեք օրուան ճանապարհ

անցաւ, որ կ'ատարէր Աստուծոյ խնդրանքը: Աստուած չներկայացուց անոր որեւէ պատճառաբանութիւն, եւ կը թուէր՝ այդ գոհը կը կործանէր այն ամէնը, ինչին համար Աբրահամը կ'ապրէր: Այն կործանարար կը թուէր: Բայց անվերապահօրէն վստահեցաւ Աստուծոյ *բնաւորութեանը* (ինչ որ ուղղակիօրէն կը հակադրուի ծոյլ տնտեսի վարքին):

Հագիւ որ Աբրահամը դանակը բարձրացուց՝ Իսահակին սպաննելու համար, Տիրոջ հրեշտակը կեցուց անոր եւ ըսաւ. «Ոչ մէկ ձեռով անոր վնասէ, որովհետեւ հիմա Ես գիտեմ, որ դուն *ճշմարտապէս կը վախճնաս* Աստուծոյ: Դուն չխնայեցիր Ինծմէ նոյնիսկ քու որդիին՝ քու միակ որդիին» (Ծննդոց 22.12, NLT): Նման սէրը, վստահութիւնը եւ հաւատքը այն մարդու սրտին մէջ են, որ ճշմարտապէս երկիւղ ունի Աստուծոյ:

Գրուած է. «Տիրոջ երկիւղը գիտելիքի սկիզբն է» (Առակաց 1.7, NKJV): Ո՞ր գիտելիքի: Մենք կը գտնենք պատասխանը քանի մը խօսք յետոյ, բայց կարդանք նաեւ այդ պատասխանի նախապայմանի՝ Անոր խօսքը ամէնէն վեր դասելու մասին, ինչ որ, ըստ էութեան, Աբրահամն ըրաւ.

«Որդի՛ս, եթէ դուն ընդունիս Իմ խօսքերը եւ գանձի պէս պահես Իմ պատուէրները քու ներսը, որպէսզի ականջ դնես իմաստութեանը եւ ուղղես քու սիրտը հասկացողութեանը, այո՛, եթէ դուն աղաղակես՝ զանազանութիւն խնդրելով, եւ բարձրացնես քու ձայնը՝ հասկացողութիւն խնդրելով, եթէ փնտռես անոր արծաթի պէս, եւ փնտռես անոր պահուած գանձերու պէս, այդ ժամանակ դուն պիտի հասկնաս Տիրոջ երկիւղը եւ *կը գտնես գիտելիքն Աստուծոյ մասին*» (Առակաց 2.1-5, NKJV):

Պատասխանը շատ պարզ է. Տիրոջ երկիւղը՝ *Աստուծոյ մասին գիտելիքի սկիզբն է*: Այսօր քիչ մը ուրիշ ձեռով պիտի արտայայտէինք այս միտքը: Մենք կրնայինք ըսել. «Դուն կը հասկնաս Տիրոջ երկիւղը եւ կը սկսիս մտերմօրէն Աստուծոյ ճանչնալ»: Այժմ մենք կը հասկնանք ծոյլ ծառայի սխալմունքի արմատը: Ան չունէր սուրբ երկիւղ, ինչ որ ակնյայտ էր անոր անգործութենէն եւ անոր վերջին պատասխանէն: Այդ ծառան բռնապետ կը համարէր իր տիրոջը՝ նման Իսրայէլին, որ երբեմն ճիշդ այդպէս կը մտածէր Աստուծոյ մասին: Ան բոլորովին կոյր էր իր առաջնորդի բնաւորութեան հանդէպ:

Սուրբ երկիւղը՝ Աստուծոյ ճանչնալու սկզբնակէտն է: Սաղմոսերգուն կը հաստատէ ասիկա՝ յայտարարելով. «Տէրն անոնց ընկերն է, որոնք կը վախճան Իրմէ» (Սաղմոս 25.14, NLT): Ընկերներն

այն մարդիկն են, որոնց մենք *մտերմօրէն* կը ճանչնանք: Յիսուսը պնդում կ'ընէ. «Դուք ցոյց կու տաք, որ Իմ *մտերիմ* ընկերներն էք, երբ կը հնազանդիք այն ամէնուն, ինչ որ Ես կը պատուիրեմ ձեզի» (Յովհաննէս 15.14, TPT):

Մեզմէ շատերը յաճախ կ'ըսեն, որ «կը սիրեն» Յիսուսին նոյն կերպով, ինչպէս մենք կ'ըսենք, որ կը սիրենք ռեւէ հանրայայտ դերասանի, մարզիկի կամ ռեւէ յայտնի անձնաւորութեան: 2020 թուականի սկիզբը, երբ հանրայայտ ամերիկացի պասքեթպոլիստ Քոպի Պրայընթը եւ անոր դուստր Ճիաննան զոհուեցան օդանաւի ողբերգական արկածի պատճառով, ամբողջ Ամերիկան կը սգար, եւ շատերը կու լային: Մարդիկ անթիւ փուչիկներ, բացիկներ եւ ծաղիկներ կը բերէին Լոս Անձեշլըսի «Սթէյվիս Սենթըրի» քով, ուր ան պասքեթպոլ կը խաղար: Ես նոյնպէս կը սգայի այդ ողբերգութեան պատճառով եւ շատ կը մտածէի այդ մասին:

Այնուամենայնիւ, մեզմէ շատերը, որոնք կը սգային, չէին ճանչնար Քոպիին այնպէս, ինչպէս անոր կիներ, ընտանիքը եւ մտերիմ ընկերները: Եթէ ան տեսնէր մեզ փողոցի մէջ, չէր իմանար, թէ ով ենք: Ես երբեք չէի հաղորդակցած անոր հետ, սակայն կը սգայի անոր մահը, կարծես կը ճանչնայի անոր: Ինչպէս որ Քոպին չէր ճանչնար ինծի իր կենդանութեան ժամանակ, այնպէս ալ պիտի ըլլան բազմաթիւ տղամարդիկ եւ կանայք, որոնք կը պնդեն, թէ կը ճանչնան Յիսուսին, քանի որ իրենք եկեղեցի յաճախած են, գրած են Անոր մասին ընկերական ցանցերու մէջ, լսած են երգեր Անոր մասին, ինչ որ բաներ ըրած են Անոր անունով եւ նոյնիսկ դաւանած են, որ Ան իրենց Տէրն է: Բայց Յիսուսի պատասխանը պիտի ըլլայ. «Ես երբեք չեմ ճանչնար ձեզի»: Ահա թէ ինչու.

«Բոլորը չէ, որ եթէ կանչեն «Տէ՛ր, Տէ՛ր» Ինծի, կը մտնեն Երկինքի Թագաւորութիւն: Կը մտնեն միայն անոնք, որոնք իրականութեան մէջ կը կատարեն Իմ երկնային Հօր կամքը: Դատաստանի օրը շատերը պիտի ըսեն Ինծի. «Տէ՛ր, Տէ՛ր: Մենք մարգարէացանք Քու անունով եւ դեւեր հանեցինք Քու անունով եւ շատ հրաշքներ գործեցինք Քու անունով»: Բայց Ես կը պատասխանեմ. «Ես երբեք չեմ ճանչցած ձեզի: Հեռացէ՛ք Ինծմէ, դուք, որ զանց կ'ընէք Աստուծոյ օրէնքները»» (Մատթէոս 7.21-23, NLT):

Մենք ոչ մէկ պարագայի կը ցանկանք, որ Տէրը նման բան ըսէ մեզի: Եթէ ուշադրութեամբ ուսումնասիրէք այս սուրբգրային հատուածը, այս մարդիկ վստահ էին, որ յարաբերութիւն ունէին Յիսուսին հետ, եւ

նոյնիսկ զգացմունքօրէն ոգեւորուած էին այդ պատճառով: Քոպին պիտի ըսէր ինծի. «Ո՞վ էք դուք: Ուրկէ՞ք էք: Ի՞նչ է ձեր անունը»: Այս կերպով Յիսուսը պիտի ըսէ շատերուն, որոնք կը պնդեն, թէ կը ճանչնան Անոր. «Ես չեմ ճանչնար ձեզի եւ չեմ գիտեր, թէ ուրկէ էք դուք» (Ղուկաս 13.25, NLT):

## ԺԱՄԱՆԱԿ ԱՆՑՈՒՑԷՔ ԱՆՈՐ ՀԵՏ

Տիրոջ երկիւղը՝ Անոր մտերմօրէն ճանչնալու սկզբնակէտն է, բայց ինչո՞ւ հաստատուիլ սկզբնակէտին: Աւելի՛ խորասուզուեցէք ձեր յարաբերութիւններու մէջ, քանի որ Ան կը կանչէ ձեզ աւելի մօտենալու Իրեն: Մեզի տրուած է հետեւեալ պատուէրը. «Մօտեցէ՛ք Աստուծոյ, եւ Ան կը մօտենայ ձեզի» (Յակոբոս 4.8): Չարմանալին այն է, որ մենք կ'որոշենք մեր մտերմութեան աստիճանը Անոր հետ:

Ես կը գարմանամ, որ բազմաթիւ դաւանող հաւատացեալներ գրեթէ ոչինչով կը տարբերին այն կնոջմէն, որուն հանդիպեցայ Հաուայեան կղզիներու մէջ: Անոնք կը ստանան իրենց «գիտելիքն Աստուծոյ մասին» ընկերական ցանցերէն, երկրպագութեան երգերէն, պլոկներէն, ընկերներու հետ զրոյցներէն եւ շաբաթը մէկ անգամ՝ իրենց հովիւէն, երբ ան կը խօսի Անոր մասին: Բայց անոնք ժամանակ չեն անցըներ Աստուծոյ հետ:

Ամենաթարմ վիճակագրութիւնները ցոյց կու տան, որ 15-25 տարեկանին մարդիկ կ'անցընեն շաբաթական 53.7 ժամ էքրաններու առջեւ՝ խելախօսներու, թապլէթներու, համակարգիչներու եւ հեռատեսիլներու: Հետաքրքրական է, թէ որքա՞ն ժամանակ կ'անցընեն Աստուծոյ Խօսքին հետ: Եւ այս հարցը կը վերաբերի ոչ միայն երիտասարդներուն:

Ես արդէն 40 տարիէն աւելի է, որ կը կարդամ իմ Աստուածաշունչը, եւ ատիկա տակաւին իմ ամենասիրելի զբաղմունքներէն է: Ընթերցանութիւնը սկսելէ առաջ, ես միշտ կը խնդրեմ Սուրբ Հոգիէն, որ Յիսուսին նորովի յայտնէ ինծի: Տարիներ շարունակ ես կ'արթննամ վաղ առաւօտեան եւ ժամանակ կը տրամադրեմ, որպէսզի քալեմ մեր տան նկուղին մէջ կամ դուրսը՝ մեկուսի վայրին մէջ, երբեմն ալ հիւրանոցային սենեակը, եւ պարզապէս կարդամ, աղօթեմ ու լսեմ: Ես չեմ ցանկար ըլլալ այն մարդոցմէ մէկը, որ քարոզած է Աւետարանը աշխարհի տարածքին՝ ապաւինելով միայն իր պարգեւին, եւ այդպէս ալ չէ ճանչցած Պարգեւողին:

Աստուած կը ցանկայ մտերմօրէն հաղորդակցիլ ձեզի հետ: Անոր կատարեալ սէրը կը հեռացնէ վախը: Չափազանց յաճախ մենք կը

յայտնաբերենք, որ վարուած ենք այն տնտեսին պէս, որ կոյր էր իր տիրոջ բարութեան հանդէպ: Ահա թէ ինչու կը խրախուսեն աղօթել, որ Աստուած լեցնէ ձեզ Իր սուրբ երկիւղով: Աղօթեցէ՛ք այս ամէնուն համար, որակեալ ժամանակ անցուցէք Անոր հետ եւ բացայայտեցէ՛ք Անոր ճշմարիտ ինքնութիւնը՝ Սէրը:


Աստուած գտաւ մեզի, սիրեց մեզի եւ մահացաւ մեզի համար աւելի վաղ, քան մենք ճանչցանք Անոր: Ան էր, որ նախաձեռնեց այս զարմանալի հաղորդակցութիւնը: Ան ձեր կողմէն է: Ան կը փափաքի մտերմօրէն ճանչնալ ձեզի: Այնուամենայնիւ, Ան այնքան խոր կը սիրէ մեզի, որ չի հարկադրեր ու չի ստիպեր Իրեն հետ հաղորդակցիլ:

Այնպէս որ, որոշում կայացուցէք հիմա՛: Ընտրեցէք կեանքը: Որոշում կայացուցէք մտերմօրէն ճանչնալ Անոր...

## ԱՏՈՐԵՑԷՔ

1. Աստուծոյ բնաւորութիւնը չիմանալը մշտապէս վախի պատճառ կը դառնայ: Արդեօ՞ք ոչ ճշգրիտ պատկերացումն Աստուծոյ բնաւորութեան մասին ազդած է այն բանին վրայ, թէ ինչպէս դուք տնօրինած էք ձեր պարգեւները եւ կոչումը, եւ ի՞նչ կերպով:
2. Իրական յարաբերութիւնն Աստուծոյ հետ հնարաւոր կը դառնայ, երբ բոլորովին կը յանձնէք ձեր կեանքը Անոր եւ կ'ապրիք՝ հնազանդելով Անոր Խօսքին: Ձեր կեանքին մէջ կա՞յ որեւէ մտածելակերպ կամ վարքագիծ, որ կը խոչընդոտէ Աստուծոյ հետ ձեր յարաբերութեանը:
3. Կայ մեծ տարբերութիւն *Աստուծմէ վախնալու* եւ *Աստուծոյ երկիւղն ունենալու* միջեւ: Ո՞րն է այդ տարբերութիւնը: Ինչո՞ւ Աստուծոյ երկիւղն ունենալը որոշիչ գործօն է՝ Աստուծոյ մտերմօրէն ճանչնալու համար:





*«Տէ՛ր, ես գիտեմ, որ Ղուև ունիս բարձր  
չափանիշներ եւ կ'ատես անփոյթ գործելակերպը,  
որ Ղուև կը պահանջես լաւագոյնը ու զիջումներ  
չես ըներ սխալի պարագային: Եւ ես վախցայ»:*

– Մատթէոս 25.24,25, MSG



## ԲԱԶՄԱՊԱՏԿՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ Բ.

Այժմ մենք պատրաստ ենք ուսումնասիրելու ծոյլ տնտեսի երկրորդ պնդումը. «Ես վախցայ»: Վախը կաթուածահար քրած էր անոր: Ինձի հաճելի կը թուի երրորդ ծառայի խօսքը «Ուղերձ» թարգմանութենէն. «Ես գիտեմ, որ Դուն ունիս բարձր չափանիշներ... Դուն կը պահանջես լաւագոյնը եւ զիջումներ չես ըներ սխալի պարագային»:

Ասիկա պատմութիւն մը կը յիշեցնէ ինձի: Ես պասքեթպոլ խաղցած եմ երկու տարբեր մարզիչներու խումբերու մէջ: Երկու խումբերուն մէջ ալ յարձակող պաշտպան էի, քանի որ գնդակը հինգ մեթրէն, այսինքն՝ երեք միաւորանոց նետումներու գօտիէն զամբիւղին մէջ նետելը այդ մարզանքի այն քանի մը բաներէն էր, որոնց լաւ կը տիրապետէի:

Իմ առաջին մարզիչը կը ցանկար ստանալ լաւագոյն արդիւնքը մեզմէ եւ կ'օգտագործէր խրախուսանք եւ կառուցողական շտկում՝ ատոր հասնելու համար: Ես գիտէի, որ ան ոչ թէ իմ դէմն էր, այլ՝ իմ կողմը: Ես վստահութեամբ նետումներ կը կատարէի դաշտի տարբեր հատուածներէն: Անոր հաւատքը իմ հանդէպ կը բորբոքէր իմ վստահութիւնը:

Իմ յաջորդ մարզիչն այլ տեսակի էր: Անոր խօսքով, ան «բարձր չափանիշներ ունեցող եւ սխալի պարագային զիջումներ չընող» մարդ էր: Երբ նետում կը կատարէի եւ կը վրիպէի, ան խստօրէն կը յանդիմանէր ինձի յաջորդ ընդմիջումի ժամանակ, եւ ատկէ յետոյ յաճախ կը յայտնուէի պահեստայիններու նստարանին: Ես չէի կրնար յաջողակ նետումներ կատարել, երբ ան կը մարզէր մեզ: Երբ մինակ կը մարզուէի, եւ ան ներկայ չէր, ես դիպուկ նետումներ կը կատարէի դաշտի բոլոր հատուածներէն: Ես նոյն խաղացողն էի՝ նոյն տաղանդով, բայց չէի կրնար օգտագործել այդ տաղանդը, երբ ան

խաղաղաշտի մէջ գտնուէր:

Եթէ կարդաք երրորդ ծառայի պատասխանը վերոնշեալ սուրբգրային հատուածին մէջ, կը տեսնէք, որ անոր *պատկերացումն* իր տիրոջ մասին ճիշդ նոյնն էր, ինչ որ իմ պատկերացումն այդ քննադատող մարզիչի մասին: Այնուամենայնիւ, կայ մեծ տարբերութիւն մը. *Իրականութեան մէջ* այդ ծառայի տէրը բոլորովին մնան չէր իմ երկրորդ մարզիչին:

Կրկին, հաշուի առնելով այն ամէնը, ինչ սորվեցանք նախորդ գլուխէն, անչափ կարելոր է, որ մենք ժամանակ յատկացնենք՝ Աստուծոյ ճանչնալու համար: Ան ընդհանրապէս մնան չէ այդ ծոյլ ծառայի *պատկերացումին*: Աստուած մեր կողմն է. Ան կը հաւատայ եւ կը վստահի մեզի: Եթէ մենք *չդիտարկենք* Անոր այս կերպով, կրնանք դիւրաբար առիթ տալ վախին, եւ մեր պարգեները թաղուած կը մնան:

Այս ամէնը նկարագրելէն յետոյ եկէք անդրադառնանք անպտղաբերութեան բոլորովին այլ սկզբնապատճառի: Ինչպէս նշեցի նախորդ գլուխին մէջ, կան մարդիկ, որոնք Աստուծոյ կը ճանչնան, բայց, միեւնոյնն է, կը պայքարին վախի հետ եւ նոյնիսկ առիթ կու տան ատոր: Սուրբ Գիրքը կը նշէ այս երեւոյթի պատճառները, եւ մենք կը խօսինք այս մասին մինչեւ այս գլուխի աւարտը: Սակայն սկսելէ առաջ, կարդանք քանի մը խորաթափանց մտքեր վախի եւ ատոր առնչուող թեմաներու վերաբերեալ.

«Մարդը պէտք է վախնայ ոչ թէ մահէն, այլ՝ որ այդպէս ալ չէ սկսած ապրիլ»:

– Մարքոս Աւրելիոս

«Երբեք մի՛ վախնաք նոր բան փորձել: Յիշեցէք՝ տապանը կառուցեցին ոչ մասնագէտները, իսկ *Թիթանիքը*՝ արհեստավարժ մասնագէտները»:

– Անյայտ հեղինակ

«Մեծագոյն սխալը, որ մենք կը գործենք, մշտապէս սխալելու վախի մէջ ապրիլն է»:

– Ճոն Բ. Մաքսուէլ

«Մարդու մեծագոյն բացայայտումներէն եւ անակնկալներէն մէկն այն է, որ ինքը կը հասկնայ, որ կրնար ընել այն, ինչ որ վախնար, որ չէր կրնար»:

– Հենրի Ֆորս

Սկսինք մեր քննարկումն անհերքելի ճշմարտութեամբ. *անառողջ վախի հակադրութիւնն Աստուծոյ սէրն է*: Երբ մենք անպայմանական կը սիրենք Աստուծոյ եւ մարդոց, վախն ի չիք կը դառնայ: Ինչպէս կը գրէ Յովհաննէս առաքեալը. «Կատարեալ սէրը բոլորովին կը վտարէ վախը» (Ա. Յովհաննէս 4.18, NLT):

Ինչ կը վերաբերի այս ճշմարտութեանը, ես երբեք չեմ մոռնար հանդիպում մը Սուրբ Հոգիին հետ Սան Տիեկօ քաղաքին մէջ, որ մեծ յայտնութեան պատճառ դարձաւ ինծի համար: Նոր վերջացուցած էի հերթական ծառայութիւնը եւ միայնակ էի իմ պանդոկի սենեակը: Ես կը փորձէի վանել ինծի պաշարած վախը որդիներուս համար: Ես լսած էի ծառայողներու երեխաներու մասին, որոնք ողբերգական մահ ունեցած էին, մէկը՝ ելեկտրահարումէն, շատերը՝ ինքնաշարժներու արկածներէն, քանի մը հոգի՝ թմրանիւթերու չարաշահումէն կամ ջուրին մէջ խեղդուելէն, եւ միւսները՝ տարատեսակ պատճառներով: Քիչ առաջ գիտցայ եւս մէկ ողբերգութեան մասին եւ կը փորձէի ազատիլ այն անհանգստութենէն, որ համակած էր ինծի: Յանկարծ լսեցի իմ սրտին մէջ. «Որդի՛ս, վախը ցուցիչ է: Վախն ընդամէնը ցոյց կու տայ քու կեանքի այն բնագաւառը, որ դուն չես հնազանդեցուցած ինծի. քու կեանքի այդ բնագաւառը տակաւին կը պատկանի քեզի»:

Անոր խօսքերը զարմացուցին ինծի: Ես հասկցայ, որ յանձն առած էի այն, ինչ որ անզօր էի պահպանել: Այդ լուսաւորումէն վայրկեաններ յետոյ գոչեցի.

- Հա՛յր, այդ որդիներն իմս չեն: Ես պարզապէս անոնց տնտեսն եմ, եւ անոնք կը պատկանին Քեզի: Այնպէս որ, ես կը ցանկամ, որ անոնց կեանքին մէջ կատարուի այն, ինչ որ Դուն կը ցանկաս, ինչ ալ որ ատիկա ըլլայ: Դուն կրնաս տանիլ անոնց աշխարհի միւս ծայրը եւ Երկինք, երբ պատրաստ ըլլաս ընդունելու անոնց, բայց ես խիզախօրէն կը խնդրեմ քեզմէ, որ անոնք կատարեն այն ամէնն այս աշխարհին մէջ, ինչին համար, որ Դուն ստեղծած ես անոնց:

Եւ ես գոչեցի աւելի բարձր.

- սատանա՛, Յիսուսի անունով, ես կ'արգիլեմ քեզ դպչիլ անոնց: Ես կը յայտարարեմ, որ անոնք Աստուծոյնն են, եւ կ'արգիլեմ քեզ՝ սպաննելու, գողնալու եւ կործանելու այն, ինչ որ Աստուծոյնն է:

Իմ սիրտը լեցունեցաւ մեծ խաղաղութեամբ, եւ ատկէ յետոյ ես այլեւս չեմ անհանգստացած իմ չորս որդիներուն համար: Երբ անհանգստութիւնը կը փորձէ կրկին սողոսկել, ես խստօրէն կ'ըսեմ.

- Որդիներուս համար իմ հոգատարութիւնը ես յանձնած եմ Աստուծոյ, երբ Սան Տիեկօ էի, եւ ետ պիտի չվերցնեմ այն:

Ամէն անգամ վախն անմիջապէս կը մարի, եւ խաղաղութիւնը կը վերադառնայ:

Վախը զարհուրելի վերակացու է: Այն նենգ է, այն կը ձգտի վերահսկել ձեզ, եւ հազիւ որ բռնէ, դուք կը յայտնուիք աստոր ճնշումին տակ: Եթէ սխալ ձեռով արծազանգէք վախին, այն կը շեղէ ձեր կեանքի ընթացքը: Սակայն գոյութիւն ունի բարի լուր. վախը կարելի է յաղթահարել, բայց աստոր համար անհրաժեշտ է ճիշդ մօտեցում:

## ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ ԴԱՐՁՈՒՑԷՔ ԶԵՐ ՊԱՐԳԵԻՆ

Պօղոսը երկու նամակ գրեց իր «հոգեւոր որդի» Տիմոթէոսին: Երկուքին մէջ ալ ան խօսեցաւ այն մասին, որ Տիմոթէոսի պարգեւը (*խարիզման*) կ'անտեսուէր եւ անգործութեան կը մատնուէր: Եկէք ճիշդ սկիզբէն նշենք շատ կարեւոր ճշմարտութիւն մը. Տիմոթէոսն Աստուածապաշտ մարդ էր: Իր նամակներուն մէջ Պօղոսը կը պարծենար անոր փորձուած բնաւորութեամբ: Տիմոթէոսն, անկասկած, չէր գտնուեր այն մարդոց ցուցակին մէջ, որոնք կաթուածահար եղած էին վախէն՝ Աստուծոյ բնաւորութիւնը չճանչնալու պատճառով: Պօղոսի առաջին նամակին մէջ գրուած է. «Անուշադրութեան մի՛ մատնէր այն պարգեւը, որ քու մէջ է» (Ա. Տիմոթէոս 4.14, NKJV):

«Անուշադրութեան մատնել»-ը թարգմանուած է յունարէն «ամելէ՛օ» բառէն: Ահա աստոր սահմանումներէն երկուքը՝ «անտեսել կամ կարեւորութիւն չտալ»: Եւս մէկ աղբիւր կը սահմանէ այս բառը որպէս «չմտածել եւ վերջաւորութեան պատշաճ կերպով չարծազանգել, այսինքն՝ անուշադրութեան մատնել»:

Ինչո՞ւ Տիմոթէոսը կամ մեզմէ ոեւէ մէկը պէտք է անտեսել կամ անուշադրութեան մատնել Աստուծոյ տրուած պարգեւը եւ, ծայրայեղ պարագային, նոյնիսկ չմտածել աստոր մասին: Հնարաւոր պատճառներէն մէկը հետեւեալն է.

*Այն չի գործեր կամ արդիւնք չի տար՝ համաձայն մեր սպասումներուն*

Դուք կը մտածէք. «Ես փորձեցի եւ չյաջողեցայ»: Ես յաճախ այդպէս մտածելու գայթակղութիւն կ'ունենայի իմ կեանքի երկրորդ եւ երրորդ տասնամեակներու ընթացքին: Այդ դէպքերէն մէկն այն էր, որ օր մը, երբ կը քարոզէի, Լիզան եւ ընկերուհին քնացան այդ ընթացքին, աստոր

մասին ես գրած եմ ավելի վաղ այս գիրքին մէջ: Ես կը մտածէի. «Ո՞վ կը ցանկայ լսել ինձի, եթէ նոյնիսկ ամենամօտ մարդիկ չեն կրնար արթուն մնալ»:

Գրեթէ նոյն ժամանակ տեղի կ'ունենար եւս մէկ բան, ինչի պատճառով ես ավելի շատ կը պայքարէի ձախողման վերաբերող մտքերու հետ: Իմ ընկերը եւ ես կիրակնօրեայ դպրոցի դասեր կ'անցընէինք: Անոր դասերուն, որոնք տեղի կ'ունենային նստարաններ չունեցող սրահի մէջ, կը յաճախէր ավելի քան 200 մարդ: Նոյն ժամանակահատուածին իմ դասերուն կը յաճախէր մօտաւորապէս 20 մարդ: Անգամ մը իմ դասին միայն մէկ մարդ եկաւ:

Կային այլ դէպքեր, չափազանց շատ՝ թուարկելու համար, որոնց արդիւնքով իմ պարգեւները վիճարկելու գայթակղութիւն կը զգայի: Այժմ ես կը գիտակցիմ, որ եթէ առիթ տայի չիրականացուած սպասումներու եւ ակնյայտ ձախողումներու մասին մտքերուն, ես կը դադրէի քայլեր ընելէ ծառայութեան մէջ, կ'ընտրէի այլ ուղի եւ, ի վերջոյ, կը դժբախտանայի՝ իմ կեանքի կոչումը ձգելու պատճառով:

Մենք կրնանք անտեսել կամ անուշադրութեան մատնել Աստուծո՛ւ մեզի տրուած պարգեւը նաեւ հետեւեալ պատճառով.

### *Մարդոց քննադատութիւնը*

Անկասկած, ես գրելը ձգելու սաստիկ գայթակղութիւն կը զգամ այն բանէն յետոյ, երբ իմ առաջին ձեռագիրը անտեսուեցաւ, քննադատուեցաւ եւ մերժուեցաւ առաջին խմբագրի, իսկ յետոյ նաեւ հրատարակիչներու կողմէն: Աւելի ուշ՝ անմիջապէս գիրքիս ինքնահրատարակումէն յետոյ, իմ ընկերներէն մէկը արհամարհանքով արտայայտուեցաւ իմ գրելառճի վերաբերեալ: Այդ երեկոյ՝ անոր մեկնաբանութիւնները լսելէն յետոյ, ես 20-30 վայրկեան անշարժ պառկեցայ մեր հիւրասենեակին մէջ՝ հայեացքս յառելով առաստաղին: Սաստիկ յուսալքութիւն կը զգայի եւ կը մտածէի, որ թերեւս վատնած էի ամբողջ տարի մը իմ կեանքէն եւ մեծ գումարներ՝ այդ գիրքի պատճառով: Ես կը մտածէի. «Առաջին խմբագիրը, հրատարակիչները, իսկ հիմա նաեւ իմ ընկերները քննադատեցին այն: Արթնցի՛ր, ճո՛ւն: Ինչո՞ւ չես խոստովանիր, որ այն անպէտք է, եւ որ դուն ձախողած ես»:

Եթէ ես յանձնուէի այդ մտքերուն եւ այլ կարծիքներու, չէի գրեր իմ երկրորդ գիրքը, որ նոյնպէս ձախողած կը թուէր: Ես կը յիշեմ, որ ուղարկեցի այն իմ Աստուածաշնչեան դպրոցի ուսուցչուհիներէն մէկուն: Այդ կիները կոպտօրէն քննադատեց իմ գիրքը, եւ ես ինձի ավելի խորտակուած զգացի: Անցած էր ավելի քան երկուք ու կէս տարի,

եւ իմ երկու գիրքերէն ոչ մէկը, կը թուէր, յաջողութեան հասնելու հնարաւորութիւն ունէր:

Եթէ որեւէ պահուն ես ուշադրութիւն դարձնէի մարդոց քննադատութեան եւ իմ իսկ յուսալքուած մտքերուն, ամէն ինչ ձգելը շատ դիւրին պիտի ըլլար: Եւ ես չէի գրեր իմ երրորդ գիրքը, որ, անշուշտ, «Սատանայի խայծն» էր:

Մենք կրնանք անտեսել կամ անուշադրութեան մատնել Աստուծմէ մեզի տրուած պարգեւը մէկ այլ պատճառով.

### *Չախողման վախը*

Այս վախի հեզնական իրողութիւնը հետեւեալն է. մենք կ'ակնկալենք ձախողում՝ նոյնիսկ մինչեւ սկսիլը, եւ կը պաշտպանենք մեզ՝ նոյնիսկ չփորձելով: Գաղափարը հետեւեալն է. «Ինչո՞ւ փորձել, եթէ պիտի չյաջողի»: Քանի՛ երազանքներ եւ տեսիլքներ խափանած են ձախողման վախի պատճառով: Որքա՛ն ողբերգական է, որ Աստուծմէ տրուած պարգեւները կը վատնին նոյն կերպով, որուն միջոցով ատիկա ըրաւ ծոյլ ծառան:

Իմ ընկեր Մայլս Մոնրօն, «Բացայայտէ՛ քու ներուժը» գիրքին մէջ, ձախողման վախի մասին գրած է հետեւեալը.

«Գերեզմանոցն այս աշխարհի ամենահարուստ վայրն է, քանի որ հոն կարելի է գտնել բոլոր յոյսերը եւ երազանքները, որոնք այդպէս ալ չեն իրականացած, գիրքերը, որոնք այդպէս ալ չեն գրուած, երգերը, որոնք այդպէս ալ չեն երգուած, գիտերը, որոնք այդպէս ալ չեն պատմուած, բուժումները, որոնք այդպէս ալ չեն բացայայտուած, միայն որովհետեւ ինչ որ մէկը չափազանց վախցած է առաջին քայլն ընելու համար»:

Համաձայնելով Մայլսի հետ՝ ես լրջօրէն կը յորդորեմ ձեզ թոյլ մի՛ տաք, որ Աստուծմէ ձեզի տրուած պարգեւները չարտայայտուին այս կեանքին մէջ:

Այն, ինչ որ հիմա պիտի ըսեմ, կրնայ զարմացնել ձեզ, քանի որ բոլորս բարձր կը գնահատենք Տիմոթէոսին: Այնուամենայնիւ, մենք կը տեսնք Պօղոսի նամակներէն, որ Տիմոթէոսը կ'երթար նոյն ուղղութեամբ, ինչ որ ծոյլ ծառան: Անոր՝ Աստուծմէ տրուած պարգեւը անգործութեան եւ անուշադրութեան մատնուած էր: Բարեբախտաբար, ան ունէր լաւ հաւատքի հայր, որ չարտօնեց անոր մնալու այդ վիճակին մէջ:

Երկրորդ նամակին մէջ, որ Պօղոս գրեց իր «որդիին», ան այլեւս ժամանակ չծախսեց եւ անմիջապէս խօսեցաւ այդ խնդրի մասին. «Ես

կը յիշեցնենք քեզի, որ բորբոքես Աստուծոյ այն պարգեւը, որ քու մէջ է» (Բ. Տիմոթէոս 1.6, NKJV): «Բորբոքել» բառը յունարէն «անագոփուռէ՛օ» բառն է, որուն սահմանումն է «կրկին վառել կրակը»<sup>1</sup>: Բայց «Յունարէն-անգլերէն բառարանը» կը փոխանցէ այս բառի իմաստն աւելի ամբողջական. «նոր սկիզբ տալու ինչ որ բանի. վերագործարկել»: Աստուծոյ պարգեւը Տիմոթէոսի մէջ անգործութեան մատնուած էր եւ նոր մեկնարկի կարիք ունէր: Իսկ ո՞րն էր այդ թմրութեան պատճառը: Պօղոսը կը բացատրէ անմիջապէս յաջորդ խօսքին մէջ.

«Որովհետեւ Աստուած չտուաւ մեզի *երկչոտութեան* հոգի, այլ՝ զօրութեան եւ սիրոյ եւ զգաստութեան» (Բ. Տիմոթէոս 1.7):

Յունարէն «տեխիլա» բառը կրնայ թարգմանուիլ նաեւ որպէս «վախ», բայց ատոր առաւել ճշգրիտ թարգմանութիւնը «երկչոտութիւնն» է: Պօղոսը նկատի ունի հետեւեալը. «Տիմոթէո՛ս, Աստուծմէ՛ քեզի տրուած պարգեւը թմրութեան մէջ է՝ *վախի* հոգիին պատճառով», կամ, եթէ աւելի պարզ ըսենք. «Տիմոթէո՛ս, Աստուծմէ՛ քեզի տրուած պարգեւը չի գործեր՝ *երկչոտութեան* հոգիին պատճառով»:

Մենք դիւրաբար կրնանք ընկալել այս բառը: Երկչոտութիւնը կը նշանակէ «ետ կանգնիլ գործողութենէն՝ վախի պատճառով»: Բայց աւելի կարեւոր է այն, որ երկչոտութեան հիմքը *հոգի* է: Այն հոգեւոր ուժ է, եւ եթէ մենք չհակառակինք վախին՝ հոգեւոր մակարդակի վրայ, ատոր արմատներն ամբողջովին չեն հեռանար:

## ԻՄ ՊԱՅՔԱՐԸ ԵՐԿՉՈՏՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Ես շատ լաւ տեղեակ եմ այս մասին, քանի որ տարիներ շարունակ պայքարած եմ այս հոգիին հետ: Ես կ'ենթադրէի, որ պատճառն իմ անծի թուլութիւնն էր: Բայց 1990-ական թուականներու սկիզբը շարք մը հաւաքոյթներ առաջնորդելու ժամանակ բացայայտեցի, որ իմ կարծիքը բոլորովին սխալ էր: Ես պէտք է չորսօրեայ հաւաքոյթներ առաջնորդէի փոքրիկ քաղաքի մը եկեղեցւոյ մէջ, սակայն ատոնք վերածուեցան Աստուծոյ շարժման, որ տեւեց երեք շաբաթ: Ամէն երեկոյ դահլիճը լեկ-լեցուն էր. շատերը կը փրկուէին, կը բժշկուէին եւ կ'ազատագրուէին: Իմ՝ Աստուծմէ՛ տրուած պարգեւը, որ քարոզելն էր, կը գործէր շատ ազդեցիկ եւ ակնառու: Մարդիկ կու գային մինչեւ 150 քիլոմետր հեռաւորութենէն, որպէսզի մասնակցէին երեկոյեան ծառայութիւններուն: Ես յստակօրէն կը յիշեմ, որ կը մտնէի դատարկ եկեղեցական շէնքը ցերեկուան ժամերուն, եւ կը թուէր՝ Աստուծոյ ներկայութիւնը բնականութիւն հաստատած էր հոն:

Բայց երեկոյ մը՝ վերջին շաբթուան ընթացքին, ամէն ինչ փոխուեցաւ: Նախորդ երեկոյեան երկրպագութեան խումբի առաջնորդներէն քանի մը հոգի քննադատած էին իմ ծառայութիւնը: Եկեղեցւոյ առաջնորդներէն մէկը պատմեց ինծի անոնց ըսածը անմիջապէս ծառայութենէն առաջ: Այն, ինչ որ անոնք ըսած էին, կողմնակալ էր, բայց անվնաս էր: Այնուամենայնիւ, ես չէի կրնար հեռացնել ատիկա իմ մտքէն: Իմ ուշադրութիւնը շեղուեցաւ զալիք ծառայութենէն դէպի իմ նախորդ երեկոյի ուղերձի քննադատութիւնը: Եկեղեցւոյ հովիւը չէր ընդունած անոնց դիտողութիւնները. մենք աղօթեցինք եւ գացինք եկեղեցւոյ դահլիճ, ինչպէս որ կ'ընէինք բոլոր նախորդ ծառայութիւններու ժամանակ:

Այդ երեկոյ ամէն ինչ չոր կը թուէր: Ես կը փորձէի ծառայել այնպէս, ինչպէս նախորդ երկու շաբթուան ընթացքին, բայց շփոթուած էի, չէի կրնար կեդրոնանալ եւ չէի ուզեր մնալ ամպիոնին ետեւը: Ես կ'ուզէի փախչիլ դահլիճի ետեւի դուռէն: Կը թուէր՝ ես անզօր էի, ինչպէս իմ դեռահաս տարիներուն, երբ ցաւալիօրէն կը ձախողէի իմ ելոյթները դպրոցին մէջ՝ դասարանցիներու առջեւ: Ես բոլորովին օծութիւն չէի զգար. ես չէի զգար, որ Աստուծոյ ներկայութիւնն իմ վրայ էր: Իրավիճակն անտանելի էր: Ես կանուխ աւարտեցի հաւաքոյթը եւ վերադարձայ հոն, ուր իջեւանած էի:

Ես բարկացած էի Աստուծոյ վրայ: *«Ինչո՞ւ Դուն չօգնեցիր ինծի: Ինչո՞ւ այս ծառայութիւնը նման չէր միւսներուն: Ինչո՞ւ լքուած կը զգայի»:* Ես կը մտածէի. *«Այդ ուղերձը եւ ծառայութիւնն անհետեթ էին: Վաղը երեկոյեան ոչ ոք կը վերադառնայ: Ես նոյնպէս չեմ ուզեր վաղը հոն երթալ»:*

Պարկեցայ քնանալու՝ յոյս ունենալով, որ յաջորդ օրը ամէն ինչ ուրիշ պիտի ըլլար:

Յաջորդ առաւօտեան արթնցայ ծանրութեան, ճնշուածութեան եւ վիատութեան զգացումով: Ես փորձեցի աղօթել, բայց ապարդիւն: Ստահոգութիւնը տեղի ունեցածի մասին՝ աւելցաւ: Այդ օրը երեք ժամ շարունակ աղօթեցի: Ամբողջ այդ ընթացքին ես կը պայքարէի ձախողման մտքերու հետ: Ես աշխուժութիւն զգացի, հեռացուցի ինծմէ այդ ծանրութիւնը եւ մտովի պատրաստուեցայ զալիք ծառայութեան:

Այդ երեկոյ եկեղեցիին մէջ երկրպագութիւնը նոյնքան չոր կը թուէր, որքան նախորդ երեկոյեան, եւ կը թուէր՝ ոչինչ կրնայի տալ անոնց: Կրկին, ես կ'ուզէի փախչիլ դահլիճի ետեւի դուռէն: Բեմ կանչուելուն պէս բարձրացայ եւ քանի մը վայրկեան շփոթուած խօսեցայ: Ես չէի կրնար կեդրոնանալ: Յանկարծ ձայն մը լսեցի իմ մտքին մէջ. «Ինչո՞ւ ըսիր



ատիկա: Ո՞րն է քու ուղերձի նպատակը: Դուն անհեթե՛թ ես»:

Ես այլևս չեի պատրաստուեր հանդուրժելու ատիկա: Յանկարծ հաւաքուած վեց հարիւր մարդոց ըսի.

- Չեմ գիտեր, թէ ինչ կը կատարուի, բայց ինչ որ բան տարօրինակ է վերջին երկու երեկոյի ընթացքին: Կրնա՞ք կանգնիլ եւ աղօթել հետս:

Երբ բոլորս կ'աղօթէինք, Աստուած խօսեցաւ հետս. ես լսեցի Անոր ծայնն առաջին անգամ աւելի, քան 24 ժամուան ընթացքին: Ան յիշեցուց ինձի այն, ինչ որ Պօղոսը կը գրէ Բ. Տիմոթէոս 1.7-ին մէջ, Ան ըսաւ. «Որդի՛ս, դուն երկչոտութիւն կը զգաս քու ետեւը՝ բեմահարթակին վրայ կանգնած երկրպագութեան խումբի պատճառով: Կոտրէ՛ երկչոտութեան հոգին եւ խօսի՛ր այն, ինչ որ Ես կու տամ քեզի»:

Ես վարուեցայ այնպէս, ինչպէս Ան ըսաւ, եւ ասոր հետեւեցաւ համարձակ ուղերձ մը Սուրբ Գիրքէն: Այդ օրը ամէնէն ազդեցիկն էր բոլոր 21 ծառայութիւններէն: Ներկաներու 75 տոկոսն առջեւ եկաւ՝ խոստովանելով, որ իրենք նոյնպէս կը պայքարէին երկչոտութեան հետ: Նստարաններու միջեւ գտնուող շարքերը լեցուն էին մարդոցմով, որոնք կը ցանկային, որպէսզի աղօթէի իրենց ազատագրման համար:

Այդ եկեղեցիին հովիւը կապ հաստատեց հետս քանի մը շաբաթ յետոյ, որպէսզի պատմէր, թէ որքան արդիւնաւէտ էր այդ օրուան ծառայութիւնը: Այն առաջնորդները, որոնք քննադատական խօսքեր ըսած էին իմ հասցէին, կ'ապրէին բացայայտ մեղքի մէջ՝ շնութեան, պոռնկութեան եւ գինովութեան: Այդ ամէնը բացայայտուեցաւ յաջորդ երկու շաբթուան ընթացքին, եւ բոլորը՝ բացի մէկէն, հեռացան եկեղեցիէն: Այդ հովիւը պատմեց, որ անոր երկրպագութեան խումբը երբեք այդքան միաբան եւ արդիւնաւէտ չէր եղած, որքան այդ իրադարձութիւններէն յետոյ: Այդ օրուան վերապրումը փոխեց այդ եկեղեցիին կեանքն ու ծառայութիւնը:

Իմ կեանքին մէջ այդ վերապրումը վերջ դրաւ ընկճուածութեան հետ տարիներ տեւող պայքարին, նաեւ այն բանին, որ երբեմն ես կը փորձէի ծառայութիւններ անցընել իմ ուժերով՝ չօգտագործելով Աստուծմէ ինձի տրուած պարգէւը: Ամենակարեւոր ըրած բացայայտումս, այն էր, որ պէտք է ուղղակիօրէն հակառակիլ *երկչոտութեան հոգիին* ճիշդ այնպէս, ինչպէս Յիսուսը հակառակեցաւ սատանային Աստուծոյ խօսքով Իր անապատային փորձութիւններու ժամանակ: Յիսուսը չխնդրեց *Աստուծմէ* հեռացնել այդ յարձակումները. Ան անձամբ հրամայեց սատանային՝ հաստատակամ եւ միանշանակ կերպով:

## ԵՂԻԱՅԻ ՓՈՒՆԱՐԻՆՈՒՄԸ

Ես կը խրախուսեմ, որ կարդաք Գ. Թագաւորաց 17-19 գլուխները: Դուք պիտի տեսնէք Եղիա մարգարէի բախումը երկչոտութեան հետ (նման իմ փորձառութեան)՝ Իսրայէլի Յեզաբէլ թագուհիին պատճառով:

Այդ մեծ մարգարէն խիզախօրէն ընդդիմացաւ Իսրայէլի ժողովուրդին Կարմեղոս լեռան վրայ. անոր կը հակառակէին 850 սուտ մարգարէ, Աքաաբ թագաւորը եւ թագաւորի ծառաները: Աստուած կրակով պատասխանեց Եղիայի աղօթքին՝ ամբողջ ազգի ներկայութեամբ: Եղիան նոյնիսկ պատուիրեց ժողովուրդին մահապատիժի ենթարկել բոլոր սուտ մարգարէներուն: Ան ազդեցիկ կերպով կը գործէր իր պարգեւով: Ատորմէ յետոյ աղօթեց, եւ երեք ու կէս տարի տեւող երաշտն աւարտեցաւ: Որպէս եզրափակում՝ ան վազելով առջեւ անցաւ թագաւորական կառքէն: Այդ ամէնը տեղի ունեցաւ մէկ օրուան մէջ: Ինչպիսի՞ ծառայողական օր:

Բայց մինչեւ արեւամուտը Յեզաբէլը լսեց տեղի ունեցածի մասին, եւ սկսաւ իրական պայքարը.

«Յեզաբէլն ուղարկեց Եղիային հետեւեալ ուղերձը. «Թող որ աստուածները զարնեն ինձի եւ նոյնիսկ սպաննեն, եթէ վաղը մինչեւ այս ժամը ես սպաննած չըլլամ քեզի, ինչպէս որ դուն սպաննեցիր անոնց»» (Գ. Թագաւորաց 19.2, NLT):

Մինչեւ Յեզաբէլի սպառնալիքը մեկնաբանելը, թոյլ տուէք ըսել, որ հոգիները նման են ավելարողներու: Ավելարողներուն հարկաւոր են ավիքներ՝ սահելու համար. հոգիներուն հարկաւոր են բառեր՝ գործելու համար: Գրուած է. «Որեւէ գէնք՝ ուղղուած քու դէմ, յաջողութիւն պիտի չունենայ: *Դուն կը լռեցնես* ամէն մէկ ձայն, որ կը բարձրանայ՝ քեզ մեղադրելու համար: Տիրոջ ծառաները կը վայելեն այս առաւելութիւնները» (Եսայի 54.17, NLT): Ուշադրութիւն դարձուցէք, որ մենք պէտք է լռեցնենք ամէն մէկ ձայն, որ կը բարձրանայ մեր դէմ: Ասիկա մեր գործն է, ոչ թէ Աստուծոյն: Յիսուսը չխնդրեց Աստուծմէ լռեցնել սատանային անապատին մէջ: Մենք նոյնպէս պէտք չէ այդպէս վարուինք, երբ մեր վրայ յարձակում գայ:

Ակնյայտ է, որ Յեզաբէլի խօսքերուն մէջ երկչոտութեան ազդեցիկ հոգի կար: Ուշադրութիւն դարձուցէք, թէ ինչպէս արձագանգեց Եղիան, հազիւ որ այդ խօսքերը հասան անոր. «Եւ այս բանը տեսնելով, ոտքի ելաւ զնաց՝ իր անձն ազատելու համար» (Գ. Թագաւորաց 19.3):

Այն մարդը, որ ընդդիմացած էր ամբողջ ազգին, սուտ

մարգարէներուն եւ թագաւորին, փախուստի դիմեց: Ան ճամբորդեց Իսրայէլի մէկ ծայրէն միւսը եւ գնաց անապատ՝ մէկ օրուան ճանապարհ անցնելով՝ նստեցաւ ծառի մը տակ եւ *աղօթեց՝ մահ խնդրելով*:

Մի՞թէ խօսքը նոյն մարդուն մասին է: Ի՞նչ տեղի կ'ունենայ: Ակնյայտ է, որ ան շփոթուած էր, ճնշուած էր, անյոյս էր եւ կորսնցուցած էր իր տեսիլքը: Ասոնք երկչոտութեան հոգիի ախտանիշներն են: Ցաւալի իրականութիւնն այն է, որ շատերը կը պայքարին ախտանիշներու հետ, փոխարէնը ընդդիմանան աստուծոյ ետեւը կանգնած հոգիին:

Անտեղեակութեան պատճառով, ես նոյնպէս տարիներ շարունակ կը պայքարէի այս ախտանիշներու հետ, մինչեւ այն երեկոն, երբ Աստուած բացայայտեց այդ չար հոգիին ճանապարհները: Ես չէի կրնար օգտագործել իմ պարգեւը եւ չէի հասկնար, թէ ինչու:

Եղիան յանձնուած էր, եւ Աստուած ճանապարհորդութեան ուղարկեց վիատած մարգարէին: Հրեշտակ յայտնուեցաւ եւ կերակուր տուաւ անոր՝ դէպի Սինայ լեռը 40 օր տեւող ճանապարհորդութեան համար: Հազիւ որ ան տեղ հասաւ, Աստուծոյ առաջին հարցումը հետեւեալն էր. «Ի՞նչ կ'ընես հոս, Եղիա՛» (Գ. Թագաւորաց 19.9, NLT):

Ի՞նչ: Սպասեցէ՛ք: Աստուած պատուիրեց հրեշտակի մը կերակուր տալ Եղիային ճանապարհի համար, որպէսզի Եղիան տեղ հասնէր: Բայց տեղ հասնելուն պէս, Աստուած հարցուց, թէ ինչու ան հոն է: Մի՞թէ Աստուած կը տառապի մտահեղծումով:

Ո՛չ. մենք պէտք է հասկնանք, որ երբ երկչոտութիւնը կը յաղթ մեզի, Աստուած յաճախ կ'ողորկէ մեզ չէզոք վայր, որպէսզի ծառայէ մեզի, քանի որ Ան կը սիրէ մեզ: Ես տեղեակ չէի, թէ ինչ կը կատարուէր հետս այդ հաւաքոյթներու ժամանակ, բայց չեմ կարծեր, որ Եղիան նոյնպէս տեղեակ չէր: Ան գիտէր, թէ ինչպէս համարձակ ընդդիմանալ հակառակութեանը, բայց ան սարսափած էր այդ թագուհիէն:

Մենք պէտք է հասկնանք, թէ Աստուած ինչ նկատի ունէր Իր հարցումով: Ան հարցուց, թէ ինչու Եղիան չընդդիմացաւ այդ թագուհիին, քանի որ նոյնինքն Յեզաբէլը կը հրահրէր ամբողջ չարիքը: Անհրաժեշտ էր կեցնել նոյնինքն անոր, բայց փոխարէնը՝ Եղիան փախուստի դիմեց անորմէ:

Փոխարէնը համայօդուածին մէջ գտնուող հարցումին պատասխանելը, Եղիան փոխեց թեման՝ տրտնջալով, որ ան միակ մնացած մարդն էր, որ ճշմարտապէս կը ծառայէր Աստուծոյ: Ան ներկայացուց դասական զգայացունց պատմութիւն մը.

«Ես նախանձաւոր կերպով ծառայեցի Ամենակարող Տէր Աստուծոյն: Բայց Իսրայէլի ժողովուրդը խախտեց իր ուխտը Քեզի հետ, անոնք քանդեցին Քու զոհասեղանները եւ սպաննեցին Քու մարգարէներէն իւրաքանչիւրին: Ես միակն եմ, որ մնացած եմ, եւ հիմա անոնք կը փորձեն ինձի ալ սպաննել» (Գ. Թագաւորաց 19.10):

Աստուած բոլորովին անտեսեց այս պատասխանը եւ կրկին հարցուց նոյն հարցումը. «Ի՞նչ կ'ընես հոս, Եղիա՛» (Գ. Թագաւորաց 19.13, NLT): Եւ կրկին, Եղիան ներկայացուց նոյն զգայացունց պատմութիւնը (կարդացէ՛ք 14-րդ խօսքը): Ան յանձնուած էր եւ չէր ցանկար գործ ունենալ ներկայ չարիքի ետեւը կեցած իրական չարիքին հետ:

Աստուած եւս մէկ անգամ ոչ մէկ ուշադրութիւն դարձուց անոր «վա՛յ ինձի» ոճով ներկայացուած պատմութեան եւ տուաւ ապշեցուցիչ պատուէր մը.

«Վերադարձի՛ր նոյն ճանապարհով, որուն միջոցով եկար, եւ ճանապարհ ինկիր դէպի Դամասկոսի անապատ: Երբ հոն հասնիս, օճէ՛ Ազայէլին՝ որպէս Ասորեստանի թագաւոր: Ատկէ յետոյ օճէ՛ Նամեսսիի թռ Յէուին՝ որպէս Իսրայէլի թագաւոր, եւ օճէ՛ Սափատի որդի Եղիսէին՝ Աբել-մաուլա քաղաքէն, *քեզ փոխարինելու համար՝ որպէս Իմ մարգարէ*» (Գ. Թագաւորաց 19.15,16, NLT):

Դուք ուշադրութիւն դարձուցի՞ք «քեզ փոխարինելու համար՝ որպէս Իմ մարգարէ» բառերուն: Աստուած կարգեց Եղիսէին՝ Եղիայի փոխարէն, քանի որ Եղիան առիթ տուած էր երկչոտութեան եւ պարտուած էր: Եթէ շարունակէք կարդալ Դ. Թագաւորաց գիրքը, դուք պիտի տեսնէք, որ Եղիան անցուց իր յաջորդ չորս տարուան մեծ մասը՝ սորվեցնելով իրեն փոխարինողին: Եւս մէկ ցնցող լուրն այն է, որ ան չօճեց Ազայէլին ու Յէուին: Ատիկա ըրաւ Եղիսէն՝ անոր փոխարինողը:

Եղիսէն ոչ մէկ տեսակի երկչոտութեան առիթ տուաւ: Ան համարձակ էր եւ ոչ մէկ չարիքի առջեւ կը նահանջէր: Աստուած ըսաւ անոր մասին. «Յէուի սուրէն ազատուողին Եղիսէն կը մեռցնէ» (Գ. Թագաւորաց 19.17): Յէուն եւ Եղիսէն գահընկեց ըրին Աքաաբի եւ Յեզաբէլի չար արքայատոհմը: Ես համոզուած եմ, որ սկզբնականօրէն ատիկա Եղիայի առաջադրանքն էր, բայց երկչոտութեան պատճառով այդ ծրագիրը փոխուեցաւ:

Մենք կը գիտակցինք, որ Եղիան, ի տարբերութիւն ծոյլ ծառային, կը ճանչնար Աստուծոյ բնաւորութիւնը: Այնուամենայնիւ, անոր պայքարը

յստակ ցոյց կու տայ, թէ ինչ կրնան ընել վախճն ու երկչոտութիւնը մեր պարզելի եւ կոչման հետ:


Անչափ կարեւոր է հաստատական որոշում կայացնել, որ մենք պիտի չնահանջենք, երբ բախինք վախին եւ երկչոտութեանը: Աստուած պիտի սատարէ մեզի, երբ դուրս ելլենք այս ուժերուն դէմ: Վախը կարելի է պարտութեան մատնել, բայց մենք պէտք է ճակատային հարուած հասցնենք ատոր՝ օգտագործելով Աստուծոյ Խօսքը եւ խոստումները:

Ես կը կրկնեմ. Աստուած ձեր կողմն է: Ան կը հաւատայ ձեզի: Ան կը ցանկայ, որ դուք բարգաւաճիք այն պարզեւներով, որոնք տուած է ձեզի: Մի՛ նահանջէք: Թոյլ մի՛ տաք ռեւէ մարդու կամ երեւոյթի ետ պահել ձեզ ձեր առաքելութենէն եւ կոչումէն:

## ՄՏՈՐԵՑԷՔ

1. Վախը գողցած է բազմաթիւ երազանքներ: Այն նենգ է, կը ձգտի վերահսկելու ձեզ, եւ եթէ դուք սխալ կերպով արձագանգէք վախին, այն պիտի շեղէ ձեր կեանքի ընթացքը: Ինչպէ՞ս վախը փորձած է շեղել ձեր կեանքի ընթացքը:
2. Տիմոթէոսին զգուշացում տրուեցաւ իր պարզելը չանտեսելու մասին: Ինչո՞ւ վտանգաւոր է ձեր պարզելն անտեսելը: Համաձայն բերուած օրինակներու, այն անտեսելու պատճառներէն ո՞րը աւելի մեծ արձագանգ գտաւ ձեր մէջ: Ինչո՞ւ:
3. Երկչոտութիւնը հոգի է: Ի՞նչ կերպերով դուք հանդիպած էք այդ հոգիին: Ի՞նչ պէտք է ընել՝ այդ հոգիին յաղթելու եւ պարտութեան մատնելու համար:





«Մանրակրկիտորէն հետազօտեցէք, թէ ով էք  
դուք եւ ինչ աշխատանք տրուած է ձեզի, իսկ  
յետոյ խորասուզուեցէք ատոր մէջ:  
...Ձեզմէ իւրաքանչիւրը պէտք է  
պատասխանատուութիւն ստանձնէ՝ ձեր  
կեանքին մէջ հնարաւորինս լաւագոյն  
ստեղծարար աշխատանք կատարելու համար»:

– Քաղատացիս 6.4,5, MSG



# ԲԱՑԱՅԱՅՏԵՑԷ՛Ք ԵՒ ԶԱՐԳԱՑՈՒՑԷ՛Ք ՁԵՐ ՊԱՐԳԵԻՆԵՐԸ

**Ա**յժմ կը խօսինք Աստուծմէ՛ մեզի տրուած պարգեւները բացայայտելու եւ զարգացնելու մասին: Ինչպէս արդէն նշած են, իմ նպատակը բնական պարգեւներու եւ կարողութիւններու զարգացման մասին խօսիլը չէ: Բաւականաչափ սորվելու պարագային գրեթէ իւրաքանչիւրը կրնայ մասնագիտանալ ցանկացած բնագաւառի մէջ:

Իմ ընտանիքը կրնայ վիճարկել այս պնդումը, յատկապէս երբ խօսքը երգելու մասին է, եւ թերեւս անոնք ճիշդ են: Այնպէս որ, թոյլ տուէք աւելի իրատեսական օրինակ բերել: Եթէ ես սորվէի տասը հազար ժամուան ընթացքին որեւէ երաժշտական գործիք նուագել, ես կրնայի վերածուիլ սարսափելի երաժիշտէն միջին երաժիշտի: Իմ ծախսած ժամանակի եւ ջանքերու շնորհիւ, իմ դաշնամուր կամ կիթառ նուագելը կրնայ հաճելի դառնալ, բայց նոյնիսկ այդ կեդրոնացած փորձերէն յետոյ այն չի դառնար *խարիզմա*, որ կը խթանէ Աստուծոյ Թագաւորութիւնը կառուցելու իմ կոչումը:

## ԱՍՏՈՒԾՈՅ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Այս գլուխի առաջին մասին մէջ մենք կը քննարկենք Պօղոսի հետեւեալ խօսքերը. «Մանրակրկիտօրէն հետազօտեցէք, թէ ով էք դուք եւ ինչ աշխատանք տրուած է ձեզի»: Չկան բանաձեւեր՝ ձեր կոչումը եւ ատոր ուղեկցող պարգեւները բացայայտելու համար: Թէեւ կան բազմապիսի ձեռնարկներ, որոնք կրնան օգնել ձեզի, որ բացայայտէք, թէ ինչը ձեր քով աւելի լաւ կը յաջողի: Երբ խօսքը յաւիտենական

ազդեցութիւն ձգելու մասին է, անհրաժեշտ է մեր Արարիչի աջակցութիւնը՝ ձեր կոչումը եւ խարիզման բացայայտելու համար:

Երբեմն Աստուծոյ անմիջական գործակցութիւնը ձեր պարգեւները բացայայտելու հարցին մէջ դիւրին է հասկնալ, ինչպէս, օրինակ, երբ Ան պատուիրեց ինձի գրել: Ես երբեք չէի փորձած գրել, եթէ խօսք չստանայի աղօթքի ժամանակ՝ 1991 թուականի ամրանը: Ոչ մէկ գիրք կամ դասընթացք կրնար համոզել ինձի գրել, եւ, անկասկած, ես պատահաբար չէի յանգեր այդ մտքին: Որպէս օրինակ, Ղաւիթ թագաւորը երբեք չէր իմանար, որ ինքը պատերազմող էր, եթէ չպաշտպանէր իր ոչխարներուն արջէն եւ առիւծէն: Այդ պարագաներէն յետոյ անհրաժեշտութիւն յառաջացաւ, որ ինչ որ մէկն ազատէր Իսրայէլին փոշտացիներէն: Ղաւիթին նախկին հանդիպած վտանգաւոր զիշատիչները պարզապէս աստիճաններ էին, որոնք մօտեցուցին անոր Գողիաթի հետ կռուելուն այն ժամանակ, երբ ամբողջ Իսրայէլը պահուըտած էր: Աստուած թոյլ տուաւ Ղաւիթին բացայայտել իր պարգեւները՝ իրեն շրջապատող հրատապ կարիքներու միջոցով:

Մտածեցէ՛ք Գեղէօնի մասին: Ան աւելի շատ նման էր ինձի: Աստուած պէտք է քանի մը անգամ համոզէր անոր՝ բուրդերու միջոցով, որ ան կանչուած էր՝ որպէս պատերազմող:

Սկսինք ճիշդ սկիզբէն: Անչափ կարեւոր է փնտռել Աստուծոյ գործակցութիւնը եւ հաւատալ ատոր ձեր խարիզման բացայայտելու խնդիրին մէջ: Սուրբ Գիրքը կը պնդէ, որ Աստուած կը վարձատրէ անոնց, որոնք ջանասիրաբար եւ հաւատքով կը փնտռեն Իրեն: Գրուած չէ, որ Աստուած կը վարձատրէ անոնց, որոնք անփութօրէն կը փնտռեն Իրեն՝ տարակուսելով եւ կասկածելով (Եբրայեցիս 11.6-ի հեղինակի շրջասութիւնը): Նոյնպէս, Յիսուսը կը պատուիրէ մեզի.

«Շարունակեցէ՛ք խնդրել եւ պիտի ստանաք այն, ինչ որ կը խնդրէք: Շարունակեցէ՛ք փնտռել եւ պիտի գտնէք: Շարունակեցէ՛ք թակել, եւ դուռը պիտի բացուի ձեզի համար: Որովհետեւ իւրաքանչիւրը, որ կը խնդրէ, կը ստանայ: Իւրաքանչիւրը, որ կը փնտռէ, կը գտնէ: Եւ իւրաքանչիւրին, որ կը թակէ, դուռը կը բացուի» (Մատթէոս 7.7,8, NLT):

Մենք պէտք է ամբողջ սրտով ցանկանք գիտնալ մեր խարիզման: Յոյսով եմ՝ այս գիրքը ձեր մէջ կը բորբոքէ կրակոտ ցանկութիւն՝ ձեր պարգեւները բացայայտելու եւ օգտագործելու համար: Այն թոյլ չի տար ձեզի անհոգ կերպով խնդրել, փնտռել եւ թակել. փոխարէնը, դուք հաստատական կ'ըլլաք, ինչպէս որ Յիսուսը կը պատուիրէ այս

խօսքին մէջ: Այնպէս չէ, որ Աստուած ինչ որ բան կը պահէ ձեզմէ: Ան կը ցանկայ, որ ձեր մէջ ձեւաւորուի ջերմեռանդութիւն այն բանին հանդէպ, ինչ որ դուք կը խնդրէք:

Բարձր դասարաններու մէջ ես կը ցանկայի մեծ հզօրութիւն ունեցող աստղադիտակ ունենալ, քանի որ կը սիրէի աստղագիտութիւնը եւ կը ցանկայի ուսումնասիրել գիշերային երկինքը: Որակեալ աստղադիտակը ֆինանսական առումով բոլորովին անհասանելի էր ինձի համար, բայց ես շարունակ աստղագիտութեան մասին գիրքեր եւ ամսագրեր կը կարդայի: Ես ամէն անգամ չորս-հինգ գիրք կ'առնէի գրադարանէն, կը կարդայի, երբ ազատ ժամանակ կ'ունենայի, երբեմն՝ քանի մը անգամ, իսկ յետոյ կը վերադարձնէի եւ կ'առնէի այլ գիրքեր: Այդ ընթերցանութիւնը աստղադիտակ ունենալու գրեթէ յուսահատութեան հասնող ցանկութիւն ձեւաւորեց իմ մէջ:

Ի վերջոյ, իմ ձգտումը դրդեց ինձի անսովոր գաղափարի մը, որպէսզի գումար կուտակէի իմ երազանքի աստղադիտակին համար: Ես թենիսի մարզիչ էի լողի եւ թենիսի ակումբի մը մէջ եւ դասեր կու տայի միայն ամառնային արձակուրդներու ժամանակ: Ես ըրի այնպիսի բան, ինչ որ ոչ ոք ըրած էր մեր ակումբին մէջ: Ակումբի խորհուրդի թոյլտուութեամբ որոշեցի յատուկ դասեր տալ աշնան ամիսներուն՝ իմ դպրոցական դասերէն յետոյ: Եթէ իմ ծրագիրը յաջողէր, ես կը վաստկէի բաւականաչափ գումար՝ աստղադիտակ գնելու համար: Ես ամէն ինչ յաջողեցա՛ւ: Հաւատացէ՛ք ինձի, ես երբեք անփութօրէն չէի մօտենար այդ աստղադիտակին: Եթէ ինչ որ մէկը պարզապէս աստղադիտակ նուիրէր ինձի, մինչեւ որ իմ ցանկութիւնն այդ աստիճան ուժգնանար, թերեւս այն ձանձրացնէր ինձի, երբ իմ սկզբնական ոգեշնչումն անցնէր:

Աստուած դժուարութեամբ չի լսեր: Եւ Ան ոչինչ կը պահէ ձեզմէ: Ան կը ցանկայ, որ դուք սովորական չհամարէք այն պարգեւները, որոնք կու տայ ձեզի՝ Իր ժողովուրդին կառուցելու համար: Ձեր ձգտումը պէտք է ըլլայ աւելի ուժգին, քան այն հակառակութիւնը, որուն դուք կը բախիք ձեր երազանքներու ճանապարհին: Այնպէս որ, թոյլ տուէք, որ այդ ցանկութիւնն աւելնայ եւ ինքնաբերաբար դրդէ ձեզ, որ ջերմեռանդօրէն ձգտիք իմանալու ձեր *խարիզման* եւ տաղանդները:

Յաջորդը՝ մենք պէտք է հասկնանք, որ չկայ որեւէ նախորոշուած յաջորդականութիւն, որուն միջոցով Աստուած կը պատասխանէ մեզի. Անոր պատասխանն այլ է իւրաքանչիւր զաւակի համար: Երբեմն ինձի համար տարօրինակ է, որ մենք շարունակ կը խօսինք Յիսուսին հետ «անձնական յարաբերութիւն» ունենալու մասին, բայց երբ անհրաժեշտ

է լսել Աստուծոյ, մեր պարագային՝ որպէսզի իմանանք մեր *խարիզմայի* կամ պարգեւներու մասին, մենք կը ցանկանք բանաձեւ ունենալ: Աստուած կը ցանկայ անձնապէս հաղորդակցիլ մեզի հետ: Ան կը ցանկայ գաղտնի պահել ատիկա ձեր եւ Իր միջեւ: Ան նոյն ձեւով չի պատասխաներ Իր թանկ գաւակներէն իւրաքանչիւրի աղօթքներուն: Ահա թէ ինչու Յիսուսը կը պատուիրէ մեզի շարունակել խնդրել, փնտռել եւ թակել: Գոյութիւն ունի Անոր կամքի «որոնում», ինչ որ իրականութեան մէջ շատ օգտաւէտ է մեզի համար:

Մեր որոնման մէջ մենք պէտք է հարցումներ հարցնենք մեզի եւ այլ մարդոց: Այս ամէնը որոնման ընթացքի մասն է: Մենք չենք փնտռեր մարդկային իմաստութիւն, այլ կը ցանկանք լսել Աստուծոյ ձայնն այն մարդոց ձայներու մէջ, որոնց հետ կը խօսինք:

Կարելոր է, որ իմանանք, թէ որուն հետ խօսինք: Մենք պէտք է գտնենք այնպիսի մարդոց, որոնք կը խրախուսեն մեզ, բայց չեն վախնար խօսիլ ճշմարտութիւնը: Ես կը ցանկայի ըսել, որ նման մարդիկ շատ են, սակայն անոնք հազուադիւր են: Ես կը ճանչնամ մարդոց, որոնց կրնամ այցելել, եւ անոնք միշտ պիտի ըսեն ինձի այն, ինչ որ ես կ'ուզեմ լսել: Կան նաեւ մարդիկ, որոնք, կը թուի, վատատես են, քննադատող են եւ բացասաբար տրամադրուած են գրեթէ ամէն ինչի հանդէպ: Այս երկու տեսակի մարդիկ ալ չունին տեսիլք. այնպէս որ, խուսափեցէ՛ք անոնցմէ: Գտէ՛ք հօր կամ մօր՝ հաւատքի մէջ, կամ որեւէ իմաստուն մարդ մը, որ աւելի երկար ճանապարհ անցած է, քան դուք, որ սխալներ գործած եւ սորված է ատոնցմէ:

Կարելոր է, որ մարդիկ, որոնց դուք կը վստահիք, չնային կեանքին անտարբերութեամբ կամ անամօթութեամբ եւ լկտի վերաբերմունքով, քանի որ նման արհամարհական եւ կասկածամիտ վերաբերմունքը յատուկ է իրենց ներսը վիրաւորանք պահող մարդոց: Փնտռեցէ՛ք այնպիսի մարդու, որ արագօրէն կը ներէ, որ կանգ չէ առած միատեսակ կրօնական կեանքի մէջ, այլ կը յառաջադիմէ Աստուծոյ Հոգիին ժամանակներու եւ թարմ շարժումներու մէջ: Ամէնէն կարելորդ, այդ մարդը պէտք է նայի կեանքին յաւիտենութեան տեսանկիւնէն: Երբ գտնէք նման մարդու, ըրէք ամէն ինչ, որպէսզի պահպանէք եւ արժեւորէք յարաբերութիւնն անոր հետ:

Կան շատ մարդիկ, որոնք ունին այս աշխարհի իմաստութիւնը, բայց զուրկ են յաւիտենական տեսանկիւնէն: Դուք կրնաք վստահիլ անոնց խորհուրդներուն միայն որոշակի չափով: Զգոյշ եղէք, երբ կը լսէք անոնց, եւ մշտապէս զտեցէք անոնց խորհուրդներն Աստուծոյ Խօսքով եւ աղօթքով:

Ձեր ծնողները, կողակիցը եւ հովիւներն ի սրտէ շահագրգռուած են ձեր բարեկեցութեամբ եւ սովորաբար իմաստուն խորհուրդներ կու տան, թէեւ կ'ըլլան բացառութիւններ: Երբ երիտասարդ էի, կ'ըսէի հօրս, որ կ'երագեմ ծառայող դառնալ: Անոր սերունդը հակուած էր ձգտիլ ապահով կեանքի (ինչ որ թուլութիւն է հաւատքի կեանքի պարագային): Հայրս ըսաւ. «Որդի՛ս, այդ ճանապարհի մէջ չկայ ապահովութիւն»: Ան առաջարկեց ինծի ճարտարագէտ դառնալ, քանի որ ես բարձր յառաջադիմութիւն ունէի թուաբանութենէն եւ բնագիտական առարկաներէն, եւ ինքն ալ 40 տարի ճարտարագէտ աշխատած է: Ատիկա անվտանգ քարիերա (աշխատանքային գործունէութիւն) էր: Ես չէի պատկերացներ, որ կը համաձայնէի վեց թշուառ տարիներու համալսարանին մէջ: Թէեւ օժտուած էի այդ բնագաւառին մէջ, այնուամենայնիւ, դժբախտ կը զգայի, քանի որ Աստուած չէր կանչած ինծի ատոր համար:

Իմ առաջին աշխատանքը՝ որպէս ճարտարագէտ, «IBM» ընկերութեան մէջ էր: Մէկ անգամ տնօրէնս տարաւ ինծի իր գրասենեակ եւ ըսաւ.

- Պիվի՛ր, ինչո՞ւ ճարտարագէտ դարձած ես: Դուն հաղորդակցող մարդ ես. դուն պէտք է զբաղիս այնպիսի գործով, ուր հաղորդակցութիւն կայ մարդոց հետ:

Յայտնի ծառայողները նոյնպէս մէկ կողմ կը տանէին ինծի բազմաթիւ հաւաքոյթներու ժամանակ եւ կ'ըսէին.

- Որդի՛ս, ես կը տեսնեմ, որ քու կեանքին մէջ կանչ կայ Աստուծմէ. դուն պէտք է քարոզես Աւետարանը:

Իմ անձնական աղօթքներու ժամանակ Աստուած շարունակ կը մղէր իմ սիրտը ծառայութեան, թէեւ ես չէի ցանկար որեւէ կապ ունենալ ատոր հետ: Բոլոր ծառայողները, որոնց ես հանդիպած էի, տարօրինակ կը թուէին ինծի: Բայց իմ սիրտը, միեւնոյնն է, զգայուն էր մեր Արարիչի հանդէպ: Իմ փրկուելէն առաջ ես մէկ շաբաթ յաճախած էի կաթոլիկ դպրեվանք, եւ ինծի իսկապէս թուացած էր, թէ կանչուած էի ծառայութեան համար: Բայց ես կը սարսափէի այն մտքէն, որ, դառնալով կաթոլիկ քահանայ՝ երբեք պիտի չամուսնանայի:

Այնուամենայնիւ, ես շարունակ հաստատութիւններ կը ստանայի, ինչ որ ի վերջոյ օգնեց ինծի մէկ կողմ դնելու հօրս խորհուրդը: Ես անչափ կը յարգէի անոր, ինչ որ կը հաճեցնէր Աստուծոյ, բայց իմ ուսման եւ որպէս ճարտարագէտ աշխատելու ընթացքին կը գիտակցէի, որ ինչ որ բան սարսափելիօրէն սխալ էր: Քանի որ շարունակ կը խնդրէի եւ կը փնտռէի Աստուծոյ առաջնորդութիւնը,

Ան թոյլ չտուաւ հետեւիլ սխալ առաջնորդութեան (նոյնիսկ իմ բարի կամեցող հօր խորհուրդին) եւ յստակ յայտնեց իր կամքը:

Երբ ես արդէն համոզուած էի իմ կոչումին մէջ, ներսս յառաջացաւ կրակոտ ցանկութիւն, որ աւելի քան մէկուկէս տարի տեւող որոնումներու արդիւնքն էր: Մնացած էր երեք եռամսեակ՝ իմ ճարտարագիտական կրթութիւնն աւարտելու համար: Ես որոշեցի աւարտել ուսումնս եւ ծառայող դառնալ: Ատիկա ճիշդ որոշում էր, քանի որ ես սորվեցայ այնպիսի մարտավարութիւններ, որոնք ինծի չէր սորվեցներ Աստուածաշնչեան դպրոցը: *Աստուած կ'օգտագործէ բոլոր փորձառութիւնները՝ մեզ կրթելու համար:*

Գոյութիւն ունի ձեր պարգեւը բացայայտելու եւս մէկ անչափ կարեւոր գործօն՝ ըլլալ տնկուած առողջ տեղական եկեղեցիին մէջ: Սուրբ Գիրքը կը յայտարարէ. «Տիրոջ տան մէջ տնկուածները մեր Աստուծոյ սրահներուն մէջ կը բուսնին» (Սաղմոս 92.13): Եթէ բանապակի սերմ ցանէք, հողէն դդում դուրս չի գար: Հողն առողջ տեղական եկեղեցին է, եւ երբ դուք նուիրուիք, Աստուծմէ՛ ձեզի տրուած պարգեւները կ'արտայայտուին հոն: Անկախ այն բանէն՝ դուք կանչուած էք գործարար, կրթական, կառավարական, մարզանքի, թէ այլ ոլորտներու մէջ, դուք ծաղկունք կ'ապրիք: Ատիկա Աստուծոյ ծրագիրն է:

## ՀԱՐՑՈՒՄՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿՐՆԱՔ ՀԱՐՑՆԵՆ ՉԵԶԻ ԵՒ ԻՄԱՍՏՈՒՆ ԸՆԿԵՐՆԵՐՈՒ

Խօսինք հարցումներ տալու մասին՝ թէ՛ դուք ձեզի, թէ՛ իմաստուն ընկերներու: Ըիշդ մարդոց տրուած ճիշդ հարցումները կ'օգնեն ձեզի հասկնալու, թէ ինչով դուք օժտուած էք: Ահա որոշ օրինակներ:

Ի՞նչը բնականօրէն լաւ կը յաջողի ձեր քով

Ասիկա լաւ սկզբնակէտ է: Թերեւս ձեր պարգեւը թիւերու աշխարհն է, պերճախօս կերպով նախադասութիւններ կառուցելը, շինարարութիւնը, տեսահոլովակներ ստեղծելը, հագուստ ձեւաւորելը կամ միջոցառումներ կազմակերպելը: Թերեւս դուք ունիք բնական մարզական կարողութիւններ, բոյրեր տարբերող նուրբ հոտառութիւն կամ մանրութիւններ նկատող սուր աչք: Ինչպիսի ուժեղ կողմեր ալ ունենաք, բացայայտեցէ՛ք ատոնք:

Եթէ դուք երաժշտական լսողութիւն ունիք եւ կը ցանկաք առաջնորդել մարդոց Աստուծոյ ներկայութեան մէջ, ատիկա կրնայ նշանակել, որ թերեւս կանչուած էք երկրպագելու համար կամ պէտք է ներգրաւուած ըլլաք որեւէ երաժշտական ծառայութեան մէջ: Նոյնպէս,

եթէ հետաքրքրուած էք բժշկութեամբ, դուք պէտք է հարցնէք Աստուծոյ, թէ արդեօ՞ք կանչուած էք առողջապահութեան բնագաւառին մէջ: Այս ցուցակն անվերջ է:

Բայց այս կռահումները պէտք չէ վերջին խօսքն ըլլան ձեզի համար: Ես շատ լաւ թենիսիստ էի: Ես սկսայ թենիս խաղալ խումբի մը մէջ, որ Միացեալ Նահանգներու «Ուսանողական մարզածեւերու ազգային միութեան» Առաջին բաժնի կազմին մէջ էր: Ես նաեւ մասնակցած եմ «Միացեալ Նահանգներու թենիսի միութեան» եւ «Պատանեկան Տեվիսի բաժակի» մրցաշարքերուն: Ինչպէս արդէն նշեցի, երեք տարի թենիսի փրոֆեսիոնալ մարզիչ էի: Բացի այդ, ես յաղթած էի Արեւմտեան Վիրժինիա նահանգի բարձր դասարանցիներու թենիսի մրցաշարքը: Բայց երբ կ'աղօթէի, ես գիտէի, որ իմ կոչումը փրոֆեսիոնալ թենիսը չէր:

Սակայն ես ընկեր մը ունիմ, որուն անունը Ահարոն Պետլի է: Ան ակնառու կոլֆ խաղցող է եւ կը մասնակցի «Փրոֆեսիոնալ կոլֆ խաղցողներու ընկերակցութեան» մրցաշարքին: Բայց 2004 թուականին, երբ տակաւին երկրորդ տարին էր, ինչ որ ան այդ մրցաշարքին էր, բախած էր դժուարութիւններու (ան հագիւ կրցաւ կրկին որակաւորում ստանալ եւ վերադառնալ 2005 թուականին, քանի որ յայտնուած էր այդ մրցաշարքի ցուցակի 124-րդ տեղը): Երբ անոր դժուար տարին կը մօտենար աւարտին, ան որոշ ժամանակ մեր տունն էր՝ այլ մրցաշարքի մէջ խաղալու ընթացքին, որմէ, ցաւօք, դուրս մնաց: Մենք միասին օդանաւով ուղեւորուեցանք Լաս Վեկաս, ուր ես պէտք է քարոզէի համաժողովի մը մէջ: Այդ ծառայութեան Աստուած չորս անգամ խօսեցաւ անոր սրտի հետ. «Ես չեմ կանչած քեզ ծառայութեան մէջ. Ես կանչած եմ քեզ կոլֆի մէջ»:

Ահարոնը չէր ներդրած իր բոլոր ուժերը կոլֆի մէջ, քանի որ կը ցանկար զբաղիլ նոյն բանով, ինչով որ ես կը զբաղէի: Ան կը ցանկար օգտագործել իր ժամանակի կէսը, որպէսզի ճանապարհորդէր եւ քարոզէր համաժողովներուն եւ եկեղեցիներուն մէջ, եւ միւս կէսը, որպէսզի կոլֆ խաղար: Այդ երեկոյ ան յստակ որոշեց իր սրտին մէջ, որ բոլորովին պիտի տրուի իր կոչումին եւ պարգեւին: Երկու տարի յետոյ ան արդէն 16-րդ տեղն էր կոլֆ խաղցողներու համաշխարհային վարկանիշային աղիւսակին մէջ, իսկ հետագային ան չորս անգամ յաղթեց «փրոֆեսիոնալ կոլֆ խաղցողներու ընկերակցութեան» մրցաշարքը, ինչպէս նաեւ «Աւստրալիան մասթրըզ» մրցաշարքը: Ան 15 տարիէն աւելի է, որ կը մասնակցի մրցաշարքերու եւ տակաւին կը շարունակէ խաղալ: Անոր ազդեցութիւնը մեծցած է, եւ ան ունեցած է

անթիւ հնարաւորութիւններ ծառայելու եւ քարոզելու անոնց, որոնք ոչ մէկ եկեղեցի կը յաճախեն:

Ես Ալ անունով հովիւ ընկեր մը ունիմ: Տարիներ առաջ անոր եկեղեցիին մէջ կար մարդ մը, որ կը սիրէր սորվեցնել Աստուծոյ Խօսքը եւ շատ հմուտ էր ասոր մէջ: Ան կը ցանկար աշխատիլ եկեղեցիին մէջ՝ որպէս հովիւ եւ ուսուցիչ: Ան նոյնպէս եզակիօրէն օժտուած էր ինքնաշարժներ նորոգելու մէջ: Իրենց քաղաքի միւս մասը գտնուող մեծ եկեղեցի մը հովուական եւ ուսուցչական պաշտօն խոստացաւ անոր: Ան հրաւիրեց ճաշի հովիւ Ալին՝ անոր այդ մասին պատմելու համար: Ալն իմաստուն անձնաւորութիւն է, եւ ան ըսաւ այդ մարդուն.

- Ես աղօթած եմ քեզի համար եւ չեմ գգար, որ դուն կանչուած ես սորվեցնելու Աստուծոյ Խօսքը լրիւ դրոյքով: Դուն ինքնաշարժներու հետ աշխատելու բացառիկ տաղանդ ունիս:

Այդ մարդը չլսեց իր հովիւի խորհուրդը եւ գնաց այդ եկեղեցին:

Մէկ տարի յետոյ ան կը յայտնուի թշուառ վիճակի մէջ: Անոր տակաւին պաշտօնապէս չէին առաջարկած այդ ուսուցչական աշխատանքը, եւ ան յայտնուած էր լուրջ ամուսնական եւ ֆինանսական խնդիրներու մէջ: Կիրակի մը եկեղեցւոյ մէջ Տէրը խօսեցաւ անոր հետ. «Ես երբեք չէի կանչած քեզի հովիւ ըլլալու համար: Ես կանչած էի քեզի՝ որպէս արհեստավարժ մեքենագէտ, որ կը սորվեցնէր Աստուծոյ Խօսքը իր տեղական եկեղեցւոյ մէջ»:

Այդ մարդը գնաց հովիւ Ալին քով, ապաշխարեց՝ անոր խորհուրդին չհետեւելու համար, եւ վերադարձաւ իր տեղական եկեղեցին: Ան կրկին կեդրոնացաւ ինքնաշարժներ նորոգելու իր աշխատանքին վրայ:

Երեկոյ մը Աստուած երազ տուաւ անոր այն մասին, որ կարելի է միացնել համակարգիչը ինքնաշարժին՝ շարժիչի խնդիրները ախտորոշելու համար: Ան ընկեր մը ունէր, որ կը հասկնար համակարգիչներէն, եւ երկուքով համակարգչային ախտորոշման ստուգիչ սարք ստեղծեցին: Պարզուեցաւ, որ այդ ստուգիչ սարքը կրնայ որոշել ինքնաշարժի խնդիրները սովորական մեթոտներէն չորս անգամ արագ: Ժամանակի ընթացքին այդ մարդն ինքնաշարժ նորոգելու կէտեր բացաւ ամբողջ Հիւսիսային Քարօլինա նահանգին մէջ՝ իր նոր գիւտին շնորհիւ: Օր մը ան մօտեցաւ հովիւ Ալին, ժպտաց եւ ըսաւ.

- Ես կանչուած եմ ինքնաշարժներ նորոգելու համար:

Ի՞նչը առոյգութիւն կը հաղորդէ ձեզի

Օր մը իմ օգնականը խնդրեց ինձմէ արձանագրել իմ սովորական աշխատանքային շաբթուան պարտականութիւններու «առոյգութեան չափը»: Ան առաջարկեց հետեւեալ սանդղակը. այն



առաջադրանքները, որոնք կը խլէին իմ ուժերը, պիտի գնահատուէին -2-ով. այն առաջադրանքները, որոնք բոլորովին չէին խլեր իմ ուժերը, պիտի գնահատուէին -1-ով. այն առաջադրանքները, որոնք քիչ մը առոյգութիւն կը հաղորդէին ինծի, պիտի գնահատուէին 1-ով, եւ, ի վերջոյ, այն առաջադրանքները, որոնք մեծ առոյգութիւն կը հաղորդէին ինծի, պիտի գնահատուէին 2-ով:

Կային քանի մը առաջադրանքներ, օրինակ՝ հանդիպումները ծառայութեան բաժիններու հետ, ուղեւորութիւնները, թղթաբանութիւնը, ճամպորկ հաւաքելը՝ ճանապարհորդելու համար, եւ այն ամէնը, որոնք գնահատուեցան -2-ով եւ -1-ով: Իսկ որոշ առաջադրանքներ գնահատուեցան +1-ով, բայց ես անկեղծօրէն +2-ով գնահատեցի միայն երկու բան՝ քարոզելը եւ գրելը: Արդիւնքները զարմացուցին ինծի:

Մտորելով այս բացայայտումներու շուրջ, ես հասկցայ, որ յաճախ, երբ կը գրեմ, ես բոլորովին կը կորսնցնեմ ժամանակի զգացողութիւնը: Երբեմն կը սկսիմ գրել վաղ առաւօտեան եւ չեմ հասկնար, որ արդէն ցերեկ է: Սովորաբար ես մտովի կը յոգնիմ այդքան շատ գրելէն յետոյ, բայց նաեւ առոյգ եմ:

Նոյնը տեղի կ'ունենայ, երբ կը քարոզեմ: Անցեալին, երբ մենք չունէինք ժամանակային սահմանափակումներ, ես յաճախ կը քարոզէի աւելի քան երկու ժամ: Ինծի համար ատիկա կարծես 30 վայրկեան ըլլար, բայց չեմ գիտեր, թէ ինչ կը մտածէր իմ լսարանը:

Ես կը հետեւիմ, թէ ինչպէս Ալեքը՝ մեր ստեղծարար որդին, ժամեր շարունակ կ'աշխատէր նորարարական նախագիծերու վրայ՝ բոլորովին կորսնցնելով ժամանակի զգացողութիւնը: Ան գերազանց արդիւնքներու հասած է մեր ծառայութեան ստեղծարար բաժինին մէջ: Ես կը հետեւիմ, թէ ինչպէս Լիզան ժամեր շարունակ կը հաղորդակցի կիներուն հետ հաւաքոյթներէն յետոյ՝ բոլորովին մոռնալով ժամանակի մասին: Ան կ'առոյգանայ, երբ կ'օգնէ եւ կը վերականգնէ անոնց՝ գրոյցներու միջոցով:

Երբեմն Ալպերթ Այնշթայնը կ'աշխատէր ժամեր շարունակ: Երբ ան ուժգին յոգնածութիւն կը զգար, կը վերցնէր մետաղեայ սկուտեղ մը եւ կը նստէր աթոռին՝ պահելով այն ձեռքերով եւ յենելով ձեռքերն իր ծունկերուն: Երբ խոր քուն կը մտնէր, սկուտեղը կը սահէր անոր ձեռքերէն եւ կ'իյնար յատակին: Բարձր շրխկոցը կ'արթնցնէր անոր, եւ ան կը վերադառնար աշխատանքի:

Ասիկա շատ դիրին միջոց է՝ ձեր կոչումը որոշելու համար: Ձեր իրական պարգեւները կ'ոգեշնչեն ձեզ, նոյնիսկ եթէ դուք մտովի կամ ֆիզիքապէս յոգնիք երկարատեւ աշխատանքէն: Այն մարդոց համար,

որոնք բացայայտած են իրենց իրական պարգևը, մարգուններու, մրցման կամ աշխատանքի ժամերը կրնան վայրկեաններ թուիլ: Այնպէս որ, հարցուցէք ձեզի. «Ի՞նչն առոյգութիւն կը հաղորդէ ինձի եւ պարբերաբար կըդորդէ կորսնցնելու ժամանակի զգացողութիւնը»:

Ձեր պատասխանը հաւաստի ցուցիչ է ձեր պարգևի մասին:

### Ի՞նչը կը գրաւէ ձեզ

Ի՞նչը կը գրաւէ ձեր ուշադրութիւնը: Ի՞նչը կ'աշխուժացնէ ձեզ: Երբ դուք կ'երգէք, ձեր սիրտն ուրա՞խ է: Դուք կ'երգէ՞ք, երբ ոչ ոք կ'ուզէ երգել: Ես գիտեմ, որ երբ ես կ'երգեմ, ատիկա նման է ծանր աշխատանքի, որ արագ կը յոգնեցնէ ինձի: Ատիկա իմ պարգևը չէ: Ես չեմ կրնար նստիլ սենեակի մը մէջ եւ երգ կամ երաժշտութիւն գրել այլ մարդոց հետ: Ատիկա չի հետաքրքրեր ինձի, բայց ես կը ճանչնամ մարդոց, որոնք կը սիրեն ատիկա:

Ի՞նչ տեսակի ամսագրեր կը հետաքրքրեն ձեզի: Ի՞նչ տեսանիւթերէն դուք կ'ոգեշնչուիք «Եռութուպ»-ի մէջ: Ի՞նչը կը գրաւէ ձեր ուշադրութիւնը, երբ «Փինթերեսթ»-ի մէջ էք: Ո՞ր առարկաները դուք ամէնէն շատ կը սիրէք դպրոցին մէջ: Ի՞նչ գիրքեր կը գրաւեն ձեզ, երբ գրախանութ կ'երթաք:

Եւս կարելոր հարցում մը. ի՞նչ կը ցանկայիք ընել, նոյնիսկ եթէ իմանայիք, որ ձեզի պիտի չվճարեն ատոր համար: Փրոֆեսիոնալ մարզիկներէն շատերը կը մրցէին իրենց մարզածելին մէջ, նոյնիսկ եթէ անոնց վճարէին: Ամէն շաբաթ առաւօտեան հայրս կը նստեցնէր ինձի եւ կը պատմէր, թէ ինչպէս կ'աշխատէր շոգեշարժիչը կամ որեւէ այլ սարք: Կը յիշեմ, որ շաբաթ մը առաւօտեան ան շոգեկաթսայ պատկերեց եւ աւելի քան մէկ ժամ բացատրեց ատոր աշխատանքի ձեւը: Ես լալու չափ ծանծրացած էի: Արդէն այդ ժամանակ ես պէտք է հասկնայի, որ ճարտարագէտ ըլլալը իմ կոչումը չէր: Ես այնքա՛ն կը սիրէի հօրս, որ չէի համարձակեր ըսել անոր, որ չէի կրնար դիմանալ այդ դասերուն: Ես մեծ սխալ գործեցի, երբ ճարտարագէտ դարձայ՝ ֆինանսական ապահովութիւն ունենալու համար: Մի՛ գործէք նոյն սխալը:

Որքա՛ն մարդիկ դժբախտ են իրենց աշխատանքի մէջ, քանի որ կը կատարեն այն մէկ պատճառով՝ աշխատավարձը ստանալու համար:

Ինչպէս արդէն նշեցի, տարիներ առաջ, երբ իմ հովիւի կիները ըսաւ, որ անոնք չեն կրնար պատշաճ կերպով վարձատրել ինձի, ես պատասխանեցի. «Միեւնոյնն է՝ ես համաձայն եմ»: Ես պատրաստ էի աշխատելու սովորականէն ցած վարձատրութեամբ, քանի որ

ինձի կը գրաւէր այդ ծառայութիւնը: Երբ ստացայ այդ աշխատանքը, որուն ընթացքին ես կը ծառայէի իմ հովիւներուն եւ անոնց հիւրերուն, շաբաթական 70 ժամը կը թէր: Ես յաճախ կ'ըսէի Լիզային, որ ոչ թէ իմ հովիւները պէտք է վճարէին ինձի, այլ ինքս պէտք է վճարէի անոնց այն բանին համար, որ առիթ կու տային ինձի ծառայել իրենց:

Ես կը վարանիմ՝ գրելով այս մասին, քանի որ դուք կրնաք մտածել, որ կը պարծենամ, սակայն յոյսով եմ, որ պիտի հաւատաք, որ իմ շարժառիթն անոնց օգնելն էր: Երբ մենք նոր սկսանք մեր ծառայութիւնը, Լիզան եւ ես որոշեցինք, որ իմ գիրքերու վաճառքի գրավարձքերը պիտի փոխանցուին «Մետինձըր Ինթերնեշնըլ» ծառայութեանը: Այժմ ես գրած եմ աւելի քան 20 գիրք եւ իւրաքանչիւրին տրամադրած եմ միջինը 400-450 ժամ՝ գրելու եւ խմբագրելու համար: Ասիկա կը նշանակէ, որ գրելու մէջ ես ներդրած եմ 9.000 ժամ: Ասիկա հաւասար է աւելի քան երեք տարի շարունակ, օրական ութ ժամ գրելուն՝ ներառեալ Շաբաթ եւ Կիրակի օրերը: Ես ըրած եմ ասիկա, քանի որ ասիկա իմ պարգեւն է, որ կ'ընդլայնէ իմ կոչումը:

Կրնամ անկեղծօրէն ըսել, որ եթէ ես ընտրէի՝ կատարե՞լ այս աշխատանքը, թէ՞ ստանալ տարեկան 200.000 տոլար՝ աշխատելով որպէս ճարտարագէտ, ես կրկին կ'ընէի նոյնը՝ առանց մէկ վայրկեան մտածելու: Ահա թէ ինչու Պօղոս առաքեալը կը գրէ.

«Ինձի վստահուած է Աւետարանի տնտեսութիւնը, անկախ այն բանէն՝ ես կը վճարե՞մ ատոր համար, թէ՞ ոչ: Ուրեմն, ինչի՞ մէջ է իմ վարձատրութիւնը: Այն ամէն ինչի մէջ, որ շարունակ կ'աւանդեմ Բարի լուրը մարդոց սրտերուն մէջ՝ առանց պարտաւորութեան, անվճար եւ չպահանջելով ֆինանսական աջակցութիւն ստանալու իմ իրաւունքները» (Ա. Կորնթացիս 9.17,18, TPT):

### **Ինչպիսի՞ մարդիկ կը գրաւեն ձեզ**

Հասկնալով, թէ ինչպիսի մարդիկ կը գրաւեն ձեզ, դուք շատ բացայայտումներ կ'ընէք ձեր կոչումին եւ պարգեւներու մասին: Մարդիկ կրնան արթնցնել ձեր պարգեւները եւ սորվեցնել ձեզի օգտագործել ատոնք: Գիտէք իւրայիններու՝ այնպիսի մարդիկ, որոնք ունին նման պարգեւներ եւ կոչումներ: Այդ մարդիկ մեծ դեր կը խաղան ձեր կեանքին մէջ՝ օգնելով ձեզի հասկնալ, թէ ով էք դուք եւ ինչ պարգեւներով Աստուած օժտած է ձեզի: Իւրայինները մարդիկ են, որոնք կ'ընդունին եւ կը հասկնան ձեզի:

Ինձի հաճելի կը թուի այլ ծառայողներու հետ խօսիլ ծառայութեան

արկածներու եւ դժուարութիւններու մասին եւ, անշուշտ, գրուցել Աստուծոյ խօսքին շուրջ: Ինծի նոյնպէս հաճելի կը թուի հանդիպիլ ձեռնարկատէրերու եւ գործարարներու հետ: Այս ոլորտները իմ զօրաւոր կողմերն են:

Ծառայողական կազմակերպութիւն ղեկավարելը շատ առումներով նման է ձեռնարկութիւն ղեկավարելուն: Լիզան եւ ես ստիպուած էինք ձեռնարկատէրեր ըլլալ: Երբ մենք երիտասարդ էինք, յայտնի ծառայութիւններէն ոչ մէկը կը գործէր այնպէս, ինչպէս մենք կը ցանկայինք գործել. չկար այնպիսի ծառայութիւն, որուն օրինակին մենք կրնայինք հետեւիլ: Մենք պէտք է նոր արահետ բանայինք: Այդ իսկ պատճառով, գործարար աշխարհի մարդիկ մշտապէս արթնցուցած են իմ մէջ այնպիսի բաներ, որոնք օգնած են ինծի աւելի հմտօրէն կատարելու այն աշխատանքը, որուն համար մենք կանչուած ենք:

Եթէ դուք հետաքրքրուած էք ներքին ձեւաւորումով, ձեզի յարմարաւէտ պիտի զգաք այլ ձեւաւորող-տիզայնըրներու հետ: Եթէ դուք բժիշկ էք, պիտի ոգեւորուիք՝ հաղորդակցելով այլ բժիշկներու հետ: Եթէ դուք երաժիշտ էք, այլ երաժիշտները պիտի օգնեն ձեզի բորբոքելու ձեր պարզելը: Ես կրնամ անդադար շարունակել. իւրայիններ գտնելը պիտի օգնէ ձեզի ճանչնալու եւ նոյնիսկ բացայայտելու ձեր պարզելները:

Կրկին, կարելոր է յիշել, որ այս հարցումներու պատասխաններէն ոչ մէկը կրնայ ինքնին որոշիչ դառնալ, եթէ դուք ժամանակ չտրամադրէք Աստուծոյ, որպէսզի փնտռէք Անոր եւ իմանաք, թէ ինչի համար Ան կանչած է ձեզ: Եթէ ես լսէի այն ծառայողներու մեծամասնութեանը, որոնք կը խրատէին ինծի իմ հոգեւոր կազմաւորման տարիներուն, ես ինչ որ քաղաք կ'երթայի եւ եկեղեցի կը սկսէի՝ դառնալով հովիւ: Շատ քիչերը յստակօրէն կը տեսնէին այն եզակի կոչումները եւ պարզելները, որոնք կային Լիզայի եւ իմ կեանքին մէջ: Միւս կողմէն, կային քանի մը իմաստուն ծառայողներ, որոնք օգնեցին ձեզի շարժելու այն ուղղութեամբ, որ մենք կը զգայինք մեր սրտին մէջ:

## ԶԱՐԳԱՑՈՒՑԷՔ ԶԵՐ ՊԱՐԳԵԻՆ

Այժմ ուշադրութիւն դարձնենք մեր բացումի խօսքի երկրորդ կիսուն. «Ձեզմէ իւրաքանչիւրը պէտք է պատասխանատուութիւն ստանձնէ՝ ձեր կեանքին մէջ հնարաւորինս լաւագոյն ստեղծարար աշխատանք կատարելու համար» (Գաղատացիս 6.5, MSG): Աստուած տուած է իւրաքանչիւրիս ներուժ, որ կ'օգնէ կառուցել թէ՛ մեր կեանքը, թէ՛ Իր Թագաւորութիւնը: Այնուամենայնիւ, կու գայ պահ մը, երբ բոլորս

ստիպուած ենք առերեսուիլ այն փաստի հետ, որ պարզապէս ներուժ ունենալը բաւական չէ. այն պէտք է իրագործուի:

Որքան ցաւալի պիտի ըլլայ հասնիլ մեր կեանքի աւարտին եւ գիտակցիլ, որ մեր մէջ տակաւին շատ բաներ մնացած են, որոնք չեն իրագործուած: Դատաստանի գահի առջեւ զոյժման ցաւն անտանելի պիտի ըլլայ, երբ իմանանք, թէ որքան բաներ տեղի չունեցան մեր կեանքին մէջ, եւ ամենավատը՝ թէ որքան մարդիկ այդպէս ալ չկրեցին Աստուծոյ Թագաւորութեան ազդեցութիւնը, քանի որ մենք անփութօրէն վերաբերուեցանք Աստուծմէ մեզի վստահուած պարգեւներուն եւ չզարգացուցինք ատոնք:

*Ճիշդ հիմա որոշում կայացուցիք, որ պիտի մահանաք դատարկ՝ ոչինչ պահելով ձեր մէջ:* Որոշում կայացուցիք, որ դուրս բերէք այն ամէնը, ինչ որ ձեր մէջ է, մինչեւ որ դատարկուիք: Այս աշխարհին պէտք է այն, ինչ որ ունիք՝ Աստուծմէ ձեզի տրուած պարգեւները:

Առակաց 18.16-ին մէջ գրուած է հետաքրքրական միտք մը Աստուծմէ մեզի տրուած պարգեւներու մասին.

«Մարդու պարգեւը տեղ կը բանայ անոր համար եւ կը բերէ անոր կարելոր մարդոց առջեւ» (NKJV):

Ձեր պարգեւը «տեղ կը բանայ» ձեզի համար եւ կը բերէ ձեզի «կարելոր մարդոց» առջեւ: «Տեղ բանալը» կը նշանակէ «տարածութիւն ստեղծել»: Այն «տարածութիւնը», որ մենք նկատի ունինք, երկակի իմաստ ունի: Առաջինը՝ ձեր պարգեւը տեղ կը բանայ, որ իրագործէք ձեր ներուժը եւ տեղափոխուիք հոնկէ, *ուր կը գտնուիք*, հոն, *ուր դուք կրնաք ըլլալ*: Երկրորդը՝ ձեր պարգեւը տեղ կը բանայ, որպէսզի դուք յառաջխաղացում ստանաք դէպի ձեր կոչման նորանոր մակարդակներ: Մտապահեցէք, որ իւրաքանչիւր յառաջխաղացման համար կը պահանջուին աւելի մեծ հմտութիւններ: Կրկին, Սողոմոնը կը գրէ.

«Եթէ դուք եզակիօրէն օժտուած էք ձեր գործին մէջ, դուք կը բարձրանաք եւ յառաջխաղացում կը ստանաք: Ձեզ ետ չեն պահեր» (Առակաց 22.29, TPT):

Մտածեցէ՛ք Դաւիթի մասին: Առաջին Թագաւորաց 16-րդ գլուխին մէջ գրուած է պատմութիւն մը այն մասին, որ Սաուլը թագաւորը կը չարչարուէր չար հոգիէն, քանի որ Տիրոջ Հոգին հեռացած էր անորմէ: Յուսահատօրէն ձգտելով թեթեւութիւն ստանալ՝ Սաուլը պատուիրեց

իր ծառաներուն երաժիշտ մը գտնել եւ բերել իրեն քով:

Անոր երիտասարդ ծառաներէն մէկը պատասխանեց. «Ես տեսած եմ Յեսսէի որդիներէն մէկուն Բեթլեհէմի մէջ, որ *հմտօրէն* կը նուագէ» (Ա. Թագաւորաց 16.18, AMPC): Դաւիթը ոչ միայն *օժտուած* երաժիշտ էր, այլեւ *հմուտ* էր: Ի՞նչը *հմուտ* դարձուցած էր անոր: Ան զարգացուցած էր իր պարգելը եւ այդ պատճառով տեղ բացուած էր կամ հնարաւորութիւն ստեղծուած էր, որպէսզի ան յառաջանար իր կոչումին մէջ:

Հնարաւոր է, որ շատերը չունին յառաջխաղացում իրենց կոչումին մէջ, քանի որ բաւականաչափ չեն զարգացուցած իրենց պարգելները: Հնարաւոր է, որ մեր պարգելներու զարգացուածութեան չափը կ'որոշէ, թէ որքանով մենք *կրնանք* յառաջխաղացում ստանալ:

Վերադառնանք Տիմոթէոսին ուղղուած Պօղոսի խօսքերուն՝ մեր նախորդ գլուխէն: Բայց այս անգամ մենք կը շարունակենք՝ դիտարկելով այն լուծումը, որ ան առաջարկեց իր հոգեւոր որդիին.

«Մի՛ անտեսեր այն պարգելը, որ քու մէջ է [այն յատուկ ներքին օժտուածութիւնը], որ փոխանցուեցաւ անմիջապէս քեզի... *Վարժուի՛ր* այս պարտականութիւններու մէջ եւ *զարգացո՛ւր* ատոնք եւ *մտորէ՛* ատոնց շուրջ. *բոլորովին տրուի՛ր ատոնց* [որպէս քու ծառայութիւն], որպէսզի քու *յառաջադիմութիւնն* *ակնյայտ ըլլայ* բոլորին» (Ա. Տիմոթէոս 4.14,15, AMPC):

Այնքան բան կարելի է սորվիլ այս իմաստուն խօսքերէն: Մենք կը նայինք այն տղամարդոց եւ կանանց, որոնք գերազանցութեան կը հասնին իրենց ոլորտներուն մէջ: Երբեմն դիւրին է արժեզրկել անոնց յաջողութիւնը՝ ըսելով. «Անոնք ծնած են յատուկ պարգելով»: Այո՛, անոնք, ինչպէս եւ դուք, իսկապէս ծնած են յատուկ պարգելով եւ որոշած են զարգացնել այն: Ուրիշ ձեւով ըսելու համար, թէկուզ մենք չենք տեսած, թէ ինչպէս անոնք կատարելագործած են իրենց պարգելը, չի նշանակեր, որ անոնք քրտնաջան չեն աշխատած ատոր վրայ:

Ինչպէս որ նշեցի նախորդ գլուխին մէջ, Պօղոսը կը սկսի՝ զգուշացնելով Տիմոթէոսին, որ չանտեսէ Աստուծէ՛ն իրեն տրուած պարգելը: Մենք կ'անտեսենք մեր պարգելը, երբ անուշադրութեան կը մատնենք այն: Պօղոսը կը գրէ Տիմոթէոսին, որ անոր յառաջադիմութիւնը ակնյայտ կ'ըլլայ բոլորին համար, եթէ ան բոլորովին ներդնէ իր կեանքը իր պարգելը զարգացնելու մէջ, ինչ որ, Պօղոսի խօսքերով, կը կատարուի *վարժուելու*, *զարգանալու* եւ *մտորելու* միջոցով: Եկէք հակիրճ քննարկենք այս երեքէն իւրաքանչիւրը:

## Վարժուիլ

Վարժուիլ կը նշանակէ «կրկնողաբար որեւէ գործողութիւն կամ աշխատանք կատարել՝ հմուտ դառնալու համար»՝ ըստ «Մերիամ-Ուեպսթրը» բառարանի: Մեր հմտութիւնը կ'որոշէ մեր հրապարակային գործունէութեան մակարդակը, քանի որ մենք մշտապէս կը գործենք այն մակարդակով, որուն վարժուած ենք: Դիւրին է տպաւորուիլ ազդեցիկ կատարումով, բայց եւ անտեսել շաբաթներ, ամիսներ եւ տարիներ տեսող մարզումները եւ քրտնաջան աշխատանքը, որ մարդուն հասցուցած է նման բարձր մակարդակի:

Համաձայն մարդու վարքի եւ գործունէութեան մասնագէտներու, անհրաժեշտ է վարժուիլ մօտաւորապէս 10.000 ժամ՝ որեւէ գործին մէջ հմտանալու կամ այն իւրացնելու համար: Այնուամենայնիւ, Ֆլորիտայի պետական համալսարանի փրոֆեսոր Բ. Անտերս Էրիքսընը կը վիճարկէ աւանդական համոզումներն այն մասին, որ «վարժութիւնը կը կատարելագործէ»: Այս փրոֆեսորը մէկ քայլ առաջ կ'երթայ՝ ցոյց տալով, որ 10.000 ժամ վարժուիլը բաւական չէ, եթէ այդ ժամեր տեսող վարժութիւնները կը կատարուին ոչ թէ հմտութիւնները բարելաւելու կեդրոնացուած մտադրութեամբ, այլ, պարզապէս, անհրաժեշտ շարժումներ կատարելով: Ան կ'անուանէ այս տեսակի վարժութիւնը «նպատակաւորուած վարժութիւն»: Ան կը գրէ.

«Ես կը ներկայացնեմ նպատակաւորուած վարժութիւնը՝ երկու խօսքով. դուրս եկէք ձեր յարմարաւէտութեան գօտիէն, սակայն ըրէք ատիկա կեդրոնացուած՝ ունենալով պարզ նպատակներ, այդ նպատակներուն հասնելու ծրագիր եւ ձեր առաջընթացը վերահսկելու միջոց»:

Մինչեւ մեզ դուրս չհրենք մեր յարմարաւէտութեան գօտիէն եւ հմտութիւններու ներկայ մակարդակէն, մենք այդպէս ալ աճ չենք ունենար: Եթէ մենք նպատակաւորուած չըլլանք, կայ վտանգ, որ երբ հասնինք այնպիսի մակարդակի, որ կը գոհացնէ մեզ, մենք դիւրաբար ինքնաբաւ կը դառնանք: Ատկէ յետոյ ընդամենը ժամանակի հարց է, թէ երբ կը սկսինք անփութօրէն կատարել մեր գործը, ինչ որ, ի վերջոյ, բացասաբար կ'ազդէ մեր աշխատանքի որակին վրայ եւ կը խոչընդոտէ հետագայ բազմապատկմանը:

Ձեր ուժեղ կողմերը զարգացնելը ազատութիւն կու տայ ձեզի, ոչ թէ կը սահմանափակէ: Ատոր շնորհիւ կ'աւելնայ ձեր բազմապատկման ներուժը: Ատիկա չի նշանակեր, որ մենք չենք աշխատիր մեր թոյլ կողմերու վրայ եւ նոր հմտութիւններ ձեռք չենք բերեր, այլ՝ որ մենք

Կեդրոնացած ենք եւ կը ներդնենք այն բնագաւառներուն մէջ, որոնց շնորհիւ մեր ներուժն առաւելագոյն արդիւնք կու տայ:

Ես կ'առաջարկեմ սորվիլ նոր հմտութիւններ, բայց ոչ մէկ պարագային ընել աստիկա ձեր կոչման հետ առնչուող բնագաւառները զարգացնելու հաշւոյն:

Գլխաւոր գաղափարն այն է, որ աճն ինքնաբերաբար տեղի չ'ունենար. այն կը պահանջէ դիտաւորութիւն: Եթէ մենք շարունակ չվարժուինք, որպէսզի «հմուտ» դառնանք մեր պարգեւներու մէջ, երբեք չենք գործեր մեր ամբողջական ներուժով: Ահա թէ ինչու մենք պէտք է մշտապէս զբաղինք մեր անձնական աճով: Մարդոց մեծ մասը կը ցանկայ մեծ գործեր կատարել կեանքին մէջ: Այնուամենայնիւ, ոչ բոլորը պատրաստ են կատարելու այն աշխատանքը, որն անհրաժեշտ է՝ մեծութեան հասնելու համար: Վարժուելով՝ մենք կը վճարենք այն գինը, որ մեծ արդիւնքներ կու տայ:

## Ձարգանալ

Վարժուիլը գործնական բնոյթ կը կրէ, իսկ զարգանալը՝ աւելի ուսումնական: «Ձարգանալ» բառը կը նշանակէ «յառաջադիմել կամ կատարելագործուիլ՝ ուսանելու կամ մարզուելու միջոցով. նպաստել աճին եւ յառաջադիմութեան»:

*Ձարգացումն* անմիջականօրէն կ'առնչուի աշակերտութեան հետ: Աշակերտութիւնն անչափ կարելոր է ձեր անձնական աճի եւ յառաջադիմութեան համար, քանի որ ատոր միջոցով դուք կը ստանաք կառուցողական քննադատութիւն եւ առաջնորդութիւն, որ անձնապէս չէք կրնար ձեռք ձգել: Իւրաքանչիւրը, որ գերազանցութեան հասած է իր պարգեւներու մէջ, աշակերտութիւն եւ առաջնորդութիւն ստացած է իր կեանքի տարբեր փուլերուն մէջ: Ձեր կեանքի ուսուցիչներու հրաշալի կողմն այն է, որ անոնք կը տեսնեն ձեր ներուժը եւ կը ձգտին դուրս բերել այն ձեզմէ, նոյնիսկ եթէ ատոր համար երբեմն անհրաժեշտ է խիստ վարուիլ ձեզի հետ:

Պուք կրնաք աշակերտութիւն ստանալ խորհրդատու-խնամակալ, հայր-երեխայ, մայր-երեխայ, ուսուցիչ-աշակերտ յարաբերութիւններէն, հրահանգաւորման, գործնականի եւ աշխատափորձ ձեռք բերելու միջոցով, ինչպէս նաեւ ոչ ուղղակի կերպով՝ գիրքերէն, դասընթացքներէն եւ նիւթերէն, որոնք առատօրէն հասանելի են մեզի:

Ձեր պարգեւներու ոլորտին մէջ կրթուելու եւս մէկ միջոց է պարբերաբար հաւաքուիլ այն մարդոց հետ, որոնք նման պարգեւներ ունին: Կրկին, ինչպէս արդէն նշեցի, ասիկա յաճախ կ'անուանեն



«գտնել իւրայիններու»: Երբ դուք նման տաղանդներ եւ ձգտումներ ունեցող մարդոց հետ էք, դուք համագործակցելու եւ համատեղ ստեղծագործելու հնարաւորութիւն կը ստանաք:

1930-ական եւ 40-ական թուականներուն խումբ մը ստեղծարար գրողներ, որոնք յայտնի էին «Ինքլինկներ» անունով, կը հանդիպէին Օքսֆորտի համալսարանի տարածքին քով գտնուող գինետան մը առանձին սենեակին մէջ: Այդ գրականութեան սիրահարներու կարգին էին Ք.Ս. Լուիսը եւ Ժ.Ռ.Ռ. Թոլքինը: Այդ հանդիպումներու նպատակն էր կարդալ եւ քննադատել խումբի անդամներու անաւարտ գիրքերը: Այդ հանդիպումները ոգեշնչեցին Թոլքինի «Մատանիներու տիրակալը» եւ Լուիսի «Նարնիայի ժամանակագրութիւնները» գիրքերը: Իւրայիններու հետ հաղորդակցութեան ինչպիսի՛ օրինակ:

### Մտորել

Մտորել կը նշանակէ «խորհիլ, խորհրդածել»: Աճը հնարաւոր է, երբ մենք ժամանակ կը յատկացնենք, որպէսզի խորհինք մեր սորված դասերու շուրջ: Երբ մենք հաւասարակշռուած կերպով կը վերահսկենք մեր աճը եւ ժամանակ կը տրամադրենք՝ մեր առաջընթացը եւ գործունէութիւնը գնահատելու համար, մենք կը տեսնենք այն բնագաւառները, որոնք ուշադրութեան կամ բարելաւման կարիք ունին:

Իմ ընկեր Ճոն Մաքսուէլը յաճախ կը յիշեցնէ իր լսարաններուն եւ ընթերցողներուն, որ լաւագոյն ուսուցիչը ոչ թէ փորձն է, այլ *գնահատուած փորձը*: Խորհելով ձեր առաջընթացի մասին՝ ի սրտէ ընդունեցէք այն կարծիքները, որոնք կը լսէք ձեր ուսուցիչներէն եւ ընկերներէն, ինչպէս նաեւ մտածեցէք ձեր պարզելները բարելաւելու եւ գործածելու նորարար միջոցներու մասին: Ճիշդ հարցումներ հարցուցէք ձեզի եւ Աստուծոյ. «Ի՞նչ ես պէտք է փոխեմ», «Ո՞ր բնագաւառին մէջ ես ունեցայ առաւելագոյն աճ», «Ո՞ր բնագաւառներուն պէտք է աւելի շատ ուշադրութիւն դարձնեմ», «Ի՞նչ անհրաժեշտ է, որպէսզի հասնիմ նոր մակարդակի»:

Խորհելու ժամանակը երբեք ժամանակի վատնում չէ:

## ԲԱՆ ՄԸ ՄԻ ՊԱՇՏՔ

Եւս մէկ անգամ կարդանք Պօղոսի խօսքերը Տիմոթէոսին.

«Վարժուի՛ր այս պարտականութիւններու մէջ եւ զարգացո՛ւր ատոնք եւ մտորի՛ր ատոնց շուրջ. *բոլորովին տրուի՛ր ատոնց* [որպէս քու ծառայութիւն], որպէսզի քու յառաջադիմութիւնն ականյայտ ըլլայ բոլորին» (Ա. Տիմոթէոս 4.14,15, AMPC):


Այն ամէնը, ինչ քննարկեցինք, ունի մէկ վերապահում. մենք պէտք է բոլորովին տրուինք այն գործին, որուն համար Աստուած կանչած եւ օժտած է մեզ: Ձեր կոչումը կը պահանջէ լիարժէք նուիրում: Երբ մենք ամբողջ սրտով տրուինք այն բանին, ինչ Աստուած վստահած է մեզի, մեր առաջընթացն ակնյայտ կը դառնայ բոլորին, եւ մենք կը բազմապատկենք մեր ներուժը:

Մեզմէ իւրաքանչիւրը պէտք է պատասխանատուութիւն ստանձնէ մեր պարգեւները տնտեսելու եւ մեր կեանքին մէջ հնարաւորինս լաւագոյն ստեղծարար աշխատանք կատարելու համար: Ինչպէս պարզեցինք, մեր պարգեւներու մէջ հմուտ լինելու չափը կ'որոշէ, թէ որքանով կրնանք յառաջադիմել մեր կոչման ոլորտին մէջ եւ բազմապատկել մեր արդիւնաւէտութիւնը:

Այս կեանքին մէջ ունինք մէկ հնարաւորութիւն, որուն համար կրնանք ներդնել մեր բոլոր ուժերը: Եկէք բան մը չպահենք, եկէք դատարկուինք՝ լիովին նուիրուելով Աստուծոյ: Ահա թէ ինչպէս պէտք է ապրիլ: Ահա թէ երբ մենք ճշմարտապէս կը կենդանանանք եւ լիարժէք կերպով կը ճաշակենք կեանքը:

## ՄՏՈՐԵՑԷՔ

1. Չկան բանաձևեր՝ ձեր կոչումը բացայայտելու համար: Թէեւ կան բազմապիսի ձեռնարկներ, որոնք կրնան օգնել ձեզի բացայայտելու, թէ ինչը ձեր քով աւելի լաւ կը յաջողի: Ձեր կոչումը եւ պարգեւները գտնելու համար անհրաժեշտ է Աստուծոյ գործակցութիւնը: Դուք փնտռա՞ծ էք Աստուծոյ, որպէսզի իմանաք ձեր կոչման եւ պարգեւներու մասին: Ան ի՞նչ ցոյց տուած է ձեզի:
2. Մեր որոնման մէջ մենք պէտք է հարցնենք մեզի եւ այլ մարդոց: Այս ամէնը որոնման ընթացքի մասն է: Գտէ՛ք մարդոց, որոնց կը վստահիք, եւ հարցուցէք անոնց, թէ ինչ կը տեսնեն ձեր կեանքին մէջ եւ ձեր ներսը:
3. Պարզապէս ներուժ ունենալը բաւական չէ. այն պէտք է իրագործուի: Ինչո՞ւ կարելոր է, որ զարգացնէք ձեր պարգեւները: Ի՞նչ տեղի կ'ունենայ, երբ դուք նպատակաուղղուած կը զարգացնէք ձեր պարգեւները:



*«Բայց մեզ ձեզի հետ Քրիստոսին մէջ  
հաստատողը եւ մեզ օծողն Աստուած է»:*

– Բ. Կորնթացիս 1.21

## ՕԾՈՒԱԾ

Վերջին Գոհութեան տօներէն մէկուն ընթացքին մեր ընտանիքը նստած էր ճաշասեղանի շուրջ: Լիզան ուշագրաւ խնձոյք պատրաստած էր: Մենք արդէն այդ իրադարձութեան հետ վայելքի մէջ էինք եւ հաճոյքով կը հաղորդակցէինք իրար հետ: Ես զգացի, որ որպէս հայր՝ պէտք է ինչ որ բան մը ըսէի իմ ընտանիքին, նաեւ մեր խումբի անդամներէն քանի մը հոգիին, որոնք միացած էին մեզի:

Մտովի կարճ աղօթելէն յետոյ սրտիս մէջ խօսք մը ստացայ:

- Ես արդէն 60 տարեկան եմ եւ, շատ առումներով, կը զգամ, որ պէտք է հայրաբար իմաստութեամբ բաժնեկցիմ ձեզի հետ: Եթէ հարցնէիք ինձի, թէ ինչն է ամենակարեւոր բանը, որ Լիզան եւ ես ըրած ենք՝ վարուելով Աստուծոյ հետ վերջին 40 տարուան ընթացքին, ես կը պատասխանեմ այսպէս. «*Հետեւողական եղէք*»:

Այդ տարիներու ընթացքին մենք շատ անգամներ կրնայինք ձգել ամէն ինչ: Նոյնպէս, ունեցած ենք փոխզիջման երթալու բազմաթիւ հնարաւորութիւններ՝ անձնական շահի, յառաջխաղացման կամ նեղութենէն ազատելու համար: Բայց մենք որոշում կայացուցած ենք ճշմարտութիւնը դարձնել մեր խարիսխը եւ բռնուիլ ատկէ՝ անկախ այն բանէն, թէ որքան ցաւոտ են հանգամանքները:

Իր արհաւիրքի մէջ Յոբի իմաստուն խօսքերէն մէկը հետեւեալն էր. «Ես կրնամ մխիթարուիլ ասոր մէջ. չնայած իմ ցաւին, ես չեմ ուրացած Սուրբի խօսքերը» (Յոբ 6.10, NLT): Երբ սխալներ գործած եմ (իսկ ես շատ սխալած եմ), արագօրէն ապաշխարած եմ եւ ներում խնդրած եմ թէ՛ Աստուծմէ, թէ՛ մարդոցմէ: Այժմ կը նայիմ ճշմարտութեան մշտապէս հնազանդելու օրհնութիւններուն, եւ ատոնք աներեւակայելի են: Աստուած այնքան շնորհառատ է:

### ՕԾՈՒԹԻՒՆ

Հետեւողականօրէն ճշմարտութեանը հնազանդելու մեծ օրինութիւններէն մէկը օծութիւնն է: Որպէսզի հասկնանք ասիկա, եկէք կարդանք Մեծ գահակալութեան արարողութեան մասին՝ այն օրուան, երբ Հայր Աստուած հանդիսաւոր կերպով Յիսուսին հաստատեց՝ որպէս երկինքի եւ երկիրի Թագաւոր:

«Որովհետեւ Դուն փայլիայեցիր արդարութիւնը եւ խորշեցար անօրինութենէն: *Այս պատճառով, Աստուած՝ Քու Աստուած, օծեց Քեզ եւ Քու վրայ թափեց երանութեան իւղը աւելի, քան Քու ընկերներէն ոեւէ մէկուն*» (Եբրայեցիս 1.9, TPT):

Ուշադրութիւն դարձուցէք «այս պատճառով» բառերուն, քանի որ ատոնք անչափ կարեւոր են առանցքային ճշմարտութիւն մը հասկնալու համար: Յիսուսի անսասան դիրքորոշումը երկու հարցի մէջ մեծ օգուտ տուաւ, եւ Անոր օրինակը պէտք է ըլլայ մեր չափանիշը: Յիսուսը սիրեց *արդարութիւնը*: Յունարէնի մէջ այն «տիքախոսութիւն» բառն է, որուն սահմանումն է «համաձայնութիւն աւելի բարձր իշխանութեան պահանջներուն»: Բայց, միեւնոյն ժամանակ, ան ատեց *անօրինութիւնը*: Կան շատ քրիստոնեաներ, որոնց *հաճելի չէ* անօրինութիւնը, բայց Յիսուսի սիրտն այսպիսին չէ: Ան *կ'ատէ* այն: Յունարէնի մէջ այն «անոմիա» բառն է, որ, ըստ էութեան, կը նշանակէ «անհնազանդութիւն Աստուծոյ իշխանութեանը»: Ան ատելութեամբ կը վերաբերէր որեւէ բանի, ինչ որ կը հեռացնէ Աստուծոյ իշխանութենէն, եւ վերջ: Յիսուսի հաստատակամ հնազանդութիւնը՝ անկախ դժուարութիւններէն, պատճառ դարձաւ, որ օծութիւնն Իր կեանքին մէջ աւելին ըլլար, քան Իր ընկերներէն ոեւէ մէկուն կեանքին մէջ:

Ինչո՞ւ եւ կ'աւարտեմ բազմապատկման մասին գիրքը՝ խօսելով օծութեան մասին: Պատասխանը պարզ է, սակայն՝ կարեւոր. *օծութեան շնորհիւ է, որ Աստուծմէ՛ մեզի տրուած կարողութիւնները կը բազմապատկուին՝ ձգելով յաւիտենական ազդեցութիւն: Պատկերացուցէք օծութիւնը՝ որպէս ձեր պարգեւներու ուժեղացուցիչ: Թոյլ տուէք երկու կարճ օրինակ բերել:*

Ես լսած եմ հրաշալի ձայն ունեցող մարդոց, որոնց հանդէպ մեծ գնահատանք ունեցած եմ, բայց նաեւ լսած եմ ոչ այդքան հոյակապ ձայն ունեցող մարդոց, որոնք հպած են իմ սրտին եւ փոփոխութիւն բերած են իմ կեանքին մէջ: Տարբերութիւնն այս երկուքին միջեւ *օծութիւնն* է: Ես նոյնպէս լսած եմ մարդոց, որոնք խոր բովանդակութիւն

ունեցող ուղերձներ քարոզած են, բայց նաեւ եղած են պակաս ակնառու ուղերձներ, որոնք ազդած են իմ սրտի վրայ եւ փոխած են իմ վարքը: Տարբերութիւնն այս երկուքին միջեւ կրկին *օծութիւնն* է:

Նոյնը կը վերաբերի Աստուծոյ բոլոր ճշմարիտ ծառայողներուն՝ անկախ անոնց կոչումի ոլորտէն՝ կառավարական, գործարար, արուեստի, կրթութեան եւ այլն: Դաւիթ թագաւորն ըսաւ հետեւեալը.

«Բայց իմ եղջիրը (չափազանց մեծ ուժի եւ վեհապանծ շնորհալիութեան խորհրդանիշը) Դուն բարձրացուցիր՝ վայրի ցուլի եղջիրի պէս. ես *օծուած* եմ թարմ իւղով» (Սաղմոս 92.10, AMPC):

Անոր խօսքերն այնքան բան կը յայտնեն: Ուսումնասիրելով այս խօսքի քանի մը առաջատար մեկնաբանութիւններ՝ ես գտայ ընդհանուր համաձայնութիւն, որ վայրի ցուլն այս խօսքին մէջ կը խորհրդանշէ Աստուծոյ չափազանց մեծ ուժ ստանալը: Օծութիւնն ուրախութիւն կը բերէ. Աստուած կ'անուանէ այն *երանութեան* կամ *ուրախութեան իւղ*, ինչ որ, համաձայն Սուրբ Գիրքին, մեր *զօրութիւնն* է (կարդացէ՛ք Նէեմիա 8.10): Ըստ էութեան, սաղմոսերգուն կը յայտարարէ, որ օծութիւնն ուժեղ կը դարձնէ մեզի: Այն կ'ընդարձակէ եւ կը զօրացնէ մեր պարգեւները՝ յաւիտենական պտուղ բերելու համար:

Ես կը հաւատամ, որ օծութիւնը փոփոխութեան անխօս գործօններէն մէկն է տաղանդներու եւ մնասնելու առակներուն մէջ, եւ որ երկու բազմապատկող ծառաներու աշխատանքն ընդարձակուեցաւ օծութեան շնորհիւ: Ես կ'օգտագործեմ «անխօս» բառը, քանի որ քաղած եմ այս ճշմարտութիւնը վերոյիշեալ խօսքերէն: Բազմապատկման համար անհրաժեշտ էր, որպէսզի անոնք հետեւողականօրէն հնազանդէին իրենց տիրոջ ցուցմունքներուն եւ ատելութեամբ մօտենային ատոնց անհնազանդ ըլլալուն: Այդ վերաբերմունքի շնորհիւ անոնք օծութիւն ստացան, որուն արդիւնքն անոնց պարգեւներու ընդարձակումն էր:

Դաւիթը կը խօսի *թարմ* իւղի մասին: Օծութիւնը մէկանգամեայ իրադարձութիւն չէ. այն օրհնութիւն է, որ ունի սկիզբ եւ շարունակական ընթացք Աստուծոյ հետեւողականօրէն հնազանդող մարդու կեանքին մէջ: Օծութիւնն այնպիսի բան չէ, ինչ որ մենք կը ստանանք մէկ անգամ եւ անուշադրութեան կը մատնենք՝ ըսելով. «Ես ունիմ այն»: Սամսոնն ունէր օծութիւն, բայց չպահեց այն թարմ վիճակի մէջ: Ան փոխզիջման կ'երթար եւ անհնազանդ էր. ան չէր ատեր անօրինութիւնը: Ատիկա անհետեւանք մնաց քանի մը անգամ, բայց, ի վերջոյ, անոր մեղքը յաղթեց անոր: Սուրբ Գիրքը կ'ըսէ.

«Եւ անոր ուժն իրմէ գացած էր: Եւ կինը (Ղալիլան) ըսաւ. «Սամսո՛ն, փղշտացիները քու վրայ եկան»: Եւ ան, քունէն արթննալով, ըսաւ. «Դուրս ելլեմ եւ առաջին անգամներու պէս ցնցուիմ», բայց *չէր գիտեր*, որ Տէրը իրմէ գացած էր» (Ղատաւորաց 16.19, 20):

Սամսոնը չէր գիտեր, որ օծութիւնը վերցուած էր: Ասիկա է պատճառը, որ Ղաւիթը, չինազանդելով Աստուծոյ Բերսաբէի պարագային, ջերմեռանդօրէն աղօթեց.

«Ստեղծէ՛ իմ մէջ մաքուր սիրտ, ո՛վ Աստուած: Իմ ներսը *հաւատարիմ* հոգի նորոգէ՛: Մի՛ վտարեր ինձի Քու ներկայութենէն եւ մի՛ վերցնէր Քու Սուրբ Հոգին ինձմէ: Վերականգնէ՛ ինձի համար Քու փրկութեան *ուրախութիւնը* եւ դարձո՛ւր ինձի *յօժար՝ Քեզի հնազանդելու համար*» (Սաղմոս 51.10-12, NLT):

Ղաւիթի սրտի աղաղակը՝ անոր մեծ աղաչանքը, այն էր, որ օծութիւնը չվերցուէր իր կեանքէն, եւ ան գիտէր, որ աստիկա կախուած էր Աստուծոյն հաւատարմօրէն կամ *հետեւողականօրէն* հնազանդելէն:

Շարունակենք ուսումնասիրել, թէ ինչ է օծութիւնը եւ որուն կը տրուի այն: Կրկին կարդացէ՛ք Պօղոսի խօսքերը, որոնք բերուած էին այս գլուխի սկիզբը:

«Բայց մեզ ձեզի հետ Քրիստոսին մէջ հաստատողը եւ *մեզ օծողն* Աստուած է» (Բ. Կորնթացիս 1.21):

Այս խօսքին մէջ «օծող» բառը յունարէնի մէջ «*քրի՛օ*» բառն է: Այն կը սահմանուի որպէս «ոեւէ մէկուն որեւէ առաջադրանք յանձնարարել՝ գերբնականօրէն *վաւերացնելու*, օրհնելու եւ օժտելու վերապահումով. օժել, կարգել, *նշանակել*»:

Այս սահմանումի մէջ կան կարելոր բառեր, որոնց մենք պէտք է ուշադրութիւն դարձնենք: «*Վաւերացում*» բառը կը սահմանուի որպէս «պաշտօնական թոյլտուութիւն կամ հաւանութիւն՝ որեւէ գործողութեան համար»: Պարզ ըսելու համար, օծութիւնը *Աստուծոյ հաւանութիւնն է՝ գործելու համար*: Յիսուսը կ'ըսէ. «Տիրոջ Հոգին Իմ վրայ է, որովհետեւ Ան *օծած է Ինձի...*» (Ղուկաս 4.18, NLT): Կը նշանակէ՝ Աստուած հաւանութիւն տուած էր, որպէսզի Յիսուսը գործէր: Պետրոս առաքեալը կ'անդրադարձնայ նոյն գաղափարին. «Այն Յիսուսին, որ Նազարէթէն է... Անոր Աստուած Սուրբ Հոգիով եւ զօրութեամբ *օծեց*, որ պտըտեցաւ... *ընելով...*» (Գործք 10.38): Կրկին,



այն կը տրուի՝ գործելու համար:

«Քրի՛օ» բառի եւս մէկ կարելոր իմաստ կ'արտայայտուի «կարգել» եւ «նշանակել» սահմանումներով: Աստուծոյ ծառայելու մէջ մշտապէս կայ փորձաշրջան: Մենք կը փորձուինք հնազանդութեան մէջ, նշանակուելէն կամ օծուելէն առաջ:

Իններորդ գլուխին մէջ գրուած Մայքի պատմութեան մէջ անոր գլխաւոր փորձութիւնը տեղի ունեցաւ, երբ Աստուած խնդրեց անորմէ զոհաբերել իր վերջին 200 տոլարը: Լիզային եւ իմ պարագային մեր փորձութիւնն այն էր, որ նուիրուած մնայինք գրելու Աստուածային ցուցման, նոյնիսկ այն պարագային, երբ ոչ մէկ հրատարակիչ հետաքրքրուեցաւ մեր առաջին երկու գիրքերով, եւ աստուծոյ գրեթէ ոչ մէկ հասարակական ուշադրութեան արժանացան:

Յիսուսը կ'ըսէ աւելի քան մէկ անգամ. «Շատերը կանչուած են, բայց քիչերն ընտրուած են» (Մատթէոս 20.16 եւ 22.14): Ես համոզուած եմ, որ «շատերը» բառը կը վերաբերի անոնց, որոնք կը պատկանին Իրեն: Մեզմէ իւրաքանչիւրն Աստուածային կոչում ունի: Այնուամենայնիւ, «ընտրուած» բառը կը նշանակէ «կարգուած» կամ «նշանակուած»: Յիսուսի խօսքերով, նման մարդոց թիւը, ցաւօք, «քիչ» է: Ինչո՞ւ: Գոյութիւն ունի հաւանութիւն ստանալու ընթացք, որ անհրաժեշտ է անցնիլ: Ուշադիր կարդացէ՛ք այս խօսքը. «Ողջունէ՛ Ապեղեսին, որ փորձուած եւ հաւանութիւն ստացած է Քրիստոսին մէջ» (Հռովմայեցիս 16.10, AMPC):

Ապեղեսը փորձուած էր, ինչպէս եւ բոլորս, որոնք կը ցանկան մուտք գործել իրենց կոչումին մէջ: Ակնյայտ է, որ ան անցած էր իր փորձութիւնը, եւ այդ պատճառով ընտրուած էր կամ հաւանութիւն ստացած էր: Համաձայն Աստուածաշնչեան սկզբունքներու, մենք գիտենք, որ Ապեղեսն օծուած էր, թէեւ այդ մասին յստակօրէն գրուած չէ. անոր պարգէն ստացած էր Աստուծոյ ընդարձակող հպումը:

Կան այնքա՛ն մարդիկ, որոնք ժամանակէն շուտ կը նշանակեն իրենց այն բնագաւառին մէջ, ուր կանչուած են: Սակայն անոնք պէտք է ձգտին ոչ թէ իրենց յանձնարարելուն, այլ Աստուածային հաւանութեան.

«Որովհետեւ ոչ թէ իր անձը յանձնարարողն ընտիր է, այլ ան, որուն Տէրը կը յանձնարարէ» (Բ. Կորնթացիս 10.18):

Վերադառնանք մեր Գոհութեան տօնի ընթրիքին: Ես կը ցանկայի, որ իմ ընտանիքի եւ խումբի անդամները, որոնք ներկայ էին, գիտնային, որ *հետեւողական հնազանդութիւնը*, այսինքն՝ արդարութիւնը սիրելը եւ անօրինութիւնն ատելը, առանցքային նշանակութիւն ունի մեր կոչումը կատարելու համար, քանի որ

այս հետետողականության շնորհիւ է, որ մենք կը ստանանք Անոր օծութիւնը:

Ետ նայելով մեր կեանքին՝ Լիզան եւ Ես հնազանդեցանք Աստուծոյ որոշ շատ դժուարին պահերուն: Յաճախ մեր հնազանդութիւնը հակարդինաւէտ եւ նոյնիսկ կործանարար կը թուէր մեր աճի, բարեկեցութեան, համբաւի եւ այլ անձնական շահերու համար, որոնցմէ մենք կարծես աւելի կը հեռանայինք: Բայց այն, ինչ որ անբարենպաստ կը թուէր կարճաժամկէտ տեսանկիւնէն, հետագային դարձաւ այն բանալին, որ արդիւնաւէտ դուռ բացաւ մեր կոչումին համար:

## ՁԵՐ ՅԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԸ

*Դուք կանչուած էք* նոյնքան, որքան իւրաքանչիւրը, նոյնիսկ այն մարդիկ, որոնց դուք հաւատքի մեծագոյն հերոսներ կը համարէք: Աւելի քան հաւանական է, որ ձեր կոչումը չի գտնուիր եկեղեցական միջավայրի մէջ, քանի որ միայն փոքրաթիւ մարդիկ կանչուած են այս ոլորտին մէջ: Դուք արտօնուած էք գերազանցութեան հասնելու եւ ակնառու դառնալու կեանքի այն ոլորտին մէջ, ուր ուղարկուած էք:

- Դանիէլն ակնառու դարձաւ Բաբելոնի կառավարական պաշտօններուն մէջ (կարդացէ՛ք Դանիէլ 6.3):
- Յովսէփն ակնառու դարձաւ մեծ Եգիպտոսի մէջ (կարդացէ՛ք Ծմնդոց 41.39):
- Փիբէն Կենքրայի եկեղեցւոյ ակնառու ծառայող էր (կարդացէ՛ք Հռովմայեցիս 16.1):
- Ձեր կոչումը նոյնպէս ակնառու է:

*Դուք եզակի կերպով օժտուած էք:* Աստուած տուած է ձեզի անհրաժեշտ կարողութիւններ՝ ձեր առաքելութիւնը կատարելու համար:

Կարդացէ՛ք, թէ ինչ կ'ըսէ Աստուածաշունչը Բեսելիէլի եւ անոր աշխատանքային խումբի մասին. «Տէրն օժտեց Բեսելիէլին, Ողիաբին եւ միւս հմուտ վարպետներուն *իմաստութեամբ* եւ *կարողութեամբ*՝ կատարելու սրբարանի կառուցման հետ կապուած ցանկացած աշխատանք» (Ելից 36.1, NLT): Անոնք չունէին Աստուծոյ Խօսքը քարոզելու եւ մարդոց ծառայելու կարողութիւն, ինչպէս Մովսէսը, Ահարոնը եւ անոր որդիները: Այդ վարպետներն օժտուած էին, որ աշխատէին իրենց ձեռքերով՝ սրբարանը կառուցելու համար:

Դուք նոյնպէս օժտուած էք՝ կառուցելու Աստուծոյ սրբարանը այն հմտութիւններով, որոնք Ան տուած է ձեզի: Այնուամենայնիւ,

այս սրբարանը պատրաստուած չէ ոսկիէն, արծաթէն, պրոնզէն, թանկարժէք քարերէն, այծերու մորթիներէն, բարակ քթանէն, սաստիմի փայտէն եւ այլ նիւթերէն, որոնք կ'օգտագործուէին՝ կառուցելու համար Հին կտակարանի խորանը եւ Երուսաղէմի տաճարը: Այսօր Աստուծոյ խորանը կը պատրաստուի կենդանի քարերէն՝ մարդոցմէ, եւ այս կենդանի քարերը կը կառուցուին որպէս Աստուծոյ բնակարան (կարդացէ՛ք Ա. Պետրոս 2.5 եւ Եփեսացիս 2.20-22): Դուք օժտուած էք՝ կառուցելու մարդոց Աստուծոյ փառքի համար:

*Դուք գործութիւն ստացած էք՝ բազմապատկման համար:* Մենք Աստուծմէ մեզի տրուած պարգեւներու տնտեսներն ենք, եւ Ան կը ցանկայ, որ վերադարձնենք Իրեն բազմապատիկ պտուղ՝ ստացուած այդ պարգեւներու միջոցով: Մենք պէտք է փնտռենք մարտավարութիւններ Երկինքէն՝ բազմապատկման համար: Առաջնորդները կրնան սորվեցնել մեզի սկզբունքներ, բայց եզակի երկնային մարտավարութիւնները կը տրուին անձամբ իւրաքանչիւրին. աստուծոյ անկարելի է սորվիլ որեւէ գիրքէ կամ որեւէ լսարանի մէջ:

Մենք՝ առաջնորդներս, կրնանք միայն խրախուսել ձեզ, որ փնտռէք Անոր եւ լսէք Անոր ծայնը: Հնազանդեցէ՛ք Անոր, նոյնիսկ եթէ ատիկա անկարելոր կը թուի: Ձեր բազմապատկման գործօնը սովորաբար աննշան կը թուի: Յիշեցէ՛ք՝ մանանեխի սերմն է, որ ամենափոքրն է միւս բոլոր սերմերէն, որմէ կ'աճի ամենամեծ ծառերէն մէկը:

*Դուք կը բազմապատկէք՝ ներդնելու միջոցով:* Ներդրումը կ'արտայայտուի բազմաթիւ կերպերով, բայց երբ կու տանք, մենք օրինութիւններու հունձք կը ստանանք: Եթէ սերմը չի ցանուիր (չի ներդրուիր), այն մինակ կը մնայ, բայց երբ այն կը ներդրուի, բազմապատիկ հունձք կու տայ: Որեւէ պահուն դուք կրնաք կա՛մ պահել, կա՛մ ներդնել ձեր սերմը: Երբեք մի՛ դադրիք ներդնելէն. այն ձեր արդիւնաւէտութեան յաջորդ մակարդակի բանալին է:

*Ձեր խթանիչը ծառայելն է:* Եթէ ձեր շարժառիթը որեւէ այլ բան է՝ ծառայելէն բացի, դուք կը յայտնուիք այնպիսի վիճակի մէջ, որուն մէջ չէք ցանկար ըլլալ: Թերեւս դուք լաւ տեսք ունենաք մարդոց առջեւ, բայց կը զրկուիք ձեր եռանդէն: Ձեր ճրագը կը շարունակէ թուլանալ՝ նոյնիսկ մարելու աստիճան: Բայց մի՛ վիատիք, քանի որ Ան չի մարեր հանգչող պատրոյզը. Ան շարունակ կը ձգտի գրաւել ձեր ուշադրութիւնը եւ կրկին կը բորբոքէ ձեր կրակը (կարդացէ՛ք Եսայիա 42.3): Անկախ այն բանէն, թէ ինչ կ'ընէք, ձգտեցէ՛ք ծառայել, սիրեցէ՛ք առանց կեղծաւորութեան եւ դիմացէ՛ք այն նեղութեան, որուն կը բախիք:

*Ձգտեցէ՛ք օծութեան:* Այն կը մեծցնէ ձեր ազդեցութիւնը: Այն

յաւիտենական կը դարձնէ ձեր աշխատանքը: Այն ուժ կը հաղորդէ ձեզի եւ ականառու կը դարձնէ այն ոլորտին մէջ, ուր կանչուած էք: Այն կ'առանձնացնէ ձեզ այս աշխարհին մէջ եւ նոյնիսկ եկեղեցիին մէջ գտնուող այնպիսի մարդոցմէ, որոնք կ'օգտագործեն Աստուծո՛մէ՝ իրենց տրուած պարգեւները եսասիրական կամ աշխարհիկ նպատակներու համար:

*Ղուք պէտք է հաւատք ունենաք:* Հաւատքը՝ Աստուծո՛մէ ձեզի տրուած ներուժը բազմապատկելու միակ միջոցն է: Առանց հաւատքի «անկարելի է հաճելի ըլլալ» Աստուծոյ (Եբրայեցիս 11.6): Որպէսզի ձեր հաւատքը աճի, դուք պէտք է լսէք Անոր Խօսքը: Գրուած է. «Հաւատքը կու գայ լսելէն, իսկ լսելը՝ Աստուծոյ Խօսքէն» (Հռովմայեցիս 10.17, NKJV): Լսելը, լսելը եւ կրկին լսելն է, որ թոյլ կու տայ, որ Աստուծոյ Խօսքն ամուր հաստատուի մեր սրտին մէջ: Ահա թէ ինչու դուք իմաստութեամբ կը վարուիք, եթէ ընթերցէք այս գիրքը եւս մէկ անգամ, իսկ յետոյ՝ եւս մէկ անգամ: Բայց պարզապէս մի՛ ընթերցէք այն: Մտորեցէ՛ք այն ամէնուն շուրջ, թէ ինչպէս այս ճշմարտութիւնները կը վերաբերին ձեզի, իսկ յետոյ գործեցէ՛ք ատոնց հիման վրայ: Աստուծոյ Խօսքը, որ համակարգուած կերպով զետեղուած է այս գիրքին մէջ, ընդունեցէ՛ք ձեր հոգիին մէջ՝ ընթերցելու, մտորելու եւ աղօթքի միջոցով, մինչեւ որ հաւատաք, որ դուք կանչուած էք բազմապատկելու համար՝ անկախ ձեզ շրջապատող հանգամանքներէն: Բազմապատկման մասին ձեր ներքին համոզումները պէտք է աւելնայ՝ գերազանցելով ձեր արտաքին հանգամանքներու թելադրանքը:

Ի վերջոյ, յիշեցէ՛ք. *Աստուած ձեր կողմէ՛ն է:*

«Որովհետեւ Ես գիտեմ այն ծրագիրները, որ ունիմ ձեզի համար, - կ'ըսէ Տէրը, - ատոնք ծրագիրներ են բարիի համար» (Երեմիա 29.11, NLT):

Եւ կրկին, Աստուծոյ Խօսքը վստահաբար կ'ըսէ մեզի.

«Եթէ Աստուած մեր կողմն է, ո՞վ կրնայ մեզի դէմ ըլլալ: Քանի որ Ան չխնայեց նոյնիսկ Իր Որդին, այլ մատնեց Անոր բոլորիս համար, մի՞թէ Ան նոյնպէս չի տար մեզի ամէն ինչ» (Հռովմայեցիս 8.31,32, NLT):

Լսեցէ՛ք ա՛յս Խօսքերը, ոչ թէ այն յուսալքող պնդումները, որոնք կու գան այս աշխարհի աստուծո՛մէ՝ զլիսաւոր մեղադրողէն եւ հիասթափեցնողէն: Ձեր Արարիչը՝ ձեր Հայրն է, եւ Ան կը ցանկայ ձեր

յաջողութիւնը այն գործի մէջ, որուն համար կանչած է ձեզ:

Որպէս հայր հաւատքի մէջ, որ արդէն բոլորած է իր վաթսունամեակը, ես նոյնպէս ձեր կողմէն եմ: Ես կը խրախուսեմ ձեզ, որ աւելի հեռու երթաք, քան գացած են իմ հասակակիցները եւ ես: Մենք կը ծառայենք մէկ Թագաւորի, մենք մէկ Թագաւորութեան քաղաքացիներ ենք, մենք մէկ ընտանիքի անդամներ ենք, մենք ունինք մէկ հաւատք եւ մէկ առաքելութիւն՝ կառուցել Աստուծոյ տունը, ուր Ան կը բնակի ամբողջ յաւիտենութեան ընթացքին:

Եկէք գործենք միասին: Եկէք միասնական դառնանք եւ պահպանենք միաբանութիւնը: Եկէք ակնատես ըլլանք, թէ ինչպէս Անոր փառքը կրկին կը լեցնէ Անոր բնակավայրը: Չկայ այլ լուծում այս աշխարհի խնդիրներու համար:

Ես կը սիրեմ ձեզի, բայց ամենակարեւորը՝ Հայր Աստուած, Որդի Յիսուս Քրիստոսը եւ Սուրբ Հոգին խորապէս կը սիրէ ձեզի: Եւ *Անոր սէրը ձեր հանդէպ կը մնայ յաւիտեան:*


«Անոր, որ կրնայ պահել ձեզ՝ առանց սայթաքելու կամ գայթելու կամ իյնալու, եւ ներկայացնել [ձեզ] անբիծ (անմեղադիր եւ անսխալ) Իր փառքի ներկայութեան մէջ՝ յաղթական ուրախութեամբ եւ հրճուանքով [անասելի, հիացական բերկրանքով]՝ միակ Աստուծոյն՝ մեր Փրկիչին, Յիսուս Քրիստոսի՝ մեր Տիրոջ միջոցով, ըլլայ փառք (վեհութիւն), մեծութիւն, կարողութիւն եւ տիրապետութիւն եւ զօրութիւն եւ իշխանութիւն, բոլոր ժամանակներէն առաջ ե՛ւ հիմա, ե՛ւ յաւիտեան (յաւիտենութեան բոլոր դարերուն մէջ): Ամէ՛ն (թող այդպէս ըլլայ)»:

– Յուդա 24,25, AMPC

## ՄՏՈՐԵՑԷՔ

1. Օժութեան շնորհիւ է, որ Աստուծմէ մեզի տրուած կարողութիւնները կը բազմապատկուին՝ ձգելով յաւիտենական ազդեցութիւն: Ինչպէ՞ս կու գայ օժութիւնը: Ի՞նչ կերպով օժութիւնը գերազանցութեան կը հասցնէ ձեր պարգեւները:
2. Ինչպէ՞ս օժութիւնը կրնայ թարմ մնալ ձեր կեանքին մէջ: Ի՞նչ տեղի կ'ունենայ, երբ օժութիւնը անուշադրութեան կը մատնուի:
3. Այս կեանքի ո՞ր ոլորտի մէջ դուք կանչուած էք՝ ազդեցութիւն ձգելու համար: Ինչպէ՞ս կրնայ օժութիւնը ակնառու դարձնել ձեզ այդ ոլորտին մէջ:





*«Եթէ բերանովդ Յիսուսին Տէր դաւանիս, եւ սրտիդ մէջ հաւատաս, թէ Աստուած յարութիւն տուաւ Անոր մեռելներէն, կ'ապրիս: Որովհետեւ սրտով կը հաւատանք արդարանալու համար, եւ բերանով կը դաւանինք փրկուելու համար»:*

– Հռովմայեցիս 10.9-10



# Յաւելուած ՓՐԿՈՒԹԻՒՆ ԲՈՒՈՐԻՆ ՀԱՄԱՐ

**Ա**ստուած կը ցանկայ, որ դուք լիարժէք կեանք ունենաք: Ան ի սրտէ մտահոգուած է ձեզմով եւ կը ցանկայ, որ կատարէք իր ծրագիրը ձեր կեանքին համար: Այնուամենայնիւ, կայ միայն մէկ ճանապարհ դէպի ձեր նախասահմանութիւնը. դուք պէտք է ընդունիք փրկութիւնը Աստուծոյ Որդիին՝ Յիսուս Քրիստոսի միջոցով:

Յիսուսի մահուան եւ յարութեան շնորհիւ Աստուած ճանապարհ պատրաստեց, որ մտնէք Իր Թագաւորութեան մէջ՝ որպէս Իր սիրելի որդի կամ դուստր: Յիսուսի զոհը խաչին վրայ ձրիաբար պարգեւած է ձեզի յաւիտենական եւ առատ կեանք: Փրկութիւնն Աստուծոյ պարգեւն է ձեզի. դուք չէք կրնար որեւէ բան ընել, որ վաստկիք փրկութիւնը կամ արժանանաք ատոր:

Այս թանկ պարգեւն ստանալու համար առաջին հերթին պէտք է խոստովանիք ձեր Արարիչէն անկախ ապրելու մեղքը, քանի որ ասիկա ձեր գործած բոլոր մեղքերու արմատն է: Ապաշխարութիւնը փրկութիւն ստանալու խիստ կարեւոր պայման է: Պետրոսը յստակ նշեց ասիկա Գործք առաքելոց գիրքին մէջ այն օրը, երբ հինգ հազար մարդ փրկութիւն ստացաւ. «Ուրեմն, զղջացէ՛ք եւ ե՛տ դարձէք, որ ձեր մեղքերը ջնջուին» (Գործք 3.19): Աստուածաշունչը կը յայտնէ, որ մեզմէ իւրաքանչիւրը ծնած է որպէս մեղքի ստրուկ: Այս ստրկութիւնը սկիզբ առած է Ադամի մեղքէն, որ առաջինը գիտակցաբար անհնազանդ եղաւ Աստուծոյ: Ապաշխարելով՝ դուք որոշում կը կայացնէք այլեւ չհնազանդիլ ձեր անձին եւ սատանային, որ սուտի հայրն է, այլ հնազանդիլ ձեր նոր Տիրոջը՝ Յիսուս Քրիստոսին, Անոր, Որ տուաւ Իր կեանքը ձեզի համար:

Դուք պէտք է յանձնէք ձեր կեանքը Յիսուսի իշխանութեանը: Յիսուսին որպէս Տէր ընդունիլը կը նշանակէ, որ դուք թոյլ կու տաք

Անոր ղեկավարել ձեր ամբողջ կեանքը (հոգին, անձը եւ մարմինը), նաեւ այն, ինչ որ կը պատկանի ձեզի. Ան բացարձակ իշխանութիւն կը ստանայ ձեր կեանքին մէջ: Այն պահուն, երբ ընէք ասիկա, Աստուած պիտի ազատէ ձեզ խաւարէն եւ պիտի տեղափոխէ Իր Թագաւորութեան լոյսին եւ փառքին մէջ: Պարզ ըսած՝ դուք անցում կը կատարէք խաւարէն դէպի լոյսը եւ պիտի դառնաք Անոր զաւակը:

Եթէ կը ցանկաք փրկութիւն ստանալ Յիսուսի միջոցով, կրկնեցէ՛ք այս աղօթքը.

*«Երկնային Աստուած, ես կը գիտակցիմ, որ մեղաւոր եմ եւ ինկած եմ Քու արդարութեան չափանիշէն: Ես արժանի եմ յաւիտեան դատապարտուելու իմ մեղքերու համար: Շնորհակալութիւն, որ չձգեցիր ինձի այս վիճակի մէջ, քանի որ ես կը հաւատամ, որ Ղուս ուղարկեցիր Յիսուս Քրիստոսին՝ Քու միածին Որդիին, Որ ծնաւ կոյս Մարիամէն, որպէսզի մահանար ինձի համար եւ կրէր իմ դատաւճիռը խաչին վրայ: Ես կը հաւատամ, որ Ան յարութիւն առաւ երրորդ օրը եւ այժմ նստած է Քու աջ կողմը՝ որպէս իմ Տէր եւ Փրկիչ: Այսօր ես կ'ապաշխարեմ, որ եղած եմ Քեզմէ անկախ, եւ իմ կեանքը բոլորովին կը յանձնեմ Յիսուսի իշխանութեան:*

*Յիսուս, ես կը դաւանիմ, որ Ղուս իմ Տէրն ու Փրկիչն ես: Եկո՛ւր իմ կեանքի մէջ Քու Հոգիով եւ դարձուր ինձի Աստուծոյ զաւակ: Ես կ'որանամ խաւարի գործերը, որոնց ժամանակ մը կը յարէի, եւ այսօրունէ՛ս այլեւս չեմ ապրիր ինձի համար: Քու շնորհքով ես կ'ապրիմ Քեզի համար, քանի որ Ղուս տուած ես Քու կեանքն ինձի համար, որ ես յաւիտեան ապրիմ:*

*Շնորհակալութիւն, Տէ՛ր: Այժմ իմ կեանքը բոլորովին Քու ձեռքերուն մէջ է, եւ համաձայն Քու Խօսքին՝ ես երբեք չեմ ամչնար. Յիսուսի անունով, ամէ՛ն»:*

Բարի գալո՛ւստ Աստուծոյ ընտանիք: Ես կը խրախուսեմ ձեզ պատմել այս հրաշալի լուրը ոեւէ հաւատացեալի: Նոյնպէս կարելոր է, որ դուք միանաք որեւէ տեղական եկեղեցւոյ, որ կը հաւատայ Աստուածաշունչին, եւ հաղորդակցեցէ՛ք այլ մարդոց հետ, որոնք կը խրախուսեն ձեզ հաւատքի մէջ: Դուք կրնաք կապ հաստատել մեր ծառայութեան հետ (այցելեցէ՛ք [MessengerInternational.org](http://MessengerInternational.org)), եւ մենք կ'օգնենք ձեզի եկեղեցի գտնելու հոն, ուր կ'ապրիք:

Դուք ճիշդ հիմա սկսաք ամենաուշագրաւ ճանապարհորդութիւնը: Կը մաղթեմ ձեզի առատ յայտնութիւններ, շնորհք եւ ընկերութիւն Աստուծոյ հետ ձեր ամենօրեայ կեանքին մէջ:

## ԵՐԱԽՏԻՔԻ ԽՕՍՔԵՐ

Ձեր ձեռքը գտնուող գիրքը խմբային աշխատանքի արդյունք է, եւ ես կը ցանկամ յայտնել իմ երախտիքը մեր աշխատակիցներէն մէկ քանիին՝ անոնց աւանդի համար:

**Պրիս Նիկրեն.** Շնորհակալութիւն քու խմբագրական փորձառութեան եւ վարպետութեան համար: Եւս մէկ անգամ դուն վերցուցիր իմ ձեռագիրը եւ, առանց կորսնցնելու իմ ձայնը, շատ աւելի ընթերցելի դարձուցիր այն: Եւ շնորհակալութիւն այն բարդ հարցումներուն համար, որոնք դուն կը հարցնէիր, եւ որոնց շնորհիւ այս գիրքը աւելի ճշգրիտ ու ազդեցիկ դարձաւ:

**Քորի Էմպերսըն, Լորա Ուիլպուր եւ Լորեն Ճոնսըն.** Շնորհակալութիւն, որ ապահովեցիք այս ուղերձի ուղղագրական, կէտադրական եւ ոճային ճշգրտութիւնն ու հետեւողականութիւնը: Ես կը հիանամ ձեր պարգետով:

**Քրիս Փէյս.** Շնորհակալութիւն քու անվերջ խրախուսանքի համար՝ այս գիրքի ձեռագիրը գլուխ առ գլուխ ընթերցելու ընթացքին: Շնորհակալութիւն, որ օգնեցիր ինձի կազմելու 14-րդ գլուխը: Քու ներդրումն անգնահատելի է:

**Էտիսըն Պիվիր.** Շնորհակալութիւն քու խմբագրական հմտութիւններու եւ բարդ հարցումներու համար, որոնք շատ աւելի հասանելի եւ ճշգրիտ դարձուցին այս ուղերձը: Ամէնէն աւելի շնորհակալութիւն հաւատարիմ եւ խրախուսող որդի ըլլալու համար:

**Ալան Նիկրեն.** Շնորհակալութիւն այս գիրքի էջերն ու կազմը փայլուն կերպով ձեւաւորելու համար: Ես կը հիանամ քու պարգետով:

**«Մեսինճըր Ինթերնեշընլ»-ի խումբ.** Ձեզմէ իւրաքանչիւրը ահռելի աննկատ աշխատանք կը կատարէ՝ Աստուծոյ Թագաւորութիւնը կառուցելու համար: Ես պիտի ցնծամ ձեզի հետ այն օրը, երբ տեսնենք, թէ Յիսուսն ինչպէս պիտի վարձատրէ ձեր անձնագոհ ծառայութիւնը:

**Աստուծոյ Սուրբ Հոգի.** Իմ մեծագոյն գոհութիւնն ուղղուած է Քե՛զի: Այս ուղերձը երբեք չէր յաջողեր՝ առանց Քու առաջնորդութեան եւ իմաստութեան: Ես անսահման շնորհակալ եմ Քեզի՝ իմ Տիրոջ եւ մեծագոյն սիրոյ՝ Յիսուս Քրիստոսի շարունակական յայտնութեան համար: Ես խորապէս կը սիրեմ Քեզ, ինձի համար պատիւ է ծառայել Քեզի եւ համագործակցիլ Քեզի հետ:

# ՆՇՈՒՄՆԵՐ

<sup>1</sup> Ջոսիիաթես, Սփիրոս. «Բառերու ուսումնասիրութեան ամբողջական բառարան. Նոր Կտակարան» (Չաթանուկա, Թենեսի, «AMG Publishers», 2000):

<sup>2</sup> Արնտթ, Ուիլիամ, Ֆրետրիք Կ. Տանքեր եւ Ուոլթըր Փաուըր. «Նոր կտակարանի եւ այլ վաղ քրիստոնէական գրականութեան յունարէն-անգլերէն բառարան» (Շիքալօ. «University of Chicago Press», 2000):

<sup>3</sup> Լուվ, Եոհաննէս Փ., եւ Եուճին Ալպերթ Նայտա. «Նոր կտակարանի յունարէն-անգլերէն իմաստաբանական բառարան», (Նիւ Եորք. «United Bible Societies», 1996):

<sup>4</sup> Լուվ, Եոհաննէս Փ., եւ Եուճին Ալպերթ Նայտա. «Նոր կտակարանի յունարէն-անգլերէն իմաստաբանական բառարան», (Նիւ Եորք. «United Bible Societies», 1996):

<sup>5</sup> Լուվ, Եոհաննէս Փ., եւ Եուճին Ալպերթ Նայտա. «Նոր կտակարանի յունարէն-անգլերէն իմաստաբանական բառարան», (Նիւ Եորք. «United Bible Societies», 1996) եւ Ջոսիիաթես, Սփիրոս. «Բառերու ուսումնասիրութեան ամբողջական բառարան. Նոր կտակարան» (Չաթանուկա, Թենեսի, «AMG Publishers», 2000):

<sup>6</sup> Ջոսիիաթես, Սփիրոս. «Բառերու ուսումնասիրութեան ամբողջական բառարան. Նոր կտակարան» (Չաթանուկա, Թենեսի, «AMG Publishers», 2000):

<sup>7</sup> Լուվ, Եոհաննէս Փ., եւ Եուճին Ալպերթ Նայտա. «Նոր կտակարանի յունարէն-անգլերէն իմաստաբանական բառարան», (Նիւ Եորք. «United Bible Societies», 1996):

<sup>8</sup> Ջոսիիաթես, Սփիրոս. «Բառերու ուսումնասիրութեան ամբողջական բառարան. Նոր կտակարան» (Չաթանուկա, Թենեսի, «AMG Publishers», 2000):

<sup>9</sup> Լուվ, Եոհաննէս Փ., եւ Եուճին Ալպերթ Նայտա. «Նոր կտակարանի յունարէն-անգլերէն իմաստաբանական բառարան», (Նիւ Եորք. «United Bible Societies», 1996):

<sup>10</sup> Լուվ, Եոհաննէս Փ., եւ Եուճին Ալպերթ Նայտա. «Նոր կտակարանի յունարէն-անգլերէն իմաստաբանական բառարան», (Նիւ Եորք. «United Bible Societies», 1996):

<sup>11</sup> «Խանդավառութիւն» (Enthusiasm), Merriam-Webster.com, մուտքը՝ Մարտ 18, 2020: <https://www.merriam-webster.com/dictionary/enthusiasm>:

<sup>12</sup> «Ճեղքում» (Breakthrough), Dictionary.com, մուտքը՝ Մայիս 5, 2020: <https://www.dictionary.com/browse/breakthrough>.

<sup>13</sup> Պէլքըր, Ուորէն, Է. Եւ Շուճին Է. Քարփենթըր. «Բառերու ուսումնասիրութեան ամբողջական բառարան. Հին կտակարան» (Չաթանուկա, Թենեսի, «AMG Publishers», 2003):

<sup>14</sup> Չոստիաթես, Սփիրոս. «Բառերու ուսումնասիրութեան ամբողջական բառարան. Նոր կտակարան» (Չաթանուկա, Թենեսի, «AMG Publishers», 2000):

<sup>15</sup> <https://www.barna.com/research/digital-babylon/>, մուտքը՝ Յունուար 10, 2020:

<sup>16</sup> Չոստիաթես, Սփիրոս. «Բառերու ուսումնասիրութեան ամբողջական բառարան. Նոր կտակարան» (Չաթանուկա, Թենեսի, «AMG Publishers», 2000):

<sup>17</sup> Լուվ, Եոհաննէս Փ., Է. Եւ Շուճին Ալպերթ Նայտա. «Նոր կտակարանի յունարէն- անգլերէն իմաստաբանական բառարան», (Նիւ Եորք. «United Bible Societies», 1996):

<sup>18</sup> Մայլս Սոնրօ. «Բացայայտէ՛ քու ներուժը», Ընդլայնուած հրատարակութիւն, «Kindle» (Շիփենսպորօ, Փենսիլուանիա, «Destiny Image», 2013), էջ 145:

<sup>19</sup> Չոստիաթես, Սփիրոս. «Բառերու ուսումնասիրութեան ամբողջական բառարան. Նոր կտակարան» (Չաթանուկա, Թենեսի, «AMG Publishers», 2000):

<sup>20</sup> Արնոթ, Ուիլիամ, Ֆրետրիք Վ. Տանքեր Է. Ուոլթըր Փաուլըր. «Նոր կտակարանի Է. այլ վաղ քրիստոնէական գրականութեան յունարէն-անգլերէն բառարան» (Շիքալօ. «University of Chicago Press», 2000):

<sup>21</sup> Անտըրս, Էրիքսըն. «Ճանապարհ դէպի բարձունք. Գիտական խորհուրդներ Փրոֆեսիոնալիզմի հասնելու մասին» (Նիւ Եորք, «Houghton Mifflin Harcourt», 2016), էջ 22:

<sup>22</sup> «Ձարգանայ» (Cultivate) Dictionary.com, մուտքը՝ Փետրուար 2020: <https://www.dictionary.com/browse/cultivate>:

<sup>23</sup> Չոստիաթես, Սփիրոս. «Բառերու ուսումնասիրութեան ամբողջական բառարան. Նոր կտակարան» (Չաթանուկա, Թենեսի, «AMG Publishers», 2000):

<sup>24</sup> Լուվ, Եոհաննէս Փ., Է. Եւ Շուճին Ալպերթ Նայտա. «Նոր կտակարանի յունարէն- անգլերէն իմաստաբանական բառարան», (Նիւ Եորք. «United Bible Societies», 1996):

# ՍՈՒՐԲ ՀՈԳԻ

*Դուք գիտեք Անոր մասին. բայց դուք  
կը ճանչնա՞ք Անոր*



Աշակերտներն անցուցին երեք տարի Յիսուսին հետ՝ քալելով Անոր հետ եւ լսելով այն ամենը, ինչ որ Ան կը ցանկար ըսել: Սակայն Յիսուսն ըսաւ Իր ամենամօտ ընկերներուն, որ պէտք է ձգէր անոնց, որպէսզի Սուրբ Հոգին գար, եւ որ ատիկա ատելի լաւ պիտի ըլլար անոնց համար (Յովհաննէս 16.7,13,14): Եթէ ասիկա ճշմարիտ էր աշակերտներու համար, որոնք ամէն օր Յիսուսին հետ էին, ապա որքա՞ն ատելի մենք կարիք ունինք, որ այսօր Սուրբ Հոգին գործուն մասնակցութիւն ունենայ մեր կեանքերուն մէջ:

Ցաւօք, յաճախ Հոգին սխալ հասկցուած է. շատերը նոյնիսկ գաղափար չունին, թէ ով է Ան եւ ինչպէս կը յայտնուի մեզի: Սուրբ Հոգիին յաճախ կը պատկերեն շատ տարօրինակ կերպով: Բայց Աստուածաշունչը պարզ կը ըսէ, որ Հոգին ինչ որ երեւոյթ չէ: Ան Անձ է, Որ խոստացած է երբեք չլքել ձեզ: Այս փոխգործուն գիրքին մէջ Ճոն Պիվիրը կը հրաւիրէ անձամբ բացայայտել ամէնէն անտեսուած եւ սխալ հասկցուած Անձնաւորութեան Եկեղեցւոյ մէջ՝ Սուրբ Հոգիին:

Բաց մի՛ ձգէք այս զարմանալի հնարաւորութիւնը:

# Բարի՞, թե՞ Աստուած

## Ինչո՞ւ բարին առանց Աստուծոյ բաւարար չէ:



Մեր օրերուն մէջ «բարի» եւ «Աստուած» բառերը կարծես հոմանիշներ դարձած են: Մենք կը հաւատանք, որ այն, ինչ որ ընդհանուր առմամբ բարի կը համարուի, պէտք է որ համապատասխանէ Աստուծոյ կամքին: Առատածեռնութիւնը, խոնարհութիւնը, արդարութիւնը բարի են: Եսասիրութիւնը, ամբարտաւանութիւնը, դաժանութիւնը չար են: Կը թուայ՝ այս տարբերակումը շատ պարզ է:

Բայց արդեօ՞ք ամէն ինչ այդքան պարզ է: Եթէ բարին այդ աստիճան ակնյայտ է, ինչո՞ւ Աստուածաշունչը կ'ըսէ, որ մեզի զանազանութիւն անհրաժեշտ է՝ այն ճանչնալու համար:

«Բարի՞, թե՞ Աստուած» գիրքը՝ սովորական ուղերձ մը չէ այն մասին, թէ ինչպէս դուք ձեզի լուծէք ձեր խնդիրները: Այս գիրքը պարզապէս չի խնդրեր ձեզմէ, որ փոխէք ձեր վարքը. այն պիտի ընէ ատելին: Այն պիտի տայ ձեզի կարողութիւն, որուն միջոցով դուք պիտի կարենաք հաղորդակցիլ Աստուծոյ հետ այնպիսի մակարդակի վրայ, որ պիտի փոխէ ձեր կեանքի իւրաքանչիւր բնագաւառը:

# ՅԱԽԻՏԵՆՈՒԹԵԱՄԲ ՇԱՐԺՈՂՆԵՐԸ

*Կեանք, որ նշանակություն ունի այսօր եւ յաւիտեան*



Կեանքն այս երկրի վրայ՝ ընդամենը շոգի է, սակայն շատերն այնպէս կ'ապրին, կարծես ատկէ ետք ոչինչ կրնայ պատահիլ: Բայց այն, թէ ինչպէս կ'ապրինք այս կեանքը, կ'որոշէ, թէ ինչպէս պիտի անցընենք յաւիտենությունը: Սուրբ Գիրքը կը յայտնէ մեզի, որ վարձատրութեան տարբեր աստիճաններ կան հաւատացեալներուն համար. ոմանց յաջողութիւններն ու ձեռքբերումներն ամբողջովին պիտի այրին դատաստանի ժամանակ, իսկ միւսներուն պիտի շնորհուի Քրիստոսի հետ թագաւորելու արտօնություն:

Ճոն Պիվիորը կը յիշեցնէ մեզի, համաձայն Բ. Կորնթացիներու 5.9-ի սկզբունքներուն, որ բոլոր հաւատացեալները պիտի կանգնին Քրիստոսի առջեւ՝ ընդունելու համար այն, ինչին որ արժանացած են իրենց կեանքին ընթացքին: Մեզմէ շատերը պիտի ցնցուին, երբ գիտնան, որ մեր ժամանակի մեծ մասը ծախսուած է այնպիսի բաներու վրայ, որոնք պիտի չարժանանան յաւիտենական վարձատրութեան:

Այդ պարագային, ինչպե՞ս կրնանք արդիւնաւետ կեանք ունենալ: «Յաւիտենութեամբ շարժողները» գիրքը կը սորվեցնէ բացայայտել ձեր կոչումը, եւ բազմապատկել այն, ինչ որ Աստուած տուած է ձեզի: Նայելով կեանքին յաւիտենութեան տեսանկիւնէն՝ դուք զօրութիւն պիտի ստանաք, որպէսզի գործէք մնայուն նպատակներու համար:



# ԿՈՐԾԱՆԵԼ ՔՐԻՊՏՈՆԱՔԱՐԸ

*Կործանել՝ այն, ինչ որ քու ուժը կը խլէ*



Ինչպէս Սուփըրհերոսը, որ կրնայ ցատկել որեւէ արգելքի վրայէն եւ կրնայ յաղթել բոլոր թշնամիներուն՝ Քրիստոսի հետեւորդները նոյնպէս կեանքի դժուարութիւնները յաղթահարելու գերբնական կարողութիւն ունին: Այնուամենայնիւ, ե՛ւ Սուփըրհերոսը, ե՛ւ մենք խնդիր մը ունինք. գոյութիւն ունի քրիպտոնաքար, որ կը խլէ մեր ուժը:

Անշուշտ, Սուփըրհերոսը եւ քրիպտոնաքարը յօրինուած են: Բայց հոգեւոր քրիպտոնաքարը՝ ոչ:

Այս գիրքը կը պատասխանէ այն հարցումին, թէ ինչու մեզմէ շատերը չեն կրնար վերապրիլ այն Աստուածային գօրութիւնը, որ ակնյայտօրէն կը դրսեւորուէր առաջին դարուն ապրող քրիստոնէաներու կեանքին մէջ:

**«Կործանել քրիպտոնաքարը»** գիրքին մէջ Ճոն Պիվիրը ցոյց կու տայ, թէ ինչ է քրիպտոնաքարը, ինչու այն կը խլէ մարդոց ուժերը մեր եկեղեցիներուն մէջ, եւ ինչպէս կարելի է ազատիլ աստղ կապանքներէն:

**«Կործանել քրիպտոնաքարը»** գիրքը հոգեւոր թմրեցուցիչ չէ՝ նախատեսուած թուլասիրտներու համար: Այս լուրջ ճշմարտութիւնը նախատեսուած է Քրիստոսի այն հետեւորդներուն համար, որոնք կը փափաքին անցնիլ անծի վերափոխման դժուար, բայց պտղաբեր ընթացքը:

# ԱՍՏՈՒԱՎՃ, Ո՞ՒՐ ԵՍ

Գտի՛ր զօրութիւն եւ նպատակ քու  
անապատին մէջ




Թերեւս անցեալին Աստուած կը խօսէր ձեզի հետ, բայց այժմ Ան կը լռէ: Թերեւս անցեալին դուք առջեւ կը շարժէիք հաւատքի մէջ, բայց այժմ չէք գտներ Անոր ներկայութիւնը: Բարի գալը լստ անապատ՝ այն վայրը, որ Աստուծմէ խոստում ստանալու եւ ատիկա իրականացնելու միջեւ է:

Այնուամենայնիւ, բարի լուր մը կայ. անապատը պարզապէս ամառի եւ աննպատակ վայր չէ: Աստուած կ'օգտագործէ անապատը, որպէսզի պատրաստէ եւ սպառազինէ ձեզ ձեր կոչման համար, այն պարագային, եթէ դուք ճիշդ անցնիք այն: Հակառակ ընդունուած կարծիքին, դուք չէք անցնիր ձեր կեանքի այս փուլը՝ պարզապէս Աստուծոյ սպասելով: Դուք պէտք է կատարէք ձեր բաժին աշխատանքը, որպէսզի անցնիք այն, եւ ձեր աշխատանքը շատ մեծ է: Եթէ չէք ցանկար ժամանակ վատնել՝ շարունակ նոյն տեղը մնալով, կարելոր է գիտնալ, թէ ինչ է անապատը:

Այս բացայայտումներով լեցուն գիրքին մէջ հանրաճանաչ հեղինակ Ճոն Պիվիրը կը կը սորվեցնէ ձեզի՝ օգտագործելով կարելոր Աստուածաշնչեան յայտնութիւններ եւ խորիմաստ պատմութիւններ, որոնք պիտի օգնեն ձեզի անցնելու կեանքի ամառի եւ դժուար փուլերը եւ ստանալու այն, ինչ որ Աստուած պատրաստած է ձեզի համար:

# X MessengerX

Աշակերտական ընթացք իւրաքանչիւրի համար, ամէնուր




- Անվճար աւելի, քան 110 լեզուով
- Հասանելի որպէս յաւելուած եւ առցանց
- Նիւթեր՝ նախատեսուած ձեր աճին համար:
- Հետեւեցէ՛ք ձեր (կամ մեր) դիտումներուն եւ աշակերտական ուղիին



Ստացէ՛ք «Messenger»-ի աշակերտական Նիւթերու ամբողջական դարանը՝ ելեկտրոնային գիրքեր, օտիո գիրքեր, կարճաժամկետ ֆիլմեր, վիտէօ ուսուցումներ, Աստուածաշունչներ եւ աւելին. դիտեցէ՛ք, կարդացէ՛ք և լսեցէ՛ք ձեր բոլոր սարքերով:

## MessengerX.com



Հասանելի է աշխարհի տարածքին «App Store»-ի եւ «Google Play»-ի մէջ


**«ԵԿԷՔ ՈՉԻՆՉ ՊԱՅԵՆՔ ԵՒ ՄԱՅԱՆԱՆՔ ԴԱՏԱՐԿ՝ ԱՍԲՈՂՁՈՎԻՆ ՆՈՒԻՐԱԲԵՐԵԼՈՎ ՄԵՉ ԱՍՏՈՒԾՈՅ... ՅԱՏԿԱՊԵՍ ԱՅՍ ՊԱՐԱԳԱՅԻՆ ՄԵՆՔ ՃՇՄԱՐՏԱՊԵՍ ԿԸ ԿԵՆԴԱՆԱՆԱՆՔ ԵՒ ԿԵԱՆԵԸ ԼԻԱՐԺԷՔ ԿԸ ՃԱՇԱԿԵՆՔ»:** **- ՃՈՆ ՊԻՎԻՐ**

Երբեք զգացա՞մ էք դուք ձեզ որպես դիտորդ Աստուծոյ Թագաւորութեան մէջ: Թերեւս գիտէք, որ ինչ որ բան մը կայ, որ դուք պետք է ընէք, բայց չէք կրնար վերջնականօրէն որոշել, թէ ինչ է ատիկա: Մեզմէ շատերը կը ցանկան մեծ ազդեցութիւն ձգել, բայց թերեւս ձեր ներսը չպատասխանուած հարցումներ կան, օրինակ՝

- Ինչպէ՞ս համոզուած ըլլամ, որ չեմ կորսնցուցած Աստուծոյ կամքը իմ կեանքին մէջ:
- Ի՞նչ դեր կը կատարեն իմ եզակի պարգէւները Աստուծոյ Թագաւորութիւնը կառուցելու մէջ:
- Ինչպէ՞ս վստահ ըլլամ, որ կ'օգտագործեմ Աստուծմէ ինծի տրուած ներուժը:
- Իմ կոչումը նուա՞գ կարելոր է, եթէ ես «ծառայութեան» մէջ չեմ:
- Ինչպէ՞ս հաւասարակշռութիւն պահպանել Աստուծոյ շնորհքին մէջ հանգստանալու եւ մնոր Թագաւորութեան համար գործելու միջեւ:
- Ինչպէ՞ս վանել վախը եւ առջեւ երթալ՝ նոյնիսկ անորոշութեան եւ վտանգի պարագային:

Այս խորիմաստ գիրքին մէջ հանրաճանաչ հեղինակ Ճոն Պիվիրը կը հիմնուի Սուրբ Գիրքի մանրակրկիտ ուսումնասիրութեան վրայ եւ կ'օգտագործէ ազդեցիկ պատմութիւններ, որպէսզի օգնէ ձեզի ուրիշ ձեւ մտածելու ձեր կոչման մասին եւ հասկնալու, թէ ինչու այն կարելոր է Աստուծոյ համար: Ընթերցելով այս գիրքի էջերը՝ դուք պիտի սորվիք, թէ ինչպէս կարելի է բազմապատկել Աստուծմէ ձեզի տրուած պարգէւները և օգտագործել ձեր ներուժը:

Եթէ դուք պատրաստ էք փոխարինելու անգործութիւնը աւելի մեծ նպատակով, ասիկա ձեր ընթացքի սկիզբն է:



**ՃՈՆ ՊԻՎԻՐԸ** միջազգային ճանաչում ունեցող քարոզիչ եւ հանրաճանաչ հեղինակ է, որ համարձակ եւ առանց փոխգիջման կը քարոզէ Աստուծոյ Խօսքը: Ծնուը եւ անոր կինը՝ Լիզան, հիմնադրած են «Մեսինճըր Ինթերնեշնլ» ծառայութիւնը, որուն նպատակն է՝ պատրաստել քրիստոսի հետեւորդները, որոնք փոխգիջման չեն երթար եւ կը վերափոխեն այս աշխարհը: Երբ ճոնը տունն է՝ քոլորատո, ան սեղանի քարտային խաղեր կը խաղայ իր չորս որդիներուն հետ կամ կը փորձէ համոզել Լիզան կոլֆ խաղալու իրեն հետ:



Անվճար ներբեռնումներու եւ տեսանկյան դիտելու համար այցելեցէ՛ք [MessengerX.com](https://messengerx.com) կայքը:



Այս գիրքը նուէր է հեղինակէն եւ ՎԱՃԱՌԻ ԵՆԹԱԿԱՅ ՉԷ



Տեսանկյան դիտելու համար այցելեցէ՛ք [messengerx.com](https://messengerx.com)